Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՑԱԽԻ ԹԵՄ
«ԳԱՆՁԱՍԱՐ» ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
DIOCESE OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF ARTSAKH
"GANDZASAR" THEOLOGICAL CENTER

Գանձասար 6

"GANDZASAR"

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
THEOLOGICAL REVIEW

Գլխաւոր խմբագիր
Մեսրոպ քահանայ Արամեան
Պատասխանատու քարտուղար
Տիգրան Խաչատրեան
Տեխնիկական խմբագիր
Յովհաննէս Կիզողեան
Գեղարուեստական խմբագիր
Արեգ Ասատրեան
Վերստուգող սրբագրիչ
Շուշան Վարդանեան

Կազմը՝ **Արմեն Քիւրքչեանի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ • REPUBLIC OF ARMENIA
ԵՐԵՒԱՆ 1994 YEREVAN

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ.Տ. ՎԱԶԳԵՆԻ Ա
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. ՊԱՐԳԵՒԻ
ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՑ

ՍՈՅՆ ՀԱՏՈՐԸ ՏՊԱԳՐՒՈՒՄ Է
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ»
ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

5 Հասան իշխանի մասին, որ հիմնադրեց Գանձասարի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին
7 ՍԱՀԱԿ ՋՈՐԱՓՈՐԵՑԻ
Հայոց Սահակ կաթողիկոսի ճառը՝ ասուած Արմաւեանեաց օրը՝ Ծաղկազարդին
16 ԱՐՏԱՇԷՍ ՄԱԹԷՈՍԵԱՆ
Գրիգոր Ծերենց Խլաթեցի
18 ԳՐԻԳՈՐ ԾԵՐԵՆՑ ԽԼԱԹԵՑԻ
Դրուատ գովութեան ի սուրբ Աստուածածինն

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

25 ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԵԱՆ
Քրիստոսաբանութեան մէջ համաձայնութեան խնդիրները
48 ԿՈՄԻՏԻՆԻԿԷ
(Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների եւ Հռոմէական Կաթողիկէ Եկեղեցու աստուածաբանների միջեւ ոչ պաշտօնական խորհրդակցութիւններ, Վիեննա, 1971)
50 ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՏԵՂ ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ
(Ուղղափառ Եկեղեցու եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների միջեւ աստուածաբանական երկխօսութեան համատեղ յանձնաժողով, Ժնեւ, 1990)
54 ԱԲԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՕՂԼՈՒԳԵԱՆ
Հայ Եկեղեցւոյ դիրքը քրիստոնէական Ընդհանուր Եկեղեցւոյ մէջ
61 ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՑ ԱՐԱՄԵԱՆ
Միեղինութեան սկզբունքը աստուածաբանութեան մէջ

ԲՆԱԳՐԵՐ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

90 ՄԻՔԱՅԷԼ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԱՋԱՊԱՀԵԱՆ
Սուրբ Կղեմէս եպիսկոպոս Հռոմէացի
114 Ս. ԿՂԵՄԷՍ ՀՌՈՄԷԱՑԻ
Կղեմէսի առաջին նամակը կորնթացիներին
137 ԱՋԱՏ ԲՈՋՈՅԵԱՆ
Մխիթար վարդապետ Տաշրացին (Սկեւռացին)՝ Հայոց Եկեղեցու նուիրապետական կառոյցի պաշտպան
138 ՄԽԻԹԱՐ ՍԿԵՒՌԱՑԻ
Մխիթար քահանայ Սկեւռացու հակաճառութիւնները տասներկու առաքեալների համապատուութեան մասին

ՊԱՐՈՅՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ
Դաւիթ Քոբայրեցին եւ նրա «Պատճառները»
ԴԱՒԻԹ ՔՈԲԱՅՐԵՑԻ
Դաւթայ վարդապետի Պատճառ Պաճոցն գրոց՝ ի Բարսղէ... (աշխատ. Կիմ Մուրադեանի)
ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ
Խօսք Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապպադովկացիոց...
ՅԱԿՈԲ ՔԵՈՍԷԵԱՆ
Ցունարեն բնագրով անյայտ ճառ ս. Աթանաս Ալեքսանդրացու անուամբ
Ս. ԱԹԱՆԱՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻ
Խօսք Աթանասի եպիսկոպոսի առ այնոսիկ, որք ասեն, թէ հրամանաւն Աստուծոյ գործէ մարդն զչարն եւ զբարին, որպէս այլազգիքն ասեն

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ
Անանիայի հայոց վարդապետի՝ ի խնդրոյ...

ՎԱՐՔ ՍՐԲՈՑ

Մարիամ Եգիպտացու վարքը
Երանելի Մաշտոց Եղիվարդեցու վարքը
Խօսք Աստուծոյ երանելի այր Յովհաննէս Սարկաւագի մասին

ՀԱՅՈՑ ՆՈՐ ՎԿԱՆԵՐԸ

Կորիւն քահանայ Երամեան
Ասողիկ քահանայ Թողագեան
Սմբատ եպիսկոպոս Սաատէթեան

ՀՈԳԵՒՈՐ ՄԵԱԿՈՑԹ

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ
Քրիստոնէական տաճարի խորհրդաբանութիւնը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ 375019,
ԵՐԵՒԱՆ, ԲԱՂՐԱՄԵԱՆ 24 Գ

24, BAGHRAMIAN, YEREVAN, 375019,
REPUBLIC OF ARMENIA

Հեռ./ Tel. 56.08.91, 56.53.38 • Հեռապատճէն/ Fax 27.15.20

Ծարուածքը՝ «ԳԱՆՁԱՍԱՐ» աստուծաբանական կենտրոնի համակարգչային ծառայութեան

[ՀԱՍԱՆ ԻՇԽԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀԻՄՆԱԴՐԵՑ ԳԱՆՁԱՍԱՐԻ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ][1]

Սա Զաքարէ եւ Իւանէ մեծամեծ իշխանների քրոջ որդին էր, բարեպաշտ եւ աստուածասէր, հեզ եւ հանդարտ, ողորմած եւ աղքատասէր այր, աղօթքների եւ խնդրուածքների մէջ ճգնող, ինչպէս անապատականները: Որտեղ էլ լինէր, անխափան կատարում էր ցերեկուայ եւ գիշերուայ պաշտամունքը, ինչպէս վանականները, իսկ կիրակի օրը Փրկչի Յարութեան յիշատակը անքուն եւ յոտնկայս տքնութեամբ էր անցկացնում: Ցոյժ քահանայասէր էր, ուսումնասէր եւ աստուածային Կտակարանների ընթերցող:

Այլեւ բարեպաշտուհի էր նրա մայրը: Իր ամուսնու՝ Վախթանգի (որին Տանկիկ էին անուանում) մահուանից յետոյ, կարգաւորելով իր երեք որդիների՝ Զալալի, Զաքարէի եւ Իւանէի [կեանքը], գնաց սուրբ քաղաք՝ Երուսաղէմ, եւ երկար տարիներ մեծ ճգնութեամբ ապրեց այնտեղ: [Նա] զարմացնում էր բոլոր տեսնողներին եւ լսողներին, քանի որ Աբգարի կնոջ՝ Հեղինէի նման իր ամբողջ ունեցուածքը բաժանեց աղքատներին ու կարօտեալներին եւ ինքն իր ձեռագործով էր կերակրւում:

Եւ այնտեղ էլ մեռաւ, որին Աստուած փառաւորեց որպէս Իրեն փառաւորողի՝ նրա գերեզմանի վրայ կամարաձեւ լոյս կանգնեցնելով՝ ուրիշներին [եւս] նոյնպիսի բարեգործութիւնների յորդորելու համար:

Երբ այս իմաստուն իշխանը տեսաւ անօրէնների յարձակումը, իր երկրի բնակիչներին ամրացրեց մի ամրոցում, որ պարսից լեզուով Խօխանաբերդ էր կոչւում: Երբ եկան, պաշարեցին ամրոցը եւ տեսան, որ հնարաւոր չէ գրաւել այն, խաղաղութեամբ ու սիրով հրաւիրեցին նրան իրենց մօտ: Եւ նա իմաստնաբար հաւանութիւն տուեց նրանց մտադրութեանը: Եւ ապա ինքը գնաց նրանց մօտ բազում ընծաներով: Եւ մեծարելով նրան՝ իրեն յանձնեցին իր երկիրը՝ աւելի ընդարձակ սահմաններով, եւ հրամայեցին նրան ամէն տարի իրենց հետ պատերազմի գնալ եւ հաւատարմօրէն հնազանդ մնալ իրենց:

---

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1961, էջ 268-270

Իսկ նա խոհեմաբար կարգաւորեց իր երկիրը, ինչ որ կարող էր անել նրանց մօտ եկող երթեւեկողների կարիքների համար. թէ՛ կերակուր եւ թէ՛ այլ բան ինքը ստանում, պահում էր եւ, իր կողմից աւելացնելով, տալիս նրանց, երբ իր մօտ էին գալիս: Եւ [նրանք] նեղութիւն չէին տալիս երկրին, միայն նրան էին դիմում [անհրաժեշտութեան դէպքում]: Իսկ այլ երկրներում այսպէս չէին անում, այլ ուր որ հասնում էին, ամէն տեղ նեղում էին նրանց:

ՆՐԱ ՇԻՆԱԾ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

[Նա] շինեց գեղեցկազարդ յօրինուածով մի եկեղեցի՝ Աստուծոյ փառքի գմբէթարդ երկնանման տաճար, ուր հանապազ պատարագում է Աստուծոյ Գառը, որ վերցնում է աշխարհի մեղքերը, Գանձասար կոչուող վանքում՝ Խօխանաբերդի դիմաց, իրենց շիրմատեղիում: Եւ երկար տարիներ աշխատեցին նրա վրայ:

Երբ աւարտուեց, մեծահանդէս նաւակատիք արեց՝ եկեղեցին օրհնելու համար: Այնտեղ էր եւ Աղուանքի կաթողիկոս տէր Ներսէսը բազում եպիսկոպոսներով, նաեւ մեծ Վանական վարդապետը բազում վարդապետներով: Այնտեղ էին եւ Խաչէնի սուրբ վարդապետներ Գրիգորիոսը եւ տէր Եղիան, որոնք միմեանց հարազատ էին. այս երկու այրերով Աստուած զարդարել էր նրանց երկիրը: Եւ այստեղից Քրիստոսի մօտ փոխուեցին՝ առաջինը՝ 1238[1] թ., իսկ Եղիան՝ 1249 թ., եւ պահւում են Խաղայի աստուածափառ տանը: Եւ բազում քահանաներով օրհնեցին եկեղեցին. ասում են՝ երէցների թիւը եօթ հարիւր էր:

Երբ [եկեղեցին] օծումով կնքուեց, մեծ ճաշկերոյթ սարքեց. ինքն իր ձեռքով սպասաւորում էր նստածներին եւ իւրաքանչիւրին, ըստ իր պատուի առատութեամբ նուէրներ տալով, արձակեց բազմութեանը: Եւ այս տեղի ունեցաւ 1240 թ.՝ Վարդավառի մեծ տօնի օրը:

Իսկ նրա կին Մամքանը հրաշալի գաւիթ շինեց եկեղեցու դռան մօտ եւ, ինքն իրեն ամբողջովին առաքինութեան տալով, հանապազ ճգնում էր պահքով, աղօթքներով եւ ընթերցասիրութեամբ եւ օր ու գիշեր յարատեւում էր Տիրոջ պատուիրանների մէջ, ինչպէս որ գրուած է:

Գրաբարից փոխադրեց **Մարթա Արաբեանը:**

1 Գրիգորիոսի մահուան թուականն ըստ երեւոյթին գրչագրերում ընդհանրացած սխալ է, որովհետեւ Գանձասարի Ս. Յովհաննէս Մկրտչի եկեղեցու օծումը տեղի է ունեցել 1240 թ.:

Տօնախօսական

Հայոց Սահակ կաթողիկոսի[1] [ճառը]՝ ասուած Արմաւենեաց օրը՝ Ծաղկազարդին

Աւետաբեր եւ տիեզերական տօն եւ տէրունական տօներից առաւել գերափառ, բոլոր բերկրաբերձ[2] եւ սոսկալի, երկնաբիւր բանակների փառաբանողներից պանծացուած: Այսօր երկիրը, երկինքն ու ծովը բերկրելով ցնծում են. քառայոլով տարերքն իր հնութիւնը նոր լինելութեան են կոչում: Օդը բարեխառն եւ պտղածնող շունչ է բուրում: Մաքրափայլ եւ ականակիտ աստղերը նկարակերտում են իւրաքանչիւր [համաստեղութեան] դիրքը: Բոլորաձեւ լիալուսինն արեգակի պէս ջահատրում է ողջ գիշերը. եւ արեգակը, հասարակածին հասնելով, հոլաթեւում է[3] երկնքի ու երկրի միջեւ: Ծովը լռել է բարձրակոհակ վրդովումից եւ ոլորտածաւալ[4] շարժումներից: Երկիրը ձմեռային սգաւորութիւնից անցել է գարնանային վերանորոգման. եւ բուրաստանները, հոգածու օդի շնչով պարուրուած, պատուել են բազմաբոյր ու բազմահամ ծաղիկների գլխիկներով: Եւ երկրի փապարներում ու ծերպերում բոյն դրած զեռունները, ժամանակի

1 Սահակ Գ Ջորափորեցի կաթողիկոս (677-703 թթ.): Մնուել է Գուգարաց նահանգի Ջորափոր գաւառի Արքունաշէն գիւղում: Ուսանել է Թէոդորոս Քռթենաւորի մօտ: Առաւել յայտնի է իրեն վերագրուող շարականներով, ինչպէս նաեւ «Կանոնագրքում» տեղ գտած 15 կանոններով: Ջորափորեցու հեղինակութեամբ մեզ է հասել նաեւ Ծաղկազարդի տօնին նուիրուած ճառը՝ «Սահակայ Հայոց կաթողիկոսի ասացեալ յԱրմաւենեաց օր», որի արեւելահայերէն թարգմանութիւնը կատարուած է ըստ «Յովհաննու Իմաստասիրի Աւանեցւոյ մատենագրութիւնք» հրատարակութեան (Վենետիկ, Ս. Ղազար, 1833, էջ 214-222):

2 բերկրաբերձ - որտեղ բարձր ու վսեմ բերկրանք կայ

3 հոլաթեւել - թեւածել

4 ոլորտածաւալ - պլեկոծ

մեծափառությունը զգալով, իւրաքանչիւրն իր բնական ձայնով, վերիններին հետեւելով, ներդաշնակ եղանակում են օրերի վայելչությունը: Եւ ծովածին կենսաստիրների երամները, լսելով երամապետներին, ձմեռային եւ միջնաշխարհ կայարաններից միախմբուելով, բարձրանում են երկրի երես, լցնում երկիրն ու ջրերը եւ, բազմանուագ ձայնելով, արագութիւնների տեսակների զանազանութեամբ օր ու գիշեր երաժշտական մեղեդիներ են վերերգում:

Եւ քառոտանի գազանների եւ երէների շարքերը, խմբեր կազմելով, ճոխացնում են որովայնները խոտերով եւ անտառների նորածին ծաղիկներով, գոչելով ու բչելով հիացնում բանական էակների լսողութիւնը: Եւ ընտանի կենդանիները դուրս են գալիս իրենց որջերից. մի մասը հողագործական տաժանմունքներն է թիկունքին առնում, իսկ միւսներն էլ խմբուելով լցնում են զանազան ծաղիկներով լի հովիտներն ու դարաւանդները՝ աւելացնելով մարմինների քաշն ու ճարպերը: Եւ նաւավարը, նաւը յանձնելով ձմեռային վրդովմունքից լուռ ծովին, առագաստին փարուող բարեյաջող օդով սլանում եւ ժամանում է բաղձալի երկիրը: Եւ երկրագործը, ըստ հոգենուագ երաժշտապետ Դաւթի, կացարանից ելնում է իր գործին եւ ձեռքերի վաստակին, սերմնացու եւ տնկաբեր հողում աշխատելով՝ հարստացնում, ճոխացնում է շտեմարանների լիութիւնը: Եւ բովանդակ երկինքը, երկիրը, ծովը եւ բոլոր կենդանիները բերկրում ու ցնծում են՝ մեծարելով օրերի փառաւորութիւնը մեր փառաբանութիւնների միասնական ձայնակցութեամբ, որը բաւական համարելով՝ անցնենք այս-օրուայ սաղմոսին:

Թագաւորներից մեծը եւ Օրէնքի առաջին երաժիշտ Դաւիթը՝ Գրոց հաւատարիմ մարգարէն եւ բարբարոսական ազգին տանջողը, պատերազմներում միշտ յաղթողը եւ հսկաներին սատակեցնողը, խաւարած Իսրայէլի ճրագը եւ Հոր արարչական սրտին համակամը, մարմնացած Բանի նախահայրը, Կոյս Աստուածածնի ցեղապետը եւ ըստ նահապետական տների՝ նախահայրը, քահանայական երգերի գլուխն ու աստուածաբանողը, սերովբէների բարեբանութիւններին ձայնակցելով, այս օրուայ մասին մարգարէական հոգով նախագոչելով, մեծափառ խօսքը մեզ վերաձայնեց՝ ասելով ինն-սունվեցերորդ սաղմոսում, թէ՝ «Լեռները կցնծան Տիրոջ առջեւ, քանզի գալիս է»[1]: Պատշաճ եւ ճշմարիտ է այս խօսքը, քանզի ամէն բանում պետերը եւ առաջիններն են ցնծում՝ աւետաբեր լուրն առնելով. զօրքում՝ զօրավարը, հօտում՝ հօտապետը, նաւում՝ նաւապետը: Այսպէս եւ Արարչի հողեղէն բնութիւնն առնելու եւ հողեղէնին ազգակից լինելու առթիւ բարձր դարաւանդները եւ հոգեղէն բլուրները կցնծան եւ վեց օրերի փառաբանութիւնից առաւել կբերկրեն՝ հողեղէնների՝ մարդկանց հետ հարազատութիւն ունենալով:

Բայց լեռներն, ըստ նշանակութեան, նմանեցնում է մարգարէական մաքուր անձանց, որ հողանիւթ մարմնով Սուրբ Հոգու տաճարներ դարձան, շնորհաբարձ բախտով բարձրացան մարդկային բնութիւնից, Սուրբ Հոգու սրատեսութեամբ կանխատեսեցին բազմաժամանակեայ եւ ապագայ խորհուրդը եւ գրաւոր թողեցին մեծավայելչական օրուայ սարսափելի յիշատակութիւնը: Նրանց շնորհաւէտեալ հոգիներն այս օրուայ մասին խոստովանեցին եւ, աստուածային ճոխութեամբ բարձրացած, յիշատակեցին իրենց երգերում՝ մեզ հետ ցնծալով Որդու մեծափառ գալուստը: Եւ առաքեալների մէջ մեծը՝ Պողոսը, իր առաքելական մատեանում Եփեսացիների թղթում գրելով՝ «Օրհնեա՛լ է Աստուած եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, որ օրհնեց մեզ ի Քրիստոս ամենայն հոգեւոր օրհնութեամբ երկնաւորների մէջ»[1], հրամայում է մեծ գնդին բարեբանութեամբ օրհնել մարմնացած Բանի Հօրը՝ ո՛չ ըստ գրաւոր եւ հնացած օրէնքի, որ անէծքներով էր փակուած եւ անակնառու դատողութեամբ յանցաւորներին հրամայում էր զանազան տանջանքներով ընթանալ, վէրք՝ վէրքի եւ անդամ՝ անդամների փոխարէն հատուցել, զանազան ջարդեր, քարկոծումներ, սրամահութիւններ եւ հրկիզումներ: Այլ Որդին, մեր բնութեան կերպարանքն առնելով եւ մեզ համար Իր բնութեամբ քաւարան դառնալով, տանջանքներից ազատեց մեր բնութիւնը եւ մէկ մահուամբ բազում մահերի գիրը կնքեց: Եւ գրին յաջորդեց շնորհը՝ Հոգին, եւ Ինքը՝ Բանը, եղաւ ամէն ինչ ամէն ինչում. հողեղէնների հետ՝ հողեղէն, օրէնքը հարստացնող, գիրը լուծող, ոգին քննող, աներեւոյթ Հոր պատկերը եւ բոլոր մարդկանց զօրութիւնն ու իմաստութիւնը, ամենքի Արարիչը, փակուած դրախտը բացողը, դէպի վեր՝ առ Հայր ելնելու ճանապարհը, երկրորդ երկինք մտնողների երկրորդ դուռը, երկնքի Աստուածը՝ արարչութեամբ, երկրի Թագաւորը՝ մարմնաւորութեամբ, մարդկանց սիրելին՝ փրկագործութեամբ, հրեշտակների համար նախապատուելին՝ Աստուածութեամբ: Եւ բոլորի համախնդութեամբ, տիեզերական այս օրերին, համաշխարհական միասնական բարեբանումը կցորդելով առաքելական

1 Տե՛ս Սաղմ. ՂԵ(Զ) 12:

1 Եփես. Ա 3-4

գրերին, աստուածաբանելով փառաւորենք ամենքի Հօր եւ Միածին Որդու մարդասիրութիւնը:

Աւետարանիչներից մեծը՝ երանելի Մատթէոսը, որ հոգեւոր երկու շնորհ ստացաւ, առաքելական աթոռն ունենալով՝ նաեւ Աստուածորդու արտաբերական քարոզներն աստուածաբանողը, իր հրաշապատում գրերում այս օրերի գալստեան խորհրդի մասին աւետարանելով, ասում է. «Երբ մօտեցան Երուսաղէմին եւ եկան Բեթփագէ՝ մերձ Ձիթենեաց լեռանը, այնժամ Յիսուս արձակեց երկու աշակերտներին՝ ասելով նրանց. «Գնացէ՛ք այդ գիւղը, որ ձեր դիմացն է, այնտեղ կգտնէք կապուած մի էշ եւ նրա հետ՝ մի քուռակ. արձակեցէ՛ք, բերէ՛ք Ինձ: Եւ եթէ մէկը ձեզ բան ասի, կասէք, որ իրենց տիրոջը պէտք են, եւ նա իսկոյն դրանք կուղարկի»»[1]: Իսկ [Յովհաննէս] Աւետարանիչը, պատմելով Որդու աստուածահրաշ սքանչելագործութիւնների մասին, ի՞նչ հոգեխառն գրերով է շարադրում խօսքը. Գալիլեայից Որդուն հետեւելը եւ, ախտացեալին մերձենալով, հոգու եւ մարմնի աստուածեղէն բուժական դեղն ընձեռելը, որի համար էլ եւ Հրէաստանի Բեթանիայում հաւատարիմ բարեկամի հիւանդանալն է տեսնում մարդկային դեղերով անբուժելի մարմնեղէն ախտով, յաջորդ տեղում՝ նրա անշնչանալն ու ննջելը եւ քոյրերի առաքումը, որպէսզի նախքան վախճանուելը աստուածային շնորհներով ժամանի եւ անբուժելի ախտի բուժումն ընձեռի: Եւ նախքան Տիրոջ եւ աշակերտների Բեթանիա ժամանելը՝ անշնչանում է Ղազարոսը եւ անկենդանանում՝ մեռածի վիճակը ճաշակելով: Եւ Տէրը գալով գտնում է նրան չորս օրուայ վախճանուած եւ ապականուած մարմնին սոսկալի ձայնով տիրաբար հրամայում գերեզմանից դուրս գալ եւ [միւսներին էլ] երիզներից ու կապանքներից նրան ազատել: Եւ երբ Բեթանիայում ընթրում էր, Ղազարոսը մէկն էր սեղանի շուրջ նստածներից[2]:

Այս հրաշագործութիւնները անցած երէկուայ օրուանն էին, իսկ այսօր, առնելով աշակերտների բազմութիւնն ու յառաջանալով դէպի Բեթանիա՝ Ձիթենեաց լեռ, գալիս է Բեթփագէ, որտեղից առաքում է երկու աշակերտներին եւ հրամայում բերել էշն ու նրա հետ՝ քուռակը. եւ փութով է առաքում, որպէսզի նախքան Երուսաղէմ մտնելը նստի նրանց վրայ: Բայց, ըստ այս տեսութեան, Երուսաղէմ մտնելը, Բեթփագէ եւ Ձիթենեաց լեռ գալը պէտք է հասկանալ որպէս Աստուածորդու մերձակայ չարչարանքները եւ [Իր] մահուամբ մարդկային բնութեան ազատագրումը մահուանից: Երուսաղէմը պէտք է հասկանալ որպէս բովանդակ աշխարհ՝ առաքելական քարոզութեամբ եւ Աւազանի վերածնութեամբ: Իսկ «Բեթփագէ» թարգմանւում է ծնօտի տուն. նշանակում է անմաքուր կենդանու ծնօտ, որով վարսաւոր Սամսոնը բիւրաւոր անթլփատների մեռցնում էր հալածելով[1]: Այսպէս եւ վարսաւոր Յիսուսի՝ Հօր Որդու եւ Բանի՝ նոյն կենդանու վրայ նստելը նշանակում է Աստուածացեալի՝ հակառակորդի տիեզերական իշխանութիւնը ոտքի տակ տալով մեռցնելը: Իսկ Ձիթենեաց լեռը նշանակում է բովանդակ աշխարհի լուսաւորուելը՝ կամաւորաբար չարչարանքների գալը: Եւ աշակերտներից երկու առաքուածները նշանաբերում են բովանդակ աշխարհը՝ երկու հոգեխառն կոչմամբ՝ գրաւոր եւ հոգեւոր. եւ երկուսի էլ փութով, անվրէպ ժամանակի առաքելը նշանակում է մարգարէականն ու աւետարանականը:

Բայց այս ամէնը հէնց այնպէս չի եղել, այլ՝ որպէսզի կատարուի մարգարէական խօսքը՝ Զաքարիայի խոստովանութիւնը, որն ասում է. «Ասացէ՛ք Սիոնի դստերը. «Ահա՛ գալիս է քո Թագաւորը՝ հեզ եւ նստած էշի եւ էշի քուռակի վրայ»»[2]: Օրէնքին հաւատարիմ հոգեկիրները նախաճառելով աստուածաբանեցին Աստուածորդու գալիք սքանչելագործութիւնների մասին: Նահապետներից մեծը՝ Յակոբը, մարգարէաբար խօսելով, ասում է Յուդայի ժողովրդի մասին, որից պիտի կատարուէր [Բանի] Կոյսից մարմնանալը, եւ որը սուրբ Կոյսի նախահայրն է. «Անպակաս լինի իշխանութիւնը եւ պետութիւնը Յուդայի տոհմից, մինչեւ որ կհասնի նրա իշխանութեան ժամանակը: Կկապի Իր գրաստը որթատունկից եւ էշի քուռակը՝ որթատունկի ոստից»[3]:

Որթատունկը պէտք է հասկանալ որպէս Աստուածորդու մարմնաւորումը՝ համաձայն Իր իսկ խոստովանութեան, որ Իր արարչական մարմինը որթատունկ է, եւ երանելի առաքեալները՝ ճիւղեր: «Կկապի Իր գրաստը որթատունկից» նշանակում է հողեղէն բնութեամբ մարմնանալն ու համատնօրինելը եւ անսպառ ու անլուծելի սիրով մեր բնութեանը կապուելը: Իսկ «[Կկապի] Իր քուռակը որթատունկի ոստից» նշանակում է, թէ Աւազանից նոր ծնուածներին, որդեգրաբար, սիրով կապելով Սուրբ Երրորդութեանը, միաւորեց անխզելի եւ

1 Մատթ. ԻԱ 1-4
2 Տե՛ս Յովհ. ԺԱ 1-45, ԺԲ 1-2:

1 Տե՛ս Դատ. ԺԵ 15:
2 Զաք. Թ 9
3 Տե՛ս Ծննդ. խթ 10-11:

անխափանելի կապանքներով: Իսկ մարգարէներից մեծը՝ Զաքարիան, այսօրուայ արարչական հրաշագործութիւնը բացափայլ եւ յայտնապէս փողելով, ասաց. «Ուրախացի՛ր, դո՛ւստր Սիոնի, որովհետեւ գալիս է քո Թագաւորը՝ նստած նոր, անմաքուր կենդանիների վրայ»[1]: Թագաւոր եւ փրկիչ, հեզ եւ խոնարհ է անուանում Հօր ծոցածին Բանին, Որն արարչական անուամբ, մարդկօրէն տնօրինութեամբ, ճշմարտապէս մարմին առաւ եւ խոստովանեց Իրեն Թագաւոր՝ Աստուած երկնքի եւ երկրի: Իսկ անմաքուր կենդանիները, որոնց վրայ նստեց, նշանակում են երկու ժողովարանները՝ հրեաների եւ հեթանոսների. անմաքուր՝ այն պատճառով, որ երկուսն էլ բազմաստուածութեան մէջ զուգահաւասար կործանուած էին[2]: Ուստի եւ վերցրեց հողեղէն բնութիւնը, որի միջոցով առաւելագոյն սիրով կապուելով հրեաների եւ հեթանոսների ժողովարաններին՝ նրանց որդեգրութեան արժանացրեց հաւասարակից Հօրը եւ Իր ժառանգութեանը՝ Աւազանի վերածնութեամբ: Եւ, Իրեն տաճարացնելով, նստում եւ բնակւում է սուրբ Եկեղեցում՝ երկնային Հօր համար ընտրելով քահանաներին եւ մարգարէներին, ուստերին եւ դուստրերին:

Իսկ «Սիոնի դուստր» պէտք է հասկանալ սուրբ Եկեղեցին, քանզի երանելի առաքեալները Նրա արքայութեան խորհուրդն Աստուածորդուց Սիոնում ընդունեցին. այնտեղ եւ Սուրբ Հոգու իշխանութիւնը ստացան աստուածային բերանի փչմամբ. այնտեղից էլ երանելի առաքեալները սուրբ Եկեղեցու հիմնադրումը սկզբնաւորեցին. այնտեղից եւ զանազան լեզուներով քարոզութեան կոչուեցին եւ Աստուածորդու Ցարութիւնը նրանո՛ւմ ճանաչեցին: Այս ամենի համար էլ հրամայում է ուրախանալ Սիոնի դստերը, որը սուրբ Եկեղեցին է:

«Աշակերտները գնացին եւ արեցին, ինչպէս Յիսուսն իրենց հրամայել էր: Եւ էշն ու քուռակը բերեցին, նրանց վրայ զգեստներ գցեցին, եւ Նա նստեց նրանց վրայ»[3]: Ի՞նչ էք կարծում, ո՞ր երկու

1 Տե՛ս Զաք. Թ 9:

2 Ցայտնի է, որ Իսրայէլի ժողովուրդը դարեր շարունակ խախտել է հաւատարմութիւնը Եհովայի հանդէպ՝ տրուելով տարբեր կռապաշտութիւնների, սակայն, կարծում ենք, որ այստեղ հեղինակը, հրեաներին բազմաստուածութեան մէջ կործանուած համարելով, ոչ թէ ի նկատի ունի ուղղակիօրէն հեթանոսական կռապաշտութիւնը (մանաւանդ որ Բաբելոնի գերութիւնից յետոյ Իսրայէլը մարգարէների կողմից այլեւս չի յանդիմանուել կռապաշտութեան մէջ), այլ մարդու ներքին կռապաշտութիւնը՝ օրինապահութեան արտաքին քողի տակ բազում մեղանչական մոլուցքների տրուած լինելը:

3 Մատթ. ԻԱ 6-8

աշակերտներն են գնացել. ասուած է առաքեալների երկու խմբի մասին՝ եօթանասուներկուսը, որոնց առաքեց նախքան Իր աստուածեղէն Ցարութիւնը, եւ տասներկուսը, որոնց առաքեց Ցարութիւնից յետոյ՝ փչելով Սուրբ Հոգին[1] եւ ասելով. «Գնացէ՛ք, աշակե՛րտ դարձրէք բոլոր ազգերին»[2]: Իսկ էշն ու նոր քուռակը հրեայ եւ հեթանոս ժողովրդի նորահաւատներն են, որոնք, ընդունելով Նրա վարդապետութիւնը, սուրբ Եկեղեցու մարմինը եւ անդամները կոչուեցին: Իսկ կենդանիների վրայ զգեստներ գցելը հոգու եւ մարմնի մաքրութեան ընծայումն է նրանց, որոնց վրայ պիտի նստէր եւ հանգչէր Աստուածորդին:

«Եւ ժողովրդի բազմութիւնն իր զգեստները փռեց ճանապարհի վրայ»[3]: «Ժողովրդի բազմութիւն» ասելով՝ ի նկատի ունի այն մարդկանց բազմութիւնը, որոնք իրենց մարմնական յանցաւոր ախտերն են Աստուածորդու առջեւ անծածկաբար տարածում: Իսկ Յիսուսին Հրէաստանում եւ Գալիլեայում հետեւելը նշանակում է պատուիրանազանցութեամբ ախտացեալի՝ յանցանքներից ինքնըստինքեան բժշկապետաբար բուժուելը: Եւ «ուրիշներն,- ասում է,- ծառերից ճիւղեր էին կտրում եւ տարածում ճանապարհին»[4]. սա եւս հէնց այնպէս չէ, այլ նշանակում է Աստուածութեան գալստեան արժանաւոր գործակցութիւն, քանզի պատրաստուել էր տիեզերական փրկութիւն կատարել եւ արարածների ընդունայն հնազանդութիւնն արարչական հնազանդութեան փոխել, որպէսզի երկրի եւ ծովի իրենց Աստծուն ամէնքն էլ ճանաչեն եւ մեծարեն, որոնց հետ եւ ծառերն են ընձիւղների հետ նորածին սաղարթ եւ ծաղիկներ ընծայում իրենց Գոյացնողին:

Եւ «առջեւից ու ետեւից գնացող ժողովրդի բազմութիւնն աղաղակում էր եւ ասում. «Օրհնութի՛ւն Դաւթի Որդուն, օրհնեա՛լ է Նա, որ գալիս է Տիրոջ անուամբ. օրհնութի՛ւն բարձունքներում»[5]: «Առջեւից եւ ետեւից գնացող ժողովուրդ» ասելով՝ պէտք է հասկանալ հոգեւոր երկու խմբերը՝ մարգարէութիւն եւ քահանայութիւն, որ նախքան Տիրոջ մարմնանալը խոստովանեցին Նրա գալուստը: Իսկ ետեւից գնացող ժողովուրդը երանելի առաքեալներն են եւ սուրբ

1 Տե՛ս Յովհ. Ի 22:

2 Մատթ. ԻԸ 19

3 Մատթ. ԻԱ 8

4 Մատթ. ԻԱ 8-9

5 Մատթ. ԻԱ 9

Եկեղեցու բազմութիւնը, որ Նրա տնօրինութիւնից յետոյ Դաւթի Որդի են խոստովանում Նրան, որ, անբաժանաբար հայրական ծոցում մնալով, կատարելապէս ծնուեց կուսական որովայնից, եղաւ կատարեալ մարդ՝ առանց մեղքերի: Այս միշտ խոստովանում են երկու ժողովարանները՝ առաքելական խմբերը՝ սուրբ Եկեղեցով հանդերձ:

«Եւ երբ Նա մտաւ Երուսաղէմ, ամբողջ քաղաքը դղրդաց, եւ ասում էին՝ ո՞վ է Սա»[1]: Ամենքի Արարչի ծնունդով մաքրւում եւ երուսաղէմանում է ողջ աշխարհը, քանզի Նրա մարմնանալը նշանակում է աշխարհի համագոյ ոգիների մաքրութիւնը եւ բազմաստուածութեան անմաքրութիւնն աշխարհից վտարելը: Եւ քաղաքացիների դղրդալը հակառակորդի զօրութիւնն է, որով փորձելով՝ գտաւ Նրան որպէս ճշմարիտ Աստուած, Ում աղաղակելով ասում էին. «Գիտենք Քեզ, թէ Ով ես, Աստուծո՛յ Սուրբդ: Ժամանակից շուտ մեզ մի՛ դատիր»[2]: Աստուածացեալ զօրութիւնը նրանց դուրս վանեց եւ հրամայեց Իր ճշմարիտ արարչական անունը բարեբանել Աստուծոյ խոստովանութեամբ եւ ճշմարտափառութեամբ:

«Եւ ժողովուրդն ասում էր. «Սա Յիսուս մարգարէն է, որ Գալիլեայի Նազարէթ քաղաքից է»[3]: Ժողովուրդը, ինչպէս նախապէս ասացինք, պէտք է հասկանալ սուրբ Եկեղեցին, որ միշտ խոստովանում է Նրա Աստուածութիւնը, մարմնանալը եւ Հօր մօտ մնալը, իսկ մարգարէ [ասելը] գալիքը մարգարէաբար եւ աստուածապէս նախագուշակելու պատճառով, ինչպէս որ, Գալիլեայում շրջելով, Հրէաստանում մեռած Ղազարոսին տեսաւ. եւ, նախքան գրաւոր դպրութիւն [ստանալը], օրինականներին դաստիարակեց[4]: Իսկ Նազովրեցի է կոչւում, այսինքն՝ մաքուր, որպէս Իր մարմնաւորմանը հաւատարիմ եւ ճշմարիտ վկայ, «որ մեղք չգործեց, եւ նենգութիւն չգտնուեց Նրա բերանում»[5]:

Եւ մենք, որ այսպէս այս օրերի տիեզերագովը եւ բարեբանողը հանդիսացանք, նրանց աստուածեղէն մտքի հետ համախոհ լծորդութեամբ, գործակցաբար սպասաւորենք, մանկանց հետ բարեբանենք, ծերերի հետ ոստերով հանդերձ երկրպագենք, աշակերտների հետ խոստովանենք Տիրոջ անուամբ եկած Օրհնեալին. բոլորի հետ ամէն

1 Մատթ. ԻԱ 10-11
2 Տե՛ս Մատթ. Ը 29, Մարկ. Ա 24, Ե 7:
3 Մատթ. ԻԱ 11
4 Տե՛ս Ղուկ. Բ 46-48:
5 Ա Պետր. Բ 22

ինչ լինենք, որպէսզի բովանդակ աստուածեղէն շնորհներին հասու լինենք մատակարար Սուրբ Հոգու միջոցով, Որն արարչական շնորհն առատապէս է տալիս արժանաբար հայցողներին, որպէսզի գալով բնակուի մեր ժողովարաններում, տաճարացնի մեր հոգիներն ու մարմինները եւ Սուրբ Երրորդութեան բնակարաններ ու օթեւաններ դարձնի: Ուստի եւ ամենքի Հօրը եւ Միածին ու կենագործող Որդուն եւ մատակարար ու պարգեւաբաշխ Սուրբ Հոգուն մշտնջենաւոր փառաբանութիւն մատուցենք այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գրաբարից փոխադրեց **Սեդա Ստամբոլցեանը:**

ԳՐԻԳՈՐ ԾԵՐԵՆՑ ԽԼԱԹԵՑԻ

Գրիգոր Խլաթեցին (1349-1425 թթ.) Հայ Եկեղեցու նշանաւոր վարդապետներից է՝ մատենագիր եւ բաբունապետ, պատմական վարքա-վկայաբանական, մեկնողական երկերի հեղինակ, բանաստեղծ (գանձ, տաղ, մեղեդի, շարական, ներբող, չափածոյ հանելուկ եւ չափածոյ յիշատակարաններ), եկեղեցական-ծիսական ժողովածուների կազմող, խմբագրող, գրիչ, նկարիչ, երաժիշտ:

Սովորել է Յովհաննէս Որոտնեցու համալսարանում Գրիգոր Տաթեւացու, Գեւորգ Երզնկացու, Յովհաննէս Մեծոփեցու հետ, վարդապետական աստիճան եւ դասասելու իրաւունք է ստացել Որոտնեցու լծակից Սարգիս բաբունապետից եւ դասաւանդել վերջինիս Խառաբաստայ վանքում տեղաւորուած վարդապետարանում: 1405 թ. Սարգիս եւ Վարդան բաբունապետներից յետոյ ստանձնում է վարդապետարանի բաբունապետութիւնը Ցիպնավանքում, սակայն ծանր պայմանների հետեւանքով դպրոցը քայքայւում է:

Գրիգոր Տաթեւացին 1407-08 թթ. համալսարանը տեղափոխում է Մեծոփայ վանք, որտեղից Տաթեւ վերադառնալիս իր փոխարէն բաբունապետ է նշանակում Գրիգոր Խլաթեցուն: 1410 թ. Գ. Խլաթեցին այն յանձնում է Թովմա Մեծոփեցուն, իսկ ինքն ամբողջովին նուիրւում եկեղեցական-մշակութային գործունէութեան:

Աշակերտ բանաստեղծ Առաքել Բաղիշեցին ուսուցչի մասին գրում է, որ «գրէր յամենայն ժամ յամարայնի եւ ի ձմերայնի, յաշուն եւ ի գարուն, ի տուէ եւ ի գիշերի, ի տուն եւ ի դուրս, ի վանք եւ ի գեօղ եւ ի քաղաք... մինչեւ յօր նահատակութեան... գրէր եւ վաճառէր եւ գինն տայր կարօտելոց...»: «Եւ զամենայն վարդապետս եւ կարգաւորս ի նոյն յորդորէր»,- լրացնում է Թովմա Մեծոփեցին:

Նրա խմբագրութեամբ Հայոց Եկեղեցին օգտագործում է «Ցայսմաւուրք», «Տօնական», «Գանձարան» եկեղեցական մատեանները, նրա ընդօրինակութեամբ՝ Աւետարան եւ Ճաշոց, Պատմութիւն եւ Մեկնութիւն, Ժողովածու, թուղթ եւ շրջաբերական:

Նահատակւում է անհաւատների ձեռքից:

1400 թ. Խառաբաստայ վանքում դպրոցի համար ընդօրինակում է Սարգիս Շնորհալու «Կաթողիկէից թղթոց» մեկնութիւնը, որի մէջ հանդիպում ենք սոյն «դրուատին», որի շարժառիթի մասին գրում է ինքը՝ տեղում:

Ի դէպ, այս ձեռագրին կցել է Վարդան Արեւելցու «Հնգամատեանի» իր համառօտումը եւ հայերից այլ ճառեր: Ձեռագիրը պահւում է Մաշտոցի անուան մատենադարանում (N 5435):

Արտաշէս Մաթեւոսեան

[ԴՐՈՒԱՏ ԳՈՎՈՒԹԵԱՆ Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ][1]

Զի ո՞վ ոք կարիցէ արժանապէս գովել զայնոսիկ, որոց գովութիւնն Աստուծոց էր եւ ոչ ի մարդկանէ: Բայց զի բարեխաւսութեամբ սոցա եւ աւժանդակութեամբ թեւոցն աղաւթից արժանի լիցուք յիշատակել ի շրթունս անբիծ հաւատոյ զաւրհնեալն ի յերկինս եւ զգովեալն ի յերկրի, զբարեբանեալն յընդհանուր գոյից, այսինքն՝ զերանուհի Կոյսն Մարիամ, զամէնաւրհնեալ սուրբ Աստուածածինն, զերանեալն յամենայն ազգաց, զահարկուն դիւաց եւ զսարսափելին հրեշտակաց, զմեծութիւնն ազգին կանանց եւ զպարծանքն բոլոր հողեղինաց:

Զդուստրն ասեմ, որ լաւ է Ադամեանս տոհմի, քան զտասնորդի(՞) ըստ Սողոմոնի: Այս է՝ քան զբոլոր մարդկային բնութիւնս, եւ մանաւանդ՝ քան զամենայն երամս սրբոց եւ զդասս արդարոց: Զի նա է մայր ստոյգ կենդանեաց, որ ըստ Աստուծոյ եւ վասն Աստուծոյ, զի յաղագս նորա հանդիսացան մարգարէքն, եւ նովաւ ընտրեցան առաքեալքն, նովաւ պարծին կուսանք[ն], եւ ի նա խրախուսին դասք ճգնաւորացն: Ի նմանէ զաւրացան մարտիրոսքն, եւ յուսով նորա արիացան նահատակքն: Նա է զէն վարդապետաց ուղղափառաց եւ պսակ հայրապետացն սրբոց:

Եւ արդ, նա, որ այսքան բարեաց է պատճառ, զիա՞րդ դրուատի յանարժանիցս եւ որպէ՞ս գովի ի մեղաւոր շրթանցս: Եւ զի՞նչ աւրինակաւ երանի յաղտեղի լեզուս: Եւ ո՞ր բանիւ բարեբանի ի գարշ բերանոյս: Այլ վստահացեալ ի բանն, որ ասացաւ ի նմանէ, թէ՝ երանիցեն ինձ ամենայն ազգ, յայսմանէ համարձակիմ փանաքիմաց տեսութեամբս եւ տկար բանիւս երանել զնա, զի թերեւս ընկալցի ըստ գթասէր բարուցն մարդասէր կամաւքս իւրովք եւ մի՛ խոտեալ անարգեսցէ զիս եւ զբանս իմ ըստ արժանեաց իմոց, որպէս Որդի նորա զպատարագն Եփթայեաց եւ զխնկարկութիւնն որդոյն Ամասեայ եւ զանպատշաճ հպիլն Ոզեայ ի տապանակն սուրբ, որ աւրինակ էր նորա, իբրեւ զստուեր կապարեայ՝ ընդ ծաղիկն ոսկ[ւ]ոյ եւ զանազան գունոց երանգոց վայելչականաց: Այլ ընկալցի եւ հոտոտեսցի, որպէս Մնեալն ի նմանէ, զպատարագն բոլորապտուղ՝ մատուցեալ ի սեղանն սուրբ:

Եւ արդ, թէպէտ եւ առաքեալքն հաղորդեցան Աստուծոյ Հաւր միջնորդութեամբն Յիսուսի, այլ ոչ այնքան, որպէս զմայր Բանին Աստուծոյ: Զի ծնեալն ի Հաւրէ՝ անմայր, ծնաւ ի նմանէ՝ անհայր: Եւ այս ճշմարիտ հաղորդութիւն ընդ Աստուծոյ սրբոյ Կուսին Մարիամու՝ բարձրագոյն քան զառաքելոցն: Եւ թէ առաքեալքն շաւշափեցին զԲանն ի մարմնի, նա՝ յարգանդի տարեալ իննամսեայ ժամանակաւ, եւ ծնաւ որպէս մայր զԱստուածն բոլորից: Եւ կուսութիւնն ծնողին անարատ մնաց, զի Աստուած էր Մնեալն:

Գրկաւքն երարձ, բազկաւքն գգուեաց, ձեռաւքն շաւշափեաց, մատամբքն զգեցոյց, շրթամբքն համբուրեաց, բերանովն ողջունեաց, բանիւ աւրհնեաց, լեզուաւն գովեաց, մտաւքն բարեբանեաց, հոգ[ւ]ովն փառաւորեաց, մարմնովն սպասաւորեաց, սրտիւն աղաչեաց, ստեամբքն դիեաց, կաթամբքն կերակրեաց եւ ամենայն զգայարանաւք անդամոց մարմնոցն պաշտպանեաց Այնմ, որ ի վեր յերկինս ի հրեղէն անիւան ճոխանայր: Եւ երեքսրբեան փառատրութեամբ ընդ Հաւր եւ ընդ

[1] «Մեկնութիւն Կաթողիկէից թղթոց Սարգսի Շնորհալւոյ» երկի 1400 թ. ընդօրինակութեան (ՄՄ ձեռ. N 5435, թ. 364) «Երանելւոյն Սարգսի Շնորհալւոյ վարդապետի արարեալ Մեկնութիւն ի փոքունս մեծամեծացն յանդգնելոց չեն» գլխից յետոյ (էջ 355) Խլաթեցու կողմից յաւելուած է. «Եւ արդ, զդրուատ գովութեան առաքելոցն սրբոց՝ զորդուցն լուսոյ, ըստ մերում կարի արժանապէս հատցուք, թէպէտ եւ արժանաւորութիւն նոցա գերազանց է, քան զբան գովեստի մտաց մսեղինի», որին անմիջապէս յաջորդում է ներկայացուող բնագիրն անշաւն միջամտութիւններով:

Ամենասուրբ Հոգ[ւ]ոյն ճշմարտի զերեքսրբեանն ընդունէր զաւրհնաբանութիւն:

Եւ թէ առաքեալքն բարեկամք Աստուծոյ կոչեցան, նա՝ մայր:

Նոքա՝ սիրելիք, եւ նա՝ ծնող:

Նոքա՝ սպասաւորք, եւ նա՝ դշխոյ:

Նոքա՝ ծառայք, եւ նա՝ տիկին:

Նոքա՝ զինուորք, եւ նա՝ թագուհի:

Նոքա՝ առաքեալք, եւ նա՝ մայր Թագաւորին:

Նոքա՝ քահանայք, եւ նա՝ սրբուհի:

Նոքա՝ երիցունք, եւ նա՝ տիրուհի:

Նոքա՝ հրամանակատարք, եւ նա՝ հրամայող:

Նոքա՝ դատաւորք, եւ նա՝ բարեխաւս:

Նոքա՝ իշխանք, եւ նա՝ ազատ:

Նոքա՝ լոյս աշխարհի, եւ նա՝ ծագող անմատոյց Լուսոյն:

Նոքա՝ աղ, անհամից՝ համեմ եւ հոտելոց՝ պիտան, եւ նա՝ համեմ եւ անուշարար երկնաւորաց եւ երկրաւորաց:

Նոքա՝ դրախտ աստուածատունկ, եւ նա՝ ծառ կենաց, բերող զանմահարար Պտուղն:

Նոքա՝ վարդք, եւ նա՝ բուրումն անուշութեան:

Նոքա՝ ծաղիկք, եւ նա՝ ծաղկեալ պարտէզ Աստուածութեանն:

Նոքա՝ ակունք պատուականք, եւ նա՝ թագ ի գլուխն Աղամայ:

Նոքա՝ ոսկի կեփազ[ե]այ, եւ նա՝ պսակ Եւայի:

Նոքա՝ հարսնածուք Փեսային, եւ նա՝ հարսն Երկնաւորին:

Նոքա՝ աւրիորդք՝ մաքուր Հարսին, եւ նա՝ ծնող Արքային:

Նոքա՝ ոչ էին [յ]աշխարհէս, եւ նա՝ ի վեր քան զնոսա:

Նոքա՝ հրեշտակաց դասակից, եւ նա՝ ի վեր քան զսերո[վ]բէսն:

Նոքա՝ անմարմնոյն քաղաքակից, եւ նա՝ ընդ Ամենասուրբ Երրորդութեանն դասաւորեալ՝ յանմտանելին եղականացս:

Նոքա՝ քերո[վ]բէիցն ձայնակից, եւ նա՝ պաշտեալ ի սերո[վ]բէից:

Նոքա՝ աթոռոցն փառաբանակից, եւ նա՝ երկրպագեալ յերկնաւորաց եւ յերկրաւորաց եւ ի սանդարամետականաց:

Զի Հաւր Աստուծոյ հաղորդացաւ,

ընդ Միածնին իւր դասեցաւ

եւ ընդ Հոգ[ւ]ոյն փառաւորեցաւ:

Վասն որոյ անկանիմք առաջի նորա մեղուցեալ որդիքս, զի մաւր գութ ունի, եւ աղաչեմք զնա յամենայն սրտէ՝ ասելով.

«Ամենամաքուր տաճա՛ր Աստուծոյ Բանին՝ բարձրագոյն քան զերկինս եւ խորագոյն քան զանդունդս, լայնագոյն քան զերկիր եւ ի վեր քան զմիտս:

Դու՝ Տիրամա՛յր Կոյս, որ զամենեցունց գովութեան պատճառս՝ յանձին բարձեալ տարար զումեմն զհաւատս, զմիւսոյն՝ զլոյս եւ զումեմն՝ զսէր, զայլ ումեմն՝ զխոհեմութիւն եւ զմիւսոյն՝ զարիութիւն, զումեմն՝ զողջախոհութիւն, զայլ ումեմն՝ զարդարութիւն, զմիւսոյն՝ զխոնարհութիւն եւ յումանց՝ զսրբութիւն եւ զամենայն առաքինութեան տեսակս յանձին քում ցուցէր, որպէս ասէ ոմն ի ծառայից քոց եւ ի դաւանողացն սրբոց, թէ Աստուածն Բան եւ Արարիչն հանուրց ոչ միայն վասն կուսութեանն հաճեցաւ ի Մարիամ, այլ վասն խոնարհութեանն եւ սուրբ սրտին յղացաւ յարգանդի նորա եւ ծնաւ ի նմանէ որպէս մարդ Աստուածն բոլորից:

Արդ, աղաչեմ զքեզ, սո՛ւրբ Աստուածածին Մարիամ, որ այնքան չնորհաց ընդունակ եղեր եւ ունիս համարձակութիւն բարեխաւսել առ Որդին քո Միածին վասն դաւանողաց քոց, որք անկեալ երկիր

պագանեմք առաջի մարդասէր, անոխակալ եւ անյիշաչար կամաց քոց:

Գթա՛ եւ յիս, որ դաւանողս եմ մայրութեան քո Աստուծոյ, եւ աղաչեա՛ վասն իմ զառ ի քէն Մնեալն:

Բամել զվարատեալս ի սուրբ խորհրդոց եւ զաղտեղեալս ի բարի գործոց եւ տածել ի գաւիթ սրբութեան Մարմնացելոյն առ ի քէն:

Ի քէն աղերսիս հայցեմ, տիրածի՛ն Կոյս, մի՛ անտես առներ զաղաչանս իմ, այլ մատո՛ Միածնի քո:

Գորովագո՛ւթ Մայր, ծնո՛ղ Աստուծոյ Բանին, զմեղաւք հարեալս ի բարեաց աղաչանաւք քո պատուաստեա՛ ի ծնեալն ի քէն Բարին:

Որ բարեխաւսես վասն ազգի մարդկան, անմոռաց յիշմամբ պաղատեա՛ վասն մեր առ ծնեալն ի քէն Որդի:

Բաբունտոյն էիցս ծնո՛ղ, մի՛ անտես առներ զմեզ, զի գին եմք արեան Փրկչին, որ ի քէն ծնաւ յերկրի:

Ինձ մեղաւորիս դու լո՛ւր, միջնո՛րդ հաշտութեան մերոյ, արտասուաւք հայցեա՛ վասն իմ, Աստուծոյ ծնո՛ղ եւ մա՛յր:

Է ինձ երանի՛ յայնժամ, թէ լինիմ արժանացեալ մաղթանաւք սրբոցն ընդ քեզ՝ Միածնին քոյոյ տեսլեան»:

Եկեղեցիների միջեւ աստուածաբանական երկխօսութեան փորձը բազմադարեան աւանդութիւն ունի. դրա անհրաժեշտութիւնը մշտապէս զգացուել է՝ Քրիստոսի Եկեղեցու հաղորդական միութիւնը վերականգնելու համար: Մեր մօտ անցեալը նոյնպէս նշանաւորուեց Եկեղեցիների միջեւ փոխըմբռնում հաստատելու կարեւոր իրադարձութիւններով, որոնցից կարելի է առանձնացնել Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների եւ Կաթողիկէ Եկեղեցու միջեւ աստուածաբանական երկխօսութեան Վիեննայի հինգ ոչ պաշտօնական խորհրդաժողովները (1971, 1973, 1976, 1978, 1988), Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների եւ Ուղղափառ Եկեղեցու ոչ պաշտօնական չորս խորհրդակցութիւնները (1964, 1967, 1970, 1971) եւ երեք պաշտօնական հանդիպումները (Ս. Բիշօյի վանք, 1989. Ժամբեսի, 1990. Ժնեւ, 1993), որոնք աչքի են ընկել փոխըմբռնման, հանդուրժողականութեան եւ սիրոյ մթնոլորտով: Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցին իր գործուն մասնակցութիւնն է ունեցել այս երկխօսութեան մէջ, ուստի պատշաճ նկատուեց մեր ընթերցողին հաղորդակից դարձնել այդ կարեւոր եկեղեցագիտական իրադարձութիւններին: Թարգմանաբար (անգլերէնից) ձեզ ենք ներկայացնում Տիրան արքեպիսկոպոս Ներսոյեանի «Քրիստոսաբանութեան մէջ համաձայնութեան խնդիրները» (Վիեննա, 1971) յօդուածը, Վիեննայի Ա խորհրդաժողովի Կոմունիկէն եւ Ժամբեսիի Բ պաշտօնական հանդիպման Համատեղ յայտարարութիւնը:

Մեսրոպ քահանայ Արամեան

Տիրան արքեպիսկոպոս Ներսոյեան

ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

ԺՈՂՈՎՆԵՐԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

Որեւէ քրիստոնեայ, մուտք գործելով Եկեղեցի եւ գտնելով իր տեղը որպէս հաւատացեալ, իրեն պատասխանատու է զգում խոստովանել ճշմարիտ հաւատքը եւ գործել ըստ այդ հաւատքի՝ առաջնորդուելով իր գիտակցութեամբ, որն իր հերթին առաջնորդւում է Եկեղեցով եւ ներշնչւում Սուրբ Հոգով: Ժողովի խնդիրն է ցոյց տալ երկնքի արքայութեան ճշմարտութեան ճանապարհը՝ բառային պնդումների միջոցով խօսելով Եկեղեցու հետ հաւատքի տարրերի մասին, երբ հարցը վարդապետական է կամ դաւանական: Այսպիսի պնդումներն անհրաժեշտաբար կենցաղավարում են այնքան ժամանակ, քանի դեռ պահպանւում են տուեալ ժամանակաշրջանի լեզուի մէջ: Ժողովը խօսում է հաւատացեալների հետ, որպէսզի հաստատի նրանց հաւատքը՝ իր ուսուցումը շաղկապելով Եկեղեցու աւանդութեան հետ:

Քրիստոնեայի հաւատարմութիւնը ոչ թէ ժողովի նկատմամբ է՝ որպէս այդպիսին, այլ Եկեղեցու նկատմամբ՝ որպէս ամբողջականութեան, որն ինքնին բարձրագոյն ժողովն է եւ պահապանողը հաւատքի աւանդի: Ժողովը քննւում է [սրբազան] Աւանդութեան հաւատքով, եւ ոչ թէ՝ ընդհակառակը: Ահա թէ ինչու որոշ ժողովներ մերժուել են Եկեղեցու կողմից երկար կամ կարճ ժամանակի ընթացքում, թէպէտ նրանք գումարուել են եւ իրենց աշխատանքը կատարել պատշաճ կերպով: Ուրիշ ժողովներ ընդունուել են տիեզերականօրէն կամ մասնակիօրէն, եւ նրանց որոշումները համարուել են որպէս ուղղափառ: Հետեւաբար, գոյութիւն ունի ժողովների նուիրակարգութիւն՝ թէ՛ ըստ իրենց վերագրուած կարեւորութեան, թէ՛ ըստ իրենց ընդունման սահմանների ընդարձակութեան: Պատմական փաստ է, որ յաճախ,

ժողովների [կանոնական] ընդունումից յետոյ, նրանց որոշումները յետագայ երկխօսութեան առարկայ են եղել Եկեղեցու ներսում:

Այս նուիրակարգութեան բարձրագոյն կէտն է Նիկիոյ ժողովը՝ ոչ այնքան այս ժողովի ձեւական կանոնականութեան, որքան նրա կատարած գործի պատճառով՝ Եկեղեցով նրան ամրագրուած բարձրագոյն կարեւորութեան եւ բոլոր տեղերում ու բոլոր յետագայ դարերում նրա հրահանգների իսկապէս տիեզերական ընդունելութեան պատճառով. ոչ միայն նրա համար, որ նա գրաւում է ժողովների նուիրապետութեան բարձրագոյն դիրքը, այլ նաեւ նրա համար, որ նրա որոշումներն ընդհանրապէս չափանիշային են համարուել բոլոր յաջորդ ժողովների համար:

Ժողովների ընդհանրապէս ընդունելի համարման չափանիշը հաստատուն եւ միօրինակ չի եղել: Ե՞րբ պէտք է հրաւիրուի ընդհանուր ժողովը: Ո՞վ պէտք է հրաւիրի: Ինչպիսի՞ ներկայացուցչութիւն պէտք է ունենայ այն: Ի՞նչ խնդիրներ պէտք է քննի: Որքանո՞վ ազատ պէտք է լինի արտաքին ճնշումներից: Որքանո՞վ հեռու եւ որքանո՞վ երկար նրա որոշումները պէտք է համարուեն պարտադիր: Այս հարցերը սովորաբար տրուել են post factum *եւ յաճախ պատահականօրէն՝ պատմութեան ելեւէջների ընթացքում: Յաճախ ժողովի ճակատագիրը կախուած է եղել նրա հովանաւորների զօրութիւնից: Այսուամենայնիւ ակնկալւում է, որ ժողովները կարտայայտեն Եկեղեցու միտքը, երբ որ այն կպահանջուի: Ակնկալւում է, որ նրանք կլինեն Եկեղեցու միութեան պահապանը եւ արտայայտիչը: Ակնկալւում է, որ նրանք կմղուեն Սուրբ Հոգով [տե՛ս Գործք ԺԵ 28]: Եւ այս ֆունկցիաների կենսական անհրաժեշտութեան պատճառով ժողովականութիւնը* (conciliarity) *պատկանում է Եկեղեցու կառոյցի էութեանը՝ բոլոր մակարդակների համար: Սակայն մեր մարդկային անհաստատութիւնների պատճառով հնարաւոր չէ միշտ ընդունելի որոշակիութեամբ որպէս վաւերական սահմանել որեւէ առանձին ժողովի պնդումը: Ուստի մենք չպէտք է գայթակղութիւն ունենանք մտածելու, որ ժողովները մի տեսակ գերբնական ներխուժումներ են Եկեղեցու կեանքի մէջ՝ աւելի բարձր հեղինակութիւն ունենալով, քան իրենց բնականոն պատմական դերն է նրանց շրջապատող իրադարձութիւնների բովանդակութեան մէջ:*

Ժողովի մէջ կարծիքների տարամիտումը յաճախ արտացոլում էր դաւանական մեկնաբանութեան հարցերում առկայ անհամաձայնութիւնները Եկեղեցու՝ որպէս ամբողջականութեան մէջ: Բայց մինչդեռ ժողովի մէջ հայեացքների տարբերութեան լուծումն արագօրէն կարող է բացայայտուել քուէների հաշւումով կամ երբեմն այլ ձեւերով, նոյնը չի կարելի ասել աշխարհով մէկ սփռուած Եկեղեցու մէջ տարբերութիւնների համադրման մասին: Հետեւաբար, անհանդուրժող մեծամասնութիւնը յաճախ դիմում էր փոքրամասնութեանը որպէս հերետիկոսների նշաւակելու հեշտ ճանապարհին՝ պահանջելով եւ իրենց վերապահելով Սուրբ Հոգին եւ միջինը բացառող տրամաբանական կանոնով չարին յանձնելով փոքրամասնութեանը: Եւ յետոյ նրանք դիմում էին աշխարհիկ հեղինակութիւնների՝ համոզչութեան այլ մեթոդներով հալածելու չարին: Այս մեթոդները, որոնք դժուարութեամբ կարող են յարմարուել Եկեղեցում Սուրբ Հոգու ներգործութեան հաւատքին, գլխաւորապէս հակարդիւնք են եղել: «Պատճառ փախչելոյ մերոյ ի ձէնջ,- գրում է ԺԲ դարի վերջի հայոց կաթողիկոս Ներսէս Դ-ը՝ իր խօսքն ուղղելով Կ. Պոլսի կայսրին,- աւերումն եկեղեցեաց եւ սեղանոյ Աստուծոյ կործանումն եւ նշանաց Քրիստոսի խորտակումն եւ բազում նեղութիւնք պաշտօնէից եւ պէս պէս զրպարտութիւնք, որպէս եւ ոչ ի մէջ թշնամեաց Քրիստոսի, յորս մերձ եմք, զի այսպիսի գործ ոչ միայն եւ զբաժանեալսն ոչ միաւորէ, այլ եւ զմիաւորեալսն պառակտէ ի միմեանց: Քանզի հակառակասէր է բնութիւն մարդկան, զորս ոչ այնքան բռնութիւն, որչափ խոնարհութիւն եւ սէրն ձգէ ի հրամայողին կատարումն»[1]:

Ուղղափառութիւնն ամրակցելով ժողովների հեղինակութեանն ու նրանց արձակած աստուածաբանական որոշումների անբեկանելիութեանը եւ քննելով Եկեղեցու մի մասի ուղղափառութիւնը կամ ոչ ուղղափառութիւնը ընդունման կամ մերժման հիմքի վրայ՝ կախուած հանգամանքներից՝ այդ հեղինակութիւնն անկարող էր լինում միաւորել Եկեղեցին եւ մեծ հաւանականութեամբ շարունակելու է անել նոյնը: Քանի որ ժողովի դիրքի անշարժութիւնը պատմութեան մէջ եւ նրա պատկերը ձեւաւորուել են նրան շրջապատող իրադարձութիւնների միջավայրում, համաձայնութեան գալ նրա գնահատման հարցում չափազանց դժուար է: Միւս կողմից՝ երբ մենք դիտարկում ենք

1 *«Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ»*, Երուսաղէմ, 1871, էջ 115

ժողովը վարդապետական հարցերի տեսանկիւնից որպէս աւելի ուսուցող, քան եկեղեցու օրէնսդրական օրգան, եւ մեր ուշադրութեան սեւեռակէտը նրա բացատրութիւններում պարունակուող ներիմաստների վրայ է, այնժամ ցանկալի համաձայնութեանը կարելի է հասնել այնքանով, որքանով ժողովի ուսուցումը կհամապատասխանի նոր ըմբռնումներին եւ մեկնաբանութիւններին: Այլ խօսքով, երբ մենք փնտրում ենք լայն համաձայնութիւններ մեր հաւատքի հիմնադրոյթների հարցում եւ ժողովները համարում ենք աւելի հաստատող հեղինակութիւններ, քան սկզբնարար եւ սահմանող, ապա մեր միութեան ձգտումն աւելի կծառայի իր նպատակին: Օրինակ՝ մեր եկեղեցին լիովին համաձայն է 787 թ. Նիկիոյ երկրորդ ժողովի որոշումներին ընդդէմ պատկերամարտների, թէպէտ պատկերամարտները հզօր էլ եղել Հայաստանում: Մինչդեռ ինքը ժողովը ձեւականօրէն չընդունուեց որպէս այդպիսին: Նոյնը կարելի էր ասել 553 թ. Կ. Պոլսի երկրորդ ժողովի մասին: Մեր ժամանակներում Վատիկանը ցոյց տուեց աշխարհին, որ խնդիրներին մօտենալու արդիւնաւէտ ուղին հանդուրժողականութեան, ըմբռնման, խոնարհութեան եւ աղօթական անդրադարձման մէջ՝ Աստուծոյ բարի օրերի պառակտման վէրքերի բուժման տեսիլքով հանդերձ, լիակատար վստահութեամբ՝ Սուրբ Հոգու զօրութեան մէջ:

Ընդհանրական ժողովների բնոյթի եւ կարգավիճակի դիտարկումը կարեւոր է, քանզի մեր քրիստոսաբանական խնդրի քննարկման վերջնական նպատակը դժուարութեամբ հասանելի կլինի, քանի դեռ մեր դիրքորոշումները ժողովների նկատմամբ չեն յստակուել եւ ըմբռնուել:

ՄԻՈՒԹԵԱՆ ՍԵՒԵՌԱԿԷՏԸ ԾԷՍԸ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՆ ԵՆ

Կապը, «որով հաղորդակցւում է Քրիստոսի ողջ Մարմնին իր բոլոր յօդերով եւ յօդակապերով եւ դրանով իր աճը ստանում Աստուծոյ ծրագրի համաձայն» [տե՛ս Կող. Բ 19], քրիստոնէական կեանքն է՝ սուրբ Հաղորդութեան մէջ կենտրոնացած եւ յայտնուած: Տիեզերական եւ այլ ժողովների խնդիրն ու դերը այս միութեան պահպանութիւնն է, երբ այն վտանգուած է նշմարւում: Եւ հաւատքի միութիւնը միայն մէկ մասն է աւելի լայն միութեան այն կեանքի, ինչ իմաստով

Քրիստոս գործածեց խօսքը, երբ ասաց. «Ես եմ Ճշմարտութիւնը, Ճանապարհը եւ Կեանքը» [Յովհ. ԺԴ 6]: Հերձուածները մերժում են եւ դատապարտում, որովհետեւ նրանք սպառնում են խզել կապը մարմնի եւ Գլխի՝ Քրիստոսի, ինչպէս նաեւ մարմնի անդամների միջեւ: Այժմ, երբ մենք քննում ենք մեր Եկեղեցիների խորհուրդները եւ յատկապէս սուրբ Պատարագը, այնտեղ մենք բաժանութեան պատճառ կամ առիթ չենք գտնում: Մեր քրիստոսաբանութիւնը, որն ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն խոստովանում ենք մեր ծիսական եւ ընդհանրապէս խորհրդական կեանքում, որեւէ կարեւոր վիճաբանութեան առիթ չի տուել: Փաստօրէն, նրանք գործածւում են այնպէս, ինչպէս միշտ եղել են ունիաթ կաթոլիկների կողմից, որոնք Հռոմի ենթակայութեան տակ են: Փոքրիկ խնդիրներ, ինչպէս օրինակ՝ ընդխառնումը կամ մասնակցութիւնը երկու կողմերում եւ նման տարբերութիւններ, յանկարծակիօրէն ծագել են մեր օրերում եւ այն ժամանակ, սակայն հիմա այսպիսի բաները նոյնիսկ քննարկման առարկաներ չեն:

Գրիգոր Դ հայոց կաթողիկոսը 1179 թ., երբ բանակցութիւններ էին գնում յոյների հետ հաղորդուելու համար, գրել է. «Եթէ իցէ երկուց ոմանց ընթանալ ընդ մին ճանապարհ, լիցի՞ հնար միոյն մոլար լինել եւ միւսոյն ուղղորդ, եթէ՞ ոչ: Արդ, ուղեկիցս մեզ արժան է իմանալ եւ զճանապարհ զբանս Աստուածաշունչ Գրոց եւ առաջնորդ զհարս սուրբ...»[1]: Եկեղեցու ծիսական եւ խորհրդական կեանքն իր հոգեւորականութեան եւ ժողովրդի հաւատքի, մտքի եւ հոգեւոր փորձառութեան ներիսկ արտայայտութիւնն է: Միւս կողմից, ծէսն իր դրոշմն է դնում երկրպագող համայնքի գիտակցութեան վրայ՝ որպէս շնորհի հաղորդակցման ուղի: Դաւանութեան բոլոր կէտերը վերջ ի վերջոյ փորձւում են եկեղեցու կեանքում՝ մի կողմից՝ հիմնական աւանդութեամբ, միւս կողմից՝ տարիների փորձառութեամբ:

Ապա հարց է առաջանում. եթէ միաբնակութեան եւ երկաբնակութեան խնդիրները չեն ծագում մեր խորհրդական եւ ծիսական առօրեայում, ինչո՞ւ որեւէ ժողովի կամ ժողովների կողմից ձեւաւորուած որոշակի դրոյթներ պիտի թոյլատրուեն՝ վրդովելու Եկեղեցու իրական եւ գոյեղէն միութիւնը նրա կեանքի ամենակենսական շրջա-

[1] Գոլշ, էջ 321

նում: Քրիստոսի եւ Նրա Աւետարանի հանդէպ մեր հաւատքը, Եկեղեցու հիմնական աւանդութեան նկատմամբ մեր հաւատարմութիւնը, մեր ընդհանուր ծէսերն ու խորհուրդներն ունեն իրենց յատուկ զօրութիւնը եւ շնորհը՝ Սուրբ Հոգով տրուող, որը պիտի առաջնորդի մեզ միութեան, եթէ չենք պատնէշում ճանապարհը՝ համաձայնութիւն փնտրելով այնպիսի բաներում, որոնք էական չեն հաւատքի համար: Ինչպէս որ ճշմարտութիւնն առաջնորդելու է մեզ դէպի ազատութիւն, այնպէս էլ ազատութիւնը Սուրբ Հոգու մէջ պիտի առաջնորդի մեզ միութեան՝ Քրիստոսի ճշմարտութեան մէջ: Երբ մեր պաշտամունքի մէջ արտասանում ենք Նիկիոյ Հանգանակը, դրանով անուղղակիօրէն յարգանք ենք մատուցում այն հայրերին, ովքեր հաւաքուեցին այդ ժողովին եւ կազմեցին այն: Երբ տեսնում ենք մեր եկեղեցիները զարդարուած սրբազան պատկերներով եւ բազում այլ իրերով, որոնք, մեր ծիսական աղօթքներից մէկի համաձայն, «կրում են Աստծուն մեզ համար» (θεοδόχος) մեր հոգեւոր յորդորման համար, անուղղակիօրէն արդարացնում ենք նրանց գործը, ովքեր պաշտպանել են նրանց գործածութիւնը: Երբ ներբողներ ենք երգում Աստուծոյ Մօրը՝ Աստուածածնին, եւ խնդրում նրա բարեխօսութիւնը, դրանով համաձայնում ենք նրանց հետ, ովքեր պաշտպանել են Կոյսից ծնուած Աստուածամարդու Անձի միութիւնը: Երբ մեր ծիսական աղօթքներում եւ խորհուրդներում հաւասարապէս շեշտում ենք Քրիստոսի Աստուածութիւնը եւ մարդեղութիւնը առանց շփոթի ու բաժանութեան եւ տեսնում Նրա մէջ մեզ պէս մարդ, սակայն առանց մեղքի, միաժամանակ՝ Սուրբ Երրորդութեան Երկրորդ Անձին, դրանով արտայայտում ենք մեր համաձայնութիւնը նրանց ուսուցման հետ, ովքեր մերժեցին ե՛ւ Նեստորականութեան, ե՛ւ Եւտիքէսականութեան սխալները: Այսպէս խոստովանելն աւելի իրական է, քան որոշակի ձեւական դրոյթներին համաձայնելը: Պատկերագրումը, քրիստոնէական արուեստը, ծիսական կեանքը, շարականները եւ Եկեղեցում գործող շնորհի նման ընձիւղումները հաւատքի արտայայտութիւններ են: Եւ զարմանալի է, որ ձեւերի եւ կերպերի անվերջ բազմազանութիւնների միջով, դարերի միջով հաւատքի սկզբանական աւանդը՝ բուն Աւանդութիւնը, գործնականօրէն անվնաս է մնացել իր միութեան մէջ: Ես փորձում եմ յատուկ ուշադրութիւն հրաւիրել այն բանի վրայ, որ եթէ մեր հաղորդական եւ խորհրդական կեանքում մենք բաժանութեան պատճառ չունենք եւ եթէ իրապէս հաղորդութեան մէջ ենք սուրբերի հետ,

ովքեր գնացել են դէպի իրենց խոստացուած պարգեւները, ապա մեր բաժանութեան պատճառները պէտք է փնտրենք աւելի ընկերային օտարացման մէջ կամ որեւէ այլ տեղում եւ ոչ՝ Քաղկեդոնի ժողովի կամ որեւէ յետագայ ժողովի ձեւական ընդունման կամ մերժման մէջ:

ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Դիտարկելով Եկեղեցու վարդապետական գործունէութիւնը արդի դարաշրջանում՝ մենք գտնում ենք, որ հիմնական խնդիրը դեռեւս քրիստոսաբանութիւնն է: Այն միշտ ուշադրութեան կենտրոնում է: Քրիստոսին հաւատալը քրիստոնէական վարդապետութեան առանցքն է: Եւ Նոր Կտակարանն այս վարդապետութեան նախահիմքն է: Քրիստոս ճշմարտութեան յայտնութիւնն է Եկեղեցուն եւ Եկեղեցու միջոցով՝ մարդկութեանը: Այս յայտնութիւնը Աստուծոյ սէրն է, որ պատասխանում է մարդկութեան փրկութեան SOS մշտական ճիչին: Այս ճիչը ստանում է իր պատասխանը Քրիստոսի մէջ, որ մեր Փրկիչն է: Ո՛չ աշխարհիկ հրաշքները, ո՛չ էլ գիտական գիւտարարութիւնները չեն կարողանայ լուծել մարդկային հոգու այդ փրկութեան ճիչը: Քրիստոսի կանչը այս կամ այն կերպ, Եկեղեցում կամ Եկեղեցուց դուրս, երիտասարդութեան, ինչպէս նաեւ տարէցների մէջ մշտապէս զօրեղ է: Միակ հրաշքը, որով մարդը կարող է փրկուել տիեզերական քայքայման եւ կործանման աղբակոյտը նետուելուց, Ենովքի հրաշքն է՝ Հին Ադամից եւ մահուանից դէպի Քրիստոս՝ Նոր Ադամ եւ կեանք փոխուելու հրաշքը, մարդու՝ ժամանակաւորից դէպի յաւերժական բարձրանալու հրաշքը:

Հետեւաբար, Եկեղեցու դերն է լինել այս վերփոխման, այս նորոգութեան գործիքը՝ Սուրբ Հոգու զօրութեամբ քարոզելով Քրիստոսին՝ Աստուծոյ Որդուն:

Եթէ այդպէս է, ապա քրիստոնեաների համար քրիստոսաբանութիւնն առաջնային է աստուածաբանութեան նկատմամբ: Մենք սկսում ենք որպէս քրիստոսաբաններ, եւ մեր աստուածաբանութիւնը բխում է մեր քրիստոսաբանութիւնից: Աստուած Հայրն է մեր Տէր Յիսուս Քրիստոսի եւ ոչ թէ՝ բնախօսական աստուածաբանութեան աստուած: Չկայ այլ աստուած, բայց միայն՝ Քրիստոսի մէջ եւ Քրիստոսի միջոցով: «Ես եմ դուռը» [Յովհ. Ժ 9],- ասաց Քրիստոս. դուռը փրկութեան եւ յաւերժական կեանքի, ուր մարդը ներհիւսուելու է

աստուածային շինութեանը, իրերի գերագոյն կարգաւորութեան խորհրդին եւ միաւորուելու է Աստուծոյ հետ: Քրիստոս Աստուծոյ գոյութեան միակ ապացոյցն է, Աստուծոյ՝ Աստուծոյ ներսում՝ ըստ Պօլ Տիլիխի, եւ չի կարող լինել այլ ապացոյց[1]: Քանզի առանց Նրա մենք չէինք կարող իմանալ Հօրը: «Առանց Ինձ ոչինչ չէք կարող անել» [Յովհ. ԺԵ 5],- ասաց Նա: Եւ եթէ չենք կարող անել ոչինչ, ապա չենք կարող նաեւ իմանալ ոչինչ: Նա ասաց. «Ոչ ոք չի գնում Հօր մօտ, եթէ ոչ Ինձանով» [Յովհ. ԺԴ 6]: Այսպիսով, մենք չպէտք է զարմանանք, որ երբ նոյն Ինքը՝ Եկեղեցու քարոզութեան Քրիստոս, յարութիւն առած Քրիստոս, Աստուծոյ Որդին, Ինքն Աստուած, Դ-ե դդ. քրիստոսաբանների Քրիստոս, վերածւում է ընդամէնը մի մարգարէի՝ նման ուրիշներին բոլոր ժամանակներում եւ տեղերում, երբ Նա վերածւում է ընդամէնը Իր պատմական ժամանակաշրջանի մի սովորական մարդու, այնժամ մարդիկ կորցնում են իրենց ճանապարհն առ Աստուած, այնժամ մարդիկ կորցնում են ճանապարհը դէպի Քրիստոս, եւ, որպէս արդիւնք, Աստուած բաւականին հասկանալի կերպով յայտարարւում է որպէս մեռած, ինչպէս իրաք կենթադրուէր, երբ մարդ մտածում է Նրա մասին առանց Քրիստոսի: Քրիստոս ասաց. «Ես եւ Հայրս մի ենք» [Յովհ. Ժ 30] : Քրիստոնեաներն այս յայտարարութիւնը պէտք է ընդունեն բաւական լրջօրէն, ինչպէս արել է Եկեղեցին դարեր շարունակ: Քանզի Հայրը հասանելի չէ առանց մարմնաւորուած Բանի: Անհասանելի է այն իմաստով, որ մնալու է որպէս անստոյգ, անորոշ մի պնդում՝ առանց իրական բովանդակութեան: Պատմականօրէն Աստուծոյ երրորդաբանական վարդապետութիւնն արդիւնք է Եկեղեցու քրիստոսաբանական ուսուցման: Միայն առողջ քրիստոսաբանութիւնը կարող է յաղթահարել Աստուծոյ եւ մարդու փոխյարաբերութեան պատճառահետեւանքային մոլորութիւնը եւ ի վերջոյ՝ աթէիզմի մոլորութիւնը: Քանզի Քրիստոսի միակութեան մէջ է ե՛ւ Աստուած, ե՛ւ մարդ: Ահա թէ ինչու Եկեղեցին հաւատում է, որ Նա համագոյ է Հօրը եւ համագոյ է մարդկանց: Քանզի եթէ Քրիստոս մարդ չէ՝ ամէն ինչում նման ուրիշ մարդկանց, բացի մեղքից, ապա մարդու համար նորից Աւետարանը ճշմարտացի չի լինի, պատմական եզրերն անիրական կլինեն, փրկութիւնը յօրինուած կլինի, եւ նորից Աստուած մեռած կլինի:

1 P. Tillich, *The Courage :o Be,* Yale Univ. Press, 185

Քրիստոսի մէջ յաւերժականը եւ ժամանակաւորը միախառնուած (σύγκρασις) են, Նրանում ճշմարտութիւնը դառնում է գոյեղէն եւ որոշակի, ոչ թէ՝ սուբյեկտի համար պարզապէս ընկալելի օբյեկտիւ առնչութիւնների նմուշօրինակ: Քրիստոս կամրջում է վիհը այն վիճակների միջեւ, ինչ մարդն է, եւ ինչ նա պիտի լինի: Նա կապում է վերջաւորը անվերջի, սկիզբը վերջի հետ: Նրանում մէկը ներկայացուած է միւսի մէջ: Քրիստոսի մէջ Արարիչը եւ արարածը մէկտեղուած են գոյաբանօրէն: Առանց հաւատքի ի Քրիստոս՝ ոչ մի հիմք չկայ առ Աստուած հաւատքի համար:

Այս լոյսի տակ դիտուած քրիստոսաբանութիւնը պիտի ողջունի որեւէ ձեւով եւ մեթոդով կատարուող աստուածաշնչային քննադատութիւնը եւ մեկնութիւնը: Յիսուսի կեանքի եւ ժամանակաշրջանի որեւէ պատմական ուսումնասիրութիւն նպաստաւոր կլինի, քանի որ նման ուսումնասիրութիւնը կխորացնի ու կընդլայնի Քրիստոսի մարդեղութեան նկարագրութիւնը, եւ Բանի մարդացման դաւանութիւնը կդրուի աւելի զօրեղ հիմքի վրայ այնքանով, որքանով Քրիստոսի կեանքի որոշակի պատմական միջավայրը վկայութիւն կլինի Նրա մարդեղութեան համար:

Այս առումով է, որ Դ-ե դդ. մեծ քրիստոսաբանների գործը կենդանի է մնում: Նրանց թէժ պայքարը, նրանց կասկածներն ու անորոշութիւնները, նրանց ըմբռնումներն ու պնդումները նոր իմաստ են ստանում: Ներկան նշմարւում է անցեալի որովայնում: Մարդկային բնութեան աստուածացումը Քրիստոսի մէջ ձեռք է բերում նոր նշանակութիւն:

Արդէն երբ վերյիշում ենք այս վաղ դարերում կիրառութեան մէջ եղած միջոցներն ու մեթոդները, տեսնում ենք նրանց գործի արդիւնքների անհամապատասխանութիւնը մեր ժամանակների համար: Բայց այժմ անհրաժեշտ է որոշակիութիւն մտցնել գործելամիջոցների եւ գործի միջեւ: Դ դարում եւ յետոյ Եկեղեցին դառնում է պետական Եկեղեցի: Հաւատքի կէտերը եւ կրօնական կարգապահութիւնը դառնում են պետական հոգածութեան առարկան: Եկեղեցական առաջնորդները դառնում են պետական գործիչներ: Եկեղեցու ժողովները դառնում են պետական օրգաններ, եւ նրանց դաւանական ձեւակերպումները ձեռք են բերում օրէնքի կարգավիճակի ուժ: Այս ձեւակերպումների հետ անհամաձայնութիւնը հաւասարազօր էր դառնում ան-

հնազանդութեան պետութեան հեղինակութեան դէմ եւ հետեւաբար՝ պատժելի յանցանք: Երբ Նեստորը պնդեց, որ սուրբ Կոյսի վերաբերեալ քրիստոսածին եզրն աւելի ճիշտ է, քան աստուածածինը, նա աքսորուեց Եգիպտական անապատ, որտեղ մեռաւ հիւանդութեան հետեւանքով: Այսպիսի միջավայրում աստուածաբանական տրամախօսութիւնը եւ վարդապետական մտքի զարգացումը այնպիսի շրջադարձներ էին կրում, որոնք չէին կարող միշտ բնորոշուել որպէս Ճշմարտութեան եւ Ազատութեան Հոգու ներգործութեան արգասիք եւ որոնք երբեմն ողբերգական էին լինում Եկեղեցու համար: Եւ այն իրադարձութիւնների հետեւանքները դեռեւս մեզ հետ են: Անշուշտ, բոլորովին անօգուտ միտք է պատասխաններ փնտրել այն հարցերին, թէ ինչ կպատահէր, եթէ կայսրերի կողմից վարուած չլինէին Եկեղեցու ընդհանուր ժողովները, եւ եթէ աստուածաբաններին թոյլատրուած լինէր աշխատել ազատ եւ անկաշկանդ մթնոլորտում: Այնուամենայնիւ, կարեւոր է յիշել այն ուղին, երբ ժողովների դաւանական որոշումները յարուցում էին, եւ այդ որոշումների միջեւ փոխհամաձայնութիւնը՝ փնտրում եւ գտնում էր:

ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՆ ԵԶՐԵՐԸ

Մենք ընդունում ենք այն փաստը, որ Ե դ. եւ յետագայ դարերի քրիստոսաբանական վէճերի արդիւնքները միահիւսուած են եղել Եկեղեցու եւ Եկեղեցիների աւանդութեան հետ: Սակայն այդ աւանդութիւնը մշտապէս պէտք է վերագնահատուի եւ նորովի ըմբռնուի մեր դարաշրջանին հարազատ լեզուամտածողութեամբ, մեր շարժման տրամախօսական ոլորտում: Հետեւաբար, Եկեղեցիները պէտք է ընդունեն, որ իրենց դաւանական ժառանգութեան մէջ կան որոշակի տարրեր, որոնք կարիք են զգում վերադիտարկման՝ այսպէս ասած իրենց առաջնայնութիւնը վերակարգաւորելու համար: Այս տարրերից մէկը բառերի այն խումբն է, որի շուրջ ծագել են ընդհարումները եւ անվերջ շարունակուել: Կարդալուց յետոյ պրոֆեսոր Գրիլմայերի «Քրիստոս քրիստոնէական աւանդութեան մէջ» փայլուն եւ բարձրարժէք գիրքը՝ ես զգում եմ, որ չունեմ ո՛չ իրազեկութիւն, ո՛չ կարիք, ո՛չ էլ իսկապէս ցանկութիւն՝ քննարկելու դրանք: Սակայն ես կնախընտրէի հնարաւորութիւն ստանալ՝ կատարելու մի քանի դիտողութիւններ նրանց գործածման հանգամանքների շուրջ, որքանով հասկանում եմ դրանք իմ տեսանկիւնից:

Այս բառերը, այսինքն՝ ուսիա *(բնութիւն, էութիւն),* հիպոստասիս *(անձ),* ֆուսիս *(բնութիւն),* պրոսոպոն *(դէմք), իրենց ետեւում ունեն իմաստասիրական, մարդաբանական եւ հոգեբանական ըմբռնումների մի ամբողջ մարզ, որն այժմ միայն պատմական հետաքրքրութիւն ունի մեզ համար: Նրանք գրեթէ դարձել են փիլիսոփայական հնածոներ եւ պէտք է դիտարկուեն որպէս այդպիսին: Նոյնիսկ քրիստոնէական դաւանանքի դասական շրջանի որոշ եպիսկոպոսներ լիովին արդարացի էին համարում զգուշանալը Եկեղեցու հաւատամքի դրոյթների մէջ որեւէ անյստակ փիլիսոփայական եզր ներմուծելուց, ինչն արդէն բաւական կայուն տեսք էր ստացել Եկեղեցու քարոզութեան մէջ եւ հասարակական մտքում մինչեւ Դ դարը եւ Դ դարի ընթացքում: Երեք Անձեր եւ Մի Աստուածութիւն, մէկ Անձ՝ Քրիստոսի մէկ կամ երկու բնութիւնների համար, Աստուած եւ մարդ միաժամանակ. այս պնդումները զարմանալի արտայայտութիւններն են այն բանի, ինչ նկարագրում է Աւետարանում:*

Թէպէտ մարդու միտքը չի կարող եւ պարտաւոր չէ արգելակուել իր հաւատամքը վերլուծելիս ու խելակարգելիս (ռացիոնալիզացնելիս), ինչպէս սովորեցնում են բոլոր ուսուցիչներն ու քարոզիչները, եւ թէպէտ դաւանական դրոյթներում գործածուող եզրերը որոշակիացնելու փորձը երբեմն օգտակար է եւ միշտ գովելի, այսուհանդերձ առնուազն անհրաժեշտ չէ եւ յաճախ աննպատակայարմար՝ ընդունել հաւատացեալի փրկութեան կամ դատապարտութեան փորձաքարի այս փորձնական խելակարգութիւնները: Քանզի նոյն բանն է ասել՝ «Ես հաւատում եմ սրան», կամ՝ «Եկեղեցին հաւատում է», եւ այլ է ասել՝ «Սա նշանակում է այն, ինչին հաւատում է Եկեղեցին»: Առաջինը հաստատուն է, մինչդեռ երկրորդը՝ փոփոխական: Այն փաստը, որ փոփոխականները մշտապէս փոփոխւում են ընկերային, մշակութային եւ գիտական զարգացմանը զուգընթաց, չպէտք է համարուի վտանգող այն բանի, ինչ հաստատուն է: Որքան էլ դժուար է, մենք պէտք է ընդունենք այն սկզբունքը, որ մինչ նշանները փոփոխւում են, նշանակիրը մնում է նոյնը: Յարմարութեան համար մենք պիտի կարողանանք դիտարկել նշանների աստիճանակարգութիւն: Որեւէ նշան կարող է լինել նշանակիր աւելի ցածր մակարդակի նշանի

նկատմամբ, եւ ընդհակառակը՝ նշանակիր իրը կարող է աւելի բարձր մակարդակի ինչ-որ նշանակրի նշան լինել: Սա կարող է նմանուել գնոստիկների կամ նորպլատոնականների էմանացիոնիզմին: Սակայն թէպէտ էմանացիոնիզմը ծագումնաբանօրէն չի կարող լինել ճշմարիտ կամ ուղղափառ, այսուհանդերձ օգտակար է՝ տեսնելու համար սահմանը նրանց միջեւ, ինչ տրուած է Քրիստոսի Աւետարանով եւ Եկեղեցու սկզբնական քարոզութեամբ՝ մի կողմից, եւ ինչ կարող է բացատրութիւնների եւ խոկման խնդրոյ առարկայ լինել մարդկային մտքի ազատ վարժանքով՝ միւս կողմից: Այսպիսով, մենք կարող ենք հաւանաբար ասել, որ նշանակրի ցածրագոյն մակարդակը եւ նշանների բարձրագոյն մակարդակը համընկնում են Աւետարանում եւ նրանում, ինչն ընդհանրապէս ընդունուած է որպէս հաւատքի աւանդ: Այս բաներում մենք անդրդուելի ենք, իսկ մնացեալի մէջ ազատ ենք թողնում քրիստոնեայի միտքը այն ազատութեամբ, որը կարող է առաջնորդուել, սակայն ոչ պարտադրուել: Եւ այն փաստը, որ հաւատքի ճշմարտութիւնները կարող են ձեւակերպուել բազմազան ճանապարհներով, ցոյց է տալիս նրանց ամրութիւնը: Վատիկանի Բ ժողովը խնդիրը ձեւակերպել է բաւականին գեղեցիկ կերպով. «Հաւատքի աւանդը կամ յայտնուած ճշմարտութիւնները մի բան են, իսկ իրենց իմաստի եւ նշանակութեան անխաթար ձեւակերպման եղանակը այլ բան է»[1]: Այս բառերը նշանակալից են մեր ժամանակների համար: Հաւատքի աւանդի տարբերը տրամաբանական դրոյթների տեսքով ձեւակերպելու նպատակն է հաւատացեալներին պահել Քրիստոսի ճանապարհի մէջ՝ միաւորուած մէկ մարմնի մէջ: Սակայն եթէ այս փոփոխուող դրոյթները վերածւում են այսպէս ասած հաւատամքի, ապա ձեռնարկը հակարդիւնք կլինի եւ ի չիք կդարձնի իր նպատակն այնքանով, որքանով մէկ փոփոխականը կվերցուի միւսի դէմ. եւ անհամաձայնութիւն կլինի միեւնոյն ժամանակաշրջանի մարդկանց մէջ, կամ խզում կառաջանայ միմեանց յաջորդող սերունդների միջեւ:

1 Vatican II, *The Church Today*, 62

ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՈՒԱԶՈՒԹԻՒՆ (MINIMALISM)

Երբ դուք ասել էք՝ Մի Տէր Քրիստոս՝ ճշմարիտ ու կատարեալ Աստուած եւ ճշմարիտ ու կատարեալ մարդ, մարմնացեալ Բան, դուք նկարագրել էք Աւետարանի Յիսուսին եւ հաւատքի Քրիստոսին: Երկուսի համաձութեան (integration) *ըմբռնումն ինքնին ներդրուած է այս արտայայտութեան մէջ, թէպէտեւ անխուսափելիօրէն զարմանալի է, ինչպէս ասում է առաքեալը. «...հրեաների համար գայթակղութիւն, իմաստունների համար յիմարութիւն» [Ա Կորնթ. Ա 23]:*

Աստուածաբանութիւնը, որ դիտարկում էր Քրիստոսի Անձը, ինչը Ե դ. քրիստոսաբանների վէճերի առարկան էր, որ փորձում էր մի տեսակ «հաշտեցնել իրենց ժամանակի գիտութիւնը եւ կրօնը», հազիւ թէ կարող էր հաւատքի զօրութեանը նպաստող համարուել: Սակայն ողջ աշխարհն իրականում բաժանուած էր երկու հակադիր ճամբարների, թէպէտեւ «նրանց դիրքերի տարբերութիւնը կարող էր նշմարուել դժուարութեամբ եւ ամենեւին ոչ յստակ կերպով: Բանաձեւը դրւում էր բանաձեւի դէմ, եւ այս բաները հակադիր թեւի կողմից քննւում էին իր սեփական ենթադրութիւնների լոյսի ներքոյ»[1]: Եւ եթէ սա ճշմարիտ էր մինչքաղկեդոնեան իրադրութեան համար, ապա որոշակիօրէն ճշմարիտ էր նաեւ Քաղկեդոնից յետոյ:

Մի հայկական վկայակոչութիւնների ժողովածուում մէջբերուած են ս. Եփրեմի հետեւեալ խօսքերը. «Լուար ճշմարտութիւն յայտնեալ, մի՛ սահիր առ ի ծածուկս... Փախի՛ր առ լռութիւն, ո՛ տկար, եւ տո՛ւր փառս Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն... Մի՛ մերձեսցուք, զի մի՛ հեռասցուք. մի՛ հեռասցուք, գուցէ կորիցուք... Ծով մեծ է. եթէ քննես զնա, յորդութիւն ալեաց նորա յածէ զքեզ. մի ալի կարէ առնուլ զքեզ եւ տանուլ հարկանել զքարի: Շատ է քեզ, ո՛ տկար, եթէ ի մէջ նաւի չահեսցես զանձն քո»[2]:

Շատ աստուածաբաններ համաձայն են, որ եպիսկոպոսները Քաղկեդոնին խնդրի լուծում առաջադրեցին եւ ձախողուեցին: Սա տեղի ունեցաւ, որովհետեւ եզրաբանական միջոցները, որոնցով կատարուել էր լուծման փորձը, նոյնիսկ առաջնային լինելով ժողովի

1 A. Grillmeier, *Christ in Christian Tradition*, 1964, 366

2 «*Կնիք հաւատոյ*», Ս. Էջմիածին, 1914, էջ 5-7

համար, անհամապատասխան էին, նոյնիսկ երբեմն՝ հաւանաբար անօգուտ: Նրանք փորձում էին գոյաբանական միութիւն փնտրել Քրիստոսի մէջ, որպէսզի պահպանեն փրկութեան վարդապետութիւնը: Ակնյայտօրէն, նրանց փիլիսոփայական միջոցները համապատասխան չէին խնդրին: Եւ եթէ փրկութեան վարդապետութիւնն այսուամենայնիւ ամուր է մնացել, ապա պատիւը ոչ թէ ժողովինն է, այլ հաւատքի աւանդինը, որ ի սկզբանէ ներդրուած էր Եկեղեցու քարոզութեան մէջ: Ո՛չ եկեղեցական կառոյցը, ո՛չ կայսրութեան քաղաքական մեքենան, ո՛չ Եկեղեցու մէջ հեղինակութեան սահմանումը չէին առաջնորդում համաձայնութեան՝ տրամախօսութեան ընթացքում առաջացած հարցերի շուրջ: Ըստ երեւոյթին, այն ժամանակ հեղինակութեան ներքոյ գտնուող մարդկանց մտքով չէր անցնում, որ Սուրբ Հոգին հաւատացեալների՝ Աւետարանի եւ Եկեղեցու քարոզութեան աւետիսով լուսաւորուած մտքի եւ հոգու ազատութեան գործածումը բարենպաստ կդարձնէր՝ կառուցելու Քրիստոսի Մարմնի միութիւնն Իր կամքին համաձայն: Ի վերջոյ, ընդհանուր առմամբ ասած, Եկեղեցին առաջին երեք դարերի ընթացքում գոյատեւել է որպէս մէկ ամբողջականութիւն: Հիմա, երբ աշխարհիկ իշխանաւորները Եկեղեցուն չեն պարտադրում իրենց միութիւնը, Սուրբ Հոգին դեռեւս գործում է Եկեղեցու միութեան համար, թէպէտ որոշ հիմնուած ինստիտուցիոն կառոյցներ ճեղքեր են ցոյց տալիս:

Ս. Գրիգոր Նազիանզացին ամբողջովին սխալ չէր, երբ մասամբ կատակելով գրում էր, որ ինքը երբէք չի տեսել, որ որեւէ եկեղեցական ժողով լաւ վերջ ունենայ կամ չարիքները լուծարի: «Ընդհակառակը,- գրում է նա,- այն սովորաբար աւելացնում է դրանք: Դուք միշտ այնտեղ գտնում էք վիճաբանութեան եւ իշխանութեան սէր, որը անանկ է դարձնում պատկերը»[1]:

Նմանապէս, Հիլարի Փոյթիերսացին, որ կարեւոր ներդրում է կատարել քրիստոսաբանութեան զարգացման մէջ Արեւմուտքում[2], գրում է հետեւեալը. «Հաւատացեալները միշտ գոհանում են այն աստուածային արտայայտութեամբ, որ մեր ունկերը լսեցին Աւետարանի վկայութիւնից այն պահին, երբ այն զօրութիւնը, որ նրա հաւատումն է, շնորհուեց մեզ. «Գնացէ՛ք այսուհետեւ, աշակե՛րտ դարձրէք բոլոր հեթանոսներին, մկրտեցէ՛ք նրանց Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով: Ուսուցանէ՛ք նրանց պահել այն ամէնը, ինչ պատուիրեցի ձեզ: Եւ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերին՝ մինչեւ աշխարհի վերջը» [Մատթ. ԻԸ 19-20]: Մարդկանց փրկութեան խորհրդի ո՞ր տարրը չի պարունակւում այս խօսքերում: Ի՞նչն է մոռացուած, ի՞նչն է թողնուած մթութեան մէջ: Ամէն ինչ լի է՝ որպէս աստուածային լիութիւնից, կատարեալ՝ որպէս աստուածային կատարելութիւնից...

Սակայն հերետիկոսների եւ Աստծուն հայհոյողների սխալները ստիպում են մեզ առնչուել հակաօրինական գործերի հետ, բարձրանալ վտանգաւոր բարձունքներ, ասել անարտաբերելի խօսքեր, խախտել արգելուած տարածքների սահմանները: Հաւատքը պէտք է լռութեան մէջ կատարի պատուիրանները՝ երկրպագելով Հօրը, Նրա հետ՝ Որդուն, լինելով Սուրբ Հոգու մէջ: Բայց մենք պէտք է վեր հանենք մեր լեզուի աղքատ պաշարները՝ արտայայտելու բառերի համար չափազանց մեծ ըմբռնումներ: Ուրիշների սխալը հարկադրում է մեզ սխալուել, երբ համարձակւում ենք մարդկային եզրերով կեանքի կոչել ճշմարտութիւններ, որոնք պէտք է թաքնուած լինեն սրտի լուռ երկրպագութեան մէջ»[1]:

ՓՈԽԸՄԲՌՆՈՒՄ ԲԱՆԱՎԷՃԻ ՆԵՐՍՈՒՄ

Թէ ինչու քրիստոսաբանական վէճն անվերջօրէն շարունակւում էր եւ յաճախ՝ սաստիկ կերպով՝ սկսած Ե դարից մինչեւ արդի ժամանակները, քաջ յայտնի է: Միաբնակները վախենում էին, որ փրկութեան վարդապետութիւնը եւ դրանով իսկ Մարմնաւորման աստուածային նպատակը կկորցնէր իսկութիւնը եւ կվտանգուէր «երկու բնութիւն» բանաձեւով, եթէ այն բարձրացւում էր դաւանական կարգավիճակի: Այն կխախտէր Տէր Յիսուս Քրիստոսի Անձնաւորութեան եզակիութեան իրականութիւնն ու իսկութիւնը: Երկաբնակները, միւս կողմից, վախենում էին, որ «մի բնութիւն» բանաձեւը կվտանգէր Քրիստոսի մարդեղութեան իրականութիւնը, Նրա ճշմարիտ եւ կատարեալ մարդեղութիւնը եւ հետեւաբար՝ Մարմնաւորման իրականու-

1 PG XXXVII 225a. Անգլերէնը՝ ըստ B. J. Kidd, *Doc. Illust. of the Hist. of the Church*, vol. II, 85:

2 Տե՛ս Գրիլմայեր, 306-313:

1 De Trinitate, II, 1, 2. Թարգմ.՝ J. S. McArther, *Chalcedon*, S. P. C. K., London, 10:

թիւնն ինքնին: Երկու մտավախութիւններն էլ վկայում են կողմերի բուռն ցանկութիւնը՝ հաւատարիմ մնալու Աւետարանի բուն աւետիսին եւ Քրիստոսի հաւատքին: Կասկած չկայ, որ անհրաժեշտ էր հաւասար շեշտադրումներ կատարել Քրիստոսի ե՛ւ Աստուածութեան, ե՛ւ մարդեղութեան վրայ: Սա անհրաժեշտ է նաեւ այսօր:

Եկեղեցու խնդիրն է եղել եւ դեռեւս է այս բազմադարեան վէճերից եւ պայքարից յետոյ, հնարաւորին չափ խելակարգուած եւ յստակ կերպով նկարագրել երկուսի առնչութիւնը Քրիստոսի անձի միութեան մէջ: Ե դ. եւ յետագայ դարերի հայրերը ձեռնարկեցին այս խնդիրը՝ բաւականին օրինականօրէն իրենց օգնութեան կանչելով իրենց սեփական դարաշրջանի փիլիսոփայութիւնն ու գիտութիւնը եւ օգտագործելով իրենց ձեռքի տակ եղած խելամտական (ինտելեկտուալ) հնարաւորութիւնները, որքան էլ դրանք անհամապատասխան լինէին: Այս միջոցները կիրառելով՝ նրանք փորձում էին բացատրել եւ խելակարգել Աստուծոյ եւ մարդու միութիւնը Քրիստոսի մէջ: Որովհետեւ ինքնըստինքեան ենթադրւում է, որ Աւետարանի աւետիսը, քրիստոնէական համայնքի քարոզութիւնը հնարաւորին չափ պէտք է ուշադիր քննուեն, լուսաբանուեն եւ ներդաշնակուեն տուեալ ժամանակաշրջանի մտածելակերպի եւ խելամտական միջավայրի հետ: Այլապէս քարոզութիւնն անհնարին կդառնար եւ խիստ կշեղուէր իր նպատակից: Աստուածաբանութիւնը միշտ կարիք է ունենալու իր աղախին իմաստասիրութեան ծառայութիւններին: Վերջինիս ծառայութիւններն անհրաժեշտ են եղել անցեալում, նրանք անհրաժեշտ են այժմ եւ այդպէս կլինեն միշտ: Բայց սա չի նշանակում, որ աստուածաբանների եւ եկեղեցականների համար օրինական է ընդդիմամարտել աղախնի համար ինքնին՝ խիստ միջոցներ գործածելով իրենց մրցակիցների դէմ, աշխարհիկ հեղինակութիւնների հարկադրական ուժի միջոցով, ինչպէս տեղի է ունեցել այստեղ ու այնտեղ՝ սկսած Կոստանդիանոսի ժամանակներից մինչեւ հաւատաքննութեան ժամանակաշրջանի վերջը: Նաեւ չի նշանակում, որ եկեղեցին կամ եկեղեցիները պէտք օգտագործեն իրենց կանոնական պատժիչ ուժերը՝ միօրինակութիւն հաստատելու աստուածաբանութեան մէջ այնպիսի բնորոշիչ յստակութեամբ, ինչպիսին հաւատքի աւանդի հաստատունութիւնն է:

Պատմութիւնը ցոյց է տուել, որ քանի դեռ քրիստոսաբանական վէճերը փոխադարձաբար ուսուցանելու բնոյթ են կրել, նրանք չեն արդիւնաւորուել համաձայնութեամբ, ինչը նրանց նպատակն է եղել: Եւ ապացուցուած է, որ երկու կողմերի մտավախութիւնները հիմք չունեն: Որովհետեւ միաբնակ եկեղեցիներում երկրպագուող Քրիստոս տարբեր չէ երկաբնակ եկեղեցիներում երկրպագուող Քրիստոսից: Որովհետեւ երկու կողմերում էլ նոյն է եղել Քրիստոս՝ Աստուծոյ միակ Որդին, Տէրը եւ Փրկիչը, Աստուած եւ Մարդ՝ կատարեալ երկու կողմից: Սա ցոյց է տալիս, որ իրականում վիճարկողներն իրենք այնքան հեռու չեն եղել միմեանցից իրենց քրիստոսաբանութեան մէջ, որքան այդպէս է երեւացել արտաքին հայեացքից: Նրանք պայքարել են եզրերով, որոնք երկիմաստ են եղել: Նոյնիսկ միաբնակների մարտակոչը կարող է բացատրուել այլ կերպ, քան այն սովորաբար հասկացւում է: Այն կարող է նշանակել, օրինակ, «մի բնութիւն Բանին Աստուծոյ, Որի բնութիւնը դարձաւ մարմնաւորուած»՝ թաքնուած իմաստ ունենալով, որ թէպէտ Բանը ունէր Իր մէկ բնութիւնը, մարմնաւորումով մէկ Բանը դարձաւ Քրիստոս՝ երկու բնութիւնների մէջ[1]:

Պարզ ասած, միաբնակները դէմ են եղել այն ըմբռնմանը, որ Քրիստոս գործել է երկակի կառավարմամբ, ինչպէս եւ էր, որ Նրա Աստուածութիւնը եւ մարդեղութիւնը գործել են զատ-զատ կամ հերթականութեամբ: Սա կվտանգէր փրկութեան վարդապետութիւնը: Այն ամէնը, ինչ նրանք փորձել են անել, եղել է այս վտանգից խուսափելը: Սակայն բոլոր կողմերից ընդունուած է, որ Քրիստոս երկկողմանի տպաւորութիւն է թողել Իր ժամանակակիցների եւ Աւետարանն ընթերցողի վրայ: Նա հայուել (θεωρεῖν) է երկու բնութիւնների մէջ: Բայց Նրան երկուսի մէջ հայելու համար Նա պիտի դառնար մէկ՝ Իր Անձի՝ Իր հիպոստասիսի հիմքում ընկած իրականութեամբ: Գրիգոր Նիւսացին ասել է. «Աստուածութեան եւ մարմնի յատկութիւնների հայումը (θεωρία) մնում է անչփոթ այնքան, որքան սրանցից իւրաքանչիւրը հայւում է ինքն իրենով (ἐπ' ἑαυτόν)»[2]:

---

1 cf. *The Disputation of Nerses IV and Theorian*, Migne, PG, 133, col. 119 et sec. also cf. A. Grillmeier, *Christ in Christian Tradition*, 489. See also J. Lebon, *Le Monoph.* Sever., 308; *"Leonce de Byzance... se contente de montrer que l'epithete sesarkomene equivaut à la mention d'une seconde nature"*

2 Against Eunomium, v. 5, in Sellers, *Two Ancient Christologies*, 77

Հեշտօրէն տեսանելի է, սակայն, որ Անձնաւորութեան երկփեղկման ըմբռնումը հաւանութեան չի արժանացել ոչ մէկի կողմից, նոյնիսկ՝ նեստորականների: Ինչ վերաբերում է Լեւոն պապի ուսմունքին, եթէ այն պարզապէս դիտւում է որպէս մի ոչ բարդ ճիգ՝ ցուցադրելու կամ պաշտպանելու, որ Քրիստոս եղել է ե՛ւ ճշմարիտ ու կատարեալ Աստուած, ե՛ւ ճշմարիտ ու կատարեալ մարդ, ապա շատ դժուար չէր լինի նրա հետ համաձայնելը, ինչպէս արեցին արեւելեան եպիսկոպոսները Քաղկեդոնում: Իրականում կան օրինակներ, երբ միաբնակ հեղինակները գործածում են նմանօրինակ լեզու՝ այսպէս ասած միջին ուղի ընտրելով: Օրինակ՝ Ներսէս Դ կաթողիկոսը, որին արդէն անդրադարձայ, եւ որը լաւ յարաբերութիւնների մէջ էր ասորիների հետ աստուածաբանական տեսանկիւնից եւ միաբնակ էր, գրում է. «Երբեմն որպէս զԱստուած՝ զաստուածայինսն ներգործելով, եւ երբեմն որպէս մարդ՝ զմարդկայինսն, զոր յայտ առնեն տնօրէնութեան Նորա գործք ի սկզբանէն մինչեւ ցկատարումն»[1]:

«Ոչ ոմն մեռեալ եւ ոմն կենդանի՝ ըստ բաժանողացն, այլ մի եւ նոյն անձնաւորութիւնն եւ մի Քրիստոսն չարչարիւր եւ մեռանէր մահկանացու մարմնովն, որ ի մէնջ, եւ կենդանի էր անմահ եւ կենդանարար Աստուածութեամբն, որ ի Հօրէ»[2]:

Ակնյայտ է այսուհանդերձ, որ միաբնակները եւ երկաբնակները միանման կերպով չրջանցում էին միմեանց կենտրոնական դիրքերը, որոնց շուրջ չէին կարող չհամաձայնել, եւ վարում էին իրենց մարտը ծայրամասերում: Այլ խօսքով, թէպէտ երկուսն էլ համաձայն էին Եկեղեցու ուսմունքի էութեան, վարդապետական հարցերի շուրջ, սակայն սաստիկ անհամաձայնութիւն ունէին այն ուղու հարցում, որով այդ ուսմունքը կարող էր խելակարգուել փիլիսոփայական դրոյթների միջոցով: Յիշատակութեան է արժանի, թէ ինչ է ասում Վատիկանի Բ ժողովն այս առնչութեամբ: Այն ասում է վարդապետութեան աստուածաբանական արտայայտութիւնների եւ աստուածային իրերի ճանաչման եւ հռչակման մէջ բազմակերպութիւնների ու տարբերութիւնների օրինականութեան մասին, յայտնուած ճշմարտութեան ուսումնասիրութիւնների մէջ՝ տարբեր մեթոդների եւ մօտեցումների

1 «Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ», Երուսաղէմ, 1871, էջ 127

2 Նոյն, էջ 92

մասին. նա ընդունում է զանազան աստուածաբանական ձեւակերպումների փոխլրացումը[1]: Սա չի տարբերւում նրանից, ինչ ասել է հայոց Ներսէս Դ կաթողիկոսը ԺԲ դարի եօթանասունականներին:

Ոչ ոք պատմական հեռանկարով չի կարող թերարժեւորել եւ թերագնահատել կենսական կարեւորութիւնն այն խնդրի, որին կառչած են եղել Եկեղեցին եւ նրա առաջնորդները աւելի քան երկու հարիւր տարի՝ Նիկիոյ ժողովից մինչեւ 553-ի Ե ժողովը: Վտանգի տակ էր Քրիստոսի Աստուածութեան եւ մարդեղութեան վարդապետութիւնը, եւ հետեւաբար՝ քրիստոնէական փրկութեան վարդապետութիւնը՝ հաւատքի աւանդի բուն սիրտը: Սակայն դժբախտութիւնն այն էր, որ ընտրուած զէնքերը եւ գործադրուած մեթոդները համատեղելի չէին փնտրուած լուծումների հետ: Բառեր եւ արտայայտութիւններ անվերջօրէն ծեծւում էին անհամար մեծ ու փոքր հեղինակների եւ տրամախօսների կողմից, եւ աւելի յաճախ, քան ընդհակառակը, նրանք գործածւում էին որպէս փոքձելու միջոցներ՝ հակառակորդին հետախուզելու եւ տապալելու համար: Եթէ սաստիկ վէճերը բնական խնդրի շուրջ հանգուցուած չլինէին լուրջ ընկերային եւ քաղաքական ընդհարումների հետ, եթէ խնդիրն արձակուած լինէր՝ ընթանալու եւ ձեռք բերելու իր հունը, եթէ կայսրերը եւ աշխարհիկ իշխանաւորները հաւատքն օրէնսդրութեան գործ դարձրած չլինէին, ապա վէճերը դադարեցրած կլինէին իրենց ընթացքը՝ գլխաւոր հերոսների՝ ասպարէզից դուրս գալով, եւ նրանք կանցնէին պատմութեան գիրկը, ինչպէս պատահեց բազում այլ տեսական զբօսանքների հետ քրիստոնէական հաւատալիքների փիլիսոփայական իմաստաւորման մարզում:

ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԼԵԶՈՒՈՎ

Մեր դարաշրջանին յատուկ խելամտական շրջանակը ենթարկուել է առանցքային փոփոխման: Մենք չենք կարողանում, սակայն ճիգեր ենք գործադրում՝ մեր մտածելակերպին համապատասխան ըմբռնելու եւ հաղորդակից լինելու Աւետարանում արտայայտուած Եկեղեցու նախնական քարոզութեանը: Միւս կողմից, մենք պէտք է որպէս մեր մեկնակէտ վերցնենք այն հիմնարար դաւանական պնդումները,

1 Documents of Vatican II, *Ecumeninism*, 17

որոնք դրուած են հաւատքի աւանդի հիմքում: Իհարկէ, դիւրին չէ սահմանագիծ քաշել դաւանութեան եւ աստուածաբանութեան միջեւ: Սակայն այսպիսի սահման կարող է փորձնականօրէն քաշուել, ինչպէս արդէն նշեցի, թէպէտեւ այն պէտք է փոփոխուող լինի դարաշրջանից դարաշրջան եւ նոյնիսկ տեղից տեղ: Սուրբ Հոգու գործն է մեզ ցոյց տալ, թէ որտեղ պէտք է քաշենք գիծը:

Ընդունուած կարծիքի պատճառով, որ հաւատքը կարող է եւ պէտք է օրէնսդրութեան խնդիր լինէր հաստատուած հեղինակութիւնների կողմից, դաւանական դրոյթները հռչակող ձեւական պնդումները չափազանց կարեւորութիւն էին ստանում բիւզանդական շրջանում եւ նոյնիսկ աւելի ուշ՝ սկսած Նիկիոյ ժողովով: Անտեսւում էր այն փաստը, որ այդ պնդումները, որոնք կերպաւորուած են որպէս հաւատքի ճշմարտութիւնների անօթներ, համարժէք չեն նրանց վերագրուած ֆունկցիաներին: Դրանք միայն փոխզիջումներ են Սուրբ Հոգու եւ այս աշխարհի հոգու [տե՛ս Ա Կորնթ. Բ 1-5, 12] կամ այս աշխարհի տարրերի [տե՛ս Կող. Բ 20] միջեւ: Ճշմարտութիւնը երբէք չի բանտարկւում անշարժ բառային ձեւերով, աւելին՝ պնդումները ենթակայ են չարաշահումների, որովհետեւ մարդիկ փորձւում են՝ գործածելու դրանք որպէս գաղափարախօսական միջոցներ: Դաւանական պնդումների նախնական նշանակութիւնը փոփոխման է ենթակայ մտածելակերպի եւ լեզուակերպի փոփոխմանը զուգընթաց: «Ամենեքեան իբրեւ զձորձս մաշեսցին եւ իբրեւ զվերարկու. գալարեսցես զնոսա իբրեւ հանդերձ, եւ գալարեսցին» [Եբր. Ա 11-12]: Այնպէս որ նրանք պէտք է մշտապէս նորոգուեն: Եկեղեցին պէտք է ողջունի այս նորոգութիւնը, որովհետեւ Քրիստոս եւ Սուրբ Հոգին կենդանի են եւ միշտ Եկեղեցու հետ են: Հաւատամքի ձեւակերպումներն իրականում պատասխաններ են աշխարհին՝ որեւէ տրամախօսութեան ընթացքում: «Ճշմարտութեան Հոգին» ապրում է ողջ Եկեղեցում, որը չի կարող երբեմն բաժանուել եպիսկոպոսների կամ ժողովների միջեւ: Սա յարաբերականութեան կամ բողոքական լիբերալիզմի մի պաշտպանութիւն չէ, որովհետեւ մենք ընդունում եւ ապացուցուած ենք համարում հիմնարար համաձայնութիւնը Եկեղեցիների միջեւ, որոնց մենք պատկանում ենք: Այնքան ժամանակ, քանի դեռ մեր եկեղեցաբանութիւնն ամուր եւ առողջ է, այն ամուր պաշտպանութիւն կլինի, եւ քրիստոնէական ճշմարտութիւնների ձեւակերպման

սահմանափակութիւնների ճանաչումը չի վտանգի Եկեղեցու առաքելութիւնը:

Եկեղեցին եւ Եկեղեցիները Քրիստոսի ճշմարտութիւնն աշխարհին հաղորդակցելու իրենց ճիգերում արդէն վաղուց դադարել են մտատանջուել այնպիսի փիլիսոփայական եզրերով, ինչպիսիք են ousia, hypostasis, prosopon եւ այլ նման եզրերով եւ յղացքներով (իդէա): Այս եզրերը կատարել են իրենց աշխատանքը եւ այժմ անցել են իրենց հանգստին: Նրանք պատկանում են այն աշխարհին, ուր տափակ երկիրը տիեզերքի կենտրոնն է՝ հեղուկ երկնակամարով իր վերեւում, ուր ամէն ինչ բաղկացած էր հողից, կրակից, ջրից եւ օդից եւ ուր ամէն ինչ կա՛մ դադարի, կա՛մ շարժման մէջ է անշարժ երկրի նկատմամբ: Հոգին գոյացութիւն էր, որն անջատւում էր մարմնից մեռնելիս: Հին աստուածաբանները Քրիստոսի Անձը դիտարկելիս վերլուծում էին Նրա Անձնաւորութիւնը՝ բաշխելով այն իր բաղադրամաս տարրերի, եւ գտնում էին, որ «Բանը իւրացրել է մի իրականութիւն առանց յատուկ կապի այդ իրականութիւնը իւրացնող անձի հետ»[1]: Սրա դէմ Կառլ Ռահների մարմնաւորման գաղափարը խիստ ուսանելի է. «Մարմնաւորումը ճիշտ պատկերացնելի է միայն, երբ Քրիստոսի մարդեղութիւնը, ի վերջոյ, մի սոսկ արտաքին գործիք չէ, որով Աստուած, մնալով անտեսանելի, յայտնում է Իրեն, այլ, աւելի ստոյգ, այն է, ինչ Ինքն Աստուած դառնում է (մնալով Աստուած), երբ Նա թանձրացնում է Իրեն Իրենից այլ՝ ոչ աստուածային չափման մէջ: Եթէ նոյնիսկ ակնյայտ է, որ Աստուած կարող էր աշխարհն արարել առանց մարմնաւորման, այնուամենայնիւ այն համատեղելի է այն պնդման հետ, որ արարչութեան հնարաւորութիւնն իր հիմքն ունէր Աստուծոյ ինքնամարմնաւորման առանցքային հնարաւորութեան մէջ: Այդ դէպքում, սակայն, մարդու վերջնական սահմանումն այն է, որ մարդը Աստուծոյ գոյութեան հնարաւոր մոդա (կերպութիւն) է, եթէ Աստուած թանձրանում է Իրենից մէկ այլ գոյացութեան մէջ. մարդը Քրիստոսի պոտենցիալ եղբայրն է»[2]: Եթէ Կիւրեղ Աղեքսանդրացին ապրէր այսօր եւ դասաւանդէր որեւէ համալսարանում, ես հաւատում եմ՝ նա այլ կերպ գրած չէր լինի: Որովհետեւ քրիստոսաբանական վէճի փակուղին այն է, թէ՝ նիւթը կամ արարուած

1 K. Rahner, *Sacramentum Mundi*. vol. 3, 370

2 Նոյն տեղում

բաները կազմո՞ւմ են արդեօք մի յաւիտենական բացարձակութիւն՝ գոյակից Աստուծոյ հետ, թէ՞ նրանք մի ստեղծագործութիւն են, Աստուծոյ մի կատարում, որով աշխարհը գոյութեան է բերել Իրենից դուրս եւ իջեցրել, մտցրել եւ գործի դրել ձեւերի աշխարհում[1]:

Հարկ է ընդունել, որ Աւետարանի աւետիսի ձեւը որոշւում է նրա բովանդակութեամբ, որը հաստատուն է իր կոչով եւ զօրութեամբ: Ցարունակութիւնը յաջորդ սերունդներին հաղորդելու լեզուական ձեւերը կազմում են հաւատքի եւ աշխարհի հաղորդակէտը: Հետեւաբար, աշխարհի փոփոխման հետ պէտք է փոփոխուի նաեւ այն կէտը, որով հաւատքի զօրութիւնը շօշափում է աշխարհը: «Աւետարանի լուրը, որը տրուեց անցեալում, պէտք է մատչելի դարձուի զանազան «տրամախօսական աշխարհներին»՝ իրենց զանազան լեզուներին մատչելի աշխարհըմբռնման եզրերով»[2]: Մարմնաւորման խորհուրդը բացատրելու եւ ձեւակերպելու համար նախնիների կիրառած եզրերը եւ իմացքները (concept) համատեղւում էին եւ պատկանում իրենց սեփական ժամանակի մտածելակերպին: Իրենց մարտերը մղելիս նրանց ցուցաբերած ճիգերը, անշուշտ, հասկանալի են եւ երբեմն յարուցում են մեր հիացումը: Սակայն մեր մտածելու ուղիներն այլ են: Հին եզրերը կորցրել են իրենց համատեղութիւնը մեր ժամանակների նկատմամբ: Մենք կարիք ունենք Մարմնաւորման խորհրդի ըմբռնման նոր ուղիների: Քրիստոսաբանութեան հարցում մենք պէտք է ունենանք նոր մօտեցում խնդրին: Մենք պէտք է հրաժարուենք Քրիստոսի մէջ բնութիւնների համադրման կերպը քննելուց: Քրիստոս անտեսանելի Աստուծոյ, յաւիտենական Ամէնազօրութեան ներկայացումն է: Նա մարդն է առաջին դարում եւ բոլոր դարերում: Քրիստոսաբանութեան առանցքը հաստատուած է Իր՝ Քրիստոսի կողմից. «Ես եւ Հայրս մի ենք» [Յովհ. Ը 30], «Ով տեսաւ Ինձ, տեսաւ Հօրը» [Յովհ. ԺԴ 9]:

Խնդիրը կլուծուէր ոչ թէ նորահաստատ ձեւակերպումների եւ սահմանումների շուրջ համաձայնութեամբ, այլ մենք պէտք է համաձայնենք միմեանց հետ հանդիպել ընթացող երկխօսութեան համար՝ ըստ Կաղ Ռահների արտայայտութեան՝ աստուածաբանական բազմախոհութեան հիման վրայ: Ըստ երեւոյթին, մեր երկխօսութիւնը չի առաջացնի այնպիսի տարաձայնութիւն եւ բաժանում, որը մենք ժառանգել ենք անցեալից: Այսպիսով, ակներեւ է, որ մեր ժամանակի հրատապ պահանջն է իրենց տեղում թողնել ժողովները եւ նրանց սահմանումները, ետ կանգնել նրանք փորձելու միջոցներ դարձնելուց՝ մի կողմի կամ միւսի ուղղափառութիւնը կամ ընդհակառակը որոշելու համար, եւ փորձել նոր համաձայնութեան հասնել այն խնդիրներում, որոնք աշխարհը վստահել է մեզ:

1 Տե՛ս T. Nersoyan, *The Christol. Pos. of the Armenian Church*, Jlm., 1957, 10:

2 Franz Mayr, in *Sacramentum Mundi*, vol. 3, 274

ԿՈՄԻՆԻԿԷ

(Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների եւ Հռոմէական Կաթողիկէ Եկեղեցու աստուածաբանների միջեւ ոչ պաշտօնական խորհրդակցութիւն, Վիեննա, 1971)

1971 թ. սեպտեմբերի 11-ին «Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների եւ Հռոմէական Կաթողիկէ Եկեղեցու աստուածաբանների միջեւ ոչ պաշտօնական խորհրդակցութիւնների» վերջին աշխատանքային նստաշրջանին խորհրդակցութեան բոլոր մասնակիցների կողմից փոխադարձ համաձայնութեամբ մշակուեց ընդհանուր կոմիւնիկէ, որն ընթերցւում է հետեւեալ կերպ.

Հռոմէական Կաթողիկէ եւ Արեւելեան Ուղղափառ [Եկեղեցիների] աստուածաբանները, 1971 թ. սեպտեմբերի 7-ից միչեւ 11-ը ՊՐՕ ՕՐԻԵՆՏԷ հաստատութեան հրաւէրով միասին հաւաքուելով Վիեննայում «ոչ պաշտօնական էկումենիկ խորհրդակցութեան» համար, համաձայնեցին հետեւեալ յայտարարութեան շուրջ. «Մենք, որպէս քրիստոնեաներ, [մեզ] միաւորուած ենք զգում եղբայրութեան հոգով մէկ Տէր Յիսուս Քրիստոսի՝ Աստուծոյ եւ Փրկչի մէջ եւ միապէս ընդունում ենք մեր Տիրոջ մաղթանքը եւ աղօթքը, որ մենք բոլորս մի լինենք Նրա մէջ՝ կրելու Նրա ընդհանուր վկայութիւնը, որպէսզի աշխարհը հաւատայ [Յովհ. ԺԷ 21]:

Մենք մեր ընդհանուր հիմքը գտնում ենք նոյն առաքելական աւանդութեան մէջ, յատկապէս՝ ինչպէս հաստատուած է Նիկիոյ-Կ. Պոլսեան Հաւատամքով. մենք բոլորս խոստովանում ենք Նիկիայի (325), Կ. Պոլսի (381) եւ Եփեսոսի (431) դաւանական որոշումները եւ ուսուցումները, մենք բոլորս համաձայն ենք՝ Յիսուս Քրիստոսի մասին ե՛ւ նեստորական, ե՛ւ եւտիքէսեան տեսակէտների մերժման մէջ: Մենք ճանաչինք աւելի խորը հասկանալ քաղկեդոնեան եւ ոչ քաղկեդոնեան քրիստոսաբանութիւնները, որոնք բաժանել են մեզ մինչեւ այսօր:

Մենք հաւատում ենք, որ մեր Տէրը եւ Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս, Աստուած է՝ մարմնաւորուած Որդին, կատարեալ՝ Իր Աստուածութեան մէջ եւ կատարեալ՝ Իր մարդեղութեան մէջ: Նրա Աստուածութիւնը բաժանուած չէր Նրա մարդեղութիւնից ո՛չ որեւէ մի պահ, ո՛չ էլ ակնթարթ: Նրա մարդեղութիւնը մի է Նրա Աստուածութեան հետ առանց խառնակման, առանց շփոթի, առանց բաժանման, առանց անջատման: Մենք մէկ Տէր Յիսուս Քրիստոսի հանդէպ մեր ընդհանուր հաւատքի մէջ համարում ենք Նրա խորհուրդն անսպառ ու անճառ եւ մարդկային մտքի համար ոչ երբէք ամբողջովին ըմբռնելի եւ բացատրելի:

Մենք տեսնում ենք, որ տարբեր եկեղեցաբանական եւ աստուածաբանական աւանդութիւնների պատճառով դեռեւս տարբերութիւններ կան Քրիստոսի խորհրդի աստուածաբանական մեկնաբանութեան մէջ, եւ այնուամենայնիւ համոզուեցինք, որ այս տարբեր ձեւակերպումները երկու կողմերում կարող են հասկացուել Նիկիայի եւ Եփեսոսի հաւատքի համաձայն:

Հասկանալով, որ Քրիստոսի խորհրդի աստուածաբանական եւ դաւանական մշակման մէջ կարող են տարբեր շեշտադրումներ լինել՝ մենք ցանկանում ենք քաջալերել այս խորհրդի աւելի խորը եւ աւելի դիւրահաս ըմբռնման ընդհանուր ճիգերը՝ ներդաշնակ մեր տարբեր եկեղեցաբանական աւանդութիւններին:

Մենք նաեւ քննարկեցինք ընդհանուր առմամբ տիեզերական ժողովների խնդիրը, նրանց հեղինակութիւնը եւ ընդունումը եւ յորդորում ենք, որ այս խնդիրները լայնօրէն ուսումնասիրուեն երկու կողմերում: Մենք միապէս հնազանդւում ենք Նոր Կտակարանի Սուրբ Գրքերի վկայութեանը եւ սրանով՝ Առաքելական Քարոզութեանը եւ արտայայտում ենք մեր մտադրութիւնը՝ եղբայրական սիրով անդուլ ընդհանուր լեզու փնտրել՝ մեր Տիրոջ փրկութեան խորհրդն արտայայտելու համար, «մինչեւ հասցուք ամենեքեան ի մի միաբանութիւն հաւատոց եւ գիտութեան Որդւոյն Աստուծոյ» [Եփես. Դ 13]: Մենք ցանկանում ենք Աստուծոյ կարեկցանքի խորհուրդը թարգմանուած տեսնել քրիստոնէական կարեկցանքի կեանքի:

Մենք բոլորս զգացինք, թէ որքան պտղաբեր եղաւ այս խորհրդակցութիւնը, եւ աղօթում ենք, որ Աստուած, Ով մեզ միասին հաւաքեց, օրհնի մեզ եւ առաջնորդի մեր ապագայ մղումները նման օգտակար տրամախօսութիւններում:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՏԵՂ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ

(Ուղղափառ Եկեղեցու եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների միջեւ աստուածաբանական երկխօսութեան համատեղ յանձնաժողով, Ժնեւ, 23–28 սեպտեմբեր, 1990)

Ուղղափառ Եկեղեցու եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների միջեւ աստուածաբանական երկխօսութեան համատեղ յանձնաժողովի կողմից ընդունած առաջին քրիստոսաբանական Համատեղ յայտարարութիւնը, Անբա Բիշոյ վանքում մեր պատմական հանդիպման ժամանակ (20–24 յունիս, 1989), կազմում է հիմքը այս երկրորդ համատեղ յայտարարութեան՝ մեր ընդհանուր հաւատքի եւ ըմբռնումների հետեւեալ պնդումների, ինչպէս նաեւ առաջարկութիւնների շուրջ, որոնք պէտք է աստիճանաբար ձեռնարկուեն Եկեղեցիների մեր երկու ընտանիքների հաղորդութեան համար ի Տէր Յիսուս Քրիստոս, Ով աղօթում էր՝ «որպէսզի նրանք մի լինեն»:

Ա. Երկու ընտանիքները համաձայն են եւտիքէսական հերձուածը դատապարտելու մէջ: Երկու ընտանիքները խոստովանում են, որ Բանը՝ Սուրբ Երրորդութեան Երկրորդ Անձը, Հօր միակ ծնունդը նախքան յաւիտեանները եւ Նրա հետ համագոյակիցը, մարմնաւորուեց եւ ծնուեց Կոյս Մարիամ Աստուածածնից՝ ամբողջապէս համագոյ մեզ հետ, կատարեալ մարդ՝ հոգով, մարմնով եւ մտքով (νοῦς). Նա խաչուեց, մեռաւ, թաղուեց եւ երրորդ օրը յարութիւն առաւ մեռելներից, համբարձուեց երկնաւոր Հօր մօտ, ուր Նա նստած է Հօր աջ կողմում՝ որպէս Տէր ողջ արարչութեան: Հոգեգալուստին, Սուրբ Հոգու գալստեամբ, Նա հռչակեց Եկեղեցին որպէս Իր Մարմին: Մենք սպասում ենք Նրա վերստին Գալստեանը Իր փառքի ամբողջութեամբ՝ ըստ [Սուրբ] Գրքի:

Բ. Երկու ընտանիքները դատապարտում են նեստորական հերձուածը եւ Թէոդորետ Կիւրոսացու կրիպտո-նեստորականութիւնը: Նրանք համաձայն են, որ բաւարար չէ սոսկ ասել, որ Քրիստոս համագոյ է ե՛ւ Իր Հօր հետ, ե՛ւ մեզ հետ՝ Աստուծոյ բնութեամբ եւ մարդու բնութեամբ. անհրաժեշտ է նաեւ պնդել, որ Բանը, որ բնութեամբ Աստուած է, դարձաւ բնութեամբ Մարդ՝ Իր մարմնաւորմամբ, ժամանակների լրումին:

Գ. Երկու ընտանիքները համաձայն են, որ Բանի Անձը դարձաւ համադրեալ (σύνθετος)՝ միաւորելով Իր Աստուածային անեղ բնութիւնը՝ նրա բնական կամքով եւ ներգործութեամբ, որն Իր Հօր եւ Սուրբ Հոգու հետ միապէս ունէր, եղական մարդկային բնութեանը, որը, մարմնաւորուելիս, Նա վերցրեց եւ դարձրեց Իրենը՝ նրա բնական կամքով եւ ներգործութեամբ:

Դ. Երկու ընտանիքները համաձայն են, որ բնութիւններն իրենց յատուկ ներգործութիւններով եւ կամքերով միաւորուած են անձնապէս եւ բնութենապէս՝ առանց չփոթի, առանց փոփոխութեան, առանց բաժանման եւ առանց անջատման, եւ նրանք զանազանւում են սոսկ տեսականօրէն (τῇ θεωρίᾳ μόνῃ):

Ե. Երկու ընտանիքները համաձայն են, որ Նա, Ով կամենում եւ գործում է, միշտ մարմնաւորուած Բանի մէկ Անձն է:

Զ. Երկու ընտանիքները համաձայն են ժողովների այն մեկնաբանութիւնների մերժման մէջ, որոնք ամբողջապէս չեն համաձայնում Երրորդ տիեզերական ժողովի Հանգանակին եւ Կիւրեղ Աղեքսանդրացու՝ Յովհաննէս Անտիոքացուն ուղղած նամակին (433):

Է. Ուղղափառ [ընտանիքը] համաձայն է, որ Արեւելեան Ուղղափառ [ընտանիքը] շարունակի պահել իր աւանդական կիւրեղեան «մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ» (μία φύσις τοῦ Θεοῦ Λόγου σεσαρκωμένη) եզրակերպումը, քանի դեռ նա ընդունում է Բանի կրկնակի համագոյութիւնը, որը ժխտում էր Եւտիքէսը: Ուղղափառ [ընտանիքը] նոյնպէս գործածում է այս եզրակերպումը: Արեւելեան Ուղղափառ [ընտանիքը] համաձայն է, որ Ուղղափառ [ընտանիքն] արդարացւում է իր «երկու բնութիւն» բանաձեւի գործածութեան մէջ, եթէ նա ընդունում է, որ զանազանութիւնը «սոսկ տեսականօրէն» է (τῇ θεωρίᾳ μόνῃ): Կիւրեղը ճիշտ մեկնաբանեց այս գործածութիւնը Յովհաննէս Անտիոքացուն ուղղած իր նամակում եւ իր նամակներում՝ ուղղուած Ակակիոս Մելիտացուն (PG 77, 184-201), *Եւլոգիոսին* (PG 77, 224-228) *եւ Սուկսենսուսին* (PG 77, 228-245):

Ը. Երկու ընտանիքներն ընդունում են առաջին երեք տիեզերական ժողովները, որոնք կազմում են մեր ընդհանուր ժառանգութիւնը: Ինչ վերաբերում է Ուղղափառ Եկեղեցու յետագայ չորս ժողովներին, Ուղղափառ [ընտանիքը] պնդում է, որ իր համար վերը նշուած Ա-է կէտերը հանդիսանում են նաեւ Ուղղափառ Եկեղեցու չորս յետագայ ժողովների ուսուցումները, մինչդեռ Արեւելեան Ուղղափառ [ընտանիքը] Ուղղափառ [ընտանիքի] այս պնդումը համարում է որպէս իր մեկնաբանութիւնը: Այս ըմբռնումով Արեւելեան Ուղղափառ [ընտանիքը] պատասխանում է սրան դրականօրէն:

Ուղղափառ Եկեղեցու-է տիեզերական ժողովի ուսուցման առընչութեամբ Արեւելեան Ուղղափառ [ընտանիքը] համաձայն է, որ ժողովի ուսուցանած սրբապատկերների յարգանքի պրակտիկան եւ աստուածաբանութիւնը հիմնարար համաձայնութեան մէջ են Արեւելեան Ուղղափառ [ընտանիքի] ուսուցմանը եւ պրակտիկային վաղ ժամանակներից ի վեր՝ ժողովի գումարումից շատ առաջ, եւ որ մենք չունենք անհամաձայնութիւններ այս առումով:

Թ. Մեր քրիստոսաբանական Համատեղ յայտարարութեան, ինչպէս նաեւ վերը նշուած ընդհանուր պնդումների լոյսի ներքոյ մենք այժմ յստակօրէն հասկացանք, որ երկու ընտանիքները միշտ հաւատարմօրէն պահել են նոյն ճշմարիտ ուղղափառ քրիստոսաբանական հաւատքը եւ առաքելական աւանդութեան անխախտ շարունակականութիւնը, թէպէտ նրանք տարբեր կերպերով կարող է գործածած լինէին քրիստոսաբանական եզրեր: Հէնց այս ընդհանուր հաւատքն է եւ շարունակական հաւատարմութիւնը առաքելական աւանդութեան նկատմամբ, որ պէտք է լինեն մեր միութեան եւ հաղորդութեան հիմքը:

Ժ. Երկու ընտանիքները համաձայն են, որ անցեալի բոլոր նզովքներն ու դատապարտութիւնները, որոնք հիմա բաժանում են մեզ, պէտք է վերացուեն Եկեղեցիների կողմից, որպէսզի կատարեալ միութեան եւ հաղորդութեան վերջին արգելքը կարողանայ վերացուել Աստուծոյ շնորհով եւ փառքով: Երկու ընտանիքները համաձայն են, որ նզովքների եւ դատապարտութիւնների վերացումը կամբողջանայ այն հիմքի վրայ, որ նախապէս նզովուած եւ դատապարտուած հայրերը եւ ժողովները հերձուածողական չեն:

Ուստի մենք առաջարկում ենք մեր Եկեղեցիներին հետեւեալ գործնական քայլերը.

1. Ուղղափառ [ընտանիքը] պէտք է վերացնի բոլոր նզովքները եւ դատապարտութիւնները Արեւելեան Ուղղափառ [ընտանիքի] բոլոր այն ժողովների եւ հայրերի դէմ, որոնց նա նզովել ու դատապարտել է անցեալում:

2. Արեւելեան Ուղղափառ [ընտանիքը] միեւնոյն ժամանակ պէտք է վերացնի բոլոր նզովքները եւ դատապարտութիւնները Ուղղափառ [ընտանիքի] բոլոր այն ժողովների եւ հայրերի դէմ, որոնց նա նզովել ու դատապարտել է անցեալում:

3. Նզովքների վերացման ուղիները պէտք է որոշուեն Եկեղեցիների կողմից՝ անհատականօրէն:

Սուրբ Հոգու՝ Ճշմարտութեան, Միութեան եւ Սիրոյ Հոգու զօրութեան վստահութեամբ մենք ներկայացնում ենք այս Համատեղ յայտարարութիւնը եւ առաջարկութիւնները մեր սրբազան Եկեղեցիներին՝ քննարկելու եւ գործելու՝ աղօթելով, որ նոյն Հոգին առաջնորդի մեզ այն միութեան, որի համար մեր Տէրն աղօթեց եւ աղօթում է:

Արէլ վարդապետ Օղլուգեան

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԴԻՐՔԸ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ. ԾԻՍԱԿԱՆ-ԴԱՒԱՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒ ՆՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա/ա. ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հայ Եկեղեցին է եւ կը մնայ ըլլալ անբաժան մէկ մասը Քրիստոսի Մի, Ընդհանրական եւ Առաքելական Եկեղեցիին: Պօղոս առաքեալ Ա Կորնթացւոց Թուղթի ԺԲ գլուխին մէջ փոխաբերական պատկերով կը խօսի Քրիստոսի խորհրդաւոր մարմնի մասին ու կը շեշտէ. «Ինչպէս որ մէկ է մարմինը եւ ունի շատ անդամներ, եւ մարմնի այդ շատ անդամները բոլորը մէկ մարմին են, այնպէս ալ՝ Քրիստոս. քանզի մէկ Հոգիով մէկ մարմին ըլլալու համար մկրտուեցանք մենք ամէնքս՝ թէ՛ հրեաներ, թէ՛ հեթանոսներ, թէ՛ ծառաներ, թէ՛ ազատներ. եւ ամէնքս ալ այդ մէկ Հոգին խմեցինք... Արդ, դուք մարմինն էք Քրիստոսի եւ անդամները Անոր անդամներէն» [Ա Կորնթ. ԺԲ 12-13, 27]:

Խորհրդանշական այս պատկերին համաձայն՝ Հայ Եկեղեցին եւս իր առաքելականութեամբ եւ առաքելութեամբ, իր դաւանանքով ու հաւատոյ վարդապետութեանց վերաբերեալ ըմբռնումներով՝ ապրող ու գործող կարեւոր մէկ անդամն է Քրիստոսի խորհրդաւոր մարմնին՝ յանուն Քրիստոսի Աւետարանին տուած դարերու իր նահատակութիւններով ու արեան վկայութեամբ:

Ինչպէս առաքելական բոլոր Եկեղեցիները, նոյնպէս եւ Հայ Եկեղեցին, ընդունելով Նիկիա-Կոստանդնուպոլսոյ դաւանութիւնը, իր Հաւատամքին էական մէկ արտայայտութիւնը դարձուցած է «Հաւատամք ի Մի Միայն Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի» բանաձեւը: Արդարեւ, Եկեղեցին իր աստուածաբանական

ըմբռնումով եւ Քրիստոսի հաստատած փրկութեան խորհուրդով, Եկեղեցին, իբրեւ այս փրկութեան նիւթեղէն մէկ արտայայտութիւնը աշխարհիս վրայ կամ աստուածային տնօրինութեան՝ Քրիստոսի ներկայութեան շօշափելի եւ գերագոյն գրաւականը մարդկային հասարակութեան մէջ, մի է եւ անբաժան: Սակայն նոյն Եկեղեցին իր աշխարհագրական դիրքով, վարչական կազմութեամբ, քաղաքական դրուածքով, մշակութային զարգացմամբ, լեզուական առանձնայատկութիւններով, ազգային տարբերութիւններով, աստուածային գերագոյն ճշմարտութիւններ՝ դոգմաներ ըմբռնելու, աւելին՝ անոնք դրսեւորելու ձեւերուն մէջ տարբեր եւ պատմական փաստով բազմաբաժան է: Այլ կերպ չէր կրնար ըլլալ:

Ընդհանրական Եկեղեցիին այս բաժանումը պատմութեան մեծագոյն գայթակղութիւնն է ոչ միայն այլակրօններու, այլ նաեւ նոյն Ինքն ի մի Քրիստոս հաւատացողներուն համար: Յատկանշական է, որ Պօղոս առաքեալ, երբ Ա Կորնթացւոց ԺԲ գլուխին մէջ Քրիստոսի խորհրդաւոր մարմնին մասին կը խօսի ու կը նկարագրէ նոյն մարմնի եւ անդամներուն միջեւ գոյութիւն ունեցող փոխադարձ յարաբերութիւնն ու միութիւնը, անմիջապէս յետոյ, ԺԳ-ին մէջ, մասնաւոր հեղինակութեամբ վեր կ'առնէ քրիստոնէական ճշմարիտ սիրոյ հրամայականը՝ որպէս անփոխարինելի կապ մարմնի եւ անդամներու միութեան: «Եթէ խօսիմ մարդոց եւ հրեշտակներուն լեզուները, բայց սէր չունենամ, կը նմանիմ պղինձի մը, որ կը հնչէ, կամ ծնծղաներու, որ կը ղօղանջեն: Եւ եթէ մարգարէութիւն ընելու շնորհ ունենամ եւ հասկնամ բոլոր խորհուրդներն ու ամբողջ գիտութիւնը եւ եթէ ունենամ ամբողջ հաւատքը՝ մինչեւ իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սէր չունենամ, ոչինչ եմ: Եւ եթէ իմ ամբողջ ստացուածքս տամ աղքատներուն ու իմ այս մարմինս մատնեմ այրուելու, բայց սէր չունենամ, ոչինչ կը շահիմ... Սէրը երբէք չսպառիր. եթէ մարգարէութիւններ են, պիտի չքանան, եթէ լեզուներ՝ պիտի լռեն, եթէ գիտութիւն՝ պիտի անցնի...» [Ա Կորնթ. ԺԳ 1-3, 8]:

Ա/բ. ՆԱԽՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԱՆՈՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Եկեղեցագիտութեան մէջ հարց է, թէ եկեղեցին Քրիստոսի ուղղակի՞ դիտաւորութեամբ հիմնուած է, կամ անուղղակի արդիւնքն է ան պատմական զարգացումի մը, որ մասնաւոր աղերս չունի Քրիստոսի անձնական ծրագրին հետ: Ե՞րբ սկսած է եկեղեցին՝ առաքեալներու ընտրութե՞ամբ, Յիսուսին հետեւող գալիլիացի բարեպաշտ կանանց ծառայութե՞ամբ, 72 աշակերտներու գոյութե՞ամբ, թէ՞ Հոգեգալստեան պահով ու այդ առթիւ կատարուած հինգ հարիւրի դարձով. հարց, որու թեր ու դէմ կարծիքներու երանգաւորումներուն մէջ մտնել տեղին չէ այստեղ: Մեր ըմբռնումով սակայն՝ եկեղեցին, իբրեւ Ecclesia, *Տիրոջ առջեւ խմբուած համայնքն է՝ հաստատուած Քրիստոսի փրկագործութեան խորհուրդի կատարումով (=Խաչելութիւն, Յարութիւն, Համբարձում, զնստիլն ընդ աջմէ Հօր), որ իր լրումին կը հասնի Հոգեգալստեան դէպքով: Յիսուսի շուրջ հաւաքուած աշակերտներու հոյլը դեռ մեր հասկցած եկեղեցին չէ, ոչ ալ սրբոց այն դասը, որ փրկուած է յաւիտենական ժամանակներու՝ Քրիստոսի երկրորդ գալստեան կամ Աստուծոյ արքայութեան համար, որ վերջնականապէս պիտի գայ: Եկեղեցին՝ Քրիստոսի փառաւորումին (=զնստիլն ընդ աջմէ Հօր) ու Անոր երկրորդ գալստեան միջեւ գտնուող իրականութիւնն է, այլ խօսքով՝ ի Քրիստոս հաւատացողներու այն* Ecclesia*-ն, որ Սուրբ Հոգիի բաշխած առատաձիր շնորհներով առաջ կ'ընթանայ դէպի փրկութիւն:*

Եթէ պահ մը կանգ առնենք Ecclesia *գաղափարին վրայ, որ սովորաբար հայերէնի մէջ արտայայտուած է եկեղեցի կամ համայնք հոմանիշ բառերով, պիտի տեսնենք, թէ Եօթանասնից (=LXX) թարգմանութեան մէջ հասկցուած է իբրեւ Տիրոջ առջեւ համախմբուած Իսրայէլը՝ Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը, որ իր ծագումով յար եւ նման է հելլեններու* Polis *հասկացութեան՝ որպէս ժողովուրդին հաւաքը կամ համախմբումը: Եթէ նախնական եկեղեցին ինքզինք իբրեւ* Ecclesia *կը ճանչնար, կ'որդեգրէր Աստուծոյ կողմէ ընտրուած հասարակութիւն մը, ժողովուրդ մը ըլլալու հրէական գաղափարը, կը տարբերէր սակայն այն իրողութեամբ, որ սա փրկուած էր Քրիստոսի փրկագործութեան խորհուրդով ու Օրէնքի փոխան այսուհետեւ կը հաւատար*

Անոր. «Ահա երկինքը բացուած կը տեսնեմ եւ մարդու Որդին, որ կեցած է Աստուծոյ աջ կողմը»:

Ա/գ. ԵԿԵՂԵՑԻԻՆ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Եկեղեցին, իբրեւ ի Քրիստոս հաւատացողներու հաւաք, ամբողջական միաւոր մըն է, միութիւն մը, որ կը հիմնուի Հաղորդութեան վրայ: Հաղորդութիւնը պարզապէս կը հանդիսանայ եկեղեցիին էութիւնը՝ հաղորդութիւն Տիրոջ խօսքի, Մարմնի եւ Արեան խորհուրդի: «Քանի անգամ որ այս հացը ուտէք եւ այս բաժակը խմէք, պատմեցէ՛ք Տիրոջ մահը, մինչեւ որ Ան գայ» [Ա Կորնթ. ԺԱ 26]:

Աստուծոյ խօսքը՝ Աւետարանը, եւ ս. Հաղորդութեան խորհուրդը գերագոյն եւ իրական գրաւականներն են Քրիստոսի ներկայութեան՝ եկեղեցիին մէջ եւ Իր հաւատացեալներուն միջեւ: Այս հաղորդութեան կամ communio*-ի շուրջ է, որ կը համախմբուի* Ecclesia*-ն՝ հաւատալով «ի Մի Ընդհանրական եւ Առաքելական եկեղեցի» մը ըլլալու տուեալին: Ընդհանրական եկեղեցիին միութիւնը, ուրեմն, Խօսքի, Մարմնի ու Արեան խորհուրդի հաղորդութեան մէջ կը կայանայ, որով եկեղեցին կ'ապահովէ իր մէջ Տիրոջ ներկայութիւնը: Ան, որ դուրս է այս հաղորդութենէն կամ ստիպողաբար դուրս կը նկատուի անկէ, չի կրնար մաս կազմել քրիստոնէական եկեղեցիին: Հերձուածողներ ու հերետիկոսներ բանադրանքի ենթարկուելով՝ զրկուած կը համարուէին եկեղեցիի հաղորդութենէն: Լատիներէնի* ex-communio, *որմէ՝* ex-communication, *եկեղեցական հաղորդութենէ դուրս կամ զրկուած ըլլալու գաղափարը կ'արտայայտէ: Դ դարուն Մակեդոն՝ Կ. Պոլսոյ հերետիկոս պատրիարքը, իր հակառակորդները բռնի կերպով հաղորդել կուտար իր պատարագին, որպէսզի անոնք իր չարաղանդ հերետիկոսութեանը յարած նկատուին: Քրիստոնէական շրջանի առաջին դարերուն ուղղափառ քրիստոնեաներ ճամբորդելու ժամանակ իրենց հետ կը տանէին հաղորդութիւնը, որպէսզի չըլլայ թէ օտարութեան մէջ սխալմամբ հաղորդութիւն առնեն հերձուածողներէ կամ հերետիկոսներէ:*

Ա/դ. ԵԿԵՂԵՑԻԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ՝ ՀԵՐՁՈՒԱԾՆԵՐ, ՀԵՐԵՏԻԿՈՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Դեռ շատ վաղ Պօղոս առաքեալ իր ուշադրութիւնը կը կեդրոնացէ իր կողմէ 50-ական թուականներուն հաստատուած կորնթացւոց հաւատացեալներուն վրայ, ուր խեղաթիւրուած կը թուի Հաղորդութեան խորհուրդը կուսակրոնական սովորութիւններով, խառնակութիւններով, ամուսնական պղծութիւններով, զոհասեղաններու մասնակցութիւններով եւ այլն: «Օրհնութեան բաժակը, զոր մենք կ'օրհնենք, արդարեւ հաղորդութիւն չէ՞ Քրիստոսի արիւնին. հացը, զոր կը կտրենք, արդարեւ հաղորդութիւն չէ՞ Քրիստոսի մարմնին. որովհետեւ մէկ հաց՝ մէկ մարմին ենք ամէնքս, քանի որ ամէնքս ալ այդ միակ հացէն կը վայելենք» [Ա Կորնթ. Ժ 16-17],- դիտել կու տայ Պօղոս առաքեալ կորնթացիներուն՝ մատնացոյց ընելով էական ճիշդ այն կէտը, որուն շուրջ պարտ էր միանալ Եկեղեցին՝ Հաղորդութեան:

Առաքելական Ա ժողովը [տե՛ս Գործք ԺԵ 4-29] եւ կարծիքներու տարբերութիւնները հրեայ քրիստոնեաներու եւ հեթանոս քրիստոնեաներու մէջ թլփատութեան հարցի շուրջ՝ դեռ պատճառ մը չէին Եկեղեցիի բաժանման: Բայց այս միութիւնը երկար պիտի չգոյատեւէր, ցորչափ որ նախնական Եկեղեցին հրէական նեղ սահմաններէ տարածուելով՝ հետզհետէ կը դառնար կայսերական Եկեղեցի մը: Մէկ կողմէն՝ դաւանանքի մէջ ուղղափառութեան չափանիշը, իսկ միւս կողմէն՝ ազգայնականութեան զօրաւոր զգացումները, ազգերու մշակութային եւ լեզուական տարբերութիւնները եւ որոշ Աթոռներու նուաճողական ձգտումները պատճառ դարձան Ընդհանրական Եկեղեցիի քայքայման:

Աստուծոյ գոյութիւնը, փրկութեան անհրաժեշտութիւնը, Քրիստոսի մարդկային եւ աստուածային բնութիւններն ու անոնց սահմանումը, Սուրբ Հոգիի վարդապետութիւնը եւ վերջինիս յարաբերութիւնը աստուածային դրութեան մէջ՝ ամենէն հիմնական եւ կենսական խնդիրները եղան Դ եւ Ե դարերու Եկեղեցիին համար:

Տիեզերական առաջին երեք ժողովները՝ Նիկիոյ (325 թ.), Կ. Պոլսոյ (381 թ.) եւ Եփեսոսի (431 թ.), ստիպուեցան դիրք բռնել ուղղափառութեան պատնէշը ճեղքել յանդգնող արիոսներու, մակեդոններու եւ նեստորներու դէմ: 325-431՝ աւելի քան ամբողջ դար մը տեւող

շրջանը քրիստոնէական Եկեղեցւոյ հիմնական հաւատալիքներու մեկնութեան ու բանաձեւումին նուիրուեցաւ, եւ երեք ժողովներու վճիռով հաստատուեցաւ կամ յայտարարուեցաւ ուղղափառութեան չափանիշը՝ Հաւատամքը: Ուստի այն բոլոր ժողովուրդները, որոնք ընդունեցին Տիեզերական այս երեք ժողովներու հաստատած Հաւատամքը՝ Հօր եւ Որդու Համագոյութեան (homousia=20 կանոն), Սուրբ Հոգիի Աստուածութեան (4 կանոն) եւ ս. Կոյսի Աստուածածին կամ Աստուածամայր լինելու մասին (6 կանոն), կազմեցին քրիստոնէական Ընդհանրական Եկեղեցիին ընտանիքը:

Հայ Եկեղեցին ընդունած է Տիեզերական առաջին երեք ժողովներու դաւանութիւնը համապատասխան վճիռներով, այնպէս որ իր տօնացոյցին մէջ նոյնիսկ առանձին-առանձին կը յիշատակէ զանոնք՝ տօնախմբելով այդ ժողովները նախագահող հայրապետներուն յիշատակը առանց խտրութեան: Եթէ կ'ուզենք հասկնալ Հայ Եկեղեցւոյ յետագայ դարերու աստուածաբանական ամբողջ մտածողութիւնը, պէտք է լաւ ըմբռնենք առաջին երեք Տիեզերական ժողովներու դաւանութեան ոգին, որովհետեւ ան ամուր հիմքն է Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութեան՝ բոլոր ժամանակներու համար:

Պատմութեան զարգացումը թոյլ չտուաւ սակայն, որ Ընդհանրական Եկեղեցին մինչեւ վերջ կարենար պահել իր միութիւնն ու հաղորդութիւնը ի հոգեւորս՝ communicatio in sacris, *եւ ի վարչականս: Քրիստոսի աստուածային եւ մարդկային բնութիւններուն շուրջ ստեղծուած վիճաբանութիւնները Քաղկեդոնի 451 թուականի ժողովով՝ պատճառ հանդիսացան Եկեղեցիի երբեմնի ներդաշնակութեան եւ միութեան քայքայումին: Օրինակ՝ եթէ Քաղկեդոնի ժողովէն առաջ հայը առանց այլեւայլի Յոյն կամ Լատին Եկեղեցիին մէջ եւ փոխադարձաբար ասոնք՝ Հայ Եկեղեցիին մէջ կրնային հաղորդուիլ Տիրոջ մարմնի ու արեան խորհուրդով, այսուհետեւ Եկեղեցիներու միջեւ ստեղծուած դաւանական տարբերութիւնները թոյլ չէին տար պահպանելու այն բաղձալի ներդաշնակութիւնը, որ երբեմն կը ներկայացնէր Ընդհանրական Եկեղեցին:*

Ա/Ե. ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԴԱՒԱՆԱԿԱՆ ԵՒ ԾԻՍԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒՆՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻՒ ՑՈՒՑԱԿԻՆ

Անդրադառնալով Ընդհանրական Եկեղեցիի բաժանումին՝ իբր հետեւանք Եկեղեցիներու միջեւ գոյութիւն ունեցող դաւանական եւ ծիսական տարբերութիւններու՝ Տաթեւացին իր «Գիրք հարցմանց» քաղանուն գործի Թ հատորին մէջ կը ներկայացնէ հետաքրքրական ցուցակ մը՝ «Վասն միաբանութեան եւ բաժանման Եկեղեցւոյ» ենթավերնագրին տակ:

«Ազգ առ ազգ բաժանեալ լինի գաւառաւ եւ լեզուաւ եւ կանոնական սահմանաւ, որ են աւանդութիւնք եւ հաւատք Եկեղեցւոյ: Եւ բաժանումն յաւէտ զքան գաւառաւ եւ լեզուաւ՝ կանոնական սահմանաւն ասացեալ լինին: Այսպէս եւ առ միաբանութիւնս է իմանալ. առաւել միաբանութիւն ասել, զորս կանոնական սահմանադրութեամբ է, քան որ գաւառաւ եւ լեզուաւ: Եւ յայսոսիկ միաբանութիւնս, որ ըստ կանոնի, յաւէտ միաբանութիւն զայս է իմանալ, որ ըստ բոլորին օրինադրութեանց սահմանաց կամ ըստ գլխաւորագունիցն լինիցի եւ ոչ մասամբ միով միաբանեալք եւ բազմօք զանազանեալք, մանաւանդ թէ՝ հակառակեալք եւ ընդդիմացեալք: Եւ այն, որ ի գլխաւորագոյնս ոչ ասի միաբանութիւն, եւ զիա՞րդ միաբանութիւն ասիցէ ոք զայս: Եւ զի՞նչ այս: Այսինքն է՝ զազգս քրիստոնէից տեսանեմք, զի ոչ ըստ անուանն եւ զմիութիւն կանոնական սահմանի ունել»:

Հասկնալի է, որ **կանոնական սահման** *բացատրութիւնը ըստ Տաթեւացիի ոչ այնքան իրական հասկացութիւն է, որքան դաւանական՝ եկեղեցական Հաղորդութեան կամ* communicatio in sacris *ըմբռնումով:*

Հայ Եկեղեցիի նկատմամբ լատիններ, ըստ Տաթեւացիի ցուցակին, ունին հետեւեալ ծիսական եւ դաւանական տարբերութիւնները.

ա) ի բաժակէն ոչ տալ ժողովրդեանն,

բ) մի քահանայ երիցս անգամ ի միում աւուր պատարագս մատուցանել,

գ) եւ զայն ի միում եկեղեցւոջ առանց խտրութեան,

դ) յերկոսեան ճրագալոյցս (Մենդեան եւ Զատկի) ոչ առնել պատարագ,

ե) զքուրգութուրն (քաւարան), զոր ասեն,

զ) զՀոգին ի Հօրէ եւ յՈրդւոյ բղխումն,

է) այլ ազգ ունել զտօն սրբոց եւ ոչ ըստ այսմաւորաց,

ը) ի բոլոր աղուհացսն պատարագել,

թ) կին ոչ առնուլ քահանայից եւ զմօրուսն ածիլել եւ զգլորեալն կանգնել անխտիր,

*ժ) կանանց մկրտութիւն առնել (*in necesitatae*) եւ աշխարհականաց խոստովանիլ, այլ եւ կրկին մկրտել: Եւ այլք գոն հոլովք. մանաւանդ զկեղծաւորեալ վիճիլս, զչորեքշաբաթս ոչ պահել, զսկիզբն պահոցն լուծանել, անզեղջ խոստովանիլ, զպիղծ կենդանիս ոչ խտրել եւ զհեղձուցեալսն ուտել եւ այլ բազում ինչ:*

Հայ Եկեղեցիի նկատմամբ յոյներու ունեցած տարբերութիւններուն անդրադառնալով՝ Տաթեւացին կը նշէ.

ա) նախասրբեալ պատարագն,

բ) կրկին ջուրն՝ ջերմ եւ ցուրտ,

գ) զբոլոր հաց պատարագին ոչ հանել ի սեղանն, այլ մասն ինչ,

դ) մնացուած պատարագին, որպէս ինքեանք քաջ գիտեն,

ե) զչէզոքս աբեղայ առնել,

զ) զձեւ զգեստուն այլաբար ունել,

է) ի պահս եւ յաղօթս եւ յայլ աւանդութիւնս բազում ունել որոշումն:

Իսկ ասորիներու ունեցած տարբերութիւններու մասին խօսելով՝ կը նշէ.

ա) ուրբաթազենն,

բ) ոմանց խոստովանութիւն ոչ առնել,

գ) միով մատամբ զնշանն դրոշմել,

դ) հրաման տալ աւագ սարկաւագաց կին առնուլ եւ քահանայ լինիլ,

ե) ոմանց թլփատութիւն ունել,

զ) զհաց պատարագին ձիթով օծանել. եւ այլք գոն յոլովք, զի յորժամ պարապով ոք քննիցէ, գտանէ:

Զարմանալին այն է, որ Տաթեւացին վերոյիշեալ այս երեք ցուցակներու պարագային ալ ոչ մէկ ակնարկութիւն կ՚ընէ Քաղկեդոնի ժողովի կամ միաբնակութեան եւ երկաբնակութեան հարցի մասին, որ, ինչպէս նշեցինք, Եկեղեցւոյ բաժանման հիմնական առիթը հանդիսացաւ: Ըստ երեւոյթին, այս կարեւոր կէտը այնքան սովորական եւ հանրածանօթ հարց մըն էր, որ Տաթեւացին գուցէ այս մասին յատուկ անդրադարձի մը հարկը չէր տեսներ:

Բացի թուարկուած տարբերութիւններէն, վերոյիշեալ Եկեղեցիները Հայ Եկեղեցիին հետ ունին ծիսական եւ դաւանական նոյնութիւններ, ցորչափ որ անոնք երբեմն մաս կը կազմէին միեւնոյն աւանդութեան եւ Ընդհանրական Եկեղեցիին:

«Եւ այսպէս,- կ՚ըսէ Տաթեւացին,- բազում ունելով իւրաքանչիւր ոք սահմանս առ անձին, միայն հայք նախատեալ լինին որպէս ոչ ունել միաբանութիւն ընդ այլս ի քրիստոնէից, այլ առանձին միայնաբար ընթանալ եւ այսու որպէս հակառակ եպերեալ: Բայց պարտ է այնոցիկ, որք ոչ գիտեն եւ կամ թէ կամաւ տգիտանան, ցուցանել զմիաբանութիւն ազգիս հայոց առ այլ քրիստոնեայսն, զի գիտացեալ յամօթ լիցին յաղթեալք ի ճշմարտութենէն»:

1. Միսական՝եւ դաւանական նոյնութիւններ Հայ եւ Լատին Եկեղեցիներու միջեւ.

ա) զհաց պատարագին բաղարջ առնել,

բ) գառն զենուլ ի տօնս,

գ) վասն ննջեցելոց ի յանբանից զենուլ եւ տալ ողորմութիւն աղքատաց (հոգեճաշ),

դ) զտօն սրբոցն յառաջիկայն անցուցանել օր,

ե) այսմաւուրօք ոչ տօնել ըստ յունաց, այլ այլով օրինակաւ տօնել. եւ այլ բազումք գոն պարապով տեսեալք:

2. Միսական եւ դաւանական նոյնութիւններ Հայ եւ Ասորի Եկեղեցիներու միջեւ.

ա) ի լուծանել զճրագալոյցսն ի պանիր, ի յիւղ եւ յայլ այսպիսի կերակուր բաց ի մսոյ,

բ) ի Քրիստոսի բնութեանցն միացելոց մի՛ ասել բնութիւն ըստ սրբոյն Աթանասի եւ Կիւրղի,

գ) յերեքսրբեանն զմաչեցարն յաւելուլ,

դ) ի ժողովոյն Քաղկեդոնի խորշիլ:

3. Միսական եւ դաւանական նոյնութիւններ Հայ եւ Յոյն Եկեղեցիներու միջեւ.

ա) կարգ դրութեան աղօթիցն, որ յԵկեղեցիս նոցա,

բ) ի յաղուհացսն (շաբաթամէջ) ոչ ունել հրաման պատարագ մատուցանել բաց ի շաբաթէ եւ կիրակէէ,

գ) առ քահանայս զգուշութիւն օրինաց ունել, թէպէտ եւ ոմանք կաղան առ այս,

դ) յարդեան ժամանակիս յաստաւուրաց տօնել ոմանց:

4. Աւանդութիւններ, որոնք միայն յատուկ են հայոց, ինչպէս ս. Մնունդը յունուարի 6-ին տօնելը, երբ միւս բոլոր Եկեղեցիները զայն դեկտեմբերի 25-ին կը նշեն: Բայց ըստ Տաթեւացիի՝ «այսոքիկ աւանդութիւնք [են] եւ ոչ հաւատ»:

5. Աւանդութիւններ, որոնք համաբնոյթ են հայերուն, յոյներուն եւ ասորիներուն, բայց լատիններուն՝ ոչ: Այլ աւանդութիւններ, որոնք համաբնոյթ են հայերուն, լատիններուն եւ յոյներուն, բայց ասորիներուն՝ ոչ, եւ այլն.

ա) Յերկոսեան ճրագալոյցսն, այսինքն՝ ի Մնդեանն եւ ի Յարութեան, միաբանին հայք եւ յոյնք եւ ասորիք, իսկ լատինք՝ ոչ: Վասն զի սոքա պատարագ մատուցանեն ի նախատօնակ Մնդեանն եւ Յարութեանն, եւ լատինք՝ ոչ:

բ) Ի հաց պատարագին զբոլորն մատուցանեն եւ ոչ մասն ինչ՝ լատինք եւ հայք եւ ասորիք, իսկ յոյնք՝ ոչ:

գ) Յառնուլ զաստիճան սարկաւագութեան՝ ոչ տան հրաման կին առնուլ հայք եւ լատինք եւ յոյնք, բայց ասորիք՝ ոչ:

Եւ այսոսիկ թէպէտ եւ ոմանց ոչ թուեսցին որպէս փոքր կարծեցեալք, սակայն աւանդութիւն եւ ոչ հաւատ, որպէս եւ տօն

Մենդեանն, զոր միաբան ասեն տօնել այլոց քրիստոնէից բաց ի հայոց, զի եւ այն աւանդութիւն է եւ տօնախմբութիւն եւ ոչ հաւատ: Եւ ոչ բարկանայ առ այս Քրիստոս յայլ եւ յայլ ժամու տօնել, որպէս եւ ոչ բարկանայ վասն Պայծառակերպութեանն իւրաքանչիւր ոք յայլում ժամու տօնել:

Իսկ վասն ջրոյն զի՞նչ պարտ է ասել, զի յոյնք թերի ցուցանեն զլատինացւոց խառնումն ինքեանց կրկին խառնմամբ:

Անապակ բաժակի սովորութիւնն ալ զուտ հայկական է, երբ Արեւելեան Ուղղափառ միւս քոյր Եկեղեցիները եւս ջուր կը խառնեն Հաղորդութեան բաժակին մէջ, բաց ի հայոց: Բայց, ըստ Տաթեւացիի, ասոնք իրաւամբ աւանդութիւններ են եւ ոչ հաւատ կամ բացայայտումը հաւատոյ ճշմարտութեանց:

*Տաթեւացիի սոյն ցանկերուն մէջ դեռ ակնարկութիւն չկայ Հռովմայ Աթոռի առաջնակարգութեան կամ պապի գերագահութեան (*Petrusamt=Primat Petri*) մասին, որ մինչեւ այսօր հիմնական խոչընդոտ մըն է Եկեղեցիներու միութեան: Մարեմական դոգմաները՝ Անարատ յղութիւն եւ Վերափոխում, աւելի ուշ շրջանի ծնունդ են. հետեւաբար չեն կրնար ուղղակի կապ մը ունենալ մեզ հետաքրքրող նիւթին հետ:*

Վարդան վարդապետ Արեւելցի 1248 թուականին խմբագրած «Պատասխանի թղթին, որ ի պապէն Հռոմայ բերաւ առ թագաւորն հայոց Հեթում ի ձեռն լիկաթին, որ կոչէր Տիմանչ» հակաճառական թուղթին մէջ դաւանական եւ ծիսական 15 անընդունելի կէտեր կը նշէ, որոցմով կը տարբերէր հայոց աւանդութիւնն ու աստուածաբանական մտածողութիւնը լատինականէն: Ըստ կարեւորագունի՝

1. Հռոմայ Աթոռն միայն ունի իշխանութիւն կապելոյ եւ արձակելոյ.

2. Հոգին ի Հօրէ եւ յՈրդւոյ բղխի.

3. երկու բնութիւն են ի մարդն.

4. միշտ նոր ստեղծանին հոգիք հանապազօր.

5. զՄարիամ կին եւ կոյս է գրել եւ ոչ Աստուածածին.

6. Բանն եղեւ կատարեալ Աստուածութիւն հաւասար Հօր.

7. եղեւ մարդ, որով փոքր է քան զՀայր.

8. երկու բնութիւն եւ երկու կամք Քրիստոսի.

9. Քրիստոս զարդարսն միայն եհան ի դժոխոց.

10. յետ յարութեան առաւել փառաւորեցաւ մարմինն Տեառն.

11. քահանայն մկրտէ, եւ եպիսկոպոսն մեռոնէ.

12. մոռացեալ են յեւթն քահանայագործութենէն (խորհուրդներէն) զմեռոն օրհնելն.

13. զերրորդ եւ զչորրորդ ամուսնաւորքն օրինաւորք են գրել.

14. մինչեւ յՕրն դատաստանի առնուլ զվարձ արդարոցն եւ անապաշխար մեռելոցն մտանել ի բիրկաթոր (քաւարան).

15. որք ընդ հրեշտակս եւ որք ի բիրկաթորն, միապէս փառաւորին:

*Այս շրջանին Մխիթար Սկեւռացի վարդապետ կը խմբագրէ եկեղեցաբանական գրութիւն մը՝ «Պատասխանիք յաղագս համապատասխանութեան երկոտասան առաքելոց» խորագրով, որով կը քննարկէ այն հիմնական դժուարութիւնը Լատին եւ Հայ Եկեղեցիներու միջեւ ի տես պապի գերագահութեան (*Petrusamt*) վարդապետութեան:*

ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. **Գրիգոր Տաթեւացի**, *Գիրք հարցմանց, Կոստանդնուպոլիս, 1729, էջ 552-554*

2. **Կիւլէսէրեան Բարգէն եպս.**, *Հայ Եկեղեցի, Երուսաղէմ, 1930, էջ 1-157, 161-168*

Մխիթար Սկեւռացի, *Պատասխանիք Մխիթարայ քահանայի Սկեւռացւոյ՝ յաղագս համապատասխանութեան երկոտասան առաքելոց, Երուսաղէմ, 1865*

Վարդան Արեւելցի, *Պատասխանի թղթին, որ ի պապէն Հռոմայ բերաւ առ թագաւորն հայոց Հեթում ի ձեռն լիկաթին, որ կոչէր Տիմանչ, «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 503-509*

3. **Օրմանեան Մաղաքիա արք.**, *Հայոց Եկեղեցին*

4. **Օրմանեան Մաղաքիա արք.**, *Ազգապատում, Բ, Պէյրութ, 1960, էջ 1642-1643, 1669*

5. Lexikon für Theologie und Kirche (LThK), VI, hrsg. v. J. Hofer/K. Rahmer, Freiburg, 1986, S. 167-188

6. Lexikon der katholischen Dogmatik, hrsg. v. W. Beinert, Wien, 1987, S. 311-312, 326-328

Բ. ՔԱՂԿԵԴՈՆԻ ԺՈՂՈՎԸ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Գիտենք, որ Հայ Եկեղեցին, ի թիւս Արեւելեան Ուղղափառ այլ Եկեղեցիներու, մերժած է ընդունիլ Քաղկեդոնի 451 թուականի ժողովը եւ անոր հաստատած դաւանական կանոնը Քրիստոսի երկու բնութիւններու մասին: Քաղկեդոնականութեան պաշտօնական մերժումը Հայ Եկեղեցւոյ կողմէ տեղի ունեցած է Ներսէս Բ Բագրեւանդեցի կաթողիկոսի օրով Դուինի Բ՝ 554 թուականի ժողովին: Թէեւ «Կանոնք Ներսէսի կաթողիկոսի եւ Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի» անունով մեզի պանդուած այս ժողովի 37 կանոններուն[1] մէջ Քաղկեդոնի դէմ սահմանուած յստակ որոշումներ չկան, բայց, յենուելով Ներսէս Բ-ի եւ ասորիներու, աւելի ուշ Երուսաղէմի Յովհաննէս եպիսկոպոսի, ինչպէս նաեւ Թ դարուն Փոտ պատրիարքի եւ Հայոց Զաքարիա կաթողիկոսի միջեւ կատարուած թղթակցութիւններուն վրայ, կրնանք ըսել. Դուինի Բ ժողովին մէջ Հայ Եկեղեցին պաշտօնապէս մերժած է Քաղկեդոնի ժողովի հաստատած երկու բնութեանց վարդապետութիւնը: Հետաքրքրականը այն է, որ այդ ժամանակ նեստորականութիւնն ու քաղկեդոնականութիւնը նոյնացած էին իրարու հետ. իրողութիւն մը, որ մեր դաւանաբանական գրականութեան մէջ տեւած է Զ դարու կէսերէն մինչեւ ԺԷ դարը: Օրինակ՝ ԺԱ դարուն Յովհաննէս Սարկաւագ վարդապետ կ'ըսէ. «Ոչ է արժան եւ մարթ յետ միաւորութեանն յերկուս բաժանել զմիացեալսն բնութիւնս, զի մի՛ ըստ Նեստորի ի հարկէ երեակս մուծուցանիցեմք ի ներքս Քրիստոս եւ մի՛ բնաւ իմասցուք ինչ առանձինն Աստուծոյ զկնի մարմնանալոյն եւ մարդանալոյն»:

Նեստորի ուսմունքը դատապարտուած էր Եփեսոսի 431 թուի Տիեզերական ժողովին, որովհետեւ ան տեսակ մը երկութիւն կը մտցնէր Քրիստոսի Աստուածութեան ու մարդկութեան մէջ՝ պնդելով, թէ Աստուած յետոյ բնակեալ է ի մարդն Քրիստոս եւ ոչ միացեալ, հետեւաբար ս. Կոյսը լոկ մարդածին է եւ ոչ Աստուածածին:

1 Տե՛ս «Կանոնագիրք հայոց», Ա, հրտ. Վազգէն Ցակոբեանի, Երեւան, 1961, էջ 475-490:

Եփեսոսի ժողովին Նեստորի դէմ կ'ընդունուի Կիւրեղ Աղեքսանդրացի հայրապետի «Մի է բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ» (μία φύσις τοῦ Θεοῦ Λόγου σεσαρκωμένη) կամ «յերկուց բնութեանց մի» (ἐξ δύο φύσεων ἑίς) բանաձեւը՝ միացեալ եւ ոչ բնակեալ: Նեստորի ուսմունքին դէմ կը մաքառէր եւ Եւտիքէսը, որ Քրիստոսի մէջ Նեստորի յառաջացուցած երկութեան հակադիր աստուածային մէկութիւնը այնքան կը չեշտէր, որ մարդկայինը Անոր մէջ ամբողջապէս կը կորսուէր, ինչպէս կաթիլ մը մեղրը ծովին մէջ:

Եւտիքէսի ուսմունքը կը դատապարտուի Կ. Պոլսոյ Փլաբիանոս պատրիարքի հրաւէրով 448-ին գումարուած տեղական ժողովի մէջ, ուր Եւտիքէսի ծայրայեղ (աստուածայինի մէջ կորսուող մարդկային) մէկութեան դէմ կ'ընդունուի Փլաբիանոսի **երկու բնութեանց** բացատրութիւնը:

Մինչ այդ Փլաբիանոսն իր տեսութիւնը հաղորդած էր Հռոմի պապին, որմէ ան ոչ միայն հաւանութիւն ստացած էր, այլ նաեւ երկու բնութեանց վարդապետութեան բիւրեղացումը՝ դաւանաբանութեան մէջ ծանօթ "Tomus ad Flavianum" կամ «Տումար Լեւոնի» անունով գրութիւնը:

Հարցը փակուած կ'ըլլար, եթէ ինչպէս Նեստորին, նոյնպէս Եւտիքէսին պաշտպանելու դիտաւորութեամբ Թէոդոս Բ կայսրը նորէն չմիջամտէր խնդրին եւ նոր ժողով մը չհրաւիրէր: Ինչպէս Եփեսոսի, նոյնպէս եւ այս ժողովի ղեկավարութիւնը կայսրը կը յանձնէ Աղեքսանդրիոյ Աթոռին: Ժամանակի գահակալն էր Դիոսկորոս պատրիարք, որը իր նախորդի՝ Կիւրեղ Աղեքսանդրացիի նախանձայուզութեամբ գործի գլուխն անցնելով՝ 449-ին Եփեսոսի մէջ 135 եպիսկոպոսներու մասնակցութեամբ կը գումարէ ժողով մը, որով կ'արդարացնէ Նեստորը եւ գահընկէց կ'ընէ Փլաբիանոսը: Ի դէպ, այստեղ պէտք չէ անտեսել այն առաջնակարգութեան մրցակցութիւնը, որ սկսած էր Կ. Պոլսոյ եւ Աղեքսանդրիոյ Աթոռներուն միջեւ:

Նոյն տարին Հռոմի մէջ հակադիր ժողովով մը հանդէս կու գայ Լեւոն պապը եւ Եփեսոսի 449 թուականի ժողովը կ'անուանէ «աւազակաց ժողով»: Լեւոն կը վերականգնէ Փլաբիանոսը եւ հաւատոյ կանոն կը հռչակէ անոր ուղղուած իր՝ երկու բնութեանց վարդապետութեան «Տումարը»:

Եկեղեցական այս ընդհանուր տակնուվրայութեան մէջ Թէոդոս Բ-ին յաջորդած Մարկիանոս կայսրը 451 թուականին Քաղկեդոնի մէջ 630 եպիսկոպոսներու մասնակցութեամբ կը գումարէ «տիեզերական» ժողով մը, ուր հաւատոյ սահմանի կամ դոգմայի կը վերածուի Լեւոն Ա պապի երկու բնութեանց վարդապետութիւնը կամ «Տումարը»: Ժողովէն ետք ներկայ եպիսկոպոսներէն շատեր կը սկսին յաջորդաբար հրաժարիլ անկէ՝ երկու բնութեանց վարդապետութեան մէջ տեսնելով նեստորականութեան վտանգը[1]:

Արդէն 460 թուականին Ընդհանուր Եկեղեցւոյ բաժանումը կատարուած իրողութիւն էր: Միաբնակութեան կողմնակիցներուն համար, ներառեալ Հայ Եկեղեցին, «Լեւոնի Տումարի» խնդրայարոյց տեղիքները հետեւեալներն են. թէ Քրիստոս «կարասցէ մեռանիլ ըստ միոյ (մարդկային բնութեան) եւ ոչ կարասցէ մեռանիլ ըստ միւսոյ (աստուածային բնութեան)... Քանզի ներգործէ երկաքանչիւր կերպարանն հաղորդութեամբ միւսոյն, զոր սեպհական ունի՝ բանին գործակցելով զայն, որ ինչ է Բանին, եւ մարմնոյն կատարելով, զոր ինչ է մարմնոյն... Քանզի եւ քաղցնուլն եւ ծարաւիլն եւ վաստակիլն եւ ննջելն մարդոյ է անշուշտ, այլ հինգ հացիւ զհինգ հազարս ի մարդկանէ յագեցուցանել եւ շնորհել Սամարուհւոյն զկենդանի ջուր, ուստի յրմպել նորա լինէր եւ ոչ եւս ծարաւիլ, եւ ի վերայ մականց ծովու գնալ անթաց ոտիւք եւ զալեացն փրփրումն՝ սաստելով մրրկաց ցածուցանել, Աստուծոյ է աներկբայաբար... Զոր օրինակ, ոչ նոյն բնութեան է արտասուելն ի կարեկցութենէ ի վերայ բարեկամի (Ղազարու) վախճանելոյ եւ զնոյնն, որ վերստին կեալ հանդերձեալ էր՝ ի բաց առնելով զպատնէշ չորեքօրեայ արդէն թաղմանն, յարուցանել զոյգ ըստ հրամանի ձայնին. կամ ի վերայ փայտի կախեալ կալ եւ զտիւն ի գիշեր փոխարկելով՝ զտարերս ամենայն շարժել. կամ սեւեռեալ գոլ բեւեռօք եւ զդրախտին դուրս բանալ հաւատոց աւազակին: Նոյնպէս եւ ոչ նոյն բնութեան է ասելն՝ Ես եւ Հայր Իմ մի ենք, եւ ասելն՝ Հայր Իմ մեծ է քան զիս...», եւ այլն: Արդ, եթէ սոյն տեղիքները ա՛յս ձեւով դուրս հանուին թուղթի բովանդակային ներքին կապէն, արդարեւ Քրիստոսի աստուածային եւ մարդկային բնութիւնները իրարմէ բաժնող երկուութեան վտանգը կը դառնայ խիստ բացորոշ: Բնական է, որ աստուածայինը չի կրնար ենթակայ ըլլալ

[1] Հմմտ. Hertling L., Geschichte der Katholischen Kirche, Berlin, 1967, S. 119:

մարդկային կիրքերուն, ինչպէս՝ ծարաւիլ, անօթենալ, յոգնիլ, վախնալ, քրտնիլ կամ մեռնիլ: Եթէ ընդունինք մարդու մէջ հոգեկան եւ մարմնական երկու գոյացութիւններու սկզբունքը, հասկնալի է, որ հոգին նմանապէս չի կրնար ենթակայ ըլլալ մարդկային կիրքերուն՝ անօթենալուն, քրտնելուն, մահանալուն եւ այլն: Բայց երբ մարդ մը, սեպենք Պօղոսը, կ՚անօթենայ, կը ծարաւի, կը յոգնի, կը վախնայ, կը քրտնի, կը մահանայ, չենք ըսեր, թէ Պօղոսի մարմինը անօթեցաւ, քրտնեցաւ, յոգնեցաւ, վախցաւ եւ այլն, այլ՝ Պօղոսը: Ե՛ւ մենք զմեզ, ե՛ւ ուրիշը ճանչնալու առիթով տուեալ անձին կը նայինք, անոր հետ կը խօսինք իր մարմին-հոգի մա՛րդ ամբողջութեան եւ անբաժանելի մէկութեան մէջ եւ ոչ թէ կը խօսինք անոր մարմնին հետ առանձին կամ հոգիին հետ: Ապա թէ ոչ, հետաքրքրական պիտի ըլլար, օրինակ, դատարանի ատեանին առջեւ պնդել, թէ՝ ես յանցանք չեմ գործած, այլ մարմինս, ես չեմ զարկած, այլ ձեռքս, եւ այլն:

Բայց խնդրի էութիւնը այս չէ: Եթէ ուղղափառ միաբնակներու համար այնքան ատելի դարձած այս «Տումարի» վերոյիշեալ տեղիքները առանց նախապաշարումներու, իրենց բովանդակային ամբողջութեան մէջ ընկալուին, ապա յստակ կը դառնայ, որ միաբնակներու եւ քաղկեդոնիկներու միջեւ յարուցուած այս տարբերութիւնը ոչ ըստ էութեան է, այլ սոսկ «բացաձայնութեան»: Քանզի շեշտուած երկուութիւնը ոչ թէ ի դիմաց դէմքի կամ անձի է, այլ Քրիստոսի՝ Աստուած եւ մարդ լինելու իրողութեան: Օրինակ՝ «պահեցելոյ յատկութեան երկաքանչիւր բնութեան եւ ի մի դէմս համէացելոյ՝ վերառեալ եղեւ յԱստուածութենէն խոնարհութիւն եւ ի զօրութենէն՝ տկարութիւն եւ յանմահէն՝ մահկանացութիւն. եւ ի հատուցանել զպարտաւոր պարտիս մերոյ բնութեանս՝ աստուածայինն բնութիւն միացաւ ընդ չարչարելի բնութեան... վասն զի պահէ երկաքանչիւր բնութիւն անթերի զինքեան յատկութիւն. եւ զոր օրինակ ոչ ի բաց բառնայ զծառային զկերպարանն Աստուծոյ, նոյնպէս զԱստուծոյ զկերպարանն ոչ նուազեցուցանէ ծառային կերպարանն... Որ էն Աստուած ճշմարիտ նոյնն է եւ Մարդ ճշմարիտ, եւ ստութիւն ինչ յայսմ միաւորութեան ոչ գտանի, ցորչափ համերկաքանչիւրն ընդ միմիանս է՝ ե՛ւ մարդոյն խոնարհութիւն, ե՛ւ Աստուածութեան մեծութիւն: Զի զոր օրինակ ողորմելովն Աստուած չանկանի ընդ փոփոխութեամբ, նոյնպէս մարդ մեծութեամբ աստուածային արժանապատուութեան ոչ

ծախի... Վասն զի մի եւ նոյն է ճշմարտապէս Որդի Աստուծոյ, եւ ճշմարտապէս Որդի մարդոյ գտանի... թէպէտ եւ յաւէտ ի Տէր Յիսուս մի դէմ է Աստուծոյ եւ մարդոյ, բայց այլ ինչ է այն, յորմէ երկաքանչիւրումն հասարակ է անարգանացն, եւ այլ ինչ, յորմէ հասարակ գտանի փառացն... Եւ դարձեալ՝ Որդին Աստուծոյ խաչեալ ասի եւ թաղեալ, երբ զայսոսիկ ոչ ի բուն Աստուածութեան, որով միածին եւ զմշտնջենաւորակից եւ համադոյակից է Հօր, այլ ի տկարութեան մարդկայնոյս տարաւ բնութեան: Ուստի Միածին Որդին Աստուծոյ խաչեալ եւ թաղեալ խոստովանիմք ամենքին եւ ի Հանդանակին»[1]:

Իրականութեան մէջ Քաղկեդոնի ժողովի սահմանած հաւատոյ Հանգանակը չի տարբերիր Կիւրեղ Աղեքսանդրացի հայրապետի «յերկուց բնութեանց մի» բանաձեւէն՝ աստուածային եւ մարդկային երկու բնութիւններու անխառն եւ անշփոթ միութիւնը մէ՛կ Քրիստոս Անձի մէջ, որ է կատարեալ Աստուած եւ կատարեալ Մարդ ի մի Աստուածամարդն Քրիստոս: Իսկ բնութիւն կոչուածը ուրիշ բան չէ, եթէ ոչ բանի մը կամ գոյութեան լինելը այն, ինչ որ է: Այսինքն՝ քարի մը բնութիւնը քար ըլլալն է, փայտի բնութիւնը՝ փայտ, ձիու բնութիւնը՝ ձի, նոյնպէս մարդու բնութիւնը մարդ ըլլալն է, եւ այլն: Բայց երբ փոխուի որեւէ մէկ գոյութեան կամ իրի մը բնութիւնը, կը դադրի ըլլալէ այն, ինչ որ է: Օրինակ՝ եթէ քարը աւազի վերածուի, ըստ իր բնութեան այլեւս քար չէ, այլ աւազ է: Եթէ փայտը վառուելով մոխիր դառնայ, ըստ իր բնութեան այլեւս փայտ չէ, այ մոխիր է: Արարածոց մէջ միայն մարդն է, որ չնորհիւ իրեն պարգեւուած «աստուածնմանութեան» նաեւ յետ մահու, ըստ իր բնութեան եւ անկործանելի գոյացութեան, յաւիտենապէս մարդ է՝ հակառակ իր մասին ըսուած «Հող էիր եւ հող դարձցիս» բնապաշտական ասոյթին:

Խօսքը նոյն «բնութիւն» հասկացութեան մասին է, երբ կը դաւանինք զայն ի դէմս Սուրբ Երրորդութեան՝ «երեք Անձինք եւ Մի բնութիւն»: Այսինքն՝ աստուածային երեք Անձերը մէկ ընդհանուր բնութիւն ունին, որ է երեքին մէկ Աստուած եւ ոչ երեք աստուածներ լինելը:

1 Հմմտ. «Սկզբնագիրք Տումարի սրբոյն Լեւոնի եւ Սահմանի սուրբ Ժողովոյն Քաղկեդոնի», աշխ. յաշակերտաց մեծին Մխիթարայ աբբահօր, Վենետիկ. 1805:

Եթէ քրիստոնէութիւնը ունենար հեթանոսական կամ արեւելեան այլ կրօններու նման այնպիսի վարդապետութիւն կամ հաւատալիք, որ Սուրբ Երրորդութեան իւրաքանչիւր Անձին վերագրէր իւրայատուկ այլ բնութիւն մը՝ ստորադասութեան համապատասխան սկզբունքով, ապա Սուրբ Երրորդութիւնը անխուսափելիօրէն կը վերածուէր երեք տարբեր աստուածութիւններէ բաղկացող փոքրիկ պանթէոնի մը, իսկ քրիստոնէութիւնն ալ կը դառնար բազմաստուածեան կրօնք մը:

Մարդ արարածը իր բնութեամբ մարդ է, իսկ Աստուած Իր բնութեամբ Աստուած է: Քրիստոս Աստուածամարդը (եթէ կարելի է այսպէս ըսել) ըստ Իր բնութեան ե՛ւ կատարեալ Աստուած է, ե՛ւ կատարեալ Մարդ:

Այս իմաստով՝ Քաղկեդոնի ժողովի հաստատած կարեւորագոյն հատուածը հետեւեալն է.

«Զհետ ընթանալոյ հարցն սրբոց՝ մի եւ նոյն խոստովանել Որդի զՏէր մեր Յիսուս Քրիստոս միաձայնութեամբ ամենեքին ուսուցանեմք ԿԱՏԱՐԵԱԼ ԶՆՈՑՆ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԿԱՏԱՐԵԱԼ ԶՆՈՑՆ Ի ՄԱՐԴԿՈՒԹԵԱՄԲ. ԱՍՏՈՒԱԾ ՃՇՄԱՐԻՏ ԵՒ ՄԱՐԴ ՃՇՄԱՐԻՏ ԶՆՈՑՆ Ի ՀՈԳՒՈՅ ԲԱՆԱԿԱՆԷ ԵՒ Ի ՄԱՐՄՆՈՅ. ՀԱՄԱԳՈՅ ՀՕՐ ԸՍՏ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՄԱԳՈՅ ԶՆՈՑՆ ԸՍՏ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ, ըստ ամենայնի նման մեզ առանց մեղաց. յառաջ քան զյաւիտեանս ի Հօրէ ծնեալ ըստ Աստուածութեան. իսկ ի վերջին աւուրս զնոյն վասն մեր եւ վասն մերոյ փրկութեան ի Մարիամայ Կուսէ Աստուածածնէն՝ ըստ մարդկութեան. ԶՄԻ ԵՒ ԶՆՈՑՆ ՔՐԻՍՏՈՍ ՈՐԴԻ, ՏԷՐ, ՄԻԱԾԻՆ, ՅԵՐԿՈՒՑ ԲՆՈՒԹԵԱՆՑ՝ անշփոթաբար, անյեղաբար, անբաժանաբար, անանջատաբար ճանաչելի: Ոչ երբէք բնութեանցն տարբերութեան բարձելոյ՝ ՅԱՂԱԳՍ ՄԻԱՒՈՐՈՒԹԵԱՆ, այլ մանաւանդ պահեցելոյ յատկութեան երկաքանչիւր բնութեան, եւ ի ՄԻ ԴԷՄ ԵՒ Ի ՄԻ ԵՆԹԱԿԱՑՈՒԹԻՒՆ ԸՆԹԱԿՑԵԼՈՅ: ՈՉ ՅԵՐԿՈՒ ԴԷՄՍ ՈՐՈՇԵԱԼ ԿԱՄ ԲԱԺԱՆԵԱԼ, ԱՅԼ ՄԻ ԵՒ ՆՈՅՆ ՈՐԴԻ ԵՒ ՄԻԱԾԻՆ, ԱՍՏՈՒԱԾ ԲԱՆ, ՏԷՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ»[1]:

1 Տե՛ս նոյնը:

Զգենք Լամբրոնացին եւ ուրիշներ, որոնք արդարեւ երկու բնութեանց վարդապետութեան հարցով աւելի «լայնախոհ» ուղղութիւն մը ցուցաբերած են մեր դաւանաբանական գրականութեան մէջ: ԺԳ-ԺԴ դարերուն, երբ «հռոմէադաւան» եւ «հայադաւան» հոսանքներուն միջեւ կը մղուէր բուռն պայքար մը, ուղղակի «հայադաւանութեան» համար մարտնչող կարկառուն դէմքերէն ոմանք, որպիսիք են Երզնկայի ու Գլաձորի փայլուն ներկայացուցիչներէն Մովսէս վրդ. Երզնկացին ու Եսայի վրդ. Նչեցին, խորապէս կը զգան, որ «երկու բնութեանց» վարդապետութեան վերաբերեալ տարբերութիւնը ոչ ըստ էութեան կամ հաւատի է, այլ սոսկ «բացաձայնութեան» (տերմինաբանութեան):

Օրինակ՝ Մովսէս վրդ. Երզնկացին իր «Յաղագս միաւորութեան եւ բնութեան եւ դիմի եւ անձնաւորութեան» մէջ կ'ըսէ.

«Մի բնութիւն, յոր եւ իցէ ժամանակ, որ ասացաւ ի Հայոց Եկեղեցի, ոչ թէ ի ստուգաբանելն ճշգրտեցաւ, որ ի մի բնութիւն ասելն ուրացան ի Քրիստոս կամ զմարմինն [զմարդկութիւնն] կամ զԱստուածութիւնն, այլ զերկուան դաւանեն ամենայն Աստուածաշունչ Գրոց ընթերցողութեամբ: Եւ մի բնութիւն է բացաձայնութիւն եւ ո՛չ ճշգրտութիւն... «Մի բնութիւն Բանին մարմնացելոյ» ի ձէնջ [հռոմայեցւոցդ] ասացաւ եւ ի հայոց ընդունելի եղեւ մինչեւ ցհարսն մեր. բայց բառն ոչ զստուգութիւն իրին յանդիման կացուցանէ, այլ ի ստուգելն Աստուած եւ մարդ ասելովն հաստատի երկուքն, որպէս վարդապետեն այն հարքն [Ընդհանրական Եկեղեցւոյ՝ Աթանաս, Կիւրեղ եւ այլն], որոց դուք [հռոմայեցիքդ] աշակերտիք եւ մեք»[1]:

Իսկ Եսայի վրդ. Նչեցին իր Շրջաբերական կամ «Առ Տէր Մատթէոս» խորագիրը կրող թուղթին մէջ կը յանձնարարէ.

«Սակս երկու բնութեանն կամ մին՝ մի՛ անբանաբար հակառակիք, զի երկու բնութիւն եւ սուրբ վարդապետքն ասացին, որ զՆա՝ կատարեալ Աստուած եւ կատարեալ Մարդ՝ անշփոթ եւ առանց այլայլութեան քարոզէին... Իսկ ուղիղ մտօք սրբոց հարցն հետեւեալ՝ ասել զմի

[1] Հմմտ. Աբել Աբեղայ, Մատենագրական հետազօտութիւններ Մովսէս վրդ. Երզնկացու գրակն և առեղծուածի շուրջ, «Հանդէս ամսօրեայ», 1993, էջ 178-179:

բնութիւն եւ զերկուս ի վերայ Քրիստոսի՝ առանց հերձուածոյ է եւ ճշմարտութեան հետեւումն»[1]:

Ասկէ կ'եզրակացնենք, թէ Հայ Եկեղեցւոյ ականաւոր ներկայացուցիչներուն համար (այն, որ կը վերաբերի զուտ աստուածաբանական-տեսական մասին) փաստօրէն էական հարցը ոչ այնքան «երկու բնութեանց» վարդապետութիւնն է, որքան Կ. Պոլսոյ Գ ժողովին մէջ քաղկեդոնիկներու ընդունած ԵՐԿՈՒ ԿԱՄԱՑ եւ ԵՐԿՈՒ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԵԱՆՑ վարդապետութիւնը, որ արդարեւ կը խճողէ «երկու բնութեանց» տեսութիւնը եւ ստուգապէս կը մեծցնէ երկուութեան վտանգը, որմէ բնականաբար զգուշացած են արեւելեանք: Թէեւ այս ալ իր հետեւութեան մէջ հասկնալի է, եթէ սկիզբէն ընդունինք ու առաջնորդուինք «երկու բնութեանց» սկզբունքով: Սակայն այս պարագային արեւելքցիները իսկապէս կը զրկուին իրենց հաւատքի սկզբունքներէն ու աւանդական մտածողութենէն:

Միաբնակութեան եւ երկբնակութեան անհաշտելիութեան պատճառ հանդիսացած է նաեւ այն հիմնական փաստը, որ **անձ** եւ **բնութիւն** իմաստասիրական հասկացութիւնները Արեւելքի միաբնակներու կողմէ յաճախ նոյնացուած են, երբ Արեւմուտքի մէջ վերոյիշեալ **անձ** եւ **բնութիւն** բառերը արդէն կ'արտայայտէին բոլորովին տարբեր հասկացութիւններ: Ի դէպ, հարկ է այստեղ աւելցնել, որ նոյնիսկ Արեւմուտքի մէջ **անձ** հասկացութիւնը հազիւ Զ դարուն, Քաղկեդոնի ժողովէն շուրջ 70 տարի յետոյ, Boethius-ի կողմէ սահմանուեցաւ:

ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Օրմանեան Մաղաքիա արք., Ազգապատում, Ա, էջ 491-495

Տէր-Մկրտչեան Կարապետ ծ. վրդ., Հայոց Եկեղեցւոյ պատմութիւն, Վաղարշապատ, 1908, էջ 200-218

Տէր-Մինասեանց Երուանդ վրդ., Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, Էջմիածին, 1908, էջ 322-347:

[1] Հմմտ. «Մոաքաղ», 1860-1861, էջ 163-164:

Բ/ա. ՄԻԱԿԱՄՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԻԲՐԵԻ ՀԱՇՏԱՐԱՐ ԼՈՒԾՈՒՄ ՄԻԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԿԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ

Է դարու դաւանաբանական վիճաբանութեանց ատաղձը միակամութեան վարդապետութիւնն էր: Միակամութիւնը որոշակի փորձ մըն էր հաշտարար լուծում մը գտնելու միաբնակութեան եւ երկաբնակութեան հակոտնեայ տեսութեանց միջեւ:

Արաբական առաջացող վտանգին առջեւ, ինչպէս նաեւ կայսրութիւնը քրիստոսաբանական վէճերէ հանդարտեցնելու նպատակով Հերակլ կայսրը 638-ին կը հրապարակէ "Ektesis" *անունով կոնդակ մը, որով հպատակ բոլոր ժողովուրդներուն պարտաւորիչ կը դարձնէ դաւանական նոր բանաձեւ մը.*

«Ի Քրիստոս աստուածային եւ մարդկային երկու բնութիւնք, սակայն մէկ կամք, մէկ Thelema*», որմէ՝ յունարէնի* Monotheletism *բացատրութիւնը:*

*Այս տեսութեան բուն ճարտարապետն էր Կ. Պոլսոյ Սարգիս (*Sergios*) պատրիարքը (610-638), որ կրցած էր իր գաղափարի շուրջ հեղինակաւոր համախոհներ ունենալ յանձինս Հերակլ կայսեր եւ Ոնորիոս Ա պապի (625-638):*

Առաջնորդուելով կրօնական եւ քաղաքական նկատառումներէ՝ Հերակլ կը ծրագրէ արեւելքցիներն ալ, ի մասնաւորի հայերը, սիրաշահիլ միակամութեան կողմը: Ուստի ան հայոց Եղր կաթողիկոսի մօտ կ'ուղարկէ Մժէժ Գնունին, որ զօրավար էր յունահայոց կողմը, ու կը հրաւիրէ զինք Կարին՝ միութենական բանակցութիւններու դիտումով: Մժէժ, որ հաւանաբար յունադաւան հայ մըն էր, կը սպառնայ կաթողիկոսին. «Երթալ յերկիր սահմանացն յունաց եւ հաղորդել ընդ օրինաց ընդ կայսեր. ապա թէ ոչ, արասցուք մեզ այլ կաթողիկոս, եւ դու կալ զիշխանութիւնդ քո ի պարսից կողմանէ»[1]:

Մէկ կողմէն՝ կայսերական հրամանին ենթարկուելու պարտաւորութիւնը, միւս կողմէն՝ հակաթոռ կաթողիկոսութեան մը ստեղծումի

1 Հմմտ. «Պատմութիւն Սեբէոսի», աշխ. Գ. Վ. Աբգարեանի, Երեւան, 1979, էջ 131-132:

վտանգը կը ստիպեն կաթողիկոսին ուղեւորուիլ Կարին եւ բանակցիլ Հերակլ կայսեր հետ Հայ եւ Յոյն եկեղեցիներու միութեան մասին:

Մաթուսաղա Սիւնեցի եւ Յովհան Մայրավանեցի՝ երկուքն ալ ժամանակի պատկառազդու աստուածաբան վարդապետներ, կը մերժեն ուղեկցիլ կաթողիկոսին դէպի Կարին, որովհետեւ սկիզբէն վերապահութիւններ ունէին այդ բանակցութիւններու հանդէպ:

Փոքր շքախումբով[1] մը Կարին հասնելէ ետք կաթողիկոսը մեծ ընդունելութիւն կը գտնէ կայսեր կողմէ, ապա անմիջապէս կ'անցնին բանակցութիւններու: Այս փաստին անդրադառնալով՝ Սեբէոս կը տեղեկացնէ. «Իսկ կաթուղիկոսն... խնդրեաց ձեռնարկ հաւատոյ ի թագաւորէն: Եւ վաղվաղակի առաքեցաւ նմա Տումար [հաւատոյ] գրեալ ձեռամբ թագաւորին եւ նզովեալ զՆեստոր եւ զամենայն հերձուածողս, բայց ոչ էր նզովեալ զժողովն Քաղկեդոնի»[2]:

Օրմանեան այստեղ դիտել կու տայ. «Այս առթիւ մէջտեղ բերուեցաւ Լեւոնի Տումարը, եւ անոր բացատրութիւնները քննուեցան»[3]: Բայց իրողութիւնն այն է, որ Լեւոնի Տումար մը չի կրնար ըլլալ «գրեալ ձեռամբ թագաւորին», ինչպէս վերը կ'ընդգծէ Սեբէոս: Խօսքը, ուրեմն, Հերակլի խմբագրած Ektesis*-ի մասին է, որուն մէջ կ'առաջարկուէր միակամութեան վարդապետութիւնը:*

Արդարեւ, հայոց պատգամաւորութիւնը երկաբնակութեան եւ միաբնակութեան միջեւ իբրեւ հաշտարար լուծում առաջարկուող միակամութեան մէջ խոտոր ոչինչ կը տեսնէր, ցորչափ որ Քրիստոսի աստուածային եւ մարդկային բնութիւններէն մէկ կամք եւ մէկ ներգործութիւն կ'արտայայտուէր:

Բնականաբար, դաւանական միութեան կը հետեւի եկեղեցականը, երբ հայեր եւ յոյներ միասնաբար կը մատուցանեն համապատարագ մը տեղւոյն Միաբան ս. Աստուածածին[4] կոչուած եկեղեցիին մէջ, ուր

1 Եղր կաթողիկոսին կ'ուղեկցէին Տիրատուր Արտազու, Քրիստափոր Դարունեաց, Մարտիրոս Գողթնեաց եւ Եպիփան Մամիկոնէից եպիսկոպոսները, Վարդան Բագարանցի, Թովմաս Արշարունեաց եւ Թէոդորոս Քռթենաւոր վարդապետները: Տե՛ս Օրմանեան, Ազգապատում, Ա, Պէյրութ, 1959, էջ 690:

2 Հմմտ. Սեբէոս, անդ, էջ 132:

3 Հմմտ. Օրմանեան, անդ, էջ 690-691:

4 Տե՛ս Օրմանեան, անդ, էջ 692:

Հերակլ եւ Եզր միասնաբար կը հաղորդուին՝ իբրեւ արտաքին նշան այս միութեան:

Երբ կաթողիկոսը իր շքախումբով կը վերադառնայ Դուին, Յովհան վարդապետ Մայրավանեցին, որ փոկակալն էր (իմա՝ լուսարարապետը) Դրնայ աթոռանիստ եկեղեցիին, կը մերժէ ընդառաջ երթալ եւ դիմաւորել կաթողիկոսը՝ եկեղեցական կարգ մը, որ ի պաշտօնէ ան պէտք է կատարէր: Յովհան կ'առարկէ, թէ չի կրնար յարգել կաթողիկոս մը, «որ քակեաց իսկ զսահման կանոնի հարցն մերոց ուղղափառաց»[1]:

Ասոր վրայ Եզր կը պարտադրէ Մայրավանեցին, որ ներկայանայ իրեն, մինչ վերջինս Կարնոյ միաբանութեան նկատմամբ իր ամբողջ հակառակութիւնը կ'արտայայտէ խրոխտ բառախաղով մը: Ակնարկելով կաթողիկոսի անուան՝ կ'ըսէ. «Ցիրաւի կոչեցաւ անունդ Եզր, վասնզի յեզր տարեալ հաներ զՀայաստանեայս»[2]:

Մաթուսաղա Սիւնեցի, որ սկիզբը հակառակ էր Կարնոյ միաբանութեան, աւելի ուշ տեղեկանալով միակամութեան վարդապետութեան մասին՝ ինք եւս կ'ընդունի զայն ու կը հաշտուի կաթողիկոսին հետ, ապա կը գրէ թուղթ[3] մը՝ ուղղուած Հերակլ կայսեր, որով երկաբնակութեան կամ Քաղկեդոնի դէմ կը պաշտպանէ միաբնակութեան դիրքերը:

Կարնոյ միաբանութեան եւ Եզր կաթողիկոսի անձին վերաբերեալ վարկաբեկիչ անդրադարձ կ'ունենայ մեր մատենագրութիւնը: Դրասխանակերտցին Եզրի եւ Կարնոյ ժողովի համախոհներու մասին կը գրէ. «Տգիտաբար իմն իբր անծանօթ գրոց աստուածայնոց դաւանեալ խաբեցան»[4]: Ասողիկ նոյնպէս կը գրէ. «Տգէտ գոլով՝ աստուածային գրոց խաբեալ եղեւ»[5]: Հետեւելով նախորդներուն՝ Անեցին կը կրկնէ. «Տգիտաբար հաւանեալ»[6]: Վարդան կ'աւելցնէ. «Վասն տգիտութեան

1 Տե՛ս անդ, էջ 697:

2 Տե՛ս անդ, էջ 698:

3 Տե՛ս «Թուղթ Մաթուսաղայի սիւնեաց եպիսկոպոսի, զոր գրեաց առ Հերակլ կայսր, ի գիրս՝ Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց», Նոր Ջուղայ, 1688:

4 Հմմտ. «Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի», Երուսաղէմ, 1867, էջ 60:

5 Հմմտ. «Տիեզերական պատմութիւն Ստեփանոսի վարդապետի Տարոնացւոյ», Փարիզ, 1859, էջ 88:

6 Հմմտ. «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 79:

իւրոյ քաղկեդոնիկ եղեւ»[1]: Կիրակոս Գանձակեցին կը մեղադրէ. «Փոխեաց զամենայն ուղղափառ կարգադրութիւնս Եկեղեցւոյ»[2]: Իսկ Ստեփանոս Օրբէլեան ամէն անարգանք կը կցէ անոր անունին եւ կողքի նուէրը, որ Եզր, ըստ պատմիչներու, իր միաբանութեան համար ստացած էր կայսրէն, յիշատակելու ժամանակ կը գոչէ. «Ո՛վ անմիտ եւ չար վաճառին»[3]:

Գրչագիրներ յետագային Եզր կաթողիկոսի անունը իրենց մատեաններուն մէջ յիշատակած են միշտ գլխիվայր՝ իբր նշան ամենածանր անարգանքի:

Սակայն իրողութեան մէջ տեսանք, որ այս անողոք վերաբերումը Եզր կաթողիկոսի հանդէպ գուցէ այնքան ալ արդարացի չէ, քանի որ Կարնոյ միաբանութիւնը ոչ թէ «երկու բնութեան» վարդապետութեան կամ Լեւոնի Տումարի շուրջ գոյացած է, այլ միակամութեան:

Բնական է, որ միակամութիւնը ուղղակի յունական շրջանակներուն մէջ բուռն հակառակորդներ կ'ունենայ, որոնց մէջ կարկառուններէն մին կը հանդիսանայ Մաքսիմոս Խոստովանողը: Սոյն երեւոյթը շատ հասկնալի է, եթէ հարցին մօտենանք «երկու բնութեանց» սկզբունքով՝ այնպէս, ինչպէս երբ մաթեմատիկոս մը պիւթակորեան ուսմունքին մէջ փոքրիկ փոփոխութիւն մը կը ներմուծէ, ու հետեւաբար ամբողջ հաշուարկը սխալ դուրս կու գայ:

Միակամութեան եւ երկու կամաց տեսութեանց առնչութեամբ բուն մայրաքաղաքին մէջ եւ այլուր դաւանական վէճերը այնքան կը սաստկանան, որ Հերակլ կայսեր յաջորդած Կոնստանցիոս Բ-ը նոր հրովարտակով մը (Typus) կ'արգիլէ ե՛ւ միակամութեան, ե՛ւ երկու կամաց մասին վիճիլը: Եւ որովհետեւ Մարտինոս Ա պապը Հռոմի մէջ տեղական ժողով մը գումարելով՝ կը դատապարտէ միակամութիւնն ու անոր հետեւորդները, կայսրը զինք աքսորել կու տայ Քերսոն, ուր ան կը մահանայ կարճ ժամանակ վերջ:

1 Հմմտ. «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 61:

2 Հմմտ. «Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ Համառօտ պատմութիւն», Վենետիկ, 1865, էջ 34:

3 Հմմտ. «Պատմութիւն նահանգին Սիսական՝ արարեալ Ստեփանոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Փարիզ, 1859, էջ 160:

Կ. Պոլսոյ 6-րդ «տիեզերական» ժողովը, որ կը հրաւիրուի Կոնստանդիոսին յաջորդած Կոնստանդին Դ-ի կողմէ, անգամ մը եւս, առանց փոփոխութեան կը հաստատէ Լեւոնի Տոմարը եւ պաշտօնապէս կը դատապարտէ միակամութիւնը, ինչպէս նաեւ անոր գլխաւոր հեղինակ Սարգիս պատրիարքն ու համախոհ Ոնորիոս Ա պապը:

Այսօր թէեւ կաթոլիկ հեղինակներ կը փորձեն այլ ձեւով մեկնաբանել Ոնորիոս պապի «տիեզերական» ժողովով դատապարտուելու փաստը՝ ըսելով, թէ Ոնորիոսը չէր միակամութեան վարդապետութիւնը յօրինողը, այնուամենայնիւ փաստը կը մնայ փաստ, որ Հռոմի պապ մը, պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, կը դատապարտուի սխալի մը համար, ընդ որում, ուղղակի կամ անուղղակի խնդրոյ առարկայ կը դառնայ Հռոմի պապերու անսխալականութեան տեսութիւնը:

ՏԱՐԱՇԵՂՈՒՄ (EXKURS)

Անդրադառնալով Եզր կաթողիկոսի եւ Յովհան Մայրավանեցի վարդապետի ընդհարման հարցին՝ պէտք է ըսել, որ Մայրավանեցին ինք եւս ժամանակակիցներու կողմէ կը մեղադրուի աղանդաւորական շարժման մէջ իբրեւ երեւութական: Այսպէս, Թէոդորոս Քռթենաւոր Մայրավանեցիին դէմ (որ մինչ այդ իր յամառութեան համար հեգնօրէն ստացեր էր Մայրագոմեցի անունը) կը գրէ մեղադրագիր մը՝ «Ընդդէմ Մայրագոմեցւոցն»[1] խորագրով:

Իրողութիւնը, սակայն, այլ է: Խօսքն այստեղ է դարու մեր Եկեղեցւոյ նշանաւոր մատենագիր եւ աստուածաբան վարդապետներէն մէկուն մասին է, որու անարժան աշակերտներէն Սարգիս Մայրագոմեցին հայերէնի կը թարգմանէ Յուլիանոս Հալիկառնացիի գրութիւնները: Յուլիանոսի ուսմունքը, աւելի ճիշդ՝ անոր վարդապետութեան հետեւողական չափազանցումը, որ կատարուած էր իր հետեւորդներուն կողմէ, կը դատապարտուի Եկեղեցիին կողմէ իբրեւ չարաղանդ ուսմունք՝ պատմութեան մէջ ծանօթ «երեւութականութիւն» յորջորջումով:

1 Տե՛ս Թէոդորոս Քռթենաւոր, Ընդդէմ Մայրագումեցւոցն, ի գիրս՝ Յովհաննու Իմաստասիրի Օձնեցւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 147-158:

Մեր մատենագրութեան մէջ երեւութականութիւնը կը կոչուի նաեւ **Մայրագոմեցւոյ աղանդ**, թէեւ, ինչպէս տեսանք, Յովհան Մայրավանեցին ուղղակի կապ չունի երեւութականութեան հետ, որքան իր աշակերտը՝ Սարգիս, որուն Յովհան, ըստ պատմիչի վկայութեան, «ի բաց յիւրմէ հալածեաց»[1]:

Յովհան Մայրավանեցիի մասին մեր եկեղեցական աւանդութիւնը կը վկայէ որպէս ուղղափառ վարդապետ, խոստովանող, ճգնաւոր եւ երանելի հայր, **փիլիսոփայ կատարեալ եւ աստուածային գրոց գիտութեան բանիբուն**[2] անձ մը:

Մեր բանասէրներէն ոմանք Յովհան Մայրավանեցիին կը վերագրեն այն 26 ճառերու մեծամասնութիւնը, որոնք այսօր կը վերագրուին Յովհաննէս Մանդակունի կաթողիկոսին: Արդարեւ, մեր մատենագիտութեան մէջ բաւական վիճելի հարց է ստոյգ որոշել ճառերուս հեղինակային պատկանելիութեան հարցը: Վենետիկի Մխիթարեան հայրերը՝ ճառերուս առաջին հրատարակիչները, սկիզբէն անոնց հաւանական հեղինակ նկատած են Յովհաննէս Մանդակունին: Կարապետ Տէր-Մկրտչեան, Գարեգին Յովսէփեան եւ նորագոյն հեղինակներ, հիմնուելով բանասիրական լուրջ տուեալներու վրայ, այդ ճառերու մեծամասնութեան աներկբայ հեղինակ կը համարեն Յովհաննէս վարդապետ Մայրավանեցին:

Իսկապէս, Մայրավանեցին պէտք է որ խմբագրած ըլլայ հոգեւոր-բարոյական խրատներու ընտրանի մը, որ աւանդուած է «Խրատ վարուց» կոչուած հաւաքածոյի մէջ: Իր ժամանակակիցներէն շատեր քաջ իմացած են, թէ ով է այնքան ուղղափառ եւ ներշնչումով գրուած ճառերու հեղինակը: Բայց որովհետեւ Մայրավանեցի վարդապետս անգամ մը մեղադրուած էր երեւութականութեան մէջ, օրինակողներէն շատեր զգուշացած են յայտարարելու իր անունը՝ իր գրուածքները վերագրելով այլ հեղինակներու:

Ստեփանոս Ասողիկ կը վկայէ. «Կոմիտաս կաթողիկոսի ժամանակ կ՚ապրէր իր գիտութեամբ նշանաւոր Յովհան Մայրագոմեցին: Ան կը գրէ երեք գիրքեր, որոնց վրայ չի դներ իր անունը՝ զգուշանալով

1 Տե՛ս Ստեփանոս վարդապետ Տարոնեցի, Տիեզերական պատմութիւն, Փարիզ, 1859, էջ 88:

2 Տե՛ս Դրասխանակերտցի, անդ, էջ 99:

ժողովուրդէն: Առաջին գիրքը կը կոչուի «Խրատ վարուց», երկրորդը՝ «Հաւատարմատ», իսկ երրորդը՝ «Նոյեմակ»[1]*: Որոշ ձեռագիրներու մէջէն բրտութեամբ քերթուած է Յովհաննէս Մայրավանեցիին անունը իբրեւ հերձուածող*[2]*:*

1 Տե՛ս **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ**, Տիեզերական պատմութիւն, Պետերսբուրգ, 1885, էջ 87-89:

2 Տե՛ս **Տէր-Մկրտչեան Կարապետ**, Յովհաննէս Մանդակունի եւ Յովհաննէս Մայրագոմեցի, Շողակաթ, 1913, էջ 83-133:

Մեսրոպ քահանայ Արամեան

ՄԻԵՂԻՆՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

«Որպէսզի բոլորը մի լինեն. ինչպէս Դու, Հա՛յր, Իմ մէջ ես, եւ Ես՝ Քո մէջ, որպէսզի նրանք էլ Մեր մէջ լինեն, որ աշխարհն էլ հաւատայ, թէ Դու առաքեցիր Ինձ: Եւ փառքը, որ տուեցիր Ինձ, Ես տուեցի նրանց, որպէսզի մի լինեն, ինչպէս եւ Մենք մի ենք: Եւ Ես նրանց մէջ եմ, եւ Դու՝ Իմ մէջ, որպէսզի նրանք կատարեալ լինեն ի մի, եւ աշխարհը իմանայ, թէ Դու առաքեցիր Ինձ, եւ Ես սիրեցի նրանց, ինչպէս Դու Ինձ սիրեցիր» [Յովհ. ԺԷ 21-23]:

ՄՈՒՏՔ

Հոգեւոր եզրերը չեն ստեղծւում պատահականօրէն, այլ մեզ են փոխանցւում Աստուծոյ խորհուրդներին հաղորդակից անձերի կողմից, որոնց ս. Դիոնեսիոս Արեոպագացին անուանում է աստուածաբանական աւանդութեան սրբազան խորհրդազգածներ[1]*: Իսկապէս, եկեղեցու աստուածաբանական աւանդութիւնը լի է անպարագրելի ճշմարտութիւններ եզրագծող զարմանալի բառերով, որոնք արդիւնք են ոչ թէ մարդկային մտքի տեսական վարժանքի, այլ աստուածային յայտնութեան: Այդ բառերը մեզ են աւանդուել մեր խորհրդազգած հայրերի կողմից եւ հնարաւորութիւն են ընձեռում մերձաւորուել աստուածգիտութեան խորհրդական իմաստներին: Այդպիսի բառերից է* միեղինութիւն[2] *եզրը:*

1 **Ս. Դիոնեսիոս Արեոպագացի**, Յաղագս Աստուածայնոցն անուանց, "The Armenian Version of the Works Attributed to Dionysius the Areopagite", ed. by Robert W. Thomson, Lovanii, 1987 (=Ս. Դիոնեսիոս), էջ 140 (թարգմ. հեղ.)

2 միեղինութիւն - (8νια□ον,) միեղէն գոյն. միութիւն. եզականութիւն. եւ միասնականութիւն. միաբանութիւն. եւ միօրինակ յարակայութիւն (ՆԲԼՀ):

Արդի հայերէնից գրեթէ արտամղուած[1] *այս բառը յաճախ կիրարկուել է մեր հայրերի կողմից՝ ընորոշելու որեւէ երեւոյթի գոյաբանական-ներիսկ միութիւնը՝ ի տարբերութիւն իրերի բաղադրականածանցուած կապակցումների: Հետեւաբար միեղինութիւնը պէտք է գործածել յատկապէս երեւոյթների աստուածաբանական սկզբնապատճառները դիտարկելիս, երբ անհրաժեշտ է յայտածել երեւոյթների կապը իրենց Նախասկզբի հետ:*

Միեղինութիւնը արարչութեան ամենաընդհանուր սկզբունքն է. ամէն ինչ ունի իր միեղէն Պատճառը եւ ձգտում է միաւորուել Նրա հետ, արարածը ձգտում է միեղինութեան իր Արարչի հետ: Արարչութեան մէջ ներհաստատուած այս համընդհանուր սկզբունքը բխում է Աստուծոյ միեղէն ինքնագոյութիւնից: Երրորդութեան Անձերի անճառելի միութիւնը աղբիւրն է ամենայն արարչական միեղինութեան: Արարչութիւնը, նպատակաուղղուած լինելով դէպի իր Սկիզբը, ունի իր ներքին միեղինացնող ազդակները, որոնցով նիւթական աշխարհը միաւորուած է, կայուն է եւ օրինաչափ:

Աստուծոյ հետ միաւորուելը քրիստոնէական կեանքի վերջնական նպատակն է եւ կոչւում է աստուածացում: Արարածի աստուածացման այս վերընթացը հունաւորուել է Աստուծոյ եւ մարդու տնօրինական միաւորութեամբ: Աստուած մարդացաւ, որպէսզի մարդն աստուածանայ: Քրիստոսի փրկագործութեամբ մարդիկ դարձել են Աստուծոյ շնորհական որդիներ. մարդուց պահանջւում է միայն կամովի դարձ դէպի Աստուած, բացազատում սեփական փրկութեան առջեւ. «Եւ ինչպէս Աստուծոյ Որդին մարդու որդի դարձաւ եւ հագաւ մեր բնութիւնը եւ հոգով ու մարմնով կատարեց ամենայն արդարութիւնը, այնպէս էլ մենք հագնենք ուղղութիւնը եւ կատարենք ամենայն արդարութիւնն ի Քրիստոս, որպէսզի սիրով Աստուծոյ Որդիներ լինենք եւ աստուածներ»[2]:

1 Արդի հայերէնից նմանօրինակ կարեւոր աստուածաբանական եզրերի (օրինակ՝ խորհրդազգած, համագոյութիւն, պարիմանալի, բացբարձութիւն, հանդարտել եւ այլն) օտարումը ուղղակի վկայութիւնն է մեր լեզուի հետզհետէ հոգեզրկման:

2 **Ս. Գրիգոր Լուսաւորիչ**, Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Ցաճախապատում ճառք եւ աղօթք, «Գանձասար» Դ, Երեւան, 1993 (=Ցաճախապատում), Ճառ Բ, էջ 149

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՄԻԵՂԻՆՈՒԹԻՒՆ

«Զեմ հասցնում Մին ճանաչել, Երեքով եմ պայծառանում, չեմ հասցնում Երեքը բաժանել եւ առ Մին եմ բարձրանում»[1]:

Ս. Գրիգոր Աստուածաբան

Միեղինութիւնը, ինչպէս նշեցինք, ներաստուածային սկզբունք է. եւ հետեւաբար՝ անդրանցական է Աստուծոյ էութեան միւս յատկանիշների հետ, որոնք, ըստ Դիոնեսիոս Արեոպագացու, «...գերագոյն լոյսի պատճառով ծածկուած են թաքնախորհուրդ լռութեան Մէջով»[2]*: Այն Ամենասուրբ Երրորդութեան Անձերի անճառելի փոխյարաբերութեան արտայայտութիւնն է:* Երեք Անձեր եւ Մի Աստուած՝ *ահա երրորդաբանական աստուածաբանութեան զարմանալի եզրակերպումը, որը յայտնի չէր հին աշխարհին: Հին աշխարհը խարխափում էր հրէական մէկաստուածութեան ինքնափակութեան եւ հեթանոսական բազմաստուածութեան ածանցուածութեան բեւեռներում: Բանի մարդեղութեամբ բացայայտուած եռամիութիւնը էապէս նոր ըմբռնում էր մարդկութեան համար. աստուածային իրականութիւնն անընդմիջելիօրէն մերձաւորուել էր մարդկային բնութեանը եւ աստուածացման հնարաւորութիւն ընձեռել, մարդկային գիտակցութիւնն այլեւս պէտք է զգուշանար հրէական եւ հեթանոսական կաշկանդումներից: Ս. Գրիգոր Աստուածաբանը գրում է. «Երբ Աստուած եմ ասում, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի եմ ասում, քանի որ Աստուածութիւնը սրանով չի ցնդում: Եւ աստուածների բազմաստուածութիւն չներմուծենք եւ այս սահմանից այն կողմ չանցնենք, որպէսզի Աստուածութիւնն աղքատութեան չդատապարտենք. մի իշխանութեան համար հրէաբար հրէութիւն անենք կամ երկուսի համար՝ հեթանոսաբար, քանզի չարը երկուսին նման է, թէպէտեւ հակառակ են միմեանց»*[3]:

1 **Ս. Գրիգոր Աստուածաբան**, Ցերախայից վարդապետութիւն, «Կնիք հաւատոյ», Ս. Էջմիածին, 1914, էջ 35 (թարգմ. հեղ.)

2 **Ս. Դիոնեսիոս Արեոպագացի**, Աթենացիների Դիոնեսիոս Արեոպագացի եպիսկոպոսի [թուղթը] եփեսացիների Տիմոթէոս եպիսկոպոսին խորհրդական աստուածաբանութեան մասին, «Գանձասար» Բ, Երեւան, 1992, էջ 144

3 **Ս. Գրիգոր Աստուածաբան**, Ցայտնութիւն Տեառն, «Կնիք հաւատոյ», էջ 32

Երեք Անձերը, ըստ Դիոնեսիոսի, «մշտնջենաւորակցում են յարատեւ վերաբխութեամբ՝ անփոփոխ մնալով բնութեամբ»[1]. այս յաւիտենական վերաբխութիւնն ունի անժամանակ պատճառականութիւն, որը Հայր Աստուծոյ Անձն է. «Հայրը Որդու եւ Սուրբ Հոգու անսկիզբ պատճառն է»[2]: Այս պատճառականութեան մէջ չկայ բաժանութիւն կամ չփոթ, մեծութիւն կամ փոքրութիւն, այլ համապատասխանութիւն միմեանց նկատմամբ եւ միեղէն նախախնամութիւն արարչութեան նկատմամբ՝ առանձնայատուկ տնօրինական նիստերով. «Բաժանւում է անբաժանաբար, եւ այպէս ասեմ՝ միաւորւում է զատուելով,- գրում է ս. Գրիգոր Աստուածաբանը,- որովհետեւ Մի է Երրեակ Աստուածութիւնը, եւ Երեքը Մի է, Որոնցում Աստուածութիւնն է: Իսկ գերազանցութիւնը բաց թողնենք՝ ո՛չ միաւորութիւնը խառնակելով, ո՛չ էլ բաժանմամբ օտարելով... Մի է Հայր Աստուած, Որից է ամէն ինչ, Մի է Տէր Յիսուս Քրիստոս, Որով է ամէն ինչ, եւ Մի է Սուրբ Հոգին, Որում է ամէն ինչ»[3]:

Եկեղեցու երրորդաբանական ուսուցման մէջ աստուածային Անձերի միութիւնը եզրագծուեց համագոյութիւն (ὁμοουσία) կարեւոր եզրով: Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին համագոյակից են, այսինքն՝ ունեն նոյն բնութիւնը կամ էութիւնը: Համագոյութիւնը աստուածաբանական լեզուի մէջ մուտք գործեց Նիկիոյ Ա տիեզերաժողովով: Սակայն պահանջուեց աստուածաբանական մտքի մեծ աշխատանք, մինչեւ որ այն ստացաւ իր այն իմաստը, որը որդեգրեց եկեղեցական վարդապետութիւնը[4]:

1 Ս. Դիոնեսիոս Արեոպագացի, Աթենացիների Դիոնեսիոս Արեոպագացի եպիսկոպոսի [թուղթը]..., «Գանձասար» Բ, էջ 147

2 Ցաճախապատում, Ճառ Ա, էջ 136

3 Ս. Գրիգոր Աստուածաբան, Դարձեալ իմ Յիսուս, «Կնիք հաւատոյ», էջ 33

4 Դա վերջնականապէս կատարուեց մեծ կապադովկացիների (Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Աստուածաբան, Գրիգոր Նիւսացի) աշխատանքների շնորհիւ:

ԱՐԱՐՉԱԿԱՆ ՄԻԵՂԻՆՈՒԹԻՒՆ

«Հոգեւոր [էակների] իմաստութիւնը չի կարող հասնել Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, այլ Մի Աստուածութիւնը եւ ամենազօր Տէրութիւնն անմարմինների եւ մարմնաւորների համար Իր գործերից եւ երախտիքներից է ճանաչւում»[1]:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ

«Արարենք մարդուն Մեր պատկերով եւ նմանութեամբ» [Մնունդ. Ա 26]: Սուրբգրային այս տեղիքում կայ զարմանալի չաստուածութիւն... Աստուածային Անձերը միասնաբար խորհրդակցում են՝ մարդուն արարելու համար: Մարդն արարւում է Աստուծոյ պատկերով եւ նմանութեամբ՝ միեղէն ներդաշնակութեան մէջ իր Արարչի հետ, նա մեծարուած է գերագոյն փառքով՝ նուիրական միութեամբ աստուածային իրականութեան հետ՝ որպէս արարչութեան պսակ: Մարդու ստեղծումը միեղէն արարչական գործողութիւն է, որով արարուածը ոչ թէ օտարւում, այլ դրւում է նախախնամական եւ շնորհական միութեան մէջ իր Սկզբնապատճառի հետ:

Ինչպիսի՞ն է այս միութեան բնոյթը: Ըստ Եկեղեցու հայրերի՝ Աստուած բոլոր իրերը տեսնում էր մինչեւ նրանց լինելութիւնը՝ Աստուածային Անձերի յաւիտենական խորհրդակցութեամբ յղանալով դրանց գոյակերպն Իր մտքում, այսինքն՝ իւրաքանչիւր էութիւն ունի իր անժամանակեայ աստուածային յղացքը (իդէա) եւ գոյութեան է կոչւում որոշակի ժամանակի մէջ՝ ըստ իր յաւիտենական նախասահմանուած կերպարի եւ նմանութեան. «...կանխապէս ունենալով նախագոյութիւնը եւ գերագոյն լինելով ամէն տեսակ գոյութիւնից՝ ասում եմ՝ նոյնը ըստ նոյն գոյութեան նախագոյացրեց եւ Իր գոյութեամբ ամէն բան, ինչպէս որ է, գոյացրեց»[2]: Այս յղացքները, որոնք կոչւում են նաեւ օրինակներ (παραδείγματα) կամ նախասահմանութիւններ (προορισμοί) կամ նախագոյութիւններ (προόντα) կամ նախատեսութիւններ (πρόνοιαι), չեն համընկնում արարածների հետ, այլ սահմանում են այն կերպերը (մոդուսները), որոնցով արարածը հաղորդակցւում է Աստուծոյ արարչական զօրութիւններին: Այսպիսով, արարչութիւնը Աստուծոյ դժգոյն եւ թոյլ արձագանքը չէ,

1 Ցաճախապատում, Ճառ Ա, էջ 137

2 Ս. Դիոնեսիոս, էջ 186

ինչպէս պատկերացնում էին պլատոնականները, այլ կատարելապէս նոր գոյութիւն է, որը հէնց նոր դուրս է եկել Աստուծոյ ձեռքերից («Եւ տեսաւ, որ այն բարի է» [Մնունդ. Ա 18])[1]*:*

Արարչագործութիւնն ինքնանպատակ չէ. Աստուա՛ծ է սկզբնաւորում եւ Աստուա՛ծ է վերջնական նպատակը: Իւրաքանչիւր արարած ունի Աստուծոյ հետ հաղորդակցման կէտ. դա իր աստուածային յղացքն է, իր պատճառը, որը նաեւ իր նպատակն է: Եւ այսպէս, արարչութիւնը կոչուած է Աստուծոյ հետ կատարեալ միութեան, որը կատարւում է ձգտումով (նպատակաուղղուածութեամբ) դէպի իր աստուածային յղացքները: Աստուածային յղացքների ամբողջութիւնը կոչւում է յարացոյց: «Եւ ասում ենք՝ գոյութիւն ունի յարացոյց, որն էերի էացուցիչ եւ միեղէն նախագոյացած սահմանումներն է Աստուծոյ մէջ, որոնք աստուածաբանութիւնն անուանում է էերի զատողական եւ արարողական նախասահմանութիւններ եւ աստուածային ու բարի կամեցումներ, ըստ որոնց՝ [Աստուած] գերագոյն էութեամբ բոլոր էերը նախասահմանեց եւ արարեց»[2]*:*

Այս նուիրական միութիւնը խզուեց մեղքի անկումով: Այն, ինչ ժառանգեց մարդը, մասնակիութիւնն ու բաժանութիւնն է. մարդն օտարացաւ Աստծուց եւ արարչութեան ամբողջական ըմբռնումից: Սակայն արարչութիւնը չզրկուեց աստուածային հրաշակերտութիւնից, որ արարչական զօրութեամբ դրուած էր նրա մէջ: Առհասարակ արարչութիւնը չէր կարող գոյութիւն ունենալ ինքնանպատակ եւ առանց Աստուծոյ:

Արարչութիւնն ինքնին ունի իր ներքին աստուածադիր միեղինութեան գործոնները կամ համաչափութիւնները, որոնք արարչութիւնը կայունացնում են եւ օրինաչափ ընթացք հաղորդում: Աստուծոյ արարչութիւնն ազատ է, ունի իր օրինաչափութիւնները, որոնք ողջ տիեզերքը պահում են որոշակի կայունութեան մէջ: Այս առումով, միեղինութիւնն արարչութեանը ներյատուկ համընդհանուր սկզբունք է, որից բխում են արարածի հիմքում դրուած օրինաչա-

1 Տե՛ս В. Н. Лосский, Очерк мистического богословия Восточной Церкви, "Богословские труды", т. 8, Москва, 1972, с. 52-53:

2 Ս. Դիոնեսիոս, էջ 189

փութիւնները: Բնութեան պահպանութեան օրէնքները արդիւնք են արարչական համաչափութիւնների[1] *(միեղինացնող ազդակներ):*

Առհասարակ հետաքրքիր է, թէ արարչական միեղինութեան սկզբունքն ինչ արդիւնք կարող է տալ արարչութեան օրինաչափութիւնների բացայայտման մէջ: Պարզւում է, որ աստուածաբանական սկզբունքները կարող են յոյժ արդիւնաւէտ լինել այս հարցում: Բնութեան բոլոր օրինաչափութիւններում հանդէս են գալիս որոշակի հաստատուններ, որոնք այս կամ այն համադրութեամբ գործակից են հանդիսանում դաշտի տեսութեան հաւասարումներում: Այդ հաստատուններից մէկը լոյսի արագութիւնն է: Գալիլեյի յարաբերականութեան սկզբունքը եւ լոյսի արագութեան սահմանափակութիւնը բերում են Լորենցի ձեւափոխութիւններին (Էյնշտեյնի յատուկ յարաբերականութեան տեսութիւն-ՑՑՏ): Կարելի է ասել, որ ռելիատիվիստիկ մեխանիկան սկսւում է լոյսի արագութեան սահմանափակութեամբ, բացարձակ անփոփոխելիութեամբ (դատարկութեան մէջ) եւ անգերազանցելիութեամբ: Ֆիզիկական երեւութաբանութեան (ֆենոմենոլոգիա) տեսանկիւնից սա առաջին անգամ գիտակցեց Էյնշտեյնը՝ ստեղծելով ՑՑՏ-ը, սակայն աստուածաբանութեան տեսանկիւնից սա ամենեին էլ նոր ըմբռնում չէ, այլ արարչութեան մէջ հաստատուած հիմնարար օրինաչափութիւն է:

Այժմ ցոյց տանք, թէ ՑՑՏ-ի հիմնադրոյթներն ինչպէս են արտայայտուած քրիստոնէական աստուածաբանութեան մէջ: Լորենցի ձեւափոխութիւններից հետեւում է, որ տարածութիւնը եւ ժամանակը կրճատւում են շարժուող համակարգերում, իսկ լոյսի արագութեան սահմանային դէպքում՝ առհասարակ ոչնչանում: Պարզութեան համար դիտարկենք միայն ժամանակը: ՑՑՏ-ի լոյսի արագութեան բացարձակութեան սկզբունքը կձեւակերպենք հետեւեալ կերպ. գոյութիւն ունեն համակարգեր, որտեղ ժամանակը կանգ է առած, չի հոսում. այդպիսի համակարգերը կանուանենք յաւերժական: Մաթեմատիկական տեսանկիւնից պէտք է միայն պնդել, որ այդպիսի համակարգերը հասանելի են անվերջ յաջորդականութիւնների շնորհիւ, կամ նրանց սահմանը գտնւում է արարչութեան մէջ: Ակնյայտ է, որ այս պնդումը համարժէք է լոյսի արագութեան բացարձակութեան սկզբունքին. այսինքն՝ գոյութիւն ունի արագութիւնների սահման (լոյսի արագութիւն), որը հասանելի է ֆիզիկական համակարգերի համար անվերջ յաջորդականութիւնների շնորհիւ, եւ այդ սահմանին մօտենալիս ժամանակն անվերջօրէն դանդաղում է: Այլ կերպ ասած՝ արարչական յաւերժականութեան սկզբունքը եւ լոյսի բացարձակութեան սկզբունքը համարժէք դրոյթներ են:

Այժմ տեսնենք, թէ յաւերժականութեան սկզբունքն ինչպէս է արտայայտուած քրիստոնէական արարչաբանութեան մէջ: Եկեղեցու հայրերը նշում են յաւիտեանների երկու տեսակ՝ աստուածային եւ արարչական: Աստուածային յաւիտենականութիւնը անդրանցական է այս աշխարհի նկատմամբ, այսինքն՝

1 Ըստ տեսական ֆիզիկայի հիմնական պնդումներից մէկի՝ իւրաքանչիւր պահպանութեան օրէնք արդիւնք է որոշակի համաչափութեան. օրինակ՝ իմպուլսի եւ էներգիայի պահպանման օրէնքը արդիւնք է տարածաժամանակային համաչափութեան, էլեկտրական լիցքի պահպանման օրէնքը՝ տեղային տրամաչափային համաչափութեան (U(1)), եւ այլն:

այն մաթեմատիկական օբյեկտ չէ, որին կարելի է հասնել անվերջ յաջորդականութիւնների շնորհիւ: Արարչական յաւիտեանները (ἀίον), ըստ ս. Գրիգոր Տաթեւացու, բաժանւում են չորս դասի.

ա) յարաձգական յաւիտեաններ (ո՛չ սկիզբ ունեն եւ ո՛չ վերջ),

բ) սկզբնաւոր յաւիտեաններ (չունեն սկիզբ եւ ունեն վերջ),

գ) մշտնջենաւոր յաւիտեաններ (ունեն սկիզբ, չունեն վերջ),

դ) ժամանակաւոր յաւիտեաններ (եւ՛ սկիզբ ունեն, եւ՛ վերջ):[1]

Մենք դիտարկենք միայն յարաձգական յաւիտեանները, որոնք ո՛չ սկիզբ ունեն եւ ո՛չ վերջ եւ պարունակում են մնացած յաւիտեանները: Այն, որ արարչութիւնն օժտուած է նման ժամանակային անսահմանութիւններով, ինքնին վկայութիւն է այն բանի, որ յաւիտենականութեան սկզբունքը ներդրուած է արարչութեան մէջ: Այսինքն՝ արարչութիւնն ունի սահմանային դէպքեր, որոնք հասանելի են մաթեմատիկական յաջորդականութիւնների շնորհիւ, այլ կերպ ասած՝ բնութիւնն օժտուած է յարաձգական յաւիտեաններով, ուր ժամանակը կանգնած է: Սակայն այս արարչական անսահմանութիւնները չի կարելի շփոթել աստուածային անսահմանութեան հետ, որը անդրանցական է, այսինքն՝ հասանելի չէ մաթեմատիկական յաջորդականութիւնների շնորհիւ: «Եւ գիտելի է,- գրում է ս. Գրիգոր Տաթեւացին,- որ Աստուած կոչւում է անսկիզբ եւ անվախճան յաւիտեան եւ պատճառն է այն յաւիտեանը պարունակողների, որոնք ո՛չ սկիզբ ունեն եւ ո՛չ վախճան: Այլ Աստուած յաւիտենական, մշտնջենաւոր եւ ժամանակ է կոչւում, որովհետեւ սրանց պատճառն է»[2]:

Այսպիսով, յարաձգական յաւիտեանները կամ յաւերժական համակարգերը արարչութեան սահմանային վիճակներ են, որոնցից բխում են մի շարք կարեւոր բնագիտական օրինաչափութիւններ: Օրինակ՝ ժամանակի ըմբռնումը ստանում է դինամիկ պատկեր. ժամանակը «շարժուող» կամ «հոսող» յաւիտենականութիւն (արարչական) է, իսկ յաւիտենականութիւնը «անշարժ» կամ «սառած» ժամանակ է[3]: Նման դատողութիւնները կարելի է շարունակել տարածական պատկերացումների շուրջ: Ինչպէս տեսնում ենք, աստուածաբանական սկզբունքները բերում են տարածութեան եւ ժամանակի դինամիկ պատկերացումների:

Գիտութիւնը եւ երեւութաբանութիւնը տարբեր բաներ են, բանաձեւերը պէտք չէ շփոթել գիտութեան հետ: Գիտութեան մէջ երբէք նոր ոչինչ չի ասուել, քանզի գիտութեան բոլոր սկզբունքները տրւում են ճշմարիտ գիտութեան աղբիւրից՝ Աստծուց: «Գիտութիւնը եւ ճշմարտութիւնը,- գրում է ս. Գրիգոր Լուսաւորիչը,- Նրանից են ճշմարտապէս իմացւում, [որ] կենդանի է եւ կենդանարար, ողորմած

1 Տե՛ս **Ս. Գրիգոր Տաթեւացի**, Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն, Կ. Պոլիս, 1729 (=Գիրք հարցմանց), էջ 115 (թարգմ. հեղ.):

2 Գիրք հարցմանց, էջ 116

3 Այս մասին տե՛ս **В. Н. Лосский**, Очерк мистического богословия Восточной Церкви, с. 56:

եւ բարերար՝ շնորհներով, ներողամիտ եւ դարմանիչ»[1]*: Եւ իսկապէս, եթէ ուշադրութեամբ քննենք բնագիտութեան բոլոր հիմնարար պնդումները, որոնց վրայ կառուցուած են ժամանակակից գիտական տեսութիւնները, կտեսնենք, որ դրանք զարմանալիօրէն անհասկանալի են, նոյնիսկ՝* a priori, *այսինքն՝ դրանց մասին հնարաւոր չէ հարցնել՝ ինչո՞ւ, պէտք է ուղղակիօրէն ընդունել*[2]*: Այդպէս է, որովհետեւ դրանք ի վերուստ են՝ Աստուծոյ արարչական զօրութեամբ տրուած արարածին. Աստուած Իր պատկերով եւ նմանութեամբ արարեց մարդուն՝ հաղորդակից դարձնելով նրան Իր անբաւ գիտութեան խորքերին:*

Հարցեր են առաջանում. ապա ինչո՞ւ չէին գրւում հաւասարումներ, ինչո՞ւ չէին ստեղծւում ժամանակակից գիտութեան տեսութիւնները: Բանն այն է, որ Եկեղեցու հայրերին խորթ են եղել աշխարհընկալման երեւութաբանական եւ բանաձեւային սկզբունքները[3]*: Նրանք արարչութեան օրինաչափութիւնները ճանաչել են միեղէն-համածական հայեցողութեամբ՝ ըստ շնորհի այն աստիճանի, որ Աստուած արժանացրել է նրանց: Այդ ճանաչողութիւնը եղել է ոչ թէ ինքնանպատակ, այլ փրկաբանական բնոյթ է կրել՝ խստօրէն առնչուած լինելով նրանց աստուածպաշտական ներընթացին: Նրանք ապրել են միեղէն ներդաշնակութեամբ արարչութեան հետ եւ իրենց հոգու բոլոր զօրութիւններով եւ կարողութիւններով երկրպագել ամէն ինչի միեղէն Պատճառին: Նրանց կեանքը եղել է Աստուծոյ հետ միաւորուելու գերագոյն վկայութիւն: Այդպէս են յորդորել նաեւ մեզ՝ հեռանալ բազմակերպութիւնների իշխանութիւնից, որ մեղքի անկումով է հաստատուել այս աշխարհում, եւ միաւորուել բոլորի միակ Սկզբնապատճառին. «Եւ մեզ նաեւ պէտք է բազմութիւնից դէպի Մին դառնալ աստուածային միութեան զօրութեամբ եւ միեղինաբար օրհնաբանել Ամբողջը եւ Մի Աստուածութիւնը՝ բոլորի Մի Պատճառը, որ*

1 Ցաճախապատում, Մատ Ա., էջ 137

2 Բնագիտութիւնը սոսկ ասում է՝ փորձն այսպէս է ցոյց տալիս:

3 Աշխարհընկալման բանաձեւային կամ երեւութաբանական նկարագրութիւնը ֆիզիկայում կոչւում է ֆորմալիզմ:

առաջ է, քան ամէն տեսակ մէկ եւ բազմութիւն, եւ մաս եւ սահման եւ անսահմանութիւն եւ բովանդակութիւն եւ անբաւութիւն...»[1]:

ՀԱՄԱԾԱԿԱՆ (ԻՆՏԵԳՐԱԼ) ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

«Ինքը՝ Բանը, Հօրից առաքուածը, Ինքը՝ Էակից Որդին, Ինքը՝ Հօր միածին Որդին, կատարեալ Աստուածութեամբ իջաւ եւ **անճառաբար եւ անպարիմացապէս**[2], **անքննելի միութեամբ** եղաւ մարմին Կոյսից...»[3]:

Յովհան Մայրագոմեցի

Քրիստոսաբանութեան գլխաւոր սկզբունքը Աստուծոյ եւ մարդու միեղինութեան խորհուրդն է: Երբ մենք քրիստոսաբանութեանը մօտենում ենք փրկաբանական տեսանկիւնից, հասկանում ենք, որ Աստուծոյ մարդացումը մեր փրկութեան հիմքն է եւ ոչ թէ իմաստասիրական դրոյթ է, այլ դաւանական սկզբունք: Հետեւաբար պէտք է զգուշանալ քրիստոսաբանութիւնը մտաբմբռնելի դարձնելու գայթակղութիւնից: Նախայաւիտեան Բանը անճառելիօրէն միաւորուեց մարդկային բնութեան ամբողջականութեան հետ: Այս միութիւնը հայրերը բնութագրում են որպէս անշփոթելի, անփոփոխելի, անբաժանելի, *այսինքն՝ աստուածային բնութիւնը երբէք չի շփոթում մարդկայինի հետ, աստուածայինը եւ մարդկայինը միաւորուելիս չեն փոխակերպւում, այլ մնում են նոյնը, եւ Աստուածամարդու միութիւնն անբաժանելի է: Միաժամանակ այս միութիւնը հայրերն անուանում են* անճառելի, *այսինքն՝ Աստուծոյ եւ մարդու միութեան բնոյթը հնարաւոր չէ ենթարկել մտքի համար հասկանալի նկարագրութիւնների եւ քննութիւնների. չէ՞ որ այն հաւատքի խորհուրդ է: Եթէ մենք մեր փրկութեան (հետեւաբար՝ մեր հաւատքի) գլխաւոր սկզբունքը փորձում ենք դարձնել «հասկանալի», ինչով տարուած էր ողջ անտիոքեան դպրոցը Դ-ե դդ., եւ ինչը յանգեցրեց Եկեղեցու*

1 **Ս. Դիոնեսիոս**, էջ 220-221

2 անպարիմանալի - (ἀπερινόητος) զոր անմարթ է պարագրելով իմանալ, անբովանդակելի, տիրապէտ անիմանալի, անհասանելի (ՆԲՀԼ)

3 **Յովհան Մայրագոմեցի (Մայրավանեցի)**, «Կնիք հաւատոյ», էջ 143

ողբերգական պառակտման, ապա ինչի՞ համար է հաւատքը... Ակնյայտ է, որ նման փորձերը բացառապէս հակարդիւնք են եղել: «Ինչ կարիք կայ հարցաքննել եւ վիճել,- գրում է ս. Աթանաս Աղեքսանդրացին,- հաւատա՛լն է օգտակար եւ լռութեամբ պաշտելն ու երկրպագելը: Գիտեմ Նրան ճշմարտապէս Աստուած երկնքից՝ անչարչարելի, գիտեմ Նրան որդի Դաւթի՝ ըստ մարմնի՝ մարդ երկրից՝ չարչարելի: Զեմ հարցնում, թէ նոյն Ինքն ինչպէս է անչարչարելի եւ ինչպէս՝ չարչարելի, ինչպէս՝ Աստուած եւ ինչպէս՝ մարդ: Միգուցէ, ինչուն քննելով եւ եղանակը փնտրելով, ցած ընկնեմ բարութիւնից, որ մեր առաջ է: Քանզի նախ պէտք է հաւատալ եւ փառաւորել եւ ապա ի վերուստ հայցել այս բաների ստացումը, ոչ թէ ի ներքուստ վերցնել՝ մարմնից եւ արիւնից, այլ աստուածային յայտնութիւնից»[1]:

Վախենալով աստուածայինի եւ մարդկայինի շփոթից եւ Տիրոջ փրկագործ տնօրինութիւնը բաշխելով ըստ աստուածայինի եւ մարդկայինի՝ անտիոքեան աստուածաբանութիւնն անլուծելի երկուութիւն մտցրեց իր քրիստոսաբանութեան մէջ, ինչը մերժուեց եւ սուր քննադատութեան ենթարկուեց ալեքսանդրեան դպրոցի եւ այդ դպրոցի աւանդութեանը հարազատ մնացած Արեւելեան Եկեղեցիների կողմից[2]:

Արեւելեան աստուածաբանութիւնը մերժում է ցանկացած բաժանութիւն կամ երկուութիւն Քրիստոսի մէջ: «Քանզի ինչպէս աստուածային կերպարանքը մարդկայինին միացրեց, եւ մի կերպարանք է, այնպէս էլ աստուածային կատարելութիւնը եւ մարդկային կատարելութիւնը միաւորուեցին, եւ մի կատարելութիւն է: Նմանապէս աստուածային բնութիւնը եւ մարդկային բնութիւնը միաւորուեցին, եւ մի բնութիւն է: Սրա պէս աստուածային ներգործութիւնը եւ մարդկային ներգործութիւնը միաւորուեցին, եւ մի ներգործութիւն է: Նոյնպէս եւ աստուածային կամքը եւ մարդկային կամքը միաւորուե-

1 **Ս. Աթանաս Աղեքսանդրացի**, Ճառ վասն հաւատոյ, թէ մի է Քրիստոս, «Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք», Վենետիկ, 1899, էջ 59 (թարգմ. հեղ.)

2 Հայ Առաքելական Եկեղեցու քրիստոսաբանական համակարգը աղեքսանդրեան դպրոցի աստուածաբանական աւանդի բիւրեղացումն է: Յատկապէս կարեւոր են Խոսրովիկ Թարգմանչի, Յովհաննէս Օձնեցու, Անանիա Նարեկացու, Պօղոս Տարօնացու, Յովհաննէս Սարկաւագի, Գրիգոր Տաթեւացու քրիստոսաբանական գրուածքները:

ցին, եւ մի կամք է: Ո՛չ բաժանմամբ ենք ասում՝ ըստ Նեստորի եւ ո՛չ շփոթմամբ՝ ըստ Եւտիքէսի: Այլ անշփոթ միաւորութեամբ ենք խոստովանում Քրիստոսին»[1]: Մի է Քրիստոս՝ մարմնացեալ Բանը. մի աստուածմարդկային բնութիւն, մի անձ, մի կամք, մի ներգործութիւն: Մի Քրիստոսի խորհուրդը մեր փրկութեան եւ աստուածացման հիմքն է, ուստի այն չպէտք է ածանցուի մեր գիտակցութեան մէջ: Հետեւաբար միեղինութիւնը քրիստոսաբանութեան կենտրոնական սկզբունքն է: Մնացած բոլոր սկզբունքները յարակից են, այսինքն՝ ամբողջացնում են մեր դաւանութիւնն ի Մի Տէր Յիսուս Քրիստոս: «...Մենք հաւատում ենք, որ Աստուծոյ Որդին բնութեամբ եւ ճշմարտապէս մարդ է եղել, ոչ թէ բնակուել է մարդու մէջ, ինչպէս սուրբերի մէջ, այլ Ինքն իսկ կատարեալ մարդ է դարձել՝ անշփոթ եւ առանց խառնակութեան, ո՛չ Աստուածութիւնը փոփոխելով մարմնի բնութեան մէջ եւ ո՛չ մարմինը լուծարելով անմարմնութեան մէջ, այլ Բանն անճառաբար միացաւ մարմնին: Ուստի միանալուց յետոյ չենք համարձակւում երկուսի բաժանել մեր Մի Տէր Յիսուս Քրիստոսին, այլ մի բնութեամբ ենք խոստովանում Բան Աստծուն»[2]:

Ըստ Արեւելեան եկեղեցու աստուածաբանութեան՝ Աստուածամարդու միութեան խորհրդին չի կարելի մօտենալ ածանցեալ ճանապարհով, այսինքն՝ հնարաւոր չէ այն վերածել բաղադրամասերի եւ ապա հասկանալ, թէ բաղադրամասերն ինչպէս են միաւորուած, քանզի դա յանգեցնում է քրիստոսաբանական աղէտի: Միակ ճիշտ մօտեցումը համածական ուղին է, երբ մենք խոստովանում ենք Աստուծոյ եւ մարդու անճառ միութիւը եւ այդ միութեան լոյսի ներքոյ նշմարում մեր փրկութեան իսկութիւնը խափանող գործօնները՝ որոշակի դաւանական պնդումներով արտասահմանելով դրանք մեր գիտակցութիւնից: Այսինքն՝ Աստուծոյ եւ մարդու ճշմարիտ, էական եւ գոյաբանական միութիւնը պահանջում է աստուածայինի եւ մարդկայինի կատարելութիւն, անփոփոխելիութիւն, անշփոթելիութիւն եւ անբաժանելիութիւն: Այդ դէպքում մեր փրկութիւնը դառնում է իրական եւ ճշմարիտ: Ահա այս հոգածութեամբ են ընթացել աստուածաբա-

1 Գողոս Տարօնացի, Ընդդէմ հերձուածողաց, ՄՄ ձեռ. N 3907, թ. 89բ (թարգմ. հեղ.)

2 Յովհաննէս Սարկաւագ, Յաղագս նշանակ հաւատոյ նիկիականն ՅԺԸ-ից, ՄՄ ձեռ. N 6453, թ. 134ա (թարգմ. հեղ.)

նական աւանդութեան սրբազան խորհրդազգածները՝ մեր փրկութեան ճշմարտութիւնները թրծելով դաւանական եզրերով, եւ մենք իրաւացիօրէն այդ քրիստոսաբանութիւնն անուանեցինք համածական, որովհետեւ միեղէն եւ համածական է Քրիստոսի խորհուրդը եւ այդպէս էլ պիտի խոստովանուի եւ քարոզուի:

Մի Եկեղեցի

«Ուրախացի՛ր, սո՛ւրբ Եկեղեցի, քանզի Քրիստոս՝ երկնքի Արքան, այսօր պսակեց քեզ Իր խաչով եւ զարդարեց քո ամրութիւնները Իր սքանչելի փառքով:

Ցնծա՛ յոյժ, Դո՛ւստր Սիոնի, քանզի այսօր քո վերստին նորոգմամբ երկիրը երկինք դարձաւ, եւ երկնաւոր Թագաւորը հաճեց բնակուել քո մէջ...»[1]:

Շարական, Կանոն Ե աւուրն ս. Խաչի

Ամէն օր Եկեղեցում մենք խոստովանում ենք. «Հաւատամք ի Մի միայն յԸնդհանրական եւ յԱռաքելական Սուրբ Եկեղեցի», այսինքն՝ վկայում ենք, որ միութիւնը առաջինն է Եկեղեցու յատկութիւնների մէջ: Արդէն իսկ եկեղեցի բառը, որ հայերէն տարբերակն է յունարէն ἐκκλησία բառի, նշանակում է հաւատացեալների հաւաք, միութիւն, այսինքն՝ բնորոշում է հաւատացեալների հաւաքական միութիւնը Տիրոջ շուրջ: Այդ միութիւնը Պօղոս առաքեալը բնորոշում է որպէս Քրիստոսի խորհրդական մարմնի անդամների միութիւն [Եփես. Ե 30, Ա Կորնթ. ԺԲ 27]: Քրիստոս գլուխն է Եկեղեցու՝ Իր խորհրդական մարմնի [Կող. Ա 18]: Ուրեմն ճշմարիտ եկեղեցաբանութիւնը բխում է ճշմարիտ քրիստոսաբանութիւնից: Ինչպէս մի է Քրիստոս, այնպէս էլ մի է Նրա Եկեղեցին:

Համագոյութիւն կարեւոր եզրը մի կողմից բացայայտում է Քրիստոսի կատարեալ Աստուածութիւնը, միւս կողմից՝ Նրա մարդեղութեան իսկութիւնը: «...Նոյն Ինքը կատարեալ Աստուած է եւ Նոյն Ինքը՝ ճշմարիտ մարդ, համագոյ է Հօրը եւ Սուրբ Հոգուն՝ ըստ Աստուածութեան եւ համագոյ մեզ՝ ըստ մարդկային բնութեան,

1 Կանոն Ե աւուրն ս. Խաչի, օրհ. ԳՁ, «Շարակնոց», Վաղարշապատ, 1888, էջ 377

սակայն՝ ոչ այլեւայլ, այլ մի՝ ըստ Սուրբ Գրքի»[1]: Եկեղեցու մարդաբանական նիստը հիմնուած է Քրիստոսի մարդկային համագոյութեան վրայ: Քրիստոս կատարեալ մարդ է, մենք համագոյ ենք Նրան ըստ մարդեղութեան, այսինքն՝ գոյաբանական միեղինութեան մէջ ենք Աստուծոյ հետ: Մենք Քրիստոսի մարմնի՝ Եկեղեցու հոգեղէն անդամներն ենք, Քրիստոս Իր Եկեղեցով միաւորում է մարդկանց իրար հետ կամ եկեղեցացնում մեր պառակտուած բնութիւնը մէկ կատարեալ ամբողջականութեան մէջ, որ Իր մարմինն է, եւ աստուածացնում այդ ամբողջականութիւնը. ուրեմն մեր փրկութեան տնտեսութիւնը միայն Եկեղեցով է իրականանում: Այլ ճանապարհ չկայ. միակ ճշմարիտ ճանապարհը հաստատուած է Տիրոջ կատարեալ մարդեղութեամբ՝ Իր սուրբ Եկեղեցով: Քրիստոսի եւ Եկեղեցու, Աստուծոյ եւ մարդու խորհրդական-շնորհական միութիւնը բարձրագոյն նշանակալիութեամբ (սիմվոլիզմ) նկարագրուած է «Երգ Երգոցում»[2], ուր Փեսայի եւ Հարսի սիրոյ հանճարեղ այլաբանութեամբ ներկայացուած են Քրիստոս-Եկեղեցի փոխյարաբերութեան եւ մարդու աստուածացման աննկարագրելի խորհուրդները:

Եկեղեցու միութիւնը Երրորդութեան Անձերի միութեան պատկերն է. «...որպէսզի մի լինեն, ինչպէս եւ Մենք մի ենք» [Յովհ. ԺԷ 23]: Եկեղեցու ընդհանրական միեղինութիւնն ուղղակի բխում է Երրորդութեան Անձերի համագոյութիւնից, եւ Եկեղեցին Աստուծոյ անմիջական ներկայութիւնն է արարչութեան մէջ: Ահա թէ ինչու հայրաբանական գրականութեան մէջ Եկեղեցին բնորոշւում է որպէս Աստուծոյ քաղաք, Տիրոջ այգի, Աստուծոյ տուն եւ այլն, որոնք ցոյց են տալիս, որ Եկեղեցին Աստուծոյ բնակավայրն է, Սրբութիւն Սրբոց է, ուր բնակւում է Աստուած: Եկեղեցին իր աստուածաբանական նիստով մեզ ներկայանում է որպէս վերերկրեայ, երկնային հաստատութիւն, որի կատարեալ գեղեցկութիւնը բացայայտուելու է միայն վախճանաբանական ապագայում, երբ սուրբերը ժառանգելու են երկնքի արքայութիւնը, եւ Յաղթանակած եւ Մարտնչող Եկեղեցիները վերջնականապէս միաւորուելու են:

1 ՄՄ ձեռ. N 6453, թ. 134բ

2 Տե՛ս «Երգ Երգոց հանդերձ մեկնութեամբ նախնեաց», աշխատ. Մեսրոպ քահանայ Արամեանի, «Գանձասար» մատենաշար, Երեւան, 1993:

Քրիստոսի հիմնած Եկեղեցին ամենակատարեալ իրականութիւնն է արարչութեան մէջ. այն լի է Աստուծոյ Սուրբ Հոգու տնօրինական ներկայութեամբ. «Ուր Եկեղեցին է,- գրում է ս. Երանոսը,- այնտեղ էլ Աստուծոյ Սուրբ Հոգին է, ուր Աստուծոյ Հոգին է, այնտեղ էլ Եկեղեցին է»[1]: Այսինքն՝ Եկեղեցի նշանակում է Սուրբ Հոգու եւ հետեւաբար՝ Սուրբ Երրորդութեան ներկայութիւն: Այդ ներկայութիւնը կրաւորական չէ, այլ փրկագործում, պայծառակերպում եւ աստուածացնում է արարչութիւնը: Եկեղեցին կոչուած է՝ աստուածային սիրով միեղինացնելու արարածին իր Արարչի հետ. «...[եկեղեցական] քահանայապետութեան բովանդակութիւնն է Աստուծոյ եւ աստուածայինների նկատմամբ զգուշաւոր սէրը՝ աստուածայնաբար եւ միեղինապէս սրբազնագործուած»[2]:

Եկեղեցին, իր խորհրդական-ծիսական նիստով, Տիրոջ Սեղանի շուրջ հաւաքուած քրիստոնեաների միութիւնն է: Այդ Սեղանի վրայ կատարւում է Անմահ Գառի խորհրդական զոհումը մեր փրկութեան համար: Տիրոջ Մարմնի եւ Արեան ճաշակմամբ՝ սուրբ Հաղորդութեամբ, Աւազանից վերստին ծնուածներս հաղորդւում ենք կամ միաւորւում անհասանելի եւ անճառելի Աստուածութեան հետ եւ Նրա միջոցով՝ իրար հետ: Այդ զոհաբերութեամբ է հաստատուած մեր փրկութիւնը եւ մեր փրկութեան հաստատութիւնը՝ Աստուծոյ սուրբ Եկեղեցին: Ամէն մէկը չէ, որ կարող է մուտք գործել Եկեղեցի, որ երկինք է երկրի վրայ, այլ միայն նրանք, ովքեր Սուրբ Հոգու շնորհական առաջնորդութեամբ թօթափւում են չարի մասնակիութիւններից եւ առաքինասէր կեանքով ու երկնային սիրոյ բաղձանքով ձգտում կատարեալ միեղինութեան Աստուծոյ հետ: Հետեւաբար միեղինութեան ձգտումը ապացոյցն է ճշմարիտ քրիստոնէական կեանքի, իսկ Եկեղեցին արարչութիւնը միեղինացնող եւ Աստծուն ընծայաբերող կատարելութիւնն է, եւ միեղինութիւնը Եկեղեցու բուն յատկանիշն է: Ահա թէ ինչու մենք ամէն օր Աստուծոյ եւ Նրա սուրբերի առջեւ վկայում ենք. «Հաւատամք ի Մի միայն յԸնհանրական եւ յԱռաքելական Սուրբ Եկեղեցի»:

1 Migne, PG, t. 7, col. 966c

2 Ս. Դիոնեսիոս, էջ 57

Սակայն մեր մէջ որքանո՞վ է կենդանի Մի Եկեղեցու խոստովանութիւնը: Արդեօ՞ք այն չի վերածուել դաւանական հաւատալիքների անկենդան կրկնութեան: Արդեօ՞ք չենք փորձում յարմար միջոցներ փնտրել՝ խուսափելու միութիւնը խափանող ցաւատանջ հարցերից: Անշուշտ, միութեան հիմքը դաւանական միութիւնն է: Յատկապէս քրիստոսաբանական հարցերում կան չլուծուած տարաձայնութիւններ: Սակայն աստուածաբանական վէճերը չի կարելի վերածել դաւանական պարտադրման, աստուածաբանական դպրոցները կարող են պայքարել միմեանց հետ, բայց ոչ Եկեղեցու պառակտման գնով: Մարդկութիւնը ստիպուած եղաւ շատ թանկ վճարել այդ ամենի համար. այդ պայքարի հետեւանքով պառակտուած քրիստոնեայ աշխարհը հետզհետէ թուլացաւ եւ հեշտութեամբ կործանուեց բարբարոս ազգերի միասնական հարուածների տակ: Եկեղեցու պառակտումը մարդկութեան ամենամեծ ողբերգութիւնը եղաւ:

Դաւանական գիտակցութիւնը մշտապէս նորոգւում է ըստ Աստուծոյ շնորհի: Երբ երբեւէ դադարում է այդ նորոգութիւնը, եկեղեցական կեանքը քարանում եւ սահմանափակւում է անկենդան կաղապարներով: Անշուշտ, շնորհն ինքը պէտք է ուսուցանի, թէ որն է միութեան ճշմարիտ ճանապարհը. այն, ինչ անհնար է թւում մարդու համար, հնարաւոր է Աստուծոյ համար: Եւ մենք պէտք է թոյլ տանք, որ Աստուծոյ միեղինացնող շնորհը գործի քրիստոնէական հաւաքականութեան մէջ, որի համար նախ եւ առաջ պէտք է վերահաստատել Եկեղեցու քրիստոսաւանդ հաղորդական միութիւնը: Նրանց համար, ովքեր դաւանում են Քրիստոսին որպէս կատարեալ Աստուած եւ կատարեալ մարդ՝ անշփոթելիօրէն, անփոփոխելիօրէն եւ անբաժանելիօրէն միաւորուած մեր փրկութեան համար, ոչ մի էական հիմք չկայ հաղորդական միութիւնը խախտելու համար: Եթէ մեր հաւատքն ազնիւ է եւ ճշմարիտ, եթէ ցանկանում ենք միաւորուել Աստուծոյ եւ Նրա սուրբերի երկնային կաճառի հետ, ապա պէտք արագօրէն վերացնենք այն խափանիչ գործօնները, որոնք թոյլ չեն տալիս մեզ միեղինաբար հաւաքուել Տիրոջ Սեղանի շուրջ կամ ճշմարտապէս եկեղեցանալ ի Մի Տէր Յիսուս Քրիստոս:

ՍՈՒՐԲ ԿՂԵՄԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՌՈՄԷԱՑԻ

Ա. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐ

Ս. Կղեմէս եպիսկոպոս Հռոմէացին առաջինն է ա՛ռաքելական հայրերի մէջ կամ խրատական[1] շրջանի առաջին հեղինակն է: Նա մեծ հեղինակութիւն է վայելել հին քրիստոնէական աշխարհում: Այս է վկայում այն իրողութիւնը, որ նրա անունն են օգտագործել յետագայ դարերի մի շարք անյայտ հեղինակներ՝ իրենց գործերին արժէք հաղորդելու համար:

Կղեմէսի կեանքի մասին շատ քիչ տեղեկութիւններ ունենք: Հնագոյն ժամանակներից ի վեր նա նոյնացուել է Պօղոս առաքեալի գործակից Կղեմէսի հետ, որի մասին առաքեալը յիշում է փիլիպեցիներին ուղղած իր նամակում[2] [Դ 3]: Սակայն սա հայրաբանների մեծ մասի կողմից մերժւում է: Յետագայ վարքագրութիւններում եւ կեղծ-կղեմէսեան գործերում Կղեմէսը հանդէս է գալիս որպէս արքայական ծագում ունեցող հռոմայեցի, որը ստացել է հոյակապ կրթութիւն, ապա Պետրոսի քարոզութեամբ դարձել քրիստոնեայ եւ նրա մահից քիչ առաջ ձեռնադրուել եպիսկոպոս[3]: Առաջ է քաշուել նաեւ այն վարկածը, ըստ

1 Վաղ քրիստոնէական գրականութիւնը հայրաբանները բաժանում են հետեւեալ կերպ. ա) խրատական շրջան, բ) յատագովական շրջան, գ) հակաճառական շրջան, դ) գիտական շրջան:

2 Սոյն կարծիքին են **Որոգինէսը** (In Ioannem, I 29), **Եւսեբիոսը** (Historia Ecclesiastica, III 4, 15), **Եպիփանը** (Panarion, XXVII 6) եւ **Հերոնիմոսը** (De viris illustribus, 15):

3 Այս գետնի վրայ որոշ հայրաբաններ Կղեմէս եպիսկոպոսին փորձում են նոյնացնել Դոմիտիանոսի օրօք մահապատժի ենթարկուած Տիտոս Փլաւիոս Կղեմէսի հետ, որը 95 թ. Հռոմի կոնսուլն էր (**A. H. Newman**, A Manual of Church History, v. 1, Philadelphia, 1910, p. 215-216): Նոյնացման համար հիմք է ծառայում Դիոն Կասսիոսի հաղորդած այն տեղեկութիւնը, ըստ որի վերջինս մահուան է դատապարտուել անաստուածութեան մեղադրանքով (Roman History, LXV 14): Սակայն որքան դժուար է Դիոն Կասսիոսի սոյն տեղեկութիւնից եզրակացնել կոնսուլի քրիստոնեայ լինելու մասին (թէեւ անաստուածութեան մեղադրանքը քրիստոնեաների դէմ ուղղուած հիմնական ամբաստանութիւններից մէկն էր), նոյնքան դժուար է նրան նոյնացնել Հռոմի եպիսկոպոսի հետ: Աւելին, Սուետոնիոսը, ինչ-որ տեղ

որի Կղեմէսը կարող էր լինել Տիտոս Փլաւիոս Կղեմէսի տան անդամներից մէկը[1], որն իր տիրոջ անունն էր կրում՝ մի երեւոյթ, որն այդ շրջանում բաւական տարածուած էր: Սակայն այս վարկածներն ընդունելութիւն չեն գտել[2]:

Բաւական տարակարծութիւններ են եղել նաեւ Կղեմէսի հեթանոս կամ հրեայ լինելու վերաբերեալ: Վերեւում արդէն տեսանք, որ հնագոյն աւանդութիւնը նրան հեթանոսական միջավայրի ծնունդ է համարում: Հայրաբանները, սակայն, այլ կարծիք ունեն այս հարցի մասին[3]: Հին Կտակարանի նրա խոր իմացութիւնն ակնարկում է, որ նա կարող էր հրէական ծագում ունենալ[4]:

Այնուամենայնիւ, կասկած չկայ, որ Կղեմէսը եղել է Հռոմի եպիսկոպոս: Սակայն մինչեւ վերջ պարզ չէ, թէ եպիսկոպոսների շարքում նա որ տեղն է զբաղեցրել: Կեղծ-կղեմէսեան «Մատեր» եւ «Հանդիպումներ» գործերը Կղեմէսին ներկայացնում են որպէս Պետրոս առաքեալի անմիջական յաջորդը[5]: Իրենէոսը պատմում է, որ այս Կղեմէսը երրորդն էր Հռոմի եպիսկոպոսների շարքում՝ յաջորդելով առաքեալների կողմից նշանակուած Լինոսին եւ Անակլետոսին, եւ որ Կղեմէսն ինքը տեսել է Պետրոս եւ Պօղոս առաքեալներին ու շփուել նրանց հետ[6]: Տերտուղիանոսը նշում է, որ նա նշանակուել էր Պետրոս առաքեալի կողմից[7]: Հերոնիմոսի վկայութեան համաձայն՝ լատիններից շատերը Կղեմէսին համարում էին Հռոմի երկրորդ եպիսկոպոսը[8]: Ըստ Օգոստինոսի եւ

հակասելով Կասսիոսին, նշում է, որ մահապատիժը բխում էր արհամարհելի ծուլութեան, իր պաշտօնի մէջ թերանալու պատճառով (**Suetoni**, Romic. XV 1):

1 Ըստ ոմանց՝ Տիտոս Փլաւիոս Կղեմէսի որդին. տե՛ս **Lightfoot**, Apostolic Fathers, part 1, v. 1, p. 23:

2 **Ф. В. Фаррар**, Жизнь и труды свв. отцов и учителей Церкви, С.-Петербург, 1891, с. 2

3 **A. H. Newman**, A Manual of Church History, v. 1, Philadelphia, 1910, p. 215-216

4 Այս կապակցութեամբ նոյնպէս բաւականին կասկածներ կան: Տե՛ս **Bardenhewer**, Patrologie, 1910, p. 24:

5 Տե՛ս The Ante-Nicene Fathers, v. 8, p. 210, 218:

6 **Իրենէոս**, Ընդդէմ հերձուածողաց, Գ 3. տե՛ս The Ante-Nicene Fathers, v. 1, p. 416:

7 **Տերտուղիանոս**, Պատուիրան ընդդէմ հերետիկոսութիւնների, 32. տե՛ս The Ante-Nicene Fathers, v. 3, p. 258:

8 **Hieronymus**, De scripturis sacris, 15

Օպտատոսի՝ նրան նախորդել է Լինոսը[1]: Եւսեբիոսը, կրկնելով Իրենէոսին, վկայում է, որ Լինոսից յետոյ եպիսկոպոս է եղել նաեւ Անակլետոսը (կամ Կլետոսը), որին յաջորդել է Կղեմէսը[2]:

Այս զանազան աւանդութիւնները հաշտեցնելու փորձերը վաղուց են սկսուել: Այսպէս, Ռուփինոսը «Հանդիպումների» իր լատիներէն թարգմանութեան առաջաբանում այսպիսի միտք է արտայայտում. «Լինոսն ու Կլետոսը եպիսկոպոսներ էին Հռոմում՝ թէեւ Կղեմէսից առաջ, սակայն Պետրոսի կենդանութեան օրօք, այնպէս որ նրանք եպիսկոպոսութեան գործերն էին վարում, իսկ ինքը (Պետրոսը)՝ առաքելութեան... Այսպիսով, երկուսն էլ արդարացի կարող են լինել՝ ե՛ւ այն, որ նրանք (Լինոսն ու Կլետոսը) եպիսկոպոս են համարում նախքան Կղեմէսը, ե՛ւ այն, որ Կղեմէսը եպիսկոպոսութիւնը ստացել է Պետրոսի վախճանուելուց յետոյ»[3]: Եպիփան Կիպրացին կարծում է, որ Պետրոսի կողմից ձեռնադրուած Կղեմէսն ի սէր խաղաղութեան իր աթոռը զիջեց Լինոսին, որին յաջորդեց Կլետոսը, եւ միայն նրանց մահից յետոյ նա աթոռ բարձրացաւ[4]: «Առաքելական սահմանադրութիւններում» ասւում է, որ Պետրոսի կողմից առաջինը ձեռնադրուեց Լինոսը, իսկ վերջինիս մահից յետոյ Պետրոսը ձեռնադրեց Կղեմէսին[5]:

Այս ընդհանուրից կարելի է եզրակացնել, որ, ամենայն հաւանականութեամբ, Կղեմէսն իսկապէս յաջորդել է Լինոսին եւ Կլետոսին, այլապէս նման նուազ յայտնի անձնաւորութիւնների ներմուծումը Կղեմէսի եւ Պետրոսի միջեւ անհաւանական կլինէր: Այլ պէտք է կարծել, որ Կղեմէսն իր հեղինակութեամբ մի շարք աւանդութիւնների մէջ դուրս է մղել իրեն նախորդած եպիսկոպոսներին[6]:

Եւսեբիոսն ասում է, որ Կղեմէսը Եկեղեցու իշխանութեան գլուխ է անցել Դոմիտիանոսի գահակալութեան (81-96) տասնմէկերորդ տարում եւ մահացել Տրայանոսի իշխանութեան (98-117) երրորդ տարում,

1 Տե՛ս **Преображенский**, Писания Мужей Апостольских, С.-Петербург, 1895, с. 68:

2 **Eusebii**, Pamphil, Historia Ecclesiastica, III 15

3 Տե՛ս **Преображенский**, с. 68:

4 **Epiphanii**, Panarion, XXVII 6

5 «Առաքելական սահմանադրութիւններ», Է 4. տե՛ս The Ante-Nicene Fathers, v. 7, p. 478:

6 Մելքիսեդեկ եպս. Մուրատեանցն այն կարծիքն է յայտնում, որ սկզբում երեքը միասին են կառավարել, եւ միայն նրանց մահից յետոյ է, որ Կղեմէսին է մնացել միայնակ գահակալելու պատիւը (**Մ. եպս. Մուրատեանց**, Պատմութիւն Քրիստոնէական Եկեղեցւոյ, Գալաց, 1898, էջ 67):

այսինքն՝ գահակալել է ինը տարի (92-101)[1]: Սակայն պատմութեանը ոչինչ յայտնի չէ նրա մասին, բացի կորնթացիներին ուղղած իր նամակի հետ կապուած իրողութիւնից: Իրենէոսն ու Եւսեբիոսը ոչինչ չեն ասում նրա մահուան հանգամանքների մասին: Աւելին, Իրենէոսը, թուելով Հռոմի եպիսկոպոսներին, միայն Թելեսփորոսին (135-137) է «վկայ» անուանում: Ռուփինոսն (398) ու Զոսիմոս պապը (417), սակայն, Կղեմէսին «նահատակ» են անուանում[2]: Կղեմէսը «վկայ» է անուանւում նաեւ Վեզոնի ժողովի (442) որոշումներում[3]: Հերոնիմոսն ասում է, որ Հռոմում ս. Կղեմէսի անունով եկեղեցի կար[4]: Դ դարից սկսած՝ ի յայտ են գալիս Կղեմէսի վկայաբանութիւնները, որոնց համաձայն՝ Կղեմէսը Տրայանոսի կողմից աքսորւում է Խերսոն, որտեղ քարոզութեամբ ու հրաշքներով մեծ թուով հեթանոսների դարձի է բերում: Այստեղ էլ կայսեր հրամանով նահատակւում է՝ վզից քար կախուած ծովախեղդ արուելով[5]:

Այլ աղբիւրներ խօսում են Կղեմէսի՝ Պոնտոս, ուրիշներ՝ Ցունաստան աքսորուելու մասին[6]:

Սլաւոնական աղբիւրների մի մասը խօսում է Կղեմէսի նշխարների՝ Ղրիմում յայտնաբերուելու եւ Ռուսաստան տեղափոխուելու մասին, որը, սակայն, մեծ կասկածի տեղիք է տալիս[7]: Մէկ այլ աղբիւրի համաձայն՝ սլաւոնների լուսաւորիչներ Կիրիլն ու Մեթոդին Կղեմէսի նշխարները Խերսոնից վերցնում են եւ տարածում սլաւոնական ցեղերի մէջ, իսկ սուրբի գլուխը Վլադիմիր ցարը ռուսաց մկրտութեան ժամանակ բերում եւ թաղում է Կիեւում[8]: Արեւմտեան աւանդութեան համաձայն՝ Կիրիլն ու Մեթոդին Կղեմէսի նշխարները Ղրիմում գտնելուց յետոյ տանում են Հռոմ: Ապա Կիրիլը մահանում է 869-ին եւ թաղւում Հռոմի Ս. Կղեմէս եկեղեցում, որտեղ եւ թաղուած էին Կղեմէսի նշխարները[9]:

1 **Eusebii**, Pamphil, Historia Ecclesiastica, III 15, 34. Պոսնովը գահակալութեան թուականներ է համարում 90-99 թթ. (**М. Э. Поснов**, История Христианской Церкви, Брюссель, 1964, с. 128), իսկ Հաունակը՝ 88-97 թթ. (տե՛ս նոյն, էջ 161):

2 Տե՛ս **В. В. Болотов**, Лекции по истории древней Церкви, т. 2, С.-Петербург, 1910, с. 78:

3 Տե՛ս **М. Э. Поснов**, с. 161:

4 Տե՛ս **В. В. Болотов**, с. 78:

5 Տե՛ս **Lumper**, Historia theologico-critica, t. 1, p. 16:

6 Տե՛ս **В. В. Болотов**, с. 79:

7 նոյն տեղում

8 Տե՛ս **Галонов**, Церковная история, Харковь, 1867, с. 31-32:

9 Տե՛ս **М. Э. Поснов**, с. 246:

Հայկական վարքագրական աղբիւրները վկայում են, որ հեթանոս Կղեմէսը նաւաբեկութիւնից ազատուելուց յետոյ Հռոմում հանդիպում է Պետրոս առաքեալին, քրիստոնեայ դառնում եւ հէնց առաքեալի կողմից էլ եպիսկոպոս ձեռնադրւում: Ապա, Դոմիտիանոսի կողմից ձերբակալուելով եւ ատեանում համարձակ կերպով քրիստոնէութեանը հաւատարիմ մնալով, ծանր խոշտանգումներից յետոյ աքսորւում է Խերսոն[1], որտեղ էլ նահատակւում է «նաւի խարիսխը վզին ծովամոյն մահուամբ»[2]: Նահատակութիւնից յետոյ իր մարմինը «գմբէթաձեւ մեծ ժայռի մը մէջ պահուած մնաց, եւ ժողովուրդը հրաշալի ազդումով իմանալով այս՝ ամէն տարի, երբ ուխտի կ'երթային հոն, եօթը օրեր տեղատուութեամբ կը ցամաքանար ծովը, եւ յետոյ նորէն մակընթացութեամբ իր տեղը կը դառնար ջուրը»[3]: Հայ աղբիւրները ոչինչ չեն ասում Կղեմէսի նշխարների տեղափոխման վերաբերեալ, սակայն բազմաթիւ պատմութիւններ են պարունակում Կղեմէսի ստորջրեայ գերեզմանի հրաշագործութիւնների մասին[4]:

Բ. ՍՈՒՐԲ ԿՂԵՄԷՍԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ

Ս. Կղեմէսի անունը կրող Առաջին նամակը հայրաբանական գրականութեան մէջ առաջին երկն է: Նամակը հեղինակի անունը չի կրում եւ որեւէ ձեւով չի յուշում այդ մասին: Այն հաւաքագրուած է «Հռոմում պանդխտացած Աստուծոյ Եկեղեցուց Կորնթոսում պանդխտացած Աստուծոյ Եկեղեցուն»: Սակայն հնագոյն աւանդութիւնը միաձայն կերպով սոյն նամակի հեղինակ է համարում Հռոմի եպիսկոպոս Կղեմէսին:

Եւսեբիոս Կեսարացին իր «Եկեղեցական պատմութեան» մէջ վկայում է, որ Հեգեսիպպոսը (Բ դար) գիտէր եւ իր թղթերում խօսում էր Կղեմէսի նամակի մասին. սակայն Կեսարացին մեզ չի հաղորդում նրա խօսքերը[5]: Այնուամենայնիւ, Եւսեբիոսը մէջբերում է Դիոնիսիոս Կորնթացու կողմից (եպիսկոպոս, մօտ 168-176) Հռոմի քրիստոնեաներին ուղղուած նամակից մի կարեւոր հատուած. «Այսօր՝ տէրունական

1 Ըստ Ցայսմաւուրքի՝ Կղեմէսն աքսորւում է «յայնկոյս Պոնտոսի». տե՛ս «Ցայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, Բ, էջ 255:

2 Տե՛ս **Ա. Հատիտեան**, Առաքելական հայրեր, «Էջմիածին», 1979, Է, էջ 15:

3 Տե՛ս **Թ. արք. Գուշակեան**, Սուրբք եւ տօնք Հայաստանեայց Եկեղեցւոյ, Անթիլիաս, 1981, էջ 115:

4 Տե՛ս «Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց», Վենետիկ, 1810, էջ 121-125:

5 **Eusebii**, Pamphil, Historia Ecclesiastica, III 16

օրը, մենք սուրբ պահեցինք եւ կարդացինք ձեր նամակը, որը միշտ կարդալու ենք իր օգտակարութեան համար, ինչպէս կարդում ենք առաջին նամակը՝ գրուած Կղեմէսի կողմից»[1]:

Իրենէոսը (Երանոս) պատմում է, որ Կղեմէսի եպիսկոպոսութեան ժամանակ Հռոմի Եկեղեցին կորնթացիներին է ուղղել մի շատ իւրայատուկ նամակ՝ նրանց յորդորելով խաղաղութեան ու հաւատքի նորացման եւ յիշեցնելով այն աւանդութիւնը, որը նրանք վերջերս էին ստացել առաքեալներից: Այս հեղինակի վկայութեան համաձայն՝ նամակն իր օրօք դեռ օգտագործւում էր Կորնթոսի Եկեղեցու կրօնական արարողութիւնների ժամանակ[2]:

Կղեմէս Ալեքսանդրացին իր անուանակցին «հռոմէական առաքեալ» է անուանում[3] եւ մէջբերում է կատարում նրա նամակի ԺԸ գլխից[4]: Որոգինէսը նոյնպէս բազմիցս յիշում է Հռոմի եպիսկոպոս Կղեմէսին եւ իր նամակը. յատկապէս նրա ուշադրութիւնը գրաւել է Կղեմէսի նամակի Ի գլուխը, որտեղ խօսւում է անդրովկիանոսեան երկրների մասին[5]: Եւսեբիոսը, որի հիմնական աղբիւրն այս կէտում հաւանաբար Իրենէոսն է, վկայակոչում է նաեւ Հեգեսիպպոսին (որն այցելել էր Կորնթոսի Եկեղեցուն Բ դարի վերջին) եւ նամակն անձնապէս վերագրում է Կղեմէսին: Նա գործը «երկար ու հրաշալի» է անուանում եւ վկայում, որ իր օրօք այն կարդացւում էր բազմաթիւ Եկեղեցիներում[6]: Եպիփան Կիպրացին (403) զանազանում է Կղեմէսի վաւերական ու կեղծ նամակները[7] եւ մէջբերում է կատարում նամակի Ե գլխից[8]: Վերջապէս, Հերոնիմոսը (420) խօսում է այն մասին, որ Կղեմէսը Հռոմի Եկեղեցու անունից նամակ է գրել Կորնթոսի Եկեղեցուն, որը շատ Եկեղեցիներում կարդացւում է ի լուր ժողովրդի[9]:

Կղեմէսի նամակի մասին խօսում են նաեւ Կիւրեղ Ալեքսանդրացին, Փոտ պատրիարքը եւ շատ ուրիշներ: Այսպիսով, Կղեմէսի նամակն

1 նոյն, Դ 23

2 **Իրենէոս**, Ընդդէմ հերձուածողաց, Գ 3. տե՛ս The Ante-Nicene Fathers, v. 1, p. 416:

3 **Կղեմէս Ալեքսանդրացի**, Ցաճախապատում, Դ 17. տե՛ս The Ante-Nicene Fathers, v. 2, p. 428:

4 Տե՛ս **Преображенский**, с. 65:

5 **Որոգինէս**, Սկզբունքների մասին, Բ գիրք, Գ 6. տե՛ս The Ante-Nicene Fathers, v. 4, p. 273:

6 **Eusebii**, Pamphil, Historia Ecclesiastica, III 16

7 **Epiphanii**, Panarion, XXX 15

8 նոյն, XXVII 6

9 **Hieronymus**, De scripturis sacris, 15

առաքելական հայրերի մէջ թերեւս ամենից շատ վկայուած գործն էր մինչեւ Թ դար:

Սակայն յետագայում սոյն գործը գրեթէ մոռացութեան մատնուեց եւ անյայտութեան քողի տակ էր: Փոտ պատրիարքից սկսած մինչեւ ԺԷ դար՝ հին գիտնական աստուածաբաններից ոչ ոք ձեռքի տակ չի ունեցել Կղեմէսի գործը, եւ այն կորած էր համարւում: Առաջինն այդ գործը գտաւ անգլիական Կառլոս Ա թագաւորի գրադարանավար P. Young-ը՝ 1629-30 թթ.:

Ալեքսանդրիայի յունաց պատրիարք Կիւրեղ Լուկարիսը Կ. Պոլսի տիեզերական պատրիարք ընտրուելուց յետոյ իր հետ Կ. Պոլիս բերեց մեծ թուով ձեռագրեր: 1628-ին նա իր բերած ձեռագիր Աստուածաշունչ մատեաններից մէկը (Ե դար) նուիրեց անգլիական թագաւորին: Այդ ձեռագրում, որը ձեռագրագիտութեան մէջ մտաւ որպէս Ալեքսանդրեան ձեռագիր, Յովհաննու Յայտնութիւնից յետոյ դրուած էր Կղեմէսի Առաջին նամակը կորնթացիներին եւ հատուած այսպէս կոչուած Երկրորդ նամակից: Young-ը շատ շուտով գլխի ընկաւ, որ ինքը գործ ունի մինչ այդ անյայտ մնացած գործերի հետ, եւ 1633-ին Օքսֆորդում հրատարակեց դրանք՝ ընդարձակ ծանօթագրութիւններով եւ լատիներէն զուգահեռ թարգմանութեամբ: 1672-ին Կոտելիերը հրատարակեց մի նոր լատիներէն թարգմանութիւն, որտեղ գործը բաժանեց 59 գլուխների: Այսպէս գիտական աշխարհը ծանօթացաւ առաքելական հայրերի շրջանի այս անզուգական գործերին:

1883-ին Փիլոթէոս Բրիեննոս միտրոպոլիտը գտաւ 1056 թ. գրուած մի ձեռագիր, որը համաշխարհային աղմուկ հանեց «Դիդախէից» բացի պարունակում էր նաեւ Կղեմէսի նամակի մի տարբերակ: Այս վերջինն աւելի երկար էր իր նախորդից եւ վերջում եւս 5 գլուխ էր պարունակում՝ ներծծուած Հռոմի Աթոռի գերակայութեան գաղափարներով: Կաթոլիկ Եկեղեցին անմիջապէս այս՝ ձեռագրով հասած գործը համարեց Կղեմէսի իրական վաւերական նամակը[1], մինչ հայրաբանների մեծամասնութեան կողմից այն մերժուեց որպէս կեղծիք՝ Մեծ հերձուածի շրջանում Կաթոլիկ Եկեղեցուն հեղինակութիւն հաղորդելու ակնկալութեամբ:

Յետագայում յայտնաբերուեցին նաեւ գործի հին ասորերէն, լատիներէն եւ ղպտերէն պակասաւոր թարգմանութիւնները, որոնք քիչ բան աւելացրին տուեալ գործի նկատմամբ հայրաբանութեան կեցուածքին:

Նամակում յիշուած «յանկարծակի եւ յաջորդական դժբախտութիւնները» հիմք են տուել կարծելու, որ նամակը գրուել է կա՛մ Ներոնի 64 թ. հալածանքից յետոյ, կա՛մ Դոմիտիանոս կայսեր պատճառած նեղութիւններից անմիջապէս յետոյ: Նամակի ներքին իրողութիւնների

1 Տե՛ս **Quasten,** Patrology, v. 1, p. 51:

շնորհիւ, սակայն, գիտութիւնն աւելի հակուած է ընդունել երկրորդ տեսակէտը: Սրա օգտին են խօսում հետեւեալ կէտերը.

ա) Այն վստահաբար պէտք է գրուած լինի Պետրոսի եւ Պօղոսի մահից յետոյ, քանի որ նրանց մարտիրոսութիւնը ներկայացւում է որպէս պատմական եղելութիւն: Նոյն ձեւով է խօսւում նաեւ նրանց գործունէութեան մասին:

բ) Ոչ մի ակնարկութիւն չկայ հրեայ եւ հեթանոս քրիստոնեաների միջեւ եղած վէճի մասին, որը ներոնեան շրջանում տարածուած էր Հռոմում եւ Կորնթոսում եւ որն արտացոլուած է Պօղոս առաքեալի նամակներում: Պօղոսի նամակների գրութիւնից որոշ ժամանակ պէտք է անցած լինէր:

գ) Կորնթոսի Եկեղեցին նշւում է որպէս «հին»:

Միեւնոյն ժամանակ նամակը չէր կարող գրուած լինել շատ աւելի ուշ, ինչպէս փորձում են ենթադրել ոմանք: Այն, անկասկած, գրուել է Ա դարի վերջին: Այս մասին են վկայում հետեւեալ փաստարկները.

ա) Պետրոսի եւ Պօղոսի մարտիրոսութեան մասին խօսւում է որպէս «մեր սերնդին» պատկանող իրադարձութեան մասին:

բ) Առաքեալների կողմից նշանակուած երէցները դեռեւս կենդանի են:

գ) Ոչ մի ակնարկ չկայ Հռոմի Եկեղեցում Բ դարի սկզբում գնոստիկների պատճառած յուզումների մասին:

դ) Հռոմի Եկեղեցին ներկայացւում է որպէս ծանր փորձութիւնից հէնց նոր դուրս եկած: Քանի որ ոչ մի ակնարկ չկայ նոյն ժամանակ կորնթացիների տառապանքների մասին, ուստի այս հալածանքը դժուար թէ կարելի լինի վերագրել Տրայանոսին, այլ ամենից հաւանականն այն է, որ սա Դոմիտիանոսի օրոք մի տեղական բնոյթի հալածանք էր (93-97):

Ուստի, ամփոփելով, կարելի է եզրակացնել, որ նամակը գրուել է 93-97 թթ. միջեւ, ինչպէս եւ ընդունուած է գիտնականների ճնշող մեծամասնութեան կողմից:

* * *

Նամակի բովանդակութիւնը խարխսուած է Կորնթոսի Եկեղեցում ծագած խռովութեան վրայ: Մի որոշակի խմբաւորում առանց որեւէ հիմքի հեռացել էր Եկեղեցու որոշ երէցներից:

Ողջոյնից յետոյ հեղինակը ներողութիւն է խնդրում խորհուրդ տալու մէջ Հռոմի Եկեղեցու յաչաղման համար (արդարացումն այն խիստ հալածանքն էր, որը հռոմէացիները կրել էին) եւ ուշադրութիւն է հրաւի-

րում այն բարձր հեղինակութեան վրայ, որի մէջ էր Կորնթոսի Եկեղեցին մինչեւ հիմա: Խոովութիւնը վերագրւում է բարգաւաճմանը յաջորդած հպարտութեանը: Եկեղեցու մի մասը սկսել էր նախանձել միւս մասին: Նախանձի վատ հետեւանքները ցոյց են տրւում բազմաթիւ հին կտակարանեան օրինակներով: Նախանձն է ընկած այն հալածանքների հիմքում, որոնց պատճառով Պետրոսը, Պօղոսն եւ միւսները նահատակուեցին: Ապաշխարութեան հնարաւորութիւն կայ օրինազանցների համար՝ ցոյց տրուած հին կտակարանեան օրինակներով: Կորնթացիներին խոնարհութիւն է յորդորում մեսիական տեղիքի [Եսայի ԾԳ] լոյսի տակ եւ հին կտակարանեան բազմաթիւ հերոսների օրինակով: Աստուած երկայնամիտ է եւ կների զղջացողին: Սակայն Նա նաեւ կարգ ու կանոնի Աստուած է: Նա տիեզերքը ներդաշնակութեան մէջ է պահում: Եթէ կորնթացիներն ուզում են աստուածահաճոյ գործել, նրանք ամէն ինչ պէտք է անեն կանոնով եւ խաղաղութեամբ:

Ընդհանուր ցուցումներ են յաջորդում երէցների պատշաճ պատուի մասին: Որպէս խոովութեան դէմ պաշտպանութեան շարժառիթ՝ կորնթացիներին յիշեցնում են Տիրոջ Երկրորդ Գալուստը եւ Ցարութիւնը: Ցարութիւնն ապացուցւում է համանմանութեան փաստարկով (ցորեկ-գիշեր, սերմ-բոյս, փիւնիկ եւ այլն):

Աստուծոյ օրհնութիւնը պէտք է գտնել հաւատքի մէջ, սակայն՝ ոչ առանց գործերի:

Հռոմէական բանակը, որտեղ իւրաքանչիւր անդամ իրեն յատկացուած մասնաւոր տեղն ունի եւ նպաստում է ամբողջի կատարելութեանը եւ ուժին, օրինակ պիտի լինի Եկեղեցու համար: Քրիստոնէական առաքելութիւնը պէտք է նոյնքան բարեկարգուած լինի, որքան ղեւտական քահանայութիւնը: Քրիստոս ուղարկուել էր Աստուծոյ կողմից, իսկ առաքեալները՝ Քրիստոսի: Այս նշանակուած եպիսկոպոսներն ու սարկաւագները եւ միւս յաջորդները մահանալու էին: Այժմ կորնթացիները որոշ սուրբ մարդկանց հեռացրել էին ծառայութիւնից: Անկարեւոր մէկ կամ երկու մարդկանց ազդեցութիւնը առաքեալների կողմից նշանակուած մարդկանց հեռացման պատճառ է դարձել: Սա առիթ է տուել Աւետարանի թշնամիներին՝ հայհոյելու Տիրոջ անունը: Խոովարարները պէտք է խոստովանեն իրենց յանցանքները: Հին Կտակարանի օրինակներով նման խոստովանութեանն ազնիւ բնոյթ է հաղորդւում: Նրանք հարկադրուած կլինեն վէճից խուսափելու նպատակով առանձնանալ որեւէ մի տեղ, ուր Եկեղեցին կկամենայ: Երէցների հեղինակութիւնը պէտք է յարգել՝ յատկապէս որպէս առաքեալների կողմից նշանակուածների:

Գ. ՈՉ ՎԱՒԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

1. ԿՂԵՄԷՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ

Կղեմէսի վաւերական նամակը պարունակող երկու յունարէն ձեռագրերում էլ (ինչպէս եւ ասորերէն թարգմանութեան մէջ) գոյութիւն ունի նաեւ այսպէս կոչուած Երկրորդ նամակը՝ ուղղուած կորնթացիներին, որը դարձեալ վերագրւում է Կղեմէսին: Ալեքսանդրեան ձեռագրով մեզ հասած գործը թերի է եւ բաղկացած է ԺԲ գլուխներից, մինչդեռ 1056 թ. ձեռագրի բնագիրն ամբողջական է:

Ամէն դէպքում, այս գործը ո՛չ նամակ է, ո՛չ էլ վերաբերում է Կղեմէսին: Նրա ձեւն ու ոճը ապացուցում են այդ: Այնուամենայնիւ, երկը մեծ արժէք ունի, քանզի այն կարելի է համարել հնագոյն քրիստոնէական քարոզը:

Եւսեբիոսը, որի մօտ առաջին անգամ ենք հանդիպում Երկրորդ նամակի մասին վկայութեան, խօսում է հետեւեալ անվճռական արտայայտութեամբ. «Պետք է իմանալ նաեւ, որ մէկ այլ նամակ էլ է վերագրւում Կղեմէսին, սակայն մենք վստահաբար գիտենք, որ դա այնքան էլ յայտնի չէ, որքան առաջինը, քանզի նաեւ հները, որքան մենք գիտենք, չեն օգտուել նրանից»[1]: Իսկապէս, Դիոնիսիոս Կորնթացին, որն այդքան որոշակիօրէն յիշում է Կղեմէսի Առաջին նամակը, լռում է Երկրորդի մասին[2]: Հերոնիմոսը նշում է, որ Կղեմէսի անունով յայտնի է նաեւ մի երկրորդ նամակ, որը, սակայն, մերժւում է հների կողմից[3]: Եպիփան Կիպրացին յիշում է «սուրբ եկեղեցիներում ընթերցուող Կղեմէսի նամակները», որոնցով նա կուսութիւն էր սովորում[4]: Սակայն Եպիփանը կարող էր նկատի ունենալ նոյն Կղեմէսի անունով յայտնի «Կոյսերին» ուղղուած երկու նամակները: Փոտ պատրիարքն իր «Գրադարան» գործում յայտնում է, որ Բ նամակը «մերժւում է որպէս կեղծիք»[5]:

Արտաքին ապացոյցներից բացի, այս գործի ոչ վաւերական լինելու մասին են խօսում նաեւ ներքին իրողութիւնները: Արդէն իսկ Փոտը նկատել է, որ այն իր ոճով զգալիօրէն տարբերւում է Առաջին նամակից: Նոյնը աւելի մեծ համոզուածութեամբ պնդում են ժամանակակից գիտնականները: Ուստի այսօր մէկընդմիշտ ընդունուած է, որ սոյն գործը Կղեմէսի գրչի արդիւնքը չէ:

---

1 **Eusebii,** Pamphil, Historia Ecclesiastica, III 38

2 Տե՛ս **Преображенский,** с. 115:

3 **Hieronymus,** De scripturis sacris, 15

4 **Epiphanii,** Panarion, XXVII 6, XXX 15

5 **Photii,** Bibl. Cod. 113, 126

Հեղինակի եւ գրութեան վայրի մասին տարբեր կարծիքներ են առաջ քաշուել: Այսպէս՝ Հառնակը կարծում է, որ այն գրուել է Հռոմում, եւ գրութեան հեղինակ է համարում Սոտերոս պապին (165-173)[1], սակայն դա քիչ հաւանական է: Ոմանք գրութեան վայր են համարում Ալեքսանդրիան, քանի որ հեղինակի աստուածաբանութիւնը մատնում է իր ալեքսանդրեան ազդեցութիւնը, եւ որպէս աղբիւր օգտագործուել է Եգիպտացիների Ավետարանը: Առաւել հաւանականը, սակայն, այն է, որ գործը գրուել է Կորնթոսում: Կարծուում է, որ որոշ ժամանակ անց այն գտնուել է Կորնթոսի Եկեղեցու արխիւում Կղեմէսի Առաջին նամակի հետ եւ ներկայացուել որպէս Կղեմէսի Երկրորդ նամակ[2]:

Գրութեան ժամանակը գիտնականների մեծ մասի կողմից ընդունւում է Բ դարի երկրորդ կէսը՝ մօտաւորապէս Մարկոս Աւրելիոս կայսեր (160-180) գահակալութեան տարիներին: Ոմանք գրութեան թուականը նոյնիսկ աւելի առաջ են բերում՝ նշելով Տրայանոսի գահակալութեան տարիները: Երկու կարծիքներն էլ բխում են նամակում խօսուող հալածանքներից, որոնք տարածուած էին երկու կայսրերի օրօք: Այս թուականների օգտին են խօսում նաեւ գնոստիկների մասին բացայայտ ակնարկութիւնները:

2. ԿՈՅՍԵՐԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐ

Կղեմէսի անունը կրող անվաւեր գործերի մէջ ժամանակագրական տեսակէտից յաջորդը կուսութեան մասին երկու նամակներն են, որոնք ուղղուած են հաւասարապէս երկու սեռի ներկայացուցիչներին:

Առաջին անգամ Կղեմէսի անունը կրող այս գործը (քանզի այս երկու նամակները մէկ ամբողջութիւն են կազմում) յիշւում է հաւանաբար Եպիփան Կիպրացու մօտ[3], թէեւ գիտնականների մի մասը Եպիփանի յիշատակութեան տակ տեսնում է Կղեմէսի՝ կորնթացիներին ուղղած երկու նամակները: Այս գործերի բացայայտ յիշատակութեան հանդիպում ենք Հերոնիմոսի մօտ, որը ծանօթ է եղել դրանց[4]:

Թէեւ հայրաբանների մեծ մասը համոզուած է, որ հեղինակը գրել է յունարէն[5], սակայն միայն չնչին պատառիկներն են պահպանուել: Երկու նամակներն ամբողջութեամբ պահպանուել են ասորերէն թարգմանութեամբ, 1470-ին արտագրուած Նոր Կտակարանի գրքերի կողքին: Բացի սրանցից, գոյութիւն ունեն նաեւ Առաջին նամակի սկզբնական

1 Տե՛ս **Quasten,** p. 54:
2 Տե՛ս **Преображенский,** с. 117:
3 **Epiphanii,** Panarion, XXVII 6, XXX 15
4 **Hieronymus,** Adversus Iob., I 12
5 Տե՛ս The Ante-Nicene Fathers, v. 8, p. 54:

ութ գլուխները ղպտերէն թարգմանութեամբ, որն այս դէպքում կրում է ս. Աթանասի անունը:

Այսօրուայ դրութեամբ գրեթէ անվերապահօրէն ընդունուած է, որ հեղինակը չի կարող Կղեմէսը լինել, քանզի գործը գրուել է Ղրանից շատ տարիներ յետոյ: Հայրաբանները կղեմէսեան հեղինակութեան դէմ բերում են հետեւեալ փաստարկները.

ա) Առաջին դարերի քրիստոնեայ հեղինակները, մինչ բազմիցս վկայակոչում են Կղեմէսի «Առ կորնթացիս» նամակը (երբեմն նաեւ՝ երկրորդը), ոչ մի անգամ չեն յիշում այս գործի մասին: Մինչդեռ սպասելի էր, որ այնքան արժէքաւոր մի գործ, մանաւանդ՝ նման յայտնի հեղինակի անունով, մեծ արձագանք պիտի գտնէր քրիստոնեաների մօտ: Առանձնապէս Եւսեբիոս Կեսարացու լռութիւնը գրեթէ կասկած չի թողնում այդ մասին:

բ) Երկրորդ փաստարկը նամակների ասկետիկ ոգին է, որը ծանօթ չէ յետառաքելական շրջանին: Նման գաղափարները քրիստոնեաների մօտ արմատացան շատ աւելի ուշ:

գ) Սուրբգրային մէջբերումները նոյնպէս խօսում են Կղեմէսի դէմ: Մինչ Կղեմէսի վաւերական գործում գերակշռում են հին կտակարանեան մէջբերումները, այստեղ գերակշռում են Պօղոս առաքեալի նամակները (մասնաւորապէս՝ Հովուական թղթերը):

Այսօր հայրաբանութեան մէջ ընդունուած է, որ գործը գրուել է Գ դարի առաջին կէսին, երբ արդէն Ընդհանրական Եկեղեցում խմորւում էին կուսակրօնութեան գաղափարները: Հեղինակն ամենայն հաւանականութեամբ պաղեստինցի է, թէեւ այս հարցում կարծիքները բազմազան են: Ամէն դէպքում, զգացւում է, որ հեղինակը եղել է կուսակրօնութեան համոզուած ջատագով[1]:

Դ. ԿԵՂԾ-ԿՂԵՄԷՍԵԱՆ ԳՈՐԾԵՐ

Բացի վերոյիշեալ գործերից, շրջանառութեան մէջ վաղուց անտի դրուած են Կղեմէսի անունը կրող ուրիշ գործեր եւս, որոնցից են՝ 1) «Առաքելական սահմանադրութիւնները», 2) «Ճառերը», 3) «Հանդիպումները», 4) վերջին երկուսի «Ամփոփումները», 5) «Կղեմէսի Յայտնութիւնը», որն աւելի յայտնի է «Պետրոսի Յայտնութիւն» վերտառութեամբ, 6) նախորդին նմանուող անտիպ «Արաբական Յայտնութիւնը» եւ 7) անվաւեր նամակներ Կաթոլիկ Եկեղեցում կիրառուող «Կեղծ հրամաններում»[2]:

1 Տե՛ս **Quasten,** Patrology, v. 1, p. 59:
2 The Oxford Dictionary of the Christian Church, p. 304

«Կեղծ-կղեմէսեան գործեր» (Clementina) ընդհանուր անուան տակ սովորաբար հիմնականում հասկանում են «Ճառերն» ու «Հանդիպումները» եւ երբեմն՝ «Ամփոփումները»:

«Ճառերը» կազմում են կրօնական եւ փիլիսոփայական մէկ ամբողջական երկ, որը բաղկացած է քսան ճառից, որոնք իբրեւ թէ Կղեմէսը Հռոմից ուղարկել է Յակոբոս Տեառնեղբօրը՝ Երուսաղէմ: Սրանց նախորդում են նաեւ երկու նամակներ Պետրոսից եւ Կղեմէսից, որոնք դարձեալ ուղղուած են Յակոբոսին:

Սրանք նկարագրում են Կղեմէսի ճանապարհորդութիւնները դէպի Արեւելք, որտեղ նա ծանօթանում է Պետրոս առաքեալի հետ եւ ականատես լինում նրա եւ Սիմոն Մոգի վէճին: Գործը բաւական առասպելական նիւթ է պարունակում յատկապէս Կղեմէսի ընտանիքի մասին[1]:

Տասը գրքերից բաղկացած «Հանդիպումներ» գործը շատ նման է «Ճառերին» իր պատմական շարադրանքով եւ աստուածաբանական դիրքորոշումով, ուստի այս երկու գործերը յաճախ ներկայացւում են որպէս մէկ ամբողջութիւն: Պատմութիւնը շարադրւում է գրեթէ նոյն գետնի վրայ, միայն թէ այստեղ առանձին մանրամասնութիւններ են հաղորդւում Կղեմէսի ընտանիքի անդամների մասին, ովքեր միմեանց կորցրել էին եւ երկար թափառումներից յետոյ հանդիպում են (այստեղից էլ՝ անուանումը) Պետրոս առաքեալի շնորհիւ:

Այս գործի յունարէն բնագիրը կորել է: Այն աշխարհին յայտնի է դարձել Ռուփինոսի (մօտ 410) լատիներէն թարգմանութեամբ, որի նախաբանում թարգմանիչը նշում է, որ ինքը կրճատումներ է կատարել: Գործը պահպանուել է նաեւ ասորերէն[2]:

Երկու յունարէն «Ամփոփումները» զգալիօրէն աւելի ուշ են գրուել: Նրանք բաց են թողնում նախորդ գործերի աստուածաբանական քննարկումների մեծ մասը եւ ներմուծում են Կղեմէսի նահատակութեան պատմութիւնը: Կան նաեւ «Ամփոփումների» արաբերէն երկու տարբերակներ, որոնք ճանաչողական որեւէ արժէք չեն ներկայացնում[3]:

Ե. ԿՂԵՄԷՍԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ս. Կղեմէս Հռոմէացին Հայ Եկեղեցու տօնելի սուրբերից է: Դժուար է ասել, թէ նրա պաշտամունքը երբ է արմատաւորուել Հայ Եկեղեցու

1 Տե՛ս Ante-Nicene Fathers, v. 8, p. 215-346:

2 Տե՛ս Ante-Nicene Fathers, v. 8, p. 75-211:

3 Տե՛ս **Quasten**, p. 61:

ծիսակարգի եւ տօնացոյցի մէջ[1], սակայն պարզ է, որ տպագիր Ցաշմաւուրքների[2] եւ Վարքագրութիւնների[3] մէջ ս. Կղեմէսի վարքն իր ուրոյն տեղն ունի: Հայկական վարքագրական աղբիւրների բերած տեղեկութիւնների մասին արդէն խօսել ենք կենսագրական հատուածում, ուստի այստեղ այլեւս հարկ չենք համարում անդրադառնալ դրան, այլ փորձենք տալ նրա մատենագրական վաստակի անդրադարձները հայ միջավայրում:

Այս հայեցակէտից մօտենալով հարցին՝ կարելի է ասել, որ հայ մատենագրութիւնն ըստ երեւոյթին անծանօթ է եղել Կղեմէսի վաւերական եւ անվաւեր գործերին: Անգամ նրա վարքերում չկան ակնարկութիւններ Կղեմէսի գրական գործունէութեան մասին[4]: Ոչ մի հայ մատենագիր, որքան որ մեզ յայտնի է, նոյնիսկ չի յիշում Կղեմէսի գործերից որեւէ մէկը: Այդ նոյն լռութեանն ենք հանդիպում նաեւ Զարբհանալեանի «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց» աշխատութեան մէջ[5], մինչ նոյն հեղինակն իր «Պատմութիւն մատենագրութեան յունաց, հռովմայեցւոց եւ հարց Եկեղեցւոյ» աշխատութեան մէջ[6] հանգամանօրէն խօսում է Կղեմէսի եւ նրա գործերի մասին: Այս ամէնը հաշուի առնելով՝ Ծնորհք արքեպս. Գալուստեանը եզրակացրել է. «Ոչ մի հետքի հանդիպեցանք, որ Կղեմէսի գործերը, առնուազն «Առ կորնթացիս» թուղթը, հայերէնի թարգմանուած ըլլան»[7]:

Սրբազանի եզրակացութիւնը բացարձակապէս ճշմարիտ է, եթէ վերաբերում է միջնադարին: Քանզի մենք Մաշտոցեան մատենադարանի ձեռագրացուցակում հանդիպեցինք մի ձեռագրի[8], որն, ըստ ցուցակը պատրաստողի, պարունակում էր Կղեմէսի «Առ կորնթացիս» նամակը՝ «հանդերձ մեկնութեամբ»: Ձեռագիրը հաւանաբար ԺԹ դարի

1 Ձեռագիր Ցայսմաւուրքների եւ Վարքերի ուսումնասիրութիւնն անշուշտ կարող է լոյս սփռել այս հարցի վրայ, սակայն դա մեր ուսումնասիրութեան նպատակներից դուրս է:

2 «Ցայսմաւուրք», Բ, էջ 255-256

3 «Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց», էջ 867-869

4 Բացառութիւն է կազմում **Մ. Աւգերեանի** «Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց» հատորը, որն, ըստ հեղինակի վկայութեան, «յօրինեալ է Ճառընտրաց մերոց եւ այլոց ազգաց»:

5 **Զարբհանալեան Գ.**, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889

6 **Զարբհանալեան Գ.**, Պատմութիւն մատենագրութեան յունաց, հռովմայեցւոց եւ հարց Եկեղեցւոյ, Վենետիկ, 1856, էջ 576-580

7 **Ծնորհք արք. Գալուստեան**, Համաքրիստոնէական սուրբեր, Իսթանպուլ, 1978, էջ 33

8 ՄՄ ձեռ. N 10086

է: Գրիչը, որն անկասկած նաեւ Կղեմէսի թղթի թարգմանիչն է, անյայտ է: Ձեռագիրը պակասաւոր է. այն սկսւում է «Կանխաբանութեամբ» (որտեղ խօսւում է Կղեմէսի եւ իր գործերի մասին), որի աւարտը ձեռագրի վնասուածքի պատճառով կորած է: Նոյն պատճառով բացակայում են նաեւ «Առ կորնթացիս» նամակի առաջին վեց գլուխները, մասամբ նաեւ՝ Է գլուխը: Նամակին յաջորդում են ծանօթագրութիւններ, որոնք նոյնպէս թերի են, քանզի թերթերի մի զգալի մաս բացակայում է: Ապա գալիս են Բ Կորնթացիս նամակի վերջին ԺԱ եւ ԺԲ գլուխները՝ ծանօթագրութիւններով: Որեւէ մեկնութիւն սոյն ձեռագրում չկայ:

Թարգմանիչն ամենայն հաւանականութեամբ գործը թարգմանել է ֆրանսերէնից, քանզի իր «Կանխաբանութեան» մէջ խօսում է «գաղղիացի թարգմանչի» ծանօթագրութիւնների մասին: Զգալի է, որ «Կանխաբանութիւնն» ու ծանօթագրութիւնները նոյնպէս հիմնականում թարգմանական են: Թարգմանութիւնը գրաբար է, սակայն՝ պարզ ու հասկանալի: Սոյն թարգմանութիւնը բնագրական արժէք չի ներկայացնում, նաեւ թերի է ու պակասաւոր, ուստի գիտական արժէք չունի, այլ սոսկ՝ ճանաչողական:

Նախորդ գլխում յիշուած կղեմէսեան անվաւեր գործերից որեւէ մէկը դարձեալ յայտնի չէ հայերէն թարգմանութեամբ: Թէեւ մի շարք հետազօտողներ կարծել են, թէ հայերէն ձեռագրերում գոյութիւն ունեն Կղեմէսի անունով այլ անվաւեր գործեր, որոնք յայտնի չեն օտար լեզուներով, սակայն սխալուել են՝ արժանահաւատ համարելով ձեռագրացուցակի տուեալները: Այսպէս, Ա. Հատիտեանը գրում է, որ «Կղեմէսի գործերից ոչ հարազատ, հայերէն թարգմանուած են համարւում հետեւեալները՝ Կղեմէսի Վասն հերձուածողաց, Ճառք, Քարոզք, Վկայութիւն վասն Քրիստոսի»[1]:

Հետազօտելով ՄՄ NN 774 եւ 2106 ձեռագրերը, որոնք իբրեւ թէ պարունակում էին Կղեմէսի «Վասն հերձուածողաց» ճառը՝ պարզ դարձաւ, որ «Սրբոյն Կղեմայ հայրապետին Հռովմայ վասն հերձուածողացն, որք ասեն, թէ յետ մահուն չէ օգուտ պատարագն ընծեցելոց» վերտառութեամբ գործը[2] ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ Կղեմէսի վկայաբանութիւնից մի փոքրիկ հատուած, որը եւ պարունակւում է Աւգերեանի հրատարակած ընդարձակ վկայաբանութեան մէջ[3]:

Իսկ N 3192 ձեռագրի «Վկայութիւնք վասն Քրիստոսի» անունով ձեռագրացուցակում տեղ գտած գործն իրենից ներկայացնում է զանազան հայրերից մէջբերումներ Քրիստոսի բնութեան միութեան վերաբերեալ, որտեղ եւ տեղ է գտել Կղեմէսի անունով մեզ հասած «Կանոններից» մի հատուած:

1 **Ա. Հատիտեան**, Առաքելական հայրեր. տե՛ս «Էջմիածին», 1979, Է, էջ 17:

2 ՄՄ ձեռ. N 774, թ. 152ա-153բ, N 2106, թ. 385բ-386բ. նոյն հատուածն առանձին կայ նաեւ NN 2131, 2268 եւ 10332 ձեռագրերում:

3 Տե՛ս «Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց», էջ 867-869:

ՄՄ սոյն ձեռագրերից բացի, Երուսաղէմի, Վենետիկի եւ Վիեննայի ձեռագրացուցակներում նոյնպէս կան Կղեմէսի անունով որոշ անյայտ գործեր[1], որոնց մասին որեւէ կարծիք տալ չենք կարող:

Հայ իրականութեան մէջ Կղեմէսի անունով յայտնի միակ գրաւոր փաստաթուղթն ունի հետեւեալ վերնագիրը՝ «Սահմանք եւ կանոնք սուրբ առաքելոցն ի ձեռն Կղեմայ՝ առաքեալ հեթանոսաց»[2]: Արդէն վերեւում յիշեցինք, որ կեղծ-Կղեմէսեան գործերի մէջ մտնում է նաեւ կանոնների մի խումբ, որը յայտնի է «Առաքելական սահմանադրութիւններ» ("Apostolic Constitutions") անունով[3]: Վերոյիշեալ հայերէն գործը սոսկ «Առաքելական սահմանադրութիւնների» Ը գրքի 47-րդ յօդուածն է (որն ինքնին բաժանւում է 85 գլուխների)՝ մասնակի տարբերութիւններով[4]: Այս կանոնախմբի քննական բնագիրը, որն անկասկած Կղեմէսինը չէ, գիտական լուրջ մակարդակով հրատարակել է Վազգէն Ցակոբեանը «Կանոնագիրք Հայոցում»[5]:

Բացի սրանից, «Կանոնագիրք Հայոցում» տեղ է գտել նաեւ մէկ յօդուածից բաղկացած մի այլ կանոն, որը նոյնպէս վերագրւում է Կղեմէսին: Այն վերնագրուած է «Կղեմայ՝ Հռոմայ եպիսկոպոսի Սահմանք եւ հաստատութիւնք Եկեղեցւոյ» եւ վերաբերում է «Երեքսրբեան փառաբանութեանը»[6]:

Հիմնուելով Կղեմէսի գործերի թարգմանութիւնների բացակայութեան եւ հայ մատենագիրների մօտ որեւէ յիշատակութեան չգոյութեան վրայ՝ կարելի է կարծել, որ Կղեմէսի անունը կրող գործերից որեւէ մէկը դժուար թէ միջին դարերում թարգմանուած լինի հայերէն: Այնուամենայնիւ, քանի դեռ մատենադարաններում պահ դրուած ձեռագրերի բոլոր գաղտնիքները չեն բացայայտուած, վերջնական եզրակացութիւն յայտնել այս մասին, թերեւս, չի կարելի:

Միքայէլ ծ. վարդապետ Աջապահեան

1 Օրինակ՝ Երուսաղէմի մատենադարանի ձեռ. N 1365, թ. 243բ. «Կղեմայ՝ թէ քանի գիրք ընդունելի է»:

2 «Կանոնագիրք հայոց», աշխատ. **Վ. Ցակոբեանի**, Ա, Երեւան, 1964, էջ 75

3 Տե՛ս Ante-Nicene Fathers, v. 7, p. 385-505:

4 Տե՛ս նոյն, էջ 500-505:

5 Տե՛ս «Կանոնագիրք հայոց», Ա, էջ 67-100:

6 «Կանոնագիրք հայոց», Բ, Երեւան, 1971, էջ 295

ԿՂԵՄԷՍԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ

Հին յունարէնից թարգմանեց
Սիմոն Գրքաշարեանը

Գլուխ Ա

Հռոմում ապաստանած[1] Աստուծոյ Եկեղեցին Կորնթոսում ապաստանած Աստուծոյ Եկեղեցուն, ովքեր կոչուած եւ սրբագործուած են Աստուծոյ կամքով՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսով. Թող ձեզ վրայ բազմանա՛յ ամենակալ Աստուծոյ շնորհն ու խաղաղութիւնը Յիսուս Քրիստոսով:

Մեզ պատահած յանկարծակի եւ իրարայաջորդ դժբախտութիւններն ու աղէտներն էին պատճառը, սիրելինե՛ր, որ մենք, ինչպէս կարծում ենք, ուշ անդրադարձանք ձեր վիճելի հարցերին[2] եւ Աստուծոյ ընտրեալներին խորթ ու օտար, անօրէն ու անսուրբ խռովութեանը, որը մի քանի անմիտ ու ամբարտաւան մարդիկ հրահրել են այնպիսի անիմաստ աստիճանի, որ ձեր յարգարժան, հռչակաւոր եւ բոլորի համար սիրելի անունը մեծ անարգանքի է ենթարկուել: Քանզի ո՞վ է, որ, լինելով ձեզ մօտ, չի գնահատել առաքինութեամբ լի եւ հաստատուն ձեր հաւատքը, չի հիացել ձեր զգաստ ու հեզաբարոյ երկիւղածութեամբ ի Քրիստոս, չի յայտարարել ձեր հիւրընկալման սքանչելիութիւնը, երանի չի տուել ձեր կատարեալ ու անսխալ իմացութեանը: Քանզի դուք ամէն ինչ կատարում էիք անաչառութեամբ եւ ընթանում Աստուծոյ պատուիրանների ճանապարհով[1]՝ հնազանդուելով ձեր առաջնորդներին եւ պատշաճ յարգանքը մատուցելով ձեր երէցներին[2]: Եւ երիտասարդներին հրահանգում էիք չափաւորութիւն ու համեստութիւն, պատուիրում էիք կանանց, որպէսզի նրանք ամէն ինչ կատարեն անբասիր, պարկեշտ ու մաքուր խղճով՝ ինչպէս հարկն է սիրելով իրենց ամուսիններին, եւ սովորեցնում էիք նրանց, որպէսզի, ենթարկուելով հնազանդութեան օրէնքին, պատշաճօրէն կատարեն տնային գործերը եւ կենցաղավարեն ամենայն խելամտութեամբ:

Գլուխ Բ

Դուք խոնարհ էիք եւ օտար սնափառութեանը, աւելի շատ սիրում էիք հնազանդուել, քան կարգադրել[3], աւելի տալ, քան ընդունել[4]: Բաւարարուելով նրանով, որ Քրիստոս շնորհել է ձեզ, եւ ուշադիր հետեւելով Նրա խօսքերին՝ դուք դրանք խնամքով պահել էիք ձեր սրտի խորքում, եւ Նրա տառապանքները ձեր աչքերի առջեւ էին: Այսպիսով, բոլորին շնորհուած էր խորունկ ու անխառն խաղաղութիւն

---

1 Յունարէն παροικοῦσα բառը տառացիօրէն նշանակում է «թափառող, ուրիշի կողմում ապրող» (տե՛ս Պողիկարպոսի նամակը փիլիպեցիներին, Ա): Այս բառն արտայայտում էր քրիստոնեաների այն համոզումը, որ իրենք պանդուխտներ ու եկուորներ են երկրի վրայ [տե՛ս Ա Պետր. Բ 11], ովքեր այստեղ չունեն մշտական բնակութեան վայր եւ քաղաքացիութեան իրաւունք, այլ ապրում են այս աշխարհի որոշակի մի վայրում, ինչպէս ժամանակաւոր բնակութիւն հաստատած օտարականներ: Դիոգնետոսին ուղղուած նամակում (գլ. Ե) ասւում է, որ քրիստոնեաներն ապրում են իրենց հայրենիքներում, սակայն՝ որպէս ժամանակաւոր բնակիչներ (πάροικοι) (տե՛ս նաեւ Կղեմէսի Բ նամակը, գլ. Ե): Ոմանք թարգմանում են «գտնուող» կամ «թափառող», ոմանք էլ՝ «ժամանակաւոր ապրող» կամ «այցելած»: Թւում է, որ հայերէն «ապաստանած» բառը լաւագոյն կերպով արտայայտում է յունարէնի միտքը:

2 Ուրիշներ թարգմանում են «գործերի վրայ, որոնց մասին դուք հարցնում էիք»: Սակայն այդ դէպքում ’επιζητουμένων παρ’ ὑμῖν-ի փոխարէն պիտի լինէր παφ’ ὑμῶν: Եւ այս արտայայտութեան մէջ ոչ մի հիմք չկայ կարծելու, որ իբրեւ թէ կորնթացիներն իրենց գործերով դիմել էին Հռոմի Եկեղեցուն եւ նրա եպիսկոպոսին: Այս մասին նամակի մնացած տեղերում ոչ մի ակնարկութիւն չկայ, ընդհակառակը՝ խէ գլխից յստակ է, որ կորնթական անկարգութիւնների մասին Հռոմի քրիստոնեաներն իմացել են նոյն ճանապարհով, ինչ Հռոմի հեթանոսները, այն է՝ խօսակցութիւնների եւ լուրերի միջոցով: Ընդ որում, Կղեմէսի անունը ոչ մի տեղ չի հանդիպում:

1 Այս հատուածը՝ «ո՞վ է, որ, լինելով ձեզ մօտ... ընթանում էիք Աստուծոյ պատուիրանների ճանապարհով», մէջբերւում է Կղեմէս Ալեքսանդրացու մօտ (Stromata, IV 17):

2 Ոմանք թարգմանում են «աւագներին»: Քանի որ Կորնթոսում խռովութիւնը վերաբերում էր եկեղեցական կարգապահութեանը, ուստի πρεσβύτερος բառը պիտի վերաբերի ոչ թէ ընդհանրապէս Եկեղեցու աւագ անդամներին, այլ եկեղեցական իշխանաւորների աստիճաններին, որոնք հնում, ի միջի այլոց, իրենց մէջ ներառնում էին նաեւ տարիքային հասունութիւն (տե՛ս գլ. ԽԴ, ԽԷ): Իսկ «առաջնորդներ» (ἡγουμένοις) բառը կարելի է վերագրել ընդհանրապէս եկեղեցական նուիրապետութեան անդամներին, ինչ աստիճանի էլ որ նրանք եղած լինեն:

3 Տե՛ս Եփես. Ե 21, Ա Պետր. Ե 5:

4 Տե՛ս Գործք Ի 35:

եւ բարեգործութեան անյագ ծարաւ, եւ ամենքի վրայ հեղուել էր Սուրբ Հոգին: Սուրբ ցանկութեամբ լցուած, բարի յօժարութեամբ ու երկիւղած վստահութեամբ՝ դուք ձեր ձեռքերը պարզում էիք ամենակալ Աստծուն եւ աղաչում Նրան ողորմած լինել, եթէ դուք որեւէ ակամայ մեղք էիք գործել: Օր ու գիշեր դուք հոգում էիք ողջ եղբայրութեան համար[1]*, որպէսզի Նրա ընտրեալների թիւը փրկուէր գթասրտութեամբ ու համբերաշխութեամբ*[2]*: Դուք անկեղծ էիք, ազնիւ ու անյիշաչար միմեանց նկատմամբ: Որեւէ խռովութիւն եւ որեւէ հերձուած զզուելի էր ձեզ: Դուք լաց էիք լինում մերձաւորների զանցանքների համար, նրանց թերութիւնները ձեր սեփականն էիք համարում: Անձանձիր էիք բարեգործութեան մէջ՝ պատրաստ լինելով ցանկացած բարի գործի*[3]*: Նման առաքինի եւ պատուաւոր կեանքով զարդարուած՝ դուք ամէն ինչ կատարում էիք Տիրոջ երկիւղով: Նրա պատուիրաններն ու հրամանները գրուած էին ձեր սրտերի տախտակների վրայ*[4]*:*

Գլուխ Գ

Ողջ փառքն ու լայնութիւնը[5] *տրուած էր ձեզ, եւ կատարուեց այն, ինչ գրուած էր. «Նա կերաւ ու խմեց, ճարպոտեց ու գիրացաւ, եւ անհնազանդ դարձաւ սիրելին»*[6]*: Այստեղից էլ՝ խանդն ու նախանձը, թշնամութիւնն ու խռովութիւնը, հալածանքն ու անկարգութիւնը, պատերազմն ու գերութիւնը: Այսպիսով, անարգներն ապստամբել են պատուաւորների դէմ, անփառունակները՝ փառաւորների, անմիտները՝ խելամիտների, երիտասարդները՝ աւագների դէմ: Այդ պատճառով էլ արդարութիւնն ու խաղաղութիւնը հեռացան, քանի որ ամէն ոք թողեց Աստուծոյ երկիւղը, բթացաւ Նրա հանդէպ ունեցած հաւատքի մէջ, չի ընթանում Նրա պատուիրանների կանոնների ճանապարհով եւ քրիստոսավայել*[1] *կյանք չի վարում, այլ իւրաքանչիւրը քայլում է իր չար սրտի ցանկութեան համաձայն՝ տեղի տալով անարդար ու անօրէն նախանձին, որով եւ մահը մտաւ աշխարհ*[2]*:*

Գլուխ Դ

Քանզի այսպէս է գրուած. «Եւ եղաւ, որ օրեր յետոյ Կայէնն Աստծուն պատարագ մատուցեց երկրի պտուղներից. նաեւ Աբէլը մատուցեց ոչխարների առաջնեկներից, այն էլ՝ պարարտներից: Եւ Աստուած նայեց Աբէլին ու նրա ընծաներին, իսկ Կայէնի ու նրա զոհերի վրայ չնայեց: Եւ Կայէնը խիստ տրտմեց եւ իր դէմքը կախեց: Եւ ասաց Աստուած Կայէնին՝ ինչո՞ւ ես տրտմել եւ ինչո՞ւ ես երեսդ կախել: Մի՞թէ չմեղանչեցիր դու, եթէ դու ճիշտ մատուցեցիր, սակայն ոչ ճիշտ բաժանեցիր[3]*: Հանգստացի՛ր, այն քեզ կվերադառնայ*[4]*, եւ դու կտիրես դրան: Եւ ասաց Կայէնն Աբէլին՝ իր եղբօրը՝ գնանք դաշտ. եւ այն ժամանակ, երբ նրանք դաշտում էին, Կայէնը ելաւ Աբէլի՝ իր եղբօր դէմ եւ սպանեց նրան»*[5]*: Տեսնո՞ւմ էք, եղբայրնե՛ր, խանդն ու նախանձը մղեցին եղբայրասպանութեան: Նախանձի պատճառով մեր հայր Յակոբը փախաւ իր եղբօր՝ Եսաւի առջեւից*[6]*: Նախանձն էր պատճառը, որ Յովսէփը հալածուեց ի մահ եւ մատնուեց ստրկութեան*[7]*: Նախանձը ստիպեց Մովսէսին փախչել փարաւոնի՝*

---

1 Տե՛ս Ա Պետր. Բ 17:

2 Շատերն ընդունում են, որ այստեղ տեքստն աղաւաղուած է: Ըստ այդմ՝ թարգմանական տարբերակներից են «միաբանութեամբ», «մաքուր կարեկցանքով», «մաքուր խղճով» եւ այլն:

3 Տե՛ս Տիտ. Գ 1:

4 Հմմտ. Առակ. Է 3, Բ Կորնթ. Գ 3:

5 «Լայնութեամբ» (πλατυσμός) Եկեղեցու հայրերը յաճախ արտայայտում են սրտի ուրախ վիճակը (տե՛ս Ἐρμῖᾶς, Ποιμὴν εντολή ε՛ 1): Ըստ այդմ էլ՝ ոմանք թարգմանում են «երջանկութիւն»:

6 Տե՛ս Բ Օր. ԼԲ 15: Այստեղ, ինչպէս եւ մնացած տեղերում Կղեմէսը մէջբերում է կատարում Աստուածաշնչի Եօթանասնից բնագրից, սակայն՝ ոչ միշտ բառացի:

1 Ոմանք թարգմանում են «քրիստոնեային վայել»: Հմմտ. Բ Կորնթ. Ա 21, Եփես. Դ 20:

2 Հմմտ. Իմաստ. Բ 24:

3 «Ոչ ճիշտ բաժանեցիր» արտայայտութիւնը, Իրենէոսի մեկնութեան համաձայն (Adversus haereses, IV 34) , վերաբերում է Կայէնի բաժանուած սրտին, որով նա Աստծուն զոհ մատուցեց Աբէլի նկատմամբ նախանձով ու չարութեամբ: Ժամանակակից մեկնիչների կարծիքով, սակայն, այն վերաբերում է զոհի բաժանմանը, այսինքն՝ Կայէնը լաւագոյն մասը պահեց իրեն եւ մնացած մասը տուեց Աստծուն:

4 Այսինքն՝ քո ընծան քեզ կվերադառնայ, որովհետեւ Ես չընդունեցի այն: Ուրիշներ տեքստն աղաւաղուած են համարում եւ թարգմանում են հետեւեալ կերպ. «Քեզանից է Աբէլի նկատմամբ թշնամանքը, եւ դու թո՛ղ նրան ու դադարի՛ր հետապնդել նրան»:

5 Հմմտ. Ծնունդ. Դ 3–8: Այստեղ հեղինակը նոյնպէս հետեւում է Եօթանասնիցին, որը լրացնում է եբրայական տեքստը: Այս հատուածի հնագոյն մեկնութիւնը տե՛ս (Irinei, Adversus haereses, IV 18):

6 Հմմտ. Ծնունդ. ԻԷ 41 եւ այլն:

7 Տե՛ս Ծնունդ. ԼԷ:

Եգիպտոսի թագաւորի առջեւից, երբ լսեց իր ցեղակցից. «Ո՞վ քեզ իշխան ու դատաւոր կարգեց մեզ վրայ: Թէ՞ ինձ սպանել ես կամենում, ինչպէս երէկ սպանեցիր եգիպտացուն»[1]: Նախանձի պատճառով Ահարոնն ու Մարիամը գիշերում էին ճամբարից դուրս[2]: Նախանձը Դաթանին ու Աբիրոնին կենդանի իջեցրեց դժոխք, քանզի նրանք ըմբոստացան Աստուծոյ ծառայ Մովսէսի դէմ[3]: Նախանձի պատճառով Դաւիթը ոչ միայն գրգռել էր այլազգիների ատելութիւնը, այլեւ հալածուեց Սաւուղի՝ Իսրայէլի արքայի կողմից[4]:

Գլուխ Ե

Սակայն, թողնելով հին օրինակները, անցնենք մօտակայ հերոսներին, ազնիւ օրինակներ վերցնենք մեր սերնդից: Խանդի եւ նախանձի պատճառով Եկեղեցու մեծագոյն եւ արդար սիւները ենթարկուեցին հալածանքի ու մահուան[5]: Մեր աչքերի առջեւ պատկերացնենք երանելի առաքեալներին: Պետրոսն անօրէն նախանձի պատճառով կրեց ոչ թէ մէկ կամ երկու, այլ բազում տառապանքներ եւ, այդպէս մարտիրոսանալով, մեկնեց փառքի պատշաճ վայրը[6]: Պօղոսը նախանձի ու վէճի պատճառով համբերութեան դիմաց պարգեւ ստացաւ. նա եօթ անգամ եղաւ կապանքների մէջ[7], աքսորուեց[8], քարկոծուեց: Քարոզելով Արեւելքում եւ Արեւմուտքում՝ ազնիւ փառք վաստակեց իր հաւատքի շնորհիւ, քանզի ամբողջ աշխարհին ճշմարտութիւնը քարոզեց եւ հասաւ մինչեւ Արեւմուտքի ծայրը[9] եւ նահատակուեցաւ վկայեց կառավարիչների առջեւ[1]: Այսպէս նա փոխադրուեց աշխարհից եւ տեղափոխուեց սուրբ վայր՝ դառնալով համբերութեան մեծագոյն օրինակը:

1 Եղ Բ 14

2 Հմմտ. Թիւք ԺԲ 14-15:

3 Հմմտ. Թիւք ԺԶ 31-33:

4 Հմմտ. Ա Թագ. ԺԸ 8 եւ այլն:

5 Որոշ թարգմանիչներ ձեռագիր բնօրինակի ջնջուած մասում աւելացնում են «ցաւալի» բառը (այսինքն՝ «ցաւալի մահուան»):

6 Հռոմում Պետրոսի գործունէութեան միակ վկայութիւնն, այսպիսով, նրա նահատակութիւնն է:

7 Գործք առաքելոցում ս. Պօղոսի եօթ բանտարկութիւնների մասին վկայութիւն չկայ: Հաւանաբար, Կղեմէսն այս մասին վկայում է որպէս ականատես կամ էլ օգտտում է բանտոր առանձնութիւնից:

8 Ոմանք բնագրի ջնջուած տեղում աւելացնում են «ստիպուած եղաւ հեռանալ» կամ «պատժուեց»:

9 Գիտնականների մի մասը սրանով հասկանում է Իտալիան եւ մասնաւորապէս՝ Հռոմը, մինչդեռ ուրիշներ՝ Իսպանիան, որի մասին խօսում է Պօղոսը [տե՛ս Հռոմ. ԺԵ 24]: Ոմանք նոյնիսկ առաջ են քաշում Բրիտանիայի վարկածը:

Գլուխ Զ

Իրենց կեանքը սրբութեամբ անցկացրած այս այրերին միացաւ ընտրեալների մեծ բազմութիւն, ովքեր նախանձի պատճառով համբերեցին բազում հալածանքների ու չարչարանքների եւ մեզանում լաւագոյն օրինակ դարձան: Նախանձից հալածուեցին կանայք՝ դանայուհիներն ու Դիրկէն[2], կրելով դաժան խոշտանգումներ եւ անօրէնութիւններ՝ նրանք ընթացան հաւատքի ճշմարիտ ճանապարհով, եւ մարմնով տկարները արժանի պարգեւ ստացան: Նախանձը բաժանեց կանանց իրենց ամուսիններից եւ աղաւաղեց մեր նախահայր Ադամի խօսքերը. «Ահա այժմ ոսկր՝ իմ ոսկրից եւ մարմին՝ իմ մարմնից»[3]: Նախանձն ու խռովութիւնը ոչնչացրել են մեծ քաղաքներ եւ բնաջնջել են հզօր ժողովուրդների:

Գլուխ Է

Այս բոլորը, սիրելինե՛ր, մենք գրում ենք ոչ միայն ձեզ խրատելու, այլ նաեւ մե՛զ յիշեցնելու համար. քանզի մենք եւս գտնուում ենք նոյն ասպարէզում, եւ միեւնոյն պայքարն է վիճակուած մեզ: Ուրեմն թողնենք դատարկ ու սին հոգսերը եւ դիմենք մեր պայծառ ու արժա-

1 Հաւանաբար նկատի ունի Տիգելլինոսին եւ Սաբինոսին, որոնք պրեֆեկտներ էին Ներոնի գահակալութեան վերջին տարում: Ուրիշներ կարծում են, որ նկատի են առնուած Հելիոսն ու Պոլիկլետոսը: Մինչդեռ տարածուած կարծիքն այն է, որ խօսքը վերաբերում է ընդհանրապէս երկրի տիրակալների առջեւ առաքեալների տուած վկայութեանը:

2 Դանայուհիներն Արգոսի արքայ Դանայոսի դուստրերն էին, որոնք իրենց հօր հրամանով սպանեցին իրենց ամուսիններին, մինչ նրանք քնած էին: Այս պատճառով նրանք անդրշիրիմեան կեանքում դատապարտուեցին անտակ տակաղը ջուր լցնելու: Դիրկէն Թեբէի արքայադուստր Անտիոպէին հալածելու համար վերջինիս եղբայրների կողմից կապուեց ցլի եղջիւրներին եւ սոսկալի տանջանքներից յետոյ գետը նետուեց: Ցունական դիցաբանութեան այս հերոսուհիների օրինակով Կղեմէսը թերեւս փորձում է վերջիններիս հակադրել քրիստոնեայ նահատակուհիներին, որոնք անմեղ կերպով հալածուեցին հեթանոսների կողմից: Սակայն գիտնականների մի մասը կարծում է, որ այս անունների տակ Կղեմէսը նկատի ունի քրիստոնեաների, թէեւ նմանանունով նահատակների չենք հանդիպում ոչ մի վարքագրութեան մէջ: Ոմանք կարծում են, որ սոյն անունները ոչ հմուտ գրչի կողմից լուսանցքից մտել են բնագիր:

3 Հմմտ. Ծնունդ. Բ 23:

նավայել աւանդութեան օրէնքին: Տեսնենք, թէ ինչն է բարի, ինչն է հաճելի եւ ընդունելի մեր Արարչին: Ուշադրութիւն դարձնենք Քրիստոսի արեանը եւ տեսնենք, թէ որքան թանկ է Աստուծոյ[1] առջեւ Նրա [արիւնը], որ թափուեց մեր փրկութեան համար եւ համայն աշխարհին զղջման շնորհը բերեց: Անցնենք բոլոր սերունդներով եւ իմանանք, որ Տէրը սերնդէ սերունդ ընդունել է դէպի Իրեն դառնալ ցանկացողների զղջումը: Նոյը զղջում քարոզեց, եւ իրեն անսացողները փրկուեցին[2]: Յովնանը նինուէացիներին կործանում ազդարարեց, բայց նրանք, ապաշխարելով իրենց մեղքերը, գթաշարժեցին Աստծուն իրենց աղօթքներով եւ փրկութիւն ստացան, թէեւ Աստուծոյ համար նրանք օտարներ էին[3]:

Գլուխ Ը

Աստուծոյ շնորհի սպասաւորները Սուրբ Հոգու միջոցով խօսեցին զղջման մասին, եւ Ինքը՝ ամէն ինչի Տէրը, զղջման մասին խօսեց երդմամբ. «Կենդանի եմ Ես,- ասում է Տէրը,- չեմ կամենում մեղաւորի մահը, այլ՝ զղջումը»[4]. եւ նաեւ կոչեց հետեւեալ բարի միտքը. «Տո՛ւն Իսրայէլի, յե՛տ դարձէք ձեր անօրէնութիւնից»[5]: «Ասացի Իմ ժողովրդի որդիներին[6]՝ թէեւ ձեր մեղքերը ձգուեն երկրից մինչեւ երկինք եւ թէեւ լինեն որդան կարմրից աւելի կարմիր[7] եւ աւելի սեւ, քան քուրձը, սակայն եթէ դուք ամբողջ սրտով դառնաք դէպի Ինձ եւ ասէք՝ Հա՛յր, Ես կլսեմ ձեզ՝ որպէս սուրբ ժողովրդի»[8]: Եւ մի այլ տեղում այսպէս է ասում. «Լուացուէ՛ք, սրբուեցէ՛ք, ձեր հոգիներից դէ՛ն նետէք չարիքը Իմ աչքերի առջեւ, յե՛տ կանգնեցէք ձեր չարիքներից. սովորեցէ՛ք բարիք գործել, արդարութի՛ւն փնտրեցէք, սատարեցէ՛ք զրկուածին, որբի դա՛տը պաշտպանեցէք, արդարացրէ՛ք

1 Որոշ թարգմանիչներ աւելացնում են «Հայր» բառը:

2 Հմմտ. Ծնունդ. Է, Ա Պետր. Գ 20, Բ Պետր. Բ 5:

3 Հմմտ. Յովն. Գ:

4 Տե՛ս Եզեկ. ԼԳ 11:

5 Հմմտ. Եզեկ. ԺԸ 30:

6 Եզեկ. ԼԲ 12

7 Հմմտ. Եսայի Ա 18:

8 Այս խօսքերը չկան Աստուածաշնչում, թէեւ դրանք մէջբերում է նաեւ Կղեմէս Ալեքսանդրացին (Paedagogus, I 10)՝ որպէս Եզեկիէլից մի հատուած: Հմմտ. Եսայի Ա 18, Երեմ. Գ 19, 22:

այրուն. եւ եկէք քննենք միասին,- ասում է Տէրը,- եւ եթէ ձեր մեղքերը բոսորագոյն լինեն, ձեան նման սպիտակ կդարձնեմ, եւ եթէ որդան կարմրի պէս լինեն, ճերմակ գեղմի նման կսպիտակեցնեմ. եւ եթէ ախորժէք լսել Ինձ, երկրի բարիքները կճաշակէք, իսկ եթէ չկամենաք Ինձ լսել, ապա սուրը կուտի ձեզ, քանզի Տիրոջ բերանը խօսեց այս ամէնը»[1]: Եւ այսպէս, Նա Իր բոլոր սիրելիներին կամենում է զղջման մասնակիցներ դարձնել եւ այդ հաստատեց Իր ամենակարող կամքով:

Գլուխ Թ

Արդ, հնազանդուենք Նրա գերազանց եւ փառաւոր կամքին՝ թողնելով դէպի մահ առաջնորդող ունայն գործերը[2], խռովութիւնն ու նախանձը, շրջուենք եւ դարձեալ դիմենք Իր ողորմութեանը՝ խնդրելով Իր գթութիւնն ու բարութիւնը: Մեր աչքերը յառենք նրանց, ովքեր կատարելապէս ծառայեցին Նրա մեծավայելչութեան փառքին: Վերցնենք Ենովքին, որն իր հնազանդութեամբ արդար գտնուեց ու վերացաւ, եւ նրա մահը չտեսան[3]: Նոյը արդար գտնուեց ու իր ծառայութեամբ աշխարհին վերանորոգում քարոզեց[4], եւ իր միջոցով Տէրը փրկեց միասին տապան մտած կենդանիներին:

Գլուխ Ժ

«Բարեկամ»[5] անուանուած Աբրահամը հաւատարմօրէն հնազանդուեց Տիրոջ խօսքերին: Նա, հնազանդուելով, հեռացաւ իր երկրից, իր ցեղակիցներից եւ իր հօր տանից, որպէսզի, թողնելով փոքր երկիրը, տկար տոհմը եւ նուազ տունը, ժառանգէր Աստուծոյ խոստումը: Քանզի Աստուած ասաց նրան. «Ելի՛ր քո երկրից եւ քո ազգից եւ քո հօր տնից դէպի այն երկիրը, որը ցոյց կտամ քեզ: Եւ քեզ մեծ ազգ կդարձնեմ եւ կօրհնեմ քեզ եւ կմեծացնեմ քո անունը, եւ օրհնեալ կլինես: Եւ կօրհնեմ քեզ օրհնողներին եւ քեզ անիծողներին կանիծեմ,

1 Հմմտ. Եսայի Ա 16-20:

2 Ոմանք թարգմանում են «ունայն զրոյցներ»:

3 Հմմտ. Ծնունդ. Ե 24, Եբր. ԺԱ 5:

4 Հմմտ. Ծնունդ. Զ 8, Է 1, Եբր. ԺԱ 7, Բ Պետր. Բ 5: Այն միտքը, որ Նոյը նախքան տապան մտնելը ժողովրդին ապաշխարութեան կոչ է ուղղել, հանդիպում է նաեւ Թէոփիլոս Անտիոքացու մօտ (Ad Autolicum, III 19):

5 Հմմտ. Եսայի ԽԱ 8, Բ Մն. Ի 7, Յակ. Բ 23: Այսինքն՝ «Աստուծոյ բարեկամ»: Կղեմէս Ալեքսանդրացին մէջբերում է իր անուանակցի այս խօսքերը:

եւ քեզանով կօրհնուին երկրի բոլոր ցեղերը»[1]*: Եւ դարձեալ Ղովտից բաժանուելիս Աստուած նրան ասաց. «Բարձրացրո՛ւ աչքերդ եւ այն տեղից, ուր գտնուում ես այժմ, նայի՛ր դէպի հիւսիս ու հարաւ, արեւելք ու դէպի ծով*[2]*, քանզի այն ամբողջ երկիրը, որ դու տեսնում ես, տալու եմ քեզ ու քո սերնդին յաւիտեան: Եւ քո սերունդը երկրի աւազի նման եմ դարձնելու. եթէ մէկը կարող է հաշուել երկրի աւազը, ապա եւ քո սերունդը կհամրուի»*[3]*: Եւ դարձեալ ասուած է. «Աստուած հանեց Աբրահամին եւ ասաց նրան՝ նայի՛ր երկնքին եւ հաշուիր աստղերը, եթէ կարող ես հաշուել դրանք. այդպէս է լինելու քո սերունդը»*[4]*: «Եւ Աբրահամը հաւատաց Աստծուն, եւ դա նրան արդարութիւն համարուեց»*[5]*: Հաւատքի եւ հիւրընկալութեան համար նրան որդի տրուեց ծերութեան օրօք, սակայն հնազանդութեան պատճառով նա նրան զոհաբերեց Աստծուն իրեն ցոյց տրուած լեռներից մէկի վրայ*[6]*:*

Գլուխ ԺԱ

Հիւրընկալութեան եւ բարեպաշտութեան շնորհիւ Ղովտն անվնաս դուրս եկաւ Սոդոմից, մինչ ողջ շրջակայ երկիրը պատժուեց հրով ու ծծմբով. եւ դրանով Տէրը ցոյց տուեց, որ Ինքը չի լքի Իրեն ապաւինողներին, իսկ Իրենից շրջուածներին կենթարկի պատժի ու տանջանքների[7]*: Քանզի Ղովտի հետ դուրս եկած կինը, որը տարակարծիք էր եւ համաձայն չէր նրա հետ, դրուեց որպէս նշան. նա աղէ սիւն դարձաւ եւ մնում է մինչեւ օրս*[8]*, որպէսզի բոլորին յայտնի լինի, որ երկմիտներն ու Աստուծոյ զօրութեանը կասկածողները ծառայելու են որպէս դատաստանի նշան բոլոր սերունդների համար:*

1 Տե՛ս Մնունդ. ԺԲ 1-3:

2 Այսինքն՝ դէպի արեւմուտք:

3 Տե՛ս Մնունդ. ԺԳ 14-16:

4 Տե՛ս Մնունդ. ԺԵ 5:

5 Մնունդ. ԺԵ 6, Հռոմ. Դ 3

6 Հմմտ. Մնունդ. ԻԲ 12, Եբր. ԺԱ 17:

7 Հմմտ. Մնունդ. ԺԹ, Բ Պետր. Բ 6-9:

8 Կղեմէնի ժամանակակից Յովսէփոս Փլաւիոսն ասում է, որ Ինքը տեսել է այդ սիւնը (Jewish Antiquities, I 11, 4): Իրենէոսը նոյնպէս յիշում է դրա՝ իր օրօք գոյութեան մասին (Adversus haereses, IV 31): Այսօր էլ տեղի բնակիչները ցոյց են տալիս այն աւանդական աղէ սիւնը, որը գտնուում է Մեռեալ ծովի աւազանում:

Գլուխ ԺԲ

Հաւատքի ու հիւրընկալութեան համար փրկուեց պոռնիկ Ռախաբը: Քանզի երբ Նաւէի որդի Յեսուի կողմից լրտեսներ ուղարկուեցին Երիքով, երկրի թագաւորն իմացաւ, որ նրանք եկել են լրտեսելու իրենց երկիրը, եւ մարդիկ ուղարկեց՝ նրանց ձերբակալելու համար, որպէսզի բռնելով՝ նրանց մահուան մատնի: Սակայն հիւրասէր Ռախաբը, որ նրանց իր մօտ էր ընդունել, թաքցրեց ձեղնայարկում քաթանի խրձերի տակ: Եւ երբ թագաւորի կողմից ուղարկուածները յայտնուեցին եւ ասացին. «Մեր երկիրը լրտեսողները եկել են քեզ մօտ, դո՛ւրս բեր նրանց, քանզի այդպէս է հրամայում թագաւորը», նա պատասխանեց. «Ինձ մօտ եկան այն մարդիկ, որոնց դուք փնտրում էք, սակայն նրանք իսկոյն դուրս եկան եւ այժմ ճանապարհին են», եւ ցոյց տուեց հակառակ ուղղութիւնը: Եւ այդ այրերին ասաց. «Հաստատապէս գիտեմ, որ Տէր Աստուած ձեր ձեռքն է մատնելու այս երկիրը, քանզի ձեր ահն ու սարսափն ընկել է երկրի բնակիչների վրայ: Ուստի երբ դուք այն գրաւէք, խնայեցէ՛ք ինձ եւ իմ հօր տունը»: Եւ նրանք ասացին նրան. «Թող լինի այնպէս, ինչպէս ասացիր մեզ: Հէնց որ իմանաս մեր մօտենալու մասին, իսկոյն քո իւրայիններին հաւաքի՛ր քո տանիքի տակ, եւ նրանք կփրկուեն, քանզի ովքեր տնից դուրս կգտնուեն, կկորչեն»[1]*: Եւ աւելացրին, որ նա նշան տայ՝ իր պատուհանից կարմիր պարան կախելով. նրանք ցոյց տուեցին, որ բոլոր նրանց, ովքեր հաւատում եւ ապաւինում են Աստծուն, քաւութիւն է լինելու Տիրոջ արեամբ*[2]*: Տեսնում էք, սիրելիներ, այս կնոջ մէջ եղել է ոչ միայն հաւատք, այլեւ մարգարէութիւն*[3]*:*

Գլուխ ԺԳ

Ուստի խոնարհ լինենք, եղբայրնե՛ր՝ մի կողմ դնելով ամէն տեսակ գոռոզութիւն, ամբարտաւանութիւն, անմտութիւն ու բարկութիւն, եւ

1 Յեսու Բ, հմմտ. Եբր. ԺԱ 31:

2 Ռախաբի պարանի այսպիսի խորհրդական մեկնութիւնը հանդիպում է նաեւ Իրենէոսի (Adversus haereses, IV 20) եւ Յուստինոս Վկայի (Dialogus cum Tryphon, II, III) մօտ:

3 Այստեղ նկատի ունի Ռախաբի այն կանխատեսումը, որ Աստուած Երիքովը յանձնելու է իսրայէլացիներին: Նոյն իմաստով Ռախաբին մարգարէուհի է անուանում նաեւ Որոգինէսը (Յեսուի գրքի մեկնութեան մէջ):

կատարենք գրուածը: Քանզի Սուրբ Հոգին ասում է. «Թող չպարծենայ իմաստունն իր իմաստութեամբ, հզօրն՝ իր հզօրութեամբ, հարուստն՝ իր հարստութեամբ, այլ պարծեցողը թող պարծենայ Տիրոջով՝ փնտրելով Նրան եւ արդարութիւն ու իրաւունք գործելով»[1]: Յատկապէս յիշենք Տէր Յիսուսի խօսքերը, որոնք ասաց Նա՝ հեզութիւն եւ մեծահոգութիւն սովորեցնելով: Քանզի Նա այսպէս ասաց: «Ողորմա՛ծ եղէք եւ ողորմութիւն կգտնէք, ներեցէ՛ք, եւ կներուի ձեզ. ինչպէս դուք անէք, այնպէս էլ կանեն ձեզ, ինչպէս որ տաք, այնպէս էլ կտրուի ձեզ, ինչպէս որ դատէք, այնպէս էլ կդատուէք, ինչքան որ բարեհաճ լինէք, այնքան բարեհաճ կլինեն ձեր նկատմամբ, ինչ չափով որ չափէք, նոյն չափով էլ կչափուէք»[2]: Այս պատուիրանով ու այս խրատներով հաստատենք մեզ, որպէսզի ընթանանք համեստութեամբ՝ հնազանդուելով Նրա սուրբ խօսքերին: Քանզի սուրբ խօսքն ասում է. «Ո՞ւմ պէտք է նայեմ, եթէ ոչ՝ հեզին եւ խոնարհին եւ Իմ խօսքերից դողացողին»[3]:

Գլուխ ԺԴ

Ուրեմն արդար եւ սուրբ է, եղբայրնե՛ր, առաւելապէս հնազանդուել Աստծուն, քան հետեւել նրանց, ովքեր գոռոզութեամբ ու անկարգութեամբ դարձել են ատելի նախանձի քարոզիչներ: Քանզի ոչ թէ պատահական վնասի, այլ մեծ վտանգի կենթարկուենք, եթէ անխոհեմ կերպով մեզ յանձնենք այն մարդկանց կամքին, ովքեր մեզ դրդում են գժտութեան ու խռովութիւնների, որպէսզի մեզ օտարացնեն բարեգործութիւնից: Բարեհաճ լինենք միմեանց նկատմամբ[4], ինչպէս որ գթասիրտ ու քաղցր է մեր Արարիչը, քանզի գրուած է. «Բարիները կբնակեցնեն երկիրը, եւ անմեղները կմնան նրա վրայ, իսկ անօրէնները կջնջուեն նրա երեսից»[5]: Եւ դարձեալ ասում է. «Տեսայ ամբարշտին բարձրացած ու գոռոզացած՝ Լիբանանի մայրիների նման. անցայ մօտով, եւ ահա այլեւս չկայ, եւ փնտրեցի նրա

1 Հմմտ. Երեմ. Թ 23-24, տե՛ս Ա Կորնթ. Ա 31, Բ Կորնթ. Ժ 17:

2 Փրկչի այս խօսքերն այլ տեսքով հանդիպում են Մատթ. Զ 12-15, Է 1-2 եւ Ղուկ. Զ 36-38-ում:

3 Հմմտ. Եսայի ԿԶ 2:

4 Ըստ ոմանց՝ տեքստն այստեղ աղաւաղուած է:

5 Տե՛ս Առակ. Բ 21-22:

տեղը եւ չգտայ: Անչա՛ր եղիր եւ արդարութեան հետեւիր, քանզի արդար մարդու հանգրուանն այդ է»[1]:

Գլուխ ԺԵ

Արդ, միանանք նրանց, ովքեր բարեպաշտութեամբ խաղաղութիւն են արարում, եւ ոչ թէ՝ նրանց, ովքեր կեղծաւորութեամբ են խաղաղութիւն կամենում, քանզի մի տեղում ասում է. «Այս ժողովուրդն ինձ շուրթերով է մեծարում, մինչ իրենց սիրտը հեռացել է Ինձանից»[2]: Եւ դարձեալ. «Իրենց բերանով Ինձ օրհնում էին, իսկ իրենց սրտով՝ անիծում»[3]: Եւ դարձեալ ասում է. «Սիրեցին Նրան իրենց բերանով եւ իրենց լեզուով ստում էին Նրան, իսկ նրանց սիրտն ուղիղ չէր Նրա հանդէպ, եւ նրանք հաւատարիմ չէին Նրա ուխտին»[4]: Ուստի «Թող համրանան նենգաւոր շուրթերը, որոնք արդարի դէմ անօրէնութիւն են խօսում»[5]: Եւ դարձեալ. «Տէրը կկործանի նենգաւոր շուրթերը եւ մեծախօս լեզուները, որոնք ասում են՝ մեր լեզուով մենք մեծազօր ենք, մեր շուրթերը մեզ հետ են. ո՞վ է մեր Տէրը: Յանուն աղքատների թշուառութեան եւ տնանկների հեծութեան ես այժմ վեր կկենամ,- ասում է Տէրը,- նրանց փրկութեան կտանեմ եւ նրանց հետ արդար կլինեմ»[6]:

Գլուխ ԺԶ

Քանզի Քրիստոս պատկանում է հեզերին եւ ոչ թէ նրանց, ովքեր իրենց բարձրացնում են Իր հօտի վրայ: Աստուծոյ մեծութեան գաւազանը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոս, չեկաւ պարծանքի եւ հպարտութեան փայլով, թէեւ կարող էր, այլ՝ խոնարհաբար, ինչպէս խօսել է Նրա մասին Սուրբ Հոգին: Քանզի Նա ասել է. «Տէ՛ր, ո՞վ հաւատաց մեր խօսքին, եւ Տիրոջ բազուկն ո՞ւմ յայտնուեց: Մենք յայտնեցինք Նրա մասին. Նա, ինչպէս մի մանուկ, ինչպէս մի արմատ ծարաւուտ երկրից, ո՛չ տեսք ունի, ո՛չ փառք: Եւ մենք տեսանք Նրան, եւ Նա ո՛չ

1 Տե՛ս Սաղմ. ԼԶ 35-37: Այս եւ մնացած խօսքերը (մինչեւ գլ. ԺԶ) կան նաեւ Կղեմէս Ալեքսանդրացու մօտ (Stromata, IV 5):

2 Տե՛ս Եսայի ԻԹ 13, Մատթ. ԺԵ 8, Մարկ. Է 6:

3 Տե՛ս նոյնը:

4 Տե՛ս Սաղմ. ՀԷ 36-37:

5 Հմմտ. Սաղմ. Լ 19:

6 Հմմտ. Սաղմ. ԺԱ 3-5:

տեսք ունէր, ո՛չ գեղեցկութիւն, այլ Իր տեսքն անարգ էր, ստորացած, քան բոլոր մարդիկ: Մարդ էր հարուածների ու տառապանքների մէջ եւ ցաւերին դիմանալ կարող էր. այլայլուեց Նրա դէմքը, Նա անարգուեց ու արհամարհուեց: Նա մեր մեղքերն է կրում եւ մեզ համար է չարչարւում, իսկ մենք կարծում էինք, թէ Նա արդարացիօրէն է յանձնուած ցաւերի, հարուածների ու չարչարանքների, սակայն Նա վիրաւորուեց մեր մեղքերի համար եւ չարչարուեց մեր անօրէնութիւնների համար. մեր խաղաղութեան պատիժը Նրա վրայ եղաւ[1], Նրա վէրքերով մենք փրկուեցինք: Բոլորս ոչխարների նման մոլորուեցինք, ամէն մարդ թափառում էր իր ճանապարհին, եւ Տէրը Նրան մատնեց մեր մեղքերի համար: Եւ Նա չարչարուելիս չբացեց Իր բերանը. ինչպէս մի ոչխար է դէպի սպանդ տարւում, եւ որպէս մի գառ՝ Իրեն խուզողների առջեւ, այնպէս էլ Նա չբացեց Իր բերանը: Իր խոնարհութեան համար Իրենից դատաստանը վերցուեց[2]: Եւ Նրա ազգատոհմն ո՞վ կարող է պատմել, քանզի Նրա կեանքը վերցւում է երկրից: Իմ ժողովրդի անօրէնութեան համար Նա գնաց դէպի մահ: Եւ չարերին ես կտամ Նրա գերեզմանի փոխարէն եւ մեծամեծերին՝ Նրա մահուան դիմաց[3], քանզի Նա անօրէնութիւն չգործեց, եւ Նրա բերանում նենգութիւն չգտնուեց: Եւ Տիրոջը հաճելի է Նրան Իր վէրքերից մաքրել[4]. եթէ պատարագ տաք[5] մեղքերի համար, ապա ձեր հոգին կտեսնի երկարակեցութեան սերմը: Եւ Տէրը կամենում է Նրան փրկել Իր հոգու տուայտանքներից, Նրան լոյս ցոյց տալ եւ կազմաւորել իմաստութեամբ[6] եւ արդարացնել արդարին, որը բարեգործութիւն է անում շատերին, եւ նրանց մեղքերը Նա կկրի: Այդ պատճառով Նա կժառանգի շատերին եւ կբաժանի հզօրների աւարը, որոնց պատճառով Նրա հոգին մահուան մատնուեց եւ անօրէնների շարքը դասուեց. եւ Նա շատերի մեղքերը վերացրեց եւ նրանց անօրէնութիւնների

1 Այսինքն՝ այն պատիժը, որ մենք էինք կրելու, Նա վերցրեց Իր վրայ:
2 Այսինքն՝ Իր տառապանքները վերջացաւ, եւ սկսուեց Իր փառքը:
3 Լատիներէն թարգմանութիւններից մէկն այս համարը թարգմանում է. «Ես ազատելու եմ ամբարիշտներին Նրա գերեզմանի շնորհիւ եւ հարուստներին՝ Իր մահուան շնորհիւ»:
4 Ոմանք թարգմանում են «մաքրել վէրքերի միջոցով»:
5 Ըստ ոմանց՝ պէտք է լինի «եթէ Նա տայ»:
6 Կամ՝ «լցնել Նրան իմաստութեամբ»:

համար մատնուեց»[1]: Եւ դարձեալ Նա[2] ասում է. «Ես որդ եմ եւ ոչ թէ մարդ, մարդկանց նախատինք եւ ժողովուրդների անարգանք: Բոլոր ինձ տեսնողները ծաղրում էին ինձ, խօսում էին շուրթերով եւ, շարժելով գլուխները, ասում էին՝ Նա յոյս դրեց Տիրոջ վրայ, թող փրկի Նրան եւ պահպանի Նրան, քանի որ բարեհաճ է Նրա նկատմամբ»[3]: Տեսնում էք, սիրելինե՛ր, ինչպիսի օրինակ է մեզ տրուած. քանզի եթէ Տէրն այսպէս խոնարհուեց, ուրեմն ի՞նչ պիտի անենք մենք, որ Նրա միջոցով ենք մտել Նրա շնորհի լծի տակ:

Գլուխ ԺԷ

Նմանուենք նաեւ նրանց, ովքեր շրջեցին այծենիներով ու ոչխարենիներով[4]՝ քարոզելով Քրիստոսի գալստեան մասին. նկատի ունենք Եղիա, Եղիսէ, ինչպէս եւ Եզեկիէլ մարգարէներին, նաեւ նրանց, ովքեր հաստատապէս վկայութիւն ստացան: Աբրահամը մեծ վկայութեան արժանացաւ եւ Աստուծոյ բարեկամ կոչուեց, սակայն, նայելով Աստուծոյ փառքին, խոնարհաբար ասում է. «Ես հող եմ եւ մոխիր»[5]: Յետոյ նաեւ Յոբի մասին է այսպէս գրուած. «Յոբն արդար էր, անարատ, ճշմարիտ, աստուածապաշտ եւ հեռու էր փախչում ամէն տեսակ չարութիւնից»[6]: Սակայն նա, ինքն իրեն դատապարտելով, ասում է. «Ոչ ոք մաքուր չէ աղտից, թէպէտեւ իր կեանքը մէկ օր լինի»[7]: Մովսէսը հաւատարիմ կոչուեց Նրա ողջ տան մէջ[8], եւ Աստուած նրա ծառայութեան միջոցով դատաստան տեսաւ Եգիպտոսի[9] հետ պատուհասներով ու պատիժներով, սակայն նա, այդքան փառաւորուելով, չմեծամտացաւ, այլ երբ մորենու միջից իրեն պատգամ տրուեց, ասաց. «Ո՞վ եմ ես, որ ինձ ես ուղարկում. ես թոթովա-

1 Եսայի ԾԳ 1-12
2 Նկատի ունի Քրիստոսին:
3 Հմմտ. Սաղմ. ԻԱ 7-9:
4 Հմմտ. Եբր. ԺԱ 37:
5 Հմմտ. Մնուն. ԺԸ 27:
6 Տե՛ս Յոբ Ա 1:
7 Տե՛ս Յոբ ԺԴ 4-5:
8 Հմմտ. Թիւք ԺԲ 7, Եբր. Գ 2:
9 Այս տեղը ձեռագրում ջնջուած է, եւ ոմանք «Եգիպտոսի» փոխարէն դնում են «Իսրայէլ»:

խօս ու ծանրալեզու եմ»[1]*: Եւ դարձեալ ասում է. «Ես կաթսայի գոլորշի եմ»*[2]*:*

Գլուխ ԺԸ

Իսկ ի՞նչ ասենք մեծ վկայութիւն ստացած Դաւթի մասին, ում մասին Աստուած ասաց. «Գտայ մարդու Իմ սրտի համաձայն՝ Յեսսէի որդի Դաւթին, յաւիտենական ողորմութեամբ թագաւոր օծեցի նրան»[3]*: Սակայն եւ նա ասում է Աստծուն. «Ողորմի՛ր ինձ, Աստուա՛ծ, ըստ Քո մեծ ողորմութեան եւ ըստ Քո առատ գթութեան քաւի՛ր իմ անօրէնութիւնները: Իսպառ լուա՛ ինձ իմ անօրէնութիւններից եւ իմ մեղքերից մաքրի՛ր ինձ: Ես գիտեմ իմ անօրէնութիւնները, եւ իմ մեղքն ամէն ժամ իմ առջեւ է: Միայն Քո դէմ մեղանչեցի եւ Քո առջեւ չարիք գործեցի, որպէսզի Դու արդար լինես Քո խօսքերում եւ յաղթող՝ դատելիս*[4]*: Քանզի անօրէնութեամբ յղացաւ եւ մեղքի մէջ ծնեց ինձ իմ մայրը: Դու ճշմարտութիւնը սիրեցիր, Քո իմաստութեան անյայտ գաղտնիքները յայտնեցիր ինձ: Ցօղի՛ր ինձ մշտիկով, եւ մաքուր կլինեմ, լուա՛ ինձ, եւ ձիւնից աւելի ճերմակ կլինեմ: Ինձ լսելի՛ դարձրու ցնծութիւնն ու ուրախութիւնը, եւ կցնծան իմ տառապած ոսկորները: Դարձրո՛ւ երեսդ իմ մեղքերից եւ իմ բոլոր անօրէնութիւնները ջնջի՛ր: Իմ մէջ սուրբ սի՛րտ հաստատիր, Աստուա՛ծ, եւ ուղիղ հոգի՛ նորոգիր իմ ներսում: Մի՛ մերժիր ինձ Քո երեսից եւ Քո Սուրբ Հոգին մի՛ վերցրու ինձանից: Տո՛ւր ինձ Քո փրկութեան ցնծութիւնը եւ հաստատի՛ր ինձ տիրակալ Հոգով: Անօրէններին կուսուցանեմ Քո ճանապարհները, եւ ամբարիշտները դէպի Քեզ կդառնան: Փրկի՛ր ինձ արիւնից*[5]*, Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ փրկութեան: Իմ լեզուն կցնծայ Քո արդարութեան մէջ: Տէ՛ր, բա՛ց արա իմ շուրթերը, եւ իմ բերանը Քո օրհնութիւնը կերգի: Եթէ Դու զոհ կամենայիր, ես կմատուցէի, սակայն ողջակէզները Քեզ հաճելի չեն: Աստուծոյ պատարագը փշրուած հոգին է, փշրուած ու խոնարհ սիրտը Աստուած չի արհամարհում»*[6]*:*

1 Հմմտ. Ելք Գ 11, Դ 10:
2 Այս խօսքերը չկան Ասուածաշնչում: Հմմտ. Սաղմ. ՃԺԸ 83:
3 Սաղմ. ՁԸ 21, հմմտ. Գործք ԺԳ 22:
4 Կամ «յաղթես, երբ դատեն Քեզ»:
5 Ոմանք թարգմանում են «արեան մեղքից» կամ «արիւնահեղութիւնից»:
6 Սաղմ. Ծ 1-17

Գլուխ ԺԹ

Այսքան շատ եւ այսպէս վկայութիւն ստացած այս մարդկանց հեզութիւնն ու խոնարհ հնազանդութիւնը ոչ միայն մեզ[1] *բարեփոխեցին, այլեւ մեր նախորդ սերունդներին, յատկապէս՝ նրանց, ովքեր երկիւղով եւ անկեղծութեամբ էին ընդունել իր պատգամները: Արդ, բազում մեծ ու փառաւոր գործերի մասնակից լինելով, վերադառնանք ի սկզբանէ մեզ աւանդուած խաղաղութեան նպատակին*[2] *եւ մեր աչքերը յառենք ամբողջ տիեզերքի Արարիչ մեր Հօրը, մասնակցենք Նրա խաղաղութեան պանծալի ու գերազանց պարգեւներին եւ Նրա բարեգործութեանը: Նայենք Նրան մտքով եւ հոգու աչքերով տեսնենք Նրա ներողամիտ կամքը եւ խորհենք, թէ Նա որքան անյիշաչար է իր ողջ արարչութեան նկատմամբ:*

Գլուխ Ի

Իր կարգադրութեամբ շարժուող երկինքները խաղաղութեամբ հնազանդւում են Նրան. ցերեկն ու գիշերը անցնում են Իր սահմանած ճանապարհով եւ երբէք չեն խանգարում իրար: Արեգակը, լուսինը եւ աստղաբոյլերը Իր հրամանին ներդաշնակ, առանց երբէք շեղուելու ընթանում են իրենց սահմանուած ճանապարհներով: Բարեբեր երկիրն Իր կամքով որոշուած ժամանակահատուածներում մարդկանց, գազանների եւ իր վրայ ապրող բոլոր կենդանիների համար առատ սնունդ է արտադրում՝ առանց ուշացնելու կամ փոփոխելու Նրա կողմից կանխորոշուածը: Անդունդների եւ խորութիւնների անիմանալի եւ անպատմելի օրէնքները ենթարկւում են նոյն հրամաններին: Նրա արարման համաձայն հաստատուած անսահման ծովի խորքը դուրս չի գալիս իրեն սահմանուած փականքներից, այլ անում է այնպէս, ինչպէս Նա է հրամայել: Քանզի Նա ասել է. «Մինչեւ այստեղ կգաս, եւ քո մէջ կխորտակուեն քո ալիքները»[3]*: Մարդկանց համար անանցանելի ովկիանոսը եւ նրանից այն կողմ գտնուող աշխարհները կառավարւում են Տիրոջ նոյն հրամաններով: Գարնան, ամռան, աշնան ու ձմռան եղանակները համերաշխօրէն յաջորդում են մէկը միւսին: Հողմերը, ամէն մէկն իր ժամանակին, անարգել կատարում են իրենց*

1 Այսինքն՝ քրիստոնեաներին:
2 Հմմտ. Եբր. ԺԲ 1
3 Ցոբ ԼԸ 11

պաշտօնը: Վայելքի եւ առողջութեան համար ստեղծուած չցամաքող աղբիւրներն առանց սպասելու մարդկանց են տրամադրում նրանց կեանքի համար անհրաժեշտ իրենց ստինքը: Փոքրագոյն կենդանիները հաշտ ու համերաշխ ապրում են իրար հետ: Այս ամենին ներդաշնակութեան ու խաղաղութեան մէջ լինել հրամայեց ամէն ինչի Արարիչն ու Տէրը, Ով օրհնում է ամենքին եւ յատկապէս՝ մեզ, որ ապաւինեցինք Իր գթութեանը մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհիւ, Ում վայել է փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գլուխ ԻԱ

Տեսէ՛ք, սիրելինե՛ր, որպէսզի Նրա այսքան շատ բարեգործութիւնները մեզ համար դատապարտութիւն չդառնան, եթէ մենք Իրեն արժանի եղանակով չկենցաղավարենք եւ համերաշխութեամբ չգործենք այն, ինչը բարի եւ հաճելի է Իր առջեւ: Քանզի ասուած է մի տեղում. «Տիրոջ Հոգին ճրագ է, որը քննում է որովայնի խորհուրդները»[1]: Խորհենք, թէ որքան մօտ է Նա մեզ, եւ որ մեր մտքերից ու խորհուրդներից ոչ մէկը ծածուկ չէ Իրենից: Ուրեմն արդարացի է, որ մենք չհեռանանք Նրա կամքից. աւելի լաւ է դիմակայենք յիմարներին ու անմիտներին, մեծամիտներին ու իրենց ամբարտաւան խօսքերով պարծեցող մարդկանց, քան թէ Աստծուն: Փառաբանենք մեր Տէր Յիսուս Քրիստոսին, Ում արիւնը տրուեց մեզ համար, պատուենք մեր առաջնորդներին[2], յարգենք երէցներին[3], երիտասարդներին դաստիարակենք Աստուծոյ երկիւղի մէջ, մեր կանանց ուղղենք դէպի բարին, որպէսզի նրանք աչքի ընկնեն առաքինութեան սիրարժան բարքով, ցոյց տան իրենց ազնիւ վերաբերմունքը հեզութեան հանդէպ, իրենց լեզուի համեստութիւնը բացայայտեն լռութեամբ[4], իրենց սէրը դրսեւորեն ոչ թէ ըստ հակումների[5], այլ հաւասարապէս՝ բոլոր Աստուծոյ սուրբ երկիւղն ունեցողների նկատմամբ: Մեր զաւակները թող դաստիարակուեն ի Քրիստոս, թող սովորեն, թէ որքան զօրաւոր է խոնարհութիւնն Աստուծոյ առջեւ, ինչ կարող է կատարել Աստուծոյ առջեւ անարատ սէրը, որքան գեղեցիկ ու մեծ է Աստուծոյ երկիւղը եւ փրկարար բոլոր նրանց համար, ովքեր մաքուր մտքով դիմում են Նրան: Քանզի Նա մեր մտքերի եւ ցանկութիւնների Քննողն է. Նրա շունչը մեր մէջ է, եւ երբ կամենայ, կվերցնի այն:

1 Հմմտ. Առակ. Ի 27: Կղեմէսի այս խօսքերը (մինչեւ ԻԲ գլխի վերջը) մանր փոփոխութիւններով մէջբերւում են Կղեմէս Ալեքսանդրացու մօտ (Stromata, IV 17):

2 Հմմտ. Եբր. ԺԳ 17, Ա Թեսաղ. Ե 12-13:

3 Ոմանք թարգմանում են «աւագներին»:

4 Ոմանք թարգմանում են «խօսելաձեւով»:

5 Ոմանք թարգմանում են «չգերադասելով մէկը միւսից»: Հմմտ. Ա Տիմ. Ե 21:

Գլուխ ԻԲ

Այս ամէնը հաստատւում է ի Քրիստոս հաւատքով[1]: Քանզի Ինքը Քրիստոս Սուրբ Հոգու միջոցով այսպէս է կոչ անում մեզ. «Եկէ՛ք, որդինե՛ր, լսեցէ՛ք Ինձ. Տիրոջ երկիւղը կուսուցանեմ ձեզ: Ո՞վ է մարդը, որ կեանք է կամենում, սիրում է լաւ օրեր տեսնել: Քո լեզուն եւ քո շուրթերը պահի՛ր չարութիւնից, որպէսզի նենգութիւն չխօսեն: Խուսափի՛ր չարից եւ բարի՛ք գործիր, խաղաղութի՛ւն փնտրիր եւ հետամո՛ւտ եղիր նրան: Տիրոջ աչքը արդարների վրայ է, եւ Նրա ականջը լսում է նրանց աղօթքները. Տիրոջ երեսը չարագործների վրայ է, որպէսզի երկրի վրայից ջնջի նրանց յիշատակը: Արդարն աղաղակեց, եւ Տէրը լսեց նրան ու փրկեց նրան իր բոլոր նեղութիւններից»[2]: «Բազում են մեղաւորի խարազանները, իսկ Տիրոջը յուսացողներին կպատի Նրա ողորմութիւնը»[3]:

Գլուխ ԻԳ

Ամէնողորմ եւ բարերար Հայրը ողորմած է Իր երկիւղն ունեցողների նկատմամբ եւ Իր շնորհները սիրով ու գորովով բաշխում է մաքուր հոգով Իրեն դիմողներին: Ուստի չերկմտենք, եւ մեր հոգին թող չգոռոզանայ Նրա գերազանց ու վեհ պարգեւներից: Թող մեզանից հեռու լինի Սուրբ Գրքում ասուածը. «Դժբախտ են երկմիտները, հոգով տատանուողներն ու ասողները՝ այդ ամէնը մենք լսել ենք նաեւ մեր հայրերի օրօք եւ ահա արդէն ծերացել ենք, սակայն ոչ մի նման բան մեզ հետ չպատահեց»[4]: Ո՛վ անմիտներ, համեմատեցէ՛ք ձեզ

1 Զղջման, խոնարհութեան եւ խաղաղութեան ընդհանուր յորդորներից յետոյ, որոնք կատարւում են գլխաւորապէս Հին Կտակարանի օրինակներով, Կղեմէսն անցնում է քրիստոնէական հաւատքին եւ նրա բարոյական պահանջներին ու շնորհական էութեանը: Սակայն քանզի աստուածային շնորհի լիառատ հեղումը ապագային է վերաբերում, ուստի հեղինակը հիմնականում կենտրոնանում է մեղեալների յարութեան իրողութեան վրայ, որն աստուածային խոստման լրումն է:

2 Սաղմ. ԼԳ 11-17

3 Հմմտ. Սաղմ. ԼԱ 10:

4 Աստուածաշնչում այս խօսքերը չկան: Ոմանց կարծիքով՝ դրանք վերցուած են որեւէ պարականոն գրուածքից, ուրիշներ մատնացոյց են անում Հերմասի

ծառի հետ, վերցրէք [օրինակի համար] որթատունկը. սկզբում նա տերեւաթափ է լինում, ապա ձեւաւորւում է բողբոջը, ապա՝ տերեւը, ապա՝ ծաղիկը, սրանից յետոյ՝ ազոխը, եւ վերջապէս՝ հասուն խաղողը: Տեսնում էք՝ ինչպէս կարճ ժամանակում ծառի պտուղը հասունանում է: Ճշմարտապէս շուտով եւ յանկարծակի կկատարուի Նրա կամքը, որի մասին վկայում է նաեւ Սուրբ Գիրքը. «Շուտով կգայ եւ չի յապաղի»[1], եւ՝ «Յանկարծակի Իր տաճարը կգայ Տէրը եւ Սուրբը, Ում դուք սպասում էք»[2]:

Գլուխ ԻԴ

Ըմբռնենք, սիրելինե՛ր, որ Տէրը մշտապէս ցոյց է տալիս մեզ ապագայ յարութիւնը, որի անդրանիկը[3] դարձրեց Տէր Յիսուս Քրիստոսին՝ Նրան յարութիւն տալով մեռելներից: Նայենք, սիրելինե՛ր, ամէն ժամանակ տեղի ունեցող յարութեանը: Ցերեկն ու գիշերը մեզ յարութիւնն են ներկայացնում. գիշերը քնում է, ցերեկն է յառնում, անցնում է ցերեկը, գալիս է գիշերը[4]: Վերցնենք [երկրի] պտուղները, ինչպէ՞ս է կատարւում ցանքը. դուրս է գալիս սերմնացանը[5] եւ սերմերը նետում հողի մէջ, եւ չոր ու մերկ հողին ընկած սերմերը քայքայւում են, սակայն յետոյ այս քայքայումից Տիրոջ նախախնամութեան մեծ զօրութիւնը յարութիւն է տալիս նրանց եւ մէկ [հատիկից] շատերին է բազմացնում եւ պտուղ տալիս[6]:

Գլուխ ԻԵ

Նայենք զարմանալի նշանին, որ տեղի է ունենում արեւելեան վայրերում, այսինքն՝ Արաբիայի մերձակայքում: Այնտեղ կայ մի թռչուն, որը փիւնիկ է կոչւում[1]: Նա միածին[2] է եւ ապրում է հինգ հարիւր տարի: Մօտենալով իր մահուան քայքայմանը՝ նա կնդրուկից, զմուռսից եւ այլ անուշահոտ բոյսերից հիւսում է իր բոյնը, որի մէջ իր ժամանակը լրանալուց յետոյ մտնում է ու մեռնում: Իսկ՝ նեխող մարմնից որդ է ծնւում, որը, սնուելով մեռած կենդանու հիւթով, փետրաւորւում է, ապա, զօրանալով, վերցնում է բոյնը, որի մէջ են իր նախնու ոսկորները, եւ այդ բեռով անցնում է Արաբիայից մինչեւ Եգիպտոս՝ Հելիոպոլիս կոչուած քաղաքը, եւ, տեղ հասնելով ցերեկը, բոլորի աչքի առաջ այն դնում է արեւի զոհասեղանին, որից յետոյ ետ է վերադառնում: Արդ, քրմերն ուսումնասիրում են տարեգրութիւնները եւ հաստատում, որ այդ թռչունը յայտնուել է հինգ հարիւր տարուայ լրանալուց յետոյ[3]:

Գլուխ ԻԶ

Ուրեմն արդեո՞ք զարմանահրաշ պէտք է համարենք մենք, եթէ ամէն ինչի Արարիչը յարութիւն տայ բոլոր նրանց, ովքեր սրբութեամբ ծառայել են Իրեն՝ բարի հաւատքին ապաւինելով, երբ Նա անգամ թռչունի միջոցով յայտնում է մեզ Իր խոստման մեծութիւնը: Քանզի ասուած է մի տեղում. «Եւ Դու յարութիւն կտաս ինձ, եւ ես կփառաբանեմ Քեզ»[4]: Եւ դարձեալ. «Ես ննջեցի եւ քուն մտայ, արթնացայ, քանզի Դու ինձ հետ ես»[5]: Նմանապէս եւ Յոբն է ասում. «Դու յարութիւն կտաս իմ մարմնին, որ կրեց այս ամէնը»[6]:

«Հովուից» մի հատուած («Ὁρασις β′ 3): Սակայն աւելի հաւանական է այն կարծիքը, որ այս խօսքը Կղեմէսի մօտ կազմուել է Յակոբոս [Յակ. Ա 8] եւ Պետրոս [Բ Պետր. Գ 3-4] առաքեալների խօսքերի միաձուլումից:

1 Հմմտ. Ամբ. Բ 3, Եբր. Ժ 37:

2 Տե՛ս Մաղ. Գ 1:

3 Հմմտ. Ա Կորնթ. ԺԵ 20, Կող. Ա 18:

4 Գիշերուայ եւ ցերեկուայ յաջորդականութիւնը, որպէս մահուան եւ յարութեան խորհրդանշան, գեղեցիկ կերպով արտայայտուած է Տերտուղիանոսի մօտ (De resurrectione carnis, XII):

5 Հմմտ. Ղուկ. Ը 5:

6 Հմմտ. Ա Կորնթ. ԺԵ 35-38:

1 Փիւնիկ թռչունի դիցաբանական կերպարը հանդիպում է նաեւ Հերոդոտոսի (II 73) եւ Տակիտոսի (Annales, VI 28) մօտ: Նրա մասին ակնարկ կայ նաեւ Յոբի գրքում (տե՛ս ԻԹ 18), որի եբրայական տարընթերցուածը թարգմանւում է. «Իմ բնի մէջ կմահանամ եւ փիւնիկի պէս կբազմացնեմ իմ օրերը»: Սակայն Եօթանասնեակում յաջորդ՝ 19 համարի լոյսի տակ «փիւնիկի» տակ հասկացւում է «արմաւենին»: Կղեմէս Հռոմէացին առաջին քրիստոնեայ հեղինակն է, որ փիւնիկի կերպարն օգտագործում է յարութեան գաղափարը փաստարկելու համար: Նրան յաջորդում է Տերտուղիանոսը (De resurrectione carnis, XIII), որը Սաղմ. ՂԱ 13-ի «արմաւենու» տակ «փիւնիկ» է հասկանում: Լակտանտիոսը նոյն համարի տակ տեսնում է ե՛ւ արմաւենին, ե՛ւ թռչունը՝ ծառի անունը բխեցնելով թռչունից, որը բնակւում է նրա վրայ:

2 Այսինքն՝ մէկ հատ, մէկ օրինակով:

3 Այս մասին տե՛ս նաեւ Pliny, Natural history, X 2:

4 Սաղմ. ԻԸ 7-ից է կամ էլ որեւէ պարականոն գրքից:

5 Հմմտ. Սաղմ. Գ 6:

6 Յոբ ԺԹ 25-26: Յոբի գրքից այս մէջբերումը բաւականին տարբերւում է Եօթանասնից բնագրից: Հերոնիմոսը նշում է, որ ոչ ոք այնպէս բացայայտ չի խօսել

Գլուխ ԻԷ

Արդ, այս յոյսով էլ թող մեր հոգիները հպուեն Նրան, Ով հաւատարիմ է խոստումների մէջ եւ արդար՝ Իր դատաստաններում: Նա, ով պատուիրել է չստել, առաւել եւս Ինքը չի ստի, քանզի Աստուծոյ համար անհնարին ոչինչ չկայ, բացի ստելուց[1]*: Ուստի թող վերստին բոցավառուի մեր մէջ Իր հաւատքը, եւ մտածենք, որ ամէն ինչ Նրա մօտ է: Իր վեհութեան խօսքով Նա ստեղծեց ամէն ինչ եւ Իր խօսքով կարող է կործանել ամէն ինչ: «Ո՞վ կասի Նրան՝ ի՞նչ արեցիր, կամ ո՞վ կհակառակուի Նրա ուժի զօրութեանը»*[2]*: Երբ կամենայ եւ ինչպէս կամենայ, Նա կարող է կատարել ամէն ինչ, եւ Իր որոշածներից ոչ մէկն անկատար չի մնայ*[3]*: Ամէն ինչ Նրա առաջ է, եւ ոչինչ չի վրիպել Նրա կամքից: Եթէ «երկինքները պատմում են Աստուծոյ փառքը, հաստատութիւնը յայտարարում է Նրա ձեռքի գործերի մասին. օրն օրին խօսք է բխեցնում, եւ գիշերը գիշերին գիտութիւն է յայտնում: Չկան խօսքեր, չկան բառեր, որոնց ձայները լսելի չլինէին»*[4]*:*

Գլուխ ԻԸ

Արդ, եթէ Աստուած ամէն ինչ տեսնում ու լսում է, վախենանք Նրանից եւ պիղծ գործերի ցանկութիւնից, որպէսզի Նրա ողորմութեամբ պաշտպանուենք ապագայ դատաստաններից: Քանզի մեզանից որեւէ մէկն ո՞ւր կարող է փախչել Նրա հզօր ձեռքից: Ո՞ր աշխարհը կընդունի Նրանից փախածին: Քանզի մի տեղ Սուրբ Գիրքն ասում է. «Ո՞ւր գնամ կամ ո՞ւր թաքնուեմ Քո երեսից: Եթէ վերանամ երկինք, Դու այնտեղ ես, եթէ գնամ երկրի ծայրերը, այնտեղ է Քո աջը. եթէ ծածկուեմ անդունդներում, այնտեղ է Քո Հոգին»[5]*: Ուրեմն ո՞ւր կարող է մարդ հեռանալ կամ ո՞ւր փախչել Նրանից, Ով ընդգրկում է ամէն ինչ:*

յարութեան մասին Քրիստոսի յարութիւնից յետոյ, ինչպէս Յոբը՝ յարութիւնից առաջ:

1 Հմմտ. Տիտ. Ա 2, Երր. Զ 18:

2 Հմմտ. Իմաստ. ԺԱ 22, ԺԲ 12:

3 Հմմտ. Մատթ. ԻԴ 35:

4 Հմմտ. Սաղմ. ԺԸ 2-4:

5 Տե՛ս Սաղմ. ՃԼԸ 7-10:

Գլուխ ԻԹ

Ուրեմն մօտենանք Նրան հոգու սրբութեամբ՝ դէպի Իրեն բարձրացնելով մաքուր ու չպղծուած ձեռքեր եւ սիրելով մեր արդարամիտ ու բարեգութ Հօրը, Ով մեզ Իր ընտրութեան մի մասն է դարձրել: Քանզի այսպէս է գրուած. «Երբ Բարձրեալը բաժանում էր ժողովուրդներին, երբ սփռում էր Ադամի որդիներին, այնժամ Նա ժողովուրդների սահմանները հաստատեց ըստ Աստուծոյ հրեշտակների քանակի[1]*. եւ Տիրոջ բաժին դարձաւ Իր ժողովուրդ Յակոբը, իսկ Իր ժառանգութեան վիճակ՝ Իսրայէլը»*[2]*: Եւ մի այլ տեղում եւս ասուած է. «Ահա Տէրն Իրեն ժողովուրդ է ընտրում ժողովուրդների միջից, ինչպէս մարդն է իր երախայրիքը վերցնում իր կալից. եւ այդ ժողովրդից Սրբութիւն Սրբոց է դուրս գալու»*[3]*:*

Գլուխ Լ

Արդ, լինելով Սուրբի բաժինը, կատարենք այն ամէնը, ինչ վերաբերում է սրբութեանը՝ խուսափելով չարախօսութիւնից, անմաքուր ու պիղծ կապերից, հարբեցողութիւնից, նորամուծութիւնների նկատմամբ կրքից[4]*, ստոր տարփանքներից, նողկալի շնութիւնից ու զզուելի գողոզութիւնից: Քանզի ասուած է. «Աստուած հակառակ է ամբարտաւաններին, իսկ խոնարհներին շնորհ է տալիս»*[5]*: Ուստի միանանք նրանց, ում Աստուծոյ կողմից շնորհ է տրուած: Զգեստաւորուենք միաբանութեամբ, լինենք խոնարհ, ժուժկալ, հեռու ամէն տեսակ զրպարտութիւնից ու չարախօսութիւնից, արդար լինենք ոչ թէ խօսքերով, այլ գործերով: Քանզի ասուած է. «Ով շատ է խօսում, փոխարէնը շատ էլ պիտի լսի. թէ՞ շատախօսն իրեն արդար է կարծում: Օրհնեալ է կնոջից ծնուած սակաւակեացը: Շատախօս մի՛ եղիր»*[6]*:*

---

1 Այսպէս է Եօթանասնից բոլոր ձեռագրերում: Սակայն եբրայական տեքստում եւ Վուլգաթայում գրուած է՝ «ըստ Իսրայէլի որդիների թուի»: Կղեմէսի բերած հատուածը, որն արտայայտուած է նաեւ Բ Օր. ԼԲ 8-ում, գտնւում է նաեւ Փիլոնի մօտ: Յուստինոս Վկան (Dialogus cum Tryphon, 131) մերժում է եբրայական տեքստի ընթերցումը՝ այն համարելով հրէական աղաւաղում:

2 Հմմտ. Բ Օր. ԼԲ 8-9:

3 Գիտնականների կարծիքով՝ այս մէջբերումը Կղեմէսը կազմել է Բ Օր. Դ 34, Թիւք ԺԸ 27 եւ Բ Մն. ԼԱ 14-ի համադրումից:

4 Ոմանք թարգմանում են «պատանեկան տարփանքներից»:

5 Տե՛ս Առակ. Գ 34, Յակ. Դ 6, Ա Պետր. Ե 5:

6 Հմմտ. Յոբ ԺԱ 2-3: Թարգմանութիւնը կասկածելի է. հիմնուած է Եօթանասնիցի վրայ:

Թող մեր գովքը լինի Աստծուց եւ ոչ թէ՝ մեզանից, քանզի Աստուած ատում է նրանց, ովքեր իրենք իրենց են փառաբանում: Թող մեր բարի վարքի վկայութիւնը տրուի ուրիշների կողմից, ինչպէս որ այն տրուեց մեր արդար հայրերին: Լկտիութիւնը, գոռոզութիւնն ու յանդգնութիւնը յատուկ են Աստծուց անիծուածներին, չափաւորութիւնը, խոնարհամտութիւնն ու համեստութիւնը՝ Աստծուց օրհնուածներին:

(շարունակելի)

ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԱՇՐԱՑԻՆ (ՍԿԵՒՌԱՑԻՆ)՝ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՅՑԻ ՊԱՇՏՊԱՆ

ԺԳ դարը հայ հոգեւոր մատենագրութեան զարգացման բեկումային փուլերից է: Այս դարաշրջանում դաւանաբանական եւ հակաճառական գրականութիւնը մեզանում հասաւ մի նոր, աւելի բարձր մակարդակի: Հանդէս եկան Հայոց Եկեղեցու դաւանած աստուածաբանութեան ուղղափառութիւնը, ծէսի եւ աւանդոյթների անաղարտութիւնը եւ Եկեղեցու ներքին ինքնուրոյնութիւնը պաշտպանող այնպիսի խոշոր վարդապետներ, ինչպիսիք էին Վարդան Այգեկցին, Վանական Վարդապետը, Վարդան Արեւելցին, Յովհաննէս Երզնկացին, Ստեփանոս Օրբէլեանը եւ ուրիշներ: Այդ համաստեղութեան մէջ իր ուրոյն տեղն ունի Կիլիկիայում եկեղեցական գործունէութիւն ծաւալած Մխիթար վարդապետ Տաշրացին կամ, ինչպէս նրան անուանում է ձեռագրերի մեծամասնութիւնը, Սկեւռացին:

Հայ մատենագրութիւնը Մխիթար վարդապետի եկեղեցական գործունէութեան եւ կեանքի մանրամասների մասին միայն փշրանքներ է մեզ հասցրել: Կիրակոս Գանձակեցին տեղեկացնում է միայն, որ Մխիթար Սկեւռացին ընդգրկուած է եղել Ոսկէ Հորդայի մոնղոլ Բաթու եւ Մանգու խաների մօտ ուղարկուած դեսպանագնացութիւնների կազմում[1]: Այս վկայութիւններն արդէն խօսում են Մխիթար վարդապետի դիւանագիտական փայլուն կարողութիւնների մասին: Սակայն նրա՝ աստուածաբան վարդապետի եւ Հայոց Եկեղեցու շահերի աննկուն պաշտպանի կերպարն աւելի վառ է երեւում իր գրչին պատկանող սակաւաթիւ երկերից, որոնց մէջ առանձնանում է «Ցաղագս համապատուութեան երկոտասանից առաքելոց» երկը: Այն գրուած է հայոց թագաւոր Հեթում Ա-ի (1226-1270 թթ.) հրամանով եւ Կաստաղոնի եպիսկոպոս Յակոբի յորդորներով եւ ներկայացնում է հեղինակի հաշուետուութիւնը 1263 թ. Աքքա կատարած դիւանագիտական այցի մասին:

---

1 Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, աշխատ. Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 366, 370:

Մխիթար Սկեւռացին, որպէս հայոց թագաւոր Հեթում Ա-ի եւ կաթողիկոս Կոստանդին Բարձրաբերդցու նուիրակ, այցելում է լատինական արեւելքի նշանաւոր կենտրոններից մէկը՝ Աքքա, եւ հանդիպում Ուրբանոս Դ պապի լիկաթին՝ Գուլիելմոս արքեպիսկոպոսին:

Հռոմի Եկեղեցին Հռոմկլայի կաթողիկոսարանից պահանջում էր անվերապահօրէն ենթարկուել պապական աթոռին: Մխիթար Սկեւռացին, իր երկում հետեւելով Վարդան Արեւելցու մշակած գծին, ապացուցում է այդ պահանջի անարդարացիութիւնը եւ ցոյց է տալիս, որ հայոց կաթողիկոսարանը նոյնպիսի յաջորդ է Տիեզերական Եկեղեցու առաքելական աւանդոյթի, ինչպիսին ներկայացնում են Երուսաղէմի, Հռոմի, Կոստանդնուպոլսի, Անտիոքի եւ Աղեքսանդրիայի պատրիարքական աթոռները: Այս երկում հայ աստուածաբան վարդապետը մեծագոյն յարգանքով է խօսում քոյր Եկեղեցիների մասին եւ պաշտպանում Հայոց Եկեղեցու կատարեալ նուիրապետական կառոյցը լատին կղերի չհիմնաւորուած ոտնձգութիւններից:

Մեզ յայտնի է Մխիթար Սկեւռացու երկի մօտ 20 ընդօրինակութիւն, որոնք պահպանւում են Երեւանում, Փարիզում եւ Երուսաղէմում: Պէտք է նշել, որ դրանց մեծագոյն մասը ներկայացնում է «Ցաղագս համապատուութեան» բնագրի համառօտ խմբագրութիւնը: Այն, ամենայն հաւանականութեամբ, ստեղծուել է ԺԴ դարում:

Մխիթար Տաշրացի (Սկեւռացի) աստուածաբան վարդապետի երկի ընդարձակ, այս դէպքում՝ իսկագիր ընդօրինակութեան հնագոյն ձեռագիրը պահպանւում է Փարիզի Ազգային գրադարանի հայկական ձեռագրերի պահոցում եւ կրում է 42 հերթական համարը: Մատեանն արտագրուած է 1274 թ., ստացողն է Կեռան թագուհին: Այս ձեռագրից է երկը մասնակիօրէն հրապարակել եւ ֆրանսերէն թարգմանել հայագէտ Էդուարդ Դիւլորիէն (1869 թ.):

Աւելի ամբողջական եւ ընդգրկուն են երկի երուսաղէմեան երեք հրատարակութիւնները (1857, 1860, 1865 թթ.), որոնցից վերջինը հիմք է հանդիսացել ներկայ թարգմանութեան համար[1]:

Ազատ Բոզոյեան

1 Տե՛ս «Պատասխանիք Մխիթարայ քահանայի Սկեւռացւոյ՝ յաղագս համապատուութեան երկոտասան առաքելոց», Երուսաղէմ, 1865:

ՄԽԻԹԱՐ ՔԱՀԱՆԱՅ ՍԿԵՒՌԱՑՈՒ ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԻՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

ՊԱՏԱՍԽԱՆ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԱՍՈՒՄ ԵՆ, ԹԷ ՏԱՍՆՄԷԿ [ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ] ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆ ԱՒԵԼԻ ՓՈՔՐ Է, ՔԱՆ ՊԵՏՐՈՍԻՆԸ, ԿԱՄ ՊԱՏՐԻԱՐՔՆ ԱՒԵԼԻ ԲԱՐՁՐ Է, ՔԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ՝ [ԳՐՈՒԱԾ] ՀԱՅՈՑ ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐԻ ՀՐԱՄԱՆՈՎ ԵՒ ԿԱՍՏԱՂՈՆԻ ՅԱԿՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՅՈՐԴՈՐՈՎ

Միակ Հօր անհասանելի եւ անիմանալի ծոցի Մնունդը՝ Միածին Որդին, որ Նրա փառքի լոյսն է եւ Նրա էութեան նկարագիրը, մարդասիրաբար գալով ամբողջացնելու մարգարէական խօսքը եւ մեր [մարդկային] նուաստութիւնը, իր ծայրագոյն Աստուածութեան հետ միացնելով եւ կատարելով բոլոր տնօրինութիւնները, կամաւոր չարչարանքների շեմին նախազգուշացրեց առաքեալներին վերջին իրադարձութիւնների մասին, որ կատարուելու էին Երուսաղէմում, ինչպէս նաեւ նրանց ապագայի մասին:

Իսկ ծայրագոյնը եւ իսկական սիրոյ պատճառը՝ կատարեալ պարգեւը, անձամբ աւանդեց աշակերտներին՝ ասելով. «Իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ եւ Իմ խաղաղութիւնն եմ թողնում ձեզ»[1]: Ապա զանազանելով զատորոշում է երկրայիններիս խաղաղութիւնից, որպէսզի խաբուելով չընկնենք վերջինիս մէջ, որն ըստ էութեան նոյնը չէ, այլ համընկնում է միայն անունով: [Այդ իսկ պատճառով] հրամայում է. «Չեմ տալիս այնպէս, ինչպէս այս աշխարհն է տալիս»[2], որպէսզի վեր բարձրացնի մեր միտքը՝ ամենայն յետին նուաստութիւնից ձգելով դէպի Իր [աստուածային] բարձունքները: Ըստ այդմ ովքեր ընդունե-

1 Տե՛ս Ցովհ. ԺԴ 27:
2 Ցովհ. ԺԴ 27

ցին եւ հետեւեցին [Իրեն] առանց չեղուելու եւ ետ դառնալու, նրանց արտաշխարհիկ կոչեց՝ ասելով. «Դուք այս աշխարհից չէք»[1]: Իսկ Պօղոսը հէնց Քրիստոսի մասին ասաց, թէ՝ «Մեր խաղաղութիւնն է, որ երկուսին մէկ դարձրեց եւ Իր Մարմնի մէջ քանդեց միջնորմ-ցանկապատը՝ թշնամութիւնը»[2], այսինքն՝ ամբարտաւանութիւնը, որն անջրպետում է այն ընդունողներին՝ Աստծուց: Որի մասին նաեւ մի այլ տեղում յայտնապէս ցոյց է տալիս. «Քանդում ենք խորհուրդները եւ Աստուծոյ գիտութեան դէմ հպարտացած ամէն մեծամտութիւն եւ գերում ենք ողջ միտքը՝ Քրիստոսին հնազանդութեան բերելով»[3]: Տեսնո՞ւմ ես, թէ ինչպէս են հալածում սնափառութիւնը տէրունական հօտից, որպէսզի ոչ ոք ինքնասիրութեամբ, [իր] կամքը քողարկելով, սեփական անձի համար փառք չորսայ: Ինչպէս եւ այժմ բազում հակառակութիւն ենք տեսնում Եկեղեցիների միջեւ գահասիրութեան պատճառով. կրտսեր են համարւում իրենց համափառ առաքելական աթոռները՝ մայրաքաղաքների երկրային ճոխութեան հետ համեմատելով, մանաւանդ՝ [երբ նկատի են ունենում] հայոց հայրապետութեան Աթոռը: Եւ փոքր չէ հոգուս տիրող սարսափը. եթէ նրանք (Եկեղեցիները – Ա. Բ.) Քրիստոսից ընդունել են այդքան խաղաղութեան քարոզութիւն՝ ըստ Քրիստոսի ասածի, այդ դէպքում ինչո՞ւ ենք միմեանց դէմ մարտնչում ճշմարտութեան համար՝ ոտնատակ տալով այն օրէնքը, որն Աստուած սահմանեց, եւ ոչ թէ՝ մարդը:

Ինչպէս պատմում է աւետարանիչը, [Նա] Իր մօտ կանչեց աշակերտներին եւ ընտրեց նրանցից տասներկուսին, մականուանեց[4] եւ տուեց նոյն իշխանութիւնը: Եւ նրանց մէջ գահերի տարբերութիւն չդրեց մեր պատկերացումների համաձայն: Իսկ երբ նրանց մէջ այդպիսի կիրք նկատեց, որովհետեւ նրանք մարդ էին եւ դեռեւս կատարելութեան չէին հասել, Տէրն ասաց նրանց. «Թող ձեր մէջ այնպէս չլինի, ինչպէս հեթանոս իշխանների [մօտ] է, այլ ով ձեզանից կցանկանայ մեծ լինել, թող լինի ամենավերջինը»[5]: Եւ նրանք, առանց տատանուելու ընդունելով այդ յաւիտենական օրէնքը եւ ճշտութեամբ

1 Յովհ. ԺԷ 16, հմմտ. Յովհ. ԺԵ 19:

2 Տե՛ս Եփես. Բ 14:

3 Բ Կորնթ. Ժ 4-5

4 Ըստ երեւոյթին, նկատի ունի այն, որ Քրիստոս առաքելական անուններ շնորհեց աշակերտներին՝ վերանուանելով նրանցից ոմանց:

5 Տե՛ս Մատթ. Ի 26, Մարկ. Ժ 43, Ղուկ. ԻԲ 24:

կատարելով պատուէրը, ամէնուր պատում էին կրտսերութիւնը: Պետրոս առաքեալը եւս ետ չէր մնում՝ ամենացածր աստիճանի համաձայն իրեն երէց կոչելով եւ նրանց դրա համաձայն իրեն հաւասար անուանելով. «Երէցներին այսուհետեւ աղաչում եմ որպէս երիցակիցների»[1]: Իսկ Պօղոսը, որն իր շնորհների առաւելութեան համար մեծ վաստակ ունէր, դասակիցների մէջ իրեն կոչում է տրուպ եւ մեղաւորների գլուխ: Մատթէոսն էլ, բարձրագոյն պատիւ ստանալուց յետոյ, չի խուսափում իրեն մաքսաւոր կոչել: Մեզ էլ խրատելով նոյնն աւանդեցին՝ յարգել միմեանց: Հարկ կա՞յ արդեօք երկարեցնել [խօսքը] նրանցից իւրաքանչիւրի խոնարհութեան մասին: Իսկ մենք, շրջանցելով նրանց ճանապարհը, մի այլ նոր արահետ ընտրեցինք եւ խոտորուեցինք՝ անհաւասարութիւն ներմուծելով հաւասարների մէջ եւ իշխանութեան առաւելութիւն՝ [նրանց մէջ], ովքեր չունեն միմեանց նկատմամբ գերազանցութիւն՝ մէկին՝ գլուխ համարելով, իսկ միւսներին, իբրեւ անդամներ եւ ենթականեր, նրա տէրութեան ներքոյ: Ինչպէս ասում է Հռոմի Եկեղեցին, Պետրոսն իշխանութիւն ունի [մնացած] տասնմէկի վրայ՝ այնպէս, ինչպէս եւ Հռոմը՝ նրանց աթոռների վրայ, ինչը չեն կարողանում ապացուցել առաքելական մատեաններով, այլ միայն Տիրոջ՝ մարդկային յանցանքը բժշկելու եւ սեփական անձին ապաւինելուց [զգուշանալու] համար Պետրոսին ուղղուած նախախնամական հրամանով[2]: Դրանից են նիւթ վերցնում՝ կատարեալ դարձնելով իրենց մոլորութիւնը, իրենց ախտակից համարելով նաեւ սրբին եւ, մարմնական գերագահութիւնը տարածելով նաեւ հոգեւորի եւ աստուածայինի վրայ, տիրաբար են վարւում մեզ հետ՝ որպէս հպատակների եւ իրենց հարկ տուողների: Այս մասին ես գիտեմ ոչ թէ լուրերից, այլ ինքս եմ ականատես եւ ականջալուր նրանցից մէկի [չահարկած] աւետարանական խօսքերին, որոնցով պարծենում են, թէ մեծ են, եւ այդ նոյն [խնդրի] շուրջ եօթ կէտեր են առաջադրում, որոնց վերաբերեալ բազմիցս տրամախօսեցինք, ապա վերստին դրանց կանդրադառնանք Աստուծոյ կամքով: Դրանք հարցումներով քննեցինք եւ կվերլուծենք ըստ կարգի՝ ոչ թէ ինչ-որ մտացածին խօսքերով եւ կամ ստայօդ ճարտասանութեամբ, այլ առաքելական եւ մարգարէական խօսքերի վկայութեամբ եւ նրանով, ինչն [առաքեալներն]

1 Ա Պետր. Ե 1

2 Այստեղ նկատի ունի Մատթ. ԺԶ 15-16:

ընդունեցին Քրիստոսից [որպէս] իշխանութեան հրաման: Եւ այս [կատարեցինք] ոչ թէ սուրբ Պետրոսի պատիւն աղարտելու համար, քա՛ւ լիցի, այլ՝ հաստատելու նրա անախտութիւնը եւ գերազանցութիւնը աշխարհական կրքերի եւ նախանձի նկատմամբ եւ ցոյց տալու նոյնութիւնը տասներկու [առաքեալների] իշխանութեան, որը պարգեւուեց նրանց Տիրոջ կողմից ոչ թէ միմեանց նկատմամբ առաւելութեամբ, այլ իւրաքանչիւրին՝ ըստ իր վիճակի. եւ այն էլ՝ ոչ թէ տիրելով, այլ օրինակ դառնալով աստուածային հօտին եւ իրենց անձը նզովքի մատնելով, որպէսզի բոլորին շահեն ի Քրիստոս:

Եւ նախ վերոյիշեալ ժողովի թուականը դնենք, որպէսզի անվաւեր եւ կեղծ չհամարուի ընթերցողների կողմից, եւ ապա սկսենք մեր հանդիպման, տրամախօսութիւնների եւ նրանց խօսքերին տրուած պատասխանների մասին:

Եւ դա եղաւ Հայոց Կոստանդինի[1] հայրապետութեան քառասուներկուերորդ տարում եւ Արամեան տոհմից Հեթումի[2] թագաւորութեան [օրօք], որը երբ լսեց, շատ հաճելի համարեց առաջարկութիւնս եւ հրամայեց մեզ արձանագրել:

Իտալիոյ աշխարհից՝ Հռոմի հայրապետի կողմից Լիկաթ եկաւ: Բառն այս լատիներէն է եւ մեր լեզուով դեսպան է թարգմանւում, սակայն, ըստ տրուած իշխանութեան, նուիրակ էր: Նա եկաւ գալիլեացիների երկրի Պտղոմեանց քաղաքը, որն այժմ Աքայիա է անուանւում եւ որն իշխում էր հոգեւոր [առումով] ողջ փիւնիկեան ծովեզերքին՝ մինչեւ մեծն Անտիոք, եւ ամբողջ Պաղեստինին, որոնք հռոմէացիների [տիրապետութեան] տակ են: Եւ, ինչպէս իրեն ենթականերին, լուր է ուղարկում նաեւ մեր հայրապետին, որպէսզի նա էլ միւսների նման ընծաներով ներկայանայ իրեն: Սակայն մեր հայրապետը շատ չմտահոգուեց այս կապակցութեամբ, ապա պատգամաւորների միջոցով ուղարկուած նամակով ուշադրութեան արժանացրեց, որոնց ուղարկում է այլ գործով, որպէսզի անցնելիս նաեւ այդ մասին հոգան, [այսինքն՝ յանձնեն նամակը Լիկաթին]: Իսկ նա նոյնիսկ նրանց չընդունեց, թէպէտ ձգտում էին տեսնել նրան, եւ, սաստիկ զայրանալով, նրանք վերադարձան: Այդ նոյն օրերին մեր

1 Կոստանդին Բարձրաբերդցի (1221-1267)

2 Հեթում Ա (1226-1270)

թագաւորի եղբայր Օշինը թագաւորական հրամանով որպէս դեսպան ուղարկուեց Աքայիա քաղաքը՝ Լիկաթի եւ իշխանների մօտ, եւ երբ հանդիպել էին իրար, Լիկաթը սաստիկ մեղադրել էր մեր կաթողիկոսին տմարդութեան մէջ՝ ասելով, թէ՝ «Նոյնիսկ եթէ օտարասիրութիւնն ու հիւրընկալութիւնն էլ չլինէին, Հռոմի Եկեղեցուց մեզ շնորհուած բնական պատիւը պիտի ստիպէր նրան տեսնել մեզ»: Իսկ նա (Օշինը - Ա. Բ.), երբ եկաւ մեր թագաւորի մօտ, պատմեց ամբողջը եւ նոյնիսկ աւելին, եւ նրանք, հետեւելով մեր ազգի բնական վարքագծին, որը բարձրացնում է ուրիշներին եւ նուաստացնում իրեն, յոյժ արդարացի համարելով մեղադրանքը, իսկոյն զգուշացնում են մեր հայրապետին՝ ասելով, որ մարդ պատրաստի նամակով կամ ուղերձ ընծաներով՝ իրենց դեսպանների հետ առաքելու համար: Իսկ նա անյապաղ յանձն առաւ [կատարել] պատուէրը՝ ինքն էլ պատշաճ համարելով յանդիմանութիւնը: Ու երբ քննարկեցին մօտ մարդկանց շրջանում պատուիրակի անձը, կանգ առան իմ նուաստութեանս վրայ: Եւ կաթողիկոսն ինձ հրամայեց գնալ, եւ ես, թէպէտ տկար էի եւ խօսքի մէջ անպատրաստ, այսուհանդերձ համաձայնեցի գնալ: Միայն խնդրեցի, որ գրածի մէջ բնաւ չյիշատակուի հնազանդութեան մասին, քանի որ [լատիները] ճարտասան են եւ խօսքի որսորդներ: Սակայն, [չնայած խնդրանքին], հակառակն էին գրել:

Եւ քանի որ ձմեռ էր, բազմաթիւ օրեր դանդաղօրէն նաւավարելով՝ դեկտեմբեր ամսուայ վերջին հազիւ հասանք Աքայիա քաղաք: Մեզ հետ էր նաեւ մեր կաթողիկոսի հրամանով Տրայիանուպոլսում մեզ միացած՝ Երուսաղէմի մեր Եկեղեցու եպիսկոպոսը: Եւ երբ թագաւորի դեսպանները պատրաստուեցին Լիկաթին այցելել, մեզ էլ պատուիրեցին պատրաստ լինել նրանցից յետոյ մտնելու: Նրանք ներս մտան՝ հաղորդելու իրենց յանձնարարութիւնը, իսկ մենք երկար, մինչեւ օրուայ վերջը, սպասեցինք դռան մօտ: Թէպէտ սպասեցման պատճառը չկարողացանք իմանալ, [սակայն] ենթադրում ենք երկու վարկած. կամ հպարտութեան պատճառով ընդգծում էին իրենց բարձր դիրքը, կամ էլ խորհրդակցում էին՝ ընդունե՞ն, թէ՞ ոչ, եւ կամ էլ [մտածում էին], թէ հանդիպելուց յետոյ ի՞նչ պիտի ասենք. քանի որ նրա մօտ կային հմուտ ճարտասաններ՝ հաստատուած ծովի այս կողմում, որոնցից մէկն էլ Կիպրոսի եպիսկոպոսն էր:

Վերջապէս հրամայեցին մեզ մտնել, երբ դեռ այնտեղ էին նաեւ մեր դեսպանները: Եւ երբ մատուցեցինք կաթողիկոսի ուղարկած գրութիւնը եւ ընծաները, նա (լիկաթը – Ա. Բ.) վերցրեց մատեանը եւ տուեց մեր եպիսկոպոսին ու հեգնանքով ասաց. «Ի՞նքդ ընթերցիր սա»: Իսկ նա (եպիսկոպոսը – Ա. Բ.), հրաման առնելով, սկսեց ընթերցել մեր հայրապետի ուղերձը, եւ երբ փոքր-ինչ ընթերցեցինք, թոյլ չտուեց աւարտել, այլ ինքը զայրացած սկսեց եւ ասաց. «Վերցրէ՛ք եւ բերուած ընծան, քանի որ ես մարմնական շահից եւ ընչասիրութիւնից դրդուած չէ, որ խնդրում էի հայոց կաթողիկոսին գալ, այլ՝ հոգեւոր կարգին եւ օրէնքին հետեւելով, որպէսզի ցանկապատուելով չմասնատուի հայրենի եզերքը, եւ անդամները, գլխից չորթուելով, ապականութեան չմատնուեն, ինչպէս միւս առաքելական աթոռները [բաժանուեցին] Հռոմի Եկեղեցուց. [մի կարգ], որը Տէրն է հաստատել, եւ ոչ թէ՝ մարդ: Ինչպէս Պողոս առաքեալն է ասում. «Այլ հիմք ոչ ոք չի կարող դնել, քան դրուածը, որ Յիսուս Քրիստոս է»[1]: Եւ դրա համար, ներելով ձեզ, խնդրում էինք, որ գաք՝ միանալու Եկեղեցու գլխին: Ու քանի որ [կաթողիկոսը] խոր ծերութեան պատճառով, ինչպէս տեղեկացել ենք, չէր կարող անձամբ գալ, ողորմածաբար հարցնում եմ՝ ինչո՞ւ աւելի վաղ որեւէ մէկին չուղարկեց: Իսկ եթէ հարկի բերումով եւ դղեակի[2] գործերի պատճառով էր յապաղում, ինչպէս լսել ենք, ի՞նչ թերութիւն կպատճառէր [գործերին] մի մարդու պակասութիւնը: Իսկ այժմ ի՞նչ պակասեց»: Շատ այլ բաներ եւս ասաց, որոնք չեմ կարող արձանագրել, իսկ մենք լուռումունջ սպասեցինք: Իսկ երբ մի փոքր հանդարտուեց, Թովմասը՝ մեր թագաւորի դեսպանը, ինձ ասաց. «Արի՛, կրկի՛ն աղաչիր, որ ընդունի ընծաները»: Եւ ես շատ աղաչեցի, իսկ նա չվերցրեց: Ապա հէնց ինքը (Թովմասը – Ա. Բ.) վեր կացաւ եւ աղաչեց մեր թագաւորի անունից, ինչպէս իր որդու անունից, որին ինքն էր [այդպէս] կոչում: «Եթե քո որդին լսի,- ասաց,- շատ կմտահոգուի, եթէ չվերցնես»: Եւ նա, այդ պատճառաբանելով եւ ոչ թէ՝ նիւթական իրերի նկատմամբ ագահութիւնը, որը սաստիկ ծաղրի էր ենթարկել, քիչ յետոյ աղաչանքով պահանջեց [նուէրները]:

1 Ա Կորնթ. Գ 11

2 Նկատի ունի Հռոմկլայի կաթողիկոսարանը:

Ապա լիկաթն առաջարկեց հաց ուտել, իսկ մենք չհամաձայնեցինք եւ, սաստիկ տխրած հայոց առաքելական Աթոռի նկատմամբ ցոյց տրուած արհամարհանքից, հեռացանք: Ու ինձ այնպէս է թւում, թէ դա եղաւ Աստուծոյ նախախնամութեամբ, քանզի ցանկանում էր մեզ մղել՝ գտնելու այս երկու խորհրդաւոր եւ արժանավայել խօսքերը, որոնց մասին պատրաստւում եմ պատմել: Եւ սրանից յետոյ, երբ տօնախմբութիւնը դադարեց, կանչեց մեզ եւ, բարեհամբոյր դէմք ընդունած, ասաց. «Երկար ժամանակ ցանկութիւն ունէի զրուցել քեզ հետ, քանի որ լսել էի քո մասին, թէ քո ազգի գիտուններից մէկն ես, որպէսզի թերեւս օգուտ քաղէի քեզնից: Սակայն տօնի նկատմամբ ունեցած պարտականութիւններս մինչեւ այժմ ինձ թոյլ չտուեցին. այժմ ե՛կ խօսենք»:

Եւ ես, պատասխան տալով այդ [խօսքին], ասացի. «Այնպիսին չեմ, ինչպիսին կարծում ես, եւ նա, ով պատմել է քեզ [իմ մասին], թերեւս տեղեակ չի եղել, որ ես յետիններից մէկն եմ, այլ քո ասածը երկու պատճառ ունի. մէկը, որ իմաստասիրական բարքով աննախանձ ես, եւ միւսը՝ Փրկչին աշակերտելով՝ մեծարում ես անարգներին: Իսկ ինչ վերաբերում է ինձ, ապա յոյժ ցանկանում էի գալ, որպէսզի սովորելով օգուտ քաղեմ, քանի որ շատ հմուտ էք Աստուածաշունչ Գրքերին: Բայց իսկապէ՞ս սրտանց ասացիր խօսքդ, քանի որ ոչ քիչ տրտմութեամբ էի լցուած քո արարմունքի պատճառով, որովհետեւ չընդունեցիր մեր ընծաները, որոնք ո՛չ ձեզ առաւելութիւն կբերէին, ո՛չ էլ կնուաստացնէին առաքողին: Եւ ո՛չ նամակն ընթերցեցիր, որ կարողանայի հաստատել կամ չհաստատել խօսքով, ո՛չ էլ [կաթողիկոսի] մաղթանքը լսեցիր»:

Եւ, ժպտալով խօսքիս վրայ, ասաց. «Այո՛, կանենք այնպէս, ինչպէս կամենում ես, միայն թէ խօսենք»: Եւ ես ասացի. «Թո՛ղ քո խօսքը լինի»: Իսկ նա ասաց. «Ինչպէս ասացի, իմաստուն մարդ ես, եւ ինչի մասին խնդրում եմ, պատասխան տուր»: Եւ այդ օրը նրա մօտ մեծ ժողով էր, [որին ներկայ էին] քաղաքապետը՝ Ջուփրի անունով մի հաշտարար մարդ, մայեստր Դանիլուը[1], Հիւանդանոցի օրդենի քումանդուրը[2], ծովեզերքի բոլոր իշխանները, բացի բրինձից[3], եւ բոլոր

1 տաճարական օրդենի մագիստրոսը՝ ղեկավարը

2 Hospitaliere-ների վանական ասպետական կարգի հրամանատարը

3 ծովեզերքի գլխաւոր իշխանը (prince)

աւուրքները (փաստաբանները): Սակայն չգիտենք այդ ժողովի հաւաքման պատճառը. արդեօք մե՞նք էինք պատճառը, թէ՞ մի այլ պէտքի համար էր: Եւ ես ասացի. «Ինչպէ՞ս կարող եմ մի [ողջ] ազգի փոխարէն պատասխան տալ, մանաւանդ՝ երբ խնդիրը վերաբերում է Եկեղեցուն: Եւ մի՛ նայիր այն բանին, որ այստեղ եմ ուղարկուել որպէս կատարեալ մէկը, քանզի բազմիցս է պատահում արքունիքում, որ բարեբախտութեան են արժանանում ապաշնորհները: Հայոց Եկեղեցին հարուստ է իմաստուններով եւ Աստուածաշունչ Գրքերին հմուտ եւ տեղեակ [այրերով], որոնցից յետինը ես եմ: Սակայն [այն հարցերին], որոնց ներում են ուժերս, եւ որոնց համար ունեմ մեր հայրապետի հրամանը եւ վստահութիւնը, իմ կարողութիւնների սահմանում կպատասխանեմ, իսկ որոնց չկարողանամ պատասխանել, կգրեմ եւ կտանեմ, իսկ նա (կաթողիկոսը – Ա. Բ.), [որպէս] հարուստ, հաւաքելով եւ քննելով, կհանի իր հին ու նոր գանձերի առատութիւնից[1] եւ պատասխան կառաքի ձեզ»: Այս խօսքը հաճութեամբ ընդունուեց բոլորի կողմից: Ես նաեւ աւելացրի. «Միայն թէ ինձ էլ թոյլ տուր խօսել եւ պատասխանել». որովհետեւ շատ էր խօսում եւ քիչ լսում: «Եւ արդ, որովհետեւ իշխանութիւն ունէիր հարցնելու, ասացիր, թէ Պօղոս առաքեալն ասում է. «Այլ հիմք ոչ ոք չի կարող դնել, քան դրուածը, որ Յիսուս Քրիստոսն է»[2], եւ դա է ճշմարտութիւնը»: Եւ ես աւելացնում եմ հէնց դրան հետեւող խօսքը. «Եթէ մէկը այս հիմքի վրայ կառուցի»[3], հաստատուն կլինի: Արդ, ուրեմն, կառուցենք ոչ թէ հրից այրուող խոտով, այսինքն՝ ոչ թէ նրանց ուսմունքից դուրս, այլ նրանց խօսքի համաձայն՝ Հոգու հրով փորձուած եւ զտուած ոսկով եւ արծաթով, որպէսզի կանգուն մնայ: Իսկ ով կառուցի, առաքինի վարպետների նման կստանայ իր վարձը»: Եւ նրանք ասացին՝ այո՛:

Այն ժամանակ ես ասացի. «Որտեղի՞ց Հռոմի Եկեղեցուն այդ իշխանութիւնը, որ ինքը դատում է այլ առաքելական Աթոռներին, իսկ ինքն այլոց կողմից չի քննւում, քանզի մենք առաքեալների օրինակով միշտ կարող ենք դատել ձեզ, իսկ դուք չէք կարող քննել մեզ»:

1 Տե՛ս Մատթ. ԺԳ 52:
2 Ա Կորնթ. Գ 11
3 Կորնթ. Գ 12

Իսկ նրանք, լսելով այս խօսքը, սաստիկ խոժոռուեցին, սակայն մեծահոգաբար ոչինչ չպատասխանեցին, այլ հանդարտօրէն հարցրին. «Իսկ ո՞վ է տուել ձեզ այդ պատիւը»: Եւ ես ասացի. «Թող ասածս ձեզ արտասովոր չթուայ, քանի որ խոստացաք Աստուածաշունչ Գրքերից դուրս չգալ, եւ ես ցոյց կտամ ձեզ աստուածային մատեաններից, որ միւս առաքեալները դատեցին Պետրոսին՝ նաեւ մեղադրելով նրան այն ժամանակ, երբ նա Կոռնելիոսին մկրտելուց յետոյ գնաց Երուսաղէմ՝ իրեն արդարացնելու համար, ինչպէս պատմում է Ղուկասը Գործք առաքելոցում. «Առաքեալները եւ Հրէաստանի կողմերում գտնուող եղբայրները լսեցին, որ հեթանոսները եւս ընդունեցին Աստուծոյ խօսքը: Սակայն երբ Պետրոսը գնաց Երուսաղէմ, մեղադրում էին նրան, ովքեր թլփատութիւնից յետոյ էին հաւատացեալ դարձել, այն բանի համար, որ մտաւ անթլփատ այրերի մօտ եւ կերաւ նրանց հետ: Ապա Պետրոսը սկսեց նրանց հերթականութեամբ պատմել տեսիլքը մինչեւ վերջ... «Եւ երբ սկսեցի խօսել,- ասաց,- Սուրբ Հոգին իջաւ նրանց վրայ... եւ յիշեցի Տիրոջ խօսքը, որն ասում էր. Յովհաննէսը մկրտեց ջրով, բայց դուք կմկրտուէք Սուրբ Հոգով»»[1]:

Տեսնո՞ւմ ես, որ նրան ոչ միայն իշխան չէին համարում եւ թոյլ չէին տալիս անել կամեցածը, այլեւ իշխանաբար մեղադրում եւ դատում էին նրան: Իսկ Պետրոսը, իրեն որպէս իշխող չհամարելով Նրանց վրայ, ոչ թէ իշխանաբար է պատասխանում, ինչպէս Տէրը, Որն ասում է. «Կարող եմ ունեցածիս հետ վարուել, ինչպէս կամենում եմ»[2], այլ խոստովանում է, որ հրամանն Աստուծոյ կողմից էր եւ ոչ թէ՝ ըստ իշխանութեան՝ ասելով. «Ուրեմն, եթէ Աստուած նրանց էլ նոյն պարգեւը տուեց, ինչպէս եւ մեզ, երբ Տէր Յիսուս Քրիստոսին հաւատացինք, ապա ես ինչպէ՞ս կարող էի արգելել Աստծուն»: Իսկ երբ լսեցին այս, դրանից յետոյ լռեցին»[3], այսինքն [հրաժարուեցին] շտապ քննութիւնից:

Տեսնո՞ւմ ես, թէ ինչպէս է ցոյց տալիս, որ Պետրոսը գլխաւորը չէ: Եւ գիտեմ, որ այս մասին ասում են, թէ՝ մեղադրել ասում է ոչ թէ առաքեալների համար, այլ նորադարձ հաւատացեալների համար, եւ

1 Գործք ԺԱ 1, 15, 16
2 Տե՛ս Մատթ. Ի 15:
3 Տե՛ս Գործք ԺԱ 17:

Պետրոսն այդպէս վարուեց նրանց տկարութեան պատճառով՝ չահելու նրանց [ի Քրիստոս], ինչպէս ասում է Պողոսը, թէ՝ «Տկարացածին ընդունեցէ՛ք հաւատի մէջ»[1]: Այս մասին ասում ենք, թէ նրանց մէջ [հաւատով] տկար չկար, քանի որ ասւում է, թէ՝ «Բոլորն ունէին մէկ սիրտ եւ մէկ անձ»[2]: Եւ դարձեալ՝ եթէ դրանք [մնացած] տասնմէկը չէին, արդեօք ո՞ւմ էր պատասխան տալիս Պետրոսը, թէ՝ «Երբ սկսեցի խօսել, Սուրբ Հոգին իջաւ նրանց վրայ, ինչպէս սկզբում՝ մեզ վրայ»[3]: Իսկ ովքե՞ր էին սկզբում Վերնատանը, եթէ ոչ՝ միայն տասներկու [առաքեալները], եւ կամ ո՞ւմ պատմեց, եթէ ոչ՝ Տիրոջից այն խօսքը լսողներին եւ ճանաչողներին, թէ՝ «Յիշեցի Տիրոջ խօսքը, որ ասում էր, թէ՝ Յովհաննէսը մկրտեց ջրով, սակայն դուք կմկրտուէք Սուրբ Հոգով»[4]:

Տեսնո՞ւմ էք, թէ ինչպէս ապացուցուեց, որ Պետրոսը դատուել է տասնմէկի կողմից, եւ ոչ մի տեղից չի երեւում, որ Պետրոսը որեւէ ձեւով դատել է տասնմէկին:

Եւ կրկին խօսում եմ սիրոյ մասին, որին ապահովաբար ապաւինեցին: Աղաչում եմ ձեզ Աստուծոյ գթութեամբ՝ ըստ առաքեալի, եւ խրատում ինչպէս եղբօրով հզօրացած եղբայրը. այդ լծի տակ մի՛ դրէք (Հայոց) Եկեղեցին, որի տակ չեն եղել մեր հայրերը. նկատի ունեմ ծառայական հնազանդութիւնը, որի տակ մենք էլ չենք կարող մտնել: Իսկ սիրոյ համար, որի համար հրաման ունենք Աստծուց եւ սուրբ առաքեալներից, պատրաստ ենք՝ ըստ Քրիստոսի խօսքի. «Եթէ սիրէք միմեանց, դրանով կճանաչեն, որ Իմ աշակերտներն էք»[5], իսկ Պողոսը մասնաւորեցնում է, թէ եկեղեցական կարգաւորութեան տեսանկիւնից ամենակարեւորը սէրն է՝ ասելով. «Սրա՞նց դրեց Աստուած Եկեղեցում. առաջին՝ առաքեալներին, երկրորդ՝ մարգարէներին, երրորդ՝ վարդապետներին»[6] եւ ըստ կարգի նաեւ՝ Եկեղեցու [միւս] անդամներին: Եւ երբ թուարկում է իւրաքանչիւրի շնորհները, ասում է. «Նախանձախնդի՛ր եղէք լաւին, սակայն ես առաւել [գերազանց]

1 Հռոմ. ԺԴ 1
2 Տե՛ս Գործք Դ 32:
3 Տե՛ս Գործք ԺԱ 15:
4 Տե՛ս Գործք ԺԱ 16:
5 Տե՛ս Յովհ. ԺԳ 35:
6 Տե՛ս Ա Կորնթ. ԺԲ 28:

ճանապարհ ցոյց կտամ ձեզ: Քանզի եթէ խօսեմ թէ՛ մարդկանց եւ թէ՛ հրեշտակների լեզուներով եւ թէ՛ունենամ այնքան մարգարէութիւն ու հաւատք, որ կարողանամ մինչեւ իսկ լեռները տեղափոխել, եւ սէր չունենամ, ոչ մի օգուտ չեմ ունենայ»[1]:

Իսկ Յովհաննէսն ասում է Ընդհանրական [թղթում], թէ՝ «Հօր պատուիրանն այն է, որ հաւատանք Նրա Որդի Յիսուս Քրիստոսի անունը եւ սիրենք միմեանց, քանի որ այդ է Նրա պատուիրանը»[2] Արդ, այս բարձր պատուիրաններին, որ [գալիս են] Աստծուց եւ սուրբերից, ամբողջովին պատրաստ է Հայոց Եկեղեցին եւ ոչ թէ՝ նոր-նոր սկսելով, այլ շատ հնուց, ինչպէս որ սկզբից ժառանգելով՝ կրում է սէրը մանաւանդ հռոմէացիներիդ նկատմամբ: Դա կարող են վկայել ձերոնցից նրանք, ովքեր ներկայ են այստեղ եւ ճանաչում են մեզ: [Մենք սիրով ենք] նաեւ այլ ազգերի նկատմամբ, թէպէտ դա չի կարելի համեմատել ձեր [նկատմամբ տածածի հետ]: Այնուամենայնիւ, առանձին ազգերի առաջնորդներն ըստ իրենց կարգի եւ պաշտամունքի անխոով են մեր աստուածապարգեւ թագաւորութեան մէջ՝ չունենալով մեր աստուածասէր թագաւորից որեւէ պահանջ՝ քահանայական կարգի եւ Եկեղեցու աւանդութեանը վերաբերող, ինչը խնդրում ենք Աստծուց՝ անշարժ պահել Հայքում:

Լիկաթն ասաց. «Ոչ թէ սիրոյ պատուիրանը խախտելու համար ենք հնազանդութիւն պահանջում, այլ իրար հետ սերտ կապուելու [մտահոգութեամբ], որի համար բերեմ հետեւեալ օրինակը. ինչպէս մարմնի բոլոր անդամները գլխի հետ են կապուած սիրով, այդպէս էլ բոլոր եկեղեցիները պարտաւոր են հնազանդուել Հռոմի Եկեղեցուն՝ որպէս գլխի, որպէսզի ամբողջութիւն կազմեն բոլոր անդամները»:

Եւ պատասխանեցի սրան. «Չենք կարող որեւէ մէկի հնազանդութեան տակ մտնել, քանի որ Աստծուց ձեզ հաւասար ազատութիւն ենք ստացել՝ ըստ տասներկու [առաքեալների համապատասխանութեան], քանի որ հնազանդութիւնը ծառայական է եւ աշխարհական եւ ոչ թէ առաքելական, ինչպէս որոշակիօրէն մեզ աւանդեցին առաքեալները, թէ որոնց եւ ում պէտք է հնազանդ լինել: Երանելի Պետրոսը գրում է, թէ՝ «Հնազանդ եղէք [բոլոր] մարդկային իշխանութիւններին՝ լինի թա-

1 Տե՛ս Ա Կորնթ. ԺԲ 31-ԺԳ 2:
2 Տե՛ս Ա Յովհ. Գ 23:

գաւրին՝ իբրեւ բոլորից գերագոյնին»[1], եւ Պօղոսը՝ թէ՝ «Հնազանդ եղէք տէրերին»[2]: Եւ չհամարձակուեցին գրել տասներկուսի՝ միմեանց [ենթարկուելու] մասին, քանի որ գիտէին, որ Բանն Աստուած իրենց միջից վերացրել է ծառայական հնազանդութիւնը՝ ասելով. «Դուք ծառաներ չէք, քանի որ ծառան ոչինչ չգիտի Տիրոջ մասին, այլ դուք Իմ բարեկամներն ու խորհրդակիցներն էք»[3]: Ուրեմն ինչպէ՞ս կարող ենք հնազանդութեան տակ մտնել՝ վերստին ծառայ դառնալով հակառակ մեր ազատութեան, որը տուեց մեզ Քրիստոս»:

Այս [խօսքերին նա] այդ օրը ոչինչ չպատասխանեց, իսկ յաջորդ օրը լիկաթն ասաց. «Մենք ձեզնից չենք պահանջում հնազանդուել ինչպէս ծառաները՝ տիրոջը, այլ ինչպէս որդին՝ հօրը, ինչպէս գրում է Պօղոսը, թէ՝ «Որդինե՛ր, հնազանդ եղէք [ձեր] հօրը»[4]:

Պատասխան տուեցի եւ ասացի, թէ՝ «Այդ էլ է արգելում մեզ Քրիստոս՝ ասելով. «Երկրի վրայ որեւէ մէկին ձեզ հայր մի՛ անուանէք, քանի որ մէկն է ձեր Հայրը, որ երկնքում է»[5], իսկ Պետրոսը երկրաւոր է եւ ոչ թէ երկնաւոր: Ուրեմն ինչպէ՞ս կարող ենք հրաժարուել երկնաւոր Հօր որդեգրութիւնից եւ դառնալ Պետրոսի որդի՝ հետեւելով ձեր խրատին եւ զանց առնելով մեր Քրիստոս Աստուծոյ խրատը: Քանզի այս մասին զգուշացնում է մեզ հէնց ինքը՝ Պետրոսը, թէ՝ «Աստծուն պէտք է հնազանդուել առաւել, քան մարդկանց»[6]: Դարձեալ՝ քանզի սովորութիւն ունենք հայրեր կոչելու [մեզ] Աւազանով վերստին ծնողներին, [այսինքն՝ մկրտող հոգեւորականին], իսկ Պետրոս առաքեալը չի մկրտել [մնացած] տասնմէկին եւ նրանց միջոցով՝ մեզ. ինչո՞ւ նրան հայր կոչենք: Իսկ եթէ ասեն. «Ինչո՞ւ էք ամբողջովին վերացնում հնազանդութիւնը Եկեղեցուց. արդեօք չէ՞ք յիշում Պօղոսի ասածը կորնթացիներին, թէ՝ «Գիտէք Ստեփանոսի եւ Փորտունատէսի տները, որոնք իրենց նուիրեցին սրբերի ծառայութեանը. աղաչում եմ, որ դուք էլ նրանց հնազանդ լինէք»[7], եւ սրա

1 Տե՛ս Ա Պետր. Բ 13:
2 Կող. Գ 22
3 Տե՛ս Յովհ. ԺԵ 14-15:
4 Տե՛ս Եփես. Զ 1, Կող. Գ 20:
5 Տե՛ս Մատթ. ԻԳ 9:
6 Գործք Ե 29
7 Տե՛ս Ա Կորնթ. ԺԶ 15-16:

նման տեղիները [Սուրբ] Գրքից». նրանց կասենք, որ ոչ թէ մերժում ենք ներքեւինների հնազանդութիւնը վերեւինների նկատմամբ, այլ միայն՝ տասներկուսի առաքեալների՝ [միմեանց նկատմամբ հնազանդութիւնը], որոնք ունեն միեւնոյն իշխանութիւնը եւ պատիւը»:

Իր ընկերների հետ բաւական յուզուած՝ լիկաթն ասաց. «Այդ ինչպէ՞ս է, որ Պետրոսն առաքեալների գլուխը չէ»:

Պատասխան տուեցի եւ ասացի. «Չգիտեմ, թէ դա ինչպէս է եղել»:

Այն ժամանակ լիկաթն ասաց. «Ինչպէ՞ս չգիտես, երբ համբառնալուց յետոյ նրան Քրիստոսը գլուխ կարգեց»:

Եւ ես ասացի. «Այդ մասին բնաւ տեղեակ չեմ, այն էլ՝ երկու պատճառով. կամ որպէս մարդ մոռացել եմ [Սուրբ Գիրքն] ընթերցելուց յետոյ, կամ էլ մեզ չեն հասել [ակնարկածդ] գրութիւնները: Սակայն ինձ համար մեծ պարծանք կլինի այդ խնդրում աշակերտել Հռոմի Եկեղեցուն: Աղաչում եմ, սովորեցրէ՛ք ինձ, սակայն դուրս չգա՛ք այս չորս Աւետարաններից եւ Գործք առաքելոցից, Պօղոս առաքեալի եւ Ընդհանրական թղթերից, որոնց կհնազանդուենք, ինչպէս Աստուծոյ հրամաններին»:

[Այն ժամանակ] լիկաթը հետեւեալ օրինակը բերեց. «Երբ ձեր թագաւորը դուրս է գալիս երկրից, արդեօք որեւէ մէկին իր փոխարէն գլխաւոր չի՞ նշանակում»:

Ես պատասխանեցի. «Այո՛»:

Ու նա շարունակեց. «Իսկ նրան հաւասարապէս հնազանդո՞ւմ էք»:

Եւ ասացի. «Նրան հնազանդւում ենք՝ ոչ թէ առաջին պատիւն ունենալու համար, այլ այնքանով, որքան իշխանութիւն է տալիս նրան թագաւորը»:

Իսկ նա ասաց. «Այդպէս էլ բոլոր պատրիարքները եւ կաթողիկոսները եւ արքեպիսկոպոսները եւ եպիսկոպոսները պարտաւոր են հնազանդուել Պետրոսի Աթոռին՝ որպէս գլխաւորի»: Եւ քանի որ յաճախ էր այդ շարքում յիշատակում [մեր] կաթողիկոսին, շատ ընդդիմախօսեցի, իսկ [այդ խնդրին տուած] պատասխանները յետոյ կպատմենք ձեզ:

Ապա այն խնդրի[1] մասին ասացի. «Եթէ ցոյց տաք առաքելական մատեաններից, թէ [այս աշխարհից] եղնելիս Քրիստոս տասներկուսի գլուխ կարգեց Պետրոսին, ապա կհամաձայնենք, քանի որ Նրա ծառաներն ենք: Սակայն մենք էլ անտեղեակ չենք Փրկչի ելքին [այս աշխարհից] ըստ այն [խօսքի], թէ՝ «Ելնում եմ ես Իմ Հօր մօտ»[2], քանզի երկու ելք ունեցաւ [Փրկիչը]. առաջինը՝ զօրութեամբ, երբ պատրաստւում էր կամաւոր չարչարանքներով ելնելու մահուան՝ ասելով. «Գնում եմ Ինձ Առաքողի մօտ, իսկ Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, Որին Իմ անունով կառաքի Հայրը, Նա կգայ եւ ձեզ կուսուցանի ամէն բան եւ կյիշեցնի ձեզ այն, ինչ ասացի ձեզ»[3]:

Իսկ երկրորդ [ելքի] եւ իսկապէս համբարձման մասին է պատմում Ղուկասը, թէ՝ «Այն ժամանակ բացեց նրանց աչքերը եւ ասաց. «Դուք էք կատարուածի վկաները, որի մասին նախօրօք ասել էի: Եւ ահա, ձեզ եմ ուղարկում Իմ Հօր խոստումը, ու դուք նստեցէ՛ք Երուսաղէմ քաղաքում, մինչեւ երկնքից զօրութեամբ զգեստաւորուէք»: Տարաւ նրանց մինչեւ Բեթանիա եւ, Իր ձեռքերը բարձրացնելով, օրհնեց նրանց եւ մինչ օրհնում էր նրանց, բաժանուեց նրանցից եւ երկինք էր բարձրանում, իսկ նրանք երկրպագելով վերադարձան Երուսաղէմ»[4]: Եւ այս բանում առաւելապէս ցոյց տուեց [նրանց] համապատասխանութիւնը, քանի որ ձեռնադրեց նրանց եւ օրհնեց միանման եւ Իրենից յետոյ նրանց համար ապաստան պատրաստեց Սուրբ Հոգու մէջ եւ ոչ թէ՝ Պետրոսի. արդ, որտե՞ղ է, որ [Նա] կարգում է նրան տասներկուսի գլուխ»:

Կրկին հարցրին. «Ուրեմն Պետրոսն առաքեալների գլուխը չէ՞», եւ [այս անգամ] շատ կրկնելով, որպէսզի ուրանամ, որ չարախօսեն իմ մասին՝ որպէս հերետիկոսի:

Եւ ասացի. «Չեմ կարող ասել՝ այո կամ ոչ, քանի որ երկկողմանի էր վտանգը, քանզի ինչպէ՞ս ասեմ՝ [գլուխը] չէ, երբ այդ հակառակ է Հռոմի Եկեղեցուն. եւ ինչպէ՞ս կարող եմ ասել, թէ [գլուխն] է, երբ [այդ մասին] չեմ ընթերցել Նոր Կտակարանում»:

1 Նկատի ունի Պետրոսի նախապատուութեան մասին տրուած հարցը:
2 Տե՛ս Յովհ. Ի 17:
3 Տե՛ս Յովհ. ԺԴ 24-26:
4 Տե՛ս Ղուկ. ԻԴ 45, 48-52:

Եւ նրանք ասացին. «Մի՞թէ գրուած չէ, թէ՝ «Դու վէմ ես»[1]» (ինչ վերաբերում է վէմին, իր տեղում կանդրադառնանք):

Դրան հակադրուելով՝ ասացի. «Այլ բան է [նշանակում] վէմը, այլ բան՝ գլուխը: Գլուխ խոստացաք [ցոյց տալ], նշէ՛ք տեղը, եւ ես կընդունեմ»: Իսկ երբ չկարողացան [Սուրբ] Գրքից ցոյց տալ, փորձեցին խօսքի վրայ բռնել:

Ասացին. «Դու ինքդ, վարդապետ լինելով, ինչպէ՞ս էիր քարոզում»:

Պատասխանեցի. «Ինչպէս կխօսէի Տիրոջ Դատաստանին ներկայանալիս կամ պատասխանատուութեան կանչուելիս, ուստի հարկ է ճշմարիտն ասել. ես իմ քարոզի մէջ գլխաւոր էի համարում Պետրոսին եւ Պողոսին»:

Լիկաթն ասաց. «Պողոսը գլուխ չէ, քանի որ մէկ Եկեղեցուն չի վայելում երկու գլուխ»:

Եւ ես ասացի. «Ճշմարիտ է այդ, քանի որ Եկեղեցու ճշմարիտ գլուխը Քրիստոս է, ինչպէս ասում է առաքեալը եփեսացիներին ուղղած [թղթում], թէ՝ «Յարութիւն տուեց Քրիստոսին եւ Նրան որպէս գլուխ հաստատեց Եկեղեցու ողջ կառոյցի վրայ, որը Նրա մարմինն է՝ լրումը [Նրա], Ով ամէն ինչ լցնում է ամէն բանի մէջ»[2]: Սակայն չի ասում, թէ Եկեղեցին Պետրոսի մարմինն է, եւ Պետրոսն է այն լցնողը»:

Եւ այս հարցի շուրջ բազմաթիւ վիճաբանութիւններ եղան, մինչեւ որ լսողները սկսեցին ձանձրանալ, քանի որ կրկնում էին, թէ՝ «Դու ինչպէ՞ս էիր ասում, որ Պետրոսը գլուխ է»:

Իսկ ես ամփոփեցի. «Ինչպէս Յովհաննէսը՝ Եփեսոսի, իսկ Թովմասը՝ Հնդիկների, այնպէս էլ Բարդողիմէոսը հայերի [առաքեալն] է, [այդպէս] էլ՝ միւսները»:

Իսկ նրանք հարցրին. «Մի՞թէ այդպէս է, եւ չկա՞յ բոլորի գլուխ»:

Ես պատասխանեցի. «Բոլորի գլուխը Քրիստոս է, ինչպէս ասում է Պողոսը նրանց, թէ՝ «Կնոջ գլուխը տղամարդն է, ինչպէս եւ Քրիս-

1 Մատթ. ԺԶ 18
2 Տե՛ս Եփես. Ա 20, 22-23:

տոս Եկեղեցու գլուխն է, եւ Ինքն է մարմնի [այսինքն՝ Եկեղեցու] փրկիչը»[1]: Եւ մեզ վայել չէ հրաժարուել մեր Գլխի՝ Քրիստոսի փրկութիւնից»:

Իսկ նրանք աւելացրին. «Քրիստոս գլուխ է երկնքում, իսկ Պետրոսը՝ երկրի վրայ»:

Ես ասացի. «Դրան նոյնպէս Պօղոսը պատասխան է տալիս Կողոսացիների թղթում, թէ՝ «Նրանով հաստատուեց ամէն ինչ երկնքում եւ երկրի վրայ, ինչ որ երեւում է եւ ինչ որ չի երեւում՝ թէ՛ աթոռները, թէ՛ տէրութիւնները, թէ՛ պետութիւնները եւ թէ՛ իշխանութիւնները, ամէն ինչ Նրանով եւ Նրա համար ստեղծուեց: [Նա ամէն բանից առաջ է], եւ ամէն ինչ Նրանով է հաստատ կս նգնած: Եւ Նա է գլուխը Եկեղեցու մարմնի, որ սկիզբն է, անդրանիկը՝ մեռելներից, որպէսզի Ինքն ամէն ինչի մէջ առաջինը լինի»[2]: Տեսնո՞ւմ ես, թէ մի գլխով ինչպէս է ամբողջացնում երկնային եւ երկրային Եկեղեցին եւ ժխտում [Պետրոսի մասին] այդ կարծիքը»:

Եւ արդ, ինչպէս խոստացանք նախապէս պատմել, սկսենք հակաճառութիւններն այն խօսքերի շուրջ, որոնք մեր դէմ են բերում աւետարանիչներից, եւ որոնցով կարծում են, թէ իրենք մեծ են:

ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

Լիկաթն ասաց. «Միայն Պետրոսին Տէրն ասաց, թէ՝ «Դու վէմ ես, եւ այդ վէմի վրայ կշինեմ Իմ Եկեղեցին»[3]:

Պատասխանեցի՝ ասելով. «Նախ՝ վէմը, որի մասին ասում էք, որի վրայ պատրաստում է շինութիւնը, ըստ ճեռակերտ ու նիւթական օրինակի գլուխ չի նշանակում, այլ միշտ դէպի ոտքն է ցոյց տալիս [այսինքն՝ ստորին մասը], ինչպէս որ հրամայում է Ինքը՝ Քրիստոս, թէ՝ «Ով լսում եւ կատարում է Իմ խօսքերը, նման է իմաստուն մարդու, որ իր տունը կառուցեց վէմի վրայ, քանի որ թափուեցին անձրեւները, փչեցին հողմերը, եւ յորդեցին գետերն ու հարուածեցին

1 Եփես. Ե 23
2 Տե՛ս Կող. Ա 16-18:
3 Մատթ. ԺԶ 18

տանը, իսկ [այն] չկործանուեց, որովհետեւ վէմի վրայ էր հաստատուած»[1]:

Տեսնո՞ւմ ես, թէ ինչպիսի վկայութեամբ է հաստատում, որ վէմը գլուխ չէ, այլ ստորին մաս:

Այլ միտք

[Պէտք է ասել], որ վէմ անունը նրան նոր չտրուեց որպէս դաւանութեան մրցանակ, այլ յիշեցնում է նախկին [անունը], որով [Տիրոջ կողմից] կանչուելիս անուանուեց, ինչպէս եւ գրում է Մատթէոսը. «Երբ Յիսուսն անցնում էր գալիլեացիների ծովի ափով, տեսաւ երկու եղբայրների՝ Սիմոնին, որը Վէմ էր անուանւում»[2]: Նոյնն է վկայում նաեւ Յովհաննէսը. «Այնտեղ էր երկուսից մէկը՝ Սիմոն Վէմի եղբայրը»[3]: Ուրեմն Վէմ անունը նախքան այդ ունէր Պետրոսը, ինչպէս ցոյց տրուեց, քանի որ չասաց, թէ՝ դո՛ւ կլինես վէմ, այլ թէ՝ դու վէմ ես, այն իմաստով, թէ՝ դու ինքդ վէմ ես: Յայտնի է նաեւ, որ տասնմէկին եւս նոյն տեղում վէմ կոչեց, քանզի չասաց, թէ՝ քեզ վրայ կկառուցեմ Իմ Եկեղեցին, այլ թէ՝ այդ վէմի վրայ կկառուցեմ, մօտը եղողներին ցոյց տալով, քանի որ Եկեղեցու հիմքի վէմեր են նաեւ միւսները, ինչպէս այդ մասին վկայում է Եսայիասը՝ Աստուծոյ առաջ ասելով. «Ահա Քո քարերը պատրաստել եմ կարկեհանից եւ Քո հիմքերը՝ շափիւղայից եւ պարիսպ կշարեմ Քո շուրջ ընտիր, թանկարժէք քարերից, նաեւ՝ Աստծուց խրատուած Քո որդիներին»[4]:

Տեսնո՞ւմ ես, թէ ինչպէս է մատնանշում տասներկուսին, որոնց Տէրն ընտրեց: Իսկ ովքե՞ր են խրատուած որդիները, եթէ ոչ՝ [նրանք], ովքեր խրատուեցին Բանն Աստծուց: Եւ ասում է Դաւիթը. «Նրա հիմքերն Իր սուրբ Լեռան մէջ են»[5]: Լեռ է անուանում Եկեղեցին՝ ըստ այն [խօսքի], թէ՝ «Տէ՛ր, ո՞վ կկանգնի Քո խորանում կամ ո՞վ կբնակուի Քո սուրբ Լեռան վրայ»[6]: Եւ ոչ միայն տասներկու [առաքեալներն] են Եկեղեցու հիմքը, այլ նաեւ մարգարէները, քանի որ նրանք

1 Տե՛ս Մատթ. Է 24-25:
2 Հմմտ. Մատթ. Դ 18:
3 Տե՛ս Յովհ. Ա 40, հմմտ. Յովհ. Զ 8:
4 Տե՛ս Եսայի ԾԴ 11-13:
5 Սաղմ. ՁՁ 2
6 Սաղմ. ԺԴ 1

վաստակեցին, իսկ առաքեալները նրանց վաստակի մէջ մտան, որ հաւասարապէս վայելեն՝ ըստ Տիրոջ [ասածի]: Եւ Պօղոսը, որ Քրիստոսի անունից էր խօսում, հաստատում է այս [խօսքերը], քանի որ եփեսացիներին ուղղած թղթում իրաւացիօրէն վկայում է՝ ասելով. «Ապա ուրեմն օտար եւ պանդուխտ չէք, այլ համաքաղաքացի էք սուրբերին եւ Աստուծոյ ընտանիքի [անդամներ] էք, որը կառուցուած է առաքեալների եւ մարգարէների հիմքի վրայ, որի անկիւնաքարն է Յիսուս Քրիստոս: Նրա վրայ, ողջ կառոյցը շաղկապուելով եւ յարմարուելով, Տիրոջով վերածւում է սուրբ Տաճարի»[1]: Ահա, եղբայրնե՛ր, ակնյայտ է, որ Պետրոսը որեւէ առաւելութիւն չունի Վէմ անուանուելու շնորհիվ, այլ Եկեղեցու հիմքում հաւասար է բոլոր առաքեալներին եւ մարգարէներին, որի գլուխը Քրիստոս է, եւ ոչ թէ՝ նա:

Այլ պատասխան

Դարձեալ՝ Քրիստոս դաւանութիւնն է վէմ կոչում, Ում դաւանեց Պետրոսը՝ ասելով. «Դու ես Քրիստոս՝ Աստուծոյ Որդին»[2] ըստ կանխասացութեան Դանիէլի, որ ասում է. «Տեսնում էի, եւ ահա վէմն առանց ձեռքի հատուեց լեռից»[3]: Եւ Պօղոսն ասում է, թէ՝ «Վէմն Ինքը՝ Քրիստոս էր»[4]: Դրա համար էլ Տէրն ասում է. «Այդ վէմի, (այսինքն՝ այդ դաւանութեան վրայ) կշինեմ Իմ Եկեղեցին»[5]: Քանզի [տասնմէկ [առաքեալները] Քրիստոսին խոստովանել էին Պետրոսից առաջ. «Եւ գիշերուայ ժամը չորսին ծովի վրայով գալիս էր նրանց մօտ, եւ աշակերտներն ահից աղաղակ բարձրացրին: Իսկ Յիսուսը խօսեց եւ նրանց ասաց. «Մի՛ երկնչէք, ես եմ»: Պետրոսն ասաց. «Տէ՛ր, եթէ Դու ես, հրամայի՛ր, որ գամ Քեզ մօտ». եւ ասաց՝ ե՛կ: Իսկ երբ գնաց, պիտի խեղդուէր, եւ ձեռքը մեկնեց նրան: Եւ երբ ելաւ նաւը, Իր հետ ունենալով Պետրոսին, հողմը հանդարտուեց: Նաւում եղողները մօտեցան, երկրպագեցին Նրան եւ ասացին. «Արդարեւ, Աստուծոյ Որդին ես Դու»[6]. իսկ Պետրոսը նրանց հետ չէր: Ուստի

1 Տե՛ս Եփես. Բ 19-21:
2 Մատթ. ԺԶ 16
3 Տե՛ս Դան. Բ 45:
4 Ա Կորնթ. Ժ 4
5 Տե՛ս Մատթ. ԺԶ 18:
6 Տե՛ս Մատթ. ԺԴ 27-33:

Հայրը Որդու հարցումով մղեց նրան դաւանելու [Որդուն], որպէսզի այդ բանում տասնմէկից ետ չմնայ»:

Լիկաթն ասաց. «Ասածիդ համաձայն՝ Հա՞յրը մղեց Պետրոսին»:

Որին էլ պատասխանեցի, թէ՝ «Բոլորին էլ Հայրն է մղում՝ ըստ Տիրոջ խօսքի, թէ՝ «Ոչ ոք չի [կարող] գալ Ինձ մօտ, եթէ Իմ Հայրը չձգի նրան»[1]: Իսկ Յովհաննէսն [ասաց], թէ՝ «Ով ուղարկեց Ինձ, Նա ասաց, թէ Ում վրայ կտեսնես Հոգին, Նա է... Եւ մենք տեսանք եւ վկայում ենք, թէ սա է Աստուծոյ Որդին»[2]: Եւ Հայրն է, որ ամէնուր յայտնում է Իր Որդուն»:

(շարունակելի)

1 Տե՛ս Յովհ. Զ 44:
2 Տե՛ս Յովհ. Ա 32-34

ԴԱՒԻԹ ՔՈԲԱՅՐԵՑԻՆ ԵՒ ՆՐԱ «ՊԱՏՃԱՌՆԵՐԸ»

1281 թուականին Բարսեղ Մշակավանցին Հաղբատից բերած հեղինակային ինքնագրից «աստուածազարդ ոսքունոյն եւ անյաղթ վարժապետի»՝ Ներսէս Տարօնացու խնդրանքով ընդօրինակում է Դաւիթ Քոբայրեցու «Մեկնութիւն Եսայեայ» աշխատութիւնը եւ յիշատակարանում ասում. «**Գրեցաւ սա ի յաւրինակէ մեծիմաստ եւ կորովաբան վարդապետին Դաւթա[յ], որ է հանգիստ անուն ի գերահռչակ սուրբ ուխտն Հաղբատ, եւ մականուն Քոփերեցի կոչեն վասն ծնաւղացն անտի լինելոյ եւ նոյն ինքն անտի ծննդեամբ**»[1]:

Կարճառօտ այս տեղեկանքը միանգամայն ստուգելի կենսագրական իրողութիւններ է հաղորդում. Հաղբատի զանգակատան առջեւ, Յովհաննէս Երզնկացու գերեզմանի կողքին, պահպանուել է Դաւթի տապանաքարը՝ «**Հաւր մերոյ հոգեւորի՝ Դաւթա[յ] վարդապետի է տապանս: Ցիշեցէք ի Տէր սուրբս**» գրութեամբ[2]: Ծննդեամբ Քոբայրեցի (Քոփերեցի) լինելը եւս հաւաստի է, քանի որ այդ անունը կրող մենաստանի մօտակայքում բնակավայր կայ[3]: Ինչ վերաբերում է «մեծիմաստ եւ կորովաբան վարդապետ» որակումին, ապա այդ ճանաչումի ապացոյցներ են ԺԲ-ԺԳ դարերի մատենագիրների երկերում եւ օժանդակ աղբիւրներում նրան առնչուող վկայութիւնները: 1195 թ. Հաղբատում «Ճառք եւ մեկնութիւն համաբարբառ Աւետարանաց Եփրեմի» ընդօրինակող Խաչատուր գրիչը գաղափար օրինակը գտնում է «առ մեծարգի եւ իմաստուն վարդապետին իմոյ Դաւթի»՝ քանիցս կրկնելով այդ պարագան[4]: Ի դէպ, Դաւթի անունն

1 «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», ԺԳ դար, կազմ. **Ա. Ս. Մաթեւոսեանց**, Երեւան, 1984, էջ 518: Գրքի անձնանունների ցանկում Դաւիթ Քոբայրեցին չի յիշուած:

2 Տե՛ս **Կարո Ղաֆադարեանց**, Հաղբատ, 1963, էջ 234:

3 Առաւել հանգամանօրէն տե՛ս **Պարոյր Մուրադեանց**, Հայաստանի վրացերէն արձանագրութիւնները, Երեւան, 1977, էջ 153-189:

4 «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ե-ԺԲ դարեր, աշխատ. **Ա. Ս. Մաթեւոսեանի**, Երեւան, 1988, էջ 287: Թերեւս Ղ. Ալիշանի երկմտանքի ազդեցութեամբ է (տե՛ս «Հայապատում», Բ, էջ 335-336), որ Դաւիթն այստեղ (էջ 352) կոչուած է «Հաղբատեցի, մեկնիչ», մինչդեռ Ն. Ակինեանը վաղուց հաստատել է նրա նոյնանձնութիւնը Քոբայրեցուն (**Ն. Ն. Ակինեան**, Մատենագրական հետազօտութիւններ, հ. Ա, Վիեննա, 1922, էջ 46, ծան. 1):

առաջինն է յիշատակում Վարդան Հաղբատեցու մահուանից յետոյ սոյն մենաստանում գործող վարդապետաց շարքում՝ «ի վարդապետութեանն Դաւթի, Պետրոսի, Իգնատիոսի»: Հաղբատի միաբանութիւնից ճիշտ այդ չորս անձանց ստորագրութիւնն է դրուած Գրիգոր Տղայի հաստատագրուած եւ բազում յանդիմանութիւններ յարուցած «Վարդապետաց Հայոց Հիւսիսային կողմանց» թղթի տակ[1], որ գրուած պիտի լինի 1179 թ. Հոռոմկլայի ժողովի մերձաւոր շրջանում[2]: Այդ թղթի արձագանքը լսելի է նոյնիսկ տարիներ անց՝ 1194-1195 թթ. Ներսէս Լամբրոնացու հեղինակած «Թուղթ առ Լեւոն արքայ» երկում. «Զանեցուցն պտուղն դուք էք լսեր եւ զՔորոյ գետոյն, եւ որ անդ Տուտեորդին եւ Քոբարեցին եւ այլքն իւրեանց տեսողքն»[3]:

Որ Դաւիթ Քոբայրեցին չի քաջալերել զիջումներով եկեղեցական միութեան հասնելու ձեռնարկումները եւ «Հայոց Հիւսիսային կողմանց» վարդապետների հետ ընդդիմացել է ոչ միայն Կիլիկեան թեւին, այլ նոյնիսկ Զաքարիա Ամիրսպասալարի ստիպմունքին, որոշակի է Կիրակոս Գանձակեցու վկայութիւններից: «Վրանում պատարագ մատուցանելու» օրինաւոր արտօնում ստանալու համար զօրավարը Լոռէում եկեղեցական ժողով է հրաւիրում, որին մասնակցում են Հաղբատի, Անիի, Բջնիի, Դուինի, Կարսի եւ «այլք, որք դիպեցան» եպիսկոպոսները, ինչպէս նաեւ «վարդապետք երեւելիք Մխիթար, որ Գոշն կոչիւր..., Իգնատիոս, Վարդան, **Դաւիթ Քոբայրեցին ի Հաղբատայ...**»[4]: Քոբայրեցին հազիւ թէ ժողովի նպատակը հաւանող խմբում լինէր, քանի որ տարիներ առաջ Տղայի հաստատագրած թղթում նա արդէն բացայայտել էր իր դիրքորոշումը դաւանական-ծիսական խնդիրներում: Հարկաւ ենթադրելի է նրա մասնակցութիւնը նոյն զօրավարի պահանջով 1207 թ. Ծննդեան տօնի նախօրէին Անիում հրաւիրուած ժողովին: Գանձակեցին այլեւս չի թուարկում ժողովականներին, բայց յիշեցնում է, որ նրանք Լոռէի ժողովի մասնակիցներն էին

1 «Ընդհանրական թուղթ սրբոյն Ներսիսի Շնորհալոյ», Երուսաղէմ, 1871, էջ 308

2 Ի լրացումն տե՛ս **Գրիգոր Տղայ**, Բանաստեղծութիւններ եւ պոեմներ, աշխատ. **Ա. Ծ. Մնացականեանի**, Երեւան, 1972, էջ 50-52:

3 «Ներսիսի Լամբրոնացւոյ Ատենաբանութիւն եւ թուղթք եւ ճառք», Վենետիկ, 1838, էջ 218

4 **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, աշխատ. **Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի**, Երեւան, 1961, էջ 171

եւ այլք. «եւ ժողովեցան վերոգրեալ եպիսկոպոսքն եւ վարդապետքն եւ եւս յոլովք»[1]:

Այնուամենայնիւ պիտի կարծել, որ Դաւիթ Քոբայրեցին յիշեալ ժողովներում արծարծուող հարցերում, Մխիթար Գոշի հետ միասին, ծայրայեղ պահպանողական դիրքորոշում ունեցողների խմբում չէր: Այդ է յուշում մասնաւորապէս այն պարագան, որ Գրիգոր Տղայի հետ վէճը շարունակողը Սանահնի առաջնորդ Գրիգոր Տուտեորդին էր, եւ ապա՝ 1178 թ. իր ինքնագիր յիշատակարանում, ուր Քոբայրեցին պատմում է Գրիգոր Աստուածաբանի ճառախմբերի պատճառներն ու մեկնութիւնները գրելու պարագաների մասին, ակնածութեամբ է խօսում կիլիկեան հայրերի բանիմացութեան մասին: Այստեղ կարդում ենք. «Յոքնախոնջ ջանիւ ի յոլովից քննեալ իմաստնոյ զգիրսս զայսոսիկ գեղձմամբ սրտի ի գիւտս ճշմարտին մտաց եւ ի վերջէ հանդիպեալ իմ միւսոյ իմաստնացելոյ ի կրթութիւն, որ ի մէնջ իսկ սորին ըղձիւ ընթացեալ էր մերձ ի սահմանս Ասորւոց եւ Կիւղիկեցւոց Վարդան մականաւանելոյ, որոյ յոլով ժամանակս ի սակս քննութեան դեգերեալ առ դրան մեծի իմաստնոյ տեառն Ներսէսի Հայոց վերադիտողի, յորմէ մինչ եհասն առ մեզ՝ վերստին տեղեկացեալ իմ առ ի հաստատութիւն եւ ի լրումն առաջնոյն կրթութեանց, վստահ եղեալ հաւանութեամբ նորին եւ այլոցս իմաստնոց, ձեռն ի գործ արկի ի մասնաւորս տարացոյց մեկնութեան գրոցս երկոցունց մեծին սոփեստոսի Գրիգորի Աստուածաբանի...»[2]:

Մէկ այլ յիշատակարանից պարզւում է, որ Գրիգոր Ապիրատի կաթողիկոսութեան (1194-1203) եւ Հաղբատի առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոսի (1198-1205) օրօք, ուրեմն 1198-1203 թուականների միջոցին, Դաւիթը ճանապարհորդել է Կիլիկիա եւ կաթողիկոսից ստացել Յովհաննու Աւետարանի մեկնութիւնը, ապա այն նուիրել Հաղբատի առաջնորդին[3]:

Կարծում ենք՝ այս իրողութիւնները բաւարար ապացոյց են «հիւսիսային կողմանց» վարդապետների եւ կիլիկեան հայրերի միջեւ

1 Նոյն տեղում, էջ 174

2 «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ե-ԺԲ դարեր, էջ 222

3 Տե՛ս **Գ. Զարբհանալեան**, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 303: Հմմտ. **Ն. Ակինեան**, նշ. աշխ., էջ 79-80:

շարունակուող համագործակցութեան եւ առաւել եւս՝ Քոբայրեցու աւանդապահութեան չափաւորութեան վկայութիւն[1]:

Այսպիսով, Դաւիթ Քոբայրեցին Օրբէլեան տոհմի ապստամբութեան ժամանակ (1177 թ.) արդէն հասուն եւ փորձառու մատենագիր էր, հեղինակ Աստուածաբանի ճառերի մեկնութեան ու պատճառների, մանաւանդ՝ այդ ապստամբութեան հանգամանքների հմուտ վերլուծող եւ ժամանակագիր: Ուստի անհաւանական չէ 1150 թուականին ծնուած լինելու Ն. եպս. Պողարեանի հարցական ենթադրութիւնը[2]: Մահուան թուականը յայտնի չէ, պարզ է սակայն, որ այն Լոռէի եւ Անիի ժողովներից յետոյ է, ուրեմն՝ ԺԳ դարի 10-20-ական թուականներին[3]:

Հայագէտներ Ն. Ակինեանը, Լ. Մելիքսեթ-Բեկը եւ Ն. Պողարեանը ճշտել ու կազմել են Դաւիթ Քոբայրեցու անունով պահպանուած երկերի ցանկը[4]: Ամփոփելով առ այսօր յայտնին՝ կունենանք.

1. **Մեկնութիւն Յոբայ:** Մատենագիտութիւն կազմողներին բնագիրն անծանօթ է, սակայն նրա գոյութիւնը ենթադրւում է Վանական վարդապետի նոյնանուն մեկնութեան մէջ եղած քաղուածներից: Մասնաւորապէս այդ է թելադրում Գ. Զարբհանալեանի վկայակոչութիւնը[5]:

2. **Մեկնութիւն Եսայեայ:** Գրուած է Պետրոս վրդ. Հաղբատեցու յորդորով, պահպանուել է 1281 թ. ընդօրինակութեամբ՝ կատարուած հեղինակային ինքնագից[6]:

1 Ուրիշ առիթով արդէն դիտարկել ենք, որ հայոց կրթականութեան այդ երկու թեւերի խիստ հակադրումը միմեանց արդարացուած չէ (տե՛ս «Գանձասար», Դ, Երեւան, 1993, էջ 95-188):

2 **Նորայր եպս. Պողարեան**, Հայ գրողներ, Ե-ԺԷ դարեր, Երուսաղէմ, 1971, էջ 365

3 Նորայր եպս. Պողարեանը, դարձեալ հարցականով, 1220-ին է դնում:

4 **Հ. Ն. Ակինեան**, նշ. աշխ., էջ 48-68. **Ն. Պողարեան**, նշ. աշխ., էջ 266-267. **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վարդապետք Հայոց Հիւսիսային կողմանց եւ նրանց ինքնութիւնը, Տփղիս, 1928, էջ 191-196 (վրացերէն)

5 **Գ. Զարբհանալեան**, Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 734

6 Նկարագրութիւնը տե՛ս **Ն. եպս. Պողարեան**, Մայր ցուցակ ձեռագրաց..., Զ, էջ 89-93: Յիշատակարանի վերատպութիւնը տե՛ս «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», ԺԳ դար, էջ 518-520: «Սուրբ Գրոց համառօտողաց» ցանկում կարդում ենք. «ԶԵսային՝ Դաւիթ քահանայն, յետոյ՝ Գեւորգ վարդապետ Երզնկացին» (տե՛ս **Ց. Ս. Ամասեան**, Հայկական մատենագիտութիւն, հ. Ա, Երեւան, 1954, էջ LXI):

3. Ներբողեան գովեստի բան ի սքանչելի վկայն Քրիստոսի Յովսէփ պատանի, որ յԱյրարատոյ նահանգէն: Գրուած է Մխիթար Գոշի խնդրանքով 1170 թուականից յետոյ[1]:

4. Պատճառք եւ լուծմունք ճառից Գրիգոր Աստուածաբանի: Պահպանուել է հեղինակային ինքնագրով[2]:

5. Պատճառք ճառից Գրիգորի Նիւսացւոյ: Նախորդի հետ ամփոփուած է նոյն ձեռագրում[3]:

6. Պատճառք գրոց Բարսղի Կեսարացւոյ (իմա՝ «Պահոց գիրք», «Հարցողաց գիրք», «Վեցաւրեայ»): Հնագոյն ընդօրինակութիւնը Գրիգոր Աբասեանի «Գիրք պատճառացում» է[4]:

7. Պատճառք գրոց Փիլոնի: Աւանդուած է նախորդի հետ նոյն ձեռագրում:

8. Պատճառ Սահմանաց գրոց: Աւանդուած է Գ. Աբասեանի «Գիրք պատճառացի» ձեռագրով:

9. Պատճառ Աւագ բարեկենդանին: Քոբայրեցու գրչին պատկանելն անկասկած է նկատում Ն. Ակինեանը՝ ձեռագրի ներկայութիւն ենթադրելով Ս. Ղազարի Մխիթարեան մատենադարանում[5]:

10. Պատճառ Նաւակատեաց Եկեղեցւոյ: Ճանաչելի է Գ. Զարբհանալեանի յղմամբ[6]:

11. Լուծմունք Դիոնեսիոսի գրոց: Քոբայրեցուն է յատկացնում Ն. Պողարեանը՝ հիմք ունենալով «Ի Դաւթէ եւ Ցակոբայ՝ յիմաստուն վարդապետաց» ցուցումը եւ, հաւանաբար, իրենց հաւաքածոյի նոյն՝ N 172 ձեռագրում գտնուելու իրողութիւնը:

1 «Հայոց նոր վկաները», աշխատ. **Ց. Մանանդեանի** եւ **Հ. Աճառեանի**, Վաղարշապատ, 1903, էջ 61-64: Պատուիրատուի՝ Մխիթար Գոշը լինելու հանգամանքը յայտնել է Գ. Տէր-Մկրտչեանը («Արարատ», 1897, էջ 41), երկմտում է Ն. Ակինեանը (նշ. աշխ., էջ 52, ծան.):

2 Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան մատենադարանի (ՄՄ) ձեռ. N 5602: Ցիշատակարանի վերջին հրատ. տե՛ս «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ե-ԺԲ դարեր, էջ 222-225:

3 Ներկայացուած է նաեւ Սրբոց Ցակոբեանց մատենադարանի N 172 եւ Վիեննայի Մխիթարեան մատենադարանի N 47 ձեռագրերով: ՄՄ-ում կայ հինգ ձեռագիր (NN 1879, 1897, 4150, 4765, 5254), որոնց հիմամբ Կիմ Մուրադեանը կազմել է համահաւաք բնագիր:

4 ՄՄ ձեռ. N 1879, նաեւ՝ Սրբոց Ցակոբեանց մատենադարանի ձեռ. N 172, Վիեննայի Մխիթարեան մատենադարանի ձեռ. N 47

5 **Ն. Ակինեան**, նշ. աշխ., էջ 66-67

6 **Գ. Զարբհանալեան**, նշ. աշխ., էջ 781

12. **Որքանութիւն թուոցն նահապետացն եւ առաջնորդացն Իսրայէլի՝ յԱբրահամէ մինչեւ ի վերջին գերութիւնն Երուսաղէմի:** «Հաւաքմունք ի Դաւթայ վարդապետէ Քոբայրեցի կոչեցելոյ» վերտառութիւնը եւ երկու ձեռագրով աւանդուած լինելը հեղինակային պատկանելութեան երաշխիք են[1]:

13. **Ցաղագս պատառման Զատկին:** Ն. Պողարեանի ծանօթութեան համաձայն՝ գրուած է 1197 թուականի մօտ տարիներին, Գրիգոր Տուտեորդու խնդրանքով[2]:

14. **Պատճառ Դաւիթ Փիլիսոփայի ի սուրբ Խաչն Ներբողեանի:** Երկիս ներկայութիւնը հաւաստել է Գ. ա. ք. Աղանեանը՝ Հաղբատի Զառնի կոչուող այրից գտնուած ձեռագրական հատակտորները թուարկելիս[3]:

15. **Գանձք:** Դաւիթ Քոբայրեցին, իբրեւ գանձասաց-տաղասաց, յիշատակուած է Արիստ. Տեկանցի «Հայերգի» առաջաբանում (էջ Ժ): Ակինեանը կասկածում է, բայց չի մերժում[4]:

16. **Ի բանն Մաղաքիայ:** Իբրեւ Դաւիթ քահանայի հեղինակութիւն առկայ է Ս. Ղազարի Մխիթարեան մատենադարանի ԻԱ ճառընտրում (էջ 105): Քանի որ Եսայիայի մեկնութեան մէջ եւս Դաւիթ Քոբայրեցին ներկայանում է «Դաւիթ քահանայ» կոչումով, Ն. Ակինեանի վերագրումը պատճառաբանուած պիտի նկատել[5]:

17. **Թելադրութիւն յԱւետարանն Մատթէի՝ ի պէտս ատենաբանութեան Դաւթի վարդապետի:** Արձանագրուած է Ս. Ղազարի մատենադարանի Զ ճառընտրում (էջ 796): Քոբայրեցուն է յատկացուած Գ. Զարբհանալեանի հիմամբ[6]:

1 Ըստ Ն. Ակինեանի՝ Սեբաստիայի Ս. Նշան վանքի հաւաքածոյ, ձեռ. N 221, էջ 510-525 (տե՛ս **Ն. Ակինեան**, նշ. աշխ., էջ 83): Սակայն յիշեալ ձեռագիրը միանգամայն այլ բովանդակութիւն ունի (տե՛ս **Թորգոմ արքեպս. Գուշակեան**, Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիայ, ՀԱ, 1958, էջ 205-206), Սրբոց Ցակոբեանց մատենադարանի ձեռ. N 743 (տե՛ս **Նորայր եպս. Պողարեան**, Հայ գրողներ, էջ 267, հմմտ. նոյնի՝ Մայր ցուցակ ձեռագրաց..., Գ, Երուսաղէմ, 1968, էջ 190):

2 **Ն. եպս. Պողարեան**, Հայ գրողներ, էջ 367, Սրբոց Ցակոբեանց մատենադարանի ձեռ. N 3614

3 Տե՛ս **Գիւտ ա. ք. Աղանեանց**, Հնից-նորից (հնախօսական ուղեւորութիւն), «Լումայ», 1900, Ա, էջ 252-254, հմմտ. **Ն. Ակինեան**, նշ. աշխ., էջ 81-82:

4 **Ն. Ակինեան**, նշ. աշխ., էջ 80

5 **Ն. Ակինեան**, նշ. աշխ., էջ 50-51

6 **Գ. Զարբհանալեան**, նշ. աշխ., էջ 702. **Ն. Ակինեան**, նշ. աշխ., էջ 51

Այս ցանկը, անշուշտ, վերջնական չէ. ճշգրտումներ կարող են լինել լրացման կամ պակասեցման առումով, սակայն միանգամայն բաւարար է՝ գրիչների տուած «մեծիմաստ եւ կորովաբան, մեծարգի եւ իմաստուն» որակումներն արդարացուած նկատելու համար[1]:

Թուարկուած աշխատութիւնները ժանրային խմբաւորմամբ կարելի է դասակագել հետեւեալ կերպ՝ **մեկնութիւններ** (1, 2, 11), **ներբողներ** (3), **պատճառներ** (4-10), **ժամանակագրութիւններ** (12 եւ 1178 թ՝ յիշատակարան), **գանձեր** (15) եւ **խրատականներ** (16, 17): Քանի դեռ այս աշխատութիւնները, բացառութեամբ «Յովսէփ պատանու ներբողեանի» եւ Գրիգոր Աստուածաբանի ճառերի պատճառների ինքնագիր յիշատակարանի, հրատարակուած եւ ուսումնասիրուած չեն, դժուար պիտի լինի ճանաչել Դաւիթ Քոբայրեցու տեղն ու դերը հայ մատենագրութեան պատմութեան մէջ: Յիշենք սակայն, որ հրատարակուած յիշատակարանը ժամանակագրական, տեղագրական ու պատճառական բազում ճշգրտումներ բերեց հայոց ու վրաց պատմութեան այդ կարեւոր անցուդարձն ուսումնասիրելու համար՝ քանիցս յատուկ քննութեան նիւթ դառնալով[2]: Այնուհետեւ՝ եթէ իսկ պարզուի, որ Քոբայրեցու լուծմունք-մեկնութիւնները ճանաչողական այն կշիռը չունեն, ինչ նրան նախորդած մեկնիչների երկերը՝ տեսական աստուածաբանութեան առումով, ապա վերստին չպիտի մոռանանք, որ Քոբայրեցին հետապնդում է գերազանցապէս ուսուցողական նպատակ՝ միջնորդ դառնալով Եկեղեցու ճանաչուած հայրերի եւ դպրութեան հմտացողների միջեւ: Հէնց այս խնդիրն է, որ նրան մղել է սկզբնաւորող դառնալու մատենագրական մի նոր բնագաւառի՝ **պատճառների** գրութեան: Գրիգոր Աբասեանի «Պատճառաց գրքի» կապակցութեամբ Ց. Տաշեանը վաղուց նկատել է, թէ այն «բովանդակ հայ մատենագրութեան մէջ եզական երեւոյթ մըն է եւ մատենախօսութիւն մը իւր ժամանակին տեսութեանց համաձայն՝ Սուրբ Գրոց եւ Եկեղեցւոյ գլխաւոր վարդապետաց գրութեանց վրայ...»[1]: Եւ այդ «եզական երեւոյթի» փաստական հիմնադիրը Դաւիթ Քոբայրեցին է, որովհետեւ «Պատճառաց գրքի» երկրորդ կէսի (նուրբ գրեանք) մի նշանակալի մասը հէնց նրա գրած պատճառներն են, որ խնամքով հաւաքել, դասդասել ու ժողովածու է մուծել նրա կրտսեր ժամանակակից Գրիգոր Աբասեանը[2]:

Աշխատութիւնների բերուած ցանկից պարզ երեւում է, որ Դաւիթ Քոբայրեցին մասնաւորապէս հետամուտ է հայրախօսական երկերի «պատճառների», ասել է՝ հեղինակային պատկանելութեան, գրութեան շարժառիթների, նպատակների եւ բովանդակութեան խնդիրները քննելուն: Այսպէս օրինակ՝ Քոբայրեցու օրօք գրականութեան մէջ կասկածներ են եղել «Առ Մելիտոս Անտիոքացի» ճառի հեղինակային պատկանելութեան շուրջ, եւ այդ ճառին վերաբերող «պատճառը» նա նուիրել է յիշեալ խնդիրը պարզելուն՝ խորագրում իսկ գրելով. «Պատճառ ճառին, որ առ Մելիտոս Անտիոքացի, զոր ոմանք Գրիգորի Նիւսացւոյ ասեն եւ ոչ Գրիգորի Աստուածաբանի: Այլ ես Աստուածաբանի (sic!) ասեմ, զի թէ չէր սորա, ի սորա գիրքս ոչ էր եդեալ»[3]: Արտաքին նշաններից յետոյ նա անցնում է «ճառի խորհրդին»՝ բովանդակութեան վերլուծութեանը, եւ պարզաբանում նրա արտասանութեան առիթը, որ է Կոստանդնուպոլսի Բ տիեզերաժողովի աւարտին Մելիտոսի յանկարծական մահը. «Եւ ապա հարկ արարեալ Գրիգորի հարքն սուրբ եւ Թէոդոս թագաւորին՝ բանալ զշնորհալից բերանն եւ խաւսել բանս գովութեան վասն ննջեցելոյն, քանզի առաւել ճոխ էր ի բանին դիրս մեծն Գրիգորիոս, որ եւ յայսմ ճառի խաւսել սկսաւ բանս ողոր-

1 Մենք բազմիցս առիթ ենք ունեցել շեշտելու, որ հայոց մատենագրութեան պատմութիւնը միայն «գեղեցիկ գրականութեան» շրջանակներում ամփոփելը ո՛չ արդարացուած է եւ ո՛չ էլ հեռանկարային: Ակադ. Մ. Աբեղեանն այդպէս է վարուել իր «Հայոց հին գրականութեան պատմութիւնը» օր ծերութեան եւ գաղափարական առանձնայատուկ պարագաներում գրելու պատճառով, ուստի, ի շարս բազում այլ մատենագիրների, Դաւիթ Քոբայրեցին եւս նրա գրքում յիշատակուած անգամ չէ: Ցաւօք, մերօրեայ հայոց հին գրականութեան պատմութիւնը շարունակում է հետեւել «գեղեցիկ գրականութեան» պարտադրուած աւանդոյթին՝ յաճախ հետազօտութիւնը փոխարինելով վերարտադրութեամբ ու նկարագրումով:

2 Տե՛ս **Գ. Յովսէփեան**, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, էջ 469-474. **Վ. Յակոբեան**, Դաւիթ Քոբայրեցու յիշատակարանը, Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1952, N 8, էջ 113-120. **Գուրամ Մայսուրաձէ**, Մի հայկական աղբիւր Դեմնա արքայորդու ապստամբութեան մասին, «Վրաստանը Ռուսթաւելու ժամանակ», Թբիլիսի, 1966, էջ 253-266 (վրացերէն). **Պ. Մ. Мурадян**, Об издании и переводе одного отрывка и помятной записи Давида Кобайрского, «Պատմա-բանասիրական հանդէս», 1973, N 2, էջ 183-188. **Հ. Գ. Մարգարեան**, Հիւսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմութեան մի քանի հարցեր, Երեւան, 1980, էջ 175-195:

1 Սրբազան պատարագամատոյցք Հայոց՝ քննութեամբք, նախագիտելեօք եւ ծանօթութեամբք ի **Հ. Յովսէփայ վ. Գաթրճեան**, հրատարակեալ հանդերձ յաւելուածովք ի **Հ. Յակովբոսէ վ. Տաշեան**, Վիեննա, 1897, էջ 178

2 «Պատճառաց գիրքը» հայագիտութեան անհետաձգելի հրատարակելիքներից է: Տարիներ առաջ տողերիս հեղինակի եւ պրոֆ. Ա. Մնացականեանի քաջալերանքով այն հրատարակութեան է պատրաստել Հայաստանի Պատմութեան թանգարանի աշխատակից Գոհար Խաչատրեանը: «Պատճառաց գրքի» եւ նրա կազմողի մասին տե՛ս **Հ. Ն. Ակինեան**, Մատենագրական հետազօտութիւններ, Ա, էջ 1-43:

3 ՄՄ ձեռ. N 1897, էջ 94ա

մագինս եւ ողբերգականս»[1]: Մէկ այլ «պատճառում» («Առ Գրիգոր Նիւսացի՝ մերձ կացելոյ Բարսղի եւ ի վկայսն») Նիւսացու ձեռնադրութեան հանգամանքները ներկայացնելիս, թէ ,ինչու ձեռնադրողը Աստուածաբանն էր եւ ոչ եղբայր Բարսեղ Կեսարացին, Քոբայրեցին ամփոփում է. «Եւ յոմանց ասի, թէ վասն աւագ լինելոյն Նիւսացւոյ պատիւ արարեալ ծերութեանն, վասն այն ի նմանէ (իմա՝ ի Գրիգորէ - Պ. Մ.) էառ զձեռնադրութիւնն: Բայց էր աւրն այն տաւն վկայից, թուի թէ շաբաթ էր աւրն, քանզի այնպէս էր յառաջ կարգեալ ի Նիկիայ, զի շաբաթ աւր ի բոլոր տարին, զատ ի տէրունական տաւնից, զայլն հասարակ մարտիրոսաց տաւնէին, վասն այն ի կատարածի ճառիս յիշէ զմարտիրոսսն, որ վկայեցին վասն Քրիստոսի»[2]:

Հազիւ թէ անհրաժեշտութիւն զգացուի պատճառաբանել այն կարեւորութիւնը, որ ներկայացնում են միջնադարեան այս կարգի նիւթերը, առաւել եւս եթէ դրանք հաւաքական են՝ իբրեւ հայրախօսական մատենագրութեան պատմութիւն, իսկ Քոբայրեցու «Պատճառները» ճիշտ այդպիսին են: Ուստի երեք մեծ կապադովկացիների՝ Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Աստուածաբանի եւ Գրիգոր Նիւսացու գրական ժառանգութեան ուսումնասիրութեանն ու գիտական հրապարակմանը տասնամեակների ամէնօրեայ տքնաջան աշխատանք նուիրած եւ աներկբայելի կարողութիւն ցուցաբերած Կիմ Մուրադեանը չպիտի վարանէր դրանց վերաբերող «Պատճառների» (լուծմունք-մեկնութիւնների) քննութեանն ու հրապարակմանը ձեռնամուխ լինել: Եւ քանի որ Դաւիթ Քոբայրեցու գրական վաստակի նշանակալի մասը յիշեալ երեք հեղինակների ժառանգութեանն է նուիրուած, օրինիբուն ձեռագրեր պրպտող գիտնականը կարելի նկատեց ստանձնել Դաւիթ Քոբայրեցու ողջ ժառանգութեան հրապարակման ոչ դիւրին գործը: Սակայն "Ars longa, vita brevis est" («Արուեստը (գիտութիւնը) երկար է, կեանքը՝ կարճ»), եւ բազում այլ ծրագրումների հետ «Դաւիթ Քոբայրեցու մատենագրութիւնն» էլ կիսաւարտ մնաց[3]: Ինչպէս երեւում է, Բարսեղ

1 Ճառիս մասին տե՛ս Կ. Մ. Մուրադեան, Գրիգոր Նիւսացու «Ի Մելիտոս եպիսկոպոս Անտիոքացի» ճառի հայերէն թարգմանութիւնը եւ Մովսէս Խորենացին, «Պատմա-բանասիրական հանդէս», 1987, N 2, էջ 139-149:

2 ՄՄ ձեռ. N 4150, էջ 9ա-10ա: Վկայակոչուած երկու «Պատճառը», ի թիւս այլոց, հրատարակութեան է պատրաստել Կիմ Մուրադեանը: Նպատակայարմար նկատուեց դրանք հրատարակել ստորեւ՝ իբրեւ «Ցաւելուած»:

3 Կիմ Մուրադեանի մասին եւ աշխատութիւնների մատենագրութիւնը տե՛ս «Լրաբեր» հաս. գիտ., 1971, N 5, էջ 173-175. «Պատմա-բանասիրական հանդէս», 1992, N 1, էջ 236. «Էջմիածին», 1992, Ա-Գ, էջ 99-101, "REArm. t. XXXIII, Paris, 1992, p. 627-631. «Գրական թերթ», 1992, 16 հոկտ.:

կեսարացու «Պահոց գիրքը» գիտական հրատարակութեան պատրաստելիս աշխատասիրողը նկատի է առել այդ գրքի ճառերին վերաբերող «պատճառների» ընձեռած նիւթը եւս, ուստի դրանք նոյնպէս ի հրատարակութիւն է ընդօրինակել-հաւաքել՝ ըստ առ այսօր յայտնի հնագոյն եւ լաւագոյն ձեռագրի[1]:

Առաջին իսկ ճառի ներածական «Պատճառից» յայտնի է դառնում, որ Քոբայրեցին լաւածանօթ է ս. Բարսեղի՝ հայերէնով առկայ ժառանգութեանը. «Ասաց սա (իմա՝ ս. Բարսեղը) երիս գիրս. առաջին՝ զայս, որ առաջին եդեալս է (իմա՝ **Գիրք պահոց**), ասաց յաւուրս աղուհացիցն յառաջին շաբաթն եւ զայլ ճառսն, որ ի սա շարայարեալ են, յայլ եւ յայլ ժամու ասացաւ: Եւ յետ այսր մատենի ասաց **զՀարցողացն**՝ յաւուրս Քառասնորդացն մինչեւ զմեծ աւր Յարութեան Տեառն մերոյ: Եւ երրորդ՝ **Վեցաւրէն** յայլում ամի ի զատկի շաբաթուն ասաց, որ եւ յաւարտման նորին գրոցն ինքն վերափոխեցաւ առ Քրիստոս»[2]:

Այս դէպքում էլ Քոբայրեցու հարցադրումն անփոփոխ է՝ ե՞րբ եւ ի՞նչ պարագաներում է գրուել «Պահոց գիրքը». «Բայց չերեւի յումեքէ սա խնդրեալ, թէպէտ եւ ասի յոմանց, թէ որ էր յայն աւուրսն փակակալ եկեղեցւոյն Կեսարու եւ յետոյ եպիսկոպոս տեղոյ ումեմն Պետրոս՝ նորին եղբայր կրտսեր, եւ այլք թէ՝ ժողովրդականքն խնդրեցին: Բայց ոչ է ստոյգ այնոքիկ, այլ ինքն յինքեանէ շարժեալ Հոգւովն ասաց, վասն զի առաջնորդ էր յԱստուծոյ կարգեալ սահմանադրութեան եւ կանոնաց Եկեղեցւոյ եւ տեսանէր զժողովուրդն ստունգանող պատուիրացն Աստուծոյ եւ լուծիչ կանոնական սահմանադրութեան, մանաւանդ յորկորստութիւն եւ ի շուայտութիւն արբեցութենէ թաւալեալ»:

Քոբայրեցու համոզմամբ՝ «պահք զհուր շիջուցանէ, զառիւծուց խնու զբերանս եւ զաւրհաս մահու ի կեանս դարձուցանէ աղաւթից լծակցութեամբ եւ զցասումն սատակման ի թշնամիսն դարձուցանէ», իսկ այս ամենի «զորպիսութիւն ուսցիս ի կարգէ վարդապետութեանս»:

Այլեւս պարզ է, որ «Պատճառի» խորագրում եղած «ասացեալ ի հմտութիւն վարժողաց» մասնաւորեցումը վերաբերում է իր իսկ հեղի-

1 ՄՄ ձեռ. N 1879 («Գիրք պատճառաց», ԺԳ դար)

2 Տե՛ս ստորեւ, էջ 169: Ի դէպ, «Վեցաւրէն» արդէն լոյս է տեսել Կիմ Մուրադեանի քննական հրատարակութեամբ (Երեւան, 1984) եւ արժանացել դրուատական գնահատութեան (միակ բացառութիւնը ամենեցուն ընդդիմախօս Մարտիրոս Մինասեանն է), «Պահոց գրքի» հրատարակութիւնը սիրայօժար ստանձնել է «Գանձասարը» (դարձեալ Կ. Մուրադեանի աշխատասիրութեամբ), իսկ «Հարցողացը» շուտով լոյս կտեսնի ազնիւ օրիորդ եւ սիրելի հայագէտ Գաբրիելա Ոլուճճեանի երկարամեայ եւ քրտնաթոր աշխատասիրութեամբ:

նական պատճառներին եւ ոչ անպայմանօրէն ս. Բարսեղի «Պահոց գրքին»: Վերջինս «որպէս մարգիչք զըմբիշս կրթական արուեստիւ յորդորամիտս պատրաստեն, զնոյն առնէ եւ սուրբս այս, զի յանդիմանական բանիւք, իբրու կծու դեղովք, վարի առ ի բժշկութիւն եւ դասալիք ըմբշացն զտարագրիլն ի պսակացն ասէ եւ ծանրագլխոցն ի գինոյն ասէ, յորո՞ւմ դասու կարգեցից զձեզ ի մուտ պահոցս՝ յարբեցելո՞ցն, թէ՞ ի զգաստիցն»[1]: Հեղինակային խօսքն անմիջական է՝ հասցէագրուած իր աշակերտներին, ապա նաեւ ընթերցողներին: Ընդսմին, շարադրանքի լեզուն ու ոճը պարզ են եւ հասկանալի՝ առօրեան կենդանի բնութագրող բառերով, օրինակներով ու դարձուածքներով համեմուած: Քոբայրեցին ինքն էլ է հետեւում ս. Բարսեղի շարադրանքի եղանակին, ուր, իր իսկ խօսքերով, «թէպէտ սուղ է ի բայս բանազուգից, այլ հզաւր է ի պարփակումն բոլոր առաքինութեան»: Ըստ երեւոյթին, այդ յատկանիշներն ամփոփւում են «մասնաւոր տարացոյց մեկնութիւն» եզրով, որ յիշատակարանում գործածում է Քոբայրեցին:

Ներկայացուող «Պատճառների» փունջը մեր առջեւ բացում է միջնադարեան վարդապետանոցի ուսուցման ծալքերից մէկը՝ բարոյական աստուածաբանութեան աւանդման միջոցն ու եղանակը: «Պատճառներն» ընթերցողին ուղեկցում են դէպի անխառն քրիստոնէական բարոյականութիւն, քաջալերում խոնարհն ու բարին, կրթում ճաշակը, չափաւորում երեւակայութիւնը, զսպում բարկացողին, մերժում մախանքը, զգուշացնում ամենայն խորհրդի ունկնդիր լինելուց, «զի ի խորհրդոց սկսանին սխալանք»:

Հարկաւ, բարոյական եւ բանական այդ իսկ դաստիարակութեան թելադրանքով է, որ Դաւիթ Քոբայրեցու աշակերտներն իրենց ուսուցչին մտաբերում են «մեծիմաստ եւ կորովաբան, մեծարգի եւ իմաստուն» որակումներով: Լատիններն ասում էին. «Երջանիկ է նա, ով ըմբռնում է իրերի պատճառները»: Դաւիթ Քոբայրեցին քրիստոնէական մատենագրութեան պատճառներն ըմբռնող մեր միջնադարեան երջանիկներից մէկն է, նեղ իմաստով՝ թերեւս առաջինը:

Պարոյր Մուրադեան

1 Բնագիրը տե՛ս ստորեւ՝ Պատճառ Բ:

Ընդլայնեալ բնագիր

ԴԱՒԹԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՊԱՏՃԱՌ ՊԱՀՈՅՆ ԳՐՈՅ՝ Ի ԲԱՐՍՂԷ ԿԱՐԳԵԼՈՅՆ՝ ԱՍԱՅԵԱԼ Ի ՀՄՏՈՒԹԻՒՆ ՎԱՐԺՈՂԱՅ[1]

Աշխատասիրութեամբ՝ **Կիմ Մուրադեանի**

[Ա]

Սրբոց արանցն աստուածազգեստից սովորութեամբ առեալ ի միմեանց հոգային հանապազ զԵկեղեցի Քրիստոսի, որպէս եւ սուրբս այս՝ յորդիս եւ ի գլուխս Եկեղեցւոյ Քրիստոսի Բասիլիոս, վասն զի արքեպիսկոպոս էր Գամար/242ա/աց նահանգին եւ խրատէր զամենեսեան աստուածային գիտութեամբն: Ասաց սա երիս գիրս. առաջին՝ զայս, որ առաջի եդեալս է, ասաց յաւուրս աղուհացիցն յառաջին շաբաթն եւ զայլ ճառսն, որ ի սա շարայարեալ են, յայլ եւ յայլ ժամու ասացաւ: Եւ յետ այսր մատենի ասաց զՀարցողացն՝ յաւուրս Քառասնորդացն մինչեւ զմեծ աւր Յարութեան Տեառն մերոյ: Եւ երրորդ՝ Վեցաւրէն, յայլում ամի ի Զատ[կ]ի շաբաթուն ասաց, որ եւ յաւարտման նորին գրոցն ինքն վերափոխեցաւ առ Քրիստոս:

Արդ, յառաջին աւուր Բարեկենդանին, յսկիզբն աղուհացիցն, որ ունի զնշանակ կենացն Ադամայ ի դրախտին, ասաց նա զՓողեցէքն՝

1 Հրատարակւում է ըստ ՄՄ N 1879 գրչագրի (241բ–266ա)՝ նուազագոյն միջամտութեամբ. յաւելուած են բառամիջում բաց թողնուած տառերը (ուղիղ փակագծերում), ա–ից եւ ո–ից յետոյ գրուող յ–երը (առանց փակագծերի), ինչպէս նաեւ որոշ դէպքերում կատարուած է ուղղագրական սրբագրում, այսպէս՝ ամպարիշտ–ամբարիշտ, ամպարհաւաճ–ամբարհաւաճ, խանկարիչք–խանգարիչք, բաղարճ–բաղարջ, հոգիտ–հոգիդ, սկսբունք–սկզբունք:

ճառ յորդորական եւ զգուշաւոր պատուիրան՝ վասն սրբապէս պահ-
պանութեան աստուածագիծ եւ առաքելաւանդ պահոցն ըստ Նիկիա-
կան սահմանադրութեանն, որ սկիզբն եւ երիցագոյն, քան զամենայն
սահմանս զսա ասէ գոլ եւ հարկաւոր բանական բնութեանս: Բայց
չերեւի յումեքէ զսա խնդրեալ, թէպէտ ասի յոմանց, թէ որ էր յայն
աւուրսն փակակալ եկեղեցւոյն Կեսարու եւ յետոյ եպիսկոպոս տեղոյ
ուրեմն Պետրոս՝ նորին եղբայր կրտսեր, եւ այլք թէ՝ ժողովրդականքն
խնդրեցին: Բայց ոչ է ստոյգ այնոքիկ, այլ ինքն յինքեանէ շարժեալ
Հոգւովն ասաց, վասն զի առաջնո/242բ/րդ էր՝ յԱստուծոյ կարգեալ
սահմանադրութեան եւ կանոնաց Եկեղեցւոյ եւ տեսանէր զժողո-
վուրդն ստունգանող պատուիրացն Աստուծոյ եւ լուծիչ կանոնական
սահմանադրութեան, մանաւանդ՝ յորկորստութիւն եւ ի շուայտութիւն
արբեցութենէ թաւալեալ:

Ապա հոգ յանձին կալաւ՝ հաստատել պատուէր հրամանի յոքնա-
կի աւրինակաւք եւ յԱստուծոյ: Եւ աստուածային են այս հրամանք՝
նախ Իսրայէղի գրաւոր աւրինաւք աւանդեալ Մովսէսիւ եւ զայն
յելանելն յԵգիպտոսէ, զոր Փեսէկն տէրունի անուանէին անցարան եւ
ելք եւ զերծումն ի նեղչաց իւրեանց: Եւ զայն պահովքս մրցեալ՝
յասելն զեւթն աւր բաղարջ ընդ եղէգի կերիջիք եւ ի կատարմանն
տաւն ուրախութեան արասջիք եւ զայս յերկուս եւթներեակս:

Առաջին՝ ելիցն տաւն եւ երկրորդն՝ քաւութեան յաշնանային
աւուրսն եւ գլուխ ամսոց զսոսա եբրա[յ]եցիքն անուանէին, այսինքն՝
սկզբունք այլոց ամսոցն ի տարեւորական լրումն: Եւ փող հարկանէին
տաւնսն յայնոսիկ, որոյ հանգունակ եւ Դաւիթ զնոյն պատուիրէ,
զնոյն պատուէր մարգարէական եւ վարդապետս սուրբ հնչէ յԵկեղե-
ցիս Քրիստոսի, եւ նոր ամիս զսա ասէ ոչ ըստ Նիսանայ կամ
Յունուարի եւ Դիոսի, զի յայլ եւ այլ ժամանակս էին սկսմունք սոցա:
Այլ սա պահոցս սկիզբն նորա միասնութեան է, զի եւ յայնս ի /243ա/
նոցայն պահոց պատուիրան ի մարգարէէն աւանդեցաւ, թէպէտ
էլիցն, թէպէտ քաւութեան եւ տաղաւարահարացն:

Սակայն նոցայն՝ աւրինակք եւ այս՝ ճշմարտութիւն, անդ զգա-
ռինան զենուին եւ ապա դառնիճ ընդ եղէգի ուտէին եւ բաղարջ: Իսկ
աստ նախ պահոցս հրամա[յ]եցաւ պատուիրան, զի սրբապէս տէրու-
նեան հաղորդեսցուք Պասեքի, եւ այնպէս, ի կարգ անկեալ, ցուցանէ
զպահոցն որպիսութիւն: Եւ ասէ զնա՝ ի դրախտին աւրինադրեալ եւ
հասակակից մարդկութեանս, եւ թէ՝ զինչ կրեցին այնք, որ անցին
զպատուիրանաւն, որք ջրով սուզեցան եւ որք՝ հրով եւ որք՝ արարա-
ծով որթուն: Նոյնպէս եւ Եսաւ, ելանելովն յանդրանկութենէ, եղեւ

յաւրհնութենէ հաւրն եւ յաւրինակացն ցուցանելով՝ խրատ տայ ոչ
միայն ի կերակրոց պարկեշտանալ, այլ եւ յամենայն բծից, որ հոգ-
ւոյն կամ մարմնոյս մասանց են, զորոց զորպիսութիւն ուսցիս ի կար-
գէ վարդապետութեանս, նաեւ՝ զընդունելութիւն զանազան բարեաց,
զոր պահովք ստացան առաջինքն, միջինք եւ վերջինք: Զի նա
սննդակցեալ մանկութեան՝ առողջ հոգով եւ մարմնով զարգացուցանէ,
զքահանայս կատարէ, զմարգարէ աստուածատես գործէ, զուխտա-
տրս զաւրաւոր ի հանդիսի կացուցանէ եւ արժանաւորացն Աստուծոյ
ընտրանաւ առաքինութեան զորոգայթ /243բ/ թշնամեաց խափանէ:

Պահք զհուր շիջուցանէ, զառիւծուց խնու զբերանս եւ զաւրհաս
մահու ի կեանս դարձուցանէ աղաւթից լծակցութեամբ եւ զցասումն
սատակման ի թշնամիսն դարձուցանէ: Այսպիսեաք եւ այսքանեաք
բարեաւ լի են պնդակազմութիւն պահոց ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր
մեր, Որում փառք յաւիտեանս:

[Բ]

Պատճառ եւ տեսութիւն երկրորդ ճառին ասացեալ

Վարդապետութիւնս, որ կարգեալ է սրբոյն Բարսղի զկնի առա-
ջին ճառին, յարդարիչ է եւ նախագիծ խրատականաց առաջին ճա-
ռին: Քանզի տեսանէր ի սկսման Քառասնորդացն Պահոց զոմանս
տրտմագին՝ վասն ի կերակրելոցն խափանելոյն եւ յ[ը]մպելոյ եւ
զայլս՝ ծանրագլխեալս ի գիշերոյն արբշռութենէ մինչեւ ցառաւաւտն
եւ նեխեալս՝ իբր ի շարաւոց վիրաց, ժանտատեսիլս եւ ժահահոտս,
որոց հանդիպէին: Նոցին խնամաբար հիւանդատած լինի ի սկսման
բանիս եւ պատուիրէ քահանայից մխիթարական եւ մարգիչ յաւրի-
նեալ խրատս ըստ Եսայեայ՝ Մխիթարեցէ՛ք զժողովուրդ իմ, զի նախ
յուսով բժշկականաւ պարտ է կրթել զլսելիս հիւանդին եւ ապա կծու
դեղովքն կսկծեցուցանել:

Եւ որպէս մարգիչք զմբիչս կրթական արուեստիւ յորդորամիտս
պատրաստեն, զսոյն առնէ եւ սուրբս այս, զի յանդիմանական բա-
նիւք, իբրու կծու դեղովք, վարի առ ի բժշկու/244ա/թիւն եւ դասալիք
ըմբշացն զտարագրիլն ի պսակացն ասէ եւ ծանրագլխելոցն ի գինոյն
ասէ՝ յորում դասու կարգեցից զձեզ ի մուտ պահոցս՝ յարբեցելո՞ցն,
թէ՞ ի զգաստիցն: Եւ զցայգ ըմբողացն ասէ՝ մի՞թէ վրէժս պահանջէք
իբրու ի թշնամոյ ի հինգաւրեայ պահոցս. եւ հինգաւրեայ ասէ, զի
թէպէտ ի Նիկիայ սրբապահութեամբ զքառասներորդս զայս
սահմանեցին:

Սակայն վասն անժուժութեան իշխանաց եւ քաղաքայնոց յետոյ թողացուցին այլք զչարաթ եւ զկիւրակէ, այլ ոչ կատարելոց ի կրաւնս սրբապահութեան: Եւ սա այնոցիկ ասէ, զորս անկար լինէին ածել ի կատարելոցն կարգ ուղղութեան, բայց ոչ աւրէնս հասարակաց հաստատեաց: Ասէ եւ զայս, թէ հրեշտակք Աստուծոյ շրջին յեկեղեցիս հաւատացելոց եւ գրեն ի գիր պահողութեան զվերագրեալսն յաւանէն յորդիութիւն Աստուծոյ: Զի պահողքն չարչարակից Քրիստոսի կոչին եւ հաղորդք փառաց յարութեանն: «Եւ դու,- ասէ,- մի՛ քնոյ դանդաչմամբ տուժէր զգիր հրեշտակին, զի մի՛ դասալքեալ ի հոգեւոր ասպարիսէն ի բաց անկանիցիս»: Եւ այսպէս ուսուցանէ զվնասն յարբեցութենէ եւ զաւգտակարն ի պահոցն պարկեշտութենէ արանց միանգամայն եւ կանանց առհասարակ:

[Գ]

Պատճառ երրորդ ճառին, որ վասն արբեցողաց

Զառաջին ճառն եւ զերկրորդն ասացեալ է սրբո /244բ/ յն Բարսղի ի սկիզբն Քառասնորդացն աղուհացից, իսկ զայս ճառ՝ ի մեծի Զատկի Յարութեանն Տեառն: Վասն զի յոլովս խաւսեցաւ յաւուրս պահոցն խրատս զգուշաւորս եւ հրահանգս կանոնական, զի այնպէս հասցեն յաւր փրկաւէտ Յարութեանն Քրիստոսի, յորում հաղորդեսցին մարմնոյ եւ արեան Տեառն: Եւ մինչ եկն եհաս գրաւականն կենացն անմահութեան, յորում հոգեպէս պարտ էր զուարճանալ պարկեշտ կարգաւք քրիստոնէութեանն, ետես զնոսա յարբեցութիւն եւ ի հանգանակս պարապեալ եւ ի պարս անվայելուչ երգոց՝ ըստ աւրինի հեթանոսաց անյոյս եղելոց յայսմ նորոգմանէ:

Յաղագս այնորիկ ողբայ ի վերայ նոցա իբրեւ ի վերայ մեռելոց եւ որոց չնորհն Աստուծոյ ելեալ իցէ յաչաց: Ցուցանէ եւ զկերպարանս վնասուն յարբեցութենէն եւ զայպանիլ միտս ունողացն, որ եւ քան զանասնոց բնաբար յիմարութիւնն եւս յիմարեալք, զի ոչ միայն ի մտաց խելայեղեալ ցնորին, այլ եւ ի զգայութեանց եւս զրկեալ են եւ բանդագուշեալ եւ լուծեալ բոլոր կազմութիւն մարմնոյն: Մինչ ոչ կարեալ կալ ի վերայ ոտից եւ ոչ իմանալ կամ խաւսել պատեհաբար: Զի՞նչ եւ զանամաւթութիւնն ասասցէ ոք՝ յերգելն եւ ի կաքաւելն զերիտասարդաց եւ զկուսից եւ զանհամեստութիւն առնականաց, ոյք ոչ զողջութիւնս իւրեանց դարձուցին ի տունս իւրեանց :

Եւ թէպէտ մարմնով ամբողջ, /245ա/ հոգւով՝ ոչ եւս, եւ զինքն ի զուր ասէ վաստակել ի խրատական բանսն յաւուրս պահոցն եւ զամենայն վնասն, որ ի գին[ւ]ոյն ցուցանէ, զբազմադիմի հիւանդութիւնսն

եւ զմահն տարաժամ: Եւ թէ որպէս ի Յարութեանն բար[ւ]ոյ զրկեցան, նոյնպէս ի Հոգւոյն ընդունելութենէ յաւուր Պենտակոստէին, զի դիւրական խնջոյիւք լցեալ լինէին ի չար հոգւոցն: Եւ զի այսպիսի իրաւացի եւ դատողական տուգանաւք զարհուրեցոյց զնոսա, վասն այնորիկ ոչ կամեցաւ առանց սպեղան[ւ]ոյ զվէրսն թողուլ: Յաղագս այսորիկ ի կատարածի ճառիս խրատական յաւելու բան, զի մի՛ անյուսացին: Պարտ է, ասէ, աղաւթիւք եւ արտասուաւք դիմել առ Տէրն բարեգութ եւ հասանել թողութեան, վասն զի կամեցող է ողորմութեան եւ անյիշաչար դիմողացն առ Նա մտերմաբար՝ իբրու առ միայն բարերար եւ բաւական յամենայնի, Որում փառք:

[Դ]

Պատճառ չորրորդ ճառին՝ ի Հայեացն ի քեզ ասացեալ

Թէպէտ եւ ամենայն խրատք վարդապետութեան սրբոյս շահաւէտ աւգտակարք եւ մտերիմ լսողաց ի զանազան առաջս բաժանեալ՝ ըստ ուռոգանող վտակաց ի պտղատուութիւն անդաստանաց բանականիս վայրաց, պահոց եւ աղաւթից՝ հանդերձ այլովքն, սակայն առաջիկայս բանի զաւրութիւն զանցուցանէ զամենեքումբք, զի թէպէտ եւ սուղ է ի բայս բանազուգից, /245բ/ այլ հզաւր է ի պարփակումն բոլոր առաքինութեան:

Հայեա՛ց ի քեզ. բանականաց է այս պատուէր հրամանի եւ բանի զաւրութիւն՝ յոգիս հաստեալ յԱրարչէն եւ վասն համազուգութեան առ մարմին խափանի բազում անգամ յաւգտակար իմաստից: Յաղագս այսորիկ եւ կարաւտ իսկ է պատուիրանի, վասն որոյ եւ ասէ՝ Հայեա՛ց ի քեզ եւ զգուշացի՛ր, զի մի՛ սխալանք քեզ դիպեսցին եւ ոչ մտաւք անգամ, զի որպէս աներեւոյթ է հոգի, անյայտ են եւ խորհուրդքն ի նմա: Սակայն Աստուծոյ յայտնիք են, եւ դու մի՛ ծածուկ վարկցիս ի Նմանէ, այլ զգուշութեամբ եւ արթուն մտաւք կեցցես առաջի Այնմ, որ զանգործսն քննէ եւ գործելեացն առնէ իրաւացի դատաստան: Դարձեալ ասելն՝ Հայեա՛ց ի քեզ, այլ ոչ ի քոյսն, քանզի եմք մեք, եւ մեր է զգայութիւնս, եւ ի մեր պատճառս արտաքոյքն բարիք, վասն որոյ դու յոգւոյդ գեղեցկութի՛ւնդ հայեաց եւ տե՛ս, թէ որպէս պատկերացար Աստուծոյ եւ թէ զի՞նչ աւրինակաւ պահիցես զնա յանսխալութեան:

Այլ մի՛ վստահասցիս ի մարմնոյդ առոյգութիւն կամ ի դիմաց գեղեցկութիւն, բայց միայն թէ որպէս զպատկերն Աստուծոյ ի քեզ պահեսցես: Եւ դարձեալ՝ հայեա՛ց ի քեզ, թէ որպէս ես ի քննութիւն կացիցն քոց եւ գնացից, գուցէ ունայն ընթացեալ իցես կամ ընթա-

նայցես: Էն եւ այլ յոլով այսպիսի միտք ի Հայեացն ի քեզ, զոր ի ճառէն ուսցուք զբաւանդակն:

Ասաց զնա սուրբն Բարսեղ /246ա/ ի դէմս ամենայն մարդկային բնութեանս, որպէս եւ Մովսէս յաւրինակին ի դէմս ամենայն՝ Իսրայէղի: Բայց ոչ երեւի, թէ ըստ սկզբան մատենիս յաւուրս աղուհացի՞ն ասաց զայս ճառ, թէ՞ յայլում ժամու, որպէս սովոր էին յամենայն ժամ հոգալ զմարդիկ աստուածազգեստ արքն այնոքիկ ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր:

[Ե]

Պատճառ հինգերորդ ճառին, որ առ նաւատիանոսքն սրբոյն Բարսղի ասացեալ՝ վասն ապաշխարութեան

Մեծն եւ առաջինն ամենայն եպիսկոպոսաց սուրբն Բասիլիոս ոչ մերձակայիցն միայն, այլ եւ հեռաւորաց իւրոյ վիճակին խնամ տանէր ուղղութեան: Իսկ ուղղութիւն է ոչ միայն զառաջին անմեղութեան պահել, այլ եւ սպեղանաւք բժշկութեան զսխալեալսն ածել յուղղութիւն: Եւ զի ի նորա աւուրսն յոլովք էին ի հերձուածողաց, որ խանգարիչք էին կարգաց Եկեղեցւոյ, բայց եւս առաւել նաւատիանոսքն, ոյք ի բաց բառնային յետ մկրտութեանն զապաշխարութիւն եւ անյոյս ի Քրիստոսի փրկութենէն առնէին զյանցաւորսն:

Իսկ ոմն յեպիսկոպոսացն, որ ընդ ձեռամբ սրբոյն Բարսղի, տեսեալ ի վիճակ իւր զայսպիսի աղէտս, ազդ արար սրբոյն, եւ Բասիլիոս ըստ նմին յաւրինէ զվարդապետական բանսն: Եւ նախ՝ նմին եպիսկոպոսի պատուիրէ՝ երկրորդ իւր անուանելով, զի ձեռն կարկառեսցէ կարաւտելոցն եւ ասէ ապաշխարութեամբ թողութեան հասանել զամբարտա[ւա]նութիւն ոչ բերողաց ի նոսին զփրկութեանն դեղ ի վա՛յր կործ /246բ/ անեա եւ զողջախոհ արանց ձեռնտուութիւն յապաշխարութիւն ընկալիցս քեզ աւժիտս պիտանացու բանս առ մարդիկս՝ գիտելով, զի ի մարդկանէ ոչ ոք է անմեղ այնպէս, որ վկայի, թէ ոչ արար մեղս:

Ասեմք ի Հնոյն, նմանապէս եւ ի Նորոյս՝ ոչ ի մեղս յորդորելով, այլ զանկեալսն կանգնելով: Բերէ զաւրինակն ի Դաւթայ, ի Մովսիսէ, այլ եւ յակն յայտնի ամբարշտէն Աքաաբու, զի թէպէտ եւ աւրէնքն կուփիչ են յանցաւորաց, սակայն զղջացելոցն զհետ երթայր թողութիւն անյիշաչարութեամբն Աստուծոյ: Եւ թէ ասիցեն՝ Քրիստոս դատապարտեաց զմեղս [ի] մարմնի Իւրում եւ արեամբ խաչին եբարձ զմեղս, յետ այնր եւ մկրտութեան շնորհն, եւ թէ յետ սորա ոք յանցանէ, կորուանէ զշնորհն, եւ այլ ոչ է հնար թողութեան, գտանեմք եւ այդմիկ աւրինակս ստոյգս. զՊետրոս յետ ուրացութեանն եւ զկորնթացի պոռնկեալն, զգաղատացիսն, որ անկան ի շնորհացն եւ դարձեալ կանգնեցան ի ձեռն Պաւղոսի խրատուն:

Բազումք ի մարտիրոսացն ի հալածանսն գլորեցան եւ դարձեալ կանգնեցան ապաշաւանաւք, որչափ եւս առաւ[ել] թէ ի մարմնական ցանկութեանց ոք յաղթահարի դարձիւ եւ խոստովանութեամբ, պահովք եւ աղաւթիւք՝ վերստին ստանայ զսրբութիւն. եւ թէ ոչ առաջին ընդ առաջինսն փայլեսցէ իբրեւ զարեգակն յարքայութեանն, յաստեղաչափ լուսաւորացն ոչ վերջադասի: Եւ թէ ի /247ա/ հարիւրաւորն ոչ հասանէ, յերեսնաւորէն ոչ նուազի: Զի թէ ընդ դատարկ բանի համարս տալ պահանջիմք, նոյնպէս բարի գործքն եւս յայտնիք են առաջի Նորա, զորս գրէ զվերջին ուղղութիւնսն ընդ առաջինսն: Վասն զի բարեսէր եւ ողորմած է Տէր: Որպէս զՊետրոս հաստատուն վէմ եցոյց հիման Եկեղեցւոյ եւ դրոյլ արքա[յ]ութեանն, սա[յ]ապէս եւ զամենայն դարձեալսն յապաշխարութիւն յանձանձէ հայրագորով գրովք իբրու զանառակն զայն արբշիռ մանուկ: Եւ զիա՞րդ տմարդի բարուք բառնան զապաշխարութիւն ամբարհաւաճ նաւատիանիտքն, յորմէ աղանդէ կարի փախչելի է: Սակայն յուսով մեղանչելն չէ համարձակելի թողութեան ումեք:

[Զ]

Պատճառ վեցերորդ ճառին՝ յայրն, որ ասաց՝ Քակեցից զշտեմարանս իմ եւ մեծամեծս շինեցից

Սովորութիւն է սրբոց վարդապետաց յոքնակի ջանիւ ընդդիմանալ վնասող եւ կուրացուցիչ ախտից զմիտս մարդկան եւ բժշկաւրէն դեղս կազմել բազմադիմի հիւանդութեանցն, որպէս եւ սուրբս այս յառակաց եւ յաւրինակաց ի Հին եւ Նոր Կտակարանաց արմատացուցանէ յեկեղեցիս հաւատացելոց զդեղ բժշկութեան՝ առ ի խլել զզանազան տեսակս ախտից: Ըստ այսմ, որ այժմ ի տէրունական առակէն յանդիմանէ զամենայն ագահս այնու, որ տարացոյց տայ զտարակուսեալ առնէն ի լիութիւն շտեմարանացն իբրեւ զայնոսիկ, /247բ/ որ քաղցեալ եւ ծարաւի եւ մերկ գտանիցին: Այնպէս աւելի ագահն տաղտապէր, թէ տեղի ոչ գոյ հաւաքման իւր բազում ընչիցն, որոյ յաղագաւ եւ ընդարձակագոյն սկսաւ շինել:

Եւ այս տարակուսանք կարի անզգամութեան են եւ ուիշտ բարուց, մանաւանդ թէ՝ անհաւատութեան: Զի ոչ կարծէ զԱստուած այցելու հասարակաց եւ զինքն միայն կարծէ արժանի ընդունակ բարեացն

Աստուծոյ եւ բանաւոր գոլով՝ անբան երկրին ոչ նմանէր, զի երկիր զբերն տոհմականաւք աճեցուցանէր: Եւ նա ոչ մասամբ կարէր մխիթարել զկարաւտեալսն եւ վասն լիութեան չտեմարանցն, վասն որ գալոյն էր, տարակուսէր: Զի՞նչ, ասէր, արարից, տեղի ոչ գոյ, ուր համբարեցից զլինելոցն գոյաւորութիւն, որում իրաւացի էր զտուն աղքատացն իւր համբարս զուգել: Եթէ ոք տարակուսեսցի, թէ այնպիսի ուիշտ առն ընդէ՞ր չնորհէր Աստուած լիութիւն, ծանիցէ այսպէս. բանաւորս եւ անձնիշխան արար Աստուած զմարդիկ եւ ընտրողս բար(ւ)ոյ եւ չարի: Եւ վասն այնորիկ փորձելովն ընտրէ, որպէս երբեմն զՅոբ, եւ զորս չարաժողով գտանէ, նախատէ իբրեւ զայրս զայս եւ բարի կողմամբն դատէ զմիւսն, որ ոչ նոյնպէս իցէ: Երկոքին միոյ բնութեան եւ միոյ աշխարհի են: Եւ ահա ոմն պայծառանայ եւ ոմն խաւարազգած լինի՝ իբրեւ զայր զայս տարակուսեալ եւ կուրացեալ ագահութեամբ:

Գիտեմ, ասէ, զինչ արարից. քակեցից չտեմարանս իմ /248ա/ եւ եւս մեծամեծս չինեցից: Առ որ ասելի է, թէ ամ ըստ ամէ լիութիւնդ լինիցի, քանի՞ցս քակես եւ չինես, յոր յաւելու եւ զմիւս ամբարիչտ բարբառն, ասացից ցանձն իմ: Ունիս բարութիւնս ամբարեալս ի բազում ամաց՝ կե՛ր, ա՛րբ եւ ուրա՛խ լեր: Այնպէս խաւսէր ամբարիչտն, թէ հանապազ վայելելոց իցէ, եւ կամ թէ ուրեք չիցէ բարի, բայց ի նորա(յ)ոցն: Ըստ նմին եւ զպատասխանին լուաւ՝ Անմի՛տ, յայսմ գիշերի զոգիդ հանեն ի մարմնոյդ. այդ ամենայն ո՞ւմ լինիցի, զի որպէս մերկ եկիր յաշխարհս, նոյնպէս եւ երթալոց ես եւ կենացդ ոչ իշխելով՝ զիա՞րդ ընչիցն տէր ասես քեզ: Զայս առակ հասարակաց աւրինակ ի միջի դնէ Տէր եւ ասէ, թէ որ զայսպիսիս գործեն եւ գանձեն, ոչ յԱստուած մեծանան, որ է աւրհնեալ յաւիտեան:

[Է]

Պատճառ եւթներորդ ճառիս՝ վասն աւրինականին հարցման առ Տէր՝ նոյն Դաւթայ հոգացեալ

Երանելին Բասիլիոս առնու ի խրատ մարդկային բնութեանս եւ առաւել իւր ժողովրդոց զաւրինականին առ Տէր մեր զհարցումն, թէ՝ զի՞նչ գործեցից բարի՝ այլովքն հանդերձ: Բայց ոչ միեւնոյն, որ ի Մա(տ)թէոսն եւ ի Ղուկաս. զի մին փորձելով հարցանէր, եւ միւսն ուսանել ախորժէր: Եւ յայտ անտի է, զի ըստ հարցուածոյն եւ զպատասխանին ետ: Այս հարցող բարի ոք, որ եւ բարի զվարդապետն ասաց, այլ ոչ ըստ դպրացն եւ փարիսեցւոցն, վասն զի արքայութեանն բաղձայր: Սակս այնորիկ հարցա /248բ/նէր, բայց զի գիտակ զինքն աւրինացն ասաց եւ կատարող ի մանկութենէ:

Սակայն յորժամ խրատ ետ բարի վարդապետն լնուլ զթերութիւնն ի յոլովութենէ ստացուածոցն, նա ոչ ընկալաւ, գնաց, ասէ, տրտմեալ: Եւ այսու եցոյց, թէ չէր նորա կատարեալ զսիրոյն պատուիրանն, այլ, նման անգործ անդաստանի, լցեալ էր նա փչովք ագահութեան, վասն որոյ դժուարաւ ասաց Տէր զայնպիսեաց մեծատանց մտանելն յարքա(յ)ութիւն: Իսկ սուրբն Բասիլիոս յոլովս ի ներքս փակէ յագահութենէ, անմիտս եւ վնասակար ցանկութիւնս, զի թէ յիւրոցն չտայ մատակարարել կարաւտելոց եւ այն հանէ յարքայութենէն Աստուծոյ: Զի՞նչ ասելի է յաղագս չարաչար ստացողացն զայլոց եւ զրկողացն: Ասելի է, որ մաւտ են տուն առ տուն եւ անդաստան առ անդաստան կամ ի տուրեւառ եւ ի վաշխ առնուլ, որոց յոլովք են չարամանութիւնք, զորս ի ճառէդ ուսիր մանրամասնաբար:

[Ը]

Պատճառ ութերորդ ճառին, որ վասն վաշխառուաց

Որպէս յառաջ ասացեալ երկու ճառիցդ է տեսութիւնդ, նոյնպէս եւ այս ցուցանէ զտարակուսանս աղքատաց յաղագս անողորմ վաշխառուացն: Վասն զի, ըստ դիպուածոյ աստուածայնոց բանից, կալով սուրբս այս ի մէջ ժողովրդեանն յաւուրս պահոցն Քառասնորդաց, խաւսէր ի լսելիս նոցա զաղէտսիրացն, որ ի չար սովոր /249ա/ութենէ տուրեւառից քաղաքին, զոր եւ ի սկսման այսր ճառի ասէ, թէ երէկ ի չորեքտասան սաղմոսն խաւսեցաք, որոյ սկիզբն է՝ Տէ՛ր, ո՞վ կաց(ց)է:

Եւ ժամուն փութացեալ ոչ, ասէ, եղեւ աւարտ: Այսաւր եկաք առ ձեզ, որպէս առ պարտապահանջ, աւարտել զմնացուածն, է եւ այսր, որ զարծաթ իւր ի վարձու ոչ տայ եւ կաշառ ի վերայ իրաւանց նա ոչ առնու: Եւ ահա այսպէս կարգաւ ցուցանէ զաղէտս տարակուսի, որոց զփոխն առնուն, զի վասն կարեացն հարկի ի գրաւու դնեն զհայրենիսն եւ յետոյ զանձինս եւ զմանկունս իւրեանց դնելով ի վերայ՝ չկարեն ի չար եւ ի մշտածնունդ պարտուցն զերծանիլ: Եւ այնպիսի փոխատուն յառաջն երդնու չունել, զոր խնդրէ փոխառուն: Եւ յորժամ զվաշխիւ հատուցումն լսէ, ապա այնուհետեւ իբրեւ ողորմած ոք ձեւանայ եւ գերէ զկարաւտն գրով եւ վկայիւք: Վասն այնպիսեացն պատուիրէ սուրբս՝ խոյս տալ ի չար կապարանէն եւ սակաւուք բաւականանալ անխուճապ պիտոյիւք: Եւ առ փոխատուն դարձուցեալ զբանն ասէ, թէ՝ վասն քո տմարդութեան այնքան զգուշացուցանեմ

զառողսն, զի մի՛ զազատութիւնն իւրեանց քով սակաւ լոմայիւն կորուսցեն:

Եւ արդ, դու լո՛ւր զՏեառնն, թէ՝ տո՛ւր փոխ, ուստի ոչ ակն ունիցիս առնուլ, զի ի Նմանէ առցես լիապատար, որ է աւրհնեալ յաւիտեանս:

[Թ]

Պատճառ ինՆերորդ /249բ/ ճառին, որ վասն բարկացողաց

Գազանային եւ սողնական ցուցանէ զախտ բարկացողին. է, որ արտաքուստ իբրեւ ի խիստ հողմոյ շնչմանէ, եւ է, որ ի ներքուստ իբրեւ ի բնակաւոր կրից տեղի տալոյ զաւրանալ յինքեան իբր ի կամացն ախորժելոյ: Վասն որոյ գրեալ է, թէ՝ բարկութիւն կորուսանէ զիմաստուն, եւ առաքեալ զմարգարէականն մեկնէ: Բարկանայք, բայց մի՛ մեղանչէք, թէ բարկութիւն մարդոյ զարդարութիւն ոչ գործէ, եւ Տէր զտարապարտուց բարկացողն պարտաւոր ասէ ատենին մեծի: Իսկ այն ախտ զաւրացեալ առ ումեք՝ անպատկառելի առնէ յամենեցունց եւ չտայ ճանաչել զսիրելի կամ զընտանի ոք՝ ոչ զալիս ծերոց եւ ոչ զպատիւ պատուականաց: Զի թէպէտ եւ բարւոյ աղագաւ եղեալ է ի բնութեանս վասն արիութեան եւ այլոցն, սակայն ոմանք չարի նիւթ արարին զնա: Վասն որոյ պատուիրէ հանդարտութեամբ շիջուցանել զբարկութիւնն բարկացողացն՝ որպէս Դաւիթ առ Սաւուղ եւ առ Սեմէի. եւ Տէր մեր առ Յուդայ բազում անգամ եւ առ չար ծառայն հարկանող, եւ յայնժամ շիջանի չարութիւն խստասրտին: Ապա թէ ոչ զգաւնանայ բարեաւ աւրինակաւքն, եւս առաւել բորբոքի. վասն որոյ դու զհեզութեա՛նն ընկալ պատուէր, զի զերանութիւնն ի Տեառնէ առցես զաւանդ, զոր ասէ՝ Երանի հեզոց: Խոնարհեցո՛ զսիրտ քո եւ ծանի՛ր, զի այսու սուրբքն ամենեքեան ընկալան /250ա/ յանձինս զնմանութիւն Որդւոյն Աստուծոյ, Որում փառք յաւիտեանս:

[Ժ]

Պատճառ տասներորդ ճառին, որ վասն մախանաց ասացեալ է

Վարդապետս սուրբ զայս դնէ սկիզբն ճառիս. բարի է, ասէ, Աստուած եւ սկիզբն ամենայն բարեաց, չար՝ բանսարկուն եւ պատճառ ամենայն չարեաց: Եւ զմախանացն իրք չար ասէ, քան զոր եւ ինչ ոք չարի անուն ասիցէ: Քանզի ոչինչ կրեալ յումեքէ չար՝ զչարի ընդ

բարաւրութիւն այլոց, եւ յանձնէ ծնանի ախտն այն, եւ նախ զինքն հաչէ եւ մաշէ՝ որպէս ժանգ՝ զերկաթ, եւ ցեց՝ զասր, եւ զիժ՝ ծնունդ իւր:

Այսպէս Ադամ ի սատանայէ մախացեալ գտաւ, եւ Հաբէլ՝ ի Կայենէ, Յովսէփ՝ յեղբարցն, եւ Մովսէս՝ յազգէն: Եւ այլք յոլովք էին այսպէս, որպէս եւ Տէր մեր ի հրէիցն առաջնորդաց, եւ աշակերտք Նորա՝ ի ծնողաց եւ յեղբարց իւրեանց: Եւ ցուցանէ ի սմին ճառի զդէմ մախացողին ցամաքեալ՝ որպէս ի խիստ հիւանդութեանց, եւ թէ զառաքինութենէ ուրուք լսէ կամ զշնորհաց, յոր ինքն ոչ հասանի, ապա հաչի եւ մաշի ի գիշերի եւ ի տուրնջեան: Եւ յոլով աւրինակ մնասակար ախտին ի դէմս բերէ հանապազ, զի որպէս ինքնաբոյս է ախտն, անձին իւրում ստացուած առնէ զցաւս եւ զվաստակս եւ զյաւիտենական կորուստն: Յաղագս այնորիկ սա զգուշացուցանէ զայլս, թէ համբերութեամբ պարտ է տանել այնպիսեացն եւ պսակիլ ի Քրիստոսէ Աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

[ԺԱ]

/250բ/ Պատճառ մետասան ճառին, որ ի սաղմոսն առաջին ասացեալ է

Այսպէս կարծի յոմանց, թէ ամենայն սաղմոսացն Դաւթի արարեալ է սորա մեկնութիւն, եւ այս երեք այլ սաղմոսաւք ի մերս է թարգմանած լեզու: Այլ մեզ այսպէս ասացաւ յուսուցչաց, եւ հաճելի է, թէ սովորաբար զայս չորս սաղմոսս սկիզբն է եղեալ եւ այլ բոլոր սաղմոսացն յաղագս ատենաբանութեան, որպէս եւ զՀայեացն ի քեզ՝ հանդերձ այլովքն, զորս ի մարգարէիցն եւ յԱւետարանէն: Նմանապէս նախադիր է իւր առեալ, որպէս եւ սկիզբն բանիս յայտնէ, թէ նիւթ է սա առատ եւ յոքնահմուտ վարդապետութեան, զոր եւ սկսանի այսպէս: Ամենայն Գիրք Աստուածաշունչք եւ աւգտակարք են՝ թէ պատմողականք, թէ աւրէնադրականք, թէ առակաւորք, թէ մարգարէականք: Իսկ սա զամենայն յինքեան ունի զՀնոյն աւրինակսն եւ զՆորոյս ճշմարտութիւնս, նաեւ խորհուրդ աղաւթականութեան սրտառուչս եւ արտաւարաբուղխ: Եւ ամենայն երգովք լցեալք հոգեւորաւք ի զուարթուն սրտի՝ ի հալածումն դիւաց: Իսկ սկիզբնս զի երանութիւն է. երանութիւնն միոյն Աստուծոյ է ըստ բնութեան սեպհական, զոր եւ ի մարդիկ իջուցանէ, ըստ որում պատկեր ասին իսկականին Աստուծոյ:

Երանեալ է այր. հասարակ է արանց եւ կանանց առաքինեաց, զի այր գլուխ է կնոջ: Բաւականանայ պատիւն գլխոյն յիշատակաւ, որ

ոչ գնաց ի /251ա/ խորհուրդս ամբարշտաց: Վասն զի ի խորհրդոյ սկսանին սխալանք, նախ նմա զգուշանայ, զի մի՛ ամբարշտութեան հաղորդելովն հեռասցի յԱստուծոյ: Ի ճանապարհի մեղաւորաց նա ոչ եկաց: Այս պատուիրանք հրաժարեցուցանէ նախ յամբարշտութենէ եւ ի գործոյ մեղաց: Եւ ճանապարհ ասէ զկենցաղս ի մանկութենէ մինչեւ ցծերութիւն, ընդ որ անցանեմք: Եւ թէ սխալէ ոք յընթացսն, սթափեսցի վաղվաղակի, զի մի՛ զրկիցի յերանութենէն:

Յաթոռս ժանտից Նա ոչ նստաւ: Ժանտ ախտ է, որ ոչ ի միումն եւեթ կացցէ տեղւոջ, այլ զբոլոր մարմինն ժանտացուցանէ, յաղագս որոյ պատուիրէ ոչ կալ ի չարին եւ աթոռակից լինել ժանտից, զի մի՛ անբժշկական լիցի ախտիւն: Այսու աշտիճանաւ ի բարձրագոյնսն առաջնորդէ աւրէնս կեցուցիչս հոգւոց:

[ԺԲ]

Պատճառ երկոտասան ճառին, որ ի սաղմոսն յիսներորդ ինններորդ

Մեծ ի եկեղեցւոյն Կեսարու, որում առաջնորդ էր սուրբն Բասիլիոս, քահանայքն եւ ժողովուրդքն կարաւտ էին հանապազորդեան վարդապետութեան: Իսկ նա զի հիւանդոտ էր մարմնով, ի նոյն եւ զյապաղումնն պատճառէր: Եւ նախ զփափագն նոցա իբրեւ զիւրն յաւելու հարկաւորի եւ ապա իբրեւ զմայր գորովագութ զստինսն ճմլեալ զմտաց ի կերակուր սիրելի մանկանց պատրաստէր: Եւ զի ի պաշտաման կալով /251բ/ երգէին զսաղմոսն՝ Տո՛ւր մեզ աւգնութիւն ի նեղութեան: Եւ յաւարտման նոյն սաղմոսի սկսանի մեկնել ի լսելիս նոցա: Բայց զի այլ դէմք երեւին վերնագրին, եւ այլ՝ սաղմոսին, ցուցանէ զզանազանութիւնս երկոցունց: Եւ այս է վերնագիրն, որ գրեալ է յԵրկրորդ Թագաւորութեանն պատմութեան:

Եւ էհար, ասէ, Դաւիթ զԱդրիազար, յորժամ չոգաւ արկանել զձեռն իւր ի վերայ գետոյն Եփրատայ, եւ էառ Դաւիթ յԱդրիազարայ հազար կառս եւ եւթն հազար ձիս եւ քսան հազար արանց: Քակեաց զկառսն եւ եթող իւր կառս, թագաւորեաց Իսրայէղի՝ առնելով իրաւունս եւ արդարութիւն: Եւ դարձեալ Յովաբ զաւրագլուխն Դաւթի ընտրեաց արս կորովիս յամենայն Իսրայէղէ եւ ետ պատերազմ ընդ ասորիս եւ էհար զնոսա Յովաբ ի ձորն աղտից: Եւ յայնմ հետէ հատուածեցան ծառայքն Ադրիազարու առ իսրայէլացիքն:

Այսպիսի ըստ պատմութեանն է վերնագրութիւն սաղմոսին, որ եւ ուրախութեան նշանակ պարտ էր նուագել ի վերայ այնքան յաղթութեան եւ զթագաւորութիւն ընդ ձեռաւք նուաճելոյ: Իսկ բանք սաղմոսիս տրտմականք երեւին յասելն՝ Աստուա՛ծ, մերժեցեր եւ աւերեցեր զմեզ: Վասն որոյ միւսոյն ուշ դիցես վերնագրին, զոր ասէ, թէ՝ զառանցելոց ժամանակաց՝ այսինքն փոփոխմանց, յորմէ իմասց /252ա/ուք ապագայիցն լինել զմարգարէութիւնս, զի չարժեաց եւ խռովեաց զփոփոխելի բնութիւնս վասն բազմադիմի յանցանաց: Եւ զթացաւ դարձեալ եւ զայլայլութիւնս մեր նորոգեսցի հնութենէ ապականութեան եւ յամբարշտութենէ ի բարեպաշտութիւն եւ յայլս նոյնպիսիս: Եւ արձանագրութիւնս ասէ՝ զհաստատութիւն նշանակելով ի ժամանակի բժշկելոյ զվէրս հասարակաց: Եւ որք յայսորիկ նմանին, հասարակաց փրկութեան են ապացոյցք, որպէս եւ ասէ՝ Իմ է Գաղաադ եւ Մանասէ, զի Նորա են հրեայք եւ հեթանոսք ի ցեղէն Յուդայ: Քրիստոս թագաւորեաց նոցա, յԵդովմէ յայլացեղ ազգս ուղղին գնացք Աւետարանին:

Ո՞ տարցէ զիս ի քաղաք ամուր՝ յԵկեղեցի: Կամ ո՞վ առաջնորդեսցէ ինձ յԵդովմէ, յերկրէ՝ յերկինս, թէ ոչ Դու՝ Աստուա՛ծ, որ մերժեցեր զմեզ վասն յանցանաց: Զի որպէս ետուր նշան փրկութեան՝ զգաւազանն Մովսէսի, այսպէս նորոյս Իսրայէղի՝ զխաչն փրկութեան, որով ապրեցաք ի նետաձգութենէն սատանայի: Վասն որոյ տո՛ւր մեզ, Աստուա՛ծ, բանդ աւգնութիւն ի նեղութեան, որով նեղիմք ի դիւաց եւ յախտից, զի ընդունայն է փրկութիւնն, որ ի մարդոյ, վասն զի չկարեն եւ ոչ զանձինս ապրեցուցանել: Իսկ մեք աւետարանեսցուք զաւրութիւն, զի Քրիստոս է Աստուծոյ Հաւր զաւրութիւն եւ իմաստութիւն, եւ Նա արհամար /252բ/հէ զնեղիչն մեր զսատանայ:

[ԺԳ]

Պատճառ երեքտասան ճառին, որ վաթսուն եւ ի մի սաղմոսն

Վերնագիր սաղմոսիս ի Դիթովմ ասի: Ի Դիթովմ երգիչ միայն, եւ ասաց Դաւիթ զամենայն սաղմոսն, որպէս եւ պատմութիւն Մնացորդացն, զԵման, եւ զի Դիթովմ, զԱսափ եւ զորդիսն Կորխայ դասագլուխս կոչէին: Իսկ այս վաթսուն եւ մի սաղմոսս եւ երեսուն եւ ութ սաղմոսն, որ Դիթովմայ ասին, ի նոյն միտս տեսանին, զի ընդդէմ ախտի ամբարտաւանութեան ասացեալ է՝ աւժիտ խրատու եւ խոնարհութեան եւ յաստատուածապաւինութեան:

Բայց միայն Աստուծոյ հնազանդ լեր, անձն իմ, զի ի Նմանէ ինձ աւգնութիւն: Եւ միւսն՝ Համբերելով համբերի Տեառն, նա[յ]եցա
ս եւ լուաւ աղաւթից իմոց: Ակնարկէ մարգարէս զհասալ

փրկութիւնս ի Քրիստոսէ եւ զհատուցումն իւրաքանչիւր. ըստ որում ասէ՝ Աստուծոյ է զաւրութիւն, եւ Քո, Տէ՛ր, ողորմութիւն: Այս իսկ է ասելն՝ Մի անգամ Աստուած խաւսեցաւ, եւ երկուք զայլս լուաք, թէպէտ եւ տարակուսին բազումք ի բանիս, թէ զի՞նչ է մի անգամ խաւսելն եւ երկուս լսելն: Ինքն իսկ մեկնէ՝ յԱստուծոյ լինել զաւրութիւն տանջողական ի վերայ ամբարշտաց, եւ դարձեալ՝ ողորմութեամբ քաւէ զյանցաւորսն: Իսկ ոչ դարձելոցն հատուցանէ արդարութեամբ ի հանդերձելումն, զարժանիսն պատուոյ փա/253ա/ռաւորէ Աստուած անպատմելի փառաւք:

[ԺԴ]

Պատճառ չորեքտասան ճառին, որ ի հարիւր եւ ի տասնուչորս սաղմոսն

Հոգաբարձութիւն էր առաջնորդաց Եկեղեցւոյ Քրիստոսի, զի որպէս ի տաւնս տէրունականս, այսպէս եւ ի յիշատակս վկայից յորդորական վարդապետութեամբ զարթուցանել զմիտս հաւատացելոց ի նմանակցութեան հանդէսն: Այսպէս եւ սուրբն Բասիլիոս առնէր, զի յայլ եկեղեցիս հանդիպեալ ի տաւնի վկայի ուրումն՝ անդէն յիւրսն դառնայր: Եկեղեցիք եւ եկեղեցականքն սպասէին գալոյ նորա մինչ ի հաւասարել աւուրն եւ ի հասարակ աւուրն եկեալ լնուլ զբաղձանս նոցա: Նախ ասէ զիւր յամելն եւ ապա յորդորէ զնոսա ի գոհութիւն Աստուծոյ վասն ժամանելոյն առ նոսա ի ժամուն, յորում երգէին զսաղմոս զայս՝ Սիրեցի, զի լուիցէ Տէր զձայն աղաւթից իմոց: Եւ ի սմին սաղմոսիս նկարագրէ զսիրոյն կերպարան կատարելութեան՝ գերադրական ամենայն առաքինութեան, վասն զի յայս հաստատեցաւ առ Աստուած սէրն վկայական, որպէս եւ երգիչն այսր սաղմոսի Դաւիթ ի նեղութեան եւ յանձկութեան զսէրն Աստուծոյ յանձին ունէր: Նմանապէս եւ մեծն Պաւղոս ինքեամբ ի նոյն զաշակերտսն յորդորէր, ասելովն թէ՝ Ո՞վ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի: Եւ ոյք արդեամբք կատարեալ սիրոյն Աստուծոյ հաղորդեցան՝ վկայքն երանելիք, յղացան եւ ծնան զհոգի համբերութեան ի փրկութիւն անձանց, նաեւ զ/253բ/նա եւ զհանապազորդ մեռանիլն վասն հաճոյիցն Աստուծոյ: Ի սմին նկարագրէ, ասելովն թէ՝ Զամենայն աւուրս իմ կարդացի առ Նա, եւ թէ՝ Փրկեա՛ զանձն իմ ի մեղացն մահուանէ եւ զաչս իմ՝ յայն արտասուաց, որ կրճատումն է ատամանց: Զի հաճոյ եղէց առաջի Քո այսու սիրոյ կատարմամբ յայն կենդանեաց երկիրն: Պատեհ համարեցաւ սուրբն Բասիլիոս զայսր սաղմոս ի միտք յառաջինն պատուաստել, զի անդ զսիրոյ ճառեալ ի հաւատս աւարտեաց: Զի

անդ ասաց՝ Սիրեցի, զի լուիցէ Տէր զձայն աղաւթից իմոց, եւ աստ ի հաւատոյ սկսանի, վասն զի հաւատն սկիզբն է արդարութեան, որպէս եւ սէրն զաւդէ եւ կատարումն տեսակաց ամենայն առաքինութեան:

Յաղագս այսորիկ ասէ՝ Հաւատացի, զոր եւ խաւսեցայ, թէ Յիսուսիւ հաճոյ գտայց երանելի կենացն: Նաեւ ամենայն արուեստից զհաւատն դնես սկիզբն, որ եւ յաղագս անհասութեան Աստուծոյ հաւատովք է հանդիպելի: Իսկ յաղագս փրկագործ տնտեսութեանն Քրիստոսի ասէ՝ Ես ասացի ի զարմանալ իմում, թէ ամենայն մարդ սուտ է: Հիանան յայնմիկ բանի յոլովք եւ ասեն, թէ ամենայն մարդ սուտ է, ապա եւ ինքն Դաւիթ սուտ է, զի եւ մարդ էր: Ապա թէ նա ճշմարիտ է, յայտ է, թէ չէ ամենայն մարդ սուտ: Իսկ ոյք զայս ասեն, գիտասցեն, զի հոգեկիրն Դաւիթ վասն Հոգւոյն, որ ի նմա խաւսէր, ոչ ստէ սա[յ]ապէս եւ ամենայն աստուածախաւսքն:

Այլ յաղագս Աստուծոյ բնութեանն ասել ումեք կամ իմանալ անհնար է եւ սուտ, նաեւ զանձնէ իւր մարդ չկարէ ստուգիւ ճառել: Այս է ասելն՝ զամենայն մարդ սուտ: Իսկ զի ետ մեզ աստուածակերպ գեղեցկութիւն, ասէ դարձեալ՝ Զի՞նչ տաց ի տրիտուր Տէրն ընդ ամենայնի, զոր եւ ետ ինձ եւ այն, զի զՄիածինն ետ: Այլ զբաժակն փրկութեան՝ զմահն առից վասն նորա եւ այնպէս զամենասուրբ անուն Տեառն կարդացից ըստ այնմ՝ Վասն Քո մեռանիմք զաւրհանապազ զմահն, որ պատուական է, քան զկեանս տաժանելի եւ ծաղկընկէց:

[ԺԶ]

/254ա/ Պատճառ վեցտասան[1] ճառին, որ յԱմենասուրբ Երրորդութիւնն

Զ Աստուած հանապազ յիշել բարեպաշտութիւն մեծ է՝ ասէ: Զհամագոյ եւ զՍուրբ Երրորդութիւնն ուսուցանէ փառաւորել եւ դաւանել վարդապետս սուրբ, վասն զի այն էր հոգք նմա հանապազ: Արդ, զառաջինն պատճառ ասելն Հաւր դնէ եւ ապա Որդւոյ եւ Հոգւոյ ի Նմանէ ըստ բնութեան անժամանակաբար, քանզի ոչ այլոց բնութեան կամ այլոյ էութենէն, այլ Բանն Աստուծոյ Հաւր զաւրութիւն եւ իմաստութիւն է, Որդի եւ ամենայն, որ ինչ է Հայր, բայց ի հայրութենէն: Զի առանձին Հաւր յատկական է անուն ի նոյն հաւասարութենէ, եւ յէութենէ իմա՛ զՀոգին Սուրբ՝ անայլայլական, անհասանելի եւ այլն:

---

1 Բնագրում «Պահոց գրքի» տասնհինգերորդ ճառի («Ի ՃԺԵ սաղմոսն») պատճառը բացակայում է, ուստի պատճառները յետայսու կհամարակալենք ըստ Պահոցի ճառերի համարների:

Ամենայն, որ ինչ Հայր, նոյն է Որդի եւ Հոգին Սուրբ: Բայց Որդին ոչ Հայր անուանի, եւ ոչ /254գ/ Հոգին՝ Որդի: Հոգին սուրբ բարի, ուղիղ, սուրբ եւ այլն: Որդի ամենազաւր, իշխանակից, համաբնութիւն, իսկակից, փառակից, զի որպէս առանձին է Հաւր ծնողութեան պատճառն, առանձին է եւ Որդւոյ ծնելութիւն միածնութեան: Առանձին է եւ Հոգւոյ բղխումն ելողութիւն[1] *ի Հաւրէ: Այսպէս են անձնաւորութիւն երրորդութեանն: Իսկ համագոյական ասելն այս է, զի որ ինչ Հաւր բնութիւն է, նոյնպէս են Որդի եւ Հոգին. անսկիզբն Հայր, անժամանակ նոյնպէս իմա՛ զՈրդի եւ զՀոգի, արարիչք ժամանակաց եւ ժամանակաւորաց, յաւիտենականք ընդ մշտնջենաւորին Հաւր եւ անժամանակին Հաւր անզրաւապէս:*

[ԺԷ]

Պատճառ եւթնուտասնՃ[2] ճառին, յսկիզբն Աւետարանին Յոհաննու, զոր ասէ՝ Ի սկզբանէ էր Բանն

Եւ Բանն էր, որ նախքան զայս ճառ աստուածաբանութեանն յԱմենասուրբ երրորդութիւնն ի զգուշութիւն տուաւ ի սրբոյ վարդապետէն ուղղափառ դաւանողաց: Իսկ այս համառաւտ բան աստուածաբան Աւետարանին Յով[հ]աննու նման նմին զգաստացուցանէ զմիտս բարեպաշտս՝ ոչ խոտորել ի բանս հերեսիոտացն, որք ասէին՝ էր երբեմն, յորժամ ոչ էր Որդի: Եւ սա յաղագս այնր իւր վկայ առնու զԱւետարանին ձայնն, որ ասէ՝ Ի սկզբանէ էր Բանն: Զոր եւ առ համեմատութիւն՝ բանից զէրն յաւելլով՝ զիսկակիցն Հաւր զեկուցանէ: Ի սկզբանէ /255ա/ էր Բանն. յորմէ՞ սկզբանէ: Զի ահա բազում եւ զանազան սկսբունք են ի գոյսս՝ որպէս արարածոցս եղանութիւն եւ բարի ճանապարհի եւ իմաստութեան:

Իսկ Միածնին զՀայր անուամբ գիտեմք սկիզբն միայն: Եւ զէրն ասելով ցուցանէ, թէ ոչ էր ժամանակ, յորում ոչ էր Որդի ընդ Հաւր, եւ առ Աստուած էր Բանն անբաժանաբար, եւ աստ եւս էրն զանժամ[նա]կութիւն վարդապետէ: Նա էր ի սկզբանէ առ Աստուած զնոյն իսկ, զոր յառաջն եդ, թէ ի սկզբանէ էր: Հաստատէ այսու եւ ուսուցանէ, թէ յորժամ չարափառքն զոչ էրն ասեն, դու չորիցս յաւելլով զէրն, խափանեսցես զնոցա զոչ էրն եւ միայն ի յայնր[3] *հաստատեսցիս անփոխաբար:*

1 բնագրում այլողութիւն

2 բնագրում վեցտասան

3 բնագրում յայրն

[ԺԸ]

Պատճառ ութուտասնՃ[1] ճառին, որ ի Ծնունդն փրկական

Քրիստոսի ծնունդն իւրականն եւ յատուկն առ ի Հաւրէ լռութեամբ առ ի մէնջ պատուեսցի, վասն զի անհաս է: Արդ, սուրբն Բասիլիոս կարգս դնէ աստուածաբանաբար յաղագս Աստուածութեանն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Յառաջին ճառին զՍրբոյ երրորդութեանն անուն եդ եւ ի միաւորումն զԲանն անժամանակ ի Հաւրէ ուսոյց, եւ զՆոյն՝ Աստուած կատարեալ ընդ Հաւր: Իսկ յայսմ ճառի զԾնունդն իսկական առ ի Հաւրէ լռութեամբ ասաց պատուել, քանզի ի վեր, քան զիմաստս իմանալեաց եւ զգալեաց է: Քանզի ուր ոչ ժամանակ եւ ոչ յաւիտեան, զիա՞րդ երեւութասցի մտաց ուրեք: /255բ/ Այլ զի Հայր էր եւ ծնաւ Որդի ասա՛: Բայց զզիարդն մի՛ քննէր, այլ երկի՛ր յահագնութենէ աստուածայնոյն ճառագայթից եւ մի՛ բազմախուզութեամբ վրիպիցիս ի ճշմարտութենէն՝ խնդրելով զյեղանակ ծննդեանն, եւ վասն այնորիկ ժամանակ ի ներքս բերցես անժամանակականին ունայնախոհ մտաւք:

Արդ, թողցուք զմշտնջենաւոր ծնողեանն քննելն՝ գիտելով, թէ անհաս է, եւ միտք ոչ են կարող քննել, եւ գիւտ նորա անճառելի է, զի Աստուած է յերկինս եւ յերկրի, ոչ փողոյ կամ այլոց պէտք են նշանաց ըստ Սինայի առ Մովսէսիւ, այլ այս ծնունդ տէրունական Աստուած ի մարմնումն ոչ առիւծուց երեւութիւք՝ որպէս առ մարգարէիւքն, այլ բուսակից Ինքեան առնէ զմարդկային բնութիւնս:

Եւ զիա՞րդ. որպէս հուր յերկաթում՝ ոչ փոխարկաբար, այլ փոխտրաբար ոչ ինչ նուազեալ յինքենէ բնակեսցի մեզ լիով եւ յեղումն ոչ ընկալաւ յիսկութենէն. ոչ երկրին անապատ էր յունողէն զնա, եւ երկիրս ի ծոցի իւր ընդունէր զերկնայինն: Իսկ ի մարմնի լեալ Աստուածն Բան ոչ ին[չ] առ փոխատրութիւն ի մարմնոյ տկարութենէ ակամայ, այլ կիրս չուրջ զանախտականաւն անանգոսնելիս վասն իւրացուցանելոյ զմերս, բայց ի մեղաց, եւ վասն այն ի մարմնի, զի սպանցէ զմահ: Եկուլ մահ զկեանքն եւ ընկալաւ ի կենացն, եկուլ ընդ այլսն զմինն եւ կորոյս զբազումսն: Յայսպիսի աւրինակս աւարտ ա/256ա/ւարտէ զծնունդն ի կուսէն՝ ի մարգարէէն նախաձայնեալ: Եւ զի ծածկեցաւ խորհուրդն յաշխարհակալէ խաւարիս այսորիկ, յարէ ի նոյն զծնանելն ի Բեղղէէմ եւ զգալ մոգուցն եւ որ ինչ անդ ցոյցք սքանչելեաց ի մարգարէիցն վկայութենէ հաստատել ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մ[եր]:

1 բնագրում եւթնուտասն

[ԺԹ]

Պատճառ իննուտասն[1] ճառին՝ վասն հարցման Բարսղի առ Ապողինար

Եւ ի վերնագրէն ուսանիս, զի յետոյ թարգմանեցաւ ճառս ի Դաւթէ թարգմանչէ եւ եղաւ յայսր մատենի: Զի երբեմն հանդիպեալ սրբոյն Բարսղի առ աշակերտի Ապողինարի եւ հարցեալ, թէ որպէ՞ս ասեն վասն Տեառն մարմնանալոյն, եւ նա ասաց, թէ զմեր մարմինս էառ առանց հոգւոյ մեր եւ մտաց՝ ի տեղւոջ սոցա զԱստուածութիւնն ասելով: Իսկ սրբոյն զնոսա յանդիմանել զիւրն հաստատէ ճշմարիտ դաւանութիւն ի մէջ Եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

[Ի]

Պատճառ քսաներորդ[2] ճառին՝ ի հարցուած Բարսղի Աստուածաբան

Այսպիսի հարցուածքս եւ պատասխանիքս արանցն աստուածազգեստից ոչ հակառակեն, եթէ իմացուք խոհեմաբար: Սակայն ոչ անգիտութեամբ հարցումն, քանզի կատարեալք յիմաստս երկոքեան եւ հաւասարք միմեանց եւ խնդիր ի մէջ առնուն ապագայից ժամանակաց եւ լուծումն տարակուսանաց տգիտաց: Սկսանին յաստուածականն էութենէ՝ յանսկզբնականն էութենէ, յանժամանակ ծննդենէ Բանին Աստուծոյ եւ ի /256բ/ նոյն Հաւրէ դաւանել զԱմենասուրբ Հոգին բղխողապէս եւ անհատաբար եւ կատարեալս զԵրեսին եւ միաւորեալս միաբնութեամբ, նոյնաբնութեամբ: Արարիչք իմանալեաց եւ զգալեաց, անտեսանելի ամենեցուն ըստ բնութեան: Իսկ ըստ որում տեսեալն եղեւ արժանաւորաց, ըստ կարի տեսողացն երեւիր առ ի ցուցումն, թէ եւ ոչ մի յայնցանէ է Նա եւ այնու անհասանելի վերագրի Նա յամենեցունց:

Հարցանէ եւ վասն հրեշտակաց էութեանն, մեծութեան եւ խոնարհութեան, եւ կան ի եւ սպասահարկութեան. եւ թէ անտեսանելիք են մարդկան ըստ բնութեան հրեշտակք, այլ եւ հոգիս մեր անտեսանելի է մեզ: Ցայսմանէ եւ ի տարրականս գոյացութիւն իջանեն եւ ասեն վասն արեգական, լուսնի եւ աստեղաց եւ այլ խոնարհագոյն քան զնոսա չորիցս տարերաց բնութեանցն յատկութեանց եւ հակառակացն միաւորութեանց, նաեւ վասն զգայութեանս մեր հաւանութեան եւ

1 բնագրում ութուտասն

2 բնագրում իննուտասն

զանազանութեան: Եւ այնպէս հաւանեցուցանեն զլսողսն ի հարցմանն իւրեանց:

[ԻԱ]

Պատճառ քսան եւ մի[1] ճառին, որ առ Ոպտիմեայ եպիսկոպոսն

Ոպտիմէոս եպիսկոպոս վիճակակալ ընդ իշխանութեամբ Բասիլիոսի: Եւ առաքէ սուրբն զոմն ի մանկանց Եկեղեցւոյ առ Ոպտիմէոս, զի յաւժարէր յուսումն կրաւնաւորութեան: Եւ գրէ առ նա վասն նոցին յարգանաց եւ յաղագս Եկեղեցւոյ զգուշաւոր կարգաց աւանդեալ խրատս հոգեշահս եւ կանոնս /257ա/կանս մանկանցն եւ իւր Ոպտիմէոսն ի սրբոյն Բարսղէ: Յորում թղթի եւ հարցանէ Ոպտիմէոսն զսուրբն Բասիլիոս վասն եւթնեկի յանցանացն Կայէնի եւ նոյնքան պատժոցն թուոյ: Նաեւ յաղագս Ղամեքայ ինքնապարտ վճիռն եւթանասնիցս եւթն: Այլ եւ վասն մարգարէութեան Սիմէոնի ի վերայ Տեառն մերոյ, թէ սա կայ ի կանգնումն եւ ի գլորումն բազմաց ի մէջ Իսրայէղի եւ ի նշան հակառակութեան այլովքն:

Իսկ Բասիլիոս նախ ուրախանայ վասն մանկանց Ոպտիմեայ բերողաց զթուղթն եւ յարգէ գովեստիւ ի պատասխանիսն եւ ապա զՈպտիմէոսն առնու յարգանս վասն բարի հոգաբարձութեան եւ շահաւէտ խնդրոյն: Ցուցանէ եւ զչափ պատժոցն Կայէնի եւ Ղամէքայ. զԿայէնին մինչ ի ջրհեղեղն եւ զՂամէքէն մինչ ի Տէր մեր: Եւ զմարգարէութիւնն Սիմէոնի խորհրդածէ վասն Քրիստոսի՝ գլորիչ մեղաց եւ կանգնող արդարութեան ասելով եւ սուրն առ Մարիամ՝ չարչարանքն եւ մահն Տեառն, որով ընդ միտս ասաց Կոյսն, թէ զի՞նչ եղեն աւետիքն եւ այլն մեծամեծքն եւ յայտնել ի բազում սրտից խորհուրդք, որք զանազանապէս իմացան զնմանէ ի միտս իւրեանց:

Զայս լուաք պատճառ ճառիս եւ պատասխանի թղթոյն Ոպտիմեայ:

1 բնագրում քսաներորդ

[ԻԲ]

Պատճառ քսաներկու[1] ճառին, որ առ Եւսեբիոս եպիսկոպոս Կեսարու ասացեալ

/257բ/ Եւսեբիոս այս առաջնորդ էր Կեսարու յառաջ քան զսուրբն Բարսեղ: Եւ էր յայնժամ սուրբն Բարսեղ աւագագոյն կարգեալ աւագ եկեղեցւոյն Կեսարու քահանայիցն եւ սարկաւագացն: Եւ եղեւ ի չար արանց չարախաւսութիւն զԲարսղէ առ սուրբն Եւսեբիոս, որպէս թէ խորհի նա առնուլ զաթոռն Եւսեբեայ, վասն զի հաճոյ էր Բասիլիոս յաչս ամենեցուն: Առ այսպիսի կարծիս Եւսեբիոս կիրս մարդկապէս կրէր յինքեան, զոր իմացեալ Բասիլիոս՝ խոյս տուեալ չոգաւ յանապատ, մինչ զի յայտնի լիցի ճշմարտութիւնն:

Եւ աստ այժմ սկսանի զկիրս մտացն եւ ասէ՝ Ցորժամ առ իրսն հայիցիմք եւ զդժուարութիւնն տեսանեմք, յորոց ներգործութիւն բարեացն խափանի, այսինքն սիրոյն ի բաց հրաժարումն ինքանց գամք՝ թռչել, ըստ մարգարէին, թեւաւք աղաւնոյ եւ հանգչել յանապատի: Եւ զի իմացաւ Եւսեբիոս զկարծիսն սուտ լեալ, խնդիր առնէ նմա գալ ի տեղի իւր, յաղագս որոյ եւ Բասիլիոս գրէ պատասխանի Եւսեբեայ: Ցորժամ տեսանեմ, ասէ, զքո վայելուչ պարկեշտութիւնդ, եւ զի բժիշկ ես դու յԵկեղեցւոջ եղեալ ի Տեառնէ, վերստին եւ ես առնում զյաւժարութիւն սիրոյ առ քեզ: Ցուցանէ եւ զժամանակին, թէ քանի եկեղեցիք պատառեցան ի միմեանց իբրեւ զնաւս ալեկոծեալս ի հողմավար հերձուածոց, զոմանս յարտաքնոց եւ զկէսս /258ա/ ի ներքնոցն, որք նոյնք էին հաւատով, թէպէտ հակատրեն իւիք իւիք:

Սակայն դու, ասէ, թուղթ մի առաքեա՛ առ նահանգաց եպիսկոպոսքն՝ ըստ որում համադաւանք են, նոյնախոհք լիցին եւ յաղագս բարի գործառնութեանս վասն իմ, զի անտեղեակ էի, որոց լուար ի չարախաւսացն: Եւ զայն գիր յղեա՛ ի ձեռն հաւատարմաց կամ ի ձեռն Դորթէոսի սարկաւագակցի իմոյ, եւ ոչ տաց, եթէ ոչ նախ զգրաւական սիրոյ առից ի նոցանէ ես: Ապա թէ զայս ոչ առնեմ, յանցաւոր եղէց առաջի քո: Եւ դու, թէ զայս ոչ արասցես, թողացո՛ ինձ կալ յանապատի աստ եւ զմտերմութիւն առ ձեզ ունել, թէպէտ հեռի իցեմ: Ցայս միտս տեսանի եւ զաւրութիւն զգուշաւոր սիրոյ:

[1] բնագրում քսան եւ մի

[ԻԳ]

Պատճառ քսաներորդ երրորդ[1] ճառին, որ ի Բարսղէ առ Գրիգոր Աստուածաբան վասն հաւատարիմ վարուց

Սուրբն Բասիլիոս եւ Գրիգոր Աստուածաբան երկոքին ընտրեալք ի մանկութենէ, զի թէպէտ ի կատարման հասակի վիճակեցան յառաջնորդութիւն Եկեղեցւոյ Քրիստոսի, սակայն կամաւք եւ՝ մտաւք զանապատական վարս սիրէին կեալ սակաւապիտութեամբ եւ անպաճոյճ գնացիւք եւ մշտամատոյց աղաւթիւք. յայս զմիմեանս յորդորէին եւ զայլս՝ ի նոյն նախանձ:

Արդ, երեւի յայսմ մատենի, թէ նախ Աստուածաբան գրեաց առ սա ի սորին անապատն /258բ/ յիւր անապատէն՝ վասն վարուց անապատականաց, որպէս եւ ասէ յսկիզբն ճառիս, թէ՝ ծանեայ զթուղթ քո այսպէս, զի զոր աւրինակ յերեւմանէ մանկանց երեւին ծնողքն, նոյպէս եւ քոյդ: Եւ ապա ցուցանէ վասն անապատին կենաց, նաեւ զքաղաքաբնակութեան ցուցանէ զզանազանութիւնս, վասն զի գովեալ էր եւ սոցա ընդ միմեանս առաջին վարքն:

Եւ ասացեալ, թէ ոչ ինչ էր տեղոյն կազմութիւն մեծ առ առնելիսն անձին քում, որ յար ընդ մեզ յառաջ, որում պատասխանի, թէ՝ քո է արդարեւ իմացուածս առ ոչինչ դնողիդ զամենայն վասն բարուց ուղղութեան: Իսկ ես, ասէ, ելեալ ի քաղաքի պատաղմանց՝ ի բնաւորեալ կրից պարաւանդիմ նման այնոցիկ, որ ի մեծ նաւէ ի փոքր մակոյկ ելանեն եւ նոցկտան ի ծովական յածմանէն: Այսպէս եւ ես զտնական ախտն ընդ իս բերելով՝ տէրունական հրամանին ոչ անսացի՝ ուրանալ զանձն եւ այնպէս զհետ երթալ Տեառն աշակերտութեանն:

Ցայսոսիկ յարմարէ եւ զխնդիրն խրատական վարուց միանձանց, զոր խնդրեաց Աստուածաբան: Նաեւ միմեանս միաբանակեցաց եւ նախ զաշխարհիս իրս դնէ զանհաստատս եւ զբազմավրդովս, զանհամ ալեկոծմունս ամուսնաւորաց եւ որոց որդիս եւ ստացուածս ունիցին եւ որք ոչն ունիցին: Իսկ զանապատին կեանս /259ա/ ազատ յամենէ ցուցանէ. մարմնով մեկուսի, մտաւքն առ ինքն հայեցող, ընթերցմամբ Աստուածային Գրոց զուարթացեալ եւ պատմութեամբք հաճոյացելոցն Աստուծոյ յաւրինեալ զինքն ի զուգակշիռ առաքինութիւնս: Հաւատոց եւ հնազանդութեան այլովքն եւ զձեւ կրաւնից ի կերակուրս եւ յըմպելիս ցուցանէ զանպաճոյճն: Նոյնպէս եւ զհանդերձն եւ զգաւտի

[1] բնագրում քսաներկու

նորովք զհանապազորդեան աղաւթսն կատարեն ի փառս Սրբոյ Երրորդութեանն:

[ԻԴ]

Պատճառ քսաներորդ չորրորդ[1] ճառին՝ ի Բարսղէ առ նոյն Գրիգոր Աստուածաբան վասն կանոնական սահմանադրութեան ասացեալ

Գովելով եւ լուռ լինելով, ասէ, ունիմք ի սիրտս մեր զյիշատակ քոյոյ բարեզարդութեանդ եւ աղաւթս, ասէ, առնել ի նոյն կալ աւետարանական առաքինութեան եւ յոյժ սակաւուց, ասէ, ուղղել զայս, զի մեծամեծաց եւ փոքունց, ասէ, հրամանացն տէրունի կատարիչ ոք լինիցի մտաւք եւ զգայութեամբք: Դաստիարակելով զիւրաքանչիւր զգայութիւնն յիւր զաւրութիւն ի խոնարհութեան, յաղքատասիրութեան եւ յայլսն տեսակս առաքինութեան, որով ինքն կանոնք տեսողացն լինիցի: Յետ այսպիսի գնացից ուղղչին կանոնս շարագրէ կրաւնաւորաց, զորս եւ քրիստոնեայս անուանէ ի Թիւս քառասուն եւ երից գլխոց:

[ԻԵ]

Պատճառ քսաներորդ հինգերորդ[2] ճառին, որ առ Դէոդորոս երէց Անտիոքացի

/259բ/ Դէոդորոսս այս ի լաւաց եւ ի պիտանեաց երեւի գոլ, վասն որոյ եւ սուրբն Բասիլիոս ակնածելով առնէ պատասխանի գրելոցն ի նմանէ, որպէս թէ այլ ոք ի նորա դէմս գրեաց զհարցումն անվայելուչ, որ ինչ պատեհ էր Դէոդորայ: Կամ թէ արար ոք զայս որպէս եւ գրեալս է, զի նորա անուամբն թաքուցէ զինքն եւ յարգեսցէ զչար ձեռնարկութիւնն: Եւ է այսպիսի բանն, որպէս հարցեալ ուրուք զնա, թէ՝ արժա՞ն է զքոյր կնոջ առնուլ ի կնութիւն զկնի մահուան առաջնոյն, որ եւ կարի աւտար էր կանոնական սահմանաց ոչ միայն մերոցս, այլ եւ որոց ընդ հին աւրինաւքն էին, թէպէտ եւ գրեալ է ի Ղեւտականին՝ առ կենդանութեամբ առաջնոյն ոչ առնուլ հակարաշ զերկրորդն: Եւ յայսմ պատճառ է՝ յետ մահուան առաջնոյն թոյլ տալ երկրորդին, որոց աստ ի Ղեւտականէն յաւելու զպատասխանին, թէ՝ Առ ամենայն ընտանութիւն մարմնոյ քո մի՛ մտանիցես:

1 բնագրում՝ քսաներորդ երրորդ

2 բնագրում՝ քսաներորդ չորրորդ

եւ հաւասար, ասէ, առն եւ կնոջ, որպէս զի քոյր կնոջն եւ իւր քոյր համարեալ է, ըստ որում մի մարմին են երկոքեան, նաեւ այն ոչ մտանէ ի Նոր քարոզութիւնս: Բայց եթէ ախտասիրաբար ոք անարգէ զպարկեշտ աւրէնս Աւետարանին, այսպիսի կարգաւ զգուշացուցանէ զԴէոդորոս ոչ տալ տեղի այնպիսի խնդրոց, զի մի՛ լուծցին սուրբ կրաւնք կանոնականք:

[ԻԶ]

Պատճառ քսաներորդ վեցերորդ[1] ճառին, որ յաղագս Գոհութեան

/260ա/ Յայսմ ճառի զառաքականն յարգէ պատուիրան ի նշանակ ամենայն Եկեղեցւոյ եւ հա(մա)տացելոց, զոր ասէ Պաւղոս, թէ՝ Յամենայնի՛ գոհացարուք եւ հանապազ աղա՛ւթս արարէք եւ միշտ ուրա՛խ լերուք: Յորս տարակուսին ոմանք, թէ զիա՞րդ հնար է տկար եւ ցաւալի բնութեանս եւ դիւրափոփոխ յայս պատուիրանս թեւակոխել՝ ի սգի զիա՞րդ ուրախանալ կամ ի ցաւս՝ գոհանալ եւ յանպարապութեան՝ աղաւթել:

Այսպիսի տարակուսանաց յարանց բարեաց առնէ զպատասխանին եւ ցուցանէ հնարաւոր, որոց բուն եւ բաղձալի բարին է ցանկալի՝ որպէս Աբրահամու, Իսահակայ, Իսրայէղի, Յովսէփու եւ այլոցն ամենեցուն ի վերայ ամենայն Տեառն մերոյ համբերողի վասն մեր եւ հաւատարիմ աշակերտին նորա Պաւղոսի, յորս հաճեալ է ընդ վիշտս հանապազորդեան կատարեալ զաղաւթս իւր վասն սիրոյ Տեառն մերոյ յԱւետարանն:

[ԻԷ]

Պատճառ քսաներորդ[2] ճառին, որ ի Յուդիտտեայ վկայն

Սուրբ եւ երջանիկն Բասիլիոս վկայասէր գրէ եւ վասն երանելոյն Յուդիտտեայ՝ ցուցանելով զնահատականութիւնն նորա, թէ որպէս արիական հանդիսիւ յամաւթ արար զանաւրէն դատաւորն եւ զկռամոլ թագաւորսն՝ հանդերձ սատանայիւ, որ հասարակաց ամենայն բնութեանս է թշնամի: Ի վեր երեւեալ, քան զկանանց բնութիւն, զոր հրամայէ Բասիլիոս, թէ կնոջ անուն /260բ/ անմարթ է առնացի քաջու-

1 բնագրում՝ քսաներորդ հինգերորդ

2 բնագրում՝ քսաներորդ վեցերորդ

թեանն ասել: Բայց ոչ է սա այն Յուղիտտեայն, որոյ որդին Կիւրակոս անուն, զի զնա ցուցանէ ի Կոնոյ քաղաքէն փախուցեալ վասն հալածանացն ի Սելեւկիայ եւ անտի ի Տարսոն Կիւղիկեայ եւ անդ որդովն վկայեալ՝ յԱղեքսանդրէ դատաւորէ զանազան տանջանաւք՝ հանդերձ որդւովն Կիւրակոսիւ ի Դիոկղիտիանոսի թագաւորութեանն: Իսկ զսորա ոչ քաղաք ցուցանէ եւ ոչ որդի եւ ոչ թէ յորում ժամանակի վկայեաց:

Եւ սորին նահատակութեան այսպէս երեւի սկիզբն. զի ազգաւ էր մեծատուն եւ այրի մնացեալ սորա յառնէն եւ ի ծնողացն, ապա բռնաւոր ոմն, ունելով հաչիւ ինչ պարտուց ընդ այր սորա կամ ընդ ծնողսն, առնու ի սրբոյն բազում անդաստանս, ոսկի եւս եւ արծաթ: Իսկ սուրբն Յուղիտտեայ իբրեւ դատաստան եւ ատեան իրաւանց խնդրէր, ի նմին ժամու անաւրէն զրպարտողն ասէր ատենիւն, թէ որք զաստուածս թագաւորաց անարգեն, չէ մարթ նոցա յատենի խաւսիլ համարձակ եւ կամ հայրենիս պահել: Եւ զայս լուեալ դատաւորին՝ հարցանէր սուրբն, թէ՝ Այսպէ՞ս իցէ, զոր լսեմս: Եւ նորա համարձակութեամբ խոստովանել զՔրիստոս՝ կատարեցաւ հրով եւ սրով՝ ասելով. «Ինձ այլ զինչ մեծագոյն ժառանգութիւն, զի զմարմնական հայրենեաց հոգալով՝ զերկնաւորն ահա պատրաստեալ եմ առնու/261ա/լ ի Քրիստոսէ:

Իսկ զկնի սորին խրատ հասարակաց ամենայն Եկեղեցւոյ մատուցանէ՝ զանազանապէս զգուշութիւն դնելով: Եւ այսպէս յառաջ ասացեալ գոհութեան ճառն նմանեցուցանել[է] զայժմու վարդապետութիւնս լիապատար խորհրդով ի Քրիստոս Յիսուս:

[ԻԸ]

Պատճառ քսան եւ ութ[1] ճառին, որ ի սուրբն Ստեփաննոս՝ ներբողական բան գովեստի ի սրբոյն Բարսղէ

Զհրաշալի նահատակութիւն սրբոյն Ստեփաննոսի մեծապէս տաւնէ ամենայն Եկեղեցի Քրիստոսի, վասն զի առաջին վկայ Քրիստոս՝ փրկիչ ազգի մարդկան, եւ երկրորդ վկայ Ստեփաննոս՝ առաջին վկային Քրիստոսի: Նոյնպէս եւ սարկաւագ անուանի իւր պատուական արեանն հեղմամբ երկնաւոր քահանայապետին Յիսուսի Քրիստոսի եւ բացող դրանց երկնից, որով տեսանէր զՅիսուս ընդ աջմէ Հաւր ի կերպի Ադամայ, որոյ նահատակական հանդէսն էր յետ երկու ամի համբառնալոյ Տեառն մերոյ, որպէս պատմի յամենայն Եկեղեցիս

[1] բնագրում՝ քսանեութներորդ

Տեառն մերոյ: Նոյնպէս եւ սուրբն Բասիլիոս ներբողական գովեստիւ բաղձալի ամենեցուն ցուցանէ զյիշատակ Նախավկային՝ նմանեցուցանելով զանազան կերակրոց եւ մայրենի գրոց, եւ Հայր զԱստուած ասելով եւ մայր՝ զԵկեղեցի, տեսող այնպիսի հոգեւոր բերկրանաց եւ նիւթ խնդութեան, զհաւատ, զյոյս եւ զսէր, որով մեծանան անձինք հաւատացելոց:

Ցուցանէ եւ զՍտեփաննոս, թէ ո՞ էր, /261բ/ եւ զի՞նչ էր պատիւ նորա առ առաքելովքն: Կացուցին առաքեալքն, ասէ, զՍտեփաննոս խնամածու սրբոց եւ այրեաց, որ մեծ էր քան զառաքելական պատիւն, եւ յայտ անտի է, զի պրակք առաքելոցն լի հաւատով եւ Հոգւով Սրբով զայս պատմէ: Եւ ուր հաւատոյ լրումն եւ Հոգւոյն Սրբոյ բնակութիւնն է, անդ է ամենայն իմաստութիւն եւ գիտութիւնն աստուածային:

Տէրն հրամայէ, թէ՝ որ սիրէ զԻս, զքանն Իմ պահէ, եւ Ես եւ Հայր ալթեանս առ նմա արասցուք: Եւ ստուգապէս սիրեաց Ստեփաննոս, որ եւ պսակ մինչ զի եւ նման Տեառն աղաւթս առնէր սպանողացն:

Յիսուս իբրեւ զՈրդի սիրելի առ Հայր ասէր զթողութիւն խաչահանուացն, եւ Ստեփաննոս իբրեւ զծառայ սիրելի առ Յիսուս աղաւթէր թողութիւն քարկոծչացն՝ ի մտի ունելով զտէրունական պատուիրանն՝ Երանի հալածելոց վասն սիրոյ արքայութեանն:

Յաղագս այսորիկ եւ սուրբն Բասիլիոս զանազան գգուէ զսուրբն Ստեփաննոս՝ ներբողելով. սիւն լուսոյ եւ ճանապարհ կենաց, յորդորիչ նահատակութեան, նուէր Աստուծոյ եւ պատարագ Տեառն անուանէ, ցնծութիւն առաքելոց եւ հրճուանք հոգեղինացն, կարկումն հերձուածողաց ստուգապէս եղեալ: Այսպէս եւ սովին աւրինակաւ գովէ գեղաղէշ բանիւ զթարգմանեալ պսակն, զի եւ նորին յիշատակաւ փառաւորեսցի Ամենասուրբ Երրորդու/262ա/թիւնն յաւիտեանս յաւիտենից:

[ԻԹ]

Պատճառ քսան եւ ինն[1] ճառին, որ ի սուրբ Քառասունսն [ի] Սեբաստիայ

Սուրբ եւ սքանչելի վկայիցն յիշատակ, որ ի Սեբաստիայ կատարեցան, պատմի մեծաւ տաւնախմբութեամբ յամենայն Եկեղեցիս հաւատացելոց, որոց եւ թիւն կատարեալ՝ զկառուցումն մերոյ բնութեանս

[1] բնագրում՝ քսան եւ ութ

ի չորից թուեալ տարերց եւ խորհրդաբար զՏեառն պահոց, զեղիայի եւ զՄովսէսի, ինքեամբք դրոշմեն խորհրդիւ, որպէս զի ըստ արտաքնոցն եւ ըստ մերոյ լի է ի թիւ նոցա ամենագով իմաստութեամբ:

Սակս այսորիկ եւ սուրբն Բասիլիոս պատուէ ներբողական ճառիւք զյիշատակս նոցա՝ ցուցանելով զմեծութիւն նոցա, թէ եւ ոչ քառասուն վկայեալ լեզու իմաստութեամբ կարող է ըստ արժանոյ նոցա գովել զնոսա՝ դնելով սկիզբն այսպէս, թէ վկայասիրի ոչ գոյ յագումն սիրոյ լրման առ ի լցումն խիստ փափագանաց: Եւ որ զնոսա պատուէ, այսպէս է, որպէս զԱստուած ոք առաւել մեծացուցանէ, զի նոցա պատիւն առ հասարակաց Տէրն զակնարկութիւն ունի: Այսպէս անթերի գովութեամբ մատչի սուրբս առ Քառասունսն եւ ի սոյն խորհուրդ աւարտէ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Բայց պարտ է գիտել, թէ ուստի՞ էին ըստ մարմնական տոհմից եւ կամ յորո՞ւմ ժամանակի եւ կամ ո՞րպէս /262բ/ չարչարեցան վկայեալք: Էին ի ժամանակս Լիկիանեայ անաւրէն թագաւորին եւ ազգաւ ի Գամրաց ըստ մարմնոյ եւ ի մի գունդ զինուորութեան կացուցեալք: Իսկ դատաւորն Ագրիկողոս տարաւ զնոսա ի Սեբաստիայ եւ անդ կարգեաց զնոսա ի զինուորութիւն եւ հանապազ նեղէր զսուրբսն զոհել կռոց եւ յոչ հաւանիլն՝ արկ զնոսա ի բանդ: Եւ կացուցեալ զնոսա յատենի՝ ետ քարիւ հարկանել զբերանս նոցա, որ եւ զմիմեանս հարկանէին: Յետ այնորիկ արկին ի լիճն սառնապաղ եւ անտի արկին ի հուր եւ առեալ անտի՝ արկին ի գետ, ըստ մարգարէին՝ Անցաք մեք ընդ հուր եւ ընդ ջուր: Այսպէս կատարեցան՝ փառաւորելով զՀայր եւ զՈրդի:

[Լ]

Պատճառ երեսներորդ[1] ճառին, որ [ի] սուրբ վկայն Գորդիոս

Մեծն ամենայն հայրապետաց եւ վկայասէրն Բասիլիոս յամենայնի հնարէր՝ անյագ զինքն ցուցանել ի վկայական պատուասիրութիւն եւ այսպիսի փափագանաւք պարապ լինէր ի շինումն վկայարանացն: Ըստ այլոցն եւ սրբոյ նահատակին Գորդիոսի շինեալ վկայարան՝ պատուեաց զաւր յիշատակի նորա եւ գրեաց ճառ ներբողական ի պատիւ Գորդիոսի: Էր սա ազգաւ կեսարացի, որպէս պատմէ Բասիլիոս, թէ տնկեցաւ, ասի, ի մեր քաղաքէս եւ ունէր իշխանութիւն հարիւրապետութեան ի Լիկիոսի թագաւորութեանն եւ էր հաւատով քրիստոնեայ ի բարեպաշտ /263ա/ ծնողաց:

Իսկ յաղագս հալածանացն զքրիստոնեայսն եթող զզինուորական իշխանութիւնն, գնաց ի լեառնն եւ ընդ գազանսն բնակէր սքանչելի վարուք եւ ընդ վայրի երէս: Եւ ի միում աւուր էջ ի լեռնէն առանց ուրուք հարկելոյ եւ մտեալ յասպարէս ձիրնթացին, ուր խաղն էր ձիաբուծիցն, եւ անդ համարձակութեամբ խոստովանեցաւ զՔրիստոս: Եւ ի նոյն տեղոջն բազում հարցափորձեալ զնա ողոքանաւք եւ սպառնալաւք՝ ոչ կարացին խափանել ի Քրիստոսի հաւատոցն: Եւ՝ անդէն ի ձիրնթացն հատին զգլուխ նորա՝ վկայ կատարեալ ի Քրիստոս Յիսուս:

Բայց ոմանք Գիորգիոս զսա ասելով՝ ընդ վայր բաջաղին, զի այլ՝ նա, եւ այլ՝ սա, թէպէտ երկոքին ի Կեսարու քաղաքէն էին, զի նա հարիւրապետ էր, եւ սա՝ զաւրավար: Նա յաւուրս Լիկինոսի գնաց յանապատ եւ ինքնակամ եկն ձիրնթացն եւ անպէս կատարեցաւ: Եւ Գիորգիոս[1] ի Դիոկղիտիանոսէ եւ ի Մանգնետիոսէ դատաւորէ զանազան տանջեցաւ՝ ոչ երբէք յանապատ երթեալ կամ անտի եկեալ: Եւ Գորդիոսի կատարի տաւն ի գարնանային ժամանակին եւ Գիորգայ՝ յաշնանային եղանակն ի յունականացն:

Այլ գեղեցիկ դնէ սկիզբն Բասիլիոս յաւժարութեան ժողովրդոցն ի տաւնական յիշատակսն Գորդիոսի՝ ասելով այսպէս. Տեսի, ասէ, զձեզ յամենայն կողմանց այսր՝ գումարեալ զերծեալք ի ամբոխային տխրութեանց, եւ այլն: Ի գովութիւն ածէ եւ /263բ/ զսողոմոնեան ասացեալն, թէ՝ Գովութիւն արդարոց, ուրախութիւն ժողովրդոց, եւ թէ՝ Զոր այլք զազգ հարցանելով երեւելի թուին, զայն անձամբ կատարեն գովութիւն:

Իսկ սրբոյն Գորդիոսի հարիւրապետ գոլով՝ տեղի ետ վասն գոռոզին Լիկիոսի ահ արկանելոյն հասարակաց: Եւ յետ ժամանակ ինչ անցանելոյ եկն յանապատէն՝ խռուացեալ ունելով զհերսն եւ զմուրուսն նման Յովաննու Կարապետին եւ աղտեղի զհանդերձն, խստացեալ զբոլոր մարմինն: Եւ նա այսպէս եկեալ՝ երգէր զսաղմոսն՝ Տէր է իմ աւգնական, զի՞նչ արասցէ ինձ մարդ, եւ թէ՝ Ոչ երկայց ի չարէ, զի Դու, Տէ՛ր, ընդ իս ես: Զայսոսիկ զհանդէս կատարելով երեւեցաւ՝ սրտիւ հաւատացեալ յարդարութիւն եւ բերանով խոստովանեալ զփրկութիւն, կատարեաց զընթացս իւր մեծաւ հանդիսիւ ի Քրիստոս Յիսուս:

---

1 բնագրում՝ քսան եւ իննն

1 բնագրում՝ Գրիգորիոս

[ԼԱ]

Պատճառ երեսուն եւ մի[1] ճառին, որ վասն Մկրտութեան

Սուրբ եւ երանելի հայրապետն ասաց ի Քառասնորդսն աղուհացից զբաւանդակ աստուածային մատեանս՝ լի ամենայն իմաստութեամբ, ի զանազան ճառս բաժանեալ, եւ զամենայն հաւատացեալսն անվանելի արար թշնամոյն: Իսկ մերձ յաւարտումն գրոցն եւ աւուրց պահոցն ապա սկսանի առնել վարդապետութիւն անոցիկ, որ հանդերձեալ էին գալ ի Մկրտութիւն՝ ըստ նմանութեան սրբոյն Կիւրղի, որ զընթերցուածսն ինն ու տասն /264ա/ զուգեաց սակս երեխայիցն խրատու: Այսպէս եւ սա զնոյն խորհրդէ բուռն հարեալ՝ սկիզբն ի Սողոմոնէ դնէ, թէ ժամանակ է ծնանելոյ եւ ժամանակ՝ մեռանելոյ: Եւ ես, ասէ, սակաւ առից զսողոմոնեանն, զի վերստին ի յոյսն կենդանի ծնանելով՝ զմահուն անուն դնեմ, որով զկեանս վերածէ մեզ, զի ի մեռանելն մարմնոյ յԱւազանն՝ յառնեմք ընդ Քրիստոսի:

Արդ, մեռցուք, ասէ, զի կեցցուք: Ժամանակն ի Սողովմոնէ յայլ եւ այլ հայի տեսակ, բայց Մկրտութեան ամենայն ժամանակ գովելի է, եւ առաւել այս, ասէ, որ ընդ Քրիստոսի հարազատապէս ի Նորա Յարութեանն աւուր մկրտիմ: Յով[հ]աննու քարոզելովն յապաշխարութիւն մկրտիլ գա[յ]ին, իսկ աստ Քրիստոս քարոզէ՝ մկրտել ի հուր եւ ի հոգի: Եւ ո՞վ է, որ ոչ մատչիցի. ցուցանէ վարդապետս սուրբ ի սոյն ճառի, թէ կոչողն մարդասէր է, սպասաւոր քահանայն՝ պատրաստ, եւ շնորհն՝ առատ: Մի՛ հեղգասցուք, զի մի՛ զրկիցիմք յանանց բաբեացն: Ածէ եւ բազմազան աւրինակ ի մարգարէիցն, յառաքելոցն եւ ի Տեառնէ եւ այնպէս փափագելի առնէ ամենեցուն զՄկրտութեանն մաքրութիւն ի Քրիստոս Յիսուս, Որում փառք:

[ԼԲ]

Պատճառ երեսներորդ երկրորդ ճառին՝ ընդդէմ այնոցիկ, որ յանդգնին չարեաց պատճառ ասել զԱստուած

Սովորութիւն էր սրբոց վարդապետացն հանապազ որոնել զհոգս եկեղեցւոյ սրբոյ եւ հալածական առնել զմնասակարսն, զի մի՛ արմատ դառնութեան /264բ/ ոք ի վեր երեւեալ՝ նովաւ բազումք պղծիցին: Սոյնպէս առաւել քան զամենեսեան սուրբն Բասիլիոս քաջ հոգայ զբանաւոր հաւատս: Էին ահա ոմանք ի ժամանակին յայնմիկ չարք, որք յանդգնեցան չարի արարիչ ասել զԱստուած, զոր լուեալ Բասիլիոս՝ յանդիմանէ զայնպիսիսն զանազան աւրինակաւք ի Գրոց Սրբոց: Նախ ի Դաւթէ ցուցանէ նեղիչս եւ ապականիչ զայնպիսիսն յասելն՝ Տէ՛ր, զի՛ բազում եղեն նեղիչք իմ, այլովքն, եւ զանունն Աստուծոյ կարդայ ասելովն՝ Ի կարդալ իմում լուար ինձ ըստ արդարութեան իմում, եւ այլն: Եւ զմիւսն, թէ՝ Յորժամ կարդասջիք, անդ եմ ես, քւ դարձեալ՝ Մինչեւ յե՞րբ, որ մոռանաս զիս, այլովքն:

Այսպիսիք են արարչականին խնամք բարի, որով ապաւինիմք առ Նա: Իսկ անզգամին ասելն, թէ ոչ գոյ Աստուած, ո՞ւր վճարէ զհայհոյութիւն: Թէ այսպէս է, զի՞նչ արգելու յաղթահարել զաղքատն եւ զրկել զորբն այլովքն եւ կամ անյագ լինել յամենայն անասնական ցանկութիւն: Վասն այսորիկ ազգք մատնեցան ի փորձութիւն ըստ Սողոմայ չարեացն: Եւ այս ամենայն ի մէնջ է նիւթ տալ եւ գոհութիւն չարի, եւ ոչ թէ նիւթատոր է ըստ բնութեան չարն, եւ թէ՝ զայն առնուն չարքն պատճառ զասելն, եթէ՝ Ես արարի զլոյս եւ հաստեմ զխաւար, եւ կամ այն, թէ՝ Իշին չարիք ի Տեառնէ ի դրունս Երուսաղէմի: Յայլ դէմս մարթէ զայն իմանալ ըստ մտաց գրելոցն եւ /265ա/ ոչ այնու պատճառաւ յԱստուած զհայհոյութիւնն տանիլ. սի՛րտ սուրբ ստացիր, զի ճանաչել մարթասցես զնախախնամութիւնն Աստուծոյ:

Եւ այսպէս զճշմարիտ սիրոյն Աստուծոյ աւրինակ ի մեզ նկարագրէ սուրբն Բասիլիոս եւ զգուշացուցանէ զմանկունս Աստուծոյ՝ յանդիմանելով զչարսն եւ փառաւորելով զհամագոյ Երրորդութիւնն Սուրբ յաւիտեանս:

[ԼԳ]

Պատճառ երեսներորդ երրորդ ճառին, որ վասն ողորմածութեան եւ աղաւթից պատուիրէ ի գլուխ այլոցն ամենեցուն

Զոր աւրինակ ճարտարք ի բժշկաց յորժամ առ խղխայթեալ[1] վիրաւք հիւանդն մատչիցին, հայելովն զննեն զցաւն եւ այնպէս զդեղն տան յառաջնմէն մինչ ի կատարեալ առողջութիւնն, նոյնպէս արար եւ սքանչելին Բասիլիոս, որ հոգւոյ է բժիշկ բարի: Զի յսկիզբն սրբոյ մատեանս եւ յսկիզբն Քառասնորդացն պահոց զմաքրութիւն պահոց եդ սկիզբն եւ այնպէս հոգեւոր դեղաւք էանց ընդ ամենայն ճառսն, մինչ եւ էած զհասարակաց բնութիւնս ի կատարեալ իմաստութիւն: Արար աստուածաբանութիւն՝ է, որ յԵրրորդութիւն Սուրբ,

1 բնագրում երեսներորդ

1 բնագրում խղխայրեալ

եւ է, որ յՈրդւոյ ծնունդն անճառաբար ի Հաւրէ՝ ըստ Յովհաննու եւ Աւետարանին, եւ է, որ վասն կուսական ծննդեանն, զիս[կա]կանն ի Հաւրէ լռութեամբ պատուեալ եւ անճառութեամբ զկուսականն, զի մեզ ուսուցէ զանհասութիւն Աստուածութեանն:

Ապա եւ զսիրելեացն Աստուծոյ պատուէ զյիշատակ ներբողական գովեստիւ՝ զսրբոյն /265բ/ Յուղիտեայ, որ ի կանանց եւ զնախավկային Ստեփաննոսի եւ զսրբոց Քառասնիցն եւ զյիշատակ սրբոյն Գորդիոսի, զի զնոսա աւրինակ մարթասցուք պահել մերում կենցաղոյս: Նաեւ զխաւսսն առ միմեանս նորա եւ Աստուածաբանի ի ձեռն թղթոյ եւ առ միմեանս լինելով եւ որ առ Սերիոս եպիսկոպոս Կեսարու եւ որ առ Ոպտիմէոս եպիսկոպոս եւ առ Դիոդորոս քահանայ՝ զամենեսեան մեզ ի խրատ եւ ի զգուշութիւն արձանացոյց գրով: Եւ սա՝ առաւել այնու, որ նախատեաց զբարկացողն, զագահն, զընչասէրն, զվաշխառուն եւ զայնս, որք չարի պատճառ զԱստուած ասել յանդգնեցան, զի մեք փախչել մարթասցուք յայնպիսի մտածութեանց:

Արար եւ առանձնակի ճառս զլխաւորս վեցերորդ ի Դաւթէ ի սոյն մատենիս, զի մեք այնոքիւք յիմաստութիւն վարժեսցուք յամենայն կեանս մեր: Առնէ եւ փափագանս ի Մկրտութիւն՝ ցուցանելով զմեծութիւն իրին ի դէմս երեխայիցն, զի մեք իմանալ եւ պահել մարթասցուք զՄկրտութեանն մաքրութիւն: Ի գլուխ ամենայնի ուսուցանէ եւ վասն ողորմածութեան եւ աղաւթից՝ յայտնի առնելով, թէ սոքա են կատարումն ամենայն առաքինութեան: Եւ այսպէս զարդիւնս արարողացն պատուէ, որպէս եւ յսկզբան ճառիս գովէ զկանանց ազգ, թէ՝ Արարին, ասէ, ողորմութիւն կան/266ա/այք ի վերայ ուրկաց՝ խնամաբար տեսանելով զնոսա, առանց զզուելոյ ի նոցանէ, զի դժնդակ է ախտն այն, քան զամենայն ցաւս, զի յայլ հիւանդութիւնսն թէպէտ եւ յամի ցաւն, սակայն առողջութեան ակն ունի, եւ ուրուքն յսկիզբն ախտին վճար ցաւոյն զվճար կենացն գիտեն: Զայնպիսի ողորմածսն գովէ մարգարէն՝ յասելն. «Տէր պահեսցէ, կեցուսցէ եւ երանելիս արասցէ»: Եւ Աւետարանն զայնպիսիսն բարի եւ հաւատարիմ ծառայ անուանէ եւ թէ՝ Եկա՛յք, աւրհնեա՛լք Հաւր Իմոյ, եւ Որդւոյ է՝ Դուք ածութիւն զՍրբոյ Հոգւոյն ունիք եւ Նովաւ էք կնքեալք: Ընդ ողորմածութեանն լծէ եւ զաղաւթսն ըստ մարգարէին՝ Աւրհնեցից զՏէր յամենայն ժամ, եւ թէ՝ Անդադար փառաւորեցէ՛ք զՏէր, եւ թէ՝ Ցաւուրն ելթն անգամ, այսինքն՝ հանապազ աւրհնեցից զՔեզ. եւ ածէ վկայ հանապազորդեան աղաւթից եւ

ողորմութեան զԿոռնելիոս, թէ ո՞րպէս վկայեցաւ՝ յԱստուծոյ ի ձեռն Պետրոսի վիմի մկրտեալ:

Այսոցիկ եւ սոյնպիսեաց աղաւթքն եւ ողորմութիւնն մեզ առիթ լինին, որում եւ մեք փափագեսցուք՝ փառաւորելով զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին յաւիտեանս յաւիտենից. ամէն]:

ՑԱՒԵԼՈՒԱԾ

[Ա]

Նորին առ Գրիգոր Նիւսացի՝ մերձ կացելոյ Բարսղի եւ ի վկայսն[1]

Յորժամ բռնադատեցին զԳրիգոր Աստուածաբան /9բ/ հայրն իւր եւ մայրն եւ ժառանգաւորք իւրեանց Եկեղեցւոյ եւ ժողովուրդն Ապիանձու առնուլ զաշտիճան եպիսկոպոսութեան եւ ոչ կարէին հաւանեցուցանել զնա, յայնժամ հայրն նորա, գաղտ ի նմանէ, կոչեաց զԲարսեղ եւ զնորին եղբայրն զԳրիգոր Նիւսացի եւ զայլ մերձակայսն, զի թերեւս ածցեն նոքա ի հաւանութիւն: Եւ եկն վաղ քան զայլսն Գրիգոր Նիւսացի եւ էած ի հաւանութիւն զԳրիգոր Աստուածաբան առնուլ զեպիսկոպոսութիւն:

Իսկ ի յամելն Բարսղի ձեռնադրեաց զԱստուածաբան յեպիսկոպոսութիւն Գրիգոր Նիւսացի: Իսկ իբրեւ եկն յետոյ Բարսիլիոս, ասաց զճառս զայս Գրիգոր Աստուածաբան եւ ամբաստանէ զսրբոյն Բարսղէ առաջի Գրիգորի Նիւսացւոյ՝ վասն ոչ յաւժար եւ փոյթ գալոյն ի ձեռնադրութիւն նորա եւ վասն ոչ յիշելով առ նմա ի մանկութենէ զսէրն:

Եւ յոմանց ասի, թէ վասն աւագ լինելոյն Նիւսացւոյ պատիւ արարեալ ծերութեանն, վասն այն ի նմանէ էառ զձեռնադրութիւնն: Բայց էր աւրն այն տաւն վկայից, թուի թէ շաբաթ էր աւրն, քանզի այնպէս էր յառաջ կարգեալ ի Նիկիայ, զի շաբաթ աւր ի բոլոր տարին, զատ ի տէրունական տաւնիցն զայլն հասարակ մարտիրոսաց

[1] ՄՄ ձեռ. N 4150 (ԺԳ դ.), էջ 9ա-10ա

տաւնէին, վասն այն ի կատարածի ճառիս յիշէ /10ա/ զմարտիւրոսն, որ վկայեցին վասն Քրիստոսի:

[Բ]

Պատճառ ճառին, որ առ Մեղիտոս Անտիոքացի, զոր ոմանք Գրիգորի Նիւսաց[ւ]ոյ ասեն ասացեալ եւ ոչ՝ Գրիգորի Աստուածաբանի, այլ ես Աստուածաբանի ասեմ, զի թէ չէր սորա, ի սորա գիրքս ոչ էր եդեալ[1]

Իսկ որք Գրիգորի Նիւսացւոյ ասացին զայս ճառ, այսպէս հաստատեն՝ ասելով, եթէ /94բ/ ճառս այս ոչ է Գրիգորի Աստուածաբանի ասացեալ, այլ Նիւսացւոյ, եւ յայտ ի նկարագրութենէ բանիցն է, սակայն վասն կատարեալ սիրոյն եւ աննախանձ բարուցն, զոր առ միմեանս ունէին, եղաւ յայս գիրս, զոր աւրինակ եդեալ է «յԱռ որսն» այն ճառ, որ ասացեալ է ընդդէմ այնոցիկ, որք ասէին, թէ՝ «Հայր մեծ է քան զՈրդի»՝ նոյն Գրիգորի Նիւսացւոյ ասացեալ: Այլ ինձ այն է հաճոյ, թէ զայն եւ զայս զերկոքեան Աստուածաբանի ասասցուք, զի այլ ուրեք ոչ գտանեմք զայլոց ասացեալ ճառ՝ յայլում գիրս եդեալ:

Բայց, արդ, տեսցուք զխորհուրդ ճառիս: Յորժամ սուրբ հարքն՝ հարիւր եւ յիսուն եպիսկոպոսքն, ժողովեցան ի Կոստանդինուպոլիս՝ ի կործանումն հոգեմարտիցն հրամանաւ աստուածասէր Թագաւորին Թէոդոսի, յայնմ ժամանակի մնային, զի լցցի թիւն խորհրդական դաւանումն Երրորդութեան, որ եղեւն իսկ՝ խոստովանութեամբ ի Սուրբ Գրոց վկայութեանց հաստատեալ: Եւ հարքն սուրբ ընդ ամենայն հերձուածողսն նզովեցին զՄակեդոն, թէպէտ եւ մեռեալ իսկ էր:

Իսկ յետ կատարման տաւնին եւ քննութեան ժողովոյն, մինչ դեռ էին ի միասին ամենայն եպիսկոպոսունքն, եղեւ կատարումն կենաց սուրբ եպիսկոպոսապետին Անտիոքու Մեղիտոսի, զի յառաջ /95ա/ քան զայն ժամանակս յաւուրսն Յուլիանոսի եւ Վաղէսի բազում ճգանց եւ նահատակութեանց համբերեաց եւ ի դալն առ սուրբ հայրապետսն՝ իբրեւ գլուխ եւ կառավար էր նոցա: Իսկ յետ կատարման խորհրդոյն հանդիպեցաւ նմա փոխիլ ի վերին կեանսն, վասն որոյ սուրբ հարքն, հանդերձ Թագաւորաւն եւ մեծամեծաւքն, առին սուգ անմխիթար: Եւ ապա հարկ արարեալ Գրիգորի հարքն սուրբ եւ Թէոդոս Թագաւորն բանալ զչնորհալից բերանն եւ խաւսել բանս գովութեան վասն ննջեցելոյն, քանզի առաւել ճոխ էր ի բանին դիրս մեծն Գրիգորիոս, որ եւ յայսմ ճառի խաւսել սկսաւ բանս ողորմագինս եւ ողբերգականս: Քանզի զհրամայեալսն ի հարանցն յանձն առեալ՝ ասաց զճառս զայս եւ յարտասուս չարժեալ զսուրբ ժողովն եւ զթագաւորն աղիողորմ բանիւք, զոր եդեալ է ի սկիզբն բանից ճառիս՝ ասելով. «Ահեցոյց մեզ զթիւ առաքելոցն նոր առաքեալս, որ թուեցաւ ընդ մեռասան առաքեալս»:

[1] ՄՄ ձեռ. N 1897 (ԺԲ դ.), էջ 94ա-95ա

ԽՕՍՔ ԲԱՐՍՂԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԵՍԱՐՈՒ ԿԱՊՊԱԴՈՎԿԱՑԻՈՑ ԸՆԴԴԷՄ ԱՅՆՈՑԻԿ, ՈՐՔ ԹԵՐԱՑՈՒՑԱՆԵՆ ԶՓԱՌՍ ՈՐԴԻՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՔԱՆ ԶՀՕՐՆ ԵՒ ԻՋՈՒՅԱՆԵՆ ԶՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ Ի ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՒԱՍԱՐԵՆ ԸՆԴ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱԾՈՅ

(Շարունակութիւն)*

Արդ, ով երբէք ել այսպիսի մտաց իւրոց, զի մուծցէ յԱստուածութիւն անդր թիւ համարոյ, որ բարժանեալ եւ անջրպետեալ է նշանօք եւ տեղեաւ եւ սահմանեաւ, եւ որով իւիք եւ կամին բարժանումն մուծանել, սխալեն յիրսն համարիչքն թուոց, զի ինչ զոր ածեմք ի թիւ համարոյ փութով քննութեան մերոյ վասն ուղիղ գիտութեան ի յօրինուածոց, որք են ի կարգի աշխարհի, զկէսն ի նոցանէ ի թիւս համարով կարգեմք եւ իմանամք զորքանն եւ զկէսն ի չափ արկանեմք եւ զկէսն ի կշիռս դնեմք, զի երեւեսցին մեզ, քանզի որք սպրդեալ են ի համարոյ մանրութեամբ բնութեան իւրեանց, չափով կամք ի վերայ նոցա: Իսկ որ յայտնեն անձնաւորութեամբ ի յատուկ դասաւորութիւն, ի թիւ համարոյ արկանեմք զնոսա եւ զկէսն ի նոցանէ, որք անյայտք լինին, ի կշիռս մուծանեմք, զի մեկնութեամբ յայտ լիցին: Արդ, ոչ եթէ ըստ որում արարք, զհանգիստ կամաց մերոց ի տեղեկութիւն որչափութեան եւ քանիօնութեան նիւթոց, եւ խաղաղացուցաք զհակառակութիւն եւ միաբանեցաք զգիտութիւն, այսպէս եւ ի

* Սկիզբը տե՛ս «Գանձասար» Դ:

վերայ բնութեան Աստուածութեան կացցուք մեք առ ի գիտել, եթէ զինչ է եւ կամ զիարդ է, որպէս կշիռն ոսկւոյ են անգին է առ մեզ, զի թէեւ կշիռն հաւասարէ ի թիւ համարոյն, այլ թերի եւ պակաս գոլով ի պատուոյն ոսկւոյ՝ ոչ առնու ընդ նմա հաւասարութիւն: Արդ, ասեն նոքա եւ վասն Հոգւոյն Սրբոյ, թէ կրտսերագոյն արժան է, զի համարեսցի՝ գոլով ի կողմն հնազանդութեան: Եւ այս բանք չարութեան նոցա ի հեթանոսական ախտէ է, ապա թէ ոչ՝ զի՞նչ հուպ է առ Աստուած աշտիճանք բարձրագոյնք եւ խոնարհագոյնք, որպէս ի պատիւս մարդկեղէնս, որք եւ յոր հաստատեալ են բնութիւնք իւրեանց, ի նոյն կամին համեմատել եւ զԱստուածութիւն:

ԺԸ. Սակայն ոչ են այսոքիկ մերձ առ Հայր եւ Որդի եւ Հոգին Սուրբ, զի ոչ այսպէս տուաւ մեզ ի տուողէ անտի Աւետարանին, քանզի ոչ եթէ թուով ետ Տէր մեր զճշմարտութիւն եւ ոչ ասաց, թէ առաջինն եւ երկրորդն եւ երրորդն եւ ոչ ի մի եւ յերկուս եւ յերիս, այլ փառաւոր եւ սուրբ անուամբքս եցոյց մեզ զուաւումն եւ զգիտութիւն[ն] կենաց մերոց, զի սովաւ մատիցուք ի հաւասարութիւն մեծաց պարգեւացն Աստուծոյ եւ գտցուք զփրկութիւն կենաց մերոց, եւ ոչ թէ[88] ըստ համարոյ թուոցս այսոցիկ, որ կարգեալ է վասն զգալեացս, ընկալեաք զնա, որպէս եւ սոքա յառ յապուշ ձգտին եւ ժողովեն զվնասս կենաց իւրեանց յամենայն կողմանց եւ ի վերայ հաւատոյս, որ հաստատեալ կայ ճշմարտութեամբ, առեալ մուծանեն զթիւս եւ զփոփոխմունս եւ զյաւելուածս, որ լինի ի թուոց համարոց, ի վերայ այն մեծութեան եդեալ կարգեն արասցեն[89] եւ զկրտսերութիւն Հոգւոյն Սրբոյ ի բնութենէ անտի Աստուածութենէն ճգնին: Արդ, եթէ կամիցէ իմաստուն արանցս այսոցիկ հայել յանբաւս եւ յանքննիս, որ ի վերն է քան զթիւս, մխեսցեն, քանզի վկայեն եւ գիրք երբայեցւոց՝ ոչ գոլ համեմատ եւ հաւասար[90] անուանն Աստուծոյ, քանզի ազնիւ եւ գերազանց է գիտութիւնս այս եւ բարձր եւ վերագոյն քան զամենայն բնութիւնս եւ հեռացեալ ամրացեալ յամենայն խորհրդոց, թէպէտ եւ հարկաւորիմք անուանել զայնոսիկ զերիս անուանս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այլ ոչ եթէ խորամանկութեամբ հայհոյութեան ըստ չար խորհրդոցն նոցա առնեմք եւ մեք զթիւն Նոցա: Արդ, կամ լռեսցուք յայնցանէ, որ անճառն է, քանզի լաւ եւ պատշաճ է, զի եղիցին մեզ օգնութիւնք ի նոցանէն: Այսուհետեւ մի է Աստուած Հայր, եւ մի է Միածին Որդի ի Նմանէն, եւ մի Հոգին Սուրբ՝ երեք Անձինք, եւ յորժամ թուեմք մեք զայսոսիկ անուանս, ոչ թէ անխրատ եւ առանց կարգի առնումք զթիւ Նոցին եւ ձգեմք զմեզ առ պաշտօն աստուծոց բազմաց, զի ոչ եթէ յօդեմք նշանակաւ թուոցն եւ հաստա-

տեալ կարգեմք աշտիճանս եւ առնեմք զմի Աստուածն աստուածս բազումս, վասն զի ոչ ասեմք մի եւ երկու եւ երեք[91] եւ ոչ առաջինն եւ երկրորդ եւ երրորդ եւ Աստուած մեկնեալս եւ սահմանեալս ոչ խառնեմք ի մեծ յոյսս մեր, այլ, որպէս ասաց մի ոմն ի ճշմարիտ քարոզողացն անտի, Ես եմ առաջինն եւ Ես եմ վերջինն: Իսկ Աստուած երկրորդ ոչ երբէք ուրեք լուաք մեք ի ճշմարտութեանս մեր մինչեւ ցայսօր, թէ ասացաւ, բայց Աստուծոյ յԱստուծոյ երկիրպագանեմք եւ խոստովանիմք մի Աստուածութիւն յերիս Անձնաւորութիւնս եւ ի մի զօրութիւն եւ յիշխանութիւն եւ առ հերձուածս աստուածոց բազմաց զփառաւորութիւն Երրորդութեան ոչ մատուցանեմք, այլ մի Հայր եւ մի Որդի եւ մի Հոգի՝ ի նմանութիւն երից Անձանց, Որոց ոչ գոյ բնաւ փոփոխումն, հաւատամք մեք եւ պաշտեմք, քանզի որպէս Հայր է, նոյնպէս եւ Որդին ի Նմանէ՝ հանդերձ Հոգւովն Սրբով: Եւ այսոքիկ անուանք մի են միով բնութեամբ եւ երեքին երիւք Անձամբք, քանզի ոչ իսկ ասեմք երիս թագաւորս, այլ մի թագաւորութիւնս անուանեմք՝ այսոքիւք միով անսպառ իշխանութեամբ եւ միով անբաժանելի փառօք: Արդ, զոր օրինակ մի է իշխանութիւն միոյ Աստուածութեան եւ միոյ Տէրութեան, սոյնպէս մի է խոստովանութիւն օրհնութեան, որ ի մէնջ առաջի առ մի Աստուած, եւ ոչ եթէ զօրհնութիւնսն մեկնեալ ի փոքր եւ ի մեծ բարժանեմք առ այն մեծութիւն: Արդ, մի է Աստուածութիւն միով նմանութեամբ եւ ոչ ունի փոփոխումն այլայլութեան յԱնձնէ առ Անձն: Այսուհետեւ ի մի Հայր եւ ի մի Որդի եւ ի մի Հոգի հաւատամք, որոց մի է բնութիւն եւ ժառանգակցութիւն[92] եւ փառաւորութիւն, եւ ոչ է ժառանգակից Հոգին Սուրբ բնութեան արարածոցս, այլ՝ Աստուծոյ, վասն զի Հոգի Աստուծոյ է, եւ հեռի է Հոգին Սուրբ ի բնութենէ արարածոցս որպէս զՀոգի Աստուծոյ, եւ ոչ երբէք թուի եւ համարիլ Նա ընդ ժողովս բազմաց հոգւոց, այլ ժառանգակից է Հօր եւ Որդւոյ, որպէս ի չէիք ինչ այլ վերոյ քան զՆա լինել Աստուծոյ ժառանգակից, վասն զի բնութենէ անտի Աստուծոյ է ոչ իբրեւ զայն, որ ասացեալ լինի, թէ՝ ամենայն ինչ Աստուծոյ է այնու, զի յարարչութենէ Նորա են ամենայն արարածքս: Իսկ Հոգին, որ ի Նմանէ, ի բնութենէ Նորա է, բայց ոչ եթէ ծննդեամբ, որպէս զԲանն, այլ իբրեւ զՀոգի կենդանի ի բերանոյ Նորա: Արդ, մի՛ վասն զի լուար բերան կարծիցես յօդապատ անդամ հաստատեալ, որ ձգէ զշունչ եւ ծծէ զօդ եւ ընդ ծծելն զատարն է հանգիստ նորա, այլ որպէս վայել է Աստուծոյ լուիցես զնորայն եւ ոչ ըստ մերում նմանութեան, այլ ըստ զօրութեան այնր փառացն, որ ոչ քննի: Արդ, Հոգին Սուրբ Հոգի է Աստուծոյ կենդանւոյ, եւ Ինքն կենդանի է ի կենդանութեան Իւրում եւ լի կատարեալ ի սրբութեան Իւրում, վասն զի ճշմարիտ սրբութենէ

Նորա լինին ամենայն սրբութիւնք եւ պարգեւօք Նորին կատարին, քանզի յայտնութիւն Նորա ի ձեռն սրբութեանց բովանդակի, եւ մեծութենէ Նորա զօրութիւն առանց մեկնութեան է յամենայն արարածոցս, քանզի ծածուկ է որքանութեամբն յամենայն եղանակացս, որ եւ լուսաւորէ զմիտս նորա: Այլ եւ «Հոգի Քրիստոսի»[1*] ասի, վասն զի ժառանգակից է Նմա զօրութեամբն Իւրով, որպէս եւ ասէ առաքեալ, թէ՝ «Յորում ոչն գոյ Հոգի Քրիստոսի, սա չէ Նորա»[2*]: Եւ Տէրն ասաց. «Նա զիս փառաւորեսցէ»[3*]: Բայց ոչ եթէ այսու չափով կերպարանաց փառաւորէ իբրեւ արարած զԱրարիչ, այլ իբրեւ զՀոգի ճշմարտութեան, որ ցուցանէ մեկնապէս զվկայութիւնս ճշմարիտս եւ զնշանակս[93] փառաւոր Աստուածութեան Նորա իբրեւ Հոգի Իմաստութեան[4*], զի Նա Ինքն է Զօրութիւն Աստուծոյ եւ Իմաստութիւն Նորա, զի ի ձեռն մեծութեան Հոգւոյն յայտնեցաւ մեզ: Եւ կոչեցաւ դարձեալ Մխիթարիչ[5*] անուամբս զնմանութիւն Որդւոյ առ Նա յինքն, զի բարութեամբն, զոր ունի Նա, մխիթարեսցէ զսիրտս այնոցիկ, առ որս գայ, եւ զօրութեամբն Իւրով ցուցանէ զփառս Որդւոյ եւ յայտ առնէ, թէ յԱստուածութենէ անտի ել եւ եկն: Արդ, այսոցիկ անուանք փառացն են եւ ոչ եթէ բնութեան, ըստ որում ոք զի ասէ, եթէ՝ «Փառք արեգականն լոյսն իւր է»: Եւ միւսն եւս այլ փառք, որ ի խորհրդոց անտի ճշմարտութեան տացի այնոցիկ, որ տուողքն են: «Որդի,- ասէ,- պատուէ զհայր իւր, եւ ծառայ՝ զտէր իւր»[6*]: Արդ, ծառայութիւն ի պատուելն, զոր ինչ պարտին, տայ, իսկ յորժամ ի Ժառանգակցէ անտի բնութեան լինի պատիւն, սիրով պաշտի, որպէս եւ Տէր մեր ասաց զԻնքենէ առ Հայր. «Ես զՔեզ փառաւորեցի յերկրի եւ զգործն, զոր ետուր Ինձ գործել, կատարեցի զայն»[7*]: Սոյնպէս եւ վասն Հոգւոյն Սրբոյ ասաց, թէ՝ «Նա զիս փառաւորեսցէ, վասն զի յինէն առնու, եւ Նա ցուցցէ ձեզ զամենայն ինչ»[8*]: Եւ դարձեալ՝ որպէս փառաւորեցաւ Որդի ի Հօրէ, որպէս ասաց առ Նա, թէ՝ «Փառաւորեցի եւ դարձեալ փառաւոր առնեմ»[9*], սոյնպէս եւ Հոգին

1* Ողբք Դ 20
2* Հռոմ. Ը 9
3* Յովհ. ԺԶ 14
4* Հմմտ. Եփես. Ա 18:
5* Հմմտ. Յովհ. ԺԴ 16, 26:
6* Մաղ. Ա 6
7* Յովհ. ԺԷ 4
8* Յովհ. ԺԶ 14
9* Յովհ. ԺԲ 28

Սուրբ փառաւորի ի ձեռն Հօր եւ Որդւոյ հաղորդութեամբն Իւրով առ Նոսա՝ ըստ վկայութեան Միածնին բանի, զոր ասաց վասն Նորա, եթէ՝ «Ամենայն մեղք եւ հայհոյութիւնք թողցին որդւոց մարդկան, իսկ որ զՀոգին Սուրբ հայհոյէ, մի՛ յայսմ աշխարհիս թողցի նմա եւ մի՛ յաշխարհին հանդերձելումն»[1*], քանզի չէ իւղն ի ճշմարիտ լուսոյն, որ ի Հոգւոյն Սրբոյ երեւի, եւ ամենայն աստուածասէր ի Հոգւոյ անսի Աստուծոյ առնու զհանճար եւ զիմաստութիւն վասն ճշմարիտ գիտութեան Որդւոյ եւ Հօր, զոր օրինակ այն, որ ասացեալ է, թէ՝ «Ոչ ոք գիտէ զՀայր, բայց թէ՝ Հոգւովն Սրբով»[2*], քանզի ոչ եթէ լոկ ի լոկւոյ է ասացեալ զբանս զայս, այլ Հոգւովն Աստուծոյ, եւ «Հոգի է Աստուած եւ Հոգւով ճշմարտութեամբ օրէն է երկիրպագանել ճշմարիտ երկրպագուացն»[3*], քանզի մեծութեան Նորա լուսով իմանամք մեք զգիտութիւն կենաց, քանզի զոր օրինակ ի ձեռն լուսոյ աչացս մերոց հանդերձ հասարակաց համասփիւռ լուսովն ի ձեռն զուտ փայլման հայելոյն գամք մեք ի տեսութիւն ամպաքող կերպարանօք, սոյնպէս ի ձեռն ճշմարիտ ուսման Հոգւոյն մատչիմք մեք առ ճշմարտութիւն Աստուածութեան. «Լոյս,- ասէ,- առաքեցաւ յաշխարհ»[4*՝ այն, որ զամենայն մարդ լուսաւորէ, քանզի Հոգւովն երեւի փառք Որդւոյ այնմ, որով ճշմարիտքն երկրպագուք երկիրպագանեն Նմա եւ ի գիտութեան լուսոյ Հոգւոյ անտի[94] հաստատեալ կան երկրպագութիւնք Նոցա: Քանզի ճանապարհ ճշմարիտ, որ տանի ի գիտութիւն Աստուծոյ, ի Հոգւոյ անտի է, որ տանի հասուցանէ առ Որդին ճշմարիտ եւ հանգուցանէ առ Հօրն ճշմարտի, եւ դարձեալ՝ բարերարութիւն ճշմարտութեան, որ հաստատեալ կայ ի լի կատարեալ բնութիւն փառաւորն սրբութեան եւ վերին արքայութեան, ի Հօրէ առ Որդի ի ձեռն Հոգւոյն Սրբոյ է: Այսուհետեւ յայնմ լի կատարեալ խոստովանութեան երից Անձանց հաստատեալ կայ ճշմարիտ ուսումնս այս, զի մի Սկիզբն, մի Աստուած, եւ չիք խոտորումն ի Նմանէ եւ կամ մոլորութիւն ի կողմն միւսակողմն: Իսկ որք զնուազութիւն կրտսերութեան մուծանեն այլափոխ թուովն ի ճշմարտութիւն անդր Աստուածութեան, իբր ասել՝ առաջին, երկրորդ եւ երրորդ, եղիցին գիտել, զի ի ձեռն հնազանդեալ նշանին ի պաշտօնն աստուածոց բազմաց ընկենուն զանձինս իւրեանց եւ ի մոլորութենէ անտի կռապաշտութեան ի վերայ ճշմարիտ բանիս քրիստոնէից մուծանեն զյուսահատութիւն: Արդ,

1* Մատթ. ԺԲ 31-32, Ղուկ. ԺԲ 10:
2* Հմմտ. Մատթ. ԺԱ 28:
3* Յովհ. Դ 24
4* Յովհ. ԺԲ 46

յայլ ինչ ոչ ածէ թիւս այս անօրէնութեան եւ ամբարշտութեան, բայց եթէ՝ առ աստուածս բազումս, զի թուով եւ համարով երկրորդեն զճառս իւրեանց, բայց մեզ բաւական է երկրորդել ի ճշմարիտ կարգիս, զոր ի Տեառնէ մերմէ ընկալաք, զի չիք բնաւ ի Նմա չփոթումն եւ ոչ նուազութիւն, որպէս սոքա առին բերին ամբարշտութեամբն իւրեանց, քանզի ոչ գոյ յայնմ փառաւոր բնութեան Աստուածութեան մի ինչ, որ կայցէ ի նուազութեան կամ ի կրտսերութեան, որպէս սոքա մոլար բանիւն իւրեանց ստերիւրեն, այլ ճշմարիտ են ասացեալքն վասն ճշմարտութեան ի քարոզաց անտի ճշմարտութեան:

Եկեսցուք մեք, արդ, վայրիկ մի առ բանս հակառակողացն եւ տացուք ունայն խորհրդոց անձանց զկամս իւրեանց: Եւ ասասցեն ցմեզ, թէ ընդէ՞ր եղին զերկրորդական թիւս այս անարգութեան, եւ միտ եդեալ մեկնեսցուք, զինչ ինչ ցուցանէ բանն նոցա, եւ զի՞նչ կարասցէն ասել վասն այնր բանի, որ ասէ՝ «Առաջին մարդն յեկրէ հող, եւ Երկրորդն՝ երկնից»[1*], եւ զկանխութիւն չնչաւոր մարդոյն տայ եւ ապա՝ հոգեւորին: Արդ, եթէ առաջինն պատուականն է, եւ երկրորդն՝ կրտսեր համարեալ, ուրեմն ըստ այսմ թուի բանի նոցա անարգագոյն է Հայր քան զՈրդի, քանզի ըստ նոցա չնչաւորն եւ մարդն հողեղէնն պատուական է եւ առաւել, քան զերկնաւորն եւ զհոգեղէնն:

ԺԹ. Արդ, ասեն այսոքիկ, զի թէ եւ[95] տուեալ եւս իցէ այս ամենայն, եւ համարեսցի առանց կրտսերութեան Հոգին Սուրբ, մի՞թէ եւ օրհնութիւն ինչ չպարտէ տալ Նմա ի գովեստ առաջին բարձրութեան: Իսկ ապա ուստի կամիցին տալ զհաւասար կամ զառաւելութիւն պատիւն Հոգւոյ Սրբոյ՝ այնմ, որ ըստ ամենայն խորհուրդս անուանէ, զանցանէ խորհրդովք իւրովք, զի թէ Հօր եւ Որդւոյ հաղորդութիւն ոչ թուի նոցա մեծ եւ պատուական եւ համեմատ հաւասարութիւն մեծավայելչութիւն, ապա հարկ լինի մեզ դարձեալ առնուլ ի մէջ զառաւել անուանս մեծութեան Նորա, զոր ոչ ոք յարարածոցս ոչ ստացեալ ունի զճշմարիտ յորջորջումն չնորհաց եւ ողորմութեան Նորա: Արդ, յառաջ մատչիմք առ անուանս, զորս ստացեալ ունի, եւ առ արարչութիւն սքանչելեաց Նորա եւ առ գործս մեծասքանչ զարմանալիս Նորա, զի ոչ եթէ առ մեզ միայն է, այլ եւ առ ամենայն արարածս չնորհիւ պէս պէս օգնականութեանց, որ մատակարարին եւ պարգեւին ի Նմանէ: Արդ, ընդէ՞ր լինիս ի ծուփս խորհրդոց վասն անուան սորին Հոգոյս Սրբոյ. ո՞չ արդեօք ընդունելի է քեզ, զի ասացաւ «Հոգին

1* Ա Կորնթ. ԺԵ 47

Աստուած»[1*] եւ կամ այն եւս, զի կոչեցաւ Հոգի Մխիթարիչ եւ կամ այս միւս եւս, զի որպէս կոչեցաւ Հայր Սուրբ եւ Որդի Սուրբ, սոյնպէս եւ Ինքն Հոգին Սուրբ ասի, քանզի սրբութիւնք արարածոց ի ճշմարտութենէ սուրբ անուանս են, իսկ սրբութիւն Հոգւոյն բովանդակ զի կատարեալ ի սրբութեան Իւրում, քանզի ոչ եթէ սրբեալ ասի, այլ սրբող այնոցիկ, որ ապաւինին ի Նա, եւ բարի դարձեալ ասի, որպէս բարի է Հայր եւ Որդի, եւ ամենայն էութիւն Իւր ընդ Նոսին ի բարերարութեան եղեալ է, եւ որպէս Հայր Ճշմարտութիւն կոչի, նոյնպէս եւ Նա՝ Ճշմարտութիւն, եւ չիք ինչ բնաւ ի Նա փոփոխումն կամ այլակերպութիւն, վասն զի անփոփոխ բնութենէ անտի է, եւ որպէս է Որդին Միածին ճշմարիտ անուամբն, զոր ունի, նոյնպէս եւ Նա՝ Հոգին ճշմարիտ է անուամբն, զոր ունի, վասն որոյ եւ Տէր մեր ասաց ցաշակերտսն Իւր. «Ես աղաչեցից զՀայր, եւ այլ Մխիթարիչ տացէ ձեզ՝ զՀոգին ճշմարտութեան»[2*], քանզի ամենայն անուանք փառաւորք եւ աստուածեղէնք հասարակաց են առ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, քանզի բնութեամբ է ժառանգակցութիւն Անձանց Իւրեանց ի մի գեղ փառաց Իւրեանց: Արդ, Հոգի ճշմարտութեան է եւ Հոգի իմաստութեան ասի եւ Առաջնորդիչ եւ անուանի Արարիչ: Նաեւ ամենայն բարբառք գովելիք, որ են վասն Աստուածութեան, ճշմարիտ գործովք ի վերայ Նորա յայտնի են, եւ զարմանալի է գործովք փառաց եւ անբաւ եւ անթիւ սքանչելեօք եւ անճառ եւ անպատում մեծասքանչ գովութեամբքն, եւ ի ձեռն ակնարկելոյ զօրութեան Նորա ամենայն գործք զարդիւնս ի Նմանէ առնուն եւ լինելութիւն արարածոցս գան ի յայտնութիւն:

Այսուհետեւ զայս ինչ խորհեսցուք վասն Հոգւոյն Սրբոյ, զի յառաջ քան զաշխարհս եւ անդր քան զաշխարհս էր ընդ Հօր եւ ընդ Որդւոյ ի փառս բնակութեան Իւրեանց, եւ զի՞նչ ասիցեմք վասն մեծութեան Նորա, քանզի յետ կազմելոյ աշխարհիս առ վերինս եւ առ ներքինս է արարչութեան Նորա սքանչելիք, եւ զօրութիւն Նորա տարածեալ կայ ի վերայ ամենայնի եւ իշխէ ամենայնի, եւ զաշխարհն, զոր ընդունելոց եմք, Նա Ինքն է հանդերձիչ պատրաստիչ Նորա մեծամեծ երանութեանցն, որ ոչ անկանի ի միտս մարդկան վայելչութիւն հանգստեանն Նորա: Էր այսուհետեւ Սուրբ Հոգին ընդ Հօր եւ ընդ Որդւոյ ի սկզբանէ եւ յայնմանէ, յոր էրն, ոչ երբէք վերջացաւ յառաջ քան զաշխարհս, եւ անդր քան աշխարհս էր Նա, եւ որչափ

1* Յովհ. Դ 24

2* Յովհ. ԺԴ 16

երթիցես եւ խորհրդովք հեռասցիս ի վեր քան զաշխարհս, գտցես զՀոգին Սուրբ մեծութեամբն Իւրով, քանզի կարգիչ, կազմիչ է ամենայն զօրաց երկնից: Արդ, եթէ զարարչութիւն ստացեալ ունի Տեառն Հոգին Սուրբ, յայտ է, թէ զօրութիւն Նորա զօրութիւն է Աստուածութեան, եւ ի բնութենէ բարերարութեան Աստուծոյ է Նա, քանզի գրեալ է, թէ յերանութիւն Աստուածութեան չիք բնաւ ինչ յարարելոց աստի, որք կան ի փոփոխման եւ ունին զսկիզբն ի ստեղծմանէն: Եւ յորժամ մտանելոց էր Քրիստոս յարարածս, Ինքն եղեւ Աւետարան վասն Նորա, զի եկեսցէ դադարեսցէ յընդունիչն[96] Իւր, եւ ի գալն եւս Տեառն մերոյ ի մէջ աշխարհի զօրութեամբ Նորա լինէր նշանքն եւ զօրութիւնք եւ սքանչելիքն, քանզի ընդ Նմա եւ ի Նմա եւ առ Նմա գտեալ կայր յամենայնի գործս, եւ գործէր Նա բժշկութիւնս եւ կեանք եւ առողջութիւնք, ի ձեռն Նորա ընթանայր առ ամենայն մարդ, եւ զօրութեամբ Հոգւոյն Աստուծոյ հալածէին դեւք, եւ սաստկութիւն թշնամւոյն ի ձեռն Նորա վատթարէր եւ լքաթափէր, եւ զթողութիւն մեղացն Ինքն առնէր բիւրնպատիկ պարգեւօքն Իւրովք, որպէս եւ ասացն առաքեալ. «Մկրտեցա՛յք եւ սո՛ւրբ եղիցուք յանուն Տեառն մերոյ Յիսուսի[97] Քրիստոսի եւ ի Հոգին Աստուծոյ մերոյ եւ ի ժառանգակցութիւն Աստուծոյ»[1*], Ինքն է նուաճիչ մեր առ Նմա, որպէս եւ ասաց դարձեալ առաքեալ, եթէ՝ «Առաքեաց զՀոգի Որդւոյն Իւրոյ ի սիրտս մեր, որ աղաղակէ Աբբա Հայր մեր»[2*], քանզի յարարչութենէ Նորա լինի նորոգութիւն ընդ երեսս արարածոցս եւ յարութիւն մեռելոց եւ կեանք ամենայն մարդկան, եւ Ինքն է գործիչ ամենայն գործոց, որ եղենն եւ լինին, եւ աշխարհին, որ ընդունի զմեզ յետ յարութեան, Ինքն է կազմիչ եւ պատրաստիչ նորա հոգեղէն եւ մտաւոր կարգօք եւ սփոփիչ մեր ի մարմնաւոր կենացս, Ինքն է ի նոր կեանս: Արդ, յորժամ լսես ի Պողոսէ ասացեալ ի Քրիստոս «Նոր արարած»[3*], իմա՛ նորոգութիւն մեզ զապրիլն ի մեղաց եւ զգործս բարեաց յայսմ աշխարհի, որ նշանակ է այնմ մեծի նորոգութեան, զոր ընդունելոց եմք ի հոգեւոր կեանսն, որ լինի մեզ ի Հոգւոյն անտի Սրբոյ: Երթիցուք այսուհետեւ յայլ գիրս եւ խրատեսցուք, քանզի մի՛ գուցէ փոքրկասցի ի մէջ մեր պատիւ Հոգւոյն ի մեծութենէ փառացն, զոր ունի Նա, եւ մի՛ յաւելցուք ի վերայ Նորա զհնազանդութիւն, զոր ինչ[98] ոչն է ստացեալ Իւր, եւ որով ընդդէմ են եւ հակառակ, մի՛ անարգեսցուք զմեծաչուք պատիւն Նորա, եւ մի՛ մարդկեղէն

1* Հմմտ. Հռոմ. Զ 3, Գաղ. Գ 27:

2* Գաղ. Դ 6

3* Բ Կորնթ. Ե 17

խորհրդովքն, որովք խորհիմք զՆմանէն, յամառեսցուք պատմութիւն առնել: Արդ, ի Պրակս Առաքելոցն այսպէս գրեալ է. «Ասաց Սուրբ [Հոգին], աւասիկ, արք ոմանք խնդրենն զքեզ, արի՛ էջ եւ ե՛րթ ընդ նոսա առանց իրիք երկմտութեան»[1*]: Եւ զայս ամենայն առ Շմաւոն Վէմ խօսեցաւ վասն Կուռնելիոսի, զի «Ես,- ասէ,- Հոգին Սուրբ առաքեցի զնոսա»[2*]. մի՞թէ այսոքիկ բանք անիշխան հնազանդելոյ են, ո՞չ ապաքէն զարմանք սքանչելեաց են այս: Եւ դարձեալ ասէ Հոգին Սուրբ անդէն ի Գործս Առաքելոցն. «Որոշեցէ՛ք Ինձ զՊողոս եւ զԲառնաբաս ի գործ, յոր կոչեցեալ է Իմ զդոսա»[3*]: Մի՞թէ բարբառքս այսոքիկ, որ ի Նմանէն, ծառայութեան են, եւ ոք որ հնազանդ եւ ի կրտսեր է թերեւս այդպիսի խօսի: Եւ Եսայի դարձեալ ասաց. «Տէր, Տէր առաքեաց զԻս եւ [զՀոգի] Իւր»[4*]: Եւ դարձեալ ասացեալ է. «Էջ Հոգի ի Տեառնէ եւ առաջնորդեաց նոցա»[5*]: Արդ, միա[ս]ցուք զանուն առաջնորդութեան Նորա ի նշան հնազանդութեան պաշտաման սպասու, քանզի բարբառս այս տեսչութեան եւ վասն Աստուծոյ ասացեալ է: Առաջնորդեաց ժողովրդեանն Իւրում եւ առաջնորդեաց որպէս խաչին Յովսէփու եւ առաջնորդեաց նոցա ի նաւահանգիստ կամաց Իւրեանց: Արդ, յորժամ լսես դու զբարբառս զայս վասն Մխիթարիչ հովտոյն, զի Ինքն ասէ՝ առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ, քանզի ընդ առաջնորդութեամբն եւ յիշատակարարութիւն վարդապետութեան Նորա է: Եւ դու, որպէս վայել է, այսպէս խորհեսցիս վասն Նորա եւ զրպարտես մի՛ զնա այնու իւիք, որ ոչ է Նորա, զոր խորհիս դու խորհրդովք մտաց քոց, բայց ասեն սոքա վասն Հոգւոյն, թէ ահա գրեալ է վասն Նորա, թէ փոխանակ մեր աղօթս մատուցանէ եւ բարէխօսէ ի հեծութիւնս անմռունչս[6*]: Թերի ուրեմն, ասեն, երեւի Այն, որ պաղատի Այնմ, որ կարողն է օգնել Նմա մեծութեամբն Իւրով: Յաղագս այսր կրտսեր է, ասեն, Հոգին եւ խոնարհագոյն ի փառաց անտի Աստուծոյ: Իսկ որ վասն լուար ի Գրոց զայսոսիկ վասն Որդւոյ զայս, ցարդ եւս չէ լուեալ քո, զի է, ասեն, ընդ աջմէ Աստուծոյ եւ մատուցանէ զաղօթս փոխանակ նոցա: Բայց ոչ էիր արժանի դու ընդունել զՀոգւոյն Աստուծոյ շնորհս, եթէ իցէ արդարեւ ի քեզ գթութեամբն իւրով, որ

1* Տե՛ս Գործք Ժ 19:
2* Գործք Ժ 20
3* Գործք ԺԳ 2
4* Եսայի ԽԸ 16
5* Եսայի ԿԳ 14
6* Տե՛ս Հռոմ. Ը 26:

կուրացեալ ի միտս քո կարծես, թէ որ օգնենն քեզ, որով յիշատակեն եւ ուսուցանեն զքեզ, զի ընտիր[99] արասցես զվարս քո, վերջանաս ի տալոյ անտի Նմին օրհնութիւն, քանզի մեծ զրկումն է, եթէ դնիցես մեկուսի զյորդառատ շնորհս ողորմութեան Նորա նշանակաւ ուրացութեան ի շնորհաց անտի, քանզի այսպէս ասաց առաքեալ. «Մի՛ տրտմեցուցանէք զՀոգին Սուրբ, Որով կնքեցայք»[1*]: Եւ լուիցուք Ստեփանոսի, որ գլուխ վկայիցն է, զի ասաց առ ամբոխն հրէից՝ դժուարք առ հիւանդութիւն եւ ստերիւրեալք ի հնազանդութենէն Աստուծոյ, եւ նախատէր զնոսա, թէ՝ «Դուք միշտ հանապազ Հոգւոյն Սրբոյ հակառակ կայք»[2*]: Եւ Դաւիթ ասէ. «Բարկացուցին զՀոգին Սրբութեան Նորա, եւ եղեւ ի նոցա ի գայթակղութիւն»[3*]: Եւ Եսայի գրէ. «Տունն Յակովբու[100] բարկացուցին զՀոգին Սուրբ»[4*]: Արդ, եթէ այս ամենայն վկայութիւնք ոչ իցեն իշխանութեան եւ զօրութեան Հոգւոյն առ ստոյգ լսողս եւ անաչառս, մնամ եւ զտեղի առնում իբրեւ զպարտեալ ի նոցանէն: Բայց ըստ բանի[101] նոցա հարկ է խորհիլ զՀոգւոյն Աստուծոյ իբրեւ զդատարկ գործոյ արուեստականաց եւ իբրեւ զհնազանդելոյ, զի իցէ որպէս մի յարարածոցս ընկեր[102] մեզ ի հնազանդութեան, սակայն կարի իմն ծանր է բանս այս առ ասել եւ առ լսել, թէ անկցի բանս հայհոյութեան առ երկիւղածս Աստուծոյ: Արդ, ի ծառայութեան դնես դու զՀոգին Աստուծոյ: Եւ առհասարակ գրեալ է վասն ծառային, թէ ոչ գիտէ զինչ գործէ տէրն նորա, իսկ Հոգին Սուրբ այսպէս գիտէ զԱստուծոյսն, որպէս Հոգի մարդոյն գիտէ, զինչ ի մարդ անդր է[5*]:

Ի. Արդ, ասեն սոքա, թէ ոչ ի ծառայութեան դնեմք զնա եւ ոչ ի տէրութեան, այլ ազատ համարիմք զնա: Ո՞ՀԱ այսմ անզեղջ ախմարութիւն մարդոցս այսոցիկ, ո՞ՀԱ աներկիւղ յանդգնութեան, որ բնակեալ է ի մարդիկս յայսոսիկ, թէ որպիսի ինչ եւ կամ զինչ խօսքն վասն Հոգւոյն Աստուծոյ, ուստի յաճախեմ ի լալ զնոսա վասն ախմար լինելոյ ի գիտութենէ կամաց իւրեանց: Եւ դիմագրաւեալ համարձակին ի հայհոյութիւնս հանապազորդ եւ զվարդապետութիւն բանից Աստուածութեան մահկանացու օրինակօքս անարգեն եւ չափս կերպարանաց, զոր ունին որդիք մարդկան եւ պաշտի առ նոսա, ի պէս

1* Եփես. Դ 30
2* Գործք Է 51
3* Սաղմ. ՃԵ 36
4* Եսայի ԿԳ 10
5* Տե՛ս Ա Կորնթ. Բ 11-12:

պէս եւ ազգի ազգի պատիւս արկանեն ի բնութիւն աստուածեղէն մեծութեան Նորա: Անճառ եւ անպատում է ժպրհութեամբն իւրեանց, բայց ոչ իմանան, թէ ի մէջ որդւոց մարդկան չիք ծառայ բնութեամբ, զի կա՛մ զօրացաւ զօրօք ի վերայ ընկերի իւրոյ ի մարտ պատերազմի եւ կա՛մ ի ստրկութիւն եւ ի ծառայութիւն գրեաց եւ կա՛մ վասն անկար աղքատութենէ Տեառն մարդիկ զմերձաւորս իւրեանց ի ծառայութիւն ըստ նեղութեան ժամանակին, որպէս եւ իմաստնացան եգիպտացիքն եւ ի ձեռն Հովսէփայ[103] հնազանդեցան փարաւոնի՝ ըստ առաջնորդութեան Աստուծոյ, որ ոչ քննի ի ծածուկ անհասութեամբն Իւրում, եւ կամ որպէս եղեւ Քանան ծառայ եղբարց իւրոց յանիծից անտի հօր իւրոյ[1*]: Մորոս, ասէ. եղիցի ծառայ իմաստնոյ[2*]. այլ ամենայն առնմա ի շահ եւ յօգուտ է, եթէ ոք ստուգապէս դատեսցէ այս ի միտս իւր եւ քնին արկցէ եւ գիտասցէ, քանզի ամենայն մարդ, որ միանգամ ոչ կարաց գտանել զհանճար իմաստութեան, ի խորհրդոց իւրոց լինել տէր անձին իւրոյ սմա յոյժ օգուտ է, զի եղիցի հնազանդ եւ ծառայ իմաստնոյն, զի այն, որ զգոյշն է, ի միտս իւր լիցի առաջնորդ այնմ, որ լոյծն եւ արձակն են ճանապարհք իւր, իբրեւ կառավար իմաստուն եւ տեղեակ, որ կայ առ ի վարել ուղիղ պայմանաւ զասստիկ ընթացս երիվարաց եւ կամ իբրեւ զնաւավար ի մէջ ալեաց կուտակելոց, որ առեալ ունի զվարել նաւին յօրինեալ կարգաւ ի նստելն իւր ի վերայ նաւին ուղղեկի, վասն այնորիկ եղեւ Յակոբ տէր Եսաւայ յօրհնութենէ հօր իւրոյ[3*], զի թէեւ ոչ կամեսցի օգնեսցէ իմաստունն անմտին, վասն զի անփոյթ եւ իմաստ խորհրդովն իւրով կորոյս նա անձամբ զանձն. «Քանան,- ասէ,- եղիցի ծառայ եղբարց իւրոյ»[4*], վասն զի ոչ կամեցաւ լինել աշակերտ ուղղութեան կարգին Քամ՝ հայր նորին, անիմաստ այսու բանիւ, որ վասն ուղղութեան եւ չարահաւանութեան լինին մարդիկ հնազանդեալ ընկերաց իւրեանց յուղիղ եւ կամ ի չար վարուց իւրեանց, իսկ ազատք այսու լինին, զի ո՛չ ի մարտ պատերազմին տկարացան եւ ո՛չ յաղքատութենէ անտի չարչարեցան եւ ո՛չ եղեն կարօտեալք ի փոյթ առնելոյ այլոց ի վերայ նոցա: Արդ, թէպէտ եւ լինի, զի կոչին ոմանք տեարք եւ ծառայք, այլ ամենեքեան մի են, մի բնութիւն, մի հաւասարութիւն, որպէս զի արարածք են Աստուծոյ, եւ ամենեքեան ընկերք են միմեանց ի ձեռն ստեղծմանն իւրեանց, բայց վասն այնց բնութեանց վերնոցն զինչ ունին ասել

1* Տե՛ս Մնուն. Թ 25-27:

2* Տե՛ս Առակ. ԺԱ 29:

3* Տե՛ս Մնուն. ԻԷ 40:

4* Մնուն. Թ 25-27

սոքա, որք հաստատեցան ի հնազանդութիւն Աստուծոյ եւ կան հանապազորդ ի սպաս պաշտման Նորա: Եւ չիք ի մէջ նոցա կողմն, որ հնազանդի ընկերի իւրեանց, եւ օտարք են ամենեւին ագահութեան եւ Տեառն ամենայնի միմիայն պարտին զերկրպագութիւն օրհնութեամբն իւրեանց: Եւ պաշտեն զկամբ Նորա յակնարկելոյն Նորա փութացեալ ամենայն յօժարութեամբ. «Որդի,- ասէ,- պարտ է զհայր իւր, եւ ծառայ՝ զտէր իւր», եւ այսոքիկ երկոքեանն Աստուծոյ պարտ եւ արժան են, որպէս եւ ասաց. «Եթէ Հայր եմ Ես, ո՞ւր են փառքն Իմ, եւ եթէ Տէր եմ, ո՞ւր է երկիւղն Իմ»[1*], քանզի ամենայն, որ անփոյթ լինի յԱստուծոյ, կեանք նորա չարչարանաց եւ տառապանաց են, որպէս եւ է զօրութիւն ապստամբող թշնամոյն, եւ վասն զի կորացեալ խոտորեցաւ նա յԱստուծոյ ամենակալէ յամբարտաւանութիւն[104] կամաց իւրոց, էարկ զնա ի սանձ անհնազանդութեան ի բարի կամաց անտի, զի եղիցի նա այլ ընդ այլոյ հանդերձ այլովք, եւ միշտ է ի վերայ նորա շտապ տագնապի խիստ լծոյ բռնութեան երկիւղին Աստուծոյ: Արդ, վասն ո՞ր ասիցեն սոքա, թէ իցէ ազատ. թերեւս վասն այնր, որ ոչ ունի զոք թագաւորեալ ի վերայ իւր: Եւ չիք սկիզբն այլ, որ ի վեր է քան զնա ստուգութիւն զօրութեան Իւրոյ, եւ չէ Նմա այլ ոք, որ իշխէ ի վերայ Նորա, եւ չէ բնութիւն, որ իցէ այսպէս յեղելոցն եւ յարարելոցն, եւ թէ ոչ պահեմք զայս ի վերայ Հոգւոյն Սրբոյ, այս յայտ ամբարշտութիւն է: Արդ, եթէ արարած է Հոգին, հարկ է, եթէ հնազանդեսցի ընդ ամենայն արարածոցս, վասն զի ամենայն ինչ, որ հաստատեալ է, ընդ հնազանդութեամբ Աստուծոյ է, ապա թէ բարձր եւ վերագոյն է Նա ի չափոյ աստի արարածոցս հաղորդ եւ տուող[104ա] է ի բնութեան[105] Իւրում Հոգին Սուրբ վերին արքայութեան:

ԻԱ. Բայց զինչ օգուտ է ի նուազագոյն իրաց աստի առնել զմարտս մեր ընդ մարդիկս ընդ այսոսիկ, զի ի տկար բանէս թերեւս լիցի յաղթահարիլ[106] մեզ ի նոցանէ, զի ունիմք իշխանութիւն ի մեծամեծաց անտի, որոց ոչ չիք դարձուած ցուցանել զխորհուրդս մեր եւ կոփահարել զհայհոյութիւնս զրկողացն, զի զոր ինչ լուաք ի Գրոց վասն Որդւոյ, գիտեմք զնոյնն եւ վասն Հոգւոյն, քանզի ի մէնջ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգին ի մի փառս դաւանի: Արդ, առ որս փոքր կացուցանեն զՀոգին, բերեմք մեք զբարբառս Որդւոյ ի մէջ, ապա թէ ոք փոքր կացուցանէ զՈրդի, առնումք մեք ի Հօրէ զքաջալերութիւն խնուլ զբերանս նոցա, քանզի ոչ առ Հայր եւ ոչ առ Որդի եւ ոչ առ

1* Տե՛ս Մաղ. Ա 6:

Հոգին Սուրբ գոն նշանք փոքրկութեան ի բարբառս, որ խօսին վասն Նոցա: Արդ, գտանեմք մեք յառաքեալ, զի գրեալ է. «Տէր մեր Հաստատեսցէ զսիրտս ձեր ի սէրն Աստուծոյ, զի ժուժկալ լիջիք նեղութեանց, որ փոխանակ Քրիստոսի են»[1*]: Յասելն «Աստուած մեր»՝ եւ Տէր Հաստատեսցէ զսիրտս ձեր[2*] ի սէրն Աստուծոյ եւ ի հաստատութիւն Քրիստոսի. եւ այս կերպարան պաշտպանութեան է՝ հաստատելն Աստուծոյ ի ժուժկալութիւն նեղութեանց փոխանակ Քրիստոսի: Եւ զի՞նչ ունիցին պատասխանել վասն. այսոցիկ հնազանդեցուցիչք Հոգւոյն ի ծառայութիւն. ասասցեն մեզ՝ զիա՞րդ հաստատէ Մինն Միւսոյն զայլ ոմանս, եթէ ոչ պաշտպանութեամբ, եւ այս բարբառ ուրեմն հնազանդութեան իցէ, եւ կարող էք հաւանեցուցանել: Եւ դարձեալ ասաց առաքեալ. «Զձեզ Ինքն Տէր բազմապատիկ եւ առաւելս արասցէ սիրով ընդ միմեանս եւ առ ամենեսեան, որպէս եւ մեք՝ ի ձեզ, եւ հաստատեսցէ զսիրտս ձեր անարատս ի սրբութիւն առաջի Աստուծոյ եւ Հօր մերոյ ի գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հանդերձ ամենայն սրբովք Իւրովք»[3*]: Ահաւասիկ, այս Հոգւոյն է հաստատել առաջի Աստուծոյ եւ Հօր եւ առ Քրիստոս ի գալստեանն Իւր, զոր վերագոյնդ Հօրէդ, որով խրատիմք ոչ գնալ յամենայն տեղւոջ զկնի բարբառոյ բանիցն, այլ թէ զինչ մեկնէ զօրութիւն Նոցա, զայն խնդրեմք: Արդ, տացեն մեզ պատասխանի սոքա, զի թէ ընդ Հոգիսն, որ եղեալն են ի փառս եւ առաքին ի սպաս պաշտմանդ, ասեն, զՀոգին Սուրբ ունին ցուցանել մեզ: Վասն այսր իրի՝ ի Գրոց[107] հաւանութիւն: Իսկ մեք յայտ եւ մեկնակ ճշմարիտ բանիւ ի Գրոց յայտնեմք, թէ Աստուած է ի Հոգւոյ անուն, եւ զի բարձցուք զպատճառս հակառակողացն ի միջոյ, զբանս մեր առանց Գրոց վկայութեան ոչ ածեմք լոկ ի լոկոյ, այլ երկրորդեմք զբանս Գրոց յիւրաքանչիւր տեղւոջ: Արդ, գրէ առաքեալ. «Մինչեւ ցայսօր, յորժամ ընթեռնուն զՄովսէս, նոյն առագաստ կայ ի վերայ սրտից նոցա: Եւ յորժամ դառնան առ Տէր, յայնժամ բարձցի ի նոցանէն քողն, զի Տէր Հոգին է»[4*], ցուցանէ, թէ որք յօրէնսն միտ եդեալ նայիցին եւ զբանս նորա ի պահել առնուցուն, քողն հրէութեան արկեալ է ի վերայ սրտից նոցա: Իսկ յորժամ արկանէ ի միտս իւր դառնալ առ Տէր, զպահպանութիւն օրինացն մարմնաւոր համարի՝ գիտելով, թէ գալստեամբն Քրիստոսի առին զվախճան եւ զկատարած իւրեանց, եւ եղեւ խափանումն նոցա, քանզի ամենայն տիպք եւ նշմարանք, որ զճշմարտութիւն գուշակէ, յորժամ նա կատարի, ինքն լքանի, որպէս ի մեծապայծառ լոյս ճառագայթից արեգականն նուազի լոյս ճրագաց պո ի պէտս պիտոյից, սոյնպէս եւ գալստեամբ Որդւոյն Աստուծոյ կատարեցան օրէնք, եւ եղեւ խափանումն նոցա, եւ լռեցին դադարեցին բարբառք մարգարէիցն, զի եկն եհաս նոցա կատարումն ի գալ ճշմարտութեան, եւ բառնան զքողն Մովսիսի ի սրտից իւրեանց, զի յարտաքին կարդացմանէն դառնան եւ առ ճշմարտութիւն նկրտին, եւ քանզի Տէր Հոգին է, այնպէս են, որք առնուն ի սրտից իւրեանց զքողն ընեղէն բարբառոյն, որ ասացան վասն Հոգւոյն, եւ ոչ դնեն եւ համարին զՆա ի հնազանդութեան, այլ առ Հոգին ճշմարտութեան դառնան զճշմարիտ հաւանութեամբ՝ խոստովանեալ, եթէ Հոգին Տէր է, եւ որպէս Մովսիսի երեսն ի խօսիլն ընդ Աստուծոյ զյաւելուած ընդունէր, նոյնպէս եւ այնոքիկ, որք հաստատին բանի Հոգւոյն Սրբոյ եւ հաւատան, թէ Աստուած է Նա փառօքն, որ ի Նմանէ յարգի, եւ մեծանայ կեանք նոցա ի ձեռն պարգեւաց Իւրոց, եւ որպէս գործն լուսոյ փայլուն եւ պայծառատարը նշոյլսվառ ի վայելչութիւն իւրում արկանէ զճաճանչ գունոյն իւրոյ ի նիւթս թափանցիկս, եւ փայլեն նոքա ազդմամբ նշուլիցն, զոր ընդունին, սոյնպէս եւ այնոքիկ, որք հաստատեն զուխտս իւրեանց ընդ Հոգւոյն Սրբոյ, թէ՝ ի փառատոր բնութենէն Աստուծոյ է, սիրտք նոցա լուսաւորին ճշմարտութեամբն Իւրով, եւ զյայտնութիւն ի պտղոյն նոցա ցուցանէ ի սիրոյն իւրեանց, որ առ Նա: Ո՞չ արդեօք պատկառե[ս]ցեն ի Պօղոսէ առաքելոյ մարդիկ[108] կռուողքն ընդ Հոգւոյն, որք կամին փոքրացուցանել զՆա, զի այսպէս ասէ. «Տաճար էք դուք Աստուծոյ, եւ Հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ»[1*]: Արդ, զիարդ Հոգւով ընդունողքն Աստուածութեան եղեն նոքա բանակետղ ծառայութեան: Եւ դարձեալ ասաց «Ամենայն Գիրք Աստուածաշունչք ի Հոգւոյն Աստուծոյ են»[2*]: Արդ, անարգութիւն ծառայութեա՞ն[109] է Ուսուցիչ Գրոց:

ԻԲ. Արդ, ոչ է ի գործս արարածոցս ժառանգակցութիւն Հոգւոյն Սրբոյ, այլ՝ առ Աստուած եւ անբաւ եւ անքնին եւ աներեւոյթ ծածուկ[110] ի թշնամանողաց Իւրոց, եւ որպէս է Հայր եւ Որդի անդ քան զամենայն, սոյնպէս եւ Հոգին Սուրբ՝ ի փառս բնական Աստուածութեան Իւրոյ, որ ոչ անկանի ի միտս արարածոց, եւ որպէս ասաց Տէր մեր վասն Հօր Իւրոյ, ըստ նմին նմանութեան ասաց եւ վասն Հոգւոյն

1* Հմմտ. Բ Թեսաղ. Գ 3:
2* Տե՛ս Բ Թեսաղ. Գ 5:
3* Ա Թեսաղ. Գ 12
4* Բ Կորնթ. Գ 15-17

1* Ա Կորնթ. Գ 16
2* Բ Տիմ. Գ 16

Սրբոյ. «Հայր Իմ ճշմարիտ, զի աշխարհս ոչ ծանեցաւ զՔեզ»[1*]. «աշխարհ» ասաց ոչ եթէ զայսոսիկ, որ երեւինս ընդ սահմանաւ երկնից երկիրս, այլ վասն որդւոց մարդկան, որոց կեանքն էին պէս պէս փոփոխմամբք, եւ այսր անդր յեղյեղուկ շրջկոտեն ամենայն կամօք եւ անուանին համանուն աշխարհի, յորում նոքա այն բնակեալ են ժամանակաւ, եւ իբրեւ ասաց վասն Հօր Իւրոյ, դարձաւ ասաց վասն Անձին Իւրոյ. «Փոքր մի, եւ ոչ տեսանէ զիս. աշխարհ, բայց դուք,- ասէ,- տեսջիք զիս»[2*]: Եւ զի ոչ գոյր հաւատ աշխարհի, վասն Յարութեան ասաց, թէ՝ դուք տեսջիք զիս, զի ոչ գոյ ձեզ յոյս ի բանէն Իմմէ, եթէ ճշմարիտ է, զի յառնեմ Ես, ասաց եւ վասն Հոգւոյն Սրբոյ ի նմանութիւն այսր, թէ՝ «Հոգին ճշմարտութեան, զՈր աշխարհս ոչ կարէ ընդունել զՆա, վասն զի ոչ տեսանէ զՆա եւ ոչ ճանաչէ զՆա: Բայց դուք ճանաչէք զՆա, զի առ ձեզ բնակեսցէ եւ ընդ ձեզ եղիցի»[3*]: Ոչ թէ վասն զի տեսլեամբ աչաց ընկալան զՆա եւ ոչ թէ վասն գիտութեան կացին ի վերայ նոցա՝ յազդեալ զգայարանաց, եւ ոչ թէ վասն զի առ նոսա բնակէ իբր բաւանդակութեամբ, այլ վասն զի տեսին զսքանչելիսն, որ լինէր ի Նմանէ[111] առ նոսա, եւ իմացան գիտութեամբն իւրեանց, եթէ ճշմարտութիւն է այն, որ առ Նոսայն է, եւ ի բնակելն Իւր ի նոսա զամենայն ինչ յայտնի ցուցանէր նոցա իբր այն, թէ ի նոսա բնակեալ էր յուսովն իւրեանց, եւ ի Նա ապաստանէին, վասն զի յամենայնի է եւ առ սուրբս գտեալ կայ օգնականութեամբն Իւրով եւ միշտ հանապազ է առ ծառայսն Աստուծոյ եւ զգործս Իւր այնպէս ցուցանէր նոցա ի ձեռն նոցուն, որով հաւատարիմ լինէր նոցա, եթէ ընդ Նա է:

Ի Գ. Կուռնելիոս ի ձեռն հրեշտակին Ինքն եղեւ այցելու, զի ընդունելով զաղօթս նորա՝ ածցէ զնա ի կատարելութիւն ճշմարտութեան Իւրոյ, եցոյց նմա վասն Պետրոսի եւ էջ ի վերայ նոցա ի խօսել նորա զբանն Աստուծոյ[4*]: Եւ զՓիլիպպոս Ինքն փութացոյց մերձենալ ի կառս ներքինոյն եւ յափշտակեալ զնա առ Ինքն՝ արձակեաց զճանապարհն գնալ ուրախութեամբ[5*]: Եւ ընդ Զաքարիայ առ սեղանն Ինքն խօսեցաւ ի ձեռն Գաբրիէլի[6*]: Եւ ընդ Դանիէլի ի

1* Յովհ. ԺԷ 25
2* Յովհ. ԺԴ 19
3* Յովհ. ԺԴ 17
4* Տե՛ս Գործք Ժ 1-31:
5* Տե՛ս Գործք Ը 30-38:
6* Տե՛ս Ղուկ. Ա 12-18:

Բաբելոն Ինքն եղեւ[112] սքանչելեօքն, որ գործեցաւ ի ձեռն նորա[1*]: Եւ Երեմիայի ի գրին Ինքն եղեւ վերակացու[2*]: Եւ ընդ Եզեկիէլի ի վերայ Քոբար գետոյն Ինքն եղեւ սքանչելեօքն եւ եցոյց նմա զփառս կառացն եւ ի հայելն ի կազմուածս նորա ասաց, թէ՝ «Բացաւ երկինք, եւ լցաւ ի Հոգւոյ Տեառն ամենայն երկիր»[3*]: Եւ Դաւիթ ասաց, եթէ՝ «Յո՞վ երթայցես Հոգւոյ Քումմէ, եւ կամ յերեսաց Քոց ես յո՞ փախեայց»[4*]: Եւ միւս եւս այլ մարգարէ ասաց, թէ՝ «Ընդ ձեզ եմ, եւ Հոգի Իմ կայ ի միջի ձերում»[5*]: Արդ, յայտ է, եթէ ընդ ամենայն տեղիս է Հոգին Աստուծոյ զօրութեամբ եւ գործովք սքանչելեաց Իւրոց, եւ ընդ Աստուծոյ առ Աստուած է բանակետղ Նորա, բայց վասն որոյ յարարելոցս ասացաւ յաստուածեղէն Գրոց, եթէ ընդ ամենայն տեղիս իցէ: Սակայն վասն Հոգւոյն Սրբոյ ցուցանէ՝ սաղմոսելով. «Յո՞ երթայցես Հոգւոյ Քումմէ»: Ահաւասիկ այսու բանիւ բաւանդակեաց զամենայնս, զի չիք տեղի ի բացեայ ի Նմանէն յամենայն արարելոցս, այլ Ինքն զամենայն բաւանդակիչ է եւ անբաւ է յամենայնէ, եւ սքանչելիք Նորա անդադար են, եւ արուեստ Նորա ոչ սպառին, եւ օգնութիւնք Նորա ոչ նուազին: Ո՞վ է, որ ոչ երկիրպագանիցէ, քանզի օրհնեալ է ընդ Աստուծոյ եւ ի տեղի Աստուծոյ եւ ի պատիւ փառաց Նորա եւ Միաստուածութիւն անդր, զի մի են փառք Նոցա:

Արդ, օրհնութիւն Հոգւոյ Սրբոյ ոչ եթէ ի բանէս մերմէ առնու սկիզբն, այլ ի սքանչելեաց անտի, որ առ մեզ են, ունի զայս եւ, որպէս ինձ երեւի, ոչ է կամ սոցա, եթէ երկրորդեսցուք զսքանչելիսն եւ զբարիսն Նորա, որ առ մեզ են, քանզի եթէ ասեմք զմեծամեծս Նորա մերով պատմութեամբս եւ զարուեստ սքանչելեաց Նորա, զրկողք լինին մեծամեծացն, զորս[113] տեսանեն ի Նմանէ չնորհաց տուրս յանձին իւրեանց, եւ չիք կշիռ եւ համեմատ անօրէնութեանց[114] նոցա[115], եւ ոչ ունիմք ի մարդկայնոցս ածել օրինակ չարութեան նոցա, զոր ցուցանէն առ Բարերարն իւրեանց, զի ձրի զարմանալովն ոչ կամին ցուցանել զգեղն պայծառագեղ, որ գեղեցկացոյց զտգեղութիւն նոցա, քանզի որպէս օգնէ մեզ փոյթ տեսչութեան առաջնորդութեան Հօր եւ Որդւոյ, նոյնպէս ընդ նմին օրինակի եմք մեք եւ ընդ

1* Տե՛ս Դան. ԺԴ:
2* Երեմ. Ի 2
3* Եզեկ. Ա 1
4* Սաղմ. ՃԼԸ 7
5* Անգ. Բ 5, 6

խնամօք Հոգւոյն, զի եթէ ընդունիմք մեք զսքանչելի բարբառ Հօրն, զՈրդի եւ զՀոգին տեսանեմք ընդ Նմա եւ եթէ ընդունիմք զբանն Որդւոյ, զարմանալով զՀայր եւ զՀոգի ի Սմա նայիմք մեք Նովաւ եւ եթէ ընդունիմք մեք զգովեստ արուեստից Հոգւոյն ի ձեռն ակնարկելոյն Իւրոյ, զՀայր եւ զՈրդի գտանեմք ի Նոսա: Եւ եթէ գովեմք մեք զՀայր, Որդւովն եւ Հոգւովն է գովեստն: Եւ եթէ օրհնեմք մեք զՈրդի կատարեալ, առ Հայր եւ Հոգի է օրհնութիւն:

Ի Դ. Եւ եթէ փառաւորեմք մեք զՀոգին Սուրբ, լի բաւանդակէ փառաւորութիւն մեր առ Հօր եւ Որդւոյ, զի թէ վասն մարդւոյ ասացեալ է. «Փառօք եւ պատուով պսակեցեր զնա»[1*]: Եւ առաքեալ գրէ. «Փառս եւ զպատիւ հատուցանէ ամենայն մարդոյ Աստուած, որ բարեգործ է»[2*]: Եւ վասն այնոցիկ, որք ի յարութենէ մեռելոց զարթնուն ասաց, եթէ յառնեն փառօք[3*]: Եւ Եսայի ասաց. «Մի՛ երկնչիր, ծառա՛յ իմ Յակովբ[116], զոր ընտրեցի եւ փառաւորեցի զքեզ»[4*]: Եւ Դաւիթ ասէ. «Զերկիւղածս Տեառն փառաւոր առնէ»[5*]: Եւ Սողոմոն ասէ. «Ի գովութիւն արդարոց խնդան ժողովուրդք»[6*]: Եւ Աստուած վասն ողորմութեան Իւրոյ եւ վասն սիրոյ, որ առ մարդիկ, յարգեաց փառաւորեաց զստեղծուածս Իւր չնորհօք: Եւ մարդք ոմանք վասն առաւելութեան գործոց յարգենն գովեն զմիմեանս[117], ընդ Աստուծոյ եւ զՀոգին Սուրբ ոչ ունին յանձին սոքա տալ Սմա զփառս եւ զպատիւ այն, որ Նորա են ամենայն չափք կերպարանաց, եւ Նմա անկ է եւ պարտ այս իբրեւ ի ստեղծուածոց առ Ստեղծիչն իւրեանց, որ ոչ ինչ է կարօտ իւիք ի նոցանէ, բայց եթէ՝ լցցին անձինք նոցա փառօք Նորա: Ոչ ահաւասիկ յայտ է ամբարշտութիւն մարդոցս այսոցիկ այսու գործով, եւ թէ յորպիսի մեծ պատիժս պատուհասից պատրաստեալ են, քանզի ասեն սոքա, եթէ՝ փառաւորեմք մեք զՀոգին, այլ ոչ եթէ ընդ Հօր եւ ընդ Որդւոյ յայտ օրհնութեամբ: Արդ, յորում մասին կամիցին դնել զՀոգին Սուրբ, զոր Տէր մեր ընդ Իւր եւ Հօր Իւրում եդ եւ հաւասարեաց զՆա եւ զփառս, զոր ունի հաղորդութեամբ ժառանգակցութեան Իւրոյ առ Աստուած, զոր թափել ի Նմանէ անօրէնութեամբն իւրեանց մոլորեալ են զհաւատ

1* Սաղմ. Ը 6, Եբր. Բ 7
2* Հռոմ. Բ 10
3* Հմմտ. Ա Թեսաղ. Դ 15:
4* Եսայի ԽԱ 8
5* Սաղմ. ԺԴ 4
6* Տե՛ս Առակ. ԻԹ 2:

եւ զխոստովանութիւն, զոր ունին որդիք մարդկան առ Նա մկրտութեամբն իւրեանց վասն կենացն, որ տնօրինի ի Նմանէ նոցա, վատնել, ցրուել ի նոցանէ կամին, եւ թէ ոչ մի ինչ պարգեւք լինին առանց Նորա յարարածս ամենայն, ո՞չ ահա յայտ է, թէ ի բնութենէն Աստուծոյ է ամենայնիւ յամենայն ինչ, որպէս եւ Տէր ասաց ցաշակերտսն Իւր վասն պատասխանատուութեան առաջի դատաւորաց եւ թագաւորաց, եթէ՝ «Հոգին Հօր ձերոյ խօսեսցի ի ձեզ»[1*]: Եւ այս ամենայն մեծամեծացս, զոր ունի սա, կամին մարդիկ զնա օտար առնել յԱստուծոյ, որպէսզի եղիցի յոյս նոցա անյոյս ի չար խորհրդոցն, որ զՆմանէն: Արդ, ասասցէն մեզ, յորո՞ւմ կողման կամին դնել զՆա եւ համարել՝ ընդ արարա՞ծս, եթէ՞ ընդ Արարիչն, այլ աւասիկ ամենայն արարածքս ի ստրկութեան ծառայութեան պաշտեն կարօտութեամբ եւ կազմուածովք իւրեանց, իսկ Հոգին Սուրբ, որպէս եւ գրեալ է վասն Նորա, ազատիչ է. «Ուր Հոգի Տեառն է, անդ,- ասէ,- ազատութիւն է»[2*]: Շատ ինչ ունիմք ասել զբնութենէն Հոգւոյն Սրբոյ, զի ոչ է բնութիւն Նորա մօտ ինչ առ բնութիւնս արարածոցս, եւ եթէ որպէս մարդիկս այսոքիկ պատրաստեալ են ի հակառակութիւն, անհամար ճառիւք ընդ միոջ միոջ բանից նոցա կարգեմք մեք զբանս մեր. ի մարտ պատերազմի բազում օրինակս պիտոյ է մեզ, զի արասցուք եւ զլսողսն յաշխատութիւն կացուցանեմք, այլ վասն զի ի պարտութիւն կարգեալ մարտ պատերազմի նոցա պատմութեամբն իւրեանց բարձցուք թողցուք ի մէջ զամենայն որոճումն եւ ընդդէմ այնոցիկ, որք կարծեալ երեւին, թէ իցեն ինչ, արասցուք զաշխատութիւնս մեր:

Արդ, քննեսցուք, թէ իցէ ինչ, որ հաստատեալ կայ մեծութեամբ կամ փոքրկութեամբ գիտող Աստուծոյ խորհրդոյն: Իսկ Հոգին Աստուծոյ եւ զիսորս Աստուծոյ գիտէ, եւ արարածք ամենայն յանճառ խորոց Աստուածութեանն ի ձեռն Հոգւոյն Սրբոյ ակնարկութեան առնուն, որ ինչ պատշաճէ նոցին գիտել, այլ եւ Հոգին ընդ Հօր եւ ընդ Որդւոյ կեցուցիչ, որպէս եւ առաքեալ ասաց. «Աստուած է, որ կեցուցանէ զամենայն»[3*]: Եւ դարձեալ ասաց. «Ինքն, որ յարոյցն զՔրիստոս ի մեռելոց, կենդանացուցցէ զմահկանացու մարմինս ձեր՝ բնակել Հոգովն Իւրով ի ձեզ»[4*]: Արդ, եթէ կենդանարար է Հոգին,

1* Մատթ. Ժ 20
2* Բ Կորնթ. Գ 17
3* Հմմտ. Բ Կորնթ. Գ 6:
4* Հռոմ. Ը 11

զի՞ՐԴ դՆեն զՆա ժառանգակից կարօտելոցս ի կենցաղս: Ո՞վ արդեօք իցէ, որ այսպէս մոլեալ կատաղեալ իցէ ի հակառակութիւնս իւր, զի ոչ լինիցի տուող երկնաւոր պարգեւացն եւ ոչ ճաշակիցէ ի գեղեցիկ բանէն Աստուծոյ եւ ոչ լինիցի հաղորդ գեղեցիկ մասին, յորում գոյ յոյս կենացն յաւիտենից, այլ կամի դՆել զՀոգին Աստուծոյ ընդ գործս արարածոց եւ յԱստուածութենէ անտի առՆել զաւելուած օտարութեան Նորա՝ զայնր, առանց որոյ եւ ոչ մի ինչ բարի գտաւ առ որդիս մարդկան: Բայց ասեն սոքա, եթէ՝ առ մեզ իբրեւ պարգեւէ յԱստուծոյ, եւ զպարգեւն ի տեղի փառաց տուողին Իւրոյ ոչ գիտեմք եւ ոչ համարիմք զՆա: Այո. Նաեւ ես իսկ ասեմ, եթէ Հոգին Սուրբ պարգեւ է, բայց ոչ իբրեւ զայն պարգեւն, որ իբրեւ պարգեւին շՆորհի առաւել մՆայ առ այն, որ ընկալաւն զՆա, այլ եւ պարգեւ է եւ պարգեւատու եւ տայ զօրութեամբ Իւրով յիւրայոցն, այլ ոչ եթէ իբրեւ պարգեւի կայ մՆայ բՆապէս եւ չուեալ օտարանայ ի տուողէն, այլ տայ հաւասարմապէս զպարգեւս Իւր եւ հեռանայ բՆութեամբն Իւրով յամենեցունց, որ առՆուՆն, վասն զի ոչ բովանդակի փառօք Նորա, սակայն լՆու շՆորհօք զորդիս մարդկան, որպէս կամագէտ Աստուծոյ կատարելութեամբ[118] միոյ բՆութեանն, զի ԻՆքՆին ի ՆմանէՆ եւ առանց Նորա չէ ուրեք, քանզի Հոգի կենաց է, որպէս եւ ասաց Պօղոս առաքեալն՝ «ՕրէՆք Հոգւոյն կենաց»[1*], եւ որպէս գրեալ է ի Պրակս Առաքելոցն, եթէ մինչեւ զօրն պատուիրելոյ առաքելոցն ի ձեռն Հոգւոյն Սրբոյ[2*]: Եւ յառաջ մատուցեալ ասէ. «ԱռՆի՛ք զօրութիւն ի հասանել Հոգւոյն Սրբոյ ի վերայ ձեր եւ եղիջի՛ք ԻՆձ վկայք»[3*]: Ահաւասիկ եկն յառաքեալսն եւ ետ զօրութիւն եւ եղեւ Պարգեւատու եւ Պարգեւ, ըստ որում տեսանեմք եւ զՈրդին Պարգեւատու եւ Պարգեւ, որպէս ասաց առաքեալ. «Որ յԻւր Որդին ոչ խՆայեաց, այլ վասն ձեր ամենեցուն մատնեաց զՆա, եւ զի՞ՐԴ ոչ Նովաւ հանդերձ զամենայն շՆորհիցէ մեզ»[4*]: Եւ դարձեալ ասաց, զի՝ «Մանիցուք զԱյն, որ յԱստուծոյն շՆորհեցաւ մեզ»[5*]: Եւ Տէր մեր դարձեալ ասաց, թէ՝ ահաւասիկ տամ ես ձեզ զօրութիւն[6*]: Այսուհետեւ ճշմարիտ Պարգեւ է Աստուածն մեր եւ Պարգեւատու: Իսկ Նոքա, որք ասեՆն վասն Հոգւոյն Սրբոյ լոկ ի լոկոյ, թէ պարգեւ

1* Հռոմ. Ը 2
2* Հմմտ. Գործք Ա 2-4:
3* Գործք Ա 8
4* Հռոմ. Ը 32
5* Ա Կորնթ. Բ 12
6* Հմմտ. Ղուկ. Թ 1:

միայն է, զի արասցեն զՆա արարած, տառապին եւ աշխատին, եւ անցանէ զանցանէ ամբարշտութիւն նոցա ընդ ամբարշտութիւն հրէական[119], զի զպարգեւս Հոգւոյն Սրբոյ, որ եղեւ առ մեզ ի քաղցրութենէ եւ ի գթութենէ ողորմութեան Նորա, պատճառս հայհոյութեան կամին զՆոսա առՆել, քանզի այսպիսի բանբասանս մուծանին ի վեհագոյն եւ ասեՆ, եթէ առաքումն Նորա, որ առ մեզ է, տայ մեզ համարձակութիւն, զի կոչեսցուք զԱստուած Աբբա Հայր, որպէս եւ գրեալ է, թէ՝ «Առաքեաց զՀոգի Որդւոյ Իւրոյ ի սիրտս մեր, որով աղաղակեմք Աբբա Հայր»[1*], զի զբարբառ, ասէ, զՀոգւոյն; զոր ընդունիմք մեք, եղիցի Նա ի մէջ չՆչոց մերոց:

Ի ԵՒ-ԻԷ. Քանզի ասեՆ սոքա, թէ ոչ ուրեք եցոյց, թէ փառաւորեցաւ Հոգի ընդ Հօր եւ ընդ Որդւոյ, այլ հոգաբարձութեամբ, ասեՆ, պահեաց գիրս զայս, զի մի՛ ասասցի ընդ Հօր, այլ զի Հոգւովն տացի ՆՄա փառք, եւ որպէս պատշաճէր, ՆոյՆպէս եւ ետ ՆՄին զպատիւն: Արդ, ինձ այսպէս երեւի, եթէ յոյժ ՆուազեալՆ եւ տկարացեալՆ է խորհուրդ արանցս այսոցիկ մեծ ամբարշտութեամբ իւրեանց, քանզի երկու[120] սիղղոյբայիւք, որ յարեալ են ընդ միմեանս՝ ընդ ՆՄա եւ Նովաւ, կամին առՆել զանջրպետութիւն փառաց Աստուածութեան ի բՆութենէ Նորա: Արդ, յորժամ ասացին Գիրք, եթէ՝ «Ոչ ելէր ընդ զօրս մեր»[2*], ո՞չ ահա յայտ է, զի այն, որ ասացն դարձեալ՝ «Մտից ի տուն Քո, տաց Քեզ զուխտս իմ եւ զողջակէզս»[3*], ո՞չ ահա յայտ է, զի ընդ ողջակէզս է: Եւ յորժամ ասաց, թէ՝ «ԵՀան զՆոսա ոսկւով եւ արծաթովս»[4*], ո՞չ եցոյց եւ յայտ արար, թէ ընդ Նոսին էր արծաթն եւ ոսկին, բայց մեք ճշմարիտ խորհրդով ընդունիմք զայսոսիկ «զընդ Նովաւն» եւ «Նովաւ», զի ի բազում տեղիս գտաք, զի մեՆ Նոքա միով զօրութեամբ, մի լուր: Լուիցուք այժմ յայսմ Նոր իմաստութենէ մարդոցս այսոցիկ, թէ ասաց ուրեք առաքեալ, եթէ՝ «Հոգւով Սրբով եղիցի օրհՆութիւն Հօր եւ Որդւոյ», այլ մեք ոչ գտաք ուրեք գրեալ զայս, թէ՝ Քեզ, Հա՛յր, փառք եւ օրհՆութիւն ի ձեռն մեր, քանզի օրն առաջին, զի Նա ԻՆքն է մի, եւ ի ՆՄա եղեւ Յարութիւն Տեառն մերոյ. մի, որ է Պենտակոստեան ի ձեռն Նշանի Յարութեան իբր կրկնի մինն զեւթեամբք, եւ ՆոյՆ ԻՆքն դառՆայ եւ շրջի զանձամբ եւ կարգի ի վերայ յիսՆին եւ առՆէ եւթն շաբաթ՝ շրջելով միւսովս այսու, մինչեւ ի

1* Գաղ. Դ 6, Հռոմ. Ը 15
2* Սաղմ. ԽԳ 10, ԾԹ 12
3* Հմմտ. Սաղմ. ԿԵ 13:
4* Սաղմ. ՃԴ 37

կատարումն յիսներեկին եւ ուղիղ կեալս մեր, զի ոչ ծուռ կրկնեմք յաւուրսն յայնոսիկ, քարոզէ նշանակին Յարութեան, եւ յիշատակ արար կենաց մերոց, զի այլ մի՛ գլորեցաք յանօրէնութենէ կործանման մերոյ, զի զոր օրինակ ի ձեռն մեղացն գլորեցաք յԱստուծոյ, սոյնպէս ի ձեռն ողորմութեանց Նորա յարեցաք վերացաք ի կեանս նոր: Արդ, փոքր է ինձ այսուհետեւ օրս ամենայն, եթէ նստայց ասացից վասն բազում բարեաց, զոր ունի Եկեղեցի յԱստուծոյ աւանդութեամբ առանց Գրոց: Արդ, որ Գիր ուսոյց մեզ յայտնապէս, զի հաւատացուք ի Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգին, բայց յայնմանէ, զի մկրտեսցուք յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ[1*]: Եւ վասն զի ստոյգ եւ պատշաճ է, զի որ տուաւն մեզ, զի մկրտեսցուք ի Նա, պարտ եւ պատշաճ է մեզ հաւատալ ի Նա, եւ ի Նմա պիտոյ է մեզ հաստատել զխոստովանութիւն մեր. այսուհետեւ թողցեն արքս այսոքիկ զամենայն ախմարութիւնս իւրեանց եւ տացեն զճշմարիտ օրհնութիւն հաւասարապէս անուանցս, յորս մկրտիմք մեք, ապա թէ հրաժեշտ առնուն ի ճշմարիտ օրհնութենէս յայսմանէ, իբրու թէ ոչ գրեալ է, եւ զատեն ըստ կամաց նոցա: Իսկ ապա տացեն մեզ Գիրս այսմ ամենայնի, զոր ստացեալ ունի Եկեղեցի Աստուծոյ առանց Գրոց հանդերձ հաւատովքս մերովք, քանզի հաստատեալ գայ ճշմարտութիւն հաւատոց մերոց ի հարցն մերոց ուղիղ[121] տչութեամբ: Արդ, եթէ այսոքիկ, որ ոչ են գրեալ, այնչափ ճշմարիտ եւ հաւատարիմ են եւ բարձրասցեն[122] մեծ զօրութեամբ խորհուրդ ստոյգ վարդապետութե[ան] նոցա, արդեօք ո՞չ ներեն զայս մի բան ի տչութենէ քարոզացն ճշմարտութեան՝ կարգեալ եւ իջեալ առ մեզ, քանզի ոչ եթէ վնասակար սովորութեամբ են պէտք[123] սորա առ մեզ, եւ ոչ եթէ իբր ի կասել Եկեղեցւոյ Աստուծոյ եկաց մնաց առ մեզ, եւ ոչ եթէ փոքր եւ կրտսեր է զօրութիւն խորհրդոյս[124] այսոցիկ, եւ կամ նուազ առ կատարումն ճշմարտութեան նաեւ ասացաք իսկ մեք յառաջագոյն, եթէ զինչ է զօրութիւն այսոցիկ երկուց բանիցս, եւ կայ առաջի մեզ ասել զկատարումն իւրաքանչիւր ուրուք ի սոցանէ առ ընկերի իւրում, եւ ոչ եթէ ընդ միմեանս կարգին իբրեւ այն, եթէ միմեանց ինչ ընդդէմ իցեն, այլ այսպէս մի մի ի նոցանէ բարձեալ կրեն զպատիւ իրերաց եւ զփառս ի ձեռն ստոյգ նշանի ճշմարտութեան: Իսկ այս բան, որ ասէ, բայ «Հոգով Սրբով», իրք է, որ ցուցանէ իբրեւ ի մէջ մեր զՀոգին, եւ որպէսզի առ մեզ յարէ Նա եւ հաղորդեցուցանէ զմեզ ընդ Աստուծոյ, եւ զերկոսին բանս զայսոսիկ ի կիր առեալ վարիմք մեք մինն, որ յայտնէ վասն մեծութեան փառաց Հոգւոյն, եւ միւսն եւս, որ ցուցանէ

1* Տե՛ս Մատթ. ԻԸ 19:

վասն չնորհացն, որ ի Նմանէ եղեւ առ մեզ յԱստուծոյ, եւ զի ի մէնջ սովաւ զատչի օրհնութիւն Աստուծոյ, եւ զոր ինչ ճառեմք յաղագս այսոցիկ, ոչ եթէ յիմանալւոյ մտաց մերոց, այլ ի կարգէ վարդապետութեան Տեառն մերոյ, զի յոյժ յարժան յարեալ են ի միմեանս բանքս այսոքիկ, եւ որ փոյթ առնէ զնոցանէ ճշմարիտ խորհրդով, օգտի ի բարբառոցն, զորս բերցուք ի մէջ յիւրաքանչիւր տեղւոջ առ ի վկայութիւն բանիս մերոյ: Արդ, բանն, որ վասն մկրտութեան փառատրութեան ասացեալ է ի Տեառնէ մերմէ, հարկիւ զգուշութեամբ գրեալ է ի Նմա հաւատ այսոցիկ անուանց, եւ Նովաւ եղեալ եւ հաստատեալ է ուղիղ կարգ Նորա, եւ նոյն Ինքն է սկիզբն խոստովանութեանս մերոյս հաւատոյ, յորմէ հետէ հաւատարիմք ճշմարիտ երկրպագուացն օրհնաբանութեան: Արդ, զի՞նչ արասցուք այժմ. պիտոյ է մեզ ուսանել յայսմ հետէ յարանցս յայսցանէ զայսոսիկ, զոր ինչ հարցանեմք ցնոսա: Արդ, ըստ բանի նոցա՝ ոչ մկրտիմք, որպէս ընկալաքն, եւ ոչ հաւատամք, որպէս եւ մկրտեցաքն, եւ մի՛ օրհնեսցուք, որպէս եւ հաւատացաքն, բայց հաւանեցուցեն զմեզ, եթէ այսոքիկ ըստ որում ասացաքս ոչ են ի միմեանս յարեալ եւ միմեանց ընտանեցեալ եւ ի միմեանց կատարեալ, քանզի նորոգ անօրէնութիւնքս, զոր խօսին արքս այսոքիկ, զլուծումն եւ զքակտումն աշխարհիս ցուցանէ ի ճշմարտութենէ անտի եւ առնել գլորել[125] մարդկան յԱստուծոյ, եւ սոքա կամակորիչք ճշմարիտ ճանապարհին ոչ դադարեն քարոզել զբանս զայս, որ ասէ, բայ՝ Հոգւով ի վեր եւ ի խոնարհ, զի ոչ ունին նոքա վկայութիւնս վասն Նորա ի Գրոց, բայց վասն այսր, զի ընդ Հոգւոյն տացի օրհնութիւն բազում, բանք են վասն Նորա ի բանէն ճշմարտութեան, քանզի մի են բանքս այսոքիկ միով խորհրդով եւ միով զօրութեամբ, որպէս եւ ասացաք իսկ: Արդ, եթէ ասիցեմք մեք՝ օրհնութիւն Հօր Որդւով ի ձեռն Հոգւոյն Սրբոյ, եւ դարձեալ ասեմք՝ օրհնութիւն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, մի լուր է վասն Նոցա Երկոքումբք, բայց մեք ոչ լինիմք զրկողք այնմ իմիք, որ ինչ ի Տեառնէ մերմէ խօսեցաւ եւ կամ սահմանել ինչ արտաքոյ այնմ, եւ խափանել այս ի մէնջ յոյժ հեռի է, սակայն առ սուսմօտ է կարի քաջ, քանզի իրն, որ մի է զօրութեամբ իւրով, թէ պակասէ սիղղոյբայիւ միով եւ կամ թէ յաւելուցու, չիք ինչ նմա արգել առ ի յոչ ընդունել, եւ յամենայն չափս կերպարանաց ցուցաք մեք առաջին բանիւքն մերովք, զի մի նմանութիւն ունին Նոքա առ ճշմարտութիւն անդր, եւ մի է զօրութիւն Նոցա ի վերայ, որոց զմեծ հակառակութիւնս արկեալ է մեր: Նաեւ առաքեալն իսկ կնքեաց ի վերայ բանիցս մերոց, զի եւ ինքն ի ճշմարիտ միտս զայսոսիկ զբարբառս ի կիր արկեալ վարի, իբրու ցուցանէ վասն զօրութեան միոյ միոյ ի Նոցանէ,

թէ զինչ իցեն յիւրաքանչիւր տեղւոջ: Արդ, տեսցուք, զինչ ասէ առաքեալ. «Յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,- ասէ,- եւ ի Հոգին Աստուծոյ»[1*]: Եւ դարձեալ ասէ. «Ժողովել ձեզ ի միասին Հոգով Իմով հանդերձ զօրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»[2*]: Եւ այսու յայտ արար եւ եցոյց ոչ ինչ աւելի գոլ զայն, որ ասէ «Նովաւ», քան զայն, որ «ընդ Նմայն», վասն զի մինն ի նոցանէ ի կապ անուանցն դնի, եւ միւսն եւս է կացուցիչ կարգի մարդկեղէն ումանն:

ԻԸ. Տեսցուք դարձեալ, թէ ոչ կացցէ պատասխանատրութիւն հարցն մերոց վասն պիտոյիցն այսոցիկ, քանզի եւ մարդիկքն, որք եղենն մեզ վարդապետք ի սկզբանէ ճշմարիտ բանիւքն իւրեանց, արգելելով եւ փակելով են եւ նոքա ընդ այսու[126] բամբասանօք, զոր բերեն զկնի մեր եպերաժողովքս այսոքիկ: Տեսցուք դարձեալ, զինչ ասէ Պօղոս առաքեալ առ կողոսացիսն. «Որ դուք,- ասէ,- որ մեռեալն էիք ի մեղս եւ յանթլուատութիւն մարմնոյ ձերոյ, կացոյց զձեզ Իւր»[3*]: Տե՛ս այժմ, զի ժողովրդեանս ամենայնի, որք են ընդ եկեղեցիս Քրիստոսի, ետ նոցա Աստուած զկեանս հանդերձ կենօքն Իւրովք. բայց Հոգւոյն Սրբոյ, ըստ բանին իւրեանց, սոքա եւ ոչ օրհնութիւն ընդ օրհնութեանցն Աստուծոյ կամին տալ եւ ոչ զկեանս ընդ կեանսն Քրիստոսի կամին յարել, զի թէ միաբանեսցեն իբրեւ զմի բնութիւն միով օրհնութեամբ, որ պարտ եւ անկ է Նմա, այս յոյժ դժուարին է յաչս նոցա: Եւ ստոյգք, որք հաճոյ եղեն Աստուծոյ, արժանի եղեն, զի դասեսցի կեանք նոցա ընդ կեանսն Քրիստոսի, որպէս եւ ասաց առաքեալ զնոսա, որք վախճանեցան յաշխարհէ աստի եւ խառնեցան ի գունդն Քրիստոսի. «Այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք»[4*]: Եւ այսոքիկ զրկողք ճշմարտութեան եւ ոչ ի մարդկան համարի դնեն զՀոգին Սուրբ Աստուծոյ, զի լիցի ընդ Քրիստոսի, ընդ որում եւ նոքայն լինիցին: Եւ դարձեալ Պօղոս առաքեալ ասաց վասն մերոյ, թէ՝ «Ընդ Նմա վաստակիմ ես յԱւետարանի Նորա»[5*]: Առաքեալ վաստակակից եղեւ Աստուծոյ ի ձեռն Աւետարանին, որ ի ներքոյ երկնից, քարոզեցաւ որդւոց մարդկան ընդ տիեզերս, եւ ոչ հաճեալ են այսոքիկ թիւրք ի ճանապարհին Տեառն սմա

1* Ա Կորնթ. Զ 11
2* Ա Կորնթ. Ե 4
3* Կող. Բ 13
4* Ա Թեսաղ. Դ 16
5* Հմմտ. Փիլիպ. Բ 22:

ընդ Նմին զհաղորդութիւն: Եւ թէ խօսիմք մեք ճշմարտութեամբ եւ յայնմ մեծութեան, յորում զայն անուանեսցուք մեք, զնա մատեանս ամբարշտութեան գրեն վասն մեր եւ այպանեն զմեզ վասն ճշմարիտ բանին, որ երկրորդի ի բերանս մեր: Եւ դարձեալ ասաց առաքեալ, եթէ՝ «Կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսիւ առ Աստուած, իսկ յորժամ յայտնեսցի Քրիստոս եւ կեանքն ձեր, յայնժամ եւ դուք ընդ Նմա յայտնեսջիք փառօք»[1*]: Արդ, զՀոգին կենաց, որ Նա ինքն է պարգեւատու կենաց, այն, որ ինքն եղեւ մեզ օգնական եւ վերայկացու, զի ապրեսցուք յօրինաց անտի մեղաց, ոչ ընդ Քրիստոսի դնեն եւ ոչ զկեանքն, որ ծածկեալ են, յԱստուած տան նմա, եւ ոչ զի ընդ Նմա յայտնեսցի փառօք, խոստովանին զնմանէ: Դարձեալ եւ վասն մեր ասացեալ է, թէ՝ «Ժառանգ եմք Աստուծոյ եւ ժառանգակիցք Քրիստոսի»: Եւ զՀոգին Սուրբ արարին տարագրեալ ի ժառանգութենէն Աստուծոյ եւ եդին օտարացեալ ի մեծութենէ Նորա, զայն, որ վկայէ հոգւոյս մերոյ, եթէ եմք որդիք Աստուծոյ, եւ զպատիւն, զոր Տէր մեր ընդ Իւր եւ ընդ Հօր Իւրում ետ Նմա, մեք ոչ ունիմք յանձին տալ Նմին ի տեղւոջ իւրում եւ միաբանել ընդ Նոսին. այս է գլուխ անօրէնութեան, եւ ամբարշտութիւն չիք ի վեր քան զչարութիւնս զայս, քանզի մեք, որք զհաւատսն Աստուծոյ Սրբով ընկալաք, յորժամ յառնեմք ընդ Քրիստոսի, ընդ Իւր յերկինս նստուցանէ զմեզ, յորժամ այլափոխէ զմարմին խոնարհութեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց Իւրոց: Իսկ Հոգւոյն Սրբոյ ո՛չ զ[ն]ստելն ընդ Քրիստոսի տան նոքա եւ ո՛չ փառս ընդ Նմա հանեն Նմա: Եւ զայն, որ մեզ ի Նմանէ պարգեւի, ոչ կամին տալ Նմին. եւ զայն, որոյ արժանի արար զմեզ Աստուած ճշմարիտ բանիւն Իւրով, եւ ոչ ստի, զի մեծամեծ պարգեւաց խոստումն ետ մեզ: Եւ տուաւ մեզ պատիւ յԱստուծոյ, զի ընդ Քրիստոսի եղիցուք եւ զի «յափշտակիցիմք ամպօք ընդ առաջ Տեառն մերոյ, ընդ օդս երկնից եւ ընդ Նմա յամենայն ժամ լիցուք»[2*]: Իսկ ընդդէմ Հոգւոյն մարտ եդեալ մարտնչիմք, եթէ չիք Նմա բաժին ընդ Քրիստոսի, զոր մեր Տէրն համարեցաւ ընդ Իւր եւ ընդ Հօր Իւրում:

Ամաչեմ ես աւասիկ ընդ նոսա, որք զայս ասեն, աւելորդ ամբարշտութիւնս եւ մեծ դողումն է, զի մեք ակն ունիմք փառաւորիլ ընդ Քրիստոսի, որպէս ասաց առաքեալ՝ «Եթէ չարչարանացն կցորդ

1* Կող. Գ 3
2* Ա Թեսաղ. Դ 16

լինելոց եմք, եւ փառացն հաղորդ լինելոց եմք[1*], իսկ զՀոգին Սուրբ ոչ հաւանին սոքա փառաւորիլ ընդ Քրիստոսի եւ ոչ անձանց իւրեանց հաւասարեն զՆա, զի նոքա սպասեն թագաւորիլ ընդ Նմա եւ Հոգւոյն շնորհաց տան անարգութեամբ զտեղի հնազանդութեան եւ զծառայութեան կարգն:

Եւ զի խօսեալ եղեւ այս ամենայն յինէն, ոչ թէ զի ես ինձէն բարձրացուցից զՀոգին Աստուծոյ, զի այս ամենայն փառք անկ է Նմա, զի եղիցի առ Նմին, այլ զի յանդիմանեցից զխորհուրդսն, որ ի ճշմարտութենէն ապստամբեցան, պատրաստեալ եմ ես, վասն զի նեղութեամբ կարի նեղեալ եմ ես վասն յուսոյս այսորիկ, որպէս զի փոխեցից յայսմ հայհոյութենէ զորդիս մարդկան եւ արկի զանձն իմ ի պատերազմս այս, քանզի կամին սոքա անջրպետել զփառս եւ զհաղորդութիւն Հոգւոյն Սրբոյ ի Հօրէ եւ յՈրդւոյ: Եւ ո՞վ իցէ այն, յորում կայցէ խելք իմաստութեան, թէ կարիցէ զլուրս զայս անցուցանել զիւրեւ առանց հոգւոց եւ տրտմութեան, եւ կամ թէ ոչ յայտնի երեւի եւ տգիտաց սպառնալիք, որ են ի վերայ թերահաւատից, որպէս եւ ասաց առաքեալ. «Գուցէ լինիցի ումեք ի ձէնջ սիրտ չար անհաւատութեան՝ ապստամբել յԱստուծոյ կենդանւոյ»[2*]: Արդ, այսոցիկ, որք կանս այսօր ընդդէմ հակառակ, չիք մեր բաժին, որք միաբանեմք ընդ առաջինս, որք ասացին զայս, յորում այսօր դաւանիմք: Արդ, թերեւս ոչ դողումն է այս, զի սկսանիմք մեք ընդունել, եւ ապա յետ այսորիկ ընդդէմ խոստովանութեանս մերոյ ի մեծ պատերազմ անկանիմք, եւ զոր նախ մկրտութեամբն ճշմարտեմք, միւս անգամ փոյթ յանձին առնումք սուտ առնել, քանզի Հոգւովն Աստուծոյ եղեւ մկրտութիւնս մեր ընդ Հօր եւ ընդ Որդւոյ, եւ դարձաք միւս անգամ ի վերայ Նորա, զի արասցուք զՆա ազգակից արարելոցս ի ծառայութեան եւ դիցուք զՆա ի տեղի ընկերաց[127] հնազանդութեամբ: Իսկ զի՞նչ է այս կաց հակառակութեան, զոր ունիմք մեք ընդդէմ Բարեբարին մերոյ, եւ զի՞նչ է մարտ պատերազմի այսր փոխանակ խաղաղութեան խորհրդոց, զի առեալ խորհիմք վասն Հոգւոյն Սրբոյ, որ ինչ ոչ է մերձ Նմա, ապա թէ գտցի ոք, որ փառաւորէ եւ օրհնէ զՀոգին Աստուծոյ, որով իւիք պատշաճի Նմա եւ ասիցէ զմեծաշուք գովեստն, որ Նորա փառացն անկ եւ պատշաճ է, վնասակար լինին նմա մարդիկ այսոքիկ, իբր թէ արտաքս քան զչափն ել այսուամենայնիւ, զոր ասաց վասն Նորա:

1* Հռոմ. Ը 17
2* Եբր. Գ 12

Արդ, նոքա ասեն, զոր ինչ վայելէ վատթարութեան անձանց, բայց մեք չնորհացն Հոգւոյն Սրբոյ, որ առ մեզն է, ոչինչ ունիմ[ք] հատուցումն, որ բաւական իցէ Նմա, եւ ոչ մինչեւ ի բանս, քանզի ըստ ամենայն խորհուրդս, զոր ունին բանաւորք, ի բոյս բարուց անցանէ զանցանէ մեծութիւն Հոգւոյն, զի թէ չարժին վասն փառաց Նորա ամենայն բանաւորք եւ խորհին ինչ ասել Նմանէ, ոչ կշռի կամ հաւասարի բանք նոցա Նորին արժանաւոր օրհնութեան, թող թէ ի տկարութենէ եւ ի նուազութեան դնիցեն զնա որդիք մարդկան անիմաստք, բայց ճշմարիտք, եթէ որչափ եւ գոյ ի կար իւրեանց մեծացուցանեն զնա, պակասեալ գտանի բնութիւնս մեր յաւել[ել]ոյ զփառս մեծութեան Նորա, եւ ոչ թէ կարօտեալ լինի Նա գովեստի օրհնութեան փառատրութեանս մերոյ, վասն զի չիք ի մէնջ շահ օգտի ինչ Նմա, այլ շահիմք մեք զկեանս մեր՝ ոչինչ յաւելեալ ի փառս Նորա ի մերոցս աստի: Իսկ նոքա, զոր պատասխանի ունիցին, որք յանարգութեան նուաստացուցեն զՀոգին Աստուծոյ ի լսել զբանն կենդանի, որ ոչ ստի, քանզի կորուսեալ է թողութիւն նոցա յերկոցունց աշխարհաց, որք ասիցեն ինչ մի հայհոյութիւն զՆմանէն:

Իթ. Արդ, որք ոչ հաւասարեն զՆա ի փառս օրհնութեան ընդ Հօր եւ Որդւոյ, ոչ թէ[128] թերի ինչ իցէ բանն նոցա, այլ անցանէ զանցանէ ըստ հայհոյութիւնս[129] այլոց: Բայց մեք, որ ճշմարտեալ ունիմք զխորհուրդս Եկեղեցւոյ եւ աննենգ, պարտ եւ պատշաճ է հաւանել Նմին եւ ընդ Աստուծոյ դասել զփառս Հոգւոյն Սրբոյ[130], քանզի գրով եւ առանց գրոյ ըստ բանին առաքելոյ պատեալ են յԵկեղեցւոջ խորհուրդք սուրբք, զորս պարտ եւ արժան է ընդունել, որպէս եւ ինքն ասաց. «Գովեմ զձեզ, զի զամենայն ինչ զիմ յիշէք, եւ որպէս աւանդեցի ձեզ, զաւանդութիւնս ունիք»[1*]: Եւ դարձեալ ասաց՝ «Եթէ բանիւ եւ եթէ թղթով մերով»[2*], սոյնպէս կալջիք, որպէս եւ ետու ձեզ, քանզի զոր ինչ կարգաւ ետուն մեզ հարքն մեր օրէնսդիրք Եկեղեցւոյ Աստուծոյ, նմանութիւնք են զօրութեան պատուիրանին, զոր գրով ընկալաք, եւ կարգաւ պահեալ է ճշմարտութիւն նոցա մինչեւ առ մեզ, զի առեալ ունին եւ գան փութով յժարութեամբ մարդք, որք ժամանակօք առաջինք էին քան զմեզ: Արդ, վարկցուք, իբր թէ ի դատաստան եկաք մեք ընդ մարդիկս ընդ այսոսիկ առաջի մարմնաւոր դատաւորաց եւ բազում վկայօք ցուցաք զբանս մեր, ոչ թէ միաբանիմք անօրէն մտաց նոցա[131], որք կացուցանեն զկամս իւրեանց

1* Ա Կորնթ. ԺԱ 2
2* Բ Թեսաղ. Բ 14

յամբարշտութեան, զի թէ ի բերանոյ երկուց եւ երից վկայից հաստատեսցի ամենայն բան[1*], որչափ եւս առաւել հաւատարիմ լիցուք ստոյգ վկայիւքն, զորս նաեւ յիշատակեցաք եւ այժմ ի մէջ ածեմք այլեւս զմարդս սուրբս, զորս յառաջին ժամանակացն մինչեւ ցայսօր ունի Եկեղեցի, այսինքն՝ ի յայտնութենէ Բանին սկսեալ, որք փայլեցին ի մէջ ժողովրդոց եւ մեծի մարտիս մերոյ դատախազք լիցին ընդ մեզ հակառակ չարեացն, քանզի սկսեալք ի հնմէն ի ձեռն ստոյգ ուսմանն իւրեանց մարդիկ, որ եղենն վարդապետք բանին, զճշմարիտ կարգն ցուցանեն ի ժամանակաց իւրեանց եւ այսր, քանզի ոչ եթէ իբրեւ ի մէնջ երեւեցաւ նորայն ճշմարտութիւն, քանզի մեք երիկնեմք՝ ըստ բանին Յովբայ[2*]: Բայց տեսցուք քանի ինչ երէց իցէ ժամանակօք այս կարգ բանի, որ մինչեւ առ մեզ եհաս իբր ժառանգութիւն բարի ի հարց որդւոց թողեալ: Արդ, ես առ ի ընկալայ զկարգ տէրութեան այսր յառնէ մեծէ, զի կեանք նորա ընդ երկար ժամանակօք եղեւ ի պաշտմանն Աստուծոյ, որ եւ ինքն իսկ եղեւ մկրտութեամբն տուող կենաց իմոց, եւ ի ձեռն նորա մատեայ ես ի կարգ պաշտմանէ Եկեղեցւոյ Աստուծոյ: Եւ ես ինձէն անձամբ իմով եղէ խնդրող եւ քննիչ եւ ի խոյզ անկայ, զի յուզեցից տեսից, թէ իցէ ոք յերանելի յարանցս յայսցանէ, որ ի կիր էառ եւ վարեցաւ այսու բանիւքս, որ այսօր են ընդդէմ մեր, եւ ետի ես զբազումս ոմանս յառաջնոց արանց անտի պատուաւորք ի կարգ պաշտմանն իւրեանց. եւ հաստատունք ճշմարիտ գիտութեամբն իւրեանց մեծափոյթ եւ արթունք ի բանս, բայց ոչ եթէ իբր զսոսա, որ այսօր են վասն սիղղոյբայիցն, որք ի գլուխս անուանցն կարգին ի կապ բանիցն խորութիւն կարգին եղեւ առ նոսա, զի մի՛ հաւասարեսցեն զօրհնութիւնսն Աստուծոյ, որպէս եւ սոքա մարդկեղէն կարգաւ փոյթ յօժարութեամբ ունին բացատրել զնոսա չարաչար[131w]: Քանզի առաջին մարդիկս այսոքիկ հզօրաբար իմն հաստատեալ կային յուղիղ եւ ի ճշմարիտ միտս: Եւ այսպէս հաւատարիմ, որպէս եւ էինն, կային նոքա, զի է մի ոմն ի նոցանէն Երինիոս եւ Դիոնեսիոս դարձեալ ի Հռովմ քաղաքէ, եւ միւս՝ այլ Դիոնեսիոս յԱղեքսանդր քաղաքէ, զի ինքն այս առ համանունն իւր այսպէս գրեաց ի Թղթին իւրում՝ առ ի յանդիմանութիւն մարդկան եւ ի տալ պատասխանի զանձնէ իւրմէ, յորում եցոյց եւ յայտ արար բանիւն իւրով, այսպէս գրեմ ես զբանս առնս այսորիկ, ըստ որում կայ եղեալ ի կարգին իւրում. «Զի մեք,- ասէ,- այսուհետեւ ամենայնիւ զմիաբանութիւնս առ հարսն մեր

1* Տե՛ս Բ Օր. ԺԹ 15:

2* Տե՛ս Յովբ Ը 9:

առաջինսն ցուցանեմք զկարգն եւ զօրէնս, զոր ընկալաք ի նոցանէ, հաւասարապէս առեալ ունիմք եւ զխոստովանութիւն օրհնութեան մերոյ ցուցանեմք մեք եւ առ ձեզ առաքեմք, զի նոքօք հանգէիցիք[132] այսուհետեւ. Աստուծոյ Հօր եւ Որդւոյ Նորա Յիսուսի Քրիստոսի ընդ Հոգւոյն Սրբոյ փառք, իշխանութիւնս յաւիտեանս յաւիտենից. ամէն»: Արդ, բանից այսոցիկ ոչ թէ այլայլումն ինչ կամ փոփոխումն եղեւ, այլ որպէս էնն իսկ, նոյնպէս եւ գրեցաք զսա, զի ի ճշմարիտ յօրինեալ կարգէ եւ կանոնէ գրեցաւ մեզ, որ ի Հոգւոյն մերոց, վասն զի նոքա այնպէս ընկալան եւ թէ Հոգւով Սրբով, այլ որ ինչ պարտ եւ օրէն էր ստոյգ պատասխանոյ նոցա, սոյնպէս ի կիր արկին եւ վարեցան ճշմարիտ բարբառով: Եւ անդէն դարձեալ ի հասարակած գրոյն գրեաց ընդդէմ աղանդաւոյն Սաբէլոսի, որ ասեն, զի թէ երեք Անձինք են, բաժանեալ են երեքեան, եւ ոչ կամին ի մի սուրբ եւ կատարեալ Աստուածութիւն Երրորդութիւն հաւատալ միով բնութեամբ: Եւ Կղեմէս դարձեալ Հռոմայեցի գրեաց եւ ասաց[133]. «Կենդանի է Աստուած եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ Հոգին Սուրբ»: Իսկ Երինիոս այն յոյժ մերձ է ամօք իւրովք յաւուրս առաքելոցն, զյիշատակ[134] Հոգւոյն բերէ բանիսն իւրով առ ուսմանս ոմանց[135], ասէ. «Որք[136] ոչ ունին սանձս անձանց իւրեանց եւ անմիտք են եւ իջուցանեն առ ցանկութիւն մարմնոյ զկեանս իւրեանց, եւ ցանկութիւն Հոգւոյն Սրբոյ ոչ եղեւ ի նոսա ստուգապէս, ասէ զնոսա առաքեալ, եթէ «մարմնաւորք են եւ զմարմնոյ խորհին»[1*]: Եւ դարձեալ նոյն ինքն ասաց ընդդէմ նոցա, զի «իբրեւ ոչ գտանիցի ի նոսա մասն ինչ ի Հոգւոյն Սրբոյ, օտարացեալք լիցին յարքայութենէ երկնից»[2*]:

Եւ դարձեալ՝ Եւսեբիոս Պաղեստինացի այր պատուական բազմագիւտ բազմաքնին փորձանօք իւրովք զբան առն այսորիկ բերէ ի մէջ, զոր ինչ ասաց վասն բազմութեան կռոցն հեթանոսաց: Եւ ասաց, ասէ, այսպէս. «Եթէ հաւատամ ես,- ասէ,- ի բանս սրբոց մարգարէիցն, որք ծագիչ են լուսոյ գիտութեան Աստուծոյ ի ձեռն Տեառն մերոյ եւ Փրկչին[137] Յիսուսի Քրիստոսի ընդ Հոգւոյն Նորա Սրբոյ»:

Իսկ ի ճառս բազում Որոգինէսի, զոր ի Սաղմոսն խօսեալ է, գտաք մեք, զի զօրհնութիւնսն առ Աստուած ընդ Հոգւոյն Սրբոյ արար, թէպէտ եւ ոչ յոյժ այրս այս հաստատեալ էր ի միտս վասն Հոգւոյն Սրբոյ բազում խորհրդոց, բայց սակայն լաւ թուեցաւ սմա պարկեշտ

1* Հմմտ. Ա Կորնթ. Գ 2:

2* Հմմտ. Եփես. Դ 18, Ա Կորնթ. ԺԵ 50:

պնդակազմ[138] հանապազորդ սովորութեան օրհնութեամբն գալ, զի երեւեսցի ճշմարիտ բարբառով: Ասէ եւ վասն Հոգւոյն Սրբոյ ի ճառ մի, զոր վասն Վեցօրէին խօսեալ է վասն Նորա[1*]: Նաեւ ի մեկնութիւն Աւետարանին Յովհաննու յայտնապէս բանիւն իւրով երկրպագելի արար զՀոգին Սուրբ ի բազում տեղիս եւ ասաց այսպէս. «Զուրջ Աւազանին մկրտութեամբն քաւութիւն են ի Հոգւոյն եւ զաղտն, որ ի չարեաց անտի են, լուանան: Եւ ոչինչ,- ասէ,- կրտսեր եւ թերի է ի տալոյ զերկրպագութիւն Նմա ընդ Աստուածութեան, վասն զի Նովաւ հաստատի Երրորդութիւն, քանզի աղբիւր է պարգեւաց ի ձեռն զօրութեան, որ ի Նմանէ, եւ տայ այնոցիկ, որք կարդանն զՆա»: Եւ դարձեալ ի մեկնութեան անդ, զոր արարեալ է Նորա Հռովմայեցւոց[139] թղթին, եցոյց եւ յայտ արար այսպէս. «Սուրբ,- ասէ,- եւ վերին զօրքն հոգեւորք զօրութեամբ Որդւոյն Միածնի եւ Հոգւոյն Աստուածութեամբն, զոր արկանեն ի Նոսա յորդառատ, շողան եւ սողան»:

Այսուհետեւ միտ եդեալ նայեսցուք՝ քանիսն ինչ զօրութիւն է ի բանս անդ, զորս գրեցին եւ ետուն մեզ առաջինքն: Եւ զիա՞րդ մրցին ընդդէմ այնոցիկ, որք հակառակութեամբն զզուեն զՀոգին:

Նաեւ ոչ Ափրիկանոս, որ պատմեաց զառաջնոցն, ծածկեաց ինչ ի մէնջ զնմանութիւն այսր բանից վասն Հոգւոյն, այլ համառօտիւք եցոյց եւ յայտ արար ի ճառս անդր, զոր գրեաց նա վասն առաջ ժամանակացն եւ ասէ այսպէս. «Եթէ բանս գրոց եւ ի չափս կարդի նոցա այսպէս տեղեակ եմք, եւ շնորհք հաւատոցն, որ եղեւ առ մեզ, ոչ ծածկեցաւ ի մէնջ, բայց մեք խոստովանիմք ի Հայրն, որ ետ մեզ, զոր ինչ Իւրն էր, ի ձեռն Փրկչի եւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Որում փառք եւ մեծութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն»: Արդ, եթէ իցէ այլ ինչ ի գիրս արանցս այսոցիկ բանք, զի հարեւանցի իցէ եւ փոքրագոյն ըստ խորհրդոյս այսորիկ պատմեալ, ոչ է արժան կարծել, թէ նենգութեամբ եւ խորամանկութեամբ խօսեցեալ իցէ ի նոցանէ, զի թէ մեծամեծք կան վառապանք անձանց իւրեանց՝ ունելով զհաւատս ճշմարիտս, զինչ պիտոյ է ի մէջ բերել, զորս ըստ դիպող ժամուն խօսեցան եւ ոչ նենգութեամբ ինչ: Եւ մեք թէպէտ եւ ոչ երկայն բանիւք ցուցաք վասն ճշմարտութեան, զոր լուաք ի ճառս սոցա, սակայն փոյթ յանձին կալաք, զի գոյժ արկցուք, փախուցուք զմարդիկ ի նենգութենէ նոցա, որք զրկողքն են Հոգւոյն Աստուծոյ, որք եւ ոչ վկայիւք կարող են ճշմարիտ զստութիւն երեւեցուցանել եւ ամենայն

1* Նախադասութեան միտքն աղաւաղուած է. յունարէն բնագրում խօսքը Յովհաննու Աւետարանի մեկնութեան վեցերորդ գրքի մասին է (col. 204B):

եպերանք ըստ մեր նոցին չատխօսութենէ: Սակս որոյ եւ բերաք մեք զվկայութիւն արանցն, որք յառաջ երիցունքն էին ժամանակօքն իւրեանց, որովք ցուցաք, թէեւ նոքա ոչինչ վարանեցան ի ճշմարտութենէ անտի քարոզել զՆա ի գիրս իւրեանց: Արդ, բերցուք գարձեալ եւ զայս յաւելուածս, ի մէջ[140] առաջին հարցն մերոյ Թուեցաւ պատշաճ, զի զչնորհս լուսոյ երեկորին մի՛ զրկեսցեն յօրհնութենէ իւրեանց, այլ յերեւիլ լուսոյ երեկորին միշտ տան վասն Նորա օրհնութիւն երրորդութեան, բայց թէ ով իցէ գտող օրհնութեան, որ վասն ճրագի, զայն ոչ գիտեմք մեք, այլ ժողովուրդք ամենայն ընդ Եկեղեցիս Քրիստոսի սկսեալ ի բազմամեան ժամանակէ առեալ ունին զօրհնութիւնս զայս եւ երբէք յումեքէ ոչ ասացաւ օրհնութեանցս օրհնամատոյց, թէ ամբարշտութեամբ առնեն, քանզի ասեն յօրհնելն իւրեանց, թէ՝ «Օրհնեմք մեք զՀօր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին»: Իսկ եթէ գիտակ ոք իցէ օրհնութեան, որ ասացեալ է Աթանագինէս[141] վկայի, զոր իբրեւ զշահ մեծ եթող որդւոց իւրոց զկնի իւր, յորժամ երթայր առնուլ զկատարումն վկայութեամբ ի գրել զինքն ի գիրն քրիստոսեան եւ առնու զմասն եւ զբաժին վկայութեան ի ձեռն կիզմանն իւրոյ: Եւ ինքն ճշմարիտ վկայս այս[142] գիտէր յառաջ եւս զխորհուրդս վկայից ընկերաց իւրոց, թէ զորպիսի ճշմարտութիւն ունէին նոքա առ Հոգին Սուրբ:

Իսկ արդ, զբանս մեծին Գրիգորի ընդ ո՞ւմ եղիցէ եւ համարեցայց գնոսա, բայց թէ՝ ընդ առաքելոցն եւ ընդ մարգարէիցն, այն, զի նովին Հոգւովն Սրբով, զՈր զգեցեալն էին նոքա, եւ Ինքն արար զվարս կրօնից իւրոց եւ ընդ նոսին հետս շաւղաց արար զգնացս բնակութեան զամենայն աւուրս կենաց իւրոց, որպէս հրամայեն պատուիրան Աւետարանին, սոյնպէս եւ գործ Նորա յաշխարհի աստ եւ փոյթ յօժարութենէ: Եւ ես վարկանիմ զիս վնասակար առ ճշմարտութիւն, եթէ ոչ համարեցայց զՀոգի առնն այն արդարոյ ընդ այնոցիկ, որոց եղեւ ընտանութիւն նոցա վարուք կրօնից ընդ Աստուծոյ, քանզի լապտեր մեծ էր, որ լոյս տայր յԵկեղեցւոջ Աստուծոյ, որ յայնմ ժամանակի զօրութեամբ Հոգւոյն Աստուծոյ, զոր զգեցեալն էր, յամենայն կողմանց ընդ թշնամոյն մարտնչէր եւ զամենայն բանակս դիւացն փախստեայ հալածան տանէր նա եւ բանիւն շնորհաց, զոր ունէր յԱստուծոյ ի լուր հաւատոցն, առ ինքն յափշտակէր զդիւապաշտ կռապարիշտսն եօթն եւ տասն[143] քրիստոնէիւք, որ ի նայն յարեալն էին, եւ նուաճիչ դարձուցիչ ի թանձրախիտ կռապաշտութենէն լինէր նոցա առ գիտութիւն անդր Աստուծոյ եւ զամենայն ժողովուրդն ստորիկստուկացւոց եւ քարիտիկացւոց հանդերձ ամենայն գաւառ-

նաեւ ի քրիստոնէութիւն կացուցանէր: Եւ ինքն այրս այս արդար զգետսն յորդաբուխ ի գնաց իւրոց ընդ միւս այլ կողմն խաղացոյց բանիւն Աստուծոյ եւ զծովակ մի մեծ բազում ջրարբութեան չորացոյց ցամաքեցոյց ժլատութեամբն, որ ի մէջ երկուց[144] եղբարցն եղեւ հակառակութիւն: Իսկ յայտնութիւնք առ յապա ժամանակաց, որ ինչ հանդերձեալ էին լինել, այնպէս գտեալ կային ի նմանէն, որպէս զի ի նմանութիւն մարգարէից էր նա յամենայն տեղի, զոր ինչ եւ ասէրն: Եւ եթէ նստայց պատմեցից զաքանչելիսն, որ եղեն ի ձեռն նորա, յոյժ բազում են եւ անցանեն զանցանեն ըստ խորհուրդս մեծամեծս ճառիւքն իւրեանց, քանզի այնպէս լինէին ի ձեռն նորա նշանք եւ արուեստք զօրութեամբ Սուրբ Հոգւոյն, զի ի թշնամեաց անտի ճշմարտութեան Մովսէս երկրորդ անուանեալ կոչէր: Քանզի զամենայն ինչ, զոր եւ գործէր, բանիւք եւ արդեամբք զհաւասարութիւն աչալրջութեան լուսոյ առեալ ունէր, եւ ակնարկութիւն երկնաւոր զօրութեան խաղայր շրջէր ընդ նմա յիրս աներեւոյթս: Եւ մեծամեծ սքանչելիք առնս այսորիկ ի գաւառսն, յորսն ընկալան զնոսա նորք եւ վաղահասուկք, եւ այնք են երկայն յիշատակք նոցա յԵկեղեցին Աստուծոյ: Զի չէ եւ ոչ մի ժամ, որ կարէ ծածկել զնոսին՝ ո՛չ զբանս եւ ո՛չ զգործս նորա եւ ո՛չ զյօրինեալ կարգսն եւ ո՛չ զսահմանս նորա պայմանաւորս, որք Եկեղեցիսն[145] Աստուծոյ եդան, կարգեցան ի նմանէն, այլ նոքօք խրատին մարդիկ ժողովոցն այնոցիկ, եւ նոքօք հաստատեալ են եւ ի սկզբանէ ի վերայ նոցա ուղղին, կարգին ամենեքեան, որք պաշտեն զԵկեղեցիսն[146] Աստուծոյ: Քանզի ըստ նորայոցն կան եւ այլ ինչ յաւելուած ոչ առնեն ի վերայ նոցին, այլ առեալ ունին ի նմանէ զկատարումն եւ զհաստատութիւն բաւանդակ պայծառագեղ իւրաքանչիւր գեղովք: Արդ, այժմ բանքն ճշմարիտք Գրիգորիոսի ընդդէմ եւ հակառակ են այսր աւուրց մարդկան, զի օրհնութիւնք սոցա այլափառութեամբք պատճառեալ են: Իսկ ճշմարիտ օրհնութիւնն, զոր ետ այրս այս Եկեղեցեացն[147] Քրիստոսի եւ ճշմարտութեամբ պահեալ է առ նոսին զկատարումն հաստատեալ, թէ ուղիղ փառատրութեան Երրորդութեան բաւանդակէ[148] եւ ոչինչ վաստակէ զյիշատակեալն յառնէս յայսմանէ բերէ բերել ի մէջ ի պէտս հաւանութեան լսողաց: Նաեւ Եփրեմ[149] այրն[150] Աստուծոյ սոյնպէս վկայէ բանիւքն, զոր խօսի ճշմարիտ հաւատոցն իւրոց, զի ի ճանապարհ արդարութեան են գնացք նորա ուղիղ փառատրութեամբն իւրով: Եւ Մելիտոս դարձեալ սովին այս[ո]ւիկ ճշմարիտ խորհրդովք էր, որպէս եւ վկայեն վասն նորա, որք ընդ նմայն էին:

Եւ արդ, զի՞նչ պիտոյ իցէ մեզ բազումս խօսել վասն առաջնոցն, զի ահաւասիկ եւ արեւելք ամենայնի գիտութիւն ճշմարտութեանս այսորիկ հաղորդեալ են եւ բարբառ օրհնութեանցն նոցա նովաւ խառնեալ է յերեւելի խօսս լեզուի իւրաքանչիւր գաւառացն[151]: Ես եւ յառնէ անտի, որ էր ի Միջագետաց[1*], լուայ զայս, զի լեզուաւն իւրով ուղիղ էր եւ ի խորհրդովն՝ ճշմարիտ յոյժ: Եւ ասէր այսպէս, թէ ըստ լեզուոյ աշխարհին իւրեանց ոչ մարթի այլապէս տալ զճշմարիտ օրհնութիւն Երրորդութեանն, բայց եթէ ի բերան անկանիցի սիղղոբայն, որ անուանեալ կոչի «վաւ», ըստ իւրեանց լեզուին «եւ» թարգմանի, ըստ մեր լեզուս՝ «ալփա», որ ի սկիզբն աստուածեղէն անուանցն դնի եւ այսպէս ասի. «օրհնութիւն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»: Նաեւ մեք՝ կապպադովկացիքս, ըստ լեզուիս մերում ուղիղ առնեմք զօրհնութիւնն մեր եւ գաւառք ամենայն ըստ իւրաքանչիւր լեզուաց, զի բաւանդակ զկատարեալ օրհնութիւն հանեն Երրորդութեան: Եւ ամենայն Արեւմուտք մինչեւ ի Հիւսիս եւ քրիստոնէութիւն ընդ ամենայն տիեզերս այսու ճշմարիտ օրհնութեամբ առնեն զխնդրուածս իւրեանց առ Աստուած: Զի՞րդ ապա եւս միայն երեւիմ մարդկանս այսորիկ նորոգախօս փոքր բանիւս իմով, որ յոյժ կրտսեր եմ, քան զամենայն մարդիկ, ուր ամենայն ազգք եւ քաղաքք բազումք զյիշատակ ճշմարիտ օրհնութեանս այսորիկ առեալ ունին ի բերան, եւ ընդ ամենայն տիեզերս առ ամենայն մարդիկ, որք մօտ են առ ճշմարտութիւն, երէց է ճշմարիտ բանս այս, զի ոմանք, որք եղեն սիւնք հաստատութեան յԵկեղեցիսն Աստուծոյ, բանիւ եւ գիտութեամբ եւ զօրութեամբ Աստուծոյ եւ անուանեցան ի գեղեցկութիւն իւրաքանչիւր իշխանութեանցն մեծք եւ զօրաւորք, նոքա եղեն պարգեւտուք օրհնութեանս այսորիկ բանիւն իւրեանց առ ժողովուրդս Աստուծոյ: Եւ ահա վասն այս ճշմարտութեանս մեր զկնի գալոյ կարգեցան ի վերայ մեր պատերազմք իւրաքանչիւր բանականացն, եւ ոսոխքն մեր եւ չարախօսք զմէնջ են ի գեօղս եւ յագարակս բազումք յիւրաքանչիւր գաւառաց, եւ այս ամենայն մեծ տառապանք են ի սիրտս մեր, որք դէտ ակն ունիմք խաղաղութեան, բայց եւ վարձն համբերողաց մեծ է, որք երկայնամիտ են[152]:

Արդ, յայսմհետէ փոխանակ այսր ամենայն ճշմարտութենէ իբրեւ զանօթս զինու պողովատիկ երկաթեայ զդառն դատաստանն սրեցին ի վերայ մեր եւ հուր բորբոքեալ բոցախառն աւելի քան զհնոցն Բաբե-

1* Ըստ յունարէն ձեռագրերում առկայ լուսանցքային նշումի՝ Կեսարացին այստեղ նկատի ունի ս. Եփրեմ Ասորուն (306-373) (տե՛ս Migne, PG, t. 32, col. 208B, ծան. 12):

լոնի[153] վառեցին կուտակեցին դէզդէզ ի վերայ մեր իւրաքանչիւր սպառնալեօք, բայց ինձ ահ եւ երկիւղ աւելի քան զայս այլ ոչ գոյ զահի հարկանել եւ զարհուրել ի սպառնալեացն Աստուծոյ՝ հաւատացեալ այնմ, զոր ասաց Քրիստոս՝ աններելի, որ հայհոյէ զՀոգին Սուրբ Աստուծոյ, մի՛ թողցի նմա[1*], եւ որք ունին զհաւանութիւն յանձինս, բաւական է պատասխանատուութիւնս այս վասն Հոգւոյն Աստուծոյ, քանզի հաստատեցաք զբանս ի սուրբ բարբառոց առաքելոցն եւ մարգարէիցն եւ յոմանց, յորոց հաւատարիմ եղեւ ճշմարտութիւն հաստատուն կարգօք եւ ստոյգ սովորութեամբքն, վասն զի յորմէ հետէ քարոզեցաւ Աւետարանն ընդ Եկեղեցիս Քրիստոսի ճշմարիտ օրհնութեամբս այս, որ մեծ է քան զամենայն, հաստատեցաւ միտք Եկեղեցւոյ մանկանց: Արդ, վասն զի առաջիկայ նոր մեծ եւ ահեղ սոսկալի Դատաստանին պատրաստեալ ենք կալ յատենի, զի անդ եղիցի պատասխանատուութիւնս մեր, արարաք զայս աստէն ի հանգիստ անձանց մերոց, զիարդ ունիմք մեք զօրհնութիւնս վասն Հոգւոյն եւ մեծ քան զամենայն ունիմք ցուցանել զպատիւ Հոգւոյն ի ձեռն նշանի մկրտութեան, յորում եառ զնա ի թիւ եւ ի պատիւ Տէր մեր ընդ Իւր եւ ընդ Հօր Իւրում, զի ի ձեռն այսր խորհրդոյ հասարակաց ի գիտութիւն Աստուծոյ մեք ամենե[քե]ան նկրտե[ս]ցուք: Խափանեսցի, արդ, այսուհետեւ ի մտաց մերոց զարհուրումն[154] եւ չտապ տագնապի ահի եւ երկիւղի արանցս այսոցիկ, վասն զի ամենայն ծուխք մտաց իւրեանց նուաղին եւ խոնարհագոյն այսր խորհրդոյ մնան, զի չիք ինչ ի նոսա, որ արժանի իցէ Աստուծոյ: Իսկ այսոքիկ թշնամիքս, որք հակառակք են, եւ ընդդէմ զի՞նչ պատասխանի ունին փոխանակ հայհոյութեան իւրեանց, որ զՀոգւոյն Աստուծոյ է, զի ո՛չ ի փառացն, զոր ետ Նմա Տէր, պատկառին եւ ո՛չ ի սպառնալեացն, որ վասն Նորա, երկնչին:

Արդ, եթէ կամիք, եղբա՛րք, հասարակաց խորհուրդս այս բարի եղիցի զնոցանէն, զի դարձցին նոքա յայսմ մոլորութենէս, քանզի եւ ես իսկ ինձէն յաղօթս կամ առ բարերար ողորմութիւնն Աստուծոյ, զի արկցէ զխաղաղութիւն Իւր ի սիրտս նոցա, որք կռիւ եղեալ մարտնչին ընդդէմ մեր ի մրցումն ճակատու, որպէս զի խոնարհեալ Հոգւով սիրոյն Աստուծոյ՝ յանգչիցին ցածնուցուն յամբարհաւաճութենէ իւրեանց: Ապա թէ այս դիմադրութիւնս ըմբռնեալ է զնոսա, եւ ոչ կամիցին հանգչել ի չարեաց իւրեանց, մեզ տացէ Աստուած երկայնմտութիւն, զի համբերեսցուք մրրկեալ բարկութեան նոցա

1* Տե՛ս Մարկ. Գ 29:

չարեաց, քանզի մարդք, որք եդին զանձինս իւրեանց ի մահ վասն Աստուծոյ, ոչ թէ զի չարչարին փոխանակ հաւատոցն ցաւէ նոցա, այլ թէ ոչ ոք մատուցանէ զնոսա ի մարտ հանդիսի: Նաեւ բռնամարտիկք իսկ ըստ բնութեանս ոչ ի մտանելն ի հանդէս ասպարիսին[155] եւ յ[ը]մպելն զգանն տրտմին: Այլ թէ ոք ոչ մատուցանէր զնոսա ի մարտ հանդիսին, մի՞թէ իցէ այսուհետեւ ժամանակ, զի դադարեսցէ ոք, որպէս եւ Սողոմոն ասաց. «Այր հանճարեղ պահէ զժամանակս համբերեալ լռութեամբ»[1*]: Քանզի զի՞նչ օգուտ լիցի ի բանէս մերմէ յայսմ խռովեալ ժամանակի, յորում ոք որ աղաղակէ իբրեւ ընդդէմ օդոց, որ հատանէ զձայն բարբառոյ իւրոյ դատարկութեամբն: Սոյնպէս եւ յայսմ աղմկի խռովութեան աշխարհիս, որ առեալ ունի զմարդկութիւնս ամենայն խորհուրդք մտաց կորուսեալ, եւ ոչ գոյ ոք, եթէ առ դիմամարտութեան տան ընդդիմամարտութիւն[156], այլ նմանեն սոքա աչաց, որպէս մոխիր ընդ մրրկեալ օդն հոսեալ կուրացուցանէ ի տեսութենէ, նոյնպէս մոլորութեանս այսորիկ չփոթ սաստկացաւ ի բնակիչս աշխարհի եւ խլացան ծանրացան ամենայն լսելիք ի պէս պէս ապուշ խորհրդոց, եւ ո՛չ բողոք եւ ո՛չ գոյժ եւ ո՛չ բարբառ եւ ո՛չ ճչումն լսելի լինի նոցա, եւ մռնչիւն գոչելոյ դառն հառաչմանն յամենայն կողմանց կուտակեալ ելանէ այն, զի բազում տառապանք եւ նեղութիւն մերձեալ է առնել զգլորումն կործանման ամենայն մարդոյ:

Լ. Արդ, նմանեցուցանեմ զմեծամբոխ խռովութեանս այսր, որ գոյ աշխարհի, դառն եւ խիստ պատերազմի, զոր առնեն ի վերայ ծովու նաւարկեալքն, որպէս նոքա ի մթերեալ հին ցասմանէն գան պատահեն հանդէպ իրերաց եւ զինուք եւ նետաձգութեամբ եւ քարամբք պարսից զնեղութիւն մրցմանն սաստկացուցանեն ի վերայ իրերաց, կարգեալ ելանեն ընդդէմ[157] միմեանց պատրաստութեամբ մեքենայից նաւակործանաց հնարեալք, զի անտի եղիցի յաղթահարելն եւ կործանելն զիրեարս առանց ողորմութեան, եւ մինչդեռ նոքա մռնչեալ բարկութեամբ սրտիւ, յայնժամ խրամատէ զցասումն բարկութեան նոցա մրրկեալ հողմն, որ զարթչի ի վերայ նոցա սաստիկ որոտմամբ եւ կուտակէ ստէպ ստէպ զմառախուղն մթապատ ալեացն բարձրադէզ կուտակօքն ի վերայ նոցա, եւ մածեալ ամպն մռայլեալ եւ մէգն թղբեալ զպատերազմողքն առ ի յոչ տեսանելն զիրեարս կամ գիտել զմիմեանս, զի կորեաւ ծանօթութեան ի միմեանց, եւ երկինք եւ երկիր ծածկեցան աղջամղջաւ զմարտ պատերազմի նոցա, եւ յաւել եւս ծովն,

1* Առակ. ԺԱ 12

յորում են զխռովութիւն ի վերայ նոցա, զի եռանդնացեալ ալեօքն սաստկացոյց ի վերայ նոցա զջուրսն յոյզայոյզս: Եւ դարձեալ անձրեւն հեղաւ ի վերայ նոցա դառնաշունչ, եւ իւրաքանչիւրոցն հրուռածքն խառնեցան ի վերայ նոցա ալեացն բարձրադէզ կուտակօք հողմք սաստիկք անձրեւաց իջուն, եւ աղմկով չփոթին, յոյս կենաց իւրեանց կորեաւ առանց հանճարոյ, եւ ստերիւրեալ, խոտորեալ՝ զատան, մեկնեցան իւրաքանչիւր նաւքն ի միմեանց եւ են ոմանք ի նաւացն, որք մատնեցան ի կորուստ, եւ կէսքն ի նոցանէ կապարճս դարձուցին եւ եղեն փախստեայք ի հողմոց անտի, որ կոծէր զնոսա յամենայն կողմանց, իսկ այլքն ընդ միմեանս մարտուցեալք նաւավարքն եւ որք ի նաւին զմիմեանս փողոտեն, վասն զի ամենայն մարդ եղեւ նաւավար ծովատեղեակ անձին յաղմուկ խռովութեան, եւ յաղաղակել նոցա յամենայն կողմանց խառնեցան բարբառքն ընդ միմեանս, զի փրփրի ծովն կուտակադէզ ալեօքն ի վերայ նոցա: Եւ հողմքն խառնեցան ի բարբառ նոցա՝ չնչեալ սաստիկ մրրկաւ, եւ նաւքն յանկարծակի հարան ընդ միմեանս եւ կացուցին մեծ ամբոխ ի վերայ միմեանց մարդիկ, որք ի նաւս անդ էին եւ ի չարչարանաց անտի հարուածոցն արկին զաղաղակ եւ զձայն ճչելոյ, մինչ զի ոչ երեւել ո՛չ նաւապետ եւ ո՛չ նաւավար, ոչ որ լսէ եւ ոչ որ ունկն դնէ, եւ ի դառնութենէ չփոթմանն խռովութեան ոչ գոյ իրք երեւելիք ի յորդութենէ չարեացս եւ արկեալ սուրբ թշնամութեան ոչ ընկրկեցաւ եւ ոչ դարձաւ ի հաշտութիւն, այլ ի նոյնն մոլեալ կան, թէպէտ եւ յոյս կենաց իւրեանց հատաւ, սակայն ի մահուն ընդ հակառակ մարտսն մարտնչին, եւ յայս ամենայն վիշտս ի փառս սնապարծս մոլեալ կայ անձինք նոցա, զի թէպէտ եւ անձինք նոցա ընկղմեալ կայ ի խորս ծովուն, սակայն յառաջին վատթարութեան եւ ի մեծ հակառակութեան կան նոքա: Արդ, ըստ այսմ նմանութեան զպատերազմ զայս, զոր ունիմք, բերցուք ի մէջ եւ զպատերազմ արիանոսացն հանդերձ հերձուածովքն դիպեսցուք գոլ զկռիւս մարտին, զի կարգեցաւ ընդ մեր իբրեւ պատերազմակից եւ ել լի ցասմամբ ընդդէմ Եկեղեցեաց Աստուծոյ, քանզի ի նմանութիւն պատերազմողաց արարին ընդ մեր զմարտ հակառակութեան իւրեանց եւ հնութեամբ հերձուածոյն, որ մթերեալն էր ի նոսա, յարուցին զկռիւ ի վերայ մեր յառաջագոյն ի մասունս բազումս բարժանեալ զպատերազմն, բայց ի ծածուկ, քանզի թշնամութիւն հասարակաց էր, եւ համբերութեամբն մեք ծածկեալ կայաք, եւ գաղտ ատելութեան մերում ոչ գոյր հաշտութիւն ի չար կամաց անտի: Իսկ շարժումն եւ աղաղակ խռովութեան, որ թարթեաւս այսօր ի վերայ Եկեղեցեաց Աստուծոյ ի ձեռն այսց արանց, որ զմեծ զբօսանք խռովութեան ծովու չար իցէ քան զայս, զի խրամատեցան ի

սմա սահմանք աստուծպաշտութեան անկարգութեամբ, եւ կորեան սուրբ օրէնք հարցն մերոց հիմն հաստատուն ճշմարիտ վարդապետութեան եւ արարին տատանումն, եւ կալաւ խռովութիւն զամենայնս, թագաւորեաց ամբոխ յամենայն մարդ, եւ նուաղեց հետք մարդկան գնալ ի ճշմարիտ ճանապարհ, մեծ մոլորումն կալաւ զամենեսեան, եւ անկաք ընդ միմեանս. զի յիրերաց վերայ կործանեսցուք, եւ թէ ոչ գտանի պատերազմող կործանել զախոյեանն իւր, այն, որ առ նմայն կայ, եւ թուի, թէ թիկունք է նորա, փողոտեաց զնա փոխանակ թշնամւոյ: Եւ մինչեւ ցայս վայր է հաղորդութիւն մեր սիրով առ միմեանս, ապա թէ մնասցուք յայնոսիկ, զոր ատեմքն, եղեւ բարեկամութիւն մեր ատելութիւն հանապազորդ պատերազմաւ: Եւ ո՞վ կարիցէ պատմել զվրիպումն չարեացս, յորում կամք մեք, զի ոչ ոք մնաց մեզ յօգնականաց, եւ ոչ է ապրեցուցիչ մեր ի թշնամեաց, քանզի որք ի մէնջ զողեցան ի թշնամեացն եւ ի սաստկութենէ նոցա հնարին ապրեցուցանել զանձինս իւրեանց, վարեն զնոսա բռնութեամբ յապահով խաղաղութենէն եւ նենգեն բարկութեամբ: Իսկ արք ճշմարիտք, որք են յեկեղեցիս Աստուծոյ ի բարժանեալ եւ յերկմտեալ մարդոց, որք սքողեն զչարիս իւրեանց նենգութեամբ, համբերեն ամենայն փորձութեանց, իսկ կէսք ոմանք, որք թշնամիք են Հոգւոյն Սրբոյ, եղեն նոքա ի հաւատոցն իւրեանց վրիպեալք եւ զնաւուղիղսն փրկութեան եւ կենաց իւրեանց առին արկին ի ծով՝ առ ի կորուստ անձանց իւրեանց: Բայց աղմուկ խռովութեան, որ ի դատաւորաց աշխարհիս, եկն եհաս ի վերայ ժողովրդեանն Աստուծոյ. ո՞ր հողմ մրրկախառն սաստկագոյն իցէ, թէ համեմատեսցի նոցա նաեւ սուգ տրտմութեան, եւ մռայլ մթին կալաւ զեկեղեցիսն Աստուծոյ, զի ընկեցեալք գտան գլխաւորքն ի նոցանէ, որք էին ի լոյս հոգւոց ժողովրդեանն Աստուծոյ ճշմարիտ վարդապետութեամբն իւրեանց: Եւ այս է բռնութիւն հակառակամարտիցն առաւել ի վերայ մեր չարչարանք ահի եւ երկիւղ ի դատաւորացն, որ հարկանէ զմեզ արհամարհանօք եւ երկեցուցանէ զխիղճ եւ զխիթ խորհրդոց եւ ի մարտ պատերազմիս, յորում եմք, չար եւ դառն ատելութիւն ոգւոյ մեզ ընդ միմեանս: Եւ ոչ ոք զօրէ զընդդիմադրութիւն[160] կռուոյս մեր, որ ամփոփէ ի խաղաղութիւն, զի թէ է՞ր տեսուչ այսորիկ ընտրէաք մեք զհանգիստ այսօր այսու կենօքս աւելի քան զվարձն, որ խոստացեալ է մեզ ի վախճանի Աստուծոյ, քանզի ահա իւրաքանչիւր ոք ի մէնջ յանձին իւրում սպանող լինի ընկերի իւրում, եւ զօրացան, սաստկացան բարբառք գուժի ի միջի մերում ի սրոյ անտի հակառակութեան, եւ ի չար աշխատութիւնս, յորում մեք եմք, ոչ է եւ ոչ մի Եկեղեցի, որ ոչ լի բովանդակ լցեալ է սովաւ, քանզի ի խօսել զուղիղ ուսումն ճշմարտու-

թեան՝ կոփեցաք եւ սանձեցաք եւ աստրստին յայսմ ճշմարտութենէ մերմէ ելին ոմանք եւ առ հրէութիւն անդր կցեալ յարեցան ազգմամբ բանին իւրեանց: Եւ կէսք ոմանք իջին առ կռապաշտութիւն անդր ի մուծանելն զբնութիւնս, որ ոչ նմանեն միմեանց բանիւն իւրեանց եւ ոչ հաւանութեան բանիւն Աստուծոյ, որ ի Գրոց անտի է, միաբանեցան եւ ոչ տչութեան առաքելոցն ետուն զմիտս իւրեանց կեալ հաստատեալ ի վերայ նորա: Բայց նշան սիրոյ ի միջի մերում միայն այս երեւի, եթէ ըստ կամս միմեանց խօսեսցուք չար[ա]չար: Ապա թէ ոչ լինիցի, խափանին քակտին ամենայն կազմութիւնք ի թշնամութենէ անտի, որ տիրէ ի միջի, քանզի սուտ առնեն զբանն ճշմարտութեան եւ հաւատարիմ համարին, եթէ հաղորդեսցի ոք ի մեզս անդր մոլորութեան կեղծաւորութեամբ, վասն զի սիրելի եւ գգուելի են մեզ մնասք միմեանց միայն, զի միաբանեսցուք նոցա եւ ոչ զի հաւատասցուք միմեանց ի բարի անդր, քանզի որ խօսի զճշմարտութիւն ի միջի մերում եւ մերձ է ի ստուգութիւն անդր, չիք չարիք, զոր ոչ գտանեն. եւ ներկենն ի վերայ այնպիսոյնն, բայց աղմուկ խռովութեանս, որ ի միջի մերում է, առ ամբարիշտսն մեծամեծ շահ օգտի համարեալ է: Եւ ի վերայ ամենայն չփոթմանցս չիք կրօնք յօրինեալ վարուց նոցա եւ ոչ ճշմարտութիւն կարգաց նոցա, եւ ոչ Աստուած ի գործս նոցա ինքեանք խնդրեն անձամբ անձանց զքահանայութիւն եւ ինքեանք ինքեանց գրեն զձեւ առաջնորդութեան յափշտակութեամբ: Եւ այս բուռն խարդախութեամբ իշխանութեան ճգնեալ նեղեալ են անձինք իւրեանց, կամին ունել իշխանութիւն ի վերայ Եկեղեցեաց[159] Աստուծոյ, եւ զոր ինչ ետ Հոգին Սուրբ կարգ արդարութեան յԵկեղեցիս Աստուծոյ, խոտան եւ անարգ արարին ամբարհաւաճութեամբն իւրեանց, եւ զոր ինչ յԱւետարանէ անտի տուաւ մեզ փառաւոր կարգաց յօրինուածք, տգեղացուցին զնա՝ չփոթ վնասուք յանձինս իւրեանց, զի ամենայն մարդ սնապարծ փառօք առանց Աստուծոյ խորխորհեալ է իւր մարտ վնասու իշխանասիրութեամբ, եւ զայս եղեալ ի միջի՝ ամենայն ոք մղել կարծէ զընկեր[160] իւր ի դէմս երեսաց գործոյ իշխանութեան, զի ինքն երեւեսցի ի միջի առնուլ զտեղի Աստուծոյ գլխաւոր նստելով, բայց ոչ եթէ ուղղութեամբ ինչ, այլ լի բաւանդակ ամբարշտութեամբ, քանզի բուռն եւ հարուստ մաքառմամբ իւրեանց բռնադատեն, զի առցեն զայն ինչ, որում ոչ են արժանի: Եւ եղեւ այսուհետեւ չար իշխանութիւն առաջնորդութեանս, զի վասն իշխանասիրութեան ժողովրդեանս Աստուծոյ ճգնին առնուլ զտէրութիւն եւ արբեալք ի սէր նորա, զի կտցեն ի նոյնն հնարս հանգստեան իւրեանց: Արդ, այժմ խափանելք գտան եւ առանց գործոյ հրամայողքն ճշմարտութեան, զի ոչ ոք գայ զկնի հաւանութեան նոցա, այլ

հպարտացեալ ամբարհաւաճութեամբն յայս հային, զի ի ձեռն մեղաց գտցեն զհաճոյս կամաց իւրեանց: Եւ արդ, առանց ուսման եւ առանց խրատու աստուածպաշտութեան եկին մտին ի վերայ խորհուրդքս այսոքիկ, եւ ինձ այսուհետեւ յոյժ օգտակար է, զի լռեալ դադարեցից ի խօսելոյ բանից իմոց, քանզի չիք տեղի բանի, եթէ լսելի լիցի յայս ամբոխ աղմկի խռովութեանս, զի ամենայն մարդ, որպէս եւ կամ է իւր, դէպ անձին իւրոյ գնայ: Արդ, ճշմարիտ է բանն այնորիկ, որ ասաց, թէ՝ «Բանք իմաստնոց հանգստեամբ եւ մեղմով լիցին»[1*], սակայն բազումս ունէին ասել վասն այսորիկ, յորում եմքս, այլ բան մարգարէին պահանջէ զիս լռել դադարել՝ յասելն. «Որ իմաստունն է, ի ժամանակին յայնմիկ լռեսցէ, զի ժամանակն[161] չար է»[2*], քանզի ի չփոթս կամակորութեամբ անկեալ զմիմեանս եւ[162] մեղօք կործանեմք, եւ զի եղիցուք ոտնահար միմեանց պատրաստեմք, եւ որ գլորին ի մէնջ, ընդ յանկանելն նորա ցնծամք, եւ տրտմութեամբ ձեռնատու կործանելոյն այնորիկ չիք ոք, որ լինիցի, նաեւ ոչ բան հին օրինացն պահի առ մեզ այսօր, զի ընթացցուք բառնալ զբեռն զանկելոյ գրաստու թշնամոյն մերոյ[3*]: Այսպիսի արդարութիւն օտար է ի մէնջ, եւ յամենայն ումեքէ կորուսեալ է սէր աստուածպաշտութեան: Եւ այս կարգ բառնալ զբեռն միմեանց եւ կատարեալ զօրէնսն Քրիստոսի տգեղ է յաչս նոցա, եւ խրատ սիրոյն պիտոյից չքացան յաչս մեր եւ գութ սիրոյ՝ նշան քրիստոնէութեան, չիջաւ, թաքեաւ ի մեզ, եւ ոչ բղխէ արտասուք տրտմութեան յանձանց ոմանց ի տեսլեան անդ տկարահաւատիցն, այլ ցամաքեցաւ...

ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

88 B չիք թէ: 89 B արասցեն լուսանցքում: 90 B հաւաւոր փխ հաւասար: 91 B Գ: 92 A ժառանգակցութիւնն: 93 B նշակս: 94 B անանտի: 95 B եւ լուսանցքում: 96 B յնդունիչն: 97 B Ցիսուսի լուսանցքում: 98 B ինչ լուսանցքում: 99 B ընդիր: 100 B Ցակոբու: 101 B չիք բանի: 102 B յնկեր: 103 B Ցովսեփու: 104 B յամբարշտութիւն: 104ա ձեռագրերում՝ զւօղ: 105 A բնութեանն: 106 B յաղթահարիալ (*վերջին ա-ի վրայ՝ ուղղման նշան*): 107 B ի Գրոց ի Գրոց: 108 B մարդիքկ: 109 B ծառայութեան: 110 B ծածկուկ: 111 A ի Նմանէ լինէր: 112 B եղեւ

1* Ժող. Թ 17

2* Ամովս Ե 13

3* Տե՛ս Ելք ԻԳ 5:

վերակացու եւ ընդ Եզեկիէլի (*վերջին չորս բառերը՝ կէտագծերի մէջ*): 113 B զոր: 114 A անօրէնութեան: 115 B *չիք* նոցա: 116 B Ցակոբ: 117 B զմիզմեանս: 118 B կատարելոյթեամբ: 119 A հրէութեանն: 120 B Բ: 121 B ուղիւղ: 122 B բարձրացեն: 123 B պէտք պէտք: 124 B խորհրդոյս *լուսանցքում*: 125 B գլորեալ (*ա-ի վրայ՝ ուղղման նշան*): 126 B նոքսու: 127 B ընկերաց *լուսանցքում*: 128 B թէ *լուսանցքում*: 129 B հայհոյութիւն: 130 B *չիք* Սրբոյ: 131 B մեր *փխ* նոցա: 131ա B չարչար: 132 B հանգչնցնցիք: 133 B ասաց ասէ (*երկրորդ բառի վրայ՝ նշան*): 134 B յիշակ: 135 B ոմանց ոմանց: 136 B որք որք: 137 B փրկին: 138 B պնտակազմ: 139 B Հոովայեցոց: 140 B մէծ: 141 B Աթագինես: 142 B այս *լուսանցքում*: 143 B ժ: 144 B Բ: 145-146 B եկեղիսն: 147 B եկեղեացն: 148 B աւանդակէ: 149 B երփեմն (*յունարէն բնագրում՝* φιρμιλιανος): ի դէպ: 150 B այր: 151 B գաւառառացն: 152 B երկայնայնմտեն: 153 B Բաբելինի: 154 B զարհումն: 155 B ասպարսին: 156 B զնդիմամարտութիւն: 157 B ընդդէմ դէմ: 158 B զնդդիմադրութիւն: 159 B եկեղեաց: 160 B զնկեր: 161 B ժամակն: 162 B եւ «կացուցին մեծամբոխ ի վերայ միմեանց մարդիկ, որք ի նաւս անդ էին» (*չակերտներով հատուածն իբրեւ սխալագրութիւն՝ կէտագծերի մէջ*):

Ցակոբ Քեռսէեան

ՅՈՒՆԱՐԷՆ ԲՆԱԳՐՈՎ ԱՆՅԱՅՏ ՃԱՌ Ս. ԱԹԱՆԱՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ ԱՆՈՒԱՄԲ

Տիեզերական Եկեղեցու հզօրագոյն սիւներից մէկն է այս հեղինակը (295-373 թթ.): Ցաջորդելով Ալեքսանդրիոյ՝ 326-373 թթ. նա զբաղեցնում է Ալեքսանդրիայի պատրիարքական աթոռը, 325 թ. իր գործուն մասնակցութիւնն է բերում Նիկիոյ նշանաւոր տիեզերաժողովին եւ անտեղիտալի պայքար մղում արիոսականութեան դէմ արժանի հակահարուած հասցնելով Եկեղեցու ուղղափառ դաւանութեան համար լուրջ սպառնալիք դարձած այդ հերձուածին: Ուստի աստուածաբանական մտքի, մասնաւորաբար ուղղափառ քրիստոսաբանութեան հետազօտումն այսօր խիստ թերի ու անկատար կլինէր առանց սուրբ Աթանասի թողած հոգեւոր ժառանգութեան գնահատման: Նրա գրչին են պատկանում բազմաթիւ եւ բազմաբնոյթ աշխատութիւններ՝ ճառեր, թղթեր, մեկնութիւններ, վարքեր, վկայաբանութիւններ, կանոններ եւ ծիսական բնագրեր[1], որոնց մի մասը հայացուել է Ե դարում, իսկ միւսը՝ Ը դարում[2]: Սրանց կարեւոր բաժինն արդէն հրատարակուած է[3]: Սակայն փոքր չէ թիւն այն երկերի, որոնք տակաւին անտիպ են: Սրանց մէջ առանձին կարեւորութիւն ունեն մասնաւորաբար այն երկերը, որոնց յունարէն բնագիրը դեռեւս անյայտ է: Այսօրինակ երկերից է «Խօսք Աթանասի եպիս-

1 Սուրբ Աթանասի երկերի նորագոյն մատենագիտութիւնը տե՛ս **M. Geerard**,Clavis Patrum Graecorum, v. II, Ab Athanasio ad Chrysostomum, Brépolis-Turnout, 1974, p. 12-60 (NN 2090-2309):

2 **Ռ. Գ. Զարբհանալեան**, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, դար Դ-ԺԳ, Վենետիկ, 1889, էջ 278-288. **Ց. Ս. Անասեան**, Հայկական մատենագիտութիւն, հ. Ա, Երեւան, 1959, էջ 321-369

3 «Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք», Վենետիկ, 1899. **Ցով. Գաթրճեան**, Սրբազան պատարագամատոյցք հայոց, Վիեննա, 1897. «Կանոնագիրք հայոց», հ. Ա, աշխատ. **Վ. Ցակոբեանի**, Երեւան, 1965, էջ 282-328

կոպոսի առ այնոսիկ, որք ասեն, թէ հրամանաւն Աստուծոյ գործէ մարդն զչարն եւ զբարին, որպէս այլազգիքն ասեն» խորագրով ճառը: Այստեղ իրեն յատուկ հակաճառական սկզբունքների ու եղանակների գործադրումով ս. Աթանասը յստակօրէն ցոյց է տալիս, որ բարին եւ չարը կատարւում են ոչ թէ Աստուծոյ կարգադրութեամբ, այլ ի հետեւանս մարդու ազատ կամքի: Աստուծոյ պարգեւած ազատ կամքով է մարդն ընտրում բարին կամ չարը եւ կոում իր ճակատագիրը: Աստուածաբանական այս հիմնադրոյթը լիովին համերաշխ է Դ–Ե դդ. ի վեր Հայ Եկեղեցու որդեգրած վարդապետութեանը: Ի դէպ, աստուածաբանականից զատ, ճառում առկայ է կենցաղագիտական շահեկանութիւն ունեցող մի մանրամասն. խօսելով ամուսնութեան մարզում ինքնիշխան ընտրութեան մասին՝ ս. Աթանասը նկատում է. «Եթէ կնոջ ընտրութիւնը Աստուծոյ հրամանով լինէր, ապա «արեւելքի բնակիչներն ինչո՞ւ կին չեն ընտրում արեւմուտքի բնակիչների կարգադրութեամբ, հայերը՝ ասորիների, այլ տեսնում ենք, որ կնութեան են առնում ազգակիցներին եւ տոհմակիցներին, որովհետեւ... գիտեն իրենց (սեփական) բարքերը»:

Ելնելով ճառի աստուածաբանական, ջատագովական բովանդակութիւնից, ինչպէս նաեւ լեզուաոճական առանձնայատկութիւններից՝ պէտք է ենթադրել, որ այն հայերէն է թարգմանուել Ե դարում:

Ճառը յայտնի է միակ ընդօրինակութեամբ: Այն պահպանուել է Մաշտոցի անուան մատենադարանի N 4618 ձեռագրում (թերթ 110բ-111բ): Ձեռագիրն արտագրուել է տարբեր ժամանակներում (1569, 1693, 1695, 1696, 1706, 1714 թթ.) եւ տարբեր վայրերում (Վան, Արզրում(՞), Մանծկերտ)[1]: Ինչպէս երեւում է, այն ամբողջացուել է գրիչ եւ հեղինակ Իգնատիոս Ամթեցու ջանքերով 1714 թ.: Ձեռագրի՝ նրան պատկանող մասը (երկսիւն, նօտրգիր) պարունակում է հետեւեալ նիւթերը.

Ա. (101ա-102բ) **Բանք պիտանիք.** Ի ճանապարհին ողջոյն մի՛ տայք...

[1] Տեղեկութիւնները՝ ըստ համառօտ նկարագրութեան. «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան մատենադարանի», հ. Ա, կազմ. **Օ. Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փ. Անթաբեան**, Երեւան, 1965, էջ 1247-1248

Բ. (102բ-105բ) **Ի Սահմանաց գրոցն մեկնութենէ՝ համառօտ ժողովեալ նուաստ Իգնատիոս.** Զի՞նչ է, որ ասէ՝ ամենայն չար տանջելի...

Գ. (106ա-108բ) **Ի բանն սուրբ Աւետարանին Յոհանու, որ ի Ը գլուխն եւ ի ԼԱ համարն. գրէ սրբազանն.**

Եւ ասէր զայս առ հրեայսն հաւատացեալս. Մեկնութիւն՝ Ծանեաւ Քրիստոս զնոսա...

Դ. (109ա-110բ) Վերջ բնագրի ինչ, յորում պարունակին.

1. Զգերեզմանս յորում աւուր պարտ է օրհնել...
2. Զի՞նչ է Գերեզմանօրհնէքն...
3. Զի՞նչ է Տունօրհնէքն...
4. Վասն Նշանացն...
5. Նշանք եւ սքանչելիք տաճարին...
6. ՅԱրարածոց մեկնութենէ...

Ե. (110բ-111բ) **Խօսք Աթանասի եպիսկոպոսի առ այնոսիկ, որք ասեն, թէ հրամանաւն Աստուծոյ գործէ մարդն զչարն եւ զբարին, որպէս այլազգիքն ասեն.** Յորժամ ուրանայ մարդն զհաւատս...

Զ. (111բ-115բ) **Հարցումն անօրինաց եւ պատասխանի, զոր պարտ է ամենայն քրիստոնէի, ուսանել զչափաւոր պատասխանի եւ անպատրաստ ոչ մնալ մեր հայոց...** Յաստուածային գիրն գրեալ է, թէ՝ պատրաստեցէ՛ք տալ պատասխանի...

Է. (116ա բ) **[Առակք].** Հայեցեալ Բեհեմոն յիւրաքանչիւր լեզուս...

Ը. (116բ-120ա) Երանելոյն Աթանասի արքեպիսկոպոսի Աղեքսանդրիոյ հարցմունք վայելուչք եւ պատասխանիք սրբոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի Յաղագս մակացութեան եւ հանճարոյ. Հարց. Հետեւումն համարիմ ընդ Աստուծոյ երիս բանս...

Թ. (120ա-124բ) **Ի հարցմանց Գրոց Սրբոյն Գրիգորի Տաթեւացւոյն արարեալ ծաղկաքաղ նուաստ ումեմն Իգնատիոս յերիցու ի Մանծկերտ քաղաքի ՌՃԿԳ (1714)**

Թուին, օգոստոս Ժ (10) օրն. [Հարց] Զի՞նչ է փողն յետին: Մեռեալք ի Քրիստոս յարիցեն...

Ժ. (125աբ) **Քարոզ վասն Եկեղեցւոյ ի բանն մարգարէին, թէ՝ Ցեկեղեցիս բարեբանեցէ՛ք զԱստուած.** Եկեղեցին հոմանուն է եւ բազում նշանակութիւնս ունի...

Ձեռագրի վերին միջնամասի այրուած լինելու պատճառով բնագրի տողերից մի քանիսը վնասուած են. բացակայ բառերի մօտաւոր քանակը նշուած է կլոր փակագծում: Իմաստով ենթադրուող բառերը նոյնպէս բերուած են կլոր փակագծում, հարցական նշանով, իսկ բնագրի վերականգնուած հատուածները՝ անկիւնաւոր փակագծում:

Ընդլայն բնագիր

Խօսք Աթանասի եպիսկոպոսի առ այնոսիկ, որք ասեն, թէ հրամանաւն Աստուծոյ գործէ մարդն զչարն եւ զբարին, որպէս այլազգիքն ասեն

Յորժամ ուրանայ մարդն զհաւատս Եկեղեցւոյ եւ ելանէ ի պատուիրանաց հրամանացն Աստուծոյ, յայնժամ հրամանքն սատանայի տիրեն ի վերայ նորա, եւ իբրեւ յարբեցութեան յափշտակին միտքն: Եւ ոչ միայն վարուքն ամբարշտանայ, այլեւ լեզուքն անօրինի եւ զանդէպսն խօսի եւ միշտ զանօր[ին]ութիւնս բարբառի հակառակ օրինացն Աստուծոյ ի մտացն կուրութենէ եւ պատերազմի օրինօքն սատանայի հակառակ օրինացն Աստուծոյ: Քանզի յասելն, թէ հրամանաւն Աստուծոյ գործէ մարդ զբարի կամ զչար՝ այս են հրամանք սատանայի: Զի ի նորա հրամանն ապաւինեալ՝ յԱստուծոյ հրամանացն մերժեցաւ: Զի (1 բառ) ընդ հրամանաւ կարգաց զմար[մին] (զարեգա՞կն), զլուսին եւ զտարերս (1-2 բառ) եւ Տէր ինքնիշխ[ան] (2-3 բառ): Քանզի յասելն, թէ (2-3 բառ) [«Արասցուք] մարդ ըստ պատկերի Մեր[ում եւ ըստ նմանութեան]»[1], զանձնիշխանութենէն ասէ (եւ ո՞չ) [ծա]ռայաբար: Արդ, տես՝ զինչ ասէ Աստուած ցԱդամ. «Յամենայն ծառոց կերիջիր, բայց ի պտղոյ ծառոյն յայն եթէ ուտիցէք, մահու մեռանիցիք»[2]: Արդ, ո՞ւր է սահման հրամանին. եթէ չուտիցէք, կեցջիք: Եւ ոչ եդ սահման ակամայ ի վերայ, այլ ի կամն ապաստան արար զուտելն եւ զչուտելն: Ահա անձնիշխան է

1 Մնունդ. Ա 26

2 Մնունդ. Գ 3

բնութիւն մարդոյ եւ ոչ ընդ հրամանաւ, այլ ընդ հրամանաւ ապ
արեգակ եւ լուսին, աստեղք եւ հողմք եւ ամենայն տարերք իւրա-
քանչիւր ոք զհրամանն կատարեն: Ընդէ՞ր դատէ զհրամանա-
կատարսն Իւրոց հրամանացն եւ թէ հրամանաւ բարի գործի, զոր ոչ
հրամայեց, ընդէ՞ր պսակէ զհրամանակատարսն: Արդ, դադարեցէ՛ք
յայդպիսի ընդվայրաբանելոյ, զի մարդոյ միայն է յարութիւն եւ
արքայութիւն վասն անձնիշխանութեան զչարն եւ զբարին գործելոյ:
Եւ եթէ հրամանաւն Աստուծոյ գործէ մարդ զչար, ապա ուրեմն ո՛չ
կախարդք եւ ո՛չ դեղատուք եւ ո՛չ ամենայն ինչ չար գործք չեն ինչ
վնասակար, զի հրամացեալն կատարեցին: Այլեւ որդին զհայրն (1
բառ)ն է, եւ ծառայն՝ զտէրն, (աղախի՞ն)՝ [զտ]իկինն, զօրավարն՝
զ(զինուո՞ր)ն (2-3 բառ) տին ինչ մեղադրանաց (2-3 բառ)
[ա]մենեսեան կատարեցին: (2-3 բառ) [քա]ղաքս պարտիմք պա (2-3
բառ) եւ ոչ պատերազմի պատ (2-3 բառ) եմ ելանել թշնամեաց, եւ
ակամայ Աստուծոյ հրամանքն ի վերայ գան: Եւ ի գետոց կարմունիս
յորինեսցուք եւ մի՛ ի գազանաց երկիցուք, մի՛ սերմանեսցուք եւ մի՛
տնկեսցուք, զի հրամանքն կատարեսցեն զամենայն: Ապա թող վարին
չունչք հետ խաշանց եւ ունայն են պահապանք ի վերայ գանձուցն,
զի թէ հրամանաւ է պահելն, եւ այնպէս պահի: Ապա եւ գողանալն
հրամանաւ է, զուր է պահելն, զի հրամանին անհնար է սղալելն: Զի
թէ հրամանաւ է չարն, ապա զուր են բանդք եւ կապանք եւ օրէնք
թագաւորաց եւ գեհենն եւ տանջանքն, զի ոչ կամելով ոք զհրա-
մայեալն կատարէ, չէ Աստուծոյ: Եւ եթէ մարդն հրամանաւ գործէ
զբարին, ապա ընդ վայր են պատիւք եւ պարգեւք բարեաց եւ պսակ
արդարոց եւ բարի գործոց վարձատրութիւն, զի ոչ ի կամաց, այլ
ակամայ գործեցին զբարին: Եւ եթէ հրամանաւ է մահ, ընդէ՞ր ոչ
կանայք ի ծնունդոյ մեռանին, եւ արք՝ ի պատերազմունս, այլ
իւրաքանչիւր ոք ի գործոյն եւ յարուեստիցն պատահին նմին որո-
գայթիցն: Եւ թէ կինն հրամանաւ է առնուլ, ընդէ՞ր ոչ արեւել[ե]անքն
ի հրամանէն յարեւմտից առնուն կին, եւ հայաստանքն՝ յասորես-
տանեայց, այլ տեսանեմք, զի զազգակիցս եւ տոհմակիցս առնուն
կին, ընդ որս եւ ընդունելութիւն իւրեանց է, եւ գիտեն զբարս նոցա:
Արդ, ո՞ւր է սահմանն հրամանին բարւոյն եւ չարին: Եւ թէ հրման
ետ գազանաց եւ սւազակաց սպանանել զմարդիկ, ընդէ՞ր զկանայս

զոնանիստսն[1] ոչ սպանանեն, այլ զարսն. վասն զի արանցն միայն է
հարկ շրջել, եւ նոքա որոգայթիցն պատահին վասն հարկին կամ վասն
յանդգնութեան, եւ ոչ սահմանն է հրման հաստատուն:

Եւ արդ, դադարեցէ՛ք յայդպիսի ընդվայրաբանելոյ, զի Աստուած
անձնիշխան արար զմարդն՝ կամաւ գործել զչարն, զի կենաց եւ
մահու՝ ոչ ժամք եւ ոչ ժամանակք, այլ գիտէ Ամենագէտն, թէ յորում
ժամու կամ յորում հասակի օգուտ է նմա, յայնժամ կոչէ զնա՝ ոչ
որոգայթիւ, այլ պատուով եւ ուղղութեամբ, զի անձնիշխան արար
զմարդն եւ ի կամս ապաստան: Եւ վասն յանցանաց են մահք եւ
կապանք եւ տանջանք եւ ամենայն պատիժք պատուհասից, յորոց
փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուածն ամենայնի. ամէն:

1 Այս բառը բացակայում է Նոր Հայկազեան բառարանում:

Անդիպ բնագիր

[ԱՅՆԱՆԻԱՑԻ ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ՝ Ի ԽՆԴՐՈՅ ՀԱՒՐ ԴԻՈՍԿՈՐՈՍԻ, ԶՈՐ ՅԵՏՈՅ ԻՄ ԱՂԱՉԵԱԼ ԶԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՎԱՐԴԱՊԵՏՆ ՍԱՐԿԱՒԱԳ ԸՍՏ ՄԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ] ՀԱՅ ԱԶԳԻՆ, ԵՒ ՅԱՂԱԳՍ ՍԻՐՈՅՆ, ԶՈՐ ԷՐ ԱՌ ԻՄ ԱՆՊԻՏԱՆՈՒԹԻՒՆ, [ԲՅԱԶՈՒՄ ԲԱՆ ԵՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ ԿՐԵԱՑ ՅԱՂԱԳՍ ԱՅՍՐ ՏԱՌԻՍ

(Շարունակութիւն)*

«Եւ ի ծնանելն Յիսուսի,- ասէ,- ի Բեդղահէմ Հրէաստանի»[1]:

Զի անտի գուշակեցին մարգարէքն զգալուստ Նորա: «Ահա, լուաք,- ասէ,- զՆմանէ եւ գտաք զՆա ի մայրիս Եփրաթայ»[2]: *Ասեն, թէ որպէս խաչեցաւ ի Գողգոթայի ի վերայ հողիցն Ադամայ, այսպէս եւ ծնաւ յայրին, զի անդ էր գերեզմանն Եւայի, զի բար[ձ]ցէ զանէծս Նորա:*

Արդ, ծնաւ նա զԱնդրանիկն արարածոց առանց ցաւոց, դարձաւ նա ծնող արարածս առանց երկանց յԱւազանէն եւ անդրանկացոյց զամենեսեան, զի չիք ի ծոց Աւազանի երէց եւ կրսեր, զի ամենեքեան անդրանիկք եւ զաւակք աւրհնութեան: Եւ կատարեցաւ այն, թէ՝

* Սկիզբը տե՛ս «Գանձասար» Դ:

1 Մատթ. Բ 1

2 Սաղմ. ՃԼԱ 6

«Ամենայն անդրանիկ, որ բանայ զարգանդ, սուրբ Տեառն կոչեսցի»[1]: *Արդ, եկ Նա ի փակեալ արգանդէն, որպէս եմուտ դրաւքն փակելովք եւ զկնիք կուսութեանն ոչ խախտեաց, որպէս եւ եկ ի կնքեալ գերեզմանէն՝ ամբողջ թողլով զկնիքն: Զայս երկուս յայտնիս վկայս կացոյց ծած[կ]եալ կուսութեանն: Եւ զի ասէ՝*

«Յաւուրս Հերովդիայ արքայի»[2]:

զժամանակն յայտ արար: Զի որք կամին ստուգել զժամանակ ծննդեանն, գտցեն ճշդիւ կատարեալ յայսմ վայրի եւ հաւատասցեն թուոցն, զոր սահմանեաց Դանիէլ ի բերանոյ հրեշտակին, թէ Է-երորդք ե եւ Է-երորդք, ԿԲ համառաւտեցան ի վերայ ժողովրդեան մինչեւ Աւծեալն եւ ապա բարձցին աւծութիւնք եւ կնքեսցին անաւրէնութիւնք եւ եկեսցեն յաւիտենական սրբութիւնք: Եւ զայս ետես Դանիէլ ի ԿԶ ղումպիադին, եւ այս կատարի[ր] թագաւորելն Հերովդի այլ[ազգւոյ], զի ՃԶԵ ղումպիադին թագաւորեաց նա ի Հրէաստանի, [որ լինի ամք] ՆԶԵ եւ ղումպիադք ՃԻԲ եւ Է-երորդքն Դանիէլի եւ ՅԼԴ ամիս, որ ծնաւ Աւծեալն: Զի յորժամ թագաւորեաց Հերովդէս եւ տիրեաց սրբութեանն եւ յայնմհետէ կաշառաւք կացուցանէր ամ [յամի] քայանապետ արտաքոյ աւրինացն հրամանի, որ մինչ ի վախճան քահանայապետին ոչ ոք կարէր յափշտ[ակ]ել զաշտիճան նորա: Աստանաւր բարձաւ աւծութիւնն, եւ կնքեցան մեղք նոցա, զի խոտեցան[3] *այնոքիկ, որ արծաթով լինիր ընտրութիւն քահանայութեանն: Եւ արդ, ի սորա թագաւորելս կատարեցան Է-երորդքն Դանիէլի, եւ ՅԼԴ ամի սորա ծնաւ Աւծեալն: Ասէ՝*

«Յաւուրս Հերովդի ահա մոգք եկին յարեւելից եւ ասեն՝ ուր իցէ ծնեալ Արքայն»[4]:

Եւ զի մարգարէքն սպառէալ էին ի մէջ Իսրայելի. փոխանակ մարգարէիցն զբարբարոսս ած ի յանդիմանութիւն նոցա. որ այնչափ ժամանակաւք կրթեալ էին աւրինաւք եւ մարգարէիւք եւ ոչ հաւատային, իսկ վայրենագոյնքն միով նշանիւ հաւատացին եւ եկին ի յանդիմանութիւն հրէիցն: Եւ զի ընթացաւ աստղն ցուցանել, թէ Սա է, զՈրմէ մարգարէքն գուշակեցին, զի որպէս դառնալ արեգականն յարեւմտից յարեւելս առ Եզեկիայիւ: Եկին բաբեղացիքն դրսովել զանհաւատութիւն հրէիցն: Այսպէս յարեւելից աստղն ընթացաւ՝ գալ ի

1 Ղուկ. Բ 23

2 Մատթ. Բ 1

3 ձեռագրում՝ խոտորեցան, յետոյ՝ ուղղուած

4 Մատթ. Բ 2

յանդիմանութիւն անհաւատութեան նոցա: Արդ, եկին մոգքն պատարագաւք ի նշան աստեղն, եւ իբր զմարգարէքն վկայեցին ի վերայ ծնեալ Մանկանն, զի մի՛ յորժամ յայտնեսցի Նա, աւտարացուցեն զնա, այլ գիտասցեն ամենայն արարածք զծնունդ Նորա: Վկայեաց եւ Զաքարիաս ի պապանձելն իւրում, եւ Եղիսաբեթ ծննդեամբ իւրով, այլ եւ աստղն այն իշխան էր գնացիւք իւրովք՝ վերանալ եւ խոնարհիլ եւ ոչ կապեալ, որպէս այլ աստեղքդ, եւ զի ծածկեցաւ ի նոցանէ, զի մի՛ դէպ ուղիղ եկեսցեն ի Բեղղէէմ, այլ երթիցեն յԵրուսաղէմ, զի դպիրք պատմեսցեն զծնունդ Նորա եւ առցեն ճշմարիտ վկայութիւն ի մարգարէից անտի, զի մի՛ կարիցեն, թէ այլ զաւրութիւն իցեն [...][1] զհանգիստ Նորա, որ բնակեալն էր յԵրուսաղէմ: Արդ, արեւելեայքն աստեղքն լուսաւորեցան, իսկ հրեայքն ի խաւարել արեգական կուրացան: Արդ, նախ արեւելք երկիր պագին Նմա: «Արեւելք,- ասի,- ի բարձանց լուսաւորեցին զխաւար հեթանոսաց», եւ առաջնորդեաց աստղ եւ ած կացոյց ի վերայ արեգականն արդարութեան, եւ կատարեաց զգնացս իւր, որպէս Յովհաննէս, որ քարոզեաց ի վերայ Բանին: Իբրեւ կատարեաց ձայնն զկարգ իւր, վկայեաց ի վերայ Բանին, ասէ. «Ինձ պարտ է նուազել, եւ Նմա՝ աճել»[2]: Պարտեաց զնոսա աստղն լուսով իւրով եւ ած յերկրպագութիւն ճշմարիտ Լուսոյն, զի սէր նոցա, որ կապեալ էր ի լոյս անցաւոր, ձգեաց Աստուած զնոսա առ Լոյսն, որ ոչ անցանէ: Եւ զի աստեղագիտութիւն իմաստից ի նոցանէ յայտնեցաւ, զի նախ ի նոցանէ եղեւ գիւտ այսպիսի իմաստից, զի երկիրն պարզէ ի խոնաւութենէ եւ աւդքն վճիտք եւ ընթացք աստեղացն յայտնագոյնք. իւրեանց սովորական արուեստիւն հաւանեցոյց զնոսա, որոց հաւատային, որ ի նոցանէ յայտնէր նոցա: Նաեւ զմարգարէութիւնն Բաղամու ունէին, որ ասաց, թէ՝ «Ծագեսցի աստղն Յակովբու, եւ երեւեսցի այր Իսրայելի»[3], որում առաւել հաւատային, քան մարգարէից: Իսկ Հերովդէս խռովեցաւ, զի ոչ էր նա ի ցեղէ թագաւորեաց, այլ եկամուտ: Ցիրաւի սաստեաց ի լուր ճշմարիտ թագաւորին ծննդեան: Իսկ Երուսաղէմ ընդէ՞ր խռովեցաւ, զի Փրկիչ աւետարանեցաւ նոցա: Ընդ որ պարտ էր ուրախ լինել ընդ Մանկանն: Այլ զայս եւ Եսայի գուշակեաց. նախ, ասէ, նոքա կամէին, թէ հրոյ ճարակ լեալ էին, զի «Մանուկ ծնաւ մեզ, Որոյ իշխանութիւն ի վերայ ուսոց ունի»[4]: Իսկ Հերովդէս նենգութեամբ կամէր խաբել զմոգսն, եւ

1 1 բառ
2 Յովհ. Գ 30
3 Թիւք ԻԴ 17
4 Եսայի Թ 6

նենգութիւն նորա ի գիշեր յայտնէր մոգուցն, զի ի գիշերուն ընդ հայելի տեսանէին զնեղութիւն [...][1]ս, զի նշան աստեղն ոչ միայն վասն մոգուցն երեւեցաւ, այլ վասն ամենայն արարածոց, զի հաւատայցեն ի պատճառի նորա, զի աստղն, որ հնազան[դ]եցաւ, որ ոչ ըստ բնութեան իւրում: Եւ արար ճանապարհ առաջի մարդկութեանս յարքայութիւն իւր: Եւ որպէս աստղն զուարթագին պայծառ լուսով իւրով քարոզեաց զծնունդ Նորա ամենայն արարածոց, սոյնպէս արեգակն ի խաւարել իւրում մթագոյն տեսլեամբ իւրով քարոզեաց ամենայն արարածոց զմահ Նորա: Եւ որպէս Եզեկիա նշանաւն ապրեցաւ ի յայտնի մահուանէն, ապրեցան նոքա նշանաւ աստեղն ի ծածուկ մահուանէ անտի, զի որպէս աստղ նոր երեւէր նոցա, այլ հետք նորա ծածուկ էր յամենայն մարդոյ: Այսպէս եւ երեսք ծնեալ Մանկան երեւէր ամենայն մարդոյ, այլ հետք Նորա ծածկեալ էր յամենայն արարածոց: Եւ զի ասէ՝ մատուցի Նմա ոսկի իբրեւ Թագաւորի եւ կնդրուկ՝ իբրեւ Աստուծոյ եւ զմուռ՝ իբրեւ մահկանացուի[2], զի տեսին զաստղն հրաշալի եւ զծնողսն աղքատ եւ զմսուր անասնոյ եւ զխանձարուրսն անպաճոյճ, ոչ կարէին ճշմարտութեամբ վերահասու լինել եւ զի մի՛ ի տեսիլ գձուձ գայթակղեսցին: Ի մտանել յայրն հուր փայ-[լ]ատակեաց ի Մանկանէն ի դէմս նոցա: Եւ նոցա տարակոյս մթեալ խորհրդաբար մատուցին զընծայսն, զի թէ թագաւոր իցէ, ոսկի պատշաճի Նմա, եւ եթէ Աստուած՝ կնդրուկ, եւ եթէ մահկանացու՝ զմուռ: Դարձեալ՝ ոսկի, զի դառնալոց է երկրպագութիւն պատկերի ոսկոյն՝ տեառն ոսկոյն, եւ զմուռ՝ իբր բժշկի, զի բժշկելոց է Նա զբեկումն Ադամայ, եւ կնդրուկ, զի հոտ անուշից, որ բուրեաց ի Նմանէ, ելոյծ զհոտ մահու, որ բուրեաց յԱդամայ՝ ըստ այնմ, թէ՝ հոտ անոյշ եմ Քրիստոսիւ փրկելոցն[3]: Եւ այն, որ յայտնեաց նոցա՝ չդառնալով ի Հեր[ովդէս], եւ ի նոյն յայտնեաց նոցա՝ ելանել գալ յերկրպագութիւն նորածին Թագաւորին: Եւ մոգուցն, իբրեւ լուսաւորեալ եւ լցեալ գիտութեամբ, գնացին յաշխարհն իւրեանց:

«Դարձեալ[4] երեւէր հրեշտակս ի տեսլեան Յովսէփայ եւ ասէր՝ արի, ա՛ռ զՄանուկդ եւ զմայր Իւր եւ փախի՛ր յԵգիպտոս»[5]:

1 1 բառ
2 Հմմտ. Մատթ. Բ 11:
3 Հմմտ. Եփես. Ե 2, Փիլիպ. Դ 18:
4 ձեռագրում դարդեալ
5 Մատթ. Բ 13

Զոր պարտ է ի միտ առնուլ մեզ, թէ ընդէ՞ր այսմ երկուց թագաւորացս միշտ ցուցանէ զզաւրութիւն սքանչելեաց Իւրոց, զի եւ ի սոցա ձեռս մատնեալ զժողովուրդն ի գերութիւն նախ յԵգիպտոս իջոյց զ[Յ]ակովբ որդովքն իւրովք ի ծառայութիւն եւ ապա ի Բաբեղոն գերեաց զնոսա ի չար ծառայութիւն վասն մեղաց իւրեանց, զի ամենայն դիւթութիւնք եւ կախարդութիւնք, հնարք սատանայի ի սոսա զաւրանային վասն երկուց ցանկութեանց՝ Ադամայ մեղաց եւ Եւայի. զի Եւա ցանկացաւ աստուածորդիս ծնանել եւ ընկալաւ զցաւս չարչարանաց ընդդէմ յանդգնութեան իւրոյ, եւ Ադամ, զի հպարտացաւ աստուած լինել, ընկալաւ ընդդէմ ցանկութեան իւրոյ զվաստակս եւ զքիրտն երեսաց եւ զփուշ պսակ թագաւորութեան իւրոյ: Եւ այս երկու ախտք թագաւորեցին ծննդոց Ադամայ ցանկութիւնդ ունակութեան, վասն որոյ ջրհեղեղաւն կորեաւ եւ ամբարտաւանութիւն, որով հսկայքն ջնջեցան: Եւ զայս նկարագրեաց Աստուած յԵգիպտոս եւ ի Բաբեղոն. զԵգիպտոս նկարագրեաց ի դէմս պոռնկութեան կանանց ի ձեռն մարգարէին, որ ասէ. «Վիշապդ, որ տիրի ջուր Աստուծոյ, եւ ասէ՝ իմ են ջուրքս, եւ ղեւիաթան՝ թագաւոր ջուրց»[1]. այն, որ զՅորդանան յակնակապիճն ժողովէր եւ ոչ երբէք յագի ի պոռնկութենէ պղծութեան, որով ամենայն ծնունդք Ադամայ ըմբռնեցան այսու ախտիւք եւ իջին ի ծառայութիւն փարաւոնի պոռնկութեան դիւին, վասն որոյ բոլոր մարգարէական յընթերցուածս ընդ Եգիպտոսի խաւսին եւ սպառնան զկորուստ նմա: Սոյնպէս եւ Բաբեղոնի սպառնան ի լուծանել[2] յաթոռոյ հպարտութեան եւ մտանել ի խաւար դժոխոց մահու: Եւ այս երկուց գլխաւորացս գերիլ ժողովրդեանն, եւ ի սոսա ցուցանել զբազում զաւրութիւն սքանչելեաց Իւրոց, յայտ առնէ մեզ, եթէ բոլոր ծնունդք Ադամայ յայսց երկուց ախտից գերեալ ըմբռնեցան ի պոռնկութիւն եւ յագահութիւն ամբարտաւանութեան. վասն այնորիկ փարաւոն զարիական խորհուրդսն ընկղմէր ի յորձանս պոռնկութեան եւ զէգսն զհեշտալի ցանկութեանն գործաւնեա[յ]ս ապրեցուցանէր: Սոյնպէս եւ բաբեղացին զամբարձեալ երկրպագուսն Բեղայ ապրեցուցանէր եւ զերկրպագուսն Աստուծոյ հրով դատիւր: Ըստ որում եւ ինքն ամբարձեալ կարծեաց աստուածանալ եւ զմարդկութիւնն եւս կորոյս: Եւ զի յայս երկու տեղիս էր թագաւորեալ չարն, վասն այնորիկ նախատէր[3] զբաբեղացին յերկրպագութիւն, որք երկրպագուք էին Բեղայ, զի ծանուցէ նոցա զճշմարիտ

1 Հմմտ. Եզեկ. ԻԹ 3:
2 բնագրում՝ լուցանել
3 ձեռագրում՝ նախածէր

երկրպագելին Աստուած: Եւ դարձուցէ զերկրպագու[թ]իւն դիւացն յերկրպագութիւն Աստուծոյ, եւ ինքն չոգաւ յԵգիպտոս հանդերձ կուսին Մարիամայ, զի ուսուցէ նոցա կուսութեամբ պատերազմիլ ընդդէմ պոռնկութեան եւ կատարեսցէ զկանխասաց մարգարէութիւնն Եսայեայ, թէ՝ «Տէր նստեալ ի թեթեւ ամպ»[1] անջրդի ի գիրկս Կուսին, որ է մաքուր յամենայն խոնաւ ցանկութեանց, իջցէ յԵգիպտոս: Եւ շարժեսցին հնարագիտութիւնք մարդկան ի ձեռակերտս իւրեանց, եւ կատարեսցեն[2] զմարգարէութիւնն Եսայեայ, որ ասէ. «Մինչ չեւ ծանուցեալ իցէ Մանկանն կոչել զանուն Հաւր, առցէ Նա զզաւրութիւն Դամասկոսի», այսինքն՝ զերկրպագութիւն բաբեղացւոցն, «եւ զաւար Սամարիայ»[3], այսինքն՝ զհաւատ ի եգիպտացւոցն: Եւ դարձեալ՝ զի եգիպտոս կոչեաց, զՏեառն ունի Որդի անդրանիկ: Եւ այսու անուամբ բարգաւաճեալ զնոսա ի վերն զամենայն որդիս Ադամայ: Իսկ նոքա երկրպագութեամբ Բաաղու ջնջեցին զգիր որդեգրութեանն, որպէս ասաց Ովսէէ, եթէ՝ «Տղայ էր ի Երուսաղէմ, եւ ես սիրեցի զնա եւ յԵգիպտոսէ կոչեցի զՈրդի»[4], նոքա Բաղիմայ ծառայեցին եւ ջնջեցին զանուն որդեգրութեան իւրեանց, եւ զի չէր մարթ Գրոյն եղծանել եւ անկատար մնալ: Վասն որոյ էջ Նա յԵգիպտոս, զի կատարե[ս]ցի բանն, թէ՝

«ՅԵգիպտոսէ կոչեցից զՈրդի Իմ»[5]:

Եւ այսպէս կատարեաց զամենայն մարգարէութիւն մարգարէիցն, զի կործանեսցէ զամենայն հնարս չարին: Իբրեւ գիտաց Հերովդէս, թէ խաբեցաւ ի մոգուցն, զորս կամեցաւ խաբել ի պատճառս երկրպագութեան իւրոյ, բարկացաւ յոյժ: Փոխանակ, զի պարտ էր քննել զնա վասն սքանչելեացն, զոր լուաւ ի մոգուցն եւ ծանեաւ ի մարգարէութենէն Միքիայ, զի յայտնի էր ազգ Նորա յԵսայեայ եւ ի Յակովբայ, թէ՝ «Բղխեսցի գաւազան Յուդայ, մինչեւ եկեսցէ Այն, որ յոյսն է հեթանոսաց»[6]: Եւ ժամանակ Նորա՝ ի Դանիէլի յեւթներորդացն եւ Յակովբայ սահմանելոյն, եւ տեղի Նորա՝ ի Միքիայ եւ ի Դաւթէ, եւ մայր Նորա՝ յԵսայեայ, թէ՝ «Ահա Կոյս յղասցի»[7]: Եւ զի կուրացեալ էր նա նախանձու չարութեամբն եւ ծարաւի էր արեան Մանկանն,

1 Եսայի ԺԹ 1
2 բնագրում՝ կատարեսցենն
3 Եսայի Ը 4
4 Ովս. ԺԱ 1
5 Մատթ. Բ 15
6 Հմմտ. Եսայի ԺԱ 1:
7 Եսայի Է 14

որպէս Սաւուղ՝ արեանն Դաւթի, զի ի զաւկէ էր նա Քանանու եւ նման փարաւովնի ի չարէն չարժեալ, որ ընկղմեաց զտղայսն ի գետն, զի կորիցէ եւ Մովսէս կործանիչն Եգիպտոսի եւ ոչ եհաս, որում ցանկայրն: Եւ Սաւուղ կոտորեաց զքահանայսն փոխանակ Դաւթի եւ ոչ կարաց ըմբռնել զ Դաւիթ: Եւ Հերովդէս կոտորեաց զմանկունսն, զի կոտորիցէ եւ նորածին Մանուկն ընդ նոսա: Եւ զի անզաւակեց[ոյց] մեղս ի մանկանց իւրեանց, ետ զպատիժ պատուհասիցն ինքն հան-[դ]երձ կնաւ՝ եւ որդւովք իւրովք, որպէս փարաւովն փոխանակ տղայոցն հանդերձ գլխաւորաւքն[1] ընկղմեցաւ յանդունդս խորոցն: Եւ Սաւուղ հանդերձ որդովքն սատակեցաւ, եւ Դաւիթ ապրեցաւ: Եղեն մանկտին վկայք արդարոցն կոտորելոց եւ ամբաստանողք սպանողացն. զի թէ զնա, զի ասաց՝ Որդի եմ Աստուծոյ, աւտարացուցին, զանմեղ մանկտին ընդէ՞ր կոտորեցին, մինչ չեւ էին լեալ վկայք Նորա: Այլ Նա անդէն ի ծննդեան Իւրում յայգւոյ անտի, որ զլացաւ տալ զպտուղ Նորա, առաքեաց Հաւր Իւրում կողովն ուղկուզաց վաղահասուկ զերախայրիս հնձանոյ, յուրախութիւն առաքեաց[2] Հաւրն երկնաւորի: Եւ զի լցցի, ասէ, բան մարգարէին, թէ՝

«Ձայն գուժեաց ի Հռամայ»[3]:

Այսու յայտ առնէ զկանուխ գիտութիւնն Աստուծոյ, զի թէ կանխաւ գուշակեաց, որ ինչ լինելոց էր, կարող էր եւ փրկել զնոսա, այլ թոյլ ետ կատարել զչարութիւն կամաց իւրեանց, զի լցցի չափ մեղաց նոցա: Եւ հասցէ վրէժխնդրութիւն արեան անմեղացն:

«Հռաքէլ լայր,- ասէ,- զորդիս իւր»[4]:

Վասն է՞ր արդեաք. զի Հռամայ վիճակ Բենիամենի էր՝ որդւոյն Հռաքէլի, եւ յափշտակեցաւ ի ցեղէն Յուդայ, եւ զրկեցին զՀռաքէլ: Վասն որոյ սուգ առեալ կայր, զի ոչ հանդիպեցան որդիք նորա վասն Քրիստոսի մեռանել, այլ յորդւոյն Լիայի եւ նոր նահատակեցան ի ծննդեանն Քրիստոսի: Եւ զի Լիա աւրինակ էր առաջին ժողովրդեանն բազմորդութեամբն իւրով եւ Հռաքէլ՝ Եկեղեցւոյ, զի գեղեցիկ էր տեսլեամբ, այլ ի պատճառս բազմորդութեանն սիրէր Յակովբ, որպէս ժողովուրդն թէպէտ եւ զազիր էր գործովք եւ խաւարային՝ մտաւք, այլ ի պատճառս արդարոցն եւ մարգարէիցն եւ առաքելոցն, որ ծնան ի նոցանէ, խնամէր զնոսա Աստուած: Ո՞վ Հռաքէլ, մի՛ լար դու իբրեւ

1 բնագրում գլեաւորաքն
2 բնագրում առաքեալ
3 Մատթ. Բ 18
4 Մատթ. Բ 18

զալիւնն [...][1], որ եկին հասին թշնամիքն եւ կոտորեսցին զորդիս [...]ք, այլ լա՛ց դու զայնոսիկ, որ կոտորեալ ընկեցեալ կան ի հրապարակս յաւտարաց, այլ յորդոց հաւրն իւրեանց Յակովբայ, այլ արգելցու զձայն լալոյ քո, զի գրեցան վարձք արտասուաց քոց այնոքիկ, որ ընդ Որդւոյն Դաւթի ծնան ի ծննդեան Նորա, զի քարոզք Նորա եղեն եւ առին վիճակ զՎերինն Երուսաղէմ. այն, որ Մովսէսի երեւեցաւ ի լերինն, եւ մխիթարեա՛ դարձեալ յորդին քո ի Սաւուղ, որ նա ինքն է Պաւղոս, որ նա լինի քեզ փոխանակ ցաւոց եւ արտասուաց մխիթարութիւն: Արդ, հալածեցաւ Դաւիթ ի Սաւուղայ եւ գնաց ի մէջ հեթանոսաց, եւ Որդին Դաւթի՝ ի Հերովդիայ եւ՝ ի մէջ Եգիպտոսի: Կոտորեաց Սաւուղ զքահանայսն, եւ մնաց Աբիաթար քահանայ. եւ Հերովդէս՝ զմանկտին, եւ մնաց Յովհաննէս: Աբիաթարաւ հատաւ քահանայութիւն տանն Հեղեայ, եւ Յովհաննաւ բարձաւ մարգարէութիւն տանն Յակովբայ: Եւ զի շնորհաւք կոչեցաւ նա որդի անդրանիկ յԵգիպտոս եւ կորոյս զորդեգրութիւն իւր: Բարձին ի նոցանէ զորդեգրութեանն անուն Եսայի եւ Յովհաննէս. մինն կոչեաց զնոսա «իշխան սոդովմացւոց եւ ժողովուրդ գումարացւոց»[3], եւ միւսն՝ «ծնունդք իժից»[4], նմանող գործոց իւրեանց ընկալան անուանս: Եւ յիշանելն Տեառն մերոյ յԵգիպտոս եւ յելանել՝ ճշմարտեաց զբանն մարգարէին, թէ՝

«ՅԵգիպտոսէ կոչեցից զՈրդի Իմ»[5]: Եւ զի ասէ. «Նազովրեցի կոչեսցի»[6]:

Հեբրայեցի զաւազանի[7] ասէ, եւ մարգարէն Նազովրայ ծնունդ ասէ, զ[ի՞] զաւազան(՞) ծնունդ է, այլ աւետարանիչն՝ զի «սնաւ ի Նազարէթ»: Ետես, եթէ սա եւս նմանեալ է այնորիկ, եւ նա՝ այսմիկ, ասէ. «Նազովրեցի կոչեսցի»:

«Յաւուրն յայնոսիկ գայ,- ասէ,- Յովհաննէս Մկրտիչ»[8], այսինքն՝ յետ Լ ամի, զի եկաց մնաց, մինչ կատարեցաւ հասակաւ, զի լուծանելոց էր զաւրէնսն: Նախ կատարեաց զամենայն հրամ[անս]

1 1 բառ
2 1 բառ
3 Եսայի Ա 10
4 Մատթ. Գ 7, ԺԲ 34
5 Մատթ. Բ 15
6 Մատթ. Բ 15
7 բնագրում զանազանի
8 Մատթ. Գ 1

[...][1] աւրինացն եւ զգրեալսն ի մարգարէսն, զի մի՛ ասիցե[ն, եւ] ոչ կարաց կատարել, յայն սակս ելոյծ: Եղեւ կատարեալ [հ]ասակաւ, որով զամենայն կիրս մարմնոյ մարթ էր ընդունել, զի առաջին հասակին յոյժ անմտագոյն եւ կարճամտագոյն եմք, եւ ապա ցանկութիւն գրգռէ. եւ յետոյ յընչասիրութիւն եւ ի սնափառութիւն գամք: Վասն այնորիկ անց ընդ ամենայն հասակս եւ յաղթեալ սպան զմեզս ի մարմնի անդ: Եւ յորժամ կատարեաց զաւրէնսն, ապա եկն ի մկրտութիւն, զի այնու աւարտեսցէ զամենայն գրեալսն, այսինքն՝ թէ զամենայն աւրէնս ի գլուխ հանաք. այս միայն պակասէ, զայս եւս կատարեսցուք, զի լցցուք զբնաւ հրամանս աւրինացն, եւ զի Ադամ երեսնամեայ ստեղծեալ ընկալաւ զբնաւին պարգեւս շնորհաց ի Տեառնէ: Եւ դարձեալ անխոհեմ իմաստիւքն կորոյս զլոյսն եւ զանապականութիւնն: Սակս այսորիկ եւ Տէր մեր երեսնամեայ եկն ի մկրտութիւն, զի իջմամբ Հոգւոյն զբոլորսն առցէ զշնորհս մարմնով մեր, զոր Ադամն կորոյս: Իսկ որդին Զաքարիայ ոչ եթէ յանձնէ եկն, այլ յԱստուծոյ յորդորեալ եկն ի մկրտութիւն, որպէս ասէ Ղուկաս, թէ՝ «Բանն Տեառն եղեւ ի վերայ Նորա»[2]: Եւ ինքն ասէ, թէ՝ «Որ առաքեաց զիս մկրտել ջուրբ, Նա ասաց զիս՝ յՈր վերայ տեսանիցես զՀոգին իջեալ, Նա է, որ մկր[տ]է ի Հոգին Սուրբ»[3]: Եւ զպատճառսն եւս յայտ առնէ, թէ՝ «Ես ոչ գիտէի զնա», այլ զի յայտնի լիցի Իսրայեղի: Վասն այսր եկի մկրտել ջուրբ, զի թէպէտ եւ ասէ, թէ ի թողութիւն մեղաց, այլ ոչ լինէր թողութիւն մեղաց մինչեւ ի խաչն անդ: Եւ եղեւ հին մարդն մեր խաչակից թաղեալ մկրտութեամբ ի մահ Նորա, զի ամենայն ուրեք արեամբ Նորա լինի թողութիւն մեղաց: Որպէս ասէ առաքեալ. «Այլ լուացարուք եւ սրբեցարուք ի Հոգին Սուրբ յանուն Տեառն մերոյ»[4]: Այլ Յովհաննէս [...][5] յապաշխարութիւն, զի հաւատայցեն յԱյն, որ գալոցն էր, զի չեւ էր կենումն պատարագեալ ի Խաչին, եւ ոչ Հոգին իջեալ, եւ ոչ թշնամութիւն բարձեալ, եւ անէծք եղծեալ, զիա՞րդ մարթ էր յառաջ թողութիւն մեղաց լինել: Այլ զի ապաշնորհք էին հրեայքն եւ յայնչափ մեղս կային եւ ոչ զգային չարեացն, այլ զանձինն առլաւս ունէին եւ ի հաւատոցն արդարանալ ոչ կամէին: Վասն որոյ եկեալ Յովհաննէս, զի զչարիս նոցա յուշ արասցէ նոցա, զի ոչ, որպէս կարծեն, արդարք են, այլ կարաւտ ապաշխարութեան: Եւ զայս

1 1 բառ
2 Ղուկ. Գ 2
3 Յովհ Ա 33
4 Ա Կորնթ. Զ 11
5 1 բառ

քարոզութիւնն յայտ առնէ, թէ՝ «Ապաշխարեցէ՛ք ըստ արժանի պտղոյ», զի յորժամ ի միտ անկանիցի նոցա մեղք իւրեանց, եւ թողութեան փափագիցեն, զայս եկն կազմել Յովհաննէս եւ յորդորել յապաշխարութիւն եւ խոնարհել եւ ըստգտանելով զանձինս, ընթացցին առնուլ զթողութիւն: Վասն որոյ ասէ, թէ՝ «Եկն Յովհաննէս քարոզել մկրտութիւն յապաշխարութիւն»[1], եւ ածէ զնովիմբ, թէ՝ «եւ թողութիւն», զի վասն այնորիկ յաւժարեցոյց զնոսա խոստովան լինել զմեղս իւրեանց եւ ապաշխարել, զի յետ այնր դիւրաւ ընդունիցին զթողութիւն ի հաւատոցն, զի թէ ոչ էին զանձինս ջուր գտեալ, ո՛չ զշնորհս խնդրէին եւ ո՛չ թողութեան հասանէին: Եւ այսպէս առաջի մկրտութեան հորդէր ճանապարհ, զի ասէ իսկ, եթէ հաւատայցեն յԱյն, որ գալոցն է յետ նորա, եւ այլ եւս պատճառ մկրտութեանն, զի չէր մարթ տանէր տուն, տանել զՔրիստոս եւ ասել, թէ՝ ի Սա հաւատացցէք. այլ յորժամ ի մի վայր ժողովեալ էին եւ աչաւք տեսանէին զՀոգին եւ [ունկնդր՞]էին զիվերուստ զերանելի բարբառն, յայնժամ գայր ի մկրտութիւն, զի Մկրտչին լաւութիւն եւ իրացն պատճառք ածէին յամենայն քաղաքաց ի Յորդանան, եւ նորանչան տեսիլք եւս երեւէին: Եւ յայտ ցուցանէր նոցա, եթէ բազում չարեաց են պարտապանք, թէ ոչ ապաշխարեսցեն եւ մի՛ ի նախնիսն պարծեսցին, այլ յեկեալ հասեալ պարգեւսն վայելեսցեն, եւ զի ծածկեալ էր համբաւն Քրիստոսի, որ ի ծննդեանն եղեւ: Եւ կարծէին մեռեալ ընդ մանկտին Բեղդահեմի, զի թէպէտ եւ յերկոտասան ամի եցոյց զինքն ի տաճարին, այլ թաքոյց միւս անգամ: Վասն այսորիկ բարձրագոյն եւ պայծառագոյն քան զառաջինն երեւէր, զոր ոչ երբէք էր տեսեալ հրէիցն: Եւ զի մեծամեծս քարոզէր եւ զերկ[ն]ից արքայութենէն առնէր յուշ եւ արքայութիւն աստ զառաջին եւ զվերջին գալստենէն ասէր: Եւ այս պարծելի յուսով յաւժարեցուցանէր գալ ի մկրտութիւնն: Եւ մաքսատրք եւ զինաւորք հարցանէին, թէ զինչ արժան է առնել եւ զանձանց ցկեանս գտանել. զի զաշխարհս թողեալ յայլ իմն կեանս [յ]ուշ եդեալ հայէին, ի հանդերձեալսն սքաղնուին, եւ բանքն եւ արդիւնքն մեծամեծ միտս տային ստանալ նոցա. զի զայր մի յետ երեսուն ամի իջեալ յանապատէ տեսանէին, որ յամենայն պատուոյ մարդկեղէն հրաժարեալ էր: Եւ զԵսայի եւս վկայ ունէր եւ այսպէս քարոզէր, թէ Սա է, որ գալոցն էր, զոր յառաջագոյն քարոզեաց, թէ՝ «Զայն բարբառոյ յանապատի»[2], որ լուսաւորէր զամենայն անապատն. զի այնպէս փոյթ ունէին մարգարէքն: Զի ոչ միայն զՏէրն իւրեանց, այլ եւ որ

1 Մարկ. Ա 4
2 Եսայի Խ 3

սպաս Նմա ունելոց էին, քարոզէին, նաեւ զտեղեացն, որ չրջելոցն էր, քարոզէին եւ զքարոզութեանն աւրինակ եւս յայտնէին եւ զողորմութեանցն եւս, որ ի Նմանէ լինելոց էր, գուշակէին, եւ զժամանակն յայտ առնիցեն, որ ինչ ի Նմանէ ուղղութիւնքն լինելոց էր, յայտնիցէ [...][1]: Զիարդ մարգարէն եւ Մկրտիչն ընդ նոյն միտս գնան, զի մարգարէն ասէ. «Պատրա՛ստ արարէք զճանապարհս Տեառն եւ ուղի՛ղ արարէք զշաւիղս Աստուծոյ մերոյ»[2]: Եւ Մկրտիչն ասէ. «Արարէ՛ք պտուղ արժանի ապաշխարութեան»[3]՝ հանգոյն այնմ, թէ՝ «Ուղի՛ղ արարէք զճանապարհս Տեառն», եւ զի կարապետել եկն եւ ճանապարհորդել եւ ոչ պարգեւս չնորհել թողութեան, այլ պատրաստել զոգիս առ ի յընդունել զամենեցունցն Աստուած: Իսկ Ղուկաս զբոլոր մարգարէութիւնն ասէ, թէ՝ «Ամենայն ձորք լցցին եւ բլուրք, որք խոնարհեսցին»[4], այլովքն հանդերձ: Տե՛ս զիարդ զժողովելոցն ի մի վայր եւ ի լաւութիւն փոխելոցն գուշակեաց եւ զդիւրութիւն չնորհացն, թէպէտ եւ աւրինակաւ իմն դնէ, զի մարգարէութիւն էր. խորս լցեալս զխոնարհս բարձրացեալս կոչէ եւ բլուրս զբարձացեալս խոնարհեալս եցոյց եւ զաւրինացն դժուարինս ի հաւատոցն դիւրութիւնս փոխեալս. զի ոչ ինչ եւ քրտանց պէտք են, այլ հաւատոց միայն ի թողութիւն մեղաց: Ապա յետոյ զպատճառս իրացն ասէ, թէ՝ «Տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ մերոյ»[5]. ոչ միայն հրեայքն, այլ եւ ամենայն աշխարհ: Իսկ դժուարինս զչար կեանս մարդկան ասէ՝ զպոռնիկս, զմաքսաւորս, զկախարդս, որ յառաջ վրիպեալքն էին եւ յետոյ եկին յուղիղ ճանապարհն՝ ըստ այնմ, եթէ՝ «Մաքսաւորք եւ պոռնիկք յառաջեսցեն քան զձեզ արքայութիւն Աստուծոյ»[6], եւ գայլք եւ գառինք որպէս լծոնք(՞) եւ ձորք եւ հարթ ճանապարհ եկին, նոյնպէս եւ գայլք եւ գառինք զմի կրաւնս ընկալան, եւ զպատճառս իրացն ցուցանէ, եթէ՝ «Որ կանգնելոցն է իշխան հեթանոսաց, ի Նա յուսասցին հեթանոսք»[7], հանգոյն այնմ, թէ՝ «Տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ»[8], զի ցուցցէ, թէ

1 1 բառ
2 Եսայի Խ 3
3 Մատթ. Գ 8
4 Ղուկ. Գ 5
5 Ղուկ. Գ 6
6 Մատթ. ԻԱ 31
7 Եսայի ԺԱ 10
8 Ղուկ. Գ 6

յամենայն ծագս երկրի [...][1] առցու աւետեացն զաւրութիւն եւ գիտութիւն, զի ի վայրենի գազանութենէն եւ յանասնութենէն ի սգաւորութիւն եւ ի հանդարտութիւն փոխելոց են:

«Եւ Յովհաննէս,- ասէ,- ունէր [հ]ագներձ ի ստեւոյ ուղտու եւ գաւտ[ի] մաշկեղէն»[2]:

Զի մարգարէքն էր ինչ, զոր ասացին, եւ էր ինչ, զոր աւետարանչացն թողին. զգեստին աւրինակն, զոր Մատթէոս գրեաց առ ի յիշատակ ածել զհրեայսն մեծին Եղիայի եւ եւս մեծագոյն քան զնա, զի նա ի քաղաքս բնակէր եւ կերակուր ճաշակէր, եւ սա ի խանձարրոցն յանապատի բնակէր՝ ոչ ինչ ճաշակելով. զի պարտ էր կարապետին, որ զհին ամենայն լուծանելոց էր, զաշխատութիւնն, զանէծս, զքրտունսքն աւրինակ ինչ այսպիսի յանձին ցուցանել, զի ո՛չ երկիր գործէր եւ ո՛չ քրտամբ երեսաց ուտէր, այլ դուզնաքեայ սեղանով եւ հանդերձիւ վարէր. զի ո՛չ տան եւ ո՛չ սեղանոյ կարաւտէր, այլ հրեշտակական կեանս ի մարմնի ցուցանէր, որպէս Ադամ, մինչ չեւ էր յանցեալ. զի ապաշխարութեան եւ արքայութեան էին աւրինակ այնպիսի կեանք, եւ հրեշտակաց նմանութիւն ի մարմնի ցուցանէր: Եւ այն յայնժամ, մինչդեռ ո՛չ մեղք լուծեալ էին, եւ ո՛չ անէծք՝ բարձեալ, եւ ո՛չ Հոգին՝ իջեալ, զոր եւ Քրիստոս հրաշանալով ասէր. «Զի՞նչ ելէք տեսանել յանապատի»[3]: Նա զի եւ ունէր մեծն ի ծնունդս կանանց զբնաւ խոնարհութիւն եւս եւ սգեստուն տեսակաւ՝ յաւրինակ խոնարհութեան մեծին Կուսորդւոյն եւ վասն մեր թափելոյ հովիւն առ ոչխարս համարեալ: Սակս որոյ մնայր Կարապետն կտրելոյ ոչխարին, որով սգատես սգեստիւն սպասէր սգեցուցանողին զաշխարհս զերծուլ ի նմանէ զքուրձն աւրինակաւն, որ զաւետիսն անդր ի դժոխս ընկալաւ զլոյս ի յարուցելոյն զգեցեալ եւ իբրեւ զաւթոց արկէր: Մարգարէութիւն՝ առ Յովհաննէս, եւ խորհուրդք մարգարէութեանն՝ առ Տէրն Յովհաննու: Որպէս քահա[նայութիւնն՝ առ] որդին Զաքարիայ, եւ արքայութիւն եւ քահանայութիւն՝ առ Որդին Մարիամու, աւրէնք՝ ի ձեռն Մովսէսի, նշան Գառինն հանդերձ բազում խորհրդովք. Ամաղէկ եւ ջուրքն, որ քաղցրացան, եւ աւձն պղնձի եւ ճշմարտութիւն՝ ի ձեռն Տեառն մերոյ: Մկրտութիւնն Յովհաննու բարձրագոյն էր քան զաւրէնսն եւ խոնարհագոյն էր քան զՔրիստոսին: Զի ոչ եթէ անուամբք մկրտէր ոք մինչեւ ի ժամանակ վերանալոյ նորա: Եւ Յովհաննէս յանապատ ո՛չ զի

1 1 բառ
2 Մատթ. Գ 4
3 Մատթ. ԺԱ 7

եղիցի նա անդ ամեհի, այլ զի ցածուացէ յանապատին անդ զամեհութիւն չինին, զի ցանկութիւն այն, որ ի մէջ չինին խաղաղութեան իբրեւ զգազան ամեհաբար խռովեալ լինի, յորժամ ելանէ յանապատ, ցածնու եւ հանդարտէ, հաւանեցուցէ զքեզ ցանկութիւնն Հերովդի, զի ամեհաբար ի մէջ չինի խաղաղութեան ի վերայ կնոջ եղբաւր իւրոյ առանց աւրինաց մոլեգնեալ լինէր, զի ապականեսցէ նա զհեզութիւն զգաստութեանն Յովհաննու՝ այն, որ խաղաղութեամբ ի մէջ անապատի եւ ոչ ըստ աւրինաց անգամ ամուսնացաւ նա: Այլ զի մի՛ դատեալ լիցի Յովհաննէս ի նոցանէ, թէ Եղիա կառաւք սրբովք վերացաւ, եւ զնորա գլուխն աղջիկն պղծալից սկտեղք երարձ: Վասն այսորիկ մուտ Եղիշա կաց ի միջի ի մէջ Յովհաննու եւ Եղիայի: Յորժամ կամիցին, թէ սուտ արասցեն զՅովհաննէս, կշտամբեալ յանդիմանեսցէ զնոսա Եղիշա, որ ստոյգն է նոցա, զի հաւատան նոքա, թէ կրկին ընկալաւ նա զհոգի վարդապետին իւրոյ: Թէ այդպէս իցէ, երկիցս անգամ երկու կառաւք պարտ էր Եղիշայի վերանալ ընդ երկինս, թերեւս՝ ընդ երկնից երկինս: Այլ յայտ է, թէ զաւրութիւնս Եղիայի տուաւ նմա գործովք իւրովք ոչ եթէ ամենեքեան, այլ ինքեանք տիպքն գործոցն, ապա թէ ոչ լինէր մեկն[ութ՞]իւն աւգտութեանն եւ եթէ ոչ էր արարեալ, կրկին ոչ լինէր երեւեալ առաւելութիւնն, զոր ընկալաւ: Արդ, այնոքիկ, որ առ Տէր մեր առաքեցան հարցանել զնա, թէ՝ «Որո՞վ զաւրութեամբ առնէս դու զայդ»[1], նոյնք առաքեցին առ Յովհաննէս: Եւ քանզի ոչ եկն նա ուսուցանել, զապստամբողս ոչ յայտնեաց. զի ոչ եթէ իբրեւ մարդք, որ կամին ուսուցանել զճշմարտութիւնն, թէ ով է Յովհաննէս, այլ պատուհասելով պատուհասէին զնա. դու ո՞վ ե[ս], ասեն, որ զայս առնես, եւ նա ոչ ետ նոցա պատասխանի՝ [ոչ] իբր ուսուցանելեաց, այլ իբրեւ ապստամբողաց: Եւ զամենայն ինչ, զոր ինչ մի անգամ հարցին ցնա, ասէ ցնոսա՝ «Չեմ ես Քրիստոսն եւ ոչ Եղիա եւ ոչ մարգարէն, այլ Ձայն»[2], որ[պես]զի ոչ Յովհաննէս եւ մարդ, եւ իբրեւ մարգարէ էր նա եւ Եղիա եւ Քրիստոս, այլ ա[յնո]քիկ, որք հարցինն ցնա, ոչ էր նա եւ ոչ մի յայտնէ: Որպէս եւ Տէր մեր ասաց ոմանց, թէ՝ չեմ դատա[ւ]որ, իբրու դատաւոր էր Նա: Եւ ոմանց ասէ՝ չեմ բարերար, իբրու բարերար էր, զոր աւրինակ բախէ ձայն քարոզ լուսոյ ի դուռն լսելեաց այսպէս ծագել ճրագի ի դուռն բբաց, որպէս եւ գիրք ընկեր ձայնի. զի մի են ճրագ եւ հաւ, որպէս Եղիա եւ Յովհաննէս. հաւ ձայնիւ իւրով լսելի առնել մեզ խորհուրդ ձայնի Յարուցչին մերոյ, եւ ճրագ ի ծագել իւրում ցուցանէ մեզ

1 Մատթ. ԻԱ 23
2 Յովհ. Ա 25

զխորհուրդ լուսոյ Լուսատուին մերոյ: Վասն այսորիկ ի մէջ երկոցունց կոփեցին զխաւար խորհուրդ Հաւր եւ Որդւոյ, զի կոճոպեցին զչարութիւն եւ խորհուրդ մարգարէից եւ առաքելոց, զի յերկոցունց կողմանց արեգականն զաւրացեալ լինին: Այլ տե՛ս դու, զի եւ ճրագ յայտ առնէ այրիչ բերանոյն իւրոյ, եթէ խորհուրդ է նա Եղիայի, որ այրեաց զչարագործս լեզուաւ իւրով եւ պասքեցոյց զնոսա ի ջրոյ, ի կիզումն բան իւրոյ տայ եւ հաւ խաւսի ի լուութեան գիշերոյ. խորհուրդ է Յովհաննու, որ քարոզէր ի լուութեան անապատին, այլ ընդ գալ ճրագին ընդ երեկոյս ոչ գտանի ընդ նմա հաւ, որ խաւսի ընդ առաւաւտս, այլ ընդ ձայն լուսանալոյն գտեալ լինի ճրագն երեկորին, զի վկայեսցէ վասն գալստեանն Եղիայի, զի եղեւ խորհրդիւ ընդ Յովհաննէս: Արդ, ձայն Յովհաննէս է, այլ բան, որ գնայ ի մէջ ձայնի, Տէր մեր է: Արդ, ձայնն զարթոյց զնոսա, ձայն աղաղակեաց եւ զարթոյց զնոսա, եւ բանն զպարգեւս իւր բաշխեաց նոցա ըստ մեղաց, սոյնպէս եւ՝ խրատ. փոքր մի ամպարշտեցան, սակաւիկ խրատեաց զնոսա: «Եւ կոտորեսցէ,- ասէ,- զոստն անտառին փայտատաւ»[1]. ասաց Եսայի «զոստս» եւ ոչ զարմատս: Արդ, զի լցաւ չափ մեղաց նոցա, եկն Յովհաննէս եւ խլեաց. հան զարմատս ծառոյն:

«Ահաւասիկ հասեալ է,- ասէ,- տապար առ արմին ծառոյ»[2]՝ զայն, զոր Եսային եթող:

Եւ երբ եղեւ այս, այլ ի ծագել[3] ճշմարտին՝ այն, որ անուանեցաւ ի գաւազան եւ ի ծաղիկ, եւ հանգեաւ ի վերայ Նորա Հոգին. այն, որ եւթն մասամբ կոչեցաւ: Եւ զի ասէ՝ «Ի քարանց աստի յայսցանէ կարող է Աստուած յարուցանել որդիս Աբրահամու»[4], այսինքն՝ երկրպագուաց քարանց եւ փայտից: Իբրեւ զայն, զի ասէ. «Հայր ազգաց բազմաց ետու զքեզ»[5]: Պահեաց Յովհաննէս զանձն իւր յամենայն մեղաց, զի այն մկրտելոց էր, որ առանց մեղաց է: Մի՛ զարմանար, Յովհաննէ՛ս, զի մկրտես դու զԻս, ուր մկրտութիւն իւղոյ ի կնոջէ կայ Ինձ ընդունել, «զի յաւրն,- ասէ,- պատանաց իմոց պահեսցէ զայդ»[6], եւ մահ նորա մկրտութիւն կոչեցաւ: Խաւսեցաւ Եղիազար զՌեբեկայ ի վերայ աղբեր ջրհորոյն Յակովբ՝ զՀռաքեղ ի վերայ աղբեր ջրհորոյն, Մովսէս՝ զՍիփորայ ի վերայ աղբեր ջրհո-

1 Հմմտ. Եսայի ԻԷ 10:
2 Մատթ. Գ 10
3 ձեռագրում ճագել
4 Մատթ. Գ 9
5 Մնունդ. ԺԷ 5
6 Յովհ. ԺԲ 7

բոյն: Արդ, ամենեքեանս [այս] աւրինակ եղեն Տեառն մերոյ, զի խաւսեցաւ զԵկեղեցի Իւր մկրտութենէ անտ ի Յորդանանու, զոր աւրինակ ցոյց յականէ Եղիազար Ռեբեկա զիսահակ տէր իւր, մինչդեռ գայր ի դաշտի անդ ընդառաջ նորա, սոյնպէս եւ Յովհաննէս ցոյց յականէ Յորդանան գետոյ զՓրկիչն մեր: «Ահաւասիկ,- ասէ,- Գառն Աստուծոյ, Սա է, որ գայ բառնալ զմեղս աշխարհի»[1]: Եւ տեսեալ զբազումս ի սադուկեցւոցն եւ ի փարիսեցւոցն եկեալս մկրտութիւն, ասէ.

«Մո՛ւնդք իժից, ո՞ եցոյց ձեզ փախչել ի բարկութենէն, որ գալոցն է»[2]:

Եւ ընդէ՞ր յանդիմանէր. զի ոչ եթէ ճշմարտութեամբ գային ի հաւատս, այլ ի կեղծիւք առ աչս ժողովրդեանն: Եւ նա հոգւով տեսանէր զկեղծիս նոցա՝ յայտնութեամբն Աստուծոյ: Եւ զայս Քրիստոս յայտ առնէ, եթէ Յովհաննու ոչ հաւատացին, նաեւ հարք նոցա կարծիս տային մարգարէիցն ունկնդիր լինել, այլ ոչ ճշմարտութեամբ: Որպէս ի Բաբեղովն առ Եզեկիեղ ժողովեալ ծերոցն կեղծաւորութեամբ հարց ունել ի նմանէն: Վասն որոյ ասէր Աստուած ցմարգարէն, թէ՝ «Կենդանի եմ Ես Տէր»[3]. թէ տայց քեզ բան խաւսել դոցա: Նաեւ աւրինագրին ասէին ունկնդիր լինել, այլ ոչ ումեք եղեն ունկնդիր. զի զորմէ նոքայն մարգարէանային, զայն ոչ ընկալան, զի թէ հաւատացեալ էր, ասէ, ձեր Մովսէսի, ապա եւ Ինձ հաւատայիք: Եւ իբրեւ հարցան ի Քրիստոսէ, թէ՝ «Մկրտութիւնն Յովհաննու ուստի՞ էր», ասեն՝ «Ոչ գիտեմք»[4]: Եւ այսու յայտ է, թէ եկին եւ մկրտեցան եւ ոչ հաւատացին հաստատապէս ի քարոզութիւն նորա: Եւ Յովհաննէս յայտ առնէ, որովք առաքեցինն առ նա, թէ՝ «Դու ո՞վ ես. Եղիա՞ ես, թէ՞ մարգարէն»[5]: Եւ որք առաքեցինն, ի փարիսեցւոցն էին եւ կամէին բանս հանել ի նմանէ նենգութեամբ, զի Քրիստոս յայտ էր, թէ Բեղղահէմէ գալոց է, յազգէն Դաւթի, իսկ նա ղեւտացւոցն է: Եւ նոքա հարցանելովն, որով առ[ի]թ իմն կազմէին վասն ոչինչ յորոց կարծէինն, եւ եղեւ խոստովան, եւ նոքա ասէին. «Դու ընդէ՞ր մկրտես, զի չես Քրիստոսն»[6]: Իսկ ժողովրդեանն այլ իմն էին միտք. զի նոքա խոստովան լինէին նախ զմեղս իւրեանց եւ ապա մկրտէին: Իսկ փարիսեցւոցն ոչ այսպէս, վասն որոյ ասէր համարձակութեամբ

1 Յովհ. Ա 29
2 Մատթ. Գ 7
3 Եսայի ԽԹ 18
4 Մատթ. ԻԱ 25
5 Յովհ. Ա 21
6 Յովհ. Ա 25

«ծնո՛ւնդք իժից» այնոցիկ, որ ծարաւի էին արեան մարգարէիցն եւ չէին ինչ ընդհատ յաւէից: Վասն որոյ զնոսա եւ զծնողս նոցա բազում համարձակութեամբ կշտամբէր, զի ոչ յերեւելիս նոցա հայէր, զի պնդեալ եկեալ էին առ Նա, այլ զգաղտնիս նոցա տեսանէր Հոգով, զի մեծամտեալ ի հարսն պարծէին, եւ այն էր նոցա կորստեան պատճառք: Վասն այնորիկ զարմատս հպարտութեանն կոտորէ: Որպէս եսայի, «իշխանք սոդովմայեցւոց»[1] կոչէր զնոսա, եւ այլ ոմն՝ «իբրեւ զորդիս այլազգեաց էք դուք»[2]: Եւ այսպէս ամենեքեան. մերժեն զնոսա այսպիսի կարծեաց եւ զհպարտութիւնն, որ բազում չարեաց էր նոցա պատճառք, ցածուցանեն: Եւ այս յաւժարութիւն տալոյ էր նոցա եւ ոչ յանդիմանելոյ: Եւ ցուցանէ նոցա, թէ յառաջն յորպիսի չարիս կային եւ յանհնարին մեղս եւ յորպիսի մեծամեծ եւ ի սքանչելի չնորհս փոխեցան: Եւ զի «որդիք իժից» էին եւ բազում չարեաւք սնեալք եւ ապաշխարեցին: Արդ, աստ է եւ այնչափ փոփոխուն նոցա, զի զխիստ եւ զանբժշկելի բարս կակղեաց: Տե՛ս, զիարդ գեհենին անուամբն մորմոքեցուցանէ, զի չասաց, որում իւիք սովորէին, թէ ով եցոյց փախչել ի պատերազմաց կամ ի գերութենէ եւ ի սովոյ այլ այլ իմն տանջանս, զոր ոչ երբէք լուեալ էր նոցա զգեհենէն, յիրաւի եւ «ծնունդս իժից» կոչեաց զնոսա, զի գազան այն սպանանէ զծնողն եւ ուտէ զորովայն ծնունդին եւ ապա ելանէ ի լոյս: Որպէս եւ նոքա զծնողս իւրեանց սպանանէին եւ զվարդապետս իւրեանց: [Բայց] ոչ զպատուհասն միայն յաճախէր, այլ եւ խրատ եւս, թէ՝ «Արարէ՛ք պտուղ արժանի ապաշխարութեան», զի չէ բաւական փախչելն միայն ի չարեացն, այլ եւ առաքինութիւն բազում եւս ցուցանել. մի՛ ասէ զհակառակսն, որպէս սովորէք սակաւ մի կարճել ի մեղացն եւ անդէն ի նոյն դառնալ ոչ զնոյն խնդրեմ, որպէս առաջի մարգարէիւքն առնէիք: Նոր է այս եւ բարձրագոյն, զի նոյն Ինքն Դատաւորն գայ, որ Տէրն է արքայութեանն եւ մեծամեծ սգաստութեամբ յերկինս կոչէ եւ յայն հրահանգս ձգէ: Վասն որոյ զարքայութենէ եւ զգեհենէ ճառէ, զի պատիժքն եւ պարգեւքն անմահականք են: Մի՛ այսուհետեւ ի նմին չարիս կայցէք եւ զնոյն սովորական պատճառսն պատճառիցիք, թէ զԱբրահամ հայր ունիմք եւ յիսահակ եւ Յակովբ պանծացեալ ի նախնեացն ազնուականութիւնն: Եւ այսու ոչ եթէ արգելոյր, զի մի՛ կոչեսցին որդիք սրբոցն, այլ զի մի՛ այսպիսի պանծանաւք ծուղայցեն յոգւոյն առաքինութեանցն, զի թէպէտ եւ զմտացն ծածուկս յայտ բերէր եւ զապառնիսն մարգարէանայր, սակայն ասէրն յետոյ, թէ՝

1 Եսայի Ա 10
2 Հմմտ. Նեեմ. Թ 2

«Մեք հայր զԱբրահամ ունիմք»[1]:

Եւ այս էր, որ ածէր զնոսա ի հպարտութիւն. նախ զայս կարճէ, թէ զպատիւ նահապետին ի մէջ բերէ եւ ապա զայսպիսի ուղղութիւն պահանջէ եւ չասէ, թէ ոչ կարէ աւգնել ձեզ նահապետն, այլ մեղսագոյնս առակով իմն ասէ, թէ՝

«Կարող էր քարանց յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու»[2]:

Ոմանք ասեն, թէ զհնթանոսաց ասէ, բայց ես այլ իմն ասեմ, թէ մի՛ կարծէք, թէ մեք կորնչիմք, անորդի լինի նահապետն, զի Աստուծոյ[3] *դիւրին է եւ ի քարանց առնել մարդիկ եւ տ[ալ նմա որդիս: Քան]զի եւ յառաջն այսպիսիս արար, զի ի քարանց մարդիկ առնէ, հանգոյն է այնմիկ յամուլ արգանդէ*[4] *տալ որդի, որպէս մարգարէին ասէր. «Հայեցարո՛ւք ի վէմն հաստատուն, յորմէ կոփեցարուք, եւ ի գուբ հրոյն, յորմէ փորեցայք»*[5]: *Յայսպիսի մարգարէութիւն հայեցեալ յիշեցուցանէր, որ յառաջումն այսպիսի զքանչելեաւք արար զնա հայր, զի յամուլ արգանդէն եւ յանցեալ հասակէն ետ նոցա որդի, զնոյն աստ կարող է առնել: Եւ տե՛ս, զի բնաւին հատանէ, ընկենու, զի ոչ ասաց, թէ «յարոյց», զի մի՛ անյոյս առնիցէ, այլ թէ՝ «կարող է», եւ ոչ ասաց, թէ կարող է ի քարանց մարդիկ առնել, այլ զդիւրինն, թէ՝ «յարուցանել»: Եւ կարճեաց զնոսա ի մարմնաւոր պարծանացն, զի մի՛ նախնեաւքն, այլ անձանց ապաշխ[ար]ութեամբ հասցեն փրկութեան: Եւ խոտէ զմարմնոյ ազնուականութիւնն եւ յարգէ զհոգւոյս առաքինութիւնս: Եւ տե՛ս, զիարդ յաջորդովքն աճեցուցանէ զերկիւղն, զի յորժամ ասաց, թէ կարող է ի քարանցս որդիս Աբրահամու յարուցանել, անդ է, ասէ, «Ահաւասիկ տապար առ արմի ծառոյ կայ», եւ ահագին զբանն առնէ եւ Իւրով բարձրագոյն վարուքն համարձակագոյնս զնոսա մորմոքեցուցանէ, զի ի բազում ժամանակաց հետէ էին խոպանացեալք: Զինչ ասիցեմ, ասէ՝ թէ անկանելոց էք ի նահապետին ազնուականութենէ եւ զայլս ի քարանց տեսանիցէք լեալ որդիս նախնին. ոչ զայս միայն աղէտս տեսանիցէք, այլ եւ այլոց եւս մեծամեծ տանջանաց լինիցիք պատժապարտք: Ահաւասիկ, «տապար առ արմին ծառոյ կայ». չիք ինչ ահագին քան*

1 Մատթ. Գ 9
2 Մատթ. Գ 9
3 ձեռագրում՝ Տէր
4 ձեռագրում արգարդէ
5 Եսայի ԾԱ 1

զայնպիսի բանք, զի ոչ եւս գերանդի թռուցեալ եւ ոչ ցանկոյ քակեալ եւ ոչ կոխան անցաւորաց լեալ, այլ [տապար սր]եալ եւս[1] *ահագին, զի եւ ի դուրս եւս եկեալ հասեալ են, զի մարգարէիցն բազում անգամ չհաւատային եւ ասէին, թէ՝ «Ուր իցէ աւր Տեառն, եկեսցէ հասցէ խորհուրդ սրբոյն Իսրաիլի, զի գիտասցուք»: Եւ զի բազում ժամանակս կարծէին զկատարումն իրացն, յայտ առնէ, թէ մերձ են չարիքն՝ ասելովն, թէ՝ «Ահաւասիկ առ արմին դնի», եւ ոչ ասաց, թէ՝ առ ոստս կամ առ միրգս, այլ առ արմին, զի թէ ծուղանայցեն, առանց բժշկութեան առնին վէրքն եւ անյոյս եւ առանց ողջանալոյ են ցաւքն, զի ոչ եթէ ծառայ ոք է, որ դատելոց է իբրեւ զառաջինսն, այլ Ինքնին Տէրն ամենեցուն, որ զանհնարին պատիժն ածէ ի վերայ եւ թէպէտ երկեցոյց, այլ ոչ եթող անյոյս լինել որպէս վերագոյնն: Ոչ ասաց, թէ «յարոյց որդիս Աբրահամու», այլ թէ «կարող է», զի երկեսցուսցէ միանգամայն եւ մխիթարեսցէ: Նոյնպէս եւ աստ. ոչ ասաց, թէ «մխեցաւ յարմատն», այլ թէ «մերձ է» եւ «դնի առ արմին» եւ ոչ է յապաղելոց: Եւ թէպէտ եւ այնպէս մերձ է, սակայն զձեզ արար տեարս կորելոյ եւ ոչ կարելոյ, զի եթէ լինիցիք պիտանացու, ոչինչ մեղանչէ ձեզ տապարն, ապա եթէ ի նմին չարիս կայցէք, արմատաքի տակակոտոր խլէ զծառն: Վասն որոյ ոչ վերացեալ եւ միւսովն, թէ ի սակաւ ժամանակս կարող էք դառնալ եւ լեալ: Վասն այսորիկ յամենայն կողմանց աճեցուցանէ զեկիւղն, զի զարթուցեալ ածցէ յապաշխարութիւնս, զի նախնեացն անկանել եւ այլոցն փոխանակ նոցա մտանել եւ չարիքն ի դուրս հասեալ եւ զանհնարինսն կրեալ: Եւ զայս՝ամենայն տապարովն եւ արմատովն, յայտ է, թէ անհնարին անկելիցն մարթ է յառնել եւ ստանալ առաքինութիւն: Որպէս եւ Պաւղոսի առեալ ի մարգարէէն ասէ, թէ բան մի հակիրճ եւ համառաւտ արար Տէր ի վերայ երկրի եւ ի վերայ ամենայն տիեզերաց: Արդ, մի՛ անյոյս լիցիս, զի գոյ յոյս դառնալոյ, զի ոչ եթէ ամպ, որ կոտորէ տապար, եւ ոչ վասն այնորիկ եկն, զի կտրեսցէ, ապա թէ ոչ, զի՞նչ էր, որ արգելոյր ի կտրելոյ, այլ եկեալ հասեալ առ արմատն եւ զտեղի [առե]լ, զի զքեզ երկիւղիւն արասցէ պիտանասցու առ ի յաճախել [զպ]տուղս արդարութեան: Եւ յայտ յաջորդաւն առնէ, թէ ասէ.*

«Այն ծառ, որ ոչ առնէ պտուղ քաղցր, հատանէ եւ ի հուր արկանի»[2]:

1 ձեռագրում թերեւս
2 Մատթ. Գ 10

Եւ ամենայն ասելով՝ հանէ, մերժէ զպարծանսն ի նախնիսն պանծացելոցն. զի թէեւ նորին իսկ Աբրահամու իցես, ասէ, որդի եւ բիւրս բիւրոց համարեսցին նահապետս ունել, կրկին պատիժս կրիցես վասն անպտղութեանն: Եւ այսպիսի բանիւք եւ զմաքսաւորս երկեցոյց եւ զզինուորսն ստրջացոյց, այլ չարար անյոյս եւ զծուղութիւնսն պնդեաց երկիւղիւն եւ զմխիթարութիւնն չեբարձ ի միջոյ՝ ասելովն, թէ «ծառս, որ ոչ առնէ պտուղ քաղցր, ի հուր արկանի». եցոյց, եթէ որ առնէ պտուղ քաղցր, ապրի ի պատուհասից: Եւ զիարդ ասեն՝ կարիցեմք առնել պտուղ ինչ, զի աւանիկ եկեալ կայ տապար առ արմին, զի ժամանակն կարճեալ է, եւ կէտն՝ հասեալ. կարող էք, ասէ, զի ոչ այնպիսի ինչ է պտուղ այս, որպէս ծառոցն, եթէ ժամանակաց կարաւտանայցէ եւ աւղոց փոփոխմանց: Այլ աստ կամացն եւեթ պիտոյ է եւ վաղվաղակի ծաղկառ եւ պտղով զարդարի, զի ոչ միայն արմատն եւ պտուղն ծառոյն, այլ եւ ճարտարապետ մշակն առնէ յանկարծահաս վաղեփեաց զպտուղն: Եւ զի մի՛ ասիցեն, թէ դու աւանիկ քար ու վրէժ եւ անյոյս առնես: «Տապար,- ասես,- առ արմին ծառոյ դնի», եւ մեք զիարդ ժամանակի պատժոցն կարիցեմք պտղաբերք լինել, ցուցանէ դիւրաւ զպտղաբերութիւնն:

«Ես,- ասէ,- մկրտեմ զձեզ ի ջուր: Իսկ որ զկնի իմ գալոց է, զաւրագոյն է քան զիս, Որում չեմ արժանի թէ լուծից զխրաց մի կաւշկացն, Նա մկրտեսցէ զձեզ ի Հոգին Սուրբ եւ ի հուր»[1]:

Եւ այսու յայտ առնէ, թէ կամաց եւեթ պէտք են եւ հաւատոց եւ ոչ աշխատութեանց կամ քրտանց: Եւ որպէս դիւրագոյն է մկրտելն, նոյնպէս դիւրագոյն է նորոգելն եւ լինել առաքինի: Զարհուրեցոյց զնոսա դատաստանին ահիւ եւ տանջանաց համբաւուն անուամբ տապարին: Եւ խոտելով ի հարցն պարծանաց եւ մտանել այլոց փոխանակ նոցա, եւ կրկին պատժովք կտրեսցի, ասէ, եւ ի հուր անկցի: Եւ յամենայն կողմանց կակղեաց զխստութիւն նոցա եւ յաւժարեցոյց ի ցանկութիւն ազատանալ ի չարեաց: Ապա բերէ ի մէջ եւ զՔրիստոսի ճառս մեծաւ առաւելութեամբ, զի ցուցցէ, թէ որչափ ինչ է ի մէջ նորա եւ Այնր, զՈր քարոզէր. եւ զի մի՛ ոք կարծիցէ, թէ պաշտաւն ինչ ունելով յարգէ զՔրիստոս, ասէ. «Եւ ոչ գիտէի զնա»: Եւ ոչ նախ զայն ասաց, թէ՝ «Չեմ արժանի լուծանել զխրաց կաւշկաց Նորա», այլ նախ զնուազութիւն իւրոյ մկրտութեանն եդեալ ցուցանէ, թէ ոչ ինչ աւելի էր, այլ միայն յապաշխարութիւն, զի եւ ոչ իսկ ասաց, թէ՝ ես մկրտեմ ի ջուր թողութեան, այլ՝ յապաշխարութիւն: Եւ սոյն

1 Մատթ. Գ 11

իսկ այս անճառ պարգեւաւք լինէր, զի մի՛ յորժամ լսիցեն, թէ՝ յետոյ իմ գալոց է, կարծիցեն, թէ՝ յետոյ քան զիս լեալ իցէ: Տե՛ս, որպիսի զաւրութիւնս պարգեւաց ունէր ընդ իւր եւ խելամուտ լեր հաստատութեամբ, թէ ըստ առաւելութեան զաւրութեան ոչինչ կարասցի արժանի ասել: Նաեւ ոչ այն ինչ է, զոր ասացին, եթէ՝ «Ոչ եմ արժանի լուծանել զխրացս կաւշկաց Նորա»: Եւ մի՛ յորժամ զայն լուիցես, թէ զաւրագոյն քան զիս է, համեմատութիւն իբրեւ մեծի ընդ փոքու կարծիցես զՆորայն ընդ իս, զի եւ ոչ ընդ [ծառ]այս անգամ արժանի եմ մի կարգ անկանել, նաեւ ոչ [ընդ] յետին իսկ ծառայս եւ ոչ սակաւ ինչ մասն սպասաւորութիւն յանձին ցուցանել: Վասն որոյ ոչ ասաց, թէ՝ զկաւշկս, այլ թէ՝ «եւ ոչ խրացս կաւշկացն»: Եւ զի մի՛ համարեցիս(՞), եթէ խոնարհութեան ինչ բանք իցեն, ածէ զնովիմբ զիրացն հաստատութիւն: «Նա,- ասէ,- մկրտեսցէ[1] զձեզ ի Հոգին Սուրբ եւ ի հուր»: Տեսանես զիմաստութիւն Մկրտչին, զի յորժամ ինքն քարոզէ, ահաւորս եւ մեծամեծս բարբառի, եւ յորժամ առ Տէրն առաքիցէ՝ քաղցրունս եւ ախորժականս, զի ո՛չ տապար ի մէջ բերէ եւ ո՛չ ծառոյ կտրելոյ եւ ի հուր արկանելոյ եւ ո՛չ զհանդերձեալ բարկութենէն, այլ զմեղաց թողութենէ եւ զառ ի պատժոցն ազատութենէ եւ զարդարութենէ եւ զսրբութենէ եւ զլուսանալոյ յաղտոյ եւ զորդեգրութենէ եւ զեղբայրութենէ եւ զժառանգութենէ եւ զհաղորդակից լինելոյ եւ զառատութենէ Սուրբ Հոգւոյն պարգեւաց: Յայս ամենայն հայեցեալ՝ ասէ. «Նա մկրտեսցէ զձեզ ի Հոգին Սուրբ»: Եւ այսու այլափոխ բանիւ զառաւելութիւն պարգեւացն յայտ առնէ, զի ոչ ասաց, եթէ տացէ ձեզ Հոգին Սուրբ: Եւ պատմութեամբ հրոյն դարձեալ զ[յ]որդութիւն եւ զանարգել չնորհացն ցուցանէ: Եւ արդ, մի՛ դիր, զինչ ինչ համարէին լսողքն լինել, այլ ըստ մարգարէիցն դառնալ վաղվաղակի եւ նորոգել ըստ մեծամեծացն եւ ըստ արդարոցն, վասն որոյ եւ զանուն հրոյն յիշեցուցանէր եւ զմիտս նոցա ի յիշատակ այնոցիկ, որով հրովն երեւեցաւ, տանիցի. զի գրեթէ եւ ամենայն իսկ մարգարէիցն ի կերպարանս հրոյ երեւեցաւ, որպէս Մովսէսի՝ ի մորենոջն եւ ժողովրդեանն՝ ի Սինէ եւ Եզեկիէլի՝ ի քրովբեան: Եւ տե՛ս, զիարդ զարթուցանէ զմիտս լսողացն այնու, զի նախ զայն դնէ, որ յետոյն լինելոց է, զի պարտ էր նախ Գառինն զենուլ եւ մեղացն մեռանել եւ թշնամութեան ի միջոյ բառ[ն]ալ եւ թաղիլ եւ յագնել եւ ապա հատանել Հոգւոյն Սրբոյ. այլ այսցանէ ոչ մի ինչ ճառեաց, այլ նախ՝ զվերջինն, վասն որոյ այն ամենայն լինելոց էր, եւ մանաւանդ բաւական իսկ այն էր, զի նախապատիւն նորա քարոզեցի, զի յորժամ լսիցէ

1 ձեռագրում մկտրեսցէ

լսողն, թէ Հոգի ընդունելոց է, թէպէտ եւ խնդրիցէ ի միտս՝ զիարդ կամ որով աւրինակաւ լինիցի այս, մինչդեռ տիրեալ կան մեղքն ի վերայ, մարթիցէ ընդունել Հոգի: Այլ նախ կրթեաց զլսողն, եթէ մկրտէ Հոգւովն եւ նորոգէ հրովն եւ ապա այնուհետեւ առանց գայթակղութեան ածէ զնոսա ի ճառս չարչարանացն: Վասն որոյ եւ յետոյ իսկ ասաց, եթէ՝ «Ահաւասիկ Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի»[1]: Եւ ոչ ասաց, թէ «թողու», այլ զառաւել գութ տեսչութեանն յայտ արարեալ, թէ «բառնայ», զի ոչ հանգոյն է թողուն այնմ, յորժամ յիւր անձն բառնայցէ, զի մինն առանց ճգանց լինէր, եւ միւսն՝ մահու չափ: Եւ դարձեալ ասէ, թէ «Որդի Աստուծոյ է», այլ եւ ոչ այսու յայտնի ինչ ցուցանէ լսողացն զպատիւն, քանզի չեւ եւս գիտէին, թէ արդարեւ Որդի իցէ Աստուծոյ: Բայց ի տալոյ զՀոգին եւ այսու եւս հաստատուն լինէր: Վասն այսորիկ եւ Հայր յորժամ առաքէրն զՅովհաննէս, այսպիսի իմն նշանս զպատուոյն զԱյնորիկ, որ գալոցն էր, տայր, թէ՝ «Յորոյ վերայ տեսանիցես զՀոգին, զի իջանիցէ եւ հանգչիցի, Նա է, որ մկրտէ ի Հոգին Սուրբ»[2]: Վասն որոյ եւ ինքն իսկ ասէ, թէ՝ «Ես տեսի եւ վկայեմ, թէ Սա է Որդին Աստուծոյ»[3], զի յայսմանէ եւ միւսն եւս յայտնագոյն հաստատուն լիցի: Ապա իբրեւ զախորժականսն ասաց: Եւ վարժեաց նոքաւք զլսողսն, յետոյ եւ պնդէ, զի մի՛ անկանիցին ի ծուղութիւնս, զի այնպէս էին ազգ հրէիցն. յախորժականսն դիւրաւ մեղկէին եւ ի փափկութեանն անպիտանք լինէին: Վասն որոյ ածէ զնովիմբ զահագինսն, թէ՝

«Որոյ հեծանոցն ի ձեռին է»[4]:

Վերագոյն զտանջանացն ճառէր, իսկ աստ ե՛ւ զդատաստանն մատամբ ցուցանէ, ե՛ւ զպատուհասն անմահ ընծայեցուցանէ՝ ասելով, թէ զ[յ]արդն անչէջ հրոյն պատրաստ իցէ: Տեսանես զնոյն Տէր իրացն, զնոյն եւ մշակ, թէպէտ եւ այլուր զՀա[ւ]]րէ ասիցէ, թէ՝ «Հայր Իմ մշակ է»[5], քանզի ածէ ի մէջ զճարտարապետն, զի մի՛ կարծիցես, եթէ վաստակոյ ինչ պէտք են, այլ իմն իրաց դիւրագոյն ցուցանէ, եթէ ամենայն աշխարհս Նորա է, զի մի՛ երեւեսցի, թէ զայնոսիկ միայն, որ Իւրն իցեն, տանջիցէ: Բայց յայժմ աւասիկ զամենայն խառնէ, զի սրբագոյն երեւեսցի ցորեան: Բայց այժմ ընդ [յ]արդին խառ[ն]եալ է

1 Յովհ. Ա 29
2 Յովհ. Ա 33
3 Յովհ. Ա 34
4 Մատթ. Գ 12
5 Յովհ. ԺԵ 1

ի կալն եւ ոչ յշտեմարանսն, զի յայնժամ լինի համառաւտ ընտրութիւն: Եւ արդ, ո՞ւր իցեն, որք ի գեհենէն թերահաւատ իցեն, թէ չիցէ գեհեն. զի երկուս իրս ի մէջ եդ, եթէ՝ մկրտեաց ի Հոգին Սուրբ եւ այրիցէ հրով զչհաւանեալսն. զի եթէ այն հաւատարիմ իցէ, յայտ է, թէ եւ այս եւս: Վասն այնորիկ եւ յաջորդաւն զերկուս կանխասաց իրս դնէ. զի որով եղեւ առժամայն եւ զմիւսն, որ առյապայն իցէ, առնիցէ հաւատարիմ, զի եւ բազում անգամ իսկ Քրիստոս աստի իրաւքս զհանդերձեալսն յայտ առնէ զտանջանաց եւ զարքայութեան: Որպէս եւ զՅովհաննէս յայտ առնէ զերկոսին զաստիս՝ եթէ մկրտէ ի Հոգիս, եւ հանդերձեալն՝ եթէ այրէ անչէջ հրովն, զի եթէ ոչ էր աստէն մկրտեալ զառաքեալսն եւ զհաւատացեալսն: Յիրաւի, թերահաւատ էիր հանդերձելոցն, զի եթէ որ դժուարագոյն թուէր, արար եւ առնէ հանապազ. զիա՞րդ դիւրագունիցն ոչ հաւատայցէք, զի թէ ասաց, թէ՝ «Մկրտեսցէ ի Հոգին Սուրբ»: Եւ զայսպիսի մեծագոյն պարգեւս խոստացաւ աստէն եւ կատարեաց եւ վերայ էած եւ զպատիժս հանդերձելոցն՝ ասելով, թէ՝ «Որոյ հեծանոցն ի ձեռին Իւրում»: Եւ զընտրութիւն ո՞ ի հանդերձեալն եցոյց, զի մի՛ բաւական համարիցին զմկրտութիւնն, թէ անպիտանք լինիցին, զի պիտոյ է յետ այնոցիկ զգաստութիւն եւ քաջութիւն: Վասն այնորիկ ի տապարէն ի մկրտութիւնն փախուցանէ եւ յետ մկրտութեանն շնորհաւք ի հեծանոցէն եւ յանչէջ հրոյն երկեցուցանէ: Եւ յառաջ քան զմկրտութիւնն ոչ առնէ այսպիսի ընտրութիւն, այլ մեկնագոյնս ճառէ, թէ՝ «Ամենայն ծառ, որ ոչ առնէ պտուղ, հատանի եւ ի հուր արկանի», այսինքն թէ՝ ամենայն անհաւատք ի հուր մատնիցին: Եւ այսպէս յետ մկրտութեանն այլ իմն որոշումն ի մէջ դնէ, զի բազումք յետ հաւատալոյն անարժանք գտանիցին: Վասն որոյ ահ արկանէ սպառնալեաւքն, թէ՝

«Որոյ հեծանոցն ի ձեռին Իւրում է, զցորեանն ժողովէ եւ զ[յ]արդն այրեսցէ»[1]:

Եւ զի ցորեանն եւ ցաւղուն միապէս սփռին ի միում կալի, եւ կամնասայլն հասարակաբար կոխեալ հասու զնոսա, այլ հատն ոչ ինչ վնասի ի կամնասայլիցն, այլ առաւել աւգտի, զի զցաւղունն ջախջախեալ ի բաց կորչէ եւ հողմով հոսեալ առնէ ճարակ հրոյ եւ անասնոյ: Սապէս եւ բարիք եւ չարք, արդարք եւ մեղաւորք հասարակաբար կեան ի միում աշխարհի: Եւ փորձութիւնք կամնասայլից եւ նեղութիւնք միապէս հասանէ ի վերայ ամենեցուն, այլ արդարոց եւ առա-

1 Մատթ. Գ 12

քինեաց ոչ ինչ կարէ վնասել, որպէս եւ ոչ կամեսայլն՝ ցորենոյն, այլ առաւել մաքրէ եւ սրբէ զարդարսն, որպէս զոսկի՝ հուր: Իսկ մեղաւորքն զաւրէն ցաւղնոյ տկարագունի մանրեալ եւ հողմակոծեալ հալածին ի ձայնէ կոչողին զարդարսն ի կեանսն: Եւ լինին կերակուր անհանճար, անասուն ցանկութեան աստէն: Եւ վասն այնորիկ նախ զզաւրութիւն Նորա յայտ արար ասելն, թէ մաքրէ Հոգւով եւ թողու զմեղս, զի աստէն եղելովքս հաւատայցեն եւ հանդերձելոց տանջանացն եւ յարութեանն եւ դատաստանին, եւ զայլն ամենայն ընդ սմին փակէր. զմահու՝ լուծումն, զմեղաց՝ բառնալն, զանիծիցն՝ ապականութիւն, զբազմաժամանակեան պատերազմացն՝ դիւրութիւն, ի յերկինս վերանալ, ի դրախտն մտանել, հրեշտակաց կաճառակից լինել, հանդերձեալ բարութեանցն հաղորդ լինել: Զի այս ամենայն այնց առհաւատչեայ էր, զի իբրեւ ասաց զայն եւ զմարմնոցն յարութենէ եւ զբարութեանցն, «զոր ակն ոչ ետես»[1]: Եւ այս ամենայն այնու շնորհաւք պարգեւեցաւ, աւելորդ էր վասն նշանաց, որ աչաւք տեսանէին, ճառել, այլ զայնցանէ, որ անյայտ էր, ճառէր, թէ Որդի է Աստուծոյ եւ անհամեմատութիւն՝ ի վեր քան զինքէնէ: Եւ եթէ բառնայ զմեղս աշխարհի, եթէ վրէժ ընդ գործոց պահանջիցէ, եւ թէ չիցեն աստէն եւեթ մերքս, այլ ըստ արժանաւորութեանն ընդունիցի իւրաքանչիւր ոք: Եւ այս ամենայն յանդիման առաջի երեսաց կայցէ, զի փոյթ յանձին կալցուք, մինչդեռ աստէնէ կալսցիցեմք, յորում կարողութենէ ցաւղնոյ ի ցորեան դառնալ, որպէս եւ ցորենոյ ի ցաւղուն դառնալ: Արդ, մի՛ փքասցուք ի վերայ նուաստից մեծութեամբ, զի եւ ցաւղուն քան զցորեան մեծագոյն է հասակաւ եւ տկարագոյն՝ զաւրութեամբ եւ խոտան եւ հրոյ պատրաստեալ: Եւ վասն այնորիկ ներէ ցաւղնոյն աստէն, զի սնուցիչ է ցորենոյ, որպէս եւ աշխարհակալք՝ արդարոց: Եւ գոյ յոյս դառնալոյ եւ լինել ցորեան՝ ըստ Տեառն բանի, թէ՝ թո՛յլ տուք որոմանդ, զի մի՛ զցորեանն ապաշխարութեանն խլիցէք[2], զի եւ մորենին փուշ էր, այլ զի ոչ պաշտեցաւ ի նմա դիւական բաջաղմունք վասն նուաստ տեսլեանն, սակս որոյ Աստուած բնակեաց ի նմա: Եւ խոնարհք, որ ոչ ունին զկերպարանք աշխարհի, հան[դ]երձողորմութեամբ եւ նուաստութեամբ ընդունին զԱստուած՝ բնակեալ յինքեանս:

«Եւ Ինքն Յիսուս էր,- ասէ,- ամաց իբրեւ երեսուն»[3] ի ժամանակ իբրեւ եկն Նա կնիք առնուլ ի Յովհաննէ. եւ այն վասն ամաւթոյ

1 Ա Կորնթ. Բ 9
2 Հմմտ. Մատթ. ԺԳ 30:
3 Ղուկ. Գ 23

մարկիովնացւոցն. զի թէ մարմին ոչ զգեցաւ, առ մկրտութիւն զի՞ մերձենայր, զի աստուածեղէն բնութիւն մկրտութեան չէ կարաւտ, եւ զի երեւնամեայ էր Նա. ո՞չ ահա զմարդկութենէ Նորա յայտ արար: Եւ զի ասէ՝

«Թո՛յլ տուր այժմ, զի կատարեսցուք զարդարութիւնս ամենայն»[1],

զի ընկալեալ լինէին փրկիչք եւ թագաւորք զաւծումն եւ զա[ւ]րէնս ի քահանայից, զոր աւրինակ զգեցաւ Նա մարմին եւ երեւեցաւ Նա իբրեւ կարաւտեալ, սոյնպէս մերձեցաւ եւ առ մկրտութիւն: Եւ զի վկայեսցէ վասն ճշմարտութեան Իւրոյ, առաւել եւս, զի մկրտութեամբ Իւրով սահմանեսցէ զնա յայնմիկ, զի դարձաւ մկրտեաց զայնոսիկ, որ Յովհաննէ մկրտեալ էին, ցոյց եւ յայտ արար, թէ մինչեւ առ նա միայն պաշտեաց զնա, զի ճշմարիտ մկրտութիւն ի ձեռն Նորա յայտնեցաւ, այն, որ արդարացոյց զնա ի պատուհասից անտի աւրինացն: Եւ զի ասէ՝ «Թո՛յլ տուր այժմ», զի մի՛ մտցէ նա ի գաւթի Իւր իբրեւ զգալ: Եւ զի յամաւթ արասցէ զփարիսացիսն, զի հպարտացեալ էին եւ արհամարհէին զմկրտութիւնն Յովհաննու: Իբրու յարգէ դարձեալ զխոնարհութիւն քարոզին Իւրոյ, իբրեւ զայն, զի ասէ. «Ամենայն, որ խոնարհ արասցէ զանձն իւր, բարձրասցի»[2]: Եւ զի խոստովան եղեւ Յովհաննէս, բայ՝ «Ոչ թէ արժանի լուծանել զխրացս կաւչկաց Նորա» (ազ՞): Առ Տէր մեր զակն Յովհաննու եւ եդ ի վերայ գլխոյ Իւրոյ: «Թո՛յլ տուր,- ասէ,- այժմ, զի կատարեսցուք զարդարութիւնս ամենայն»: Քանզի Յովհաննէս կատարիչ [գարշապար] աւրինացն[3]. աւրէնք եւ մարգարէք մինչ ի Յովհաննէս, այլ ի Քրիստոս սկիզբն է Նոր կտակարանացն: Զգեցաւ Նա զարդարութիւն հնոյն մկրտութեամբ, զի ընկալցի Նա զկատարած աւծման եւ տացէ [զնա լի եւ բովանդակ] աշակերտաց Իւրոց, զի ահաւանիկ եւ զմկրտութիւնն Յովհաննու աւրինաւքն հանդերձ սահմանեաց եւ մկրտեցաւ նմա արդարութեամբ, քանզի առանց մեղաց էր Նա, այլ մկրտեաց Նա շնորհաւք, զի մեղաւորք էին, լուեցոյց զաւրէնս արդարութեամբ Իւրով եւ դադարեցոյց զմկրտութիւնն մկրտելովն Իւրով: Բայց դարձեալ կատարեսցուք զարդարութիւնս ամենայն, զի Յովհաննէս էր Իւդուան բակին, զի ի մէջ նորա ամփոփեալ ժողովեալ էր հաւատն ի երուսաղէմացւոց, մուտ նա առ հաւտ անդր ոչ իշխանութեամբ, այլ արդարութեամբ: Եւ վկայեաց

1 Մատթ. Գ 15
2 Մատթ. ԻԳ 12
3 քանզի... աւրինացն՝ լուսանցքում

Հոգին, որ հանգեաւ ի վերայ Նորա ի մկրտելն Նորա, թէ՝ Նա է Հոգիւ, զոր ընկալաւ Նա ի ձեռն Յովհաննու զքահանայութիւն, զարքայութիւն եւ զմարգարէութիւն: Արդ. առ Նա զարքայութիւն տանն Դաւթի ծննդեամբ, որ եղեւ ի տանէ Դաւթի: Եւ առ զքահանայութիւն տանէն Ղեւեայ երկրորդ ծննդեամբն մկրտութեանն որդւոյն Ահարոնի: Արդ, այն, որ հաւատայ. թէ ծնունդ երկրորդ լինի նմա յաշխարհի, ոչ երկմտեալ լինի նա յայնմանէ, թէ վերջին ծննդեամբ մկրտութեամբն Յովհաննու առ Նա զքահանայութիւն Յովհաննու: Եւ քանզի բազումք մկրտեցան անդ յայնմ աւուր, էջ հանգեաւ Հոգին ի վերայ Միոյն, զի որ նշեալ լիցի յամենեցունց նշանաւ Այն, որ ոչ էր որոշեալ յամենայն մարդոյ տեսլեամբ: Եւ քանզի ի մկրտել Նորա էջ Հոգին, վասն այնորիկ մկրտութեամբն Նորա տուեալ [լ]ինէր Հոգին: Եւ զի ասէ.

«Յայնժամ գայ Յիսուս առ Յովհաննէս՝ մկրտիլ ի նմանէն»[1]:

Եւ զի մի՛ կարծիցեն. թէ իբր զկարաւտ մկրտի: Վասն այսորիկ յառաջագոյն բառնայ զայսպիսի կարծիս ասելովն, թէ՝ «Ահա Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս»[2] եւ թէ՝ «Զեմ բաւական լուծանել զխրացս»[3] եւ զայն եւս թէ «Դատաւոր է», եւ թէ՝ «Տէր ի գործոց հատուցանէ»[4] եւ զՀոգին առ որ չնորհելոց է: Եւ այսու ամենայնիւ բառնայ զկարծիս կարաւտութեանն. եւ յորժամ գայր առ նա, արգելոյր, թէ՝

«Ինձ պարտ է ի քէն մկրտել»[5]:

Եւ զի մկրտութիւնն Յովհաննու յապաշխարութիւն եւ յամբաստանութիւն յանցաւորաց էր. եւ զի մի՛ այսպէս զնա ոք կարծիցէ: Գառն Աստուծոյ եւ Փրկիչ զնա կոչեաց, զի ի միտ առնուցուս, թէ այլ իմն մատակարարելոց էր. յայն սակս մկրտէր, վասն որոյ ի գալն ասէր, թէ՝ «Ինձ պարտ է ի քէն մկրտիլ. եւ առ ի՞ս գաս», եւ չասաց, թէ՝ Դու յինէն մկրտես. զի զայս պատկառէր ասել: Եւ զայս մարգարէանայր, զի կարապետ էր առաջի երեսաց Նորա: Որպէս զիջումն Նորա յորովայն Կուսին, յորովայն Եղիսաբեթի գուշակեաց՝ զամլութիւնն ի պտղաբերութիւն փոխելով. թէեւ կուսութիւն կարող է պտղաբերել զՔրիստոս: Եւ յորովայնի խայտայր առ Նա գալով ի ձեռն

1 Մատթ. Գ 13
2 Յովհ. Ա 29
3 Մարկ. Ա 7 Յովհ. Ա 27
4 Հմմտ. Ղուկ. Ի 41
5 Մատթ. Գ 14

կուսին: Այսպէս եւ զգալուստ Նորա ի դժոխս գուշակէր, թէեւ Դու առ իս գաս, որպէս Պետրոս, որ ոչ գիտէր զխորհուրդ լուանալոյն, արգելոյր զնա եւ յետոյ հնազանդէր, սոյնպէս եւ սա իբրեւ լուաւ, թէ՝ «Թո՛յլ տուր». առ այժմ հնազանդէր: Եւ զի մի՛ դոյզն իրս կարծիցէ զմատակարարութիւնն, վասն այնր ասէր՝ այսպէս վայել է առ այժմ. եւ ոչ եթէ միշտ այսպէս առնիցես, այլ տեսցես յետոյ եւ զփառս Իմ զանզուգականս: Բայց «առ այժմ այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւնս աւրինացն»: Աստ արդարութիւն՝ զլրումն ամենայն պատուիրանացն ասէ. զամենայն պատուիրանսն հանաք ի գլուխ, եւ այս միայն պակասէ, եւ զայս ես մի՛ թողցուք անկատար: «Եւ զի լրումն աւրինացն Քրիստոս է»[1],- որպէս ասէ առաքեալ, որ լցեալ կատարեաց գալստեամբն Իւրով զթերութիւն նորա: Այսպէս եւ մկրտութիւնն Յովհաննու էր մինչ ի մկրտութիւնն Քրիստոսի, որ ելից զթերութիւն նորա մկրտելովն եւ լի կատարեալ ետ զնա առաքելոցն ի թողութիւն մեղաց եւ յընդունելութիւն Հոգւոյն: Եւ զի եկի, ասէ, լուծանել զանէծս աւրինացն, որ վասն յանցուածոցն եդան, վայել էր [Ի]նձ նախ զամենայն կատարել եւ ազատել զձեզ ի դատապարտութենէ աւրինացն, վայել է Ինձ կատարել զաւրէնսն եւ ապա լուծանել զաւրէնսն, որ կան հակառակ ձեզ գրեալ: Զի յայն սակս առի մարմին եւ եկի, եւ ապա թոյլ ետ: Եւ ի մկրտել Նորա իջանէր Հոգին աղաւնակերպ, վասն զի մեծ քան զնա համարէին զՅովհաննէս վասն սքանչելի ծննդեանն եւ հրաշալի վարուցն եւ զարմանալի գործոցն: Իսկ զՔրիստոս իբր զդոյզն մարդ ոք, որ զհասարակաց կեանս կեար համարէին: Վասն այնորիկ ընդ բարբառոյն յայտնէր Հոգին, եթէ ոչ Յովհաննէս է Որդի, այլ որ մկրտեցաւն, զի եւ Յովհաննու զայն ետ նշան, թէ՝ «Յոյր վերայ տեսանիցես զՀոգին, զի իջանիցէ եւ հանգիցէ, Նա է, որ մկրտէ ի Հոգին Սուրբ եւ ի հուր»[2]: Եւ իմացիս, թէեւ ի քո մկրտիլն նոյն ինչ լինիցի, թէպէտ եւ ոչ այնպէս յայտնիք. զի ի սկզբանն սովոր է Աստուած հրաշացուցանել, զի հաստատեցեն զնորա հաւատս: Իսկ հաւատացելոյն ի հաւատս բաւական են սքանչելեացն հաւատքն: Վասն այնորիկ ի Վերնատանն լեզուք երեւէին վասն հրէիցն, եւ յետոյ ոչ այնպէս ինչ լինէր: Եւ վասն այնորիկ ի կերպարանս աղաւնոյ յայտնէր Հոգին, զի զգաւն է թռչունն այն եւ սուրբ, զի եւ Հոգին հեզութեան Հոգի ասի: Վասն այնր այսու կերպարանաւք յայտնէր: Եւ դարձեալ զհին գործսն յիշատակէ, զի յորժամ գայր հասանէր աշխարհի նաւակոծութիւնն եւ եղծեալ ապականէր

1 Հմմտ. Հռոմ. ԺԳ 10:
2 Յովհ. Ա 33

զամենայն մարգարէութիւն, յայն նոյն թռչուն երեւէր եւ փարատէր ց[կարաժամեան ձմեռայնւոյն], բերէր աւետիս ոստով ձիթենւոյն, զոր ունէր [ի] բերանն այնմիկ, առակ աւրինակի հանդերձելոցն լինէր: Զի եւ յայնժամ յանհնարին պատիժս կայր ազգ մարդկան, զի մի՛ անյոյս լինիցին, յիշեցուցանէր զճառս առաջնոցն, զի եւ յայնժամ անյոյս իրաց լինէր վճիռ եւ ուղղութիւն, այլ յայնժամ՝ պատժոց, իսկ աստ՝ շնորհաց եւ անճառ պարգեւաց աւետիք: Վասն այնորիկ ի կերպարանս աղաւնոյ երեւի՝ ոչ ձիթենւոյ տերեւք բերեալ, այլ զազատիչն ամենեցուն յամենայն չարեաց ցուցանէ եւ յոյս բարեաց ամենեցուն սերմանէ, զի ոչ ի տապանէ հանէ սակաւ մարդիկ, այլ զտիեզերս ամենայն յերկրէ յերկինս վերացուցանէ եւ փոխանակ տերեւոյ ձիթենւոյն զորդեգրութեանն հասարակաց ամենայն աշխարհաց բարձեալ բերէ. զի ուր որդեգրութեան պատիւ իցէ, անդ եւ չարեացն ամենայնի կորուստ եւ բարութեանցն ամենայնի գիւտ: Վասն այնորիկ զհրէական մկրտութիւնն լռեցուցանէր եւ մերումս սկիզբն արարեալ յառաջ խաղացուցանէր, եւ որ ինչ իրք ի զատկին կատարեցան, նոյն եւ ի մկրտութեանն, քանզի ընդ երկուսին անց եւ զմինն դադարեցոյց եւ միւսոյն սկիզբն արար: Նոյնպէս եւ աստ. զհրէական մկրտութիւնն ի գլուխ եհան եւ եկեղեցական մկրտութեանս դուռն եբաց, որպէս յայնժամ ի միում սեղան զմինն կատարեաց եւ զմիւսոյն սկիզբ արար ի միտս Յորդանան, զմինն դադարեցոյց եւ միւսոյն սկիզբն արար, քանզի զստուերն եղծ եւ զճշմարտութիւնն հաստատեաց, զի Հոգւոյն միայն շնորհք ունին զայսպիսի մկրտութիւն: Իսկ Յովհաննուն թափուր էր յայսմ ամենայնի, եւ վասն այնորիկ ի վերայ այլոց մկրտելոցն ոչ երեւեցաւ այսպիսի ինչ, բայց միայն ի վերայ ... հանդերձեալ էր տալ զայն: Վասն այնորիկ երկինք բանային, եւ Հոգին իջանէր. ի հին վարուցն ի նոր առաքինութիւնս բերէր զմեզ, զի դրունք բարձանց բանային, եւ Հոգին առաքի անտի՝ կոչել զմեզ յայն բնակութիւն ոչ վայրապար, այլ մեծաւ պատուով, զի ոչ եթէ հրեշտակս կամ հրեշտա[կա]պե[տս] Տեառնէ, այլ Որդիս սիրելիս Աստուծոյ պատրաստէ եւ այնպէս ձգէ զմեզ յայն հանգիստն:

Նոյն ժամայն ասէ.

«Հոգին Սուրբ վարեաց զՆա յանապատ, զի փորձեսցի Նա ի Սատանայէ»[1]:

Եւ վասն է՞ր մինչեւ յերեսուն ամն ոչ փորձեաց զՆա, այլ քանզի նշան յայտնի յերկնից ի վերայ Աստուածութեանն Նորա ոչ էր

1 Մատթ. Դ 1

տուեալ եւ դոյզնաբար իբրեւ զայլս երեւէր Նա: Եւ վկայութիւնս մեծամեծս ի մէջ ժողովրդեան Նորա ոչ ունէր, լռեաց Նա ի փորձելոյ զՆա, մինչեւ եղեւ սկիզբն լինելոյ այսմ: Այլ իբրեւ լուաւ Նա, թէ՝ «Ահաւասիկ գայ Գառն Աստուծոյ», եւ «Սա է, որ բառնայ զմեղս աշխարհի», յապշութեան մեծի կայր Նա, սակայն հաս բեր մինչեւ մկրտեսցի տեսանել, թէ իբրեւ զկատարեալ մկրտի: Եւ իբրեւ ետես, թէ իբրեւ զլցուցիչ կարաւտութեան էջ ի ջուրս անդր, եւ ոչ եթէ իբրեւ զկարաւտեալ եկն Նա առ մկրտութիւն անդր. ի փայլիւն լուսովն, որ լինէր ի վերայ ջուրցն, եւ ձայնիւն, որ եղեւ յերկնից: Եղ ի մտի իւրում եւ ասէ, եթէ՝ մարտիւ փորձանաւ ոչ փորձեմ զՆա, ոչ կարեմ ճանաչել զՆա: Այլ քանզի ոչ էր արժան Բարերարին հակառակ կալ ընդդէմ կամաց այնորիկ, որ եկն փորձել զՆա, նաեւ համարձակէր ոչ վարել զՆա յայնմիկ, զի ոչ գիտէր, եթէ որպէս փորձեսցէ զՆա, մինչեւ հանդերձեաց պատրաստեաց զԱնձն Իւր ի մարտ պատերազմի եւ զգեցաւ զաւրութիւն Հոգւոյ ելանել նահատակիլ, ոչ մերձեցաւ առ Նա փորձել զՆա: «Հան,- ասէ,- վարեաց զՆա Հոգին Սուրբ յանապատ, զի փորձեսցի ի Սատանայէ», այլ վասն քաղցրութեան Իւրոյ հակառակ կալ ընդդէմ նորա ոչ կամեցաւ, թէ գուցէ լքեալ լինիցին ականջք լսողաց կարծեաւք, զի ոչ կարէր Նա դիմակալ լինել մարտին նորա: Վասն այսորիկ ոչ կամեցաւ Նա երթալ ընդ փորձչին Իւրում. առաւել եւս, զի մի՛ եղիցի տեղի ուրացելոցն յասել, թէ կրսերագոյն է Հոգի քան զՈրդի, զի եթէ ի մարտ պատերազմի հանէր Նա զՆա եւ ոչ ի պատիւ եւ հանգիստ, զիա՞րդ ոչ անկանէր խիղճ ի խորհուրդս մաքառողաց ի քննել զայս, զի թէեւ էր կրտսերութիւն Հոգւոյն քան զՈրդի, զիա՞րդ Հոգւոյն տուեալ լինէր[1] իշխանութիւն հանելոյ զՆա յանապատ, զի ահաւասիկ իբրեւ իշխան երեւեցաւ ի հանել զՆա: «Եւ զի հան վարեաց զՆա Հոգին յանապատ, զի փորձեսցի Նա ի Սատանայէ»: Այն իսկ է, զի ասէ. «Ոչ ոք կարէ մտանել ի տուն հզաւրին եւ աւար հարկանել զգանձս նորա, եթէ ոչ նախ զհզաւրն կապիցէ, եւ ապա զգանձս նորա աւար հարկանիցեն»[2]: Արդ, կապեաց Նա զհզաւրն եւ յաղթեաց նմա ի ներքս ի տան իւրում: Եւ ապա սկիզբն արար քարոզութեան Իւրում, եւ հորդեաց մեզ ճանապարհ պահոց, զի նովաւ յաղթեսցուք խորամանկութեանց նորա: Եւ յետ քառասուն աւուր, ասէ, զի պահէր, քաղց[եաւ], այսինքն՝ վասն յաղթութեան ախոյեանին, զի առաջի ամենայնի խայտառակեսցէ զպատրաստութիւն նորա: Եւ ուսոյց մեզ բանիւք իւրովք, զի յայսմ եւ թէ իցեմք

1 ձեռագրում լիրէր

2 Մատթ. ԺԲ 29

քաղցեալ բանին Տեառն: Իսկ ընդէ՞ր վասն Մովսէսի եւ Եղիայի ոչ ուրեք յայտ առնէ, թէ քաղցեան: Եւ վասն Տեառն մերոյ գրեալ է, եթէ՝ «քաղցեաւ», այլ զի յամաւթ արասցէ զայնոսիկ, որ ասեն, թէ ոչ առ մարմին, եւ զի տացէ պատճառս Սատանայի մերձենալ առ Նա ի փորձել զՆա՝ յասել անդ Նորա.

«Ասա՛ դու քարանցս այսոցիկ, եթէ հաց լիցին»[1]:

Եւ զի ոչ արար, զի մի՛ տացէ զցանկութիւն մեղաւորին. եւ ի խոզս անդր, զի ետ նմա, որպէս եւ խնդրեաց, ոչ եթէ նմա ինչ կամս արար, այլ վասն նշանաց, զի արասցէ, զի ոչ ոք կամեցաւ ելանել առ Նա ի գաւառաց անտի գերգեսացւոց, մինչեւ առ արար Նա անդ զսքանչելիս: Եւ զի ոչ ամաչեաց Նա յառաջին փորձանաց անտի, ած հան կացոյց զՆա ի վերայ անկեան տաճարին: Եւ ահա ցարդ եւս կանգուն կայ տեղին, եւ տաճարն կործանեալ է, որպէս եւ ասաց Ինքն, ասէ. «Մի՛ մնասցէ ի նմա քար ի քարի վերայ»[2]: Եւ տեղին, յոր վերայ կաց Նա, պահեցաւ իբրեւ ի նշան: Ասէ ցՆա.

«Ա՛րկ զՔեզ ի վերուստ ի վայր, զի գրեալ է, թէ պահեսցեն զՔեզ, զի մի՛ երբէք հարցի զքարի ոտն Քո»[3]:

Ո՛վ փորձիչ. թէ ի վերայ Նորա կատարի սաղմոսն. «Ոչ ահա գտեալ անդէն,- ասէ,- ի թիկնամէջս իւրն իւր ընկալցի զՔեզ»[4]: Արդ, ոչ ինչ մարթ է անկանել թռչնոց, զի աւդքն իբրեւ զերկիր հաստատուն են ի ներքոյ թեւոց Նորա: Կամ ոչ ահա դարձեալ գրեալ է, թէ՝ «Ի վերայ աւձին քարբի գնասցես Դու»[5]: Այլ զայն ինչ, որ ինչ պիտոյ էր նմա, ուսաւ ի գրոց անտի, եւ որ ինչ վնաս էր, եթող: Սոյնպէս եւ հերեսիոտացիքն առնուն ինչ ինչ ի պէտս գայթակղութեան իւրեանց եւ թողուն զայն, որ յանդիմանէ զմոլորութիւն նոցա, զի յայնմիկ յայտ արասցեն, թէ այն աշակերտք այն վարդապետի են:

«Դարձեալ առ զՆա ած հան ի լեառն մի բարձր յոյժ եւ ասէ ցՆա. «Իմ են այս ամենայն թագաւորութիւնք»»[6]:

Եւ յայսմիկ մոլորին եւ կարծեն, եթէ ինքնութիւն ունի նա: Եւ որպէս ասաց բամ, զոր ինչ վնասուն էր, թողուն եւ զայլն առնուն: Եւ թէ

1 Մատթ. Դ 3
2 Մատթ. ԻԴ 2
3 Մատթ. Դ 6
4 Սաղմ. Ղ 4
5 Սաղմ. Ղ 13
6 Մատթ. Դ 8

զի ասաց [նա, բա] իմ են տան նմա ինքնութիւն. իբր ոչ եթէ ի նոցանէ ինչ ուսանիմք մեք զճշմարտութիւն, այլ այնու, որով վկայեն, թէ յաղթեն նովին, առաւել եւս պարտաւորին. թէ այդպէս է, յորժամ ասէ զկնի նորա, թէ՝ «Ինձ տուեալ է»[1]. ի միտ առցեն, թէ այլ արարիչ է նոցա, եւ նմա տալով տուաւ: Եւ զի ասէ՝ «Իշխանութիւն ունիմ ես ի վերայ այսր ամենայնի»[2], ոչ եթէ բնութեամբ իւրով ունի զիշխանութիւնն, այլ զի նոքա կամեցան, զի ասէ այսպէս. «Որում պատրաստեցէք զանձինս ձեր ի ծառայութիւն հնազանդութեան՝ ծառայէք նորա»[3], եւ այլն եւս: Եւ զի ասէ՝

«Անկցես ի վերայ երեսաց Քոց եւ ինձ խոնարհ երկիր պագցես»[4],

զի յայտնի լիցի ամբարտաւանութիւն հպարտութեան այնորիկ. ո՞ր, որ ի սկզբանէն կամեցաւ լինել Աստուած: Մարմին Տեառն մերոյ յանդիմանէ զամենայն մարմին. զի թէ մերկ իջանէ ի պատերազմ, պարտաւորի Նա: Զի զգեցաւ նախ յառաջնոցն զզէն պահոցն եւ [ապա] էջ սՍա ի մարտ պատերազմի: Արդ, զէն հաստատուն պիտոյ է ընդդէմ այնորիկ, որ ձգէ զնետս մուխս մեքենաւորս:

«Ասա՛,- ասէ,- քարանց այսոցիկ, թէ հաց լիցին»[5]:

Զգեցաց նետ, որ ուսուցանէ զլիութիւն, զի խտտիցէ զՆա ի քաղցութիւն անդ, զի մտցէ ի փորձանս, այլ ոչ կարէր նա տիրել քաղցութեանն, զի զպահսն իբրեւ պատեանս զգեցեալ էր. դարձաւ քաղցութիւնն, ձգեաց ի նա զնետս լիութեան Իւրոյ. զի ուսուցանէ նմա զայն, որ ուսուցանէր զարտաքին լիութիւն, թէ գոյ եւ ներքին լիութիւն, որ ոչ երեւի:

«Ոչ եթէ հացիւ միայն, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ»[6]:

Արդ, այնու, որ եկն փորձել, փորձեցաւ եւ որ ի զեկնն ուսուցանել, յանդիմանեցաւ: «Եթէ Որդիս [եւ] Դու Աստուծոյ, ասա՛ քարանցս այսոցիկ, թէ հաց լիցին առ այժմ»: Բերանն Սատանայի դաւեաց զՆա. թէ Որդի Աստուծոյ է, կարէ զդարին հաց առնել: Արդ,

1 Հմմտ. Յովհ. Ե 27:
2 Հմմտ. Յովհ. Ժ 18:
3 Հռոմ. Զ 16
4 Մատթ. Դ 9
5 Մատթ. Դ 3
6 Մատթ. Դ 4

[ուսոյ]ց զնա Տէր մեր Նովին իսկ բանիւ նորին, զի եթէ՝ «Կարէ Աստուած զքարինս դարձուցանել առնել հաց»: Ուսի՛ր, փորձի՛ջ, զի եւ առանց հացի կարող է Աստուած լցուցանել: Եւ եթէ զքարինս կարէ դարձուցանել ի կերակուր, կարէ նաեւ զքաղցութիւնս դարձուցանել ի լիութիւն, զի այնու դարձուցանել զբնութիւն քաղցութեան ի լիութիւն. ոչ եթէ զի լցուցէ զնա յայլ ընչէ, այլ զնոյն քաղցութիւնն ի գլխովին ի լիութիւն արասցէ: Որպէս եւ զքարն իսկ գլխովին ասաց Փրկիչն, թէ արասցէ հաց: Արդ, ի լերին անդ արար կոխան Տէր մեր զցանկութիւն փորձչին եւ առ ընկեց ի խոնարհ, զի կոխեսցեն զնա հեթանոսք, որ կոխեալն լինէին երբեմն ի նոցանէ: Եւ հան փոխանակ նոցա զամենայն բարութիւնս, զի թագաւորեսցեն ի վերայ ամենայնի այնք, որ երբեմն կոխան լինէին. զաւրաբանակ ջուրքն, որով հեղձուցանէրն փարաւովն զմանկտին, նոքիմ[բ]ք հեղձաւ: Սոյնպէս եւ Գողիադ սրով, որով սատակէր զբազումս, նովին սրովն եհատ Դաւիթ զգլուխ նորա: Մովսէս խաչին խորհրդով հերձաւ պատառեաց զծովն, եւ Դաւիթ վիմին խորհրդով հերձ[1] կործանեաց զԳողիադ: Եւ Տէր մեր բանիւ բերանոյ նորին պարտաւորեաց զՍատանայ, մինչդեռ փորձէրն զՆա. փարաւովն ջուրքք, որով հեղձուցանէր, հեղձաւ, եւ Գողիադ, որովն սրով կոտորէր, սպանաւ, եւ Սատանայ, մարմնովն որով կորուսանէր, նովին յանդիմանեցաւ, թէ չէր նա Աստուած: Խորհուրդ երիցն մկրտութեանցն, յոր մկրտեցաւ, փորձեցաւ Փրկիչն, ասէ՝ «Ասա՛ քարինս այսոցիկ, թէ հաց լիցին», զի սա է սնուցիչ ծննդեան, եւ դարձեալ զթագաւորութիւնս եւ զփառսն նոցա Քեզ տաց, զի սա է աւետիք աւրինաց: Եւ դարձեալ[2]՝ «Ա՛րկ զՔեզ վերուստ ի վայր», զի սա եւ իջանել մահուն: Այլ Նա միով իւիք յայսցանէ ոչ խռովեցաւ եւ ի խնդացուցանելն զՆա ոչ ինչ ուրախ եղեւ Նա: Եւ զի ի զարհուրեցուցանելն զՆա Նա ինչ ոչ տագնապեցաւ, այլ ի ճանապարհի Իւրում գնայր Նա եւ զկամս Հաւր Իւրոյ կատարէր Նա: Արդ, զայս ամենայն, զոր կարգեաց, եդ նա առաջի կենդանոյն, Նմա ոչ եթէ նեղութիւնք ինչ եղեն, զի նեղութիւնք մեր անդորրիչք են մեր, եւ մեք ամենեքին ի չարչարանաց անտի Նորա զհանգիստ ընդունիմք: Զի՞նչ երկչեալ էր Այնմիկ, որ գիտէր, թէ ոչ կարէ լինել վնասեալ: Ժամէ ի ժամ ծնանի ի մէջ երկիւղ այնուիկ, զի ճշմարիտ գիտեմք մեք, եթէ կարեմք լինել վնասեալ, նաեւ այնոքիկ, որ պղծեն զնա ծննդեամբն, ոչ գիտէն, զի մոլորեալ են, եւ ոչ կարեն ուսանել, զի հպարտացեալ են, զոր աւրինակ եւ ոչ երկնչին, զի ոչ ապաշաւեն, զի աշխարհս այս, յորում եկն

1 բնագրում հերձ

2 եալ՝ լուսանցքում

Նա, ոչ է սա որոշեալ յարգանդէ անդի, զի ամենայն պղծութիւնք գոյ ի սմա: Նաեւ ի դժոխս դարձեալ, որ քան զամենայն ատելի եւ պիղծ է, եմուտ Նա եւ մանաւանդ վասն մարմնոց, զի ասացեալ է, թէ տաճար են Աստուածութեան: Արդ, ոչ ինչ աղտեղութիւն է Աստուծոյ բնակել ի տաճարս Իւրոյ, քանզի կամեցաւ Նա սպանանել զմահ եւ զհետս ի տաճարս Իւրոյ. զանդի կամեցաւ Նա սպանանել զմահ եւ զհետս նորա սպառել սկիզբն արար յարմատոյ անտի իրացն, զի ուր եւ մարմինն է, անդ է մահ: Եւ արմատք մարմնոյ արգանդ է, զի անդ առնէ սկիզբն ստեղծանելոյ, եւ անդէն սկսանի մահ ապականել զնա, զի բազում կանայք են, զի յամսեանն, յորում յղեան, եւ ի նմին մեռանին մանկունք իւրեանց, եւ երկնեն եւ յերկրորդումն եւ յերրորդումն եւ այլ եւս ամսոյ[1]: Արդ, եթէ մահ արգանդէ սկսանի եւ ի դժոխս կատարէ, զիա՞րդ կարէր Այն, որ Որսորդն է մահու, եթէ ոչ յարգանդէ զսկիզբն առնէր գնալ ընդ նմա եւ մինչեւ ի կատարած դժոխոց արգելանին նորա: Արդ, մի՛տ առ դու, որ պէս պէս ազգաւք կամեցաւ կենդանին յանդիմանել զմահ, եւ եղեւ Նա սաղմն, եւ յարգանդի անդ ոչ կարաց ապականել զՆա: Եւ մանուկ. ի սնդեան Նորա ոչ կարաց ամաչեցուցանել զՆա: Եւ տղայ. եւ յուսման անդ Նորա ոչ կարաց յողդողդել զՆա: Եւ երիտասարդ. եւ ցանկութեամբ Նորա ոչ[2] կարաց գայթակղեցուցանել զՆա: Եւ գիտուն. եւ խորամանկութեամբ իւրով ոչ կարաց յաղթահարել զՆա: Եւ վարդապետ. եւ ի ճշմարտութեան Նորա ոչ կարաց յանդիմանել զՆա: Եւ զգուշացեալ. եւ պատուիրանաւք Նորա ոչ կարաց խոտորեցուցանել զՆա: Եւ պնդակազմ. եւ ի սպանանելն զՆա ոչ կարաց զարհուրեցուցանել զՆա: Եւ մեռեալ. եւ ի զգուշանալն գերեզմանին ոչ կարաց պահել զՆա: Ոչ հիւանդացաւ Նա, զի Բժիշկ էր. եւ ոչ մոլորեցաւ, զի Հովիւ էր. եւ ոչ յանցեաւ, զի Ուսուցիչ էր. եւ ոչ գայթակղեցաւ, զի Լոյս էր: Այս ճանապարհ կատարեալ, զոր հորդեաց Քրիստոս Եկեղեցւոյ Իւրոյ, ի սկզբանէ յղանալոյն մինչեւ ի կատարած յարութեան: Արդ, եթէ Եկեղեցի մարմին Նորա, որպէս ասաց Պաւղոս՝ վկայ Նորայ, հաւատա՛ դու, թէ Եկեղեցի Նորա գնաց այսու ամենայնիւ առանց ապականութեան, զոր աւրինակ դատապարտութեամբ միոյ մարմնոյ Ադամայ ամենայն մարմինք մեռան եւ մեռանին, այնպէս յաղթութեամբ այսր միոյ մարմնոյ Քրիստոսի ամենայն Եկեղեցի եկաց եւ կեայ: Այլ, զոր աւրինակ, զի ինքեանք մարմինքն մեղան եւ ինքեանք մեռանին եւ երկիր՝ մայր նոցա, անիծաւ, սոյնպէս՝ վասն այսր մարմնոյ, զի սա ինքն Եկեղեցի, որ ոչ ապականի, աւ[ր]հնեցաւ երկիր սորա ի սկզբանէ, զի երկիր՝ տաճար ի

1 բնագրում +ամսոյ

2 ձեռագրում որ

մարմինէ Մարիամայն, որ ի նմա սերմանեցաւն: Հայեա՛ դու, զի եւ հրեշտակն, որ եկն սերմանել զնա ի լսելիս նորա ի ձեռն յստակ ձայնին: Այսպէս արար սկիզբն սերմանն. «Ողջո՛յն ընդ քեզ,- ասէ,- աւ[ր]հնեա՛լ ի կանայս»[1]: Կնքեաց եւ Եղիսաբեթ զձայն երկրորդ: «Աւրհնեալ ես դու ի կանայս»[2],- ասէ, որպէս զի յայտ լիցի, եթէ վասն առաջին մաւրն անիծաւ: Վասն այսորիկ մայրն երկրորդ աւ[ր]հնեալ անուամբք յորջորջեալ լինէր: Եւ զի ասէ՝ ի բա՛ց զնաց ի Նմանէ առ ժամանակ մի, մինչեւ պատրաստեսցի, զի չարախաւութեամբ եւ նախանձուն դպրաց խափանեսցէ զյաղթութիւնն Նորա: Այլ որպէս պարտաւորեցաւ[3] ի սկզբանն[4] նաեւ սոյնպէս[5] ի կատարածի, զի մահուամբ Իւրով յաղթեաց Նա առաւել: Եւ զի ասէ՝

«Յե՛տս երթ, Սատանա՛յ»[6],

եւ գժտեցաւ նմա, զի ստեաց նա այնչափ եւ ասէ. «Իմ են թագաւորութիւնքս»: Եւ ոչ ամաչեաց նա յայնմանէ, զի ասէ՝ Աստուած տիրէ ի վերայ թագաւորութեանց մարդկան եւ ում կամի, տացէ զնա: Արդ, կշտամբեաց զհպարտութիւն ամբարտաւանութեան նորա բանիւ Իւրով, եւ այլ ոչ եւս կարաց կալ առաջի բանի Նորա, զի յայտ արասցէ վասն խրատու Իւրոյ ճշմարտութեանն եւ իմաստնացուսցէ զհաւանեալսն Իւր, զի ի ճշմարիտ Տրչէէ անտի ընկալցին զամենայն բարութիւնս: Եւ զի ասէ՝

«Եկին հրեշտակք եւ պաշտէին զ Նա»[7],

զի տացէ մեզ աւրինակ, եթէ զկնի մկրտութեան մտանեմք ի փորձանս եւ յետ փորձանացն ապա եւ՝ արքայութիւն երկնից:

«Յայնժամ վարեցաւ Յիսուս ի Հոգւոյն»[8]:

Յորժամ ընկալաւ զվկայութիւն ի վերուստ եւ զՀոգին, որ տուեալ ի պատերազմ ընդդէմ չարին, ոչ իբր կարաւտ աւգնականի, այլ աւրինակ մեր ըստ տնտեսութեանն, եւ անսայ զվարիչն եւս ի Հոգւոյն եւ մարտնչիլ եւս ընդ չարին, զի եւ ի մկրտելոցն, յորժամ փորձութիւնք մեծագոյնք գայցեն ի վերայ, մի՛ խռովեսցեն կամ անյոյսք լիցին ի

1 Հմմտ. Ղուկ. Ա 28:
2 Ղուկ. Ա 28
3 եցաւ՝ տողամիջում
4 բանն՝ տողավերջում
5 սոյնպէս՝ տողամիջում
6 Մատթ. Դ 10
7 Մատթ. Դ 11
8 Մատթ. Դ 1

յաղթութենէ, այլ համբերել քաջութեամբ եւ ի միտ առնուլ, թէ կարդաւ իմն յետ մկրտութեանն գալոց են փորձութիւնք, զի վասն այնորիկ ուսէր[1] զսպառազինութիւն Հոգւոյն, զի կռուիցիս: Նաեւ ոչ իսկ արգելու Աստուած զեկեալ փորձութիւնն, զի ուցիս, թէ որչափ ինչ եղէր զաւրագոյն եւ կայցուսս մնայցես Հաստատուն արմատովք եւ մեծագոյն պարգեւաւքն հպարտանայցես, զի փորձութիւնք կարճեցեն ի մեծամտութենէն: Եւ յորժամ չհաւատայցէ չար դեւն քում ազատմբութեանն, հանդիսիւ փորձութեանն զգայցէ քում յաղթութեանն եւ գիտասցէ, թէ ամենեւին թողէր զնա, եւ զաւրագոյն քան զերկաթ պատրաստեցար եւ զընծայութիւն գանձուցն, որ հաւատացաւ քեզ, առնուցուս, զի եւ ոչ իսկ պատերազմէր քեզ, եթէ ոչ մեծագոյն պարգեւս տեսեալ էր ի քեզ: Եւ վասն այնորիկ ի սկզբանն դիմեաց ի վերայ Ադամայ, զի ետես զնա ի մեծագոյն պատիւ զարդարեալ: Սմին իրի եւ ընդ Յովբայ պատրաստեցաւ ի մարտ պատերազմի, զի մեծագոյն գովեստիւ տեսանէր պակեալ զնա առ ի յամենեցունց Աստուծոյ. վասն այսորիկ պատուէր տայր յաղաւթս կալ, չմտանել ի փորձութիւն: Եւ յաղագս այսորիկ ոչ իւրով ի վայրապար ցուցանէ Քրիստոսի երթեալ յանապատն, այլ վարեալ ի Հոգւոյն՝ ըստ տնտեսութեանն: Եւ զի մի՛ ոք իւրով յամբայրս դիմիցէ երթեալ ի փորձութիւնս, այլ վարեալ[2] յայլոցն, [կացցէ] պնդակազմ արիաբար: Եւ տե՛ս ուր տանէր. ոչ չէնս, այլ յանապատ տեղիս, զի զթշնամին կամէր զբոմբ[3] ածել ոչ միայն քաղցիւն, այլ եւ անապատաւն տայր Նմա յաժարութիւն մատնչել, զի յայնժամ գուն գործել դիմէ ի վերայ թշնամին, յորժամ գտցէ միայն կեալս: Այսպէս եւ կնոջն յառաջումն յարձակէր ի վերայ, զի մեկուսի եգիտ յառնէն: Իսկ մեր բազմութեանն ոչ ժպրհի յարձակիլ ի մարտ: Եւ վասն այնորիկ պարտ է մեզ չաղապատիլ սիրով, զի մի՛ դիւրաւ ըմբռնիցիմք ի ձեռս Սատանայի: Արդ, գտանէր զնա յանշէն անապատին, որպէս Մարկոս ասէ, թէ՝ «Էր Նա ընդ գազանս»[4]: Եւ արդ, տե՛ս որպէս մեղմեխանաւք մերձենայր, յորժամ գտանէր պատճառս պատերազմի. զի ոչ ասէ, թէ՝ յորժամ պահէր, այլ թէ՝ յորժամ քաղցեաւն, զի դու ուսանիցիս՝ եւ որպիսի ինչ բարի են պահք եւ կարծր զէն ընդդէմ թշնամւոյն, եւ ի միտ առցես, թէ յետ մկրտութեանն ոչ փափկութեան եւ արբեցութեանն տալ զանձն, այլ պահոց եւ աղաւթից: Եւ զի Նա պահեաց, ոչ իբր կարաւտ,

1 ուս՝ տողամիջում
2 բնագրում՝ վարեաց
3 բնագրում՝ զբոմամբ
4 Մարկ. Ա 13

այլ զի զմեզ խրատեսցէ, զի մեղքն ի սկզբանէ յորովայնին ծառայ լինելոյ մտին. որպէս եթէ զախտացեալ ոք կամիցի բժշկել, պատուիր տայցէ, թէ յորոց պատճառաց ցաւքն մտին, յայնմանէ պատրաստ կայցէ անձինն: Վասն այնորիկ յետ մկրտութեանն կարգեաց զպահոն, զի եւ զԱդամ անժուժկալութիւնն եհան ի դրախտէն եւ զՀրեղէն նոյն ած եւ ի[1] սովով զհրացան բարկութիւն յղփութիւն որովայնի ած, յորմէ պոռնկութիւնն բղխեալ արմատացաւ, որպէս ասէ Եզեկիէղ, թէ՝ «Այս է անաւրէնութիւն Սոդովմայ, զի յամբարտաւանութեան եւ յղփութեան որովայնի զբաղեալ էին»[2]:

1 ի՝ տողամիջում
2 Եզեկ. ԺԶ 49



ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ ԵԳԻՊՏԱՑՈՒ ՎԱՐՔԸ

«Թագաւորական գաղտնիքը պահելը լաւ է, իսկ Աստուծոյ գործերը քարոզելը՝ փառաւոր»,– այսպէս ասաց հրեշտակը Տովբիթին[1] նրա կոյր աչքերի հրաշափառ բժշկութիւնից եւ բոլոր այն վտանգներից յետոյ, որոնցից նա փրկուեց իր բարեպաշտութեան շնորհիւ: Քանզի Թագաւորական գաղտնիքը չպահելն անզգուշութիւն է եւ կորստաբեր, իսկ Աստուծոյ հրաշափառ գործերի մասին լռելը՝ հոգուն վնաս պատճառող: Ուստի եւ ես, երկնչելով աստուածայինի մասին լռելուց եւ յիշելով գանձաթաքոյց ծառային սպասուող պատուհասը[2], որ, Տիրոջից տաղանդը ստանալով, հողի տակ թաքցրեց եւ գործադրուելու համար տրուածը ծածուկ պահեց, չեմ կարող չպատմել մինչեւ ինձ հասած այս շահավէտ պատմութիւնը: Եւ թող ոչ ոք, ինչպէս լսեցի, գրողիս հանդէպ անվստահութիւն չունենայ եւ իրողութեան սքանչելի մեծութեան պատճառով ինձ յօրինաբանող չհամարի, քանզի ես չեմ կարող կեղծել եւ վաճառական լինել այն խօսքի, որի մէջ Աստուած է յիշատակւում: Եւ կարծում եմ, որ իրաւունք չունենք անգամ փոքր իրադարձութիւնն արհամարհելու՝ անարժան համարելով Աստուծոյ մարմնացեալ Բանի մեծ փառքին, եւ չվստահելու նրանց, ովքեր պատմում են այս պատմութիւնը: Իսկ եթէ ոմանք, կարդալով այն եւ նրանում թերեւս զարմանահրաշ բաներ տեսնելով, ամենեւին չկամենան հաւատալ, թող նրանց քաւիչը Տէրը լինի, քանզի, խորհելով մարդկային տկարութեան մասին, հնարովի են համարում մարդկանց մասին պատմուող հրաշքները:

Արդ, անցնեմ մեր մէջ վաղուց ի վեր տարածուած այն պատմութեանը, որը մեզ աւանդեց մանկութիւնից աստուածային բաներ խօսելու եւ գործելու սովոր այն մեծ այրը, որպէսզի մեզանում կատարուած այսպիսի սքանչելի դէպքերը, անկարելի

1 Տե՛ս Տովբիթ ԺԲ 7:

2 Տե՛ս Մատթ. ԻԵ 18-25:

համարուելով, անվստահութեան չմատնուեն: Քանզի, ինչպէս Սողոմոնն ուսուցանեց, Սուրբ Հոգու շնորհները, ներգործելով տարբեր անձանց մէջ, նրանցից Աստուծոյ բարեկամներ ու մարգարէներ են պատրաստում[1]:

Իսկ այժմ ժամն է այդ մեծահրաշ պատմութիւնը սկսելու:

Պաղեստինի վանքերից մէկում ապրում էր մի այր՝ զարդարուած առաքինի վարքով եւ իմաստուն խօսքով: Նա վաղ մանկութիւնից ի վեր մենակեացի կեանքով էր ապրում: Այդ ծերի անունը Զոսիմոս էր: Նա Պաղեստինի ուղղափառ մենակեացների սքանչելի վանքերից մէկում անցաւ առաքինութեան բոլոր աստիճաններով՝ պահելով կրօնաւորութեան ողջ կարգը: Կատարելով աւանդուած պատուիրանները եւ հետեւելով ուսուցանող վարդապետների ցուցումներին՝ խորը ինքնաճանաչողութեան հասնելով՝ նա ձգտում էր մարմինը հնազանդեցնել հոգուն: Իր այս դիտաւորութիւնից ամենեւին չշեղուեց եւ իր բարեմիտ գործերի շնորհիւ այնպէս հռչակուեց, որ բազմիցս թէ՛ մերձակայ եւ թէ՛ հեռու վանքերից նրա մօտ էին գալիս՝ իր վարդապետութիւնից պարկեշտութեան օրինակ վերցնելու: Չնայած իր գործնական մեծ ճիգերին՝ ծերն ամենեւին չէր ծուլանում աստուածային խօսքի ընթերցման մէջ, այլ թէ՛ ննջելուց առաջ ու արթնանալուց յետոյ եւ թէ՛ աշխատելիս եւ ուտելիս յարաժամ սաղմոսերգում էր եւ հմտանում Սուրբ Գրոց իմացութեան մէջ:

Պատմում են, որ ծերը բազում անգամ, ի վերուստ լուսափայլութիւն ստանալով, աստուածտեսութեան էր արժանանում: Եւ սա ամենեւին զարմանալի ու անհաւատալի չէ: Քանզի եթէ Տէրն ասում է. «Երանի՛ սրտով մաքուրներին, որովհետեւ նրանք Աստծուն պիտի տեսնեն»[2], ապա ակնյայտ է, որ, մաքրելով իրենց անձերը եւ մշտապէս խոկալով, նրանք հոգու մշտարթուն աչքերով տեսանում են աստուածային խոստման առհաւատչեան՝ ներկայում ստանալով ապագայի աւետիսը:

1 Տե՛ս Իմաստ. Է 27:

2 Մատթ. Ե 8

Ասում են, որ այս ուղղափառ Զոսիմոսը վաղ մանկութիւնից՝ մայրական ծոցից ընծայուել է վանքին եւ մինչեւ յիսուներ տարեկանը ճգնակեցութեամբ ընթացել: Այնուհետեւ, ինչպէս պատմւում է, նրան սկսում է նեղել այն խորհուրդը, թէ ինքն ամէն բանով արդէն կատարեալ է եւ ուրիշ ոչ մի ուսուցման պէտք չունի: Այսպէս ներամփոփուած՝ նա խորհում էր. «Թերեւս երկրի վրայ լինի մի մենակեաց, որ ինձ օգտակար լինէր կամ այնպիսի նոր բաներ ու ճգնութեան տեսակներ սովորեցնել կարողանար, որոնց ես անտեղեակ եմ ու չեմ գործել: Թերեւս անապատներից որեւէ մէկում գտնուի մի իմաստասէր այր, որ թէ՛ գործերով ու թէ՛ իմացութեամբ ինձանից առաւել լինի»: Մինչդեռ ծերն այս մասին էր խորհում, յայտնուեց Տիրոջ հրեշտակը եւ ասաց.

–Զոսիմո՛ս, մարդու հնարաւորութիւնների սահմաններում ազնուօրէն ու գեղեցկօրէն ճգնեցիր: Բայց մարդկանցից ոչ ոք չի կարող կատարեալ համարուել, քանզի առաջիկայ ճգնութիւնը նախորդից մեծ է լինում, եւ դուք թերեւս երբէք չգիտէք ապառնին: Բայց որպէսզի իմանաս, թէ որքան ճանապարհներ են տանում դէպի փրկութիւն, դո՛ւրս եկ քո երկրից (ինչպէս նշանաւոր նահապետներից՝ Աբրահամը) եւ գնա՛ Յորդանանի ափին հիմնուած վանքը:

Ծերն իսկոյն եւեթ, հետեւելով հրահանգին, դուրս եկաւ վանքից, որտեղ մանկութիւնից ճգնել էր եւ, առաջնորդուելով կանչողից, ընթացաւ դէպի սուրբ գետ Յորդանան՝ հասնելով այն վանքին, ուր առաքել էր նրան Աստուած: Ապա, ձեռքով բախելով դռան օղամանեակն ու բացելով, տեսաւ մի մեծահասակ վանականի, որ դռնապահն էր, որն էլ իրեն ներկայացրեց վանահօրը: Իսկ վանահայրը, հիւրընկալելով եւ տեսնելով նրա աստուածավախ կեցուածքն ու հասարակ զգեստները, մենակեացի կերպով խոնարհուելն ու օրհնութիւն ընդունելը, հարցրեց.

–Եղբա՛յր, որտեղի՞ց եւ ինչի՞ համար եկար տառապեալ ծերերիս մօտ:

Իսկ Զոսիմոսը պատասխանեց.

–Թէ որտեղից եկայ, կարեւոր չէ, բայց հոգեւոր շահի համար եկայ, քանզի ձեր մասին գովեստի արժանի բաներ եմ լսել, որոնցով հոգին մեծապէս մօտենում եւ միաւորւում է մեր Քրիստոս Աստուծոյ հետ:

–Եղբա՛յր,– ասաց վանահայրը,– մարդկային հիւանդութիւնների միակ բժիշկն Աստուած է, եւ թող Նա թէ՛ մեզ ու թէ՛ քեզ ճանաչեցնի Իր կամքը եւ ամենքիս առաջնորդի՝ այն վայելչապէս կատարելու: Քանզի մարդն իր նմանին չի կարող օգնել, այլ իւրաքանչիւր ոք, Աստծուն իրեն նեցուկ ունենալով, թող իր համար զգուշանայ եւ, մտքով արթուն լինելով, բարին գործի: Բայց քանի որ Քրիստոսի սէրը քեզ դրդեց տեսնել մեզ՝ բազմատանջ ծերերիս, մնա՛ մեզ մօտ, որովհետեւ այդ նպատակով ես եկել: Իսկ մեզ բոլորիս Սուրբ Հոգու շնորհներով կենդանի Իր Անձը մեզ համար զոհաբերած Բարի Հովիւը, որ Իր ոչխարներին անուններով է կանչում:

Վանահօր այս խօսքերից յետոյ Զոսիմոսը ծնրադրեց եւ աղօթեց՝ այդուհետեւ մնալով այդ վանքում: Այստեղ նա տեսաւ գործով եւ իմացութեամբ փայլող բոլոր այն ծերերին, որոնք չափազանց ջերմեռանդ ու նուիրուած ծառայում էին Տիրոջը՝ յարաժամ սաղմոսերգելով եւ պարկեշտութեամբ աղօթելով. անգամ ձեռքերով ձեռագործելիս նրանք սաղմոսում էին շուրթերով: Դատարկաբանութիւնը նրանց մօտ ամենեւին բացակայում էր, եւ նիւթական հոգսերը չէին հուզում նրանց, այլ, միայն իրենց ջանքերով ժողովելով կերակրի ծախքերը, աշխարհիկ հոգսերին ամենեւին անծանօթ էին մնում: Բոլորի եւ իւրաքանչիւրի միակ ձգտումն էր մարմնով մեռած լինելը աշխարհի եւ ամենայն աշխարհիկ բանի հանդէպ: Նրանց ամենասիրելի կերակուրն Աստուածաշնչի անսպառ խօսքն էր: Մարմինները կերակրում էին միմիայն ամենաանհրաժեշտով, այսինքն՝ հացով ու ջրով, այնքան, որքան նրանցից իւրաքանչիւրին աստուածային սէրն էր շարժում:

Այս ամէնը տեսնելով՝ Զոսիմոսը ոգեւորւում էր եւ ձգտում միշտ առաջիկայում առաւել աճեցնել իր ընթացքը եւ, գտած լինելով իր զուգափափագողներին, ազնուաբար աստուածային դրախտն էր նորագործում:

Բազում օրեր անց մօտեցաւ քրիստոնեաներին աւանդուած Մեծ պահքը վայելչապէս պահելու ժամանակը՝ նախապէս մաքրագործուելով Քրիստոսի Զարչարանքներին եւ Յարութեանը երկրպագելուն պատրաստուելու համար: Վանքի դռները միշտ փակ էին՝ մենակեացների ճգնութիւնն անյայտ պահելով, եւ երբէք չէին բացւում, բացի այն դէպքերից, երբ որեւէ կարեւոր գործ էր լինում: Այդ տարածքն ամայի էր, եւ մենակեացներին մերձակայ բնակիչները ոչ միայն չէին կոխել այդ հողը, այլեւ անծանօթ էին դրան: Եւ այս վանքում ի սկզբանէ սահմանուած կարգ կար, որի համար էլ, ինչպէս կարծում ենք, Աստուած Զոսիմոսին այստեղ բերեց: Իսկ թէ ինչ կարգ էր եւ ինչպէս էր իրագործւում, այժմ կասենք:

Մեծ պահքին նախորդող կիրակի օրը, սուրբ Պատարագին, բոլորը հաղորդւում էին անապականագործ եւ կենդանարար խորհրդին: Այնուհետեւ, փոքր ինչ կերակրուելուց յետոյ, բոլորը հաւաքւում էին աղօթատեղում եւ ծնրադրութեամբ աղօթում, միմեանց ողջոյն տալիս, գրկախառնւում, խոնարհւում էին մէկմէկու առաջ եւ աղաչում աղօթել միմեանց համար՝ ի նկատի ունենալով առաջիկայ ճգնաւորական մաքառումները: Այս ամենից յետոյ բացւում էին վանքի դռները, եւ բոլորը, զուգաձայնաբար երգելով «Տէրն է լոյսն իմ ու Փրկիչն իմ» սաղմոսը[1], ինչպէս նաեւ ըստ կարգի բոլոր սաղմոսները, դուրս էին գալիս վանքից՝ միայն մէկ կամ երկու պահապան թողնելով այնտեղ. ոչ թէ շտեմարանները պահպանելու համար, քանզի գողանալու ոչինչ չկար, այլ որպէսզի աղօթավայրն առանց պաշտամունքի չմնայ: Վանքից ճգնութեան հեռացած իւրաքանչիր ոք ինքն էր պատրաստում իր կերակուրը՝ իր ցանկութեան եւ կարողութեան չափով: Նրանցից ոմանք սակաւ-ինչ հաց էին տանում՝ ըստ մարմնի չափաւոր կարիքների, միւսները՝ թուզ, ուրիշները՝ արմաւ, իսկ այլոք՝ թրջած ունդ: Ոմանք էլ ոչինչ չէին տանում, իրենց մարմնի վրայ կրած հանդերձից բացի, եւ կերակրւում էին, որքան որ մարմնի բնութիւնն էր ստիպում, անապատում բուսած խոտերով: Իւրաքանչիւր ոք իր առանձին

[1] Տե՛ս Սաղմ. ԻԶ:

կանոնն ունէր, եւ անխախտելի օրէնք կար նրանց մօտ՝ չհետաքրքրուել, թէ ինչպէս է միւսը պահքը պահում կամ ճգնում: Ոմանք Յորդանանն անցնելուց յետոյ անմիջապէս հեռանում էին միմեանցից եւ բնակւում անապատում: Եւ նրանցից ոչ ոք չէր գնում իր ճգնակից ընկերոջ մօտ: Եւ եթէ մէկը տեսնում էր հեռուից, որ ընկերն իր կողմն է գալիս, իսկոյն թեքւում եւ ուրիշ կողմ էր գնում՝ մենակ մնալով Աստուծոյ հետ, յարաժամ սաղմոսելով եւ կերակրուելով միայն սահմանուած ժամին: Այսպէս անցկացնելով պահոց շրջանը՝ բոլորը վերադառնում էին վանք՝ Փրկչի կենդանագործ Յարութիւնից մէկ շաբաթ առաջ նշուող Ծաղկազարդի տօնին, որը տօնում է եկեղեցին գեղեցկագիտակ ծաղիկների վայելչութեամբ: Եւ իւրաքանչիւրը վերադառնում էր՝ իր մէջ կրելով իր մշակութեան վաստակը, գիտակցելով իր ճգնութիւնների աստիճանը. ոչ ոք բնաւ չէր հարցաքննում ընկերոջը, թէ նա ինչպէս էր անցկացրել իր ճգնութիւնը հոգու փրկութեան համար:

Այսպիսին էր այդ վանքի կարգը, որ ազնուաբար պահում էին մինչեւ վերջ, քանզի իւրաքանչիւր ոք, անապատում գտնուելով եւ ազատ լինելով մարդահաճութիւնից, ոչ թէ մարդկանց ցուցադրելու համար էր պահք պահում, այլ ճգնում էր միայն Աստուծոյ առջեւ: Քանզի այն, ինչ մարդկանց ցոյց տալու կամ նրանց հաճոյանալու համար է արւում, ոչ մի օգուտ չի բերում ճգնողին, այլ շատ անգամ վնասում է:

Այն ժամանակ նաեւ Զոսիմոսը միւս վանականների հետ անցաւ Յորդանանը՝ մի փոքր պաշար վերցնելով իր հետ մարմնի կարիքները հոգալու համար, նոյն պատառոտուած հանդերձով, որ կրում էր: Եւ այնուհետեւ, անապատով ընթանալով, կրօնաւորական կարգն էր կատարում. կերակրւում էր միայն ըստ անհրաժեշտութեան, քնում չափաւոր, գետնատարած, ուր որ վրայ հասնէր երեկոն: Իսկ վաղ առաւօտեան արթնանալով՝ դարձեալ շարունակում էր քայլել՝ միշտ արագ ընթանալով: Նա ցանկանում էր խորանալ անապատի մէջ՝ յուսալով գտնել որեւէ ճգնաւոր հօր, որը կարողանար իր հոգու փափագին համապատասխան օգուտ տալ իրեն հոգեպէս: Այս պատճառով ժուժ-

կալութեամբ ընթանում էր ինչպէս մէկը, որ չտապում է դէպի օթեւան:

Քսանօրեայ ճանապարհ անցնելուց յետոյ, երբ հասաւ օրուայ վեցերորդ ժամը, նայելով դէպի արեւելք, նա իր սովորական աղօթքն էր անում, քանզի արդէն սովորութիւն էր դարձրել օրուայ մէջ սահմանուած ժամանակահատուածում ճանապարհ ընթանալը եւ փոքր-ինչ յոգնութիւնից յետոյ յոտնկայս հանգստանալը՝ սաղմոսելով ու երկրպագելով:

Եւ ահա, մինչ նա աղօթում էր՝ անսայթաքելի հայեացքով նայելով դէպի երկինք, աջ կողմից երեւացող մի ստուեր տեսաւ՝ նման մարդու մարմնի: Նա սկզբից վրդովուեց՝ այն ինչ-որ դիւական երեւոյթ կարծելով, եւ դողալով խաչակնքեց՝ երկիւղը վանելով իրենից: Սակայն աղօթքի աւարտին Զոսիմոսը դարձեալ ստուգապէս տեսաւ դէպի հարաւ գնացող ինչ-որ մէկին: Նրա մերկ մարմինն արեգակի բոցից սեւացած էր, իսկ վարսերը գլխին գեղմի պէս սպիտակ էին եւ սակաւ աճած՝ մինչ պարանոցը:

Զոսիմոսը, տեսնելով նրան եւ հիանալով զարմանալի տեսիլքով, սկսեց ընթանալ դէպի նրա կողմը՝ անպատմելի ուրախութեամբ շտապելով հասնել նրան, որովհետեւ քանի օր է չէր տեսել որեւէ մարդու, կենդանու կամ թռչնի եւ բնաւ որեւէ ցամաքային կերպարանք կամ ստուեր: Բացի այդ, նրան խիստ ցանկալի դարձաւ ճանաչել, թէ ով է այդ մարդը՝ յուսալով, որ մեծամեծ բաների ականատես կլինի:

Իսկ մարդը, տեսնելով հեռուից եկող Զոսիմոսին, սկսեց փախչել եւ ընթանալ դէպի անապատի խորքը: Զոսիմոսը, ասես մոռացած իր ծերութիւնը, տակաւին անտեսելով ճանապարհի դժուարութիւնները, նետուեց հասնելու փախչողին եւ այնպէս արագ էր հետապնդում, որ սակաւ առ սակաւ մերձենում էր նրան: Երբ այնքան մօտեցաւ, որ ձայնը լսելի կլինէր, սկսեց աղաղակել եւ այսպէս ձայնել արտասուելով.

—Ինչո՞ւ ես փախչում մեղաւոր ծերից, Աստուծոյ ճշմարի՛տ ծառայ: Ով որ ես, սպասի՛ր ինձ յանուն Աստուծոյ, Ում համար որ այս անապատում ես բնակւում, սպասի՛ր ինձ՝ տկարիս եւ

անարժանիս, յանուն քո ճգնութիւնների հատուցման, յոյսի, սպասի՛ր եւ ծերունո՛ւս բաշխիր աղօթքներդ ու օրհնութիւնդ յանուն Աստուծոյ, որ երբէք ոչ ոքի չի.արհամարհում:

Այսպէս Զոսիմոսն արտասուելով խօսում եւ ընթանում էր նրա ետեւից, մինչեւ հասան մի հովիտ, որ նման էր չորացած գետի հունի: Եւ երբ հասան այն տեղին, փախչողն իջաւ ու ելաւ եւ անմիջապէս անցաւ միւս կողմը: Իսկ Զոսիմոսը, յոգնած եւ այլեւս չկարողանալով ընթանալ, մնաց միւս ափին: Եւ սկսեց առաւել ուժգին արտասուալից հեծեծալ, որպէսզի այդպէս լսելի լինի նրան: Այնժամ փախչողն այսպէս ձայնեց.

—Հա՛յր Զոսիմոս, թողութի՛ւն շնորհիր յանուն Աստուծոյ, չեմ կարող վերադառնալ եւ երեւալ քեզ այսպիսի տեսքով, քանզի թշուառական եւ մերկ կին եմ, ինչպէս տեսնում ես մարմնիս ամօթոյքն՝ անծածկ: Բայց եթէ իրօք ցանկանում ես մեղաւոր կնոջս շնորհել քո աղօթքները, գցի՛ր ուսանոցդ, որպէսզի դրանով ծածկեմ իմ կանացի տկարութիւնը եւ, դառնալով դէպի քեզ, ընդունեմ աղօթքներդ:

Այնժամ Զոսիմոսը սրդողեց՝ խորհելով, թէ ինչպէս այդ կինն իրեն իր անունով դիմեց: Ապա, քանի որ սուրբ այր էր, հասկացաւ աստուածային նախանշանը. եթէ կինը, շնորհով պայծառացած, նախիմացութեամբ քաջայայտ չլինէր իր մասին, իրեն անուամբ չէր կոչի՝ կեանքում երբէք տեսած կամ լսած չլինելով: Եւ, շտապելով կատարել հրամայուածը, հանեց իր հին, պատառոտուած ուսանոցը եւ գցեց նրա վրայ: Կինը, վերցնելով այն, ծածկեց իրեն այնքան, որքան հնարաւոր էր, ապա, շրջուելով դէպի Զոսիմոսը, ասաց.

—Հա՛յր, ինչո՞ւ ցանկացար տեսնել մեղաւոր կնոջս, ի՞նչ էիր փնտրում տեսնելու կամ սովորելու, որ չզլացար այսքան դժուարութիւններ կրել:

Ապա նա, ըստ ընդունուած կարգի, ծնրադրեց՝ օրհնութիւն խնդրելով: Նրա նման եւ ծերն ընկաւ գետնին, եւ երկուսը երկար ժամանակ մնացին այդպէս՝ իւրաքանչիւրը օրհնութիւն խնդրելով միւսից: Եւ ուրիշ ոչինչ չէր լսւում նրանցից:

Շատ ժամեր անց կինն ասաց Զոսիմոսին.

–Հա՛յր Զոսիմոս, քեզ է պատշաճ օրհնել եւ աղօթել, քանի որ քահանայութեան պատուով ես պատուուած շատերից՝ սուրբ Սեղանի մօտ կանգնելով եւ բազում անգամ աստուածային խորհուրդներին խորհրդածու լինելով:

Իսկ Զոսիմոսն առաւել մեծ երկիւղով լցուեց, եւ դողից սկսեց նրանից քրտինք հոսել: Զարհուրած նրա տեսքից՝ հեծեծանքից կտրատուող ձայնով՝ ասաց.

–Ո՛վ հոգեւոր մայր, դու Աստծուն ես մերձեցել եւ աշխարհի հանդէպ շատ բաներով մեռած ես, եւ այդ յայտնապէս վկայում է քեզ պարգեւուած այդպիսի շնորհը՝ ինձ երբէք տեսած չլինելով՝ անունով կոչելդ եւ երէց անուանելդ: Եւ քանի որ շնորհները պատուից չեն ճանաչւում, այլ բարի նկարագրից, դո՛ւ օրհնիր ինձ Տիրոջ անունով եւ աղօթքնե՛րդ շնորհիր կարոտեալիս՝ ըստ քո կատարելութեան:

Այնժամ կինը, հնազանդուելով ծերին, ասաց.

–Օրհնեա՛լ է Աստուած՝ մարդկային հոգիների փրկութեան խնամատարը:

Իսկ Զոսիմոսն ասաց «ամէն», եւ երկուսն էլ վեր կացան երկրպագութիւնից: Եւ կինն ասաց ծերունուն.

–Ինչո՞ւ եկար մեղաւորիս մօտ, ո՛վ մարդ, ինչո՞ւ առաքինութիւնից լիովին զուրկ մերկ կնոջս տեսնել կամեցար: Բայց քեզ Սուրբ Հոգու շնորհն առաջնորդեց, որպէսզի պատշաճ սպասաւորութիւնը կատարես... Արդ, նախ ասա՛ ինձ, թէ ինչպէս են ապրում քրիստոնեաները, աշխարհի թագաւորները, եկեղեցին:

–Մա՛յր իմ,– պատասխանեց ծերը,– Ձեր աղօթքներով Յիսուս Քրիստոս ամենքին բարեկարգ խաղաղութիւն շնորհեց: Այլ ընդունի՛ր անարժան ծերունուս աղաչանքները եւ աղօթի՛ր յանուն Տիրոջ ողջ աշխարհի եւ մեղաւորիս համար, որ տկարս այս անապատում անպտուղ չմնամ:

Նա պատասխանեց.

–Քեզ է վերապահուած, հա՛յր Զոսիմոս, քահանայի պատիւ ունենալով, ինձ եւ բոլորի համար աղօթել, քանզի սրա համար

իսկ ես կանխադրուած, բայց, քանի որ հրամայուած է ամէն ինչ հնազանդութեամբ կատարել, ես բարեյօժար կերպով կկատարեմ քո հրամայածը:

Այս ասելով՝ դարձաւ դէպի արեւելք եւ, աչքերը վեր յառելով ու ձեռքերը տարածելով, սկսեց աղօթել: Նա աղօթում էր միայն շուրթերը շարժելով, իսկ ձայնը լսելի չէր: Եւ Զոսիմոսը ոչինչ չէր լսում, այլ գլխահակ կանգնել էր: Եւ պատմում է նա, վկայ բերելով Աստծուն, որ կնոջ աղօթքի ժամանակ, մի պահ բարձրացնելով հայացքը, տեսաւ նրան գետնից մի կանգուն վեր բարձրացած եւ այդպէս աղօթելիս: Այս տեսնելով առաւել մեծ երկիւղով բռնուած՝ ընկաւ գետնին, սարսափելի քրտնած եւ ահաբեկուած՝ չհամարձակուեց ոչինչ ասել, այլ միայն ստէպ-ստէպ արտաբերել. «Տէ՛ր, ողորմեա՛»: Եւ խոնարհուած ծերին սկսեցին ալեկոծել խորհուրդները. չլինի՞ թէ սա ոգի է՝ աղօթողի կերպարանք առած: Այդժամ կինը, բարձրացնելով նրան, ասաց.

–Հա՛յր, ինչո՞ւ են քեզ խռովեցնում խորհուրդներդ, թէ՝ ոգի եմ՝ աղօթողի կերպարանք առած: Հաւատա՛, ա՛յր դու, որ մեղաւոր կին եմ, սակայն պարսպուած եմ Հոգու մկրտութեամբ եւ ոգի չեմ, այլ հող ու մոխիր եւ մարմին եմ ամբողջապէս՝ ամենեւին չխորհելով հոգեղէն լինելու մասին:

Եւ խաչակնքեց իր ճակատը, աչքերը, շուրթերն ու սիրտը՝ ասելով.

–Հա՛յր Զոսիմոս, Աստուած ազատի՛ մեզ չարից եւ նրա դարանակալութիւնից, քանզի նրա զօրութիւնը յոյժ հակառակում է մեզ:

Այս լսելով՝ ծերը նետուեց ու բռնեց նրա ոտքերից եւ արտասուելով ասաց.

–Երդուեցնում եմ քեզ մեր Քրիստոս Աստծով, որ Կոյսից է ծնուել, Ում համար մերկացել ես այսպէս, ասա՛, յանուն ինչի՞ այդպէս մաշեցիր մարմինդ. ոչինչ մի՛ թաքցրու ինձանից, այլ պատմի՛ր ամէն ինչ քո մասին, որպէսզի Աստուծոյ փառքը քարոզած լինես, քանզի ի՞նչ օգուտ ծածկուած իմաստութիւնից եւ աներեւոյթ գանձից: Ասա՛ ինձ ամէն ինչ յանուն Տիրոջ՝ ոչ թէ

պարծենալու կամ ցուցադրութեան, այլ մեղաւոր անարժանիս շինութեանը նպաստելու համար, քանզի հաւատում եմ Աստծուն, Որով ապրում եւ առաքինանում ես, որ սրա համար առաջնորդուեցի դէպի անապատ, որպէսզի Աստուած քեզ յայտնի դարձնի: Այսուհետեւ մենք անկարող ենք Աստուծոյ վճռին դէմ կենալ, քանզի եթէ Քրիստոսին հաճոյ չլինէր յայտնել, թէ ինչպէս ճգնեցիր, ոչ ոքի թոյլ չէր տայ քեզ տեսնել եւ ոչ էլ ինձ կզօրացնէր՝ այսքան ճանապարհ կտրելու: Եւ առանց Նրա չէի կարող անգամ իմ խրճիթից դուրս գալ:

Այս եւ բազում այլ խօսքեր ասաց Զոսիմոսը, իսկ կինը, նրան ոտքի բարձրացնելով, ասաց.

—Աղաչում եմ, աբբա՛, յանուն Աստուծոյ թողութի՛ւն տուր ինձ, քանզի ամաչում եմ պատմել գործերիս մասին: Սակայն, քանի որ տեսնում ես մերկ մարմինս, կմերկացնեմ նաեւ գործերս, որ տեսնես, թէ որքան լեցուն է հոգիս ամօթով ու նախատինքով: Կպատմեմ քեզ ոչ պարծենալու համար, ինչպէս ասացիր, քանզի ի՞նչ ունեմ պարծենալու բանսարկուին ընտիր անօթ եղածս: Գիտեմ, որ եթէ սկսեմ պատմել իմ մասին, ինձանից կփախչես, ինչպէս օձից: Արդ, թէեւ անօրէն արարքներ եմ գործել, սակայն պիտի պատմեմ ու ոչնչի մասին չեմ լռի՝ ամենակալ Աստծով երդուեցնելով քեզ, որ չդադարես ինձ համար աղօթելուց, որպէսզի վերջին Դատաստանին ողորմութիւն գտնեմ:

Ծերը շարունակ արտասուում էր, իսկ կինը սկսեց պատմել իր մասին՝ ասելով.

—Իմ հայրենիքը, եղբա՛յր, Եգիպտոսն է: Դեռեւս ծնողներիս կենդանութեան ժամանակ, երբ տասներկու տարեկան էի, մերժելով նրանց սէրը, եկայ Ալեքսանդրիա: Եւ թէ ինչպէս սկզբից իմ կուսութիւնն ապականեցի եւ ինչպէս անխափան ու անյագ կերպով խառնակութեան ախտը տենչացի, այդ մասին նոյնիսկ ամաչում եմ մտածել: Սակայն այժմ յարմար եմ գտնում դրանք ազնուօրէն խոստովանել: Ուստի այդ մասին պիտի թերեւս կարճառօտ պատմեմ, որպէսզի իմանաս իմ չարաւիթ հեշտախտութեան մասին:

Ո՛վ հայր, յանուն Տիրոջ թողութի՛ւն տուր ինձ, քանզի տասնեօթ տարեկանում կամ աւելի մեծ հասակում ես հրապարակայնօրէն՝ ժողովրդի առջեւ էի անառակութիւն գործում, սակայն՝ ոչ թէ որեւէ մէկից վարձ ստանալու համար, քանզի արդարեւ, շատ անգամ հրաժարւում էի դրամ վերցնել՝ մտածելով, թէ այդպիսով առաւել յաճախ կայցելեն ինձ եւ որպէս պարգեւ կբաւարարեն իմ ցանկութիւնները: Մի՛ կարծիր, թէ ունեւոր լինելու պատճառով էի մերժում վարձը, քանզի ապրուստս վաստակում էի անդադար կանեփ մանելով, այլ որովհետեւ տենչում էի անսանձ կրքերիս յագուրդ տալու համար ամէն ժամ թաւալուել այդ տիղմում: Ահա այս էր իմ կեանքի եւ գործի նպատակը՝ յարաժամ թշնամութիւն գործել բնութեանս դէմ:

Մի անգամ ամռանը, երբ շարունակում էի այսպիսի կեանքով ապրել, լիբիացի եւ եգիպտացի տղամարդկանց մի բազմութիւն տեսայ, որ գնում էր ծովի կողմը: Այդժամ նրանցից մէկին հարցրի, թէ ուր են շտապում: «Բոլորն էլ Երուսաղէմ են գնում,— պատասխանեց նա,— քանզի մի քանի օրից պատուական Խաչի Վերացման տօնն է»: Իսկ ես ասացի նրան, թէ արդեօք ինձ կտանե՞ն իրենց հետ, եթէ կամենամ այնտեղ գնալ: Նա ասաց. «Ոչ ոք չի կարող արգելք լինել քեզ, եթէ դրամ եւ սննդի պաշար ունես»: Իսկ ես ասացի նրան, որ ո՛չ պաշար ունեմ եւ ո՛չ էլ նաւավարձ, բայց եթէ նոյնիսկ ինձ չկերակրեն, եւ իմ փոխարէն նաւավարձս տուող չգտնուի, պիտի գնամ եւ նստեմ այդ նաւը, քանզի մարմին ունեմ եւ վճարելիքի փոխարէն կարող են այն գործածել: Եւ նրա համար էի գնում այնտեղ, ո՛վ հայր, թողութի՛ւն տուր յանուն Տիրոջ, որպէսզի տափանքի պատրաստ բազում գործակիցներ ունենայի: Այլեւս ինձ մի՛ ստիպիր պատմել իմ նախատինքը, աբբա՛ Զոսիմոս, քանզի, Տէրը վկայ, վախենում եմ իմ խօսքերով պղծել քեզ եւ այս օդը:

Իսկ Զոսիմոսը, արտասուքով թրջելով գետինը, պատասխանեց նրան.

—Յանուն Տիրոջ, պատմի՛ր, ո՛վ ազնիւ մայր, մի՛ ընդհատիր այդ շահեկան պատմութիւնդ:

Այդժամ կինը յաջորդաբար շարունակեց.

–Երիտասարդը, լսելով իմ զազրելի խօսքերը, ծիծաղելով հեռացաւ: Իսկ ես, դեն նետելով ձեռքիս ճախարակը, գնացի ծովի կողմը, ուր եւ շտապում էր բազմութիւնը: Եւ ահա այնտեղ տեսայ մարմնով ու շարժուձեւով խիստ գեղեցիկ տասը կամ աւելի պատանիներ: Նրանք, ինչպէս թւում էր, ինչ-որ կարեւոր բան էին փնտրում եւ ետ էին մնացել իրենց ուղեկիցներից, որոնք վաղուց նաւ էին նստել: Ես անպատկառօրէն, իմ սովորութեան համաձայն, վազեցի նրանց մօտ եւ ասացի. «Ուր որ գնում էք, ի՛նձ էլ տարէք ձեզ հետ: Ես ձեզ հաճոյք կպատճառեմ»: Ուրիշ նման այպանելի մտքեր յայտնելով՝ նրանց ծիծաղը շարժեցի, իսկ նրանք, իմ անամօթութիւնը տեսնելով, ինձ նաւ բարձրացրին: Եւ նաւը շարժվեց:

Իսկ յետագայ դէպքերի մասին ինչպէ՞ս պատմեմ, ո՛վ մարդ, ո՞ր լեզուն կարող է պատմել, եւ ո՞ր ականջները՝ լսել այն ամէնը, ինչ կատարուեց ճանապարհին՝ նաւի մէջ: Քանզի նոյնիսկ երբ նրանք չէին կամենում խառնակուել, ես էի հարկադրում թշուառներին: Լսուած ու չլսուած պղծագործութեան տեսակ չէր մնացել, որ չուսուցանէի նրանց: Այժմ, հաւատա՛, զարմանում եմ, թէ ինչպէս ծովը հանդուրժեց իմ այդքան անառակութիւնները, եւ ինչպէս երկիրն իր բերանը չբացեց՝ ինձ՝ այդքան անձանց դայթակղողիս, դժոխք իջեցնելու: Սակայն, ինչպէս երեւում է, Աստուած իմ ապաշխարութիւնն էր կամենում, քանզի Նա մեղաւորի մահը չի կամենում[1], այլ երկայնամտութեամբ մեր դարձին է սպասում:

Եւ այսպէս, շուտով հասանք Երուսաղէմ: Նախքան տօնը եղած այն օրերին, որ մնացի քաղաքում, նոյն վարքով անցկացրի եւ նոյնիսկ աւելի վատ, քանի որ միայն ծովում ինձ ճանապարհակցած երիտասարդներով չբաւականացայ, այլ, քաղաքաբնակներից եւ օտարականներից շատերին նոյն բանի համար հաւաքելով, նրանց էլ պղծեցի: Իսկ երբ եկաւ Խաչվերացի տօնը, ես, ինչպէս առաջ, գնալով երիտասարդներին հրապուրելու, բոլորին տեսայ վաղ առաւօտեան միասին եկեղեցի գնալիս եւ նրանց հետ գնացի ու մտայ եկեղեցու գաւիթ: Երբ հասաւ Խաչվերացի խորհրդակատարութեան պահը, ես բազմութեան հետ հրմշտուելով շտապեցի ներս մտնել: Մեծագոյն ջանքերով ու ճիգերով թշուառականս մօտեցայ դռանը, որով մտնում էին տաճար, ուր ցուցադրւում էր կենդանարար Փայտը: Բայց երբ հասայ դռան շեմին, թէեւ ուրիշներն անարգել մտնում էին, աստուածային ինչ-որ զօրութիւն ինձ արգելում ու չէր թողնում ներս մտնել, քանզի ստուգապէս ետ էի մղւում: Եւ, դուրս շպրտուելով, կանգնեցի գաւթում: Ապա, ենթադրելով, թէ կատարուածը կանացի տկարութեանս պատճառով է, դարձեալ զուր տեղը, այլոց խառնուելով յամառօրէն ձգտեցի ներս խուժել: Այսպէս ապարդիւն ջանքեր էի վատնում, քանզի թշուառականս ամէն անգամ դռան սեմը կոխելիս տեսնում էի, որ բոլորն առանց որեւէ մէկից խոչընդոտուելու ներս են մտնում, մինչդեռ ես՝ ողորմելիս, մերժւում եմ: Ինչպէս որ պահապան զինուորների բազմութիւնը կարգելակէր իմ առաջընթացը, այնպէս էլ անտեսանելի զօրութիւնն ինձ յանկարծակի արգելում էր՝ դուրս շպրտելով դէպի գաւիթ: Եւ այսպէս երեք թէ չորս անգամ դուրս մղուելով՝ խիստ յոգնեցի եւ նոյնիսկ թոյլ դիմադրութիւն չկարողացայ ցոյց տալ, քանզի մարմինս սաստիկ բռնութիւնից տկարացել էր: Ահա այս պատճառով դադարեցի առաջ գնալ ու հեռացայ՝ կանգնելով գաւթի անկիւններից մէկում: Այնժամ մի կերպ հասու եղայ այն պատճառին, որն ինձ թոյլ չէր տալիս տեսնել կենարար Փայտը, քանզի, մերձենալով իմ սրտի աչքերին, փրկարար խորհուրդը ցոյց տուեց, որ իմ գործերի տիղմն է խոչընդոտում իմ մուտքը: Եւ սկսեցի լալ ու ողբալ եւ կուրծքս ծեծել՝ երկինք առաքելով սրտիս խորքից եկող հեծեծանքները: Ապա կանգնածս անկիւնում, վերը, տեսայ ամենասրբուհի եւ անարատ Կոյս Մարիամ Աստուածածնի սրբապատկերը: Ակնապիշ նայելով նրան՝ ասացի. «Ո՛վ Կոյսդ տիրուհի, որ մարմնով ծնեցիր Աստուածորդուն, գիտեմ ահա, որ արդարացի եւ վայելուչ չէ այսքան ապականուածիս քո՝ յաւերժ Կոյսիդ ու անարատիդ, անապական ու մաքուր հոգի եւ մարմին ունեցողիդ պատկերը տեսնելը: Եւ արդարացի

1 Տե՛ս Եզեկ. ԺԸ 32:

կլինէր նաեւ քո՝ մաքրութեանդ կողմից ինձ զատելն ու պիղծ համարելը: Բայց քանի որ, ինչպէս լսեցի, քո ծնած Աստուածամարդը եկաւ, որպէսզի մեղաւորներին ապաշխարութեան կոչի, ուստի օգնի՛ր ինձ՝ միայնակիս ու անօգնականիս, եւ հրամայի՛ր, որ ինձ եւս թոյլ տրուի եկեղեցի մտնել: Մի՛ զրկիր ինձ տեսնել այն Փայտը, որի վրայ քո Որդին ու քո ծնած Աստուած իր Արիւնն ինձ համար որպէս փրկագին տուեց: Ո՛վ տիրուհի՛դ, հրամայի՛ր, որպէսզի իմ առաջ էլ բացուեն եկեղեցու դռները՝ աստուածային Խաչին երկրպագելու համար: Եւ, քեզանից Մնուածի մօտ միջնորդ լինելով, երաշխաւորի՛ր իմ ուխտադրութիւնը՝ այլեւս զազրելի խառնակութիւններով չթշնամանել մարմինս. եւ երբ տեսնեմ Խաչափայտը, աշխարհից եւ աշխարհում գտնուող ամէն ինչից հրաժարուեմ ու գնամ այնտեղ, ուր որ դու, իբրեւ փրկութեան միջնորդ, առաջնորդես ինձ»: Եւ այս ասելուց յետոյ անմիջապէս ինչ-որ վստահութիւն ստացայ՝ սրտումս հաւատքից ջերմութիւն զգալով, եւ, Աստուծոյ բարեգթութեանն ապաւինած, իմ աղօթած տեղից շարժուեցի ու դարձեալ միացայ ներս մտնողների բազմութեանը: Եւ այլեւս ոչ ոք ինձ չէր խոչընդոտում ու չէր խանգարում տաճարի մուտքին մերձենալ:

Այնժամ սարսափ ու դող պատեց ինձ, եւ սրտաբեկ մօտեցայ այն դռանը, որը մինչ այդ ինձ համար բոլորովին փակ էր, բայց այժմ այն զօրութիւնը, որ քիչ առաջ արգելում էր ինձ, իմ առջեւ մուտքի ճանապարհ էր բացում: Ահա այսպէս մտայ Սրբարան եւ արժանացայ կենդանարար Խաչի տեսութեանը եւ ճանաչեցի աստուածային խորհուրդը, թէ Նա որքան պատրաստակամ է ընդունելու մեր ապաշխարութիւնը: Ապա, ընկնելով գետնին, երկրպագեցի այն սրբութեանը եւ շտապեցի իսկոյն հասնել բարեխօսիս մօտ: Գալով այնտեղ, ուր երաշխաւորուեց ուխտադրութիւնս, ծնրադրելով ամենասուրբ եւ միշտ Կոյս Մարիամ Աստուածածնի առջեւ՝ ասացի. «Ո՛վ բարերար տիրուհի, դու ցոյց տուեցիր քո մարդասիրութիւնն իմ հանդէպ եւ անարժանիս աղաչանքները պիղծ չհամարեցիր, քանզի ականատես եղայ այն փառքին, որը յիրաւի անկարելի էր անառակիս համար: Փա՛ռք Աստուծոյ, որ քո միջոցով ընդունում է մեղաւորների զղջումը: Ուրիշ ի՞նչ կարող եմ ասել մեղաւորս: Բայց այժմ, տիրուհի՛, ճիշտ ժամն է կատարելու այն խոստումը, որը դու երաշխաւորեցիր: Արդ, առաջնորդի՛ր ինձ, ուր կամենում ես, եւ եղի՛ր ինձ փրկութեան վարդապետ՝ ուսուցանելով փրկութեան տանող ճանապարհը»:

Այս խօսքերը տակաւին չաւարտած՝ լսեցի ասես հառուից աղաղակող մէկի ձայնը. «Եթէ անցնես Յորդանանը, այնտեղ կատարեալ հանգստութիւն կգտնես»: Ունկնդրելով այս ձայնը եւ վստահ լինելով, որ այն ինձ համար էր ասուած՝ արտասուախառն աչքերով աղաղակեցի Աստուածածնին. «Տիրուհի՛դ իմ, տիրուհի՛, ո՛վ տիրուհի, մի՛ լքիր ինձ»:

Այնուհետեւ դուրս եկայ տաճարի գաւթից եւ առանց շեղուելու գնացի առաջ: Իմ դուրս գալու պահին ինչ-որ մէկը, տեսնելով ինձ, երեք դրամ տուեց եւ ասաց. «Վերցրո՛ւ այս, մա՛յր իմ»: Վերցնելով տուածը՝ դրանցով երեք հաց գնեցի եւ որպէս օրհնուած պաշար վերցրի հետս: Ապա, հաց վաճառողից հարցնելով, թէ որ ճանապարհն է տանում դէպի Յորդանան, եւ, տեղեկանալով քաղաքի դէպի այդ կողմ տանող դարպասի մասին, ելայ ու արտասուելով ճանապարհ ընկայ: Եւ այսպէս, սուրբ Խաչին երկրպագութիւն անելուց յետոյ հարց ու փորձով ընթանալով, արեւամուտին հասայ սուրբ Յովհաննէս Մկրտչի տաճարին, որ գտնուում է Յորդանանի մօտ: Նախապէս տաճարում երկրպագելով՝ փութանակի իջայ Յորդանան եւ սուրբ Ջրով ձեռքերս ու երեսս լուանալուց յետոյ Կարապետի տաճարում հաղորդուեցի անարատ, կենարար եւ սուրբ խորհրդին: Ապա, ուտելով մի հացի կէսը եւ Յորդանանի Ջրով ծարաւս յագեցնելով, գիշերը գետնատարած պառկեցի: Առաւօտեան մի փոքրիկ նաւակ գտայ եւ անցայ միւս ափը՝ դարձեալ խնդրելով առաջնորդողիս, որ ինձ առաքի իր կամեցած տեղը: Այնուհետեւ յայտնուեցի այս անապատում եւ մինչեւ օրս փախել ու ապաստանել եմ այստեղ՝ ապաւինելով իմ Աստծուն, որ փրկում է կարճամտութիւնից ու կործանարար աշխարհից դէպի Ինքը դարձածիս:

Զոսիմոսը հարցրեց նրան.

—Քանի՞ տարի է, ինչ դու ապաստանել ես այս անապատում, տիրուհի՛:

—Ահա քառասունեօթերորդ տարին է, ինչ դուրս եմ եկել սուրբ քաղաքից,— պատասխանեց կինը:

Ծերը կրկին հարցրեց.

—Իսկ ի՞նչ ես գտել ու գտնում իբրեւ կերակուր, տիրուհի՛:

—Ցորդանանն անցայ՝ հետս ունենալով երկուսուկէս հաց, որոնք աստիճանաբար չորանալով քարացան եւ քիչ-քիչ ուտելով վերջացան,— պատասխանեց կինը:

—Իսկ ինչպէ՞ս,— կրկին հարցրեց ծերը,— այսքան ժամանակամիջոցն այդպէս անգործ անցկացրիր՝ երբէք չխռովելով յանկարծահաս գայթակղութիւնից:

—Ո՛վ հայր, այնպիսի բան ես հարցնում,— պատասխանեց կինը,— որի մասին նոյնիսկ սարսափում եմ պատմել, քանզի եթէ անդրադառնամ իմ կրած բազմաթիւ գայթակղութիւնների յիշողութեանը եւ ինձ նեղութիւն պատճառած դժնդակ խորհուրդներին, ապա վախենում եմ կրկին դրանց մէջ ընկնել:

—Պատմածներիդ մէջ ոչինչ բաց մի՛ թող, տիրուհի՛,— ասաց ծերը,— այլ առանց հապաւելու ամէնը հերթով հաղորդի՛ր ինձ:

Եւ կինը շարունակեց.

—Տասնեօթ տարի ես շրջեցի այս անապատում՝ վայրենի գազաններից, այսինքն՝ անբան ցանկութիւններից նեղուելով: Քանզի կերակրուելիս Եգիպտոսի ձուկն ու միսն էի տենչում, փափագում էի նաեւ ինձ համար բաղձալի եղած գինին, քանզի աշխարհում ապրելիս գինի շատ էի խմում: Իսկ այստեղ, նոյնիսկ խմելու ջուր չունենալով, չարաչար պապակւում էի, եւ պահանջներս չբաւարարելը տանջում էր ինձ: Նաեւ միշտ ինձ անբանապէս ալեկոծում էր պոռնկական ցանկութիւններիս յիշատակը եւ դրդում երգել իմ սովորած դիւական երգերը: Իսկ ես, արտասուելով եւ կուրծքս ծեծելով, մտաբերում էի անապատ դուրս գալուց առաջ արած իմ ուխտը եւ մտովի տեղափոխւում ինձ երաշխաւորող Աստուածածնի պատկերի առջեւ՝ խնդրելով վանել իմ չար մտքերը, որոնք այնքան վտանգում էին

թշուառականիս հոգին: Եւ այսպէս երկարատեւ արտասուելով եւ կուրծքս ուժգին ծեծելով՝ վերջապէս իմ շուրջն ամէնուրեք ծաւալուած լոյս էի տեսնում. եւ ապա զարմանալի եւ հեշտաբար խաղաղութեան մէջ ազատւում էի մրրկալի խորհուրդներից: Արդ, ինչպէ՞ս նկարագրեմ քեզ, հա՛յր, այն բոլոր պոռնկական խորհուրդները, որոնք մերժուեցին իմ կողմից: Սրտիս ներսում ցանկասիրութեան հուրն այրում էր՝ ինձ տառապեցնելով: Եւ ես, ընկնելով գետնին եւ արտասուքով թրջելով այն, պատկերացնում էի, թէ երաշխաւորս է տնօրինում ինձ՝ դատապարտելով յանցանքներս եւ դրանց համար սպառնալով պատժել: Եւ ես ընկածս տեղից վեր չէի կենում, մինչեւ որ այն քաղցր լոյսը փայլում էր իմ շուրջը եւ վերացնում խաւար խորհուրդները: Եւ այսպէս, մտքիս աչքերը միշտ դէպի իմ երաշխաւորը յառած, այս դժնդակ անապատում վտանգուածիս համար նրանից օգնութիւն էի խնդրում: Եւ նա իմ մշտական օգնականն ու ապաշխարութեան միջնորդն էր: Ահա այսպէս, բիւր վտանգներով վտանգուած, անցկացրի տասնեօթ տարի: Եւ մինչեւ օրս իմ օգնականն ինձ հետ է եւ խնամում է ինձ:

Ծերն ասաց նրան.

—Իսկ կերակրի ու հագուստի կարիք երբեւէ չե՞ս զգացել:

Կինը պատասխանեց.

—Իմ ունեցած հացի պաշարը սպառելով՝ տասնեօթ տարի անապատի բուսականութեամբ եմ սնուել, իսկ ունեցածս հանդերձը Յորդանանն անցնելիս պատառոտուեց ու մաշուեց: Յաճախ սառնամանիքից ու նաեւ արեգակնատապ խորշակից վնասուելով, արեգակնակէզ տօթից կիզուելով ու ցրտաշունչ սառնամանիքից դողալով՝ ուժասպառ ընկնում էի գետնին՝ շատ անգամ նաեւ բռնուած լինելով զանազան վշտերով, փորձութիւններով եւ օտարոտի խորհուրդներով: Սակայն այնուհետ Աստուծոյ զօրութիւնը բազում կերպերով իմ մեղաւոր հոգուն եւ տառապեալ մարմնին պաշտպան կանգնեց: Եւ այժմ, խորհելով, թէ Տէրն ինչպիսի չարիքից ինձ փրկեց, որպէս անսպառ կերակուր ունեմ իմ փրկութեան յոյսը: Քանզի սնուում ու քնում եմ Աստուծոյ խօսքով, որ կարգաւորում է ամէն ինչ, քանզի

միայն հացով չի ապրում մարդ[1] եւ ոչ էլ՝ զգեստ կրելով: Քանզի մեղքերի վերարկուից ազատուածն առանց հանդերձի ապաստանում է ժայռերի ծերպերում[2]:

Լսելով, որ նա Մովսէսից, Յոբից ու սաղմոսներից խօսքեր է յիշատակում՝ Զոսիմոսը հարցրեց, թէ արդեօք չի՞ ընթերցել սաղմոսներն ու միւս գրուածքները: Իսկ կինն, այս լսելով, ժպտաց եւ ասաց.

–Ո՛վ մարդ, հաւատա՛, որ Յորդանանն անցնելուց ի վեր քեզանից բացի ուրիշ ոչ մի մարդ եւ նոյնիսկ որեւէ գազան այս անապատում չեմ տեսել: Իսկ գրուածքները ոչ թէ որեւէ մէկից եմ սովորել եւ կամ որեւէ մէկի սաղմոսելիս կամ ընթեռնելիս եմ լսել, այլ, քանի որ Աստուծոյ խօսքը կենդանի է ու ներգործուն, ինքն էլ մարդկանց ուսուցանում է գիտութիւնը:

Արդ, քանի որ ես աւարտեցի սկսածս պատմութիւնը, այժմ Աստուածորդու մարդեղութեամբ աղաչում եմ քեզ, որ յանուն Տիրոջ աղօթես անառակիս համար:

Նրա խօսքերից յետոյ ծերն ընկաւ գետնին ու արտասուաթոր աչքերով աղաղակեց՝ բարեբանելով անթիւ, մեծասքանչ գործեր կատարողին.

–Օրհնեա՛լ է Աստուած, որ շռայլօրէն շնորհ է տալիս Իրենից երկիւղածներին: Քանզի արդարեւ, Տէ՛ր, Քեզ փնտրողներից ոչ ոքի չլքեցիր:

Իսկ կինը, մօտենալով ծերին, ընդհատեց նրան՝ ասելով.

–Երդուեցնում եմ քեզ, ո՛վ մարդ, մեր Փրկիչ եւ Աստուած Քրիստոսով, որ այն ամէնը, ինչ դու ինձանից լսեցիր, ոչ ոքի չյայտնես՝ նախքան Աստուծոյ կողմից այս երկրից արձակուելս: Իսկ այժմ գնա՛ խաղաղութեամբ եւ մէկ տարի յետոյ, Աստուծոյ շնորհներով պահպանուելով, կրկին կհանդիպես ինձ: Այնժամ յանուն Աստուծոյ արա՛ այն, ինչ որ հիմա քեզ կասեմ. գալիք

1 Տե՛ս Մատթ. Դ 4:

2 Հմմտ. Յոբ ԻԴ 8, Երր. ԺԱ 38:

տարուայ պահոց շրջանին Յորդանանը մի՛ անցիր, ինչպէս անում էք սովորաբար:

Իսկ ծերունին, հիացած, որ գիտի նաեւ վանքի կանոնը, ոչինչ չկարողացաւ ասել, այլ միայն փառաբանեց.

–Փա՛ռք Քեզ, Տէ՛ր Աստուած, որ մեծամեծ պարգեւներ ես տալիս Քեզ սիրողներին:

Իսկ կինն ասաց.

–Այսուհետեւ, աբբա՛, կմնա՛ս վանքում, քանզի եթէ կամենաս իսկ դուրս գալ, այդ չի յաջողուի: Եւ Խորհրդաւոր ընթրիքի երեկոյեան (Աւագ հինգշաբթի) վերցրո՛ւ կենդանարար Մարմինն ու պատուական Արիւնը, դի՛ր որեւէ մաքուր ամանի մէջ, բե՛ր Յորդանանի այն ափին գտնուող բնակավայրի մօտ, որպէսզի ես գամ եւ հաղորդուեմ կենարար Պատարագին. քանզի այն օրից, ինչ Յորդանանն անցնելուց առաջ հաղորդուեցի Կարապետի տաճարում, այլեւս այդ սրբութեանը չեմ հաղորդուել եւ այժմ անդիմադրելի ցանկութեամբ փափագում եմ հաղորդուել: Այս պատճառով աղաչում եմ, որ չանտեսես իմ խնդրուածքները, այլ անպայման ինձ մօտ բերես այդ աստուածային ու կենարար խորհուրդը այն ժամին, երբ Տէրն Իր աշակերտներին Իր աստուածային Ընթրիքին հաղորդ դարձրեց: Իսկ քո բնակուած վանքի վանահայր Յովհաննէսին կասե՛ս. «Զգո՛յշ եղիր, եղբա՛յր, քո անձի եւ հօտի համար, քանզի բաներ են կատարուում, որոնք շտկելու կարիք ունեն». բայց դրանք չեմ ուզում, որ այժմ ասես, այլ այնժամ, երբ Տէրը հրամայի:

Այս ասելով ու ծերունուն կրկին անգամ խնդրելով, որ աղօթի իր համար՝ դիմեց դէպի անապատի խորքերը: Իսկ Զոսիմոսը, ծնրադրելով ու համբուրելով գետինը, ուր մնացել էին նրա ոտնահետքերը, գոհանալով փառք էր տալիս Աստծուն եւ դարձեալ ու դարձեալ, խիստ ցնծալով հոգով ու մարմնով, փառաւորում ու բարեբանում էր Տիրոջը: Ապա, անցնելով անապատը, հասաւ վանք այն ժամանակ, երբ սովորաբար վերադառնում էին մենակեացները:

Եւ ողջ այդ տարին լռեց՝ չհամարձակուելով որեւէ մէկին պատմել իր տեսածները: Բայց իր սրտում աղաչում էր Աստ-

ծուն, որպէսզի իրեն դարձեալ արժանացնի փափագելի դէմքի տեսութեանը, եւ տրտմում ու տառապում էր՝ տարուայ ժամանակը մտքով անցկացնելով, ու կամենում, որ տարին մէկ օրուայ պէս անցնէր: Իսկ երբ հասաւ պահոց շրջանի սկիզբը, այսինքն՝ առաջին կիրակին, բոլորը սովորականի պէս աղօթք ասելուց անմիջապէս յետոյ սաղմոսելով քաշուեցին անապատ: Մինչդեռ Զոսիմոսը, ջերմութիւն ունենալու պատճառով ստիպուեց մնալ վանքում: Եւ իսկոյն յիշեց սրբուհու ասածը, թէ՝ եթէ նոյնիսկ կամենայ դուրս գալ անապատ, չի յաջողուի: Մի քանի օր անց ապաքինուելով հիւանդութիւնից՝ նա մնաց վանքում: Իսկ երբ կրօնաւորները վերադարձան, եւ մերձեցաւ Խոհրդաւոր ընթրիքի մեծ օրուայ երեկոն, ծերունին կատարեց իրեն հրամայուածը. մի փոքր սկիհի մէջ մեր Քրիստոս Աստուծոյ անարատ Մարմնից ու պատուական Արիւնից վերցնելով եւ մի ամանի մէջ չոր թուզ, արմաւ եւ փոքր-ինչ թրջած ոսպ դնելով՝ ուշ երեկոյեան գնաց-նստեց Յորդանանի ափին՝ սպասելով սուրբի գալստեանը: Կինն ուշանում էր: Իսկ Զոսիմոսը չքնեց, այլ սկսեց ուշադիր նայել անապատի կողմը՝ սպասելով տեսնել իր ցանկալիին: Եւ իր ներսում ասում էր. «Գուցէ իմ անարժանութիւնն է նրան արգելում գալ, կամ գուցէ եկել է եւ, ինձ չգտնելով, իսկոյն հեռացել»: Այսպէս ասելով՝ արտասուելով հեծեծում էր եւ, աչքերը երկինք յառած, աղաչում Աստծուն.

—Տէ՛ր, ինձ մի՛ զրկիր սուրբին դարձեալ տեսնելուց, ում նախկինում տեսնել արժանացրիր, մի՛ թող ապարդիւն վերադառնալ՝ ինձ հետ տանելով իմ մեղքերի յանդիմանութիւնը:

Այսպէս արտասուելով՝ աղաչում էր եւ տարատեսակ մտածումների մէջ ընկնում, քանզի ասում էր ինքն իրեն. «Եթէ նոյնիսկ գայ, արդեօք ինչպէ՞ս պիտի անցնի Յորդանանը եւ գայ անարժանիս մօտ, քանի որ նաւ չկայ: Վա՜յ ինձ, որ զրկուեցի այդպիսի վայելուչ գեղեցկութիւնից»: Եւ մինչ ծերը այս էր խորհում, Աստուծոյ սուրբը մօտեցաւ: Եւ Զոսիմոսը վեր կացաւ եւ անպատմելի խնդութեամբ սկսեց գոհանալ ու փառաւորել Աստծուն: Սակայն Յորդանանն անցնելու անկարելիութեան միտքը կրկին մտահոգում էր նրան, երբ տեսաւ, որ սրբուհին

Քրիստոսի խաչով Յորդանան գետը խաչակնքեց, որից յետոյ սկսեց ջրի վրայով դէպի ինքը գալ: Ծերը կամեցաւ երկրպագել նրան, բայց նա արգելեց՝ ասելով.

—Ի՞նչ ես անում, աբբա՛, քահանայ լինելով հանդերձ՝ անտեսո՞ւմ ես աստուածային պատուիրանը:

Իսկ Զոսիմոսն ի պատասխան նրան ասաց.

—Փա՛ռք Աստուծոյ, որ այսպիսի շնորհներ է պարգեւում Իրեն փառաբանողներին:

Կինը, անցնելով ջուրը, ծերից օրհնութիւն խնդրեց: Իսկ ծերը, որին հրաշափառ տեսիլքից սարսափ էր պատել, դողալով պատասխանեց.

—Յիրաւի անսուտ է Աստուած, որ, ըստ Իր խոստման, իւրաքանչիւրին սեփական մաքրութեան չափով նմանեցնում է Իրեն: Փա՛ռք Քեզ, որ չանտեսեցիր աղօթքս եւ չզրկեցիր Քո ողորմութիւնից Քո ծառային, փա՛ռք Քեզ, Քրիստո՛ս Աստուած մեր, որ Քո այս աղախնի միջոցով երկիցս ցոյց տուեցիր ինձ, թէ որքան հեռու եմ կատարելութիւնից:

Այնուհետեւ կինը խնդրեց, որպէսզի կարդայ «Հաւատոյ հանգանակը» եւ «Հայր մերը»: Աղօթքի աւարտից յետոյ, ըստ կարգի, նա հաղորդուեց կենարար խորհրդին, որից յետոյ, ձեռքերը վեր բարձրացնելով, արտասուալից աչքերով բացականչեց.

—Այժմ, ո՛վ Տէր, ըստ Քո խօսքի՝ խաղաղութեամբ արձակի՛ր աղախնիդ, որովհետեւ աչքերս տեսան Քո փրկութիւնը[1]:

Ապա դիմեց ծերին՝ ասելով.

—Հա՛յր, թողութի՛ւն տուր ինձ եւ իմ մի ցանկութիւնն էլ կատարիր. այժմ խաղաղութեամբ գնա՛ Աստուծոյ վանք, իսկ եկող տարի կրկի՛ն եկ այն հովիտը, ուր առաջին անգամ հանդիպեցի քեզ: Արի՛ յանուն Տիրոջ եւ դարձեալ կտեսնես ինձ, ինչպէս եւ Նա է կամենում:

Իսկ ծերը պատասխանեց.

---

1 Հմմտ. Ղուկ. Բ 29-30:

—Երանի՜ կարելի լինէր այստեղից իսկ հետեւել քեզ ու միշտ տեսնել քո պատուական դէմքը: Իսկ այժմ Աստուծոյ սիրոյն կատարի՛ր մեղաւոր ծերիս ցանկութիւնը եւ փոքր-ինչ ճաշակի՛ր իմ բերած կերակուրներից:

Այս ասելով՝ նրան ցոյց տուեց իր ունեցածը: Իսկ կինը, մատները մօտեցնելով ոսպին, սակաւ-ինչ ճաշակեց եւ ասաց.

—Բաւական է: Սուրբ Հոգու շնորհները, որ անարատ են պահում մաքրուածի հոգին, յագեցնում են ինձ:

Ապա կրկին խնդրեց ծերին՝ ասելով.

—Աղօթի՛ր Տիրոջն ինձ համար՝ յարաժամ յիշելով ինձ՝ թշուառութեանս:

Մերունին, բռնելով սրբուհու ոտքերից, խնդրեց աղօթել սուրբ Եկեղեցու, թագաւորների եւ իր համար: Ապա, այլեւս չհամարձակուելով պահել նրան, հեծելով ու ողբալով հեռացաւ:

Իսկ սրբուհին, դարձեալ ուղղուելով Յորդանանի կողմը եւ խաչակնքելով գետը, առաջին անգամուայ պէս անցաւ ջրի վրայով ու հեռացաւ: Ծերը, երկրպագելով նրա ոտնահետքերը, ուրախութեամբ եւ խիստ երկիւղով լցուած, վերադարձաւ՝ ինքն իրեն մեղադրելով, որ չիմացաւ սրբուհու անունը: Սակայն, ըստ սրբուհու խօսքերի, յոյս ունէր նրան հանդիպել եկող տարի:

Եւ երբ այդ տարին մօտեցաւ, կրկին ուղեւորուեց անապատ: Կատարելով ողջ կրօնաւորական կարգը՝ նա ընթանում էր դէպի այն հրաշափառ տեսիլքի վայրը: Հասնելով փնտրուող վայրը յիշեցնող նշանների՝ սկսեց աջ ու ձախ նայել որսորդի նման՝ իր այն քաղցր որսը բռնելու համար: Սակայն, հայեացքը շուրջբոլորը շրջելով ու ոչ ոքի չտեսնելով, սկսեց արտասուել եւ, արտասուախառն աչքերը երկինք յառած, ասաց.

—Տէ՛ր, ցո՛յց տուր ինձ Քո անարատ գանձը, որ այս անապատում ես թաքցրել, ցո՛յց տուր ինձ այն մարմնաւոր հրեշտակին, որին արժանի չէ ողջ աշխարհը:

Այս ասելով՝ հասաւ այն հովտանման վայրին եւ, կանգնելով այնտեղ, արեւելեան կողմում տեսաւ սուրբի գետնատարած մարմինը՝ ննջեցեալներին տրուող ձեռնամած, արեւելահայեաց

դիրքով: Յառաջանալով՝ նա արցունքներով լուաց սրբուհու ոտքերը, քանզի չհամարձակուեց մարմնի այլ մասի մերձենալ: Բաւականին արտասուելուց յետոյ նա, յաւուր պատշաճի աղմոսներ եւ թաղման աղօթքներ կարդալով, ինքն իրեն ասում էր. «Արդեօք պատշա՞ճ կլինի սուրբի մասունքները թաղելը: Գուցէ դա հանգուցեալ երանելուն էլ անհաճոյ լինի»: Սակայն այսպէս ասելիս նրա գլխակողմի հողի վրայ տեսաւ հետեւեալ գրութիւնը.

«Հա՛յր Զոսիմոս, Մարիամ տառապեալիս նշխարները թաղի՛ր այստեղ՝ հողը յանձնելով հողին, եւ յարաժամ աղօթի՛ր ինձ համար՝ Մարիամի, որ վախճանուեց՝ ըստ եգիպտացիների՝ փարմութ ամսին, որ, ըստ հռոմէացիների, ապրիլն է, Փրկչի չարչարանքների գիշերը, նուիրական եւ աստուածային Ընթրիքի ճաշակումից յետոյ»:

Կարդալով այս գրութիւնը՝ ծերը շատ ուրախացաւ, քանզի իմացաւ սրբուհու անունը եւ հասկացաւ, որ, Յորդանանի ափին հաղորդուելով, նոյն օրը սրբուհին հասել է այդտեղ եւ հանգել ի Տէր: Այդ տարածութիւնը, որը Զոսիմոսն անցել էր քսան օր չարչարուելով, Մարիամը, ընթանալով Սուրբ Հոգու թեւերով, կտրել էր մի ժամում եւ, տեղ հասնելով, դէպի վեր՝ առ Աստուած ճանապարհուել:

Ապա ծերը, փառաւորելով Աստծուն եւ արտասուքով սրբելով մարմինը, ասաց.

—Տառապեա՛լ Զոսիմոս, այժմ պատուէրը կատարելու ժամանակն է: Բայց ի՞նչ կարող ես անել, ո՛վ թշուառական. ձեռքիդ բրիչ իսկ չկայ:

Այս ասելուն պէս անապատի բաց տարածութեան մէջ մի փոքրիկ փայտ տեսաւ, որը վերցնելով՝ սկսեց փորել: Սակայն հողը չոր էր եւ դժուարութեամբ էր փորւում: Եւ ծերը, չարչարուելով ու խիստ յոգնելով, քրտինքով շաղախուած եւ այլեւս չկարողանալով փորել, հառաչեց սրտի խորքից: Այդ պահին, գլուխը վեր բարձրացնելով, սրբուհու մարմնի մօտ մի հսկայ առիւծ տեսաւ, որ լիզում էր նրա ոտքերը: Գազանին տեսնելով՝ ծերը խիստ ահաբեկուեց, մանաւանդ որ յիշեց

Մարիամի խօսքերը, թէ երբէք գազանի չի հանդիպել: Ապա խաչակնքեց՝ հաւատալով, որ Քրիստոսի զօրութիւնն իրեն անվնաս կպահի: Իսկ առիւծը, հեզ շարժումներով խաղաղութիւն ներշնչելով, սկսեց մօտենալ ծերունուն: Այնժամ Զոսիմոսը դիմեց առիւծին եւ ասաց.

—Տիրուհին ինձ պատուիրեց ամփոփել իր նշխարները, բայց քանի որ ես ծեր եմ ու չեմ կարող գուբը փորել եւ համապատասխան գործիքներ չունեմ եւ չեմ կարող այնպիսի գերեզմանափոս քանդել, որը պատշաճ լինի այս գործին, ուստի քո մագիլներո՛վ փոսը փորիր, որպէսզի սրբուհու նշխարները հողին յանձնենք:

Եւ առիւծն իսկոյն դիմացի ոտքերով սկսեց փորել այնքան, որքան որ պէտք էր մարմինը թաղելու համար: Ապա ծերը, դարձեալ արցունքներով լուանալով սրբուհու ոտքերը եւ այժմ առաւել յոյժ պաղատելով նրան, որ բարեխօսի բոլոր մարդկանց համար, հողով ծածկեց նրա գրեթէ մերկ մարմինը, որ կրում էր միմիայն իրենց առաջին հանդիպման ժամանակ իր նետած այն պատառոտուն հանդերձը, որ միայն նրա մարմնի որոշ մասերն էր ծածկում: Այնուհետեւ երկուսն էլ հեռացան. առիւծը գառան պէս հանդարտ քաշուեց անապատի խորքերը, իսկ ծերը, օրհնելով ու փառաբանելով Աստծուն, վերադարձաւ վանք: Եւ գալով վանք՝ իր տեսածներից ու լսածներից ոչինչ չթաքցրեց. պատմեց ամէն ինչ սկզբից մինչեւ վերջ, որպէսզի, Աստուծոյ մեծամեծ գործերի մասին լսելով, բոլորը հիանան եւ երկիւղածութեամբ կատարեն սրբուհու յիշատակը: Ապա, քանի որ սրբուհու երբեմնի ասածները դատարկ խօսքեր չէին, Յովհաննէս վանահայրն ի յայտ բերեց վանքում շտկելու կարիք ունեցող բաները:

Այնուհետեւ, հասնելով իր հարիւրամեակին, վախճանուեց նաեւ Զոսիմոսը:

Իսկ այս պատմութիւնը բանաւոր կերպով կրօնաւորները սերնդէ սերունդ միմեանց էին փոխանցում եւ ուսուցանում, եւ գրաւոր արձանագրուած այն չկար մինչեւ օրս: Իսկ ես, լսելով այն, գրի առայ: Միգուցէ մէկ ուրիշն արդէն աւելի ճոխ ու

բարձրարուեստ գրած լինի սրբուհու վարքը, քան ես, թէպէտեւ այդպիսի լուր ինձ չի հասել: Սակայն, Աստուծոյ զօրութեամբ գրելով այս պատմութիւնը, ճշմարտութիւնից բացի ոչինչ չեմ հետամտել: Եւ Աստուած, որ մեծահրաշ ու սքանչելի գործեր է կատարում՝ արդարապէս հատուցելով իրեն ապաւինածներին, թող վարձ շնորհի այս պատմութիւնից օգտուողներին եւ նրան, ով պատուիրեց այն արձանագրել. որպէսզի նրանց էլ արժանացնի հաղորդակից լինելու երանելի Մարիամի վարքին ու կարգին, նաեւ բոլոր նրանց, ովքեր ի սկզբանէ հաճելի եղան Իրեն՝ շնորհիւ մեր Տիրոջը՝ Յիսուս Քրիստոսին ուղղուած իրենց խնդրանքների: Նրան փա՛ռք յաւիտեանս. ամէն:

ԵՐԱՆԵԼԻ ՄԱՇՏՈՑ [ԵՂԻՎԱՐԴԵՑՈՒ]* ՎԱՐՔԸ

Ո՛վ աստուածասէր հայրեր ու եղբայրներ, երիցս երանելի խաղաղազգեստ ճգնաւորի՝ Աստուծոյ երանելի այր տէր Մաշտոցի սուրբ վարքին Ամենասուրբ Հոգու սիրով [ծանօթանալ] փափագողնե՛ր, ես՝ նրա Ստեփանոս աշակերտս, չկարողացայ ամբողջութեամբ գրել այս լուսաւոր [անձի] ազնիւ վարքի մասին՝ մանուկ հասակից մինչ ճգնութիւնները: Սակայն համառօտակի կպատմեմ ձեզ, որպէսզի քչից ուսելով՝ նախանձաւոր լինէք նրա սուրբ վարքի հետքերի շաւիղներին:

Նա Եղիվարդ գիւղից էր, քահանայական տոհմից, սուրբ Թէոդորոսի անունը կրող մենաստանի ժառանգակիցներից:

Եղաւ, որ նրա հայրը երիտասարդ տարիքում պանդխտութեան գնաց եւ բնակուեց Սողք գաւառում: Այնտեղ մնալով եւ ամուսնանալով՝ ծնեց Քրիստոսի գեղեցիկ աղաւնուն, ում մասին սկսել ենք պատմել: Եւ ուսուցանելով՝ կրթեց որդուն աստուածային Սուրբ Գրքով, քանի որ ինքը քահանայ էր: Հօր վախճանուելուց յետոյ պատանի Մաշտոցը գնաց, միացաւ կրօնաւորներին եւ առաջնորդուեց մի ճգնակեաց այրի կողմից, որ ճանաչւում էր Թէոդորոս անունով: Գեղամայ գաւառի Մաքենոց կոչուող մենաստանում վարժուեց եւ հմուտ եղաւ Սուրբ Գրքին ու նրա աստուածազգեաց զօրութիւններին եւ քահանայութեան աստիճան ստացաւ: Ուշիմ էր, սիրելի մեծամեծներին ու ժողովրդին: Ուստի Սուրբ Հոգու շնորհատուր ազդմամբ երկրից երկինք վերադարձաւ, այսինքն՝ հրաժարուելով մարմնի աւելորդ պէտքերից՝ ձեռք բերեց պահեցող, պարկեշտ, ընդակեր ու ճշմարտասէր վարք:

* Մաշտոց Ա Եղիվարդեցի - 897 թ. (յունիս-դեկտեմբեր) հայոց հայրապետ: Հռչակուած է եղել ճգնաւորական կենցաղով եւ իմաստասիրական արուեստով: Իր հայրապետութեան կարճատեւ ընթացքում (ընդամէնը եօթ ամիս) սքանչելագործութիւններով եւ գովելի վարդապետութեամբ նպաստել է Եկեղեցու բարեկարգութեանը: Սիւնեաց Վասակ Գաբուռ իշխանի կնոջ՝ Մարիամի բարերարութեամբ կառուցել է Սեւանայ թերակղզու Ս. Առաքելոց եւ Ս. Աստուածածին եկեղեցիները (874 թ.): Նա է կազմել Հայ Եկեղեցու Միսարանը, որ իր անունով Մաշտոց է կոչւում: Նրա սուրբ նշխարներն ամփոփուած են Գառնիում Խոսրովիդուխտի հովանոցի մօտ:

ՅԱՂԱԳՍ ՎԱՐՈՒՑ ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՄԱՇԴՈՑԻ [ԵՂԻՎԱՐԴԵՑԻՈՅ]*

Ո՛վ աստուածասէր հարք եւ եղբարք, սիրով Ամենասուրբ Հոգւոյն փափագմամբ ցանկացողք մաքուր վարուց երիցս երանեալ խաղաղն ճգնաւորի տեառն Մաշդոցի՝ առնն Աստուծոյ: Զորոյ զազնուականութիւն վարուց նորա լուսաւորութեանն ի տղայական հասակէ մինչեւ ցայժմ, զոր ճգնէր, ես՝ Ստեփանոս աշակերտ նորին, ոչ կարացի բովանդակ ընդ գրով արկանել, այլ համառաւտ բանիւ զեկուցից ձեզ, զի ուսեալք ի սակաւուց՝ նախանձաւոր լիցուք շաւղաց հետոց սուրբ վարուց նորա:

Սա էր ի տոհմէ քահանայական, ի գեղջէ Եղիվարդայ, ժառանգակցաց մենաստանին, որ անուամբ սրբոյն Թէոդորոսի էր:

Լինէր հայրն նորա տիս մանկութեան գնացեալ բնակեցաւ պանդխտութեամբ ի գաւառին Սողից: Անդ կեցեալ եւ ամուսնացեալ՝ ծնաւ զգեղեցիկ աղաւնին Քրիստոսի, զորոյ սկիզբն արարեալեմ առ ի պատմել: Ապա ուսուցանելով վարժէր զորդիս իւր ի յուսումն աստուածային Սուրբ Գրոց, քանզի եւ ինքն քահանայ էր: Իսկ ի վախճանել հաւրն, գնաց յարեցաւ մանուկն Մաշդոց ի կրաւնաւորս, եւ յաջողեալ նմա ի ձեռն կրաւնաձգեցիկ առն, որոյ անուն ճանաչիւր Թէոդորոս: Վարժեցաւ եւ հմուտ եղեւ Գրոց Սրբոց եւ նոցին աստուածազգեաց զաւրութեանցն ի կրաւնաստանին, որ կոչի Մաքենոց, ի գաւառին Գեղամայ, եւ ընկալեալ զաստիճան քահանայութեան: Մանուկ ուշիմ էր եւ սիրելի մեծամեծաց եւ ռամկաց: Ուստի ի շնորհատուր ազդմանէ Սուրբ Հոգւոյն ել անդրէն ընդ կրունկն զառ ի յերկրէ ի յերկինս, այսինքն [լքեաց] զաւելորդս պիտոյից մարմնոյ եւ ստացաւ վարս անսուաղականս, պարկեշտս,

* Բնագիրը ներկայացւում է ըստ ՄՄ N 2680 ձեռագրի (էջ 582-584), անշնան ուղղագրական ճշգրտումներով: Ցաւելումները նշուած են ուղիղ փակագծերով:

ընդակերս եւ ճշմարտասէրս: Ի մանկական հասակէն վարժեցաւ ի պահս, յաղաւթս, ի տքնութիւնս եւ յայլ բազմատեսակ առաքինութիւնս՝ ընդ յոլովս անցանելով տեւողութեամբ եւ զբազումս շահելով ի Քրիստոս:

Ապա եկն բնակեցաւ ի կղզոջն Գեղամայ, խորհեցաւ միայնանալ ի տեղւոջն նովին վարուք: Եւ թողեալ զառ ի բնակութենէ մարդկան՝ զ[Աստուած] սիրողն ի պատուի եւ յանարգանս բազմաց շողացուցանէր զինքեանս եւ զտեսակ ինչ առաքինութենէ, զոր թէ ունիցի հասեալ վարատական ի ձորս եւ ի փապարս* կորստեան: Այլ նա՝ ոչ այնպէս. այլ գնացեալ բնակեցաւ յապա լերինն յայս կղզոջ, շինեաց վանս եւ ժողովեաց բազում եղբարս կարգաւ կրաւնից եւ զարդարեաց բազմախառն պատուիրանաւք եւ վայելչական սպասիւք եւ անձամբ իւրով աւրըստաւրէ յաւելոյր ի գործս մշակութեան եւ առաքինութեան: Եւ այնչափ յաւելաւ ի մարմնոյ իւրոյ տանջանս, մինչ արգելաւ ի մրգոց եւ ջրոյ անգամ, եւ զարմանալի այս էր, թէ զիա՞րդ ի ջրոյ անգամ մեկնեալ՝ եւ ոչինչ յիրաց ուրուք պակաս գտանիւր, քանզի զաղաւթսն հանապազ անխափան կատարէր զցայգ եւ զցերեկ եւ զընթերցութիւն Գրոց Սրբոց ոչ կասեցուցանէր, այլ ինքն առնէր զմաքուր գործս առաքինութեան եւ խրատէր զամենեսեան՝ ի նոյն կարգ կանխել եւ կալ եւ մնալ: Իսկ ի բազում սուտ եղբարց յոլով աշխատութիւն կրեալ, որք էին նենգաւոր կեղծաւորութեամբ, եւ նա համբերութեամբ տանէր՝ քրիստոսական չափով խոնարհեալ: Եւ ոչ միայն ի սուտ եղբարց, այլեւ յարտաքնոց նշանաւորաց եւ յանննշանից, քանզի զամենեսեան սատանայ վառէր ընդդէմ նորա, այլ նա առաքինութեամբ տանէր ամենայնի վասն յուսոյն իւրոյ, զոր ունէր առ Քրիստոս: Եւ այնչափ ճգնութեամբ հեզ էր եւ լաւական եւ տեսակաւն զուարթ եւ առատամիտ եւ ընտրող յոյժ եւ վայելուչ հասակաւ մարմնոյն եւ մխիթարական բանիւ առ տրտմեալսն խաւսէր խորհրդով եւ զաւրաւոր եւ ահարկու էր առ հզաւրս: Այլեւ էր միշտ աղաւթասէր, զցայգն եւ ընդ տիւն ինն կանոնս կատարէր յանդերձ յորդաբուխ արտասուաւք: Եւ շնորհ եղեւ նմա, քանզի փափագէր մեծի պարգեւաց՝ լուսոյ նշանին Քրիստոսի, եւ զյոլով աւուրս ձգեցան փափագ նորա, եւ աղաւթիւք խնդրէր առնուլ յԱստուծոյ:

Եւ ելեալ ընդ աւուրսն ընդ այնոսիկ Աշոտ իշխանն հայոց ի

* բնագրում՝ պապարս

Մանուկ հասակից վարժուեց պահքի, աղօթքի, տքնութեան եւ այլ բազմատեսակ առաքինութիւնների՝ բոլորին գերազանցելով տոկունութեամբ եւ շատերին շահելով ի Քրիստոս: Ապա եկաւ, բնակուեց Գեղամայ կղզում եւ խորհեց նոյն վարքով միայնանալ այնտեղ: Եւ, հեռու գտնուելով մարդկանց բնակավայրերից, թէ՛ պատուի եւ թէ՛ անարգանքի մէջ շողաց իր աստուածասէր առաքինութեամբ, որին հասնելով՝ [սովորաբար] անհետ հեռանում են ձորերն ու ժայռերի ծերպերը: Բայց նա ոչ թէ այդպէս արեց, այլ գնաց, բնակուեց այս կղզու լեռան վրայ, շինեց վանքեր, ժողովեց բազում կրօնաւոր եղբայրների, որոնց զարդարեց բազմապիսի պատուիրաններով եւ [վանքերը] վայելչական սպասքներով: Եւ օրըստօրէ աւելացնում էր մշակութեան եւ առաքինութեան գործերը: Իր մարմնի տանջանքներն այնքան աւելացրեց, մինչեւ հրաժարուեց մրգերից ու ջրից: Եւ զարմանալին այս էր, որ ջրից անգամ հրաժարուելով՝ ոչ մի բանի պակաս չէր ունենում, քանզի գիշեր-ցերեկ հանապազ անխափան աղօթում էր եւ չէր դադարեցնում Սուրբ Գրքի ընթերցումը, առաքինութեան մաքուր գործեր էր կատարում եւ խրատում բոլորին հաստատուն մնալ նոյն կարգի մէջ:

Բազում կեղծ ու նենգաւոր սուտ եղբայրներից շատ նեղութիւններ համբերութեամբ տանելով՝ չարչարանակից եղաւ Քրիստոսին: Եւ ոչ միայն սուտ եղբայրներից, այլեւ աննշան ու նշանաւոր օտարներից, քանզի սատանան բոլորին բորբոքում էր նրա դէմ, իսկ նա առաքինութեամբ տանում էր ամէնը՝ Քրիստոսի հանդէպ ունեցած յոյսի շնորհիւ: Խիստ ճգնասէր էր, հեզ ու լաւական, զուարթ եւ բարեմիտ, յոյժ խոհական, մարմնի հասակով՝ վայելուչ: Տրտմածներին խրատում էր մխիթարական խօսքերով, իսկ հզօրների հանդէպ զօրաւոր էր եւ ահարկու: Աղօթասէր էր միշտ. գիշեր-ցերեկ յորդաբուխ արտասուքներով կատարում էր ինը կանոնները: Եւ շնորհ տրուեց նրան, քանզի փափագում էր մեծ պարգեւ [սատանայ] Քրիստոսի լոյսի նշանը: Եւ շատ օրեր ձգուեց նրա փափագը, [որ] աղօթքներով խնդրում էր ստանալ Աստծուց:

Այն օրերին հայոց Աշոտ իշխանը շարժուեց դէպի վրաց կողմերը՝ Կուր կոչուող գետի ափով, ապա նոյն ճանապարհով խաղաղութեամբ

կողմանս վրաց, առ եզերբ գետոյն, որ կոչի Կուր, եւ դարձեալ խաղաղութեամբ ընդ նոյն ճանապարհ առ եզերբ ծովուն եւ եկեալ բանակեցաւ հանդէպ կղզոյն, ցանկայր տեսանել զերանելին Մաշդոց, զոր իբրեւ տեսին զիրեարս, բազում եղեւ ուրախութիւն երկոցունցն: Ապա յոյժ սիրեցեալ եւ մեծապէս ընկալեալ զնա բարեպաշտ իշխանին եւ շնորհէր երանելւոյ հաւր Մաշդոցի զլոյսն մշտնջենաւոր, զոր արձակեալ էր նմա արքային յունաց Վասլի: Եւ առեալ զաստուածընկալ սուրբ խաչն, զոր էր պնդեալ յոսկում խաչի, զարդարեալ գեղեցկազան գունովք, ընդելուզեալ մարգարտով, եւ առեալ եդ ի վերայ աչաց իւրոց եւ համբուրէր զնա: Եւ երկրպագելով իշխանն մեծի հայրապետին, ողջունեալ զմիմեանս՝ գնաց զճանապարհ իւր, եւ նա դարձաւ մեծաւ ուրախութեամբ ի մենաստանն իւր սուրբ: Եւ առ զշնորհս զայս մեծ, որ բնակեալ էր ի լերինս յայս ամս ութուտասն, որք են անուամբ սրբոց առաքելոցն եկեղեցիք երեք: Եւ իբրեւ այնմ եւս մեծի շնորհի արժանաւորեցաւ, առաւել եւս յաւելեաց յառաքինութիւն իւր: Զի զկնի երից աւուրց հազիւ ճաշակէր զոգեպահ հնդիկն, այլ հաց եւ գինի այն էր նորա, որ ի Մարմնոյ եւ յԱրենէ Տեառն վայելէր:

Եւ յայսմ ամի, [յորում կարգեցի զսակաւաւոր գրումնս]*, էին ամք կենաց նորա պակաս ինչ, քան զվաթսուն: Իսկ որ մեկնեալ էր ի կերակրոց եւ ի բոլոր հեշտութեանց աշխարհիս՝ ԼԳ ամ, եւ չինութեան տեղեացն՝ ամք քսան եւ երկու:

Այս են ճշմարտիւ կեանք նորա եւ քաղաքավարութիւն ամենամաքուր խարազն ճգնութեանց երիցս երանեալ սուրբ հաւրն մերոյ տեառն Մաշտոցի, զոր կարճառաւտ եւ հարեւանցի ասացեալ գրեցի՝ զյոլովս եւ զզարմանալիս թողեալ, զի մի՛ անհաւատալի թուեսցի ձեզ: Այլ դուք նոյն գունակ իմացարո՛ւք եւ զայլ եւս բազմազան գործս առաքինութեանց նորա եւ նախանձաւոր սմին եղերո՛ւք:

Եւ հաճոյական աղաւթք սրբոյս այսորիկ յարակայ մնասցէ ի ձեզ: Եւ սուրբ առաքելոցն դասք իւրեանց բարեսէր ընդանեբար խնամաւքն հաստատուն պահեսցե[ն] զուխտս այս սուրբ, զոր յանուն իւրեանց չինեալ է ի ձեռն երանելւոյ տեառն Մաշդոցի: Եւ ձեռ-

* Սոյն յաւելումը կատարում է ըստ ՄՄ N 50 («Մաշտոց») յիշատակարանի (տե՛ս «Հայերէն յիշատակարաններ», Ե-ԺԲ դարեր, Երեւան, 1988, էջ 43):

վերադառնալով՝ եկաւ, իջեւանեց կղզու դիմաց եւ ցանկացաւ տեսնել երանելի Մաշտոցին: Տեսնելով միմեանց՝ երկուսն էլ մեծապէս ուրախացան:

Բարեպաշտ իշխանը նրան յոյժ սիրեց եւ վայելչաբար պատուելով՝ նուիրեց մշտնջենաւոր լոյսը, որ ուղարկել էր իրեն յունաց Վասիլ արքան: Վերցնելով աստուածընկալ սուրբ խաչը, որ ամրացուած էր ոսկէ խաչի վրայ՝ զարդարուած գեղեցիկ գոյներով եւ ընդելուզուած մարգարտով, դրեց իր աչքերին եւ համբուրեց: Իսկ իշխանը խոնարհուեց մեծ հայրապետին եւ, հրաժեշտ տալով, գնաց իր ճանապարհը: Իսկ նա մեծ ուրախութեամբ վերադարձաւ իր սուրբ մենաստանը: Այս մեծ շնորհը ստացաւ, երբ տասնութ տարի բնակուել էր այս լեռներում, ուր սուրբ առաքեալների անունով երեք եկեղեցի կայ: Այս մեծ շնորհին արժանանալուց յետոյ աւելացրեց իր ճգնութիւնը. հազիւ երեք օրը մէկ անգամ ոգեպահ* արմտիք էր ճաշակում, իսկ նրա հացն ու գինին այն էր, որ Տիրոջ Մարմնից ու Արիւնից էր վայելում:

Այս տարի, երբ գրեցի այս կարճառօտ պատումը, նրա տարիքը փոքր-ինչ պակաս էր վաթսունից, եւ ինչ հրաժարուել էր կերակուրներից եւ աշխարհի բոլոր հեշտութիւններից, [անցել էր] 33 տարի, իսկ սրբավայրերի չինութիւնից՝ 22:

Այս է մեր սուրբ հայր, երիցս երանելի տէր Մաշտոցի կեանքը եւ խստակրօն ճգնութեամբ ամենամաքուր կենցաղավարութիւնը, որ գրեցի կարճառօտ եւ հարեւանցի պատմելով՝ բաց թողնելով բազում եւ զարմանալի բաներ, որպէսզի անհաւատալի չթուայ ձեզ: Իսկ դուք ըստ նոյն օրինակի իմացէ՛ք եւ նրա այլ բազմազան առաքինական գործերը եւ դրանց նախանձաւո՛ր եղէք:

Եւ սուրբի հաճոյական աղօթքները թող մշտապէս մնան ձեզ հետ: Եւ սուրբ առաքեալների դասն իր բարեսէր եւ ընտանի խնամածութեամբ թող հաստատուն պահի այս սուրբ ուխտը, որ իրենց անունով շինուել է տէր Մաշտոցի կողմից:

Եւ Աստուծոյ այս սուրբը թող օգնական լինի ձեզ՝ Յիսուսի շնորհ-

* ոգեպահ – ինչը բաւական է հոգին մարմնի մէջ պահելու, այսինքն՝ չմահանալու համար:

ընկալու լիցի ձեզ սուրբս Աստուծոյ՝ առ ի փրկել զձեզ շնորհաւքն Յիսուսի յամենայն վտանգաւոր աղէտից եւ ի բազմահնար մեքենայից սատանայի, զի կատարեալք ի կամս Աստուծոյ՝ միաբան հասցուք ի նպատակ վերին կոչման՝ յարքայութեանն Քրիստոսի Յիսուսի՝ Տեառն եւ Աստուծոյ, Որով եւ ընդ Որում Հաւր, միանգամայն եւ Սուրբ Հոգոյն վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

ԳԱՆՁԱՍԱՐ

ներով փրկելու բոլոր վտանգաւոր աղէտներից եւ սատանայի բազմահնար որոգայթներից, որպէսզի Աստուծոյ կամքով աւարտելով մեր կեանքը՝ միաբան հասնենք վերին կոչման նպատակին՝ Տէր եւ Աստուած Յիսուս Քրիստոսի արքայութեանը, Որով եւ Որի հետ Հօրը, միանգամայն եւ Սուրբ Հոգուն վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

ԳԱՆՁԱՍԱՐ

ԽՕՍՔ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՐԱՆԵԼԻ ԱՅՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳԻ[1] ՄԱՍԻՆ

Երկնաքաղաքացու վարքով ապրելուց յետոյ ճշմարտութեան պատկերը եւ օրինաւոր կարգերի տիպարը՝ երիցս երանելի Յովհաննէս Վարդապետը (Սարկաւագ մականունով), բարուք կեանքի ճանապարհի վերջնակէտին եւ աւարտին հասաւ ՇՀԸ (1129) թուականին եւ պատուով հանգստեան գերեզման դրուեց բոլոր սուրբերի հետ:

Բայց պարտուպատշաճ է կարճառօտ գրել նրա վարքը եւ ծանուցել մեր աղքատ մտքով եւ սուղ խօսքերով, որպէսզի բարու նախանձաւորներդ օրինակ առնէք նրանից եւ նորոգուէք նրա հոգու արեգակնափայլ, գործնական եւ արդիւնարար ճառագայթներից:

Նա Փառիսոս[2] գաւառից էր: Ինչպէս սուրբ Սամուէլը, մանկութեան օրերից ու խանձարուրից նուիրուած էր Աստծուն եւ կուսութեանը, քահանաների արիւնից եւ արգանդից էր՝ սնուած եւ դաստիարակուած իր սրբասնունդ քեռու մօտ՝ Հաղբատ վանքում:

Սկզբում կրթուելու տրուեց հոգեւոր երաժշտական ուսման մէջ, ապա երբ երեւաց նրա մէջ ծածկուած մեծ գանձը, քեռուց աւանդուեց եւ յանձնուեց Ուռճացի վարդապետին: Նա մանկուց անհաւասարութիւն ցոյց տուեց իր հասակակիցների նկատմամբ եւ տարիքի բոլոր փոփոխութիւնների ժամանակ գերազանցեց նրանց ընտիր առաջադիմութեամբ՝ հեռու լինելով զուարճալի զբաղումներից եւ տղայական վայրայած խաղերից, մարդու արտաքին պէտքերը օգտակար դարձնելով եւ տնտեսաբար յարդարելով ի պիտանութիւն ներքին մաքրութեան:

Վայրաքարշ եւ երկրային ամէն բանի մնաս բարեաւ ասելով՝ վառուեց ողջախոհութեան սիրով: Նրա քիմքում քաղցրացան եւ հա-

1 Յովհաննէս Սարկաւագի սոյն կենսագրութիւնը հրատարակւում է ըստ՝ «Հանդէս բանի վասն երանեալ առնն Աստուծոյ Սարկաւագին կենաց եւ մահուն....», Յովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւն, աշխատ. Ա. Գ. Աբրահամեանի, Երեւան 1956, էջ 123: Թարգմանութեան մէջ յապաւուած են Յովհաննէս Սարկաւագի կենսագրութեան հետ չառնչուած որոշ հատուածներ:

2 Փառիսոսն Արցախի գաւառներից մէկն է՝ Սեւանայ լճից դէպի հիւսիս-արեւելք:

մեղացան իմաստութեան խոկումն ու սրբութեան սէրը: Եւ ոտնահարելով որովայնի նախկին բռնութիւնը՝ սակաւ հացով բաւականացաւ:

Մանուկ հասակում բազում օրեր միայնանալով լեռների ծերպերում՝ կարդում եւ ուրթում էր: Եւ սակաւ-սակաւ առաջ գալով՝ նստում էր վարդապետների ոտքերի մօտ եւ նրանցից ստանում մեկնութիւններ եւ խորիմաստ առակներ:

Եւ յոյժ սիրուց եւ ըղձանքից ուր օր գաղտնի փակուեց այն այրում, որտեղ կային գրքերի արկղեր, եւ պարարտացրեց իր անձը հոգեւոր կերակուրների խորտիկներով, բազմատեսակ եւ համադամ կերակուրներով, որ գանձուած էին այնտեղ:

Մանկութեան այն օրերից մինչեւ վախճանը նա երբէք չսայթաքեցրեց հոգու ուշադրութիւնը ընթերցման նպատակից՝ ուսանելու եւ ուսուցանելու, գրելու եւ ընթերցելու, հսկելու եւ աղօթելու օր ու գիշեր՝ հեռու բոլոր զբաղումներից եւ վայրաքարշ իրերից: Բարեբարոյ էր, քաղցրահայեաց եւ զուարթադէմ, պարկեշտագնաց եւ համեղախօս, գթած՝ մեղանչողների հանդէպ եւ իմաստուն բժիշկ՝ ծանրաբեռնուածների համար: Այնչափ համբաւուեց բարի գործերով, որ մինչեւ իսկ հեռուներից փութալով գալիս էին՝ սպեղանի առնելու իւրաքանչիւր թարախած վէրքի համար:

Իսկ իմաստութեան գանձի վաճառականներն ու տենչացողները գալիս, դադար էին առնում համեղախօս երանելի իմաստունի ոտքերի մօտ եւ լցնում իրենց մտքերի քսակն ըստ չափի մեծութեան: Եւ վերադառնում էին ցնծալով, բարի վաստակով եւ լուսատու ակնեղէններով ու գանձերով: Եւ նախնիների բոլոր գիտութիւնները, որ տգէտների, ծուլացողների եւ մտքով խաւարածների կողմից ծածկուելով՝ աղաւաղուեցին, նսեմացան ու խամրեցին, նրա բազմաշխատ երկերով ու մտքի արագահասութեամբ զարդարուեցին, եւ ցնծացին տեսասէրների[1] եւ ուսումնասէրների հոգիները:

Խօսքի եւ գործի, տեսութեան եւ արտաբերութեան, գրելու եւ ընթերցելու, պատմագրութեան եւ վարդապետական վերլուծութեան, մարգարէականի եւ առաքելականի բոլոր մասերի մէջ աւելի կատա-

1 տեսասէր – կրթասէր

բեալ գտնուեց, քան նրանք, ովքեր միայն մի գործի կամ արդիւնքի մէջ համբաւ ունէին:

Եւ նրա որովայնից բխող գետերը[1] ջրեցին Տէրունական Տունը եւ Աստուծոյ Յարկի նորատունկ մանուկներին: Եւ ի՞նչ պէտք է երկարացնել խօսքիս տողերը, երբ այս ամենի յայտնի վկայութիւններն են նրա ճառերը, որ լցրին Հայաստան աշխարհն ըստ իւրաքանչիւր պէտքի եւ ախորժակի: Նրա արմատից ու շառաւղից ելան բազմապտուղ ոստեր՝ ուսուցիչներ եւ լուսաւոր հոգիներ, անմոլար աստղեր եւ լուսաճաճանչ ջահեր, եւ աշխարհը լցրին կենաց խօսքով եւ իմաստալից՝ տրամախոհ, ներհունական գիտելիքներով, ինչպէս աշակերտներից առաջինը՝ այն Երեմիան, անդրանիկ հոգեւոր երկունքն ու սրբութեան ծնունդը, որը, ինչպէս իմաստուն մեղու հաւաքելով իմացութեան բազմերանգ, բազմահամ եւ հոտաւէտ ծաղիկներ, բերեց իր քաղաքը, ուր սնուել էր՝ քաղաքամայր Անի, եւ լիացրեց տունը փարթամութեամբ՝ առատապէս եւ աննախանձ բաշխելով հաւատքի տաղանդը՝ տասնապատիկ շահ բերող մնասը[2]:

Վարդապետաց վարդապետը (Յովհաննէսը) Սուրբ Հոգուց մարգարէութեան եւ սքանչելագործութեան պարգեւներ ունէր, որոնց մասին շատերն են վկայում եւ որոնցից մի քանիսն այստեղ կծանուցենք:

Նախ այս՝ միայնաւոր աղօթքի ժամանակ Սուրբ Հոգու լոյսը բորբոքուած կրակի պէս փայլում էր նրա շուրջը, ինչը բազում անգամ տեսել էին նրա մօտ եղողները:

Եւ երկրորդ՝ անառակ վարք ունեցող մէկը լրբաբար եկեղեցի էր մտնում եւ փառամոլ կամքով, աներկիւղ ու լրբենի դէմքով անարիւն պատարագ մատուցում: Երկիւղած այրերը բազում անգամ խնդրեցին նրան (Յովհաննէսին)՝ սանձել անօրէնին յանդգնագոյն գործից եւ եկեղեցին ազատել նրանից: Իսկ Աստուծոյ սուրբն ըստ իր իմաստութեան սարսափեցնող խօսք ասաց այն Խորհրդի վերաբերեալ, սակայն նա չլսեց, մինչեւ որ սուրբն առանձին ասաց՝ յայտնելով ծածուկը: Դրան էլ ունկնդիր չեղաւ: Եւ որովհետեւ յանդգնաբար ոտնակոխ էր անում հրամանի խօսքը, սուրբը եկեղեցու առաջ յայտնապէս խրա-

1 Տե՛ս Յովհ. Է 38:

2 Տե՛ս Ղուկ. ԺԲ 16:

տեց նրան, մինչեւ որ լռելով՝ դադարեց: Ապա մի օր նկատեց, որ վարդապետը, դուրս գալով քարայրից, նստում է վանքի տաղաւարում: Եւ խոր գիշերին, երբ Աստուծոյ այրը դուրս ելաւ քարայրից, ուր ննջում էր, մերկացրած սուսերով յարձակուեց նրա վրայ եւ, սուրը նրա կոկորդին դնելով, կամեցաւ գլխատել նրան: Սուրբը հեզաբար հարցրեց.

-Ո՞վ ես դու եւ ինչո՞ւ ես ուզում սպանել ինձ:

Նա պատասխանեց.

-Ես Բարսեղն եմ[1], որ բազմութեան առաջ ամբաստանուեցի քո կողմից: Հիմա ուզում եմ սպանել քեզ, քանզի արգելեցիր ինձ պատարագել:

Սուրբը հանդարտաբար պատասխանեց.

-Որդեա՛կ, մի՛ արայ այդ: Եթէ հրապարակաւ յանդիմանեցի, հրապարակաւ կբժշկեմ,- եւ արձակեց նրան՝ ուխտելով անել ասածը:

Այսպէս սուրբը, ազատուելով անսուրբ պիղծից, փրկուեց սպանուելուց: Եւ ոչ ոքի չյայտնեց գաղտնիքը: Իսկ քարոզի ժամանակ, ատեանում կանգնած, քաւութիւն տուեց նրան՝ ասելով.

-Եղբայրնե՛ր, ոմանք Բարսեղին ուժով ամբաստանեցին, եւ ես արգելեցի նրան եկեղեցի մտնել: Արդ, երբ քննեցի, տեսայ, որ սուտ էր ամբաստանութիւնը: Թո՛յլ տուէք նրան եւ Քրիստոսին մերձենալ միմեանց:

Երբ երկիւղածներն ու ընտիր այրերը լսեցին այս, իրենց մտքում անգոսնեցին[2] սուրբին, քանզի տեղեակ չէին ծածուկ խորհրդին: Եւ երբ արձակուեցին առաւօտեան ժամերգութիւնից, շրջապատելով արդար այրին՝ յանդիմանեցին քաւելու համար: Իսկ նա զայրանալով՝ բանալ տուեց եկեղեցու դուռը եւ, գոչելով դէպի Քրիստոսի Նշանը, ասաց.

-Ո՛վ քրիստոսակիր սուրբ Նշան, ես չկամեցայ խոզամարտիրոս լինել: Դո՛ւ դատիր քո դատաստանը:

1 Միշտ Բարսեղի վարքով մէկի մասին մի մանրավէպ պատմում է Կիրակոս Գանձակեցին, բայց այլ անունով՝ Ստեփաննոս Զոզոմա (էջ 65): Հաւանաբար նրանք նոյն անձնաւորութիւնն են:

2 անգոսնել - անարգել, արհամարհել, պախարակել, պարսաւել, բամբասել

Եւ գնացին իրենց տները: Իսկ այն յանդուգնը այլ արժանաւորների հետ պատրաստուեց պատարագ մատուցել եւ նշխար առաւ: Երբ կոչնակ զարկեցին եւ ժողովուեցին, ատեան մտաւ, որպէսզի պատարագի: Երբ Աստուծոյ Յարկի դուռը բացուեց, սուրբ վարդապետը հայում էր այն Նշանին եւ անմռունչ պաղատում, ինչպէս հնում Աննան[1]: Իսկ երբ այն մոլեգնած այրը նուիրական հացը ձեռքին կամեցաւ մտնել խորան, մոլութեան ոգին վեր բարձրացրեց նրան ինչպէս օդով լի պարկ, զարկեց բեմի առջեւ եւ խայտառակաբար ցկեց: Այդ հրաշքից ամէնքը ցնցուեցին եւ փառք տուեցին Աստծուն, որ կատարում է Իրենից երկիւղածների կամքը եւ լսում նրանց աղօթքները:

Իսկ Աստուծոյ սուրբը՝ երանելի վարդապետը, փառաւորելով Քրիստոսին, հրամայեց դուրս հանել գարշելուն սուրբ տեղերից եւ գոհութեան պատարագ մատուցել: Իսկ անմիտ այրը, իր վրայ չար հարուածը կրելով, 21 տարի ապրեց դողալով եւ ողորմելի կեանքով: Եւ Զէթ անունով մի կրօնաւոր այդքան տարի սպասաւորում էր անսուրբին. հաց էր դնում բերանը եւ չալակած՝ եկեղեցուց տանում: Իսկ նրա վախճանն առաւել չար եղաւ:

Բազում են Աստուծոյ այրի գործած սքանչելիքները, որոնք յապաղեցի գրել եւ լսողներին խռովեցնել, մանաւանդ որ մախացող[2] է այս ազգը եւ անգոսնող:

Մի օր նա տեսաւ կրօնաւորներից մէկին, որ գալիս էր իր մօտ՝ անապատ՝ զղջումի եւ խոստովանութեան: Նա յայտնապէս տեսաւ, որ, ինչպէս գրաստի վրայ, նրա ուսին հեծել է սատանան: Երբ կրօնաւորը մօտենում էր խցի դռանը, սատանան ետ դարձրեց նրան. մերկ սուսերով, որ ձեռքին ունէր, բռնադատեց եւ, ինչպէս էշի վազեցնելով, սաստկապէս քշեց՝ ետ դարձնելով այնտեղից: Այս տեսնելով՝ սուրբն աչակերտին արձակեց եւ բռնաբար նրան բերել տուեց իր մօտ: Եւ հարցրեց.

–Ինչո՞ւ երբ մօտ եկար, խսկոյն ետ դարձար:

Նա պատասխանեց.

1 Տե՛ս Բ Թագ. 1:

2 մախանք – չար նախանձ, չարակնութիւն

–Զգիտեմ: Զղջալով գալիս էի քո սուրբ ոտքը, երբ յանկարծ միտքս ընկաւ մոլեկան տարփուհու սէրը եւ որոշեցի նրա մօտ գնալ:

Իսկ Աստուծոյ այրը պատմեց նրան, ինչ որ տեսել էր, եւ աղաչելով՝ ազատեց:

Այս հաւաստի պատմութիւնը պատմեց այն կրօնաւորի՝ երիցս երանելի, սքանչելանշան վարդապետ Յովհաննէս Սարկաւագի աշակերտը, եւ ես գրի առայ:

Երիցս երանելի երջանկայիշատակ վարդապետ Յովհաննէս Սարկաւագի մասին տեսնողներից ոմանք պատմեցին, թէ մինչ գիշերով իր խցում սկսում էր աղօթել, լոյսի եւ հրի ճառագայթը խցի լուսանցոյցից առատօրէն դուրս էր հեղուում:

Եւ այսպէս, բարուք ապրելով ժիր մշակութեամբ, հեռացաւ մեզանից՝ ստանալու յաւերժական ժառանգութեան վարձը: Եւ դրուեց Հաղբատի սուրբ հանգստարանում, որտեղ սնուել ու կրթուել էր ի փառս Աստուծոյ:

Աշխատասիրութեամբ՝

Սամուէլ Խաչատրեան եւ Մարիա Երիցեան

Հայոց
Սուրբ Սահակեանք

ԿՈՐԻՒՆ ՔԱՀԱՆԱՅ ԵՐԱՄԵԱՆ[1]
(†1915)

Նա բնիկ խարբերդցի էր, աշխարհիկ անունը՝ Վաղինակ: Ծնուել է 1865-ի մայիսի 11-ին: Ուսանել է տեղի Ս. Թարգմանչաց դպրոցում: Գրագէտ եւ բանիմաց Կորիւն Երամեանին 1885 թուականից սկսած նշանակում են ազգային վարժարանների հոգաբարձութեան, ուսումնական խորհրդի եւ քաղաքական ժողովի անդամ, այնուհետեւ՝ Զմիւռնիայի Ներսիսեան որբանոցի ներքին տեսուչ: Քահանայ ձեռնադրուեց 34 տարեկանում: Որոշ ժամանակ նա իրեն նուիրեց դաստիարակչութեան գործին՝ կրօն եւ պատմութիւն դասաւանդելով: Այնուհետեւ 13 տարի շարունակ անխափան եւ ձեռնհասօրէն վարեց իր թեմի փոխանորդութիւնը եւ տեղապահութիւնը: Որպէս պատգամաւոր մասնակցեց հայրապետական ընտրութիւններին: Ի վարձատրութիւն իր ազգօգուտ գործունէութեան՝ նա ստացաւ ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք: Այս ամենից բացի, տէր Կորիւնը նաեւ երաժիշտ էր՝ դաշնակահար: Իր սիրելի դաշնամուրը, սակայն, Համիդի օրօք բռնագրաւեցին ոստիկանները:

1915 թուականի գարնանը սկսուեցին քաղաքի յայտնի հայերի ձերբակալութիւնները՝ զօրահաւաքի պատրուակով: Բանտը լցուեց աւելի քան 150 հայորդիներով: Նրանց մէջ կային հոգեւորականներ, ուսուցիչներ, բժիշկներ, ազգային գործիչներ, առեւտրականներ, ոստիկաններ եւ ուրիշներ: Բանտարկուածների մէջ էր նաեւ տէր Կորիւնը՝ տեղի իշխանութիւններին քաջ յայտնի լուսամիտ երէցը, արաբկիրցիների սիրելին: Ամենից շատ եւ ծայրայեղ կերպով նա՛ ենթարկուեց թուրքական բրտութեանը: Գաղտնիքներ կորզելու նպատակով տէր Կորիւնի պա-

[1] Այս վկայաբանութիւնը վերցուած է Թէոդիկի «Գողգոթա թրքահայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարին» (Նիւ-Եորք, 1985, էջ 234-235) գրքից:

բանոցին երկաթէ ծանրածանր լուծ անցկացրին, օրեր շարունակ զրկեցին կերակրից... Սակայն նա տանջանքների այս չղթայի մէջ կորիւնի պէս ամուր էր մնում, աւելին՝ յորդորում էր իր բախտակից աշխարհական ընկերներին, որ բնաւ չերկնչեն եւ իրենց վրայ չվերցնեն յօրինած, մտացածին յանցանքները:

Քահանայի կամքի կորովից զայրացած՝ դահիճները դիմեցին սոսկալի միջոցների. նրա ոտքերի ու ձեռքերի մատներին փայտեր մեխելով՝ ստիպեցին այդպէս արիւնլուայ ոտքի կանգնել ու քայլել: Տասնեակ ուրիշների եւս նման կտտանքների ենթարկեցին: Ու զնդանի կամարների տակ օր ու գիշեր չէին լռում նրանց ճիչերը՝ ստիպելով արիւն-արցունք թափել շրջակայ տների հայուհիներին, որոնք, այդ սրտակեղեք ձայները լսելով, հսկում էին անքուն, թէ երբ դուրս կբերեն բանտարկեալներին՝ ողջ կամ մեռած: Յուլիսի 13-ի առաւօտեան նրանց կիսամեռ վիճակում հանեցին բանտից եւ տարան սպանելու: Տէր Կորիւնին ու միւսներին, որոնք վերածուել էին ոսկրակոյտի եւ չէին կարողանում քայլել, պարկի նման նետեցին ձիերի նստիքին...

Նրանք մահապարտների առաջին խումբն էին: Այնուհետեւ հերթը հասաւ Արաբկիրի արական սերնդի բնաջնջմանը: 40-50 հոգանոց խմբերը բռնեցին մահուան ճամփան: Տէր Կորիւնի կնոջը մորթեցին Այնթապից Եդեսիա տանող ճանապարհին, զաւակների աչքի առջեւ: Մայրը գետը նետուեց, իսկ 13 եւ 15-ամեայ դուստրերը տարագրութեան մէջ անհետ կորան: Հրաշքով փրկուեցին միայն քահանայի երեք որդիները:

ԱՍՈՂԻԿ ՔԱՀԱՆԱՅ ԹՈՂԱԳԵԱՆ[1]
(†1915)

Ասողիկ քահանան ծնուել է 1878 թուականին Կեսարիայում: Քահանայ ձեռնադրուեց 1911-ին: Քաջ երաժշտագէտ, կեանքով զեղուն եւ ժողովրդականութիւն վայելող այդ հոգեւորականն անշուշտ պիտի չվրիպէր տեղի կառավարութեան ուշադրութիւնից: Եւ ձերբակալութիւնը չյապաղեց: Նրա եղերական վախճանի առաջին կայանը դարձաւ բանտը: Տէր Ասողիկը տանջահար եւ կալանակապ դուրս հանուեց այնտեղից եւ խառնուեց իր մահապարտ ազգակիցների այն անդրանիկ թափօրին, որը տանում էին դեպի Գէյնամի ձոր: Դատապարտեալների շղթան սկսեց օղակ-օղակ անջատուել. ձորը թնդում էր զոհերի օրհասական աղաղակներից ու ողբից, իսկ խոտերը շարունակ թրջւում էին նրանց արեան կարմիր անձրեւից: Սպանդի գործը ղեկավարում էր ոստիկանապետ Իբրահիմը՝ շրջապատուած իթթիհատական մեծամեծներով:

Երբ զոհուելու հերթը հասաւ տէր Ասողիկին, Իբրահիմն անսպասելիօրէն հրամայեց նրան ձեռք չտալ: Ղուրանով եւ իր զաւակների կեանքով նա երդուեց շնորհել «փափաս էֆենտիի» կեանքը, եթէ նա բարի լինի ցոյց տալ հայերի զէնքերի թաքստոցը: Դառը ժպիտը կարկամեցրեց տէր հօր դիմագծերը. չէ՞ որ քաղաքում հայ չէր մնացել այլեւս, իսկ սրանք դեռեւս շարունակում էին դաւադրութեան կեղծ մեղադրանքով ջանալ մրոտել նրանց անունը: Եւ Աստուծոյ հաւատընտիր քահանան ոստիկանապետին շպրտեց իր վճռորոշ պատասխանը՝ չանթահարելով նրան.

-Եթէ նոյնիսկ ամբողջ Թուրքիան ինձ նուէր տաս, ես իմ հոգին քեզ չե՛մ ծախի:

---

1 Այս վկայաբանութիւնը վերցուած է Թէոդիկի «Գողգոթա թրքահայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարին» (Նիւ-Եորք, 1985, էջ 293) գրքից:

Ունկնդիր մահմեդականներն ապշանքից ափիբերան մնացին. ո՞վ է այդ յանդուգն «գեաւուրը», որ այդքան անամօթաբար հակառակւում է... Յանկարծ ջարդարարներից մէկը՝ մի պանդոկապետ, զայրոյթից փրփրակալած, ընդոստ մօտեցաւ եւ, դաշոյնը պատեանից հանելով, խրեց նրա ողնաշարը: Տէր Ասողիկն արիւնլուայ, գալարուելով ընկաւ գետնին:

Շաբաթներ անց պանդոկապետն այս ողբերգութեան անցքերը հիացմունքով պատմեց մի քուրդ բարեկամի, որն էլ, իր հերթին, պատմեց Գոլոսից Գաղաթիա տարագրուած ռուսական քաղաքական գերիներին՝ իրենց մօտ ծառայ եղած ժամանակ: Յայտնի չէ, սակայն, թէ մարդասպանի հիացմունքի պատճառն իր գործած ոճի՞րն էր, թէ՞ նահատակ քահանայի տուած վսեմ պատասխանը:

ԳԱՆՁԱՍԱՐ

ՍՄԲԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱԱՏԷԹԵԱՆ[1] (†1915)

Սմբատ եպիսկոպոս Սաատէթեանի անունը յաճախ է յիշատակւում հայոց նոր գրագոյն պատմութեան մէջ՝ 1915 թուականի եղեռնի մեր հոգեւորական դասի նահատակների շարքում:

Նրա կարճատեւ կեանքի մասին քիչ տեղեկութիւններ են պահպանուել, որոնք, սակայն, բաւական են՝ պատկերացում տալու նրա թէ՛ բարձր բարոյական նկարագրի եւ թէ՛ եկեղեցական բեղուն գործունէութեան մասին:

Սաատէթեանը ծնուել է 1871 թուականին Ատապազարում: Աւազանի անունն էր Գրիգոր: 1889-ին ընդունուեց Արմաշի դպրեվանք, որի ուսումնական շրջանն աւարտելուց յետոյ, 1895-ի յունիսի 18-ին, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանի ձեռքով աբեղայ ձեռնադրուեց եւ վերակոչուեց Սմբատ: Շուրջ մէկ տարի Արմաշի դպրեվանքում ուսուցչութիւն է արել՝ միաժամանակ որպէս վարդապետական աւարտաճառ պատրաստելով Ներսէս Լամբրոնացուն նուիրուած պատմական, մատենագիտական եւ վարդապետական ծաւալուն ուսումնասիրութիւնը[2], որը 1903-ին արժանացաւ Իզմիրեանց Սահակ-Մեսրոպեան գրական մրցանակին: Վարդապետական գաւազանը ստանալուց յետոյ նա քարոզչութեան է անցնում նախ Կէյվէյի հայաբնակ գիւղերում, ուր շրջուն հովիւ էր, ապա՝ Գալաթի եւ Կէտիկ փաշայի[3] եկեղեցիներում: Սակայն շուտով հրաժարւում է մայրաքաղաքի դիւրին կեանքից՝ նախընտրելով գաւառների

1 Այս վկայաբանութեան համար հիմք են հանդիսացել հետեւեալ աղբիւրները. **Թէոդիկ**, Ցուշարձան Ապրիլ տասնմէկի, Կ. Պոլիս, 1918. **Սիւրմէնեան Գ.**, Երգնկա, Գահիրէ, 1947. **Օրմանեան Մաղաքիա արքեպիսկոպոս**, Խոհք եւ խօսք, Երուսաղէմ, 1929:

2 Տե՛ս **Սմբատ եպս. Սաատէթեան**, Ներսէս Լամբրոնացի, Անթիլիաս-Լիբանան, 1981:

3 Պոլսի խոշոր հայաբնակ շրջաններից

հովուութիւնը. նախ առաջնորդում է Շապին Գարահիսարի (1898-1907), ապա Կարնոյ թեմը (1908-1915)՝ իր երիտասարդական եռանդն ու հովուական կարողութիւններն ամբողջապէս ծառայեցնելով բռնատիրութեան եւ հալածանքների մէջ տառապող ժողովրդին քրիստոնէական հաւատքով զօրացնելու գործին: 1909-ին էջմիածնում եպիսկոպոս է ձեռնադրւում Մատթէոս Բ կաթողիկոսի կողմից:

Հովուական եւ վարչական ծանրաբեռնուածութեան մէջ գտած ազատ ժամերը նա նուիրում էր գրչի տքնութեանը: Այդ ժամանակի մամուլում կարելի է գտնել նրա ստորագրութիւնը կրող ոչ մեծաթիւ յօդուածներ եւ քարոզներ: Նա յաճախ յիշւում է որպէս ճարտար բեմախօս եւ քարոզիչ, ճանաչւում էր որպէս անբասիր եւ նուիրեալ առաջնորդ, որ մօտիկից հետեւում էր իր թեմի կրօնական եւ կրթական ընթացքին եւ մեծապէս նպաստում նրա ծաղկմանը: Իր ուսուցչի եւ հոգեւոր ծնողի՝ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանի վկայութեամբ՝ «Սմբատի նկարագիրն էր քաղցր եւ համեղ գործունէութիւն՝ պարտքէն եւ պահանջէն ոչինչ թերի չթողլով»[1]: Յատկապէս Կարնոյ իր առաջնորդութեան ժամանակաշրջանը, որը զուգադիպում է Օսմանեան յեղափոխութեան հուչկման հետ, մեծ եկեղեցական ծաղկման եւ բարգաւաճման շրջան եղաւ:

Մինչեւ իր կեանքի եղերական աւարտը Սմբատ եպիսկոպոսը հաւատարիմ մնաց իր կոչմանը եւ իր բազմաչարչար հօտին: Համաշխարհային առաջին պատերազմի կոտորածների նախօրեակին, գիտակցելով սպառնացող վտանգը, նա հետեւեց «քաջ հովուի» օրինակելի ճանապարհին՝ մնալով իր հօտի հետ, արթուն եւ աչալուրջ, մինչեւ որ 1915-ի օգոստոսի 10-ին իր ժողովրդի հետ աքսորուեց ու նահատակուեց Երզնկայում:

Երբ Կարինում յայտնի դարձաւ քաղաքի հայ բնակչութիւնը տեղահանելու թուրքական իշխանութիւնների հրամանը, սրբազան հայրն ամէն հնարաւոր միջոց գործադրեց՝ այդ ահա-

1 Տե՛ս **Օրմանեան Մաղաքիա արքեպիսկոպոս**, Խոհք եւ խօսք, էջ 444:

ւոր դիտաւորութիւնը կանխելու համար: Սակայն թէ՛ Թուրք եւ թէ՛ գերմանացի ազդեցիկ հեղինակութիւններին ուղղած իր բազմաթիւ դիմումները ոչ մի արդիւնք չտուեցին: Այդժամ նա կուսակալից արտօնութիւն ձեռք բերեց, որ տեղահանութիւնը երկու շաբաթով հետաձգուի: Նրա համար արդէն հասկանալի էր, թէ ինչ է նշանակում այդ տեղահանութիւնը եւ փափագում էր իր հօտի կողքին լինել նրա օրհասական բոլոր պահերին: «Քանի որ կը հաւատէք, թէ ժողովուրդս խումբ-խումբ մինչեւ Եդեսիա պիտի հասնի անվտանգ,- դառնութեամբ հեգնում է նա իշխանութիւններին գրած իր թղթում,- թո՛յլ տուէք, ուրեմն, իբր առաջնորդ ընկերանալ հետերնին»: Ու թէեւ պատասխանը ժխտական է լինում, եւ շուտով սկսւում է ժողովրդի բռնագաղթն առանց սիրելի հովուի, սակայն ոչ շատ ուշ իր մերձաւորների ընկերակցութեամբ, ինչպէս նաեւ բնակչութեան մնացորդի եւ Բասէնից Կարին տարուած Կորիւն վարդապետ Սրապեանի հետ նա ճանապարհ է հանւում դէպի Երզնկա:

Հասնելով Երզնկայի գերեզմանատուն՝ իրեն բախտակից եւ մարտիրոսակից դարձած վարդապետի եւ երկու մերձաւորների հետ նրան զատում են ժողովրդից եւ առանձնացնում գերեզմանի մօտ մի վրանում: Այստեղ մի քանի օրուայ նախախնամական մեկուսացման մէջ նրանք յանձնւում են իրենց վերջին աղօթքին, մինչեւ վրայ է հասնում նահատակութեան պահը: «Գոնէ գերեզմանատան մէջ մեռցնէին մեզ»,- այսպիսին էր սրբազան հօր վերջին կամքը: Ոստիկանները նրանց դուրս են բերում իրենց լաթէ տնակից եւ մտցնում «մեռելներու քաղաք»: Գերեզմանոցում սրբազան հայրն իր ձեռքով փորում է սեփական գերեզմանը: Անխօս ու անտրտունջ, հեզութեան երկնային շնորհով առլեցուն՝ ահաւոր պեղումը կատարելուց յետոյ Սմբատ եպիսկոպոսը հորի եզրին ծնրադիր աղօթում է, ապա, մի փոքր քար վերցնելով, խաչակնքում եւ փոսն է գցում՝ պատրաստ եւ յօժար իր մարտիրոսական վախճանին: Դահիճները չեն ուշացնում ոճրի կայացումը. մերկացնելով՝ նախ կտրում են մի ձեռքը, ապա՝ մի ոտքը, փորում են աչքերը, ապա, վառած լուցկի պահելով մօրուքի տակ, գնդակահարում

են կրծքին՝ գերեզմանափոսը գլորելով Քրիստոսի սիրով վառուած եւ Նրա հաւատքով զօրացած արմաշականի չարակոչկոճ մարմինը: Այնուհետեւ համանման խոշտանգման են ենթարկւում Կորիւն վարդապետն ու երկու աշխարհական քրիստոնեաները:

Աշխատասիրութեամբ՝

Գնարիկ Ղազարեանի եւ Արմենի Արգենեանի

Տիգրան Խաչատրեան

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՏԱՃԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Եկեղեցական մշակոյթի մէջ խորհրդաբանօրէն բովանդակւում է քրիստոնէական կրօնի գոյաճանաչողութեան եւ պաշտամունքային համակարգի ամբողջութիւնը: Այս է պատճառը, որ եկեղեցական արուեստին եւ մասնաւորապէս քրիստոնէական տաճարին վերաբերող հայրաւանդ աշխատութիւններն անտարանջատելի են եկեղեցաբանական, ծիսաբանական եւ աստուածպաշտական սկզբունքներից, որոնք, ըստ էութեան, տաճարի ճարտարապետական յօրինուածքի իմացական եւ գործառնական նախահիմքերն են: Ուստի եւ քրիստոնէական տաճարի կառուցուածքի ու ձեւի, նրա ներքին եւ արտաքին յարդարանքի, ինչպէս նաեւ նրա հետ առնչուած բազմազան առարկայական խորհրդանիշերի իմաստն ըստ արժանւոյն ըմբռնելու համար առաջնային նշանակութիւն ունի պատշաճ ծանօթութիւնը նշեալ սկզբունքների հետ, առանց որի տաճարի խորհրդաբանութեանը վերաբերող տեսակէտներն ու ենթադրութիւնները կարող են հեռու լինել ճշմարտութիւնից՝ ոչ մի էական համապատասխանութիւն չունենալով իրական նախադրոյթների հետ: Աւելին, բազում ոչ հոգեւոր, այլ նիւթապաշտական կամ նեղ ազգապաշտական, ոչ քրիստոնէական, այլ հեթանոսական կամ օտարամուտ խորհրդապաշտական նկատառումներ դիւրութեամբ կարող են իրենց կամայական եւ թիւր վերագրումները բարդել քրիստոնէական տաճարի թէ՛ ընդհանուր, թէ՛ մասնակի կողմերի ընկալման վրայ՝ խաթարելով նրա ամբողջական, ուղղափառ ճանաչողութիւնը: Այս պատճառով մանաւանդ մեր օրերում, երբ կորսուած հոգեւոր արժէքների վերագտնման նկրտումներին առընթեր նոր տաճարների կառուցման իրական եւ անիրական ծրագրեր են առաջադրւում, առաւել կարեւոր եւ սկզբունքային է դառնում լրջմիտ ծանօթութիւնը քրիստոնէական տաճարի սրբաւանդ, ուղղափառ խորհրդաբանութեան հետ:

Ա. ԵՐԿԻՆՔ ԵՐԿՐԻ ՎՐԱՑ

Քրիստոնէական տաճարի ընդհանուր կառուցուածքի եւ նրա բաղադրամասերի խորհրդաբանական վերլուծութիւնից առաջ ս. հայրերը սովորաբար բազմաբովանդակ խորհրդածութիւններ են ծաւալում տաճարի նշանակութեան շուրջ՝ աստուածաբանօրէն հիմնաւորելով նրա գոյութեան խորհրդական (mistic) նախապատճառը եւ նրա նուիրական (sacral) դերը երկրի վրայ: Ըստ այդ հիմնաւորումների՝ քրիստոնէական տաճարը վերերկրային գոյացութիւն է, որ տեսանելի, նիւթական աշխարհում ներկայացնում է իմանալի, հոգեւոր աշխարհը: Այն սոսկ ծիսական արարողութեան ընթացքն ապահովելու խնդրին յարմարեցուած շինութիւն չէ, այլ այդ արարողութեան աստուածաբանական էութեան մարմնացումը: Եկեղեցում կատարուող նուիրական արարողութիւններով երկրի վրայ է արտացոլւում երկնային իրականութեան աՀՀուները՝ մեր հողեղէն անօթների մէջ յայտածելով հոգեղէն կեանքի յատկանիշները: Հոգեւոր արարողութեան այս գերարարչական գործառնութիւնը ենթադրում է համապատասխան նուիրական ոլորտ-միջավայր՝ ոչ թէ հոգեբանական ազդակների տպաւորականութեամբ, այլ գոյացապէս առկայ եւ խորհրդականապէս ներգործուն: Քանզի նուիրական սպասաւորութիւնը համընդհանուր, անբաժանելի եւ միեղէն իրողութիւն է, որն իր մէջ ընդգրկում է թէ՛ տեսանելի, թէ՛ անտեսանելի աշխարհներում ծաւալուող ողջ աստուածպաշտութեան ընթացքը: Այսու, ամենայն եկեղեցական արարողութիւն սկզբունքօրէն ներառուած է այդ միեղէն ընթացքի մէջ եւ մեզ համար մուտք է դէպի երկնաբնակիչների օթեւան եւ ոչ միայն յարաբերակցութիւն, այլեւ գոյակցութիւն է նրանց անապական կեանքի հետ:

Այս գոյակցութեան սկիզբը դրուեց Բանի մարմնացմամբ եւ արարչութեան հետ տնօրինական միաւորութեամբ, որը յաւիտեաններում կայացած եզակի եւ բացարձակ իրադար-

ձութիւն է՝ իր վերջնորոշ արդասաւորութեամբ: Այս գոյաբանական միաւորութեան մասին է վկայում Պօղոս առաքեալը՝ փառաւորելով Աստուածորդուն.

«Նա է մեր խաղաղութիւնը, որ երկուսին մէկ դարձրեց եւ իր մարմնի մէջ քանդեց միջնորմ–ցանկապատը՝ թշնամութիւնը»[1]:

Քրիստոս, իր մեծահրաշ տնօրինագործութեամբ միանալով մեր բնութեանը, սրբագործեց այն իր մահուամբ եւ իր յարութեամբ ազատագրեց ապականութիւնից, իր համբարձմամբ բարձրացրեց երկինք եւ Մխիթարչի առաքմամբ երկինքը երկիր իջեցրեց: Այս տիեզերական իրադարձութիւնը ս. վարդապետները նորագործ ճարտարապետութիւն *են անուանում, որով հոգեղէն աշխարհը յաւիտենապէս միաւորուեց մարդկային բնութեան հետ:*

«Արդարեւ աստուածային ճարտարապետութիւն եւ գերազանց ամենայն եղանակաց՝ Նորա հնարագործութիւնն սքանչելի եւ միայն որպէս եւ վայել էր Աստուծոյ գործ, զի արկեալ զբազմապատիկ իմաստութիւնն ի վար՝ զերկիր երկին յեղաշրջեալ դարձոյց... Զի զմարմինս աստուածացոյց: Արդ, յորժամ երկրային տարրն աստուածացաւ ի մէջ մեր, երկիրս երկին եղեւ, եւ երկրաւորքս՝ երկնաւորք, զի ուր Թագաւորն է, նոյն վայր եւ թագաւորութիւնն»[2]:

«Նորա սքանչելի հնարագործութիւնն արդարեւ աստուածային ճարտարապետութիւն է՝ բոլոր հնարներից գերազանց եւ միայն Աստծուն վայել գործ, քանզի բազմապատիկ իմաստութիւնը վար իջեցնելով՝ երկիրը երկինք դարձրեց... Քանզի մեր մարմինն աստուածացրեց: Արդ, երբ երկրային տարրն աստուածացաւ մեր մէջ, երկիրը երկինք դարձաւ, եւ երկրաւորներս՝ երկնաւոր, քանզի ուր Թագաւորն է, այնտեղ է եւ թագաւորութիւնը»[2]:

Երկրային տարրի աստուածացումը, *իր սկզբնաւորումն ունենալով Քրիստոս Յիսուսի Անձում, յար իրականանում է մեր մէջ՝ Նրա աւանդած նուիրական պաշտամունքի յարա-*

1 Եփես. Բ 14

2 Ս. Ներսէս Լամբրոնացի, Սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյ՝ Տարսոնի եպիսկոպոսի խորհրդածութիւնք ի կարգ Եկեղեցւոյ եւ մեկնութիւն խորհրդոյ Պատարագին, Վենետիկ, 1847, էջ 365

տեւութեամբ: Քանզի Աստուածորդու իրագործած «աստուածային ճարտարապետութիւնը» չի աւարտւում Նրա տնօրինական խորհրդագործութեամբ (misterium), այլ, ըստ Իր իսկ տիրական պատուիրանի («Այս արէ՛ք Իմ յիշատակի համար»[3]), *հանապազօրեայ նուիրագործութիւններով (sacramentum) դառնում է յաւէտ շարունակելի իրողութիւն՝ պայմանաւորելով երկնային լուսոլորտի մշտառկայութիւնը երկրի վրայ:*

Քրիստոնէական տաճարն այդ մշտառկայ լուսոլորտի թանձրացումն է ժամանակի եւ տարածութեան մէջ, ինչն, ըստ ուղղափառ աստուածաբանութեան, աստուածային տնօրինագործութեան անքակտելի մասն է՝ իբրեւ հաւաստի նախօրինակ ունենալով այդ տնօրինագործութեան անմիջական խորհրդակիր հանդիսացող Երուսաղէմի Վերնատունը: Քանզի Սուրբ Հոգին նախ Վերնատունը լցրեց հողմով եւ ապա հրեղէն լեզուներով իջաւ առաքեալների վրայ[4]*: Ճշմարիտ նուիրական խորհրդակատարութիւնը պայմանաւորուած է թանձրացական, նիւթեղէն տարրի մասնակցութեամբ: Այս պայմանի գիտակցումն անմիջականօրէն բխում է Աստուածորդու մարմնացման ճշմարիտ ըմբռնումից, որը հաստատւում է մեր սրտերում Սուրբ Հոգու վկայական ներկայութեամբ.*

«Սրանո՛վ ենք ճանաչում Աստուծոյ Հոգին,– գրում է ս. Յովհաննէս աւետարանիչը.– ամէն մի հոգի, որ խոստովանում է Յիսուս Քրիստոսին մարմնով եկած, նա Աստծուց է»[5]:

Նիւթեղէն եւ ոչ թէ երեւութական մարմնով եկած Աստուծոյ Միածին Որդին, երկրի վրայ հաստատելով Իր Եկեղեցին, Նրա նուիրագործութիւնները պայմանաւորեց նիւթեղէն սրբութիւնների առկայութեամբ: Սրանում արտացոլուած է երկուսը մէկ դարձնելու գաղտնիքը եւ աստուածաբաղձ միեղինութեան խորհուրդը: Արարչի եւ արարածի միեղինացման ճարտարագործութիւնը, սկսուելով Աստուածորդու մարդաց-

3 Ղուկ. ԻԲ 19

4 Տե՛ս Գործք Բ 2-3:

5 Ա Յովհ. Դ 2

մամբ, իր նուիրական կատարողունակութիւնն է ստանում տաճարի գոյութեամբ՝ երկրի վրայ այն ներկայացնելով որպէս գոյաբանօրէն հոգեղէն, շնորհակիր հաստատութիւն: Նիւթեղէն տաճարի շնորհակրութեան հաւաստիութիւնը պայմանաւորուած է նրա հիմքերի հաստատման սկզբում եւ կառոյցի աւարտին կատարուող յատուկ օրհնութեամբ եւ օծմամբ, որը նրանում խորհուրդների կայացման իրաւական *նախապայմանն է.*

«Քահանայական օրինութեամբ եւ կատարելականն մեռոնիւ միացաւ Հոգին Սուրբ յեկեղեցի սուրբ. եւ Որդին պատարագի ի նմա: Վասն այն եւ Հայր ընդունի զսա. ապա ուրեմն իրաւապէս եկեղեցին երկինք է ի վերայ երկրի»[6]:

«Քահանայական օրինութեամբ եւ մեռոնով Սուրբ Հոգին միացաւ եկեղեցուն, եւ Որդին պատարագում է նրանում, եւ Հայրն ընդունում է պատարագը: Ուստի իրաւապէս եկեղեցին երկինք է երկրի վրայ»[6]:

Եկեղեցու խորհուրդների եւ կրօնական արարողութիւնների փոխկապակցութիւնը նիւթեղէն տաճարի եւ նիւթեղէն սրբութիւնների հետ ոչ թէ կապանք է եւ կախուածութիւն նիւթական աշխարհից, այլ հակառակը՝ Բանի աստուածային ճարտարապետութեամբ *իրագործուող նիւթի հոգեղինացման իսկագոյն խորհուրդն ու արտայայտութիւնը: Տաճարը թէ՛ իր նիւթեղէն ներկայութեամբ եւ թէ՛ հոգեւոր կոչուածութեամբ, այսինքն՝ իրենում կատարուող արարողութիւններով, Շնորհի ճառագման աղբիւր է, որով յագեցած է նրա մթնոլորտը թէ՛ ծէսի ընթացքում, թէ՛ նրանից դուրս:*

Այս պատճառով ս. վարդապետներն անվարան կերպով հաւաստում են, որ քրիստոնէական եկեղեցին իր առարկայական կերտուածքով եւ իր ներսում պարփակուող տարածութեամբ հանդիսանում է բուն *իսկ երկինքը՝ այն Սրբարանը, ուր* մտաւ *Քրիստոս Իր Արեամբ՝ յաւիտենական փրկութիւն տալով մեզ*[7], *քանի որ նրանում* բուն *երկնաւորները (քրիս-*

6 **Ս. Գրիգոր Տաթեւացի**, Քարոզ վասն եկեղեցւոյ, «Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր՝ արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն», Կ. Պոլիս, 1741 (=Ամառան), էջ 709

7 Եբր. Թ 12

տոնեաններս) օրինաւորներից *(Հին Ուխտը ներկայացնող ժողովրդից)* առաւել ազնիւ պատարագի[8] *հետ են հաղորդակցում*[9]:

Յովհան Մայրագոմեցին այս սուրբգրային հիմնաւորումներով յորդորում է քարակերտ եկեղեցուն վերաբերուել ըստ նրա խորհրդական նշանակութեան՝ ոչ որպէս ձեռակերտ շինութեան, այլ անձեռակերտ Սրբարանի.

«Ահաւասիկ, սիրելի՛ իմ, հրաժարեա՛ ի ձեռագործ սրբութենէ: Այլ յերկինս ասաց՝ այս է եկեղեցի, քանզի ի սմա հացիւն, որ մատուցանի յանդիման Աստուծոյ Հօր, եւ բաժակաւն գոհութեան, որ է Մարմին եւ Արիւն Քրիստոսի Աստուծոյ, տուեալ լինի փրկութիւն սրբութեամբ ճաշակողացն՝ որդեգրութեան Հոգւոյն շնորհացն արժանացեալ»[10].

«Ահաւասիկ, սիրելի՛ս, հրաժարուի՛ր ձեռագործ սրբարանից. ասաց երկնքում՝ սա է եկեղեցին, քանզի սրանում Հայր Աստուծոյ յանդիման մատուցուող հացով եւ գոհութեան բաժակով, որ Քրիստոս Աստուծոյ Մարմինն ու Արիւնն է, փրկութիւն է տրւում Հոգու շնորհների որդեգրութեանն արժանացած սրբութեամբ ճաշակողներին»[10]:

Որպէս այս ըմբռնման առաւել հիմնաւոր վկայութիւն՝ Մայրագոմեցին յիշեցնում է Պօղոս առաքեալի հետեւեալ խօսքը.

«Շօշափելի լեռա՛նը չէք մօտեցել, որ վառուած էր հրով... Մօտեցել էք Սիոն լեռանը եւ Աստուծոյ կենդանի քաղաք երկնային Երուսաղէմին, հրեշտակների բիւրաւոր բանակներին եւ ամենքի Դատաւոր Աստծուն, կատարեալ արդարների հոգիներին եւ Նոր Կտակարանի Միջնորդ Յիսուսին»[11]:

«Ահա քաջերեւելագոյն արտայայտեաց սուրբ առաքեալն զեկեղեցւոյ վերերեւութիւն՝ ո՛չ երկիր լինել, այլ երկինք, ո՛չ երկրային քաղաք, առաւել յայտնաբար սուրբ առաքեալն արտայայտեց եկեղեցու խորհուրդը՝ ոչ թէ երկիր, այլ երկինք լինելը, ոչ թէ երկրային քա-

8 Եբր. Թ 23

9 Տե՛ս **Յովհան Մայրագոմեցի**, Վերլուծութիւն Կաթողիկէ Եկեղեցւոյ եւ որ ի նմա յարիւնեալ կարգաց, «Սիոն», 1967, N 1-2 (=**Մայրագոմեցի**), էջ 71:

10 **Մայրագոմեցի**, էջ 71

11 Եբր. ԺԲ 18, 22-24

այլ Վերինն Երուսաղէմ, ո՛չ երկրային տաճար, այլ երկնային առագաստ, ո՛չ իբրեւ ստացականաց հողեղինաց դասակցութիւն, այլ որպէս բանակաց հոգեղինաց»[12]:

Ինչպէս տեսնում ենք, եկեղեցական պաշտամունքի կարգը հոգեղէն բանակների դասակցութեան *արտացոլումն է երկրի վրայ: Ս. Դիոնեսիոս Արեոպագացու յայտնի աստուածաբանական հիմնաւորմամբ՝ եկեղեցական քահանայապետութիւնը երկնային քահանայապետութեան հետ* մի եւ զնոյն ունի զօրութիւն ի ձեռն ամենայն քահանայականին իրողութեան[13], *այսինքն՝ նուիրական արարողութիւնների միջոցով միեւնոյն երկնային Շնորհն է արծարծւում մեզանում, որով եւ եկեղեցին նոյնանում է երկնքի հետ: Այս ճշմարտութիւնը «չոչափելի» նկարագրականութեամբ է մատուցում Յովհան Օձնեցին.*

«Որպէս զերկնայինսն հրեղինաւ պարածածկեաց խորանաւ զմերձակայսն փառաւորիչս անմատոյց լուսոյ Աստուածութեանն, նոյնպէս եւ յայսմ խորանի պարածածկին վարագուրաւ դասք քահանայից, որք կան ի սպասաւորութիւն սոսկալի եւ անաւոր խորհրդոյ Մարմնոյ եւ Արեան Տեառն, որ կատարի ի փրկութիւն աշխարհի: Քանզի անդ ի քրովբէականն յաթոռ Բանն մարմնացեալ ընդ աջմէ Հօր նստի եւ ի բիւրուց երկրպագաց զօրաց. եւ աստ ի վերայ քառաթեւ սեղանոյն Բանն պատարագեալ ի հաւատացելոցն հանգչի հոգիս եւ Ինքեամբ զմերս վերանուիրէ պաշտօն հոգեւորական. եւ Ինքն անցեալ նստի գեր ի վերոյ իշխանութեանց եւ պետութեանց:

Անդ ի ջուրս վերինս՝ հրեշտակաց շրջապատին պարք՝ ըստ այնմ, թէ՝ «Ջո՛ւրք, որ ի վերոյ քան զերկինս, օրհնեցէ՛ք զանուն Տեառն»[14]: Աստ Հոգին Սուրբ, ծաւալեալ ի վերայ Աւազանին, զբնութիւնս մեր կենդանակերպելով, ծնանի նոր ծնունդ նորափետուր զարդարեալ. անդ երկնայնոց էութեանցն ջոկքն եւթնարփեան խմբիւք զերեքսրբեան օրհնութիւնս քաղցրանուագ երգեն ի փառս համաբուն Տէրութեանն: Եւ աստ նոցին նմանութեամբ երամացեալ՝ բիւրուց բիւրք նորածնունդ լուսակերպից զնոյնգունակ օրհնութիւնս միշտ ի բարձունս առաքեն Իշխանն Լուսոյ.. անդանօր հնեակ դասուցն կարգք յերիս որոշեալ զատմունս՝ համազուգեալ փառատրութեամբ ի գերագոյակն Երրորդութիւն ունին զհայեցուածս անլոյծ պնդութեամբ... Այսպէս եւ՝ ամենայն քաղաք, այլ Վերին Երուսաղէմ, ոչ թէ երկրային տաճար, այլ երկնային առագաստ, ոչ թէ հողեղէնների, այլ հոգեղէն բանակների դասակցութիւն»[12]:

Այնտեղ վերին ջրերը՝ հրեշտակները, շրջապատում են [Աստուածութեանը]՝ ըստ այնմ, թէ՝ «Ջրե՛ր, որ երկնքից բարձր էք, օրհնեցէ՛ք Տիրոջ անունը»[14]: Իսկ այստեղ Սուրբ Հոգին, ծաւալուելով Աւազանի վրայ, մեր բնութիւնը կենդանակերպելով, նոր ծնունդներ է ծնում՝ նորափետուր զարդարուած: Այնտեղ երկնային էութիւնների եօթնապար խմբերը երեքսրբեան օրհնութիւնն են բարձրանուագ երգում ի փառս համաբուն Տէրութեան. իսկ այստեղ նրանց նմանութեամբ բիւրաւոր լուսակերպեր, երամանալով, նոյնանման օրհնութիւններ են միշտ ի բարձունս առաքում Լուսոյ Իշխանին: Այնտեղ ինը դասերի կարգը, երեքի բաժանուած, զուգաձայն փառատրութեամբ դէպի գերագոյ Երրորդութիւնն է հայում անլոյծ պնդութեամբ... Այսպէս եւ՝ Եկեղեցու ողջ

12 **Մայրագոմեցի**, էջ 71

13 **Ս. Դիոնեսիոս Արեոպագացի**, Եթէ զի՞նչ է եկեղեցականիս քահանայապետութեան աւանդութիւն, եւ զի՞նչ այնորիկ դիտումն, "The Armenian Version of the Works Attributed to Dionysius the Areopagite», Lovanii, 1987 (=**Ս. Դիոնեսիոս**), էջ 55

14 Տե՛ս Սաղմ. ՃԽԸ 4

15 **Ս. Յովհան Օձնեցի**, Յոհաննու Իմաստասիրի Մաս երկրորդ յեկեղեցի, «Յովհաննու Իմաստասիրի Օձնեցոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1833 (=**Ս. Յովհան Օձնեցի**), էջ 133-134

հանայապետութիւն Եկեղեցոյ՝ սկիզբն եւ արմատ եւ կատարումն զՅիսուս ունելով զերկնայինն Քահանայապետ հանդերձելոցն բարեաց: Արդ, կարեւորապէս առաջնորդն մերոյ քահանայութեանն, ի գերագոյն աստուածպետութենէն լցեալ պարգեւէ, եւ նոյն դարձեալ աննախանձաբար եւ զանազանապէս մատակարարէ խոնարհագունիցն դասուց, իբրու զամենեսեան աստուածանալ համբարձմամբ մտաց եւ առաքինի վարուց՝ ածէ ի ճշմարտութեան կերպարան»[15]:

քահանայապետութիւնը՝ իր սկիզբն ու արմատը եւ հանդերձեալ բարիքների աւարտն ունենալով երկնային Քահանայապետ Յիսուսին: Եւ արդ, մեր քահանայութեան առաջնորդը, անհրաժեշտօրէն լցուելով գերագոյն աստուածպետութեան պարգեւից, նոյնը դարձեալ աննախանձաբար եւ զանազանապէս մատակարարում է [առաւել] խոնարհ դասերին եւ ամենքին մտքի վերամբարձութեամբ ու առաքինի վարքով աստուածացնում՝ հասցնելով ճշմարտութեան կերպարանքին»[15]:

Եկեղեցու ճարտարապետական կառուցուածքը եւ նրանում գործածուող ծիսական առարկաների ամբողջութիւնը ժամանակի ընթացքում է կազմակերպուել՝ ապրելով որոշակի զարգացում: Սակայն այդ զարգացումը ոչ այնքան արտաքին գիտելիքների կուտակման հետեւանք է, որքան յայտնութիւնների: Իմաստուն եւ նուիրական սպասաւորութեան մէջ յարատեւող քրիստոնեայի միտքն արժանանում է վերիմացական տեսումների, որը յանգեցնում է իմանալի աշխարհի հետ իրական հաղորդակցութեան խորացման: Իսկ վերջինս իր անմիջական արտացոլումն է գտնում թէ՛ ծիսական համակարգում, թէ՛ նրան յարակցուած տաճարի ճարտարապետութեան մէջ: Այսպէս, քրիստոնէական տաճարի կերտուածքը դարերի ընթացքում իր ճարտարապետական ձեւերի ընդհանուր եւ մասնաւոր կողմերով դառնում է մարմնացումը երկնային իրականութեան, եւ շինութեան արտաքին կերպարանքը նոյնանում է նրա խորհրդական դերի հետ.

«Պարտ է գիտել, զի եկեղեցիս է կատարեալ յօրինակ լուսեղէն երկնից. այսինքն՝ բեմն, ուր քահանայապետն է եւ քահանայքն եւ սարկաւագունքն՝ աթոռքն, քերով-

«Պէտք է գիտենալ, որ եկեղեցին կառուցուած է լուսեղէն երկնքի օրինակով: Քանզի բեմը, ուր քահանայապետն է, քահանաներն ու սարկաւագները՝ աթոռները, քե-

բէքն եւ սերովբէքն: Եւ մէջ եկեղեցոյն, ուր դպիրքն՝ տէրութեանց, զօրութեանց եւ իշխանութեանց: Եւ դուռն, ուր դռնապանն, երդմնեցուցիչն եւ սուրբ ժողովուրդն, ջահընկալն եւ ընթերցողն՝ պետութիւնք, հրեշտակապետք եւ հրեշտակք»[16]:

ռովբէներն ու սերովբէները է: Եւ եկեղեցու միջնամասը, ուր դպիրները են՝ տէրութիւնների, զօրութիւնների եւ իշխանութիւնների [խորհրդանիշն] է: Իսկ դուռը, ուր դռնապանն է, երդմնեցուցիչն ու սուրբ ժողովուրդը, ջահընկալը եւ ընթերցողը՝ պետութիւնները, հրեշտակապետերը եւ հրեշտակները»[16]:

Եթէ եկեղեցու ընդհանուր կառոյցը երկնքի նշանակն մարմնացումն է, ապա նրա ներքին յարդարանքն ու ծիսական առարկաների ամբողջութիւնը նրա շնորհական մթնոլորտի նիւթեղէն արտայայտութիւնն է.

«Ամենայն ինչ, որ յեկեղեցի, զերկնայնոցն բերէ ցոյց օրինակի»[17]:

«Եկեղեցում գտնուող ամէն ինչ երկնայինների օրինակն է ցոյց տալիս»[17]:

Եկեղեցում գտնուող ծիսական առարկաները, օծուած եւ օրհնուած լինելով, ոչ միայն իրենց արտաքին ձեւի համապատասխանութեամբ, այլեւ շնորհակրութեամբ երկնային իրականութեան ներկայութեան արտայայտիչն ու յայտածիչն են տաճարի մթնոլորտում: Նրանց ազդեցութիւնը երբէք սոսկ գեղագիտական կամ հոգեբանական չէ, այլ ամենից առաջ՝ խորհրդական, որի շնորհիւ հաւատացեալի միտքը մղւում է իմանալի աշխարհի հայեցողութեան.

«Մեք զգալեօք պատկերօք յաստուածային կոյս ըստ կարողութեան համբառնամք տեսութիւն»[18]:

«Մենք զգալի պատկերներով, ըստ կարողութեան, մեր [մտքի] տեսումը դէպի աստուածայինն ենք ուղղում»[18]:

«Զանազան վարագուրք, զանազան

«Եկեղեցում կարգուած զանազան

16 Ս. Գրիգոր Տաթեւացի, Քարոզ վասն օրինութեան եկեղեցւոյ, «Գիրք քարոզութեան, որ կոչի Ջմեռան հատոր՝ արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն», Կ. Պոլիս, 1740 (=Ջմեռան), էջ 656

17 Ս. Յովհան Օձնեցի, էջ 134

18 Ս. Դիոնեսիոս, էջ 56

ձեւքն, որ յեկեղեցւոջ կարգեալ են... ծածկոյթ են իմանալեաց եւ անանիւթից իրաց եւ ի վեր ածեն մեզ յիմանալին»[19]:

վարագոյրներն ու զանազան ձեւերը... իմանալի եւ անանիւթական իրերի ծածկոյթն են եւ մեզ վեր են մղում դէպի իմանալին»[19]:

Ի հակադրութիւն աշխարհի պատահմունքային եւ մեղսածին, խառնափնթոր ազդակների՝ եկեղեցին՝ իր կերտուածքի եւ յարդարանքի կարգաւոր ամբողջականութեամբ, սկզբունքօրէն գոյացական եւ մաքրագործող ներգործութեան առիթ է մարդու համար: Ուստի եւ նրա խորհրդաբանութեան ճանաչումն ու նրա ստեղծմանը մասնակից լինելու ճշմարիտ կարողութիւնը խիստ կապուած են նոյն մաքրութեան եւ սրբազգաց վերաբերմունքի հետ եւ, ինչպէս ամէն ինչ Ընդհանրական Եկեղեցու համակարգում, պահանջում են կենդանի աստուածպաշտական նուիրում[20]: Այս պատճառով առաւել մասնաւոր դիտարկումների անցնելուց առաջ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ տաճարի բարոյական–աստուածպաշտական նշանակութեանը վերաբերող հայրաւանդ խօսքերին, որոնք իմաստնաբար տեղ են գտել տաճարի խորհրդաբանութեանը վերաբերող նրանց աշխատութիւններին առընթեր: Արդ, տաճարի հետ ճշմարիտ քրիստոնէական յարաբերութիւնն ամենից առաջ պայմանաւորուած է մեր փրկագործութեան առողջ գործընթացով՝ այն ուղղափառ գիտակցութեամբ, որ միայն տաճարում կայացուող նուիրական խորհուրդների հաղորդակցութեամբ կարող ենք մշտանորոգ հաշտութեան մէջ մնալ Աստուծոյ հետ.

«Որքան մարդն կենայ յաշխարհի, մեղաւոր է. վասն որոյ եւ հաշտութեանն Աստուծոյ կարօտ է... Վասն որոյ շինեցին զտունս զայս անուանն Աստուծոյ եւ սրբեցին զսա օրինութեամբ, ուր հաշտութիւնս մեր կատարի»[21]:

«Քանի դեռ մարդն աշխարհում է, մեղաւոր է եւ կարօտ է Աստուծոյ հետ հաշտութեան... Այս պատճառով Աստուծոյ անունով շինում են այս տունը եւ սրբում օրինութեամբ, ուր մեր հաշտութիւնն է իրագործւում»[21]:

19 «Լուծմունք Դիոնեսիոսի ի Դաւթէ եւ Յակոբայ», ՄՄ ձեռ. N 55, թ. 12բ-13ա

20 Այս մասին տե՛ս «Հոգեւոր պատկերամբոնողութիւնը եւ կանոնի նշանակութիւնը եկեղեցական կերպարուեստում», Գանձասար Գ, էջ 320:

21 Ջմեռան, էջ 654-655

Տաճարում արժանաւորապէս ներկայ գտնուելը քրիստոնէական կեանքի կարեւորագոյն կողմերից է եւ մեր ողջ աստուածպաշտութիւնը կարգաւորող գործօն:

«Հրաման առաք ի մէջ եկեղեցւոյ յանուն Որդւոյ զՀայր կարդալ եւ թախանձել, այսինքն մտանելովն յեկեղեցի՝ պարտ է մեզ մտանել յորդիութիւն եւ զնմանութիւն Նորա բերել ի մեզ. եւ զնմանութիւն Հօր Նորա՝ որպէս Նա, եւ ապա զՀայր Նորա մեզ կարդալ: Զի որպէս լսէ Նմա, անյապաղ այսպէս եւ մեզ լուիցէ: Եւ տես՝ զի թէ զնմանութիւն Նորա բերեմք ի մեզ եւ ապա մտանեմք յեկեղեցի եւ զՆա Հայր կոչեմք, որպէս Որդին առաջի Հօրն մտանէ եւ ապա աղերսէ, ճշմարիտ երկինք լինի եկեղեցիս: Իսկ թէ զնմանութիւն Նորա ոչ ունիմք, այլ՝ զհակառակն եւ մտանեմք յեկեղեցի, լինի եկեղեցին դժոխք եւ սանդարամետք. եւ բնակիչք սոցա սատանայ են, զորոյ զնմանութիւն ունին մեղսասէրքն: Վասն որոյ պարտ է մեզ սրբութեամբ մտանել յեկեղեցի, որ է երկինք. զի երկինք, որոյ է պատկեր եկեղեցիս, անմեղաց է տեղի»[22]:

«Հրաման ստացանք՝ եկեղեցում Որդու անուամբ Հօրը կանչել եւ թախանձել. այսինքն՝ եկեղեցի մտնելով՝ մենք պէտք է որդիութեան մէջ մտնենք եւ Նրա նմանութիւնը բերենք մեր անձերում եւ Նրա Հօր նմանութիւնը, ինչպէս Ինքը, եւ ապա Նրա Հօրը կանչենք, որպէսզի ինչպէս Նրան է լսում, այնպէս էլ անյապաղ մեզ լսի: Եւ տե՛ս. քանզի եթէ Նրա նմանութիւնն ենք բերում մեր մէջ եւ ապա մտնում եկեղեցի ու Նրան Հայր կանչում, ինչպէս Որդին է Հօր առաջ մտնում եւ ապա աղերսում, ապա եկեղեցին ճշմարտապէս երկինք է լինում. իսկ եթէ Նրա նմանութիւնը չենք ունենում, այլ՝ հակառակորդի եւ մտնում ենք եկեղեցի, եկեղեցին դժոխք է լինում եւ սանդարամետ, որի բնակիչն է սատանան, ում նմանութիւնն ունեն մեղսասէրները: Այս պատճառով մենք պարտաւոր ենք սրբութեամբ մտնել եկեղեցի, որ երկինք է, քանզի երկինքը, որի պատկերն է եկեղեցին, անմեղների վայր է»[22]:

Ինչպէս տեսնում ենք, մարդու ներկայութիւնը եկեղեցում, ուր հրեշտակների պէս անընդմիջաբար կանգնած ենք Աստուծոյ առջեւ[23], որքան բերկրալի, նոյնքան պարտաւորեցնող է,

22 Ամառան, էջ 709

23 Նոյն տեղում

քանզի ահաւոր է կենդանի Աստուծոյ ձեռքն ընկնելը[24], *որ* լափող հուր է[25]: *Տաճարում քրիստոնեան պէտք է գիտակցի իր նուիրական միասնութիւնը երկնային զօրութիւնների եւ սուրբերի հետ՝ ձգտելով նրանց հետ շնորհական* հաւասարութեան.

«Տաճարն ժողովեցող հաւատացեալոց՝ զհաւասարութիւն մեր ընդ հրեշտակս զեկուցանէ, յորժամ կամք ամենեքեան առաջի բեմին Քրիստոսի»[26]:

«Տաճարը, հաւատացեալների ժողովատեղի [լինելով], ցոյց է տալիս մեր հաւասարութիւնը հրեշտակների հետ, երբ բոլորս Քրիստոսի բեմի առջեւ ենք լինում»[26]:

Հրեշտակներին հաւասարուելու ձգտումը ուղղափառ աստուածպաշտութեան սկզբունքային նպատակն է: Հրեշտակներին հաւասար կամ հրեշտականման լինել՝ նշանակում է թօթափուել ապականելի եւ մեղսասէր յատկանիշներից եւ առաքինի վարքով վեր լինել արատաւոր երկրայակութիւնից, յարատեւել երկնային խաղաղութեան մէջ եւ վայելել երկնաբնակիչների աղօթական ընկերակցութիւնը, վերջապէս՝ նրանց նման շնորհական հանդարտութեան մէջ տեսնել Աստուծոյ փառքը[27]՝ հանապազ Հոգով եւ Ճշմարտութեամբ երկրպագելով[28] ու փառաբանելով Նրան: Այս հրեշտակային կամ երկնային յատկութիւնները, որոնք զետեղուած են քրիստոնեաներիս սրտերում Մկրտութեան Շնորհով, միայն մշտաջան աստուածպաշտութեամբ եւ բազմաչարչար պատուիրանապահութեամբ են յայտնւում եւ հաստատապէս բնաւորւում մեր մէջ: Եւ տաճարի երկնային խորհուրդն այն խորհրդազգած անձերում է խորապէս արծարծւում, որոնց համար նա դարձել է աստուածմերձութեան եւ սրբագործութեան հարազատ եւ մշտաբաղձ հանգրուան:

«Յորժամ սիրեմք զՆա, եւ զպատուիրանս Նորա պահեմք, բնակի

«Երբ սիրում ենք Նրան եւ պահում Նրա պատուիրանները, [մեր մէջ]

24 Եբր. Ժ 31
25 Եբր. ԺԲ 29
26 Ս. Յովհան Օձնեցի, էջ 140
27 Տե՛ս Յովհ. Ա 14
28 Տե՛ս Յովհ. Դ 23

Հայր եւ Որդի եւ Հոգին մաքրագործ՝ ըստ առաքելոյն. «Դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք, եւ Հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ»[29]: Զի Աստուած բնակի ի մարդիկ որպէս ի հրեշտակս, եւ մարդիկ՝ ի տաճարս, ըստ որում հրեշտակք՝ ի յերկինս, եւ միաձայնութեամբ երկնաւորաց եւ երկրաւորաց պաշտի Արարիչն. ապա ուրեմն երկինք է եկեղեցի սուրբ»[30]:

բնակւում են Հայրը, Որդին եւ մաքրագործ Սուրբ Հոգին՝ ըստ առաքեալի. «Դուք կենդանի Աստուծոյ տաճար էք, եւ Աստուծոյ Հոգին բնակւում է ձեր մէջ»[29]: Եւ քանի որ Աստուած բնակւում է մարդկանց մէջ՝ ինչպէս հրեշտակների, եւ մարդիկ՝ տաճարում, ինչպէս հրեշտակները երկնքում, եւ երկնաւորների ու երկրաւորների միաբանութեամբ պաշտւում է Արարիչը, ուստի երկինք է սուրբ եկեղեցին»[30]:

(շարունակելի)

29 Տե՛ս Ա Կորնթ. Գ 16:
30 Ամառան, էջ 709